Ռ. Վ. ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ

ՀԱՅ-ՊՈՐՏՈՒԳԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

МАТЕНАДАРАН

ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

Р. В. ГЮЛЬБЕНКЯН

АРМЯНО-ПОРТУГАЛЬСКИЕ ОТНОШЕНИЯ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

9(47.925)
77–59
2326

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ռ. Վ. ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ

ՀԱՅ-ՊՈՐՏՈՒԳԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1986

ԳՄԴ 63.3(2Հ)+63.3(4Պ)
Կ—594

Տպագրվում է Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Լ. Ս. Խաչիկյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտորներ՝ Վ. Ռ. Գրիգորյանը և Հ. Դ. Փափազյանը

Կյուլպենկյան Ռ. Վ.

Կ-594 *Հայ-պորտուգալական հարաբերություններ /Խմբ.՝ Լ. Ս. Խաչիկյան; Մատենադարան—ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ինս-տ.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986—355 էջ*

Աշխատության մեջ պորտուգալական աղբյուրների հիման վրա վեր են հանված և լուսաբանված Հայաստանի և հայկական գաղթավայրերի պատմության ու մշակույթին առնչվող բազմաթիվ նոր փաստեր, որոնց շարքում հատկապես ուշագրավ են Մերձավոր Արևելքում և Հնդկաստանում հայ վաճառականների ծավալած առևտրական գործունեությանը վերաբերող տվյալները:

Նախատեսված է պատմաբանների և ընդհանրապես պատմությամբ հետաքրքրվող ընթերցողների համար:

Կ $\frac{0505040000}{703\ (02)-86}$ 108—85 ԳՄԴ 63.3.(2Հ)+63.3(4Պ)

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Սփյուռքահայ ճանաչված հասարակական գործիչ, պատմաբան և բանասեր, Պորտուգալիայի պատմության ակադեմիայի թղթակից անդամ Ռոպեր Կյուլպենկյանը (Ռոբերտո Գյուլբենգյան), երկար ժամանակ ուսումնասիրելով հայ-պորտուգալական պատմական առնչությունները, հրատարակել է մի շարք արժեքավոր աշխատություններ նվիրված հայ-պորտուգալական հարաբերություններին: Հեղինակն իր ուսումնասիրությունները կատարել է եվրոպական սկզբնաղբյուրների, մատենագրական երկերի և դիվանական վավերագրերի հիման վրա: Դրանով նա լրացրել է հայ վաճառականության և հոգևոր գործիչների՝ Եվրոպայի և արևելյան երկրների միջև տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի պատմության մեջ խաղացած դերի լուսաբանման հարցում զգացվող բացը:

Այս աշխատությունները հիմնականում տպագրվել են պորտուգալերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով՝ Եվրոպայի տարբեր գիտական պարբերականներում, որոնք մեծ մասամբ մատչելի չլինելով սովետահայ մասնագետներին դուրս են մնում մեզ մոտ տարվող գիտահետազոտական լայն աշխատանքների ոլորտից:

Այս պարագան մտահոգել է նաև հեղինակին, որը և ձեռնարկել է իր բազմամյա հետազոտությունների արդյունքը հանդիսացող ուշագրավ այդ աշխատությունների թարգմանությանը և այն տրամադրել Մաշտոցի անվան Մատենադարանին՝ հրատարակության համար:

Ներկա հատորում ի մի են բերված Ռ. Կյուլպենկյանի 1970—1980 թթ. պարբերաբար լույս տեսած ութ ուշագրավ աշխատությունները, որոնք մեծ չափով կարող են հարստացնել մեր գիտելիքները ինչպես հայ-պորտուգալական տնտեսական և մշակութային առնչությունների, այնպես և Արևելք-Արևմուտք քաղաքական հարաբերությունների պատմության վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՓՈՐԹՈՒԿԱԼԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԿԻԶԲԵՆ ՄԻՆՉԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒ ՎԵՐՋԸ

Նպատակս էր առնել միջնադարը իբր մեկնակետ հայ և փորթուկալյան հարաբերություններուն, բայց պետք է երթալ մինչև «ջրհեղեղը», եթե հավատք ընծայենք երկու ժողովուրդներուն ավանդական պատումներուն և աստվածաշնչական հավատալիքներուն։

Այսպես, հայերը կըսեն թե շառավիղներն են Հայկի, որդի Հաբեթի, երրորդ որդի Նոյի, իսկ եղբայր Պերնարտո տը Պրիթո Լուսիտանական միապետության առաջին մասին մեջ կհայտնե, թե Թուպալ, ինքն ալ որդի Հաբեթի, առաջին հայրը և ծնողն է փորթուկալյան ժողովուրդին։ Կավելցնե թե ցամաք ելավ փորթուկալյան ափերուն վրա տեղ մը, որ կոչվեցավ Սեթուպալ[1]։

Սպանացիներեն անոնք, որ մշակեցին այս ավանդությունները իրենք ալ կուզեն յուրացնել նույն ծագման պատիվը և կմերժեն ընդունիլ, թե Թուպալ նախ ոտք կոխեց փորթուկալյան հողին վրա։ Կասպար Էսքոլանո, որ 1610-ին գրեց Վալանսի պատմությունը, կարծիք կըհայտնե մեկ կողմե թե ան ցամաք ելավ այս շրջանին մեջ, ավելցնելով՝ «Թուպալ և իր մարդիկը հայերեն լեզու կխոսեին»[2] և մյուս կողմե կհիշե Տ. Ռոտրիկո[3] արքեպիսկոպոսին Քրոնիկը, հաստատելու համար, թե հայերը որոնք ջրհեղեղեն ետք այստեղ ցամաք ելած էին և բնակություն հաստատած, հսկաներու սերունդ մըն էին, դատելով ոսկորներու մեծութենեն, զորս տակավին կարելի էր գտնել Քաթալոնիո Լոպրիկաթ գետին վտակներուն մեջ[4]։

Համաձայն 1073-ին Հերնան Իլանեսի կողմե քաղված ավանդության մը, որմե հատված մը արձանագրված է 1315-ին և զոր Լուիս տը Արիզ հիշատակած է իր Մեծությունք Ավիլայի գործին մեջ, հրատարակված 1607-ին՝ «Բազմաթիվ են անոնք, որ հին ժամանակներ եկան հեռավոր տեղերե բնակչություն ստեղծելու մեր Սպանիաներուն մեջ... Եվ առաջինները, որոնք եկան բնակություն հաստատելու մեր ազգին և մեր շրջաններուն մեջ եղան Նոյ և Թուպալ քանի մը կիներով, որոնք կխոսեին այն գեշ լեզուն, զոր մեր ժամանակներուն մեջ կխոսեին Պիսքայա բնակողները»[5]։

---

[1] Frei Manuel de Brito, Monarquia Lusitana (*Լուսիտանական միապետություն, այսուհետև՝ Լուսիտ. միապ.*), 1597, նոր տպագրություն, Լիզպոն, 1978 էջ 6բ։ **P. Manuel de Larramed**, Diccionario Trilingue Castellano, Bascuence y Latin ... *1745 (Բառարան եռալեզու Քասթիլյան, Պասքյան և Լատին...) նոր տպագր., Սան Սեպաստիան, 1858։ Ըստ հեղինակին (գլուխ ԺԶ), Սպանիո և իր քաղաքներուն և նահանգներուն հին անունները որոշապես ցույց կուտան, թե պասքերենը Սպանիո ընդհանուր լեզուն եղած է։ Պիսքայացի հմուտ հիսուսյանը հետևյալ բառերով կներկայացնե (էջ 98) Սեթուպալ քաղաքին ստուգաբանությունը. «Կըսեն թե հին ատեն ան կկոչվեր* Setubalia *կամ ինչպես կգրեն ուրիշներ* Cetubalia *և անոր կուտան* Coetus Tubalis *լատինական ծագումը, ինչ որ հարցե դուրս է։ Իր նշանակությունն իսկ կգտնվի, առանց դուրս ելլելու պասքերեն* Sein Tubalia-*ի մեջ, որ կնշանակե Թուպալի որդիներու հող և այսպես ըլլալով կառաջնորդե հետևցնելու Սպանիո բնակչության ծագումը Թուպալեն»։ Այս ստուգաբանական մարզանքը մեծապես վիճարկության ենթարկված է* Graslin, De Ibérie, ou Essai critique sur l'origine des premières populations de l'Espagne *(Իպերիա, կամ քննական ուսումնասիրություն Սպանիո առաջին բնակիչներուն ծագման մասին) գործին մեջ, Փարիզ, 1838, էջ 247։*

[2] **Gaspar Escolano**, Dècade Primera de la Historia de la Insigne y coronada Ciudad y Reino de Valencia (*Առաջին տասնամյակ Վալանսիայի նշանավոր և պսակազոր քաղաքին և թագավորության, Ա մաս, Ա գիրք, գլ. Դ, սյունակ 18, Վալանսիա, 1610)։ Հեղինակը չընդունիր նմանապես* Coetus Tubalis *լատինական ծագումը և կըսե թե (սյունակ 18) Թուպալ և իր մարդիկը հայերեն լեզու կխոսեին, որ այնքան կտարբերի լատիներենեն և թե Սպանիո մեջ երբեք լսված չէր լատիներեն բառ մը հասարակաց լեզվին մեջ մինչև հազարավոր տարիներ ետք, երբ հռոմեացիները այդ լեզուն մտցուցին այնտեղ, երկրին տեր դառնալով զենքի զորությամբ։*

[3] *Լուսիտ. միապ., ծանոթ.ներ, հեղինակներ, 84—85։ Այս արքեպիսկոպոսը կկարծվի թե Ռոտրիկո Խիմենեզ տէ Ռատա եկեղեցականն է, ծանոթ նաև իբր «Թոլետցի»։ Վախճանած է Ռոտանոյի մեջ 10 հունիս 1247-ին։ Իր գլխավոր գործը* rebus Hispaniae *սպանական միջնադարին մասին ամենեն կարևոր աղբյուրներեն մեկը կհամարվի։*

[4] *Էսքոլանո, անդ, Բ մաս, Վալանսիա, 1611, գիրք, 8 սյուն. 672—3. ըստ Էսքոլանոյի այս հսկաներու ոսկորներեն շատերը պահված են Սեն-Քյուքյուֆայի վանքը, Պենիֆիո վանականներու մենաստանին մեջ, Ժորանոյի կամ Սոթոր-տամ-տել Քոլլ կամ Քոլլատոյի մեջ, Վիքի վրա՝ երեք մղոն բարձրությամբ։*

[5] **Luis de Ariz**, Historia de las Grandezas de la Ciudad de Avila, Alcala de Henares (*Պատմություն Ավիլա քաղաքի մեծություններուն, տպ. Ալքալա տե Հենարես), 1607, Ա մաս, թերթ 12, հատված 2։ Լարրամենդի, անդ, գլ. Թ, կհիշե նմանապես նույն ավանդությունը, հաստատելու համար, թե պասքերենը եղած է Սպանիո ընդհանուր բարբառը, առանց սակայն հիշելու Նոյ նահապետը։*

Մյուս կողմե, ըստ պրոֆ. Ժոզեֆ Քարստի վիճարկության ենթարկված կարծիքին, «էուսքրայի (բասքյան լեզու) ձայնական դրությունը ոչինչով սպանաձև է, այլ պոնտո-ասիական և իր պատշաճ համակցականը կգտնե հայերենի մեջ»[6]: Իրեն համար հնդեվրոպական ոչ-կելտական ժողովուրդներու գոյությունը նախահռոմեական Հիսպանիի մեջ կասկածե դուրս է և անոնք է, որ ավելի արդարորեն պետք է կոչվին կրկնաիպերականներ, որոնց մեջ կընդգծե, որ հայկյան կամ կրկնահայկական տարրը գլխավոր դեր մը կատարած է այս ժողովուրդներու խումբին մեջ[7]:

Այս վիճելի նախամուտեն ետք, գանք հայ և լուսիտանական առաջին շփումներուն, ԺԱ դարու վերջավորության, երբ մեկ կողմե թափ կստանար փորթուկալյան ազգին կազմությունը և մյուս կողմե Մեծ Հայքի սարահարթներեն կսկսեր հայկական գաղթ մը, առավել կամ նվազ չափով Բյուզանդիոնեն բռնադատված, բայց մանավանդ իբր հետևանք սելջուկյան արշավանքին, գաղթ, որ ծնունդ պիտի տար

---

[6] Joseph Karst, Ասիածին և Լիբիո-հեսփերիական ժողովուրդներու բաղդատական ազգագրության ուսումնասիրության համար, Վիեննա, 1928, էջ 5, Ալարոտյաններ և նախապասրյաններու մեջ:

[7] Նույն, էջ 77—78. ըստ արաբի՝ Հանրի և Լուի Սիրեի կողմե սպանական հարավարևմուտքի մեջ կատարված հնախոսական պեղումներեն ետք կարելի չէ կասկածի ենթարկել նախապատմական Սպանիո մեջ Թրոիքո-անատոլիական ցեղախումբերու ներկայությունը:

Հովսեփ Սանտալյան, Հեթանոսական դարերու Հայաստանի վավերագրական պատմություն, Ն. Ք. 1410—3, Ք. 305, հատ. Ա, Հռոմ, 1917, էջ 149—150: Հիմնվելով Հուստինոսի վրա, լատին հեղինակ Բ դարու, ԼԽԴ, Գ. 8 և 9, կըսե. «Հին սպանացիները ունեին գետ մը Խալիպս կոչված, որու մոտ կբնակեին խալիպները: Ճիշտ է, որ կարելի չէ ստուգել ոչ այս գետին տեղը, ոչ այն շրջանը, ուր Սպանիո այս խալիպները կբնակեին. սակայն հայտնի է, որ այս ժողովուրդը պահած էր հիշատակը Ասիո խալիպներու երկրեն իր գաղթին: Հայերը Խալդա կկոչեին Ասիո այդ խալյուպները: Գիտենք, որ այս խալյուպները կամ խալդայները սերտ ազգականությամբ կապված էին հայոց հետ կամ, մանավանդ, ազգագրականորեն հայկական ցեղին պատված մեկ ճյուղը կկազմեին»: Իր կողմե Կրալեն, անդ, էջ 300, կըսե թե Պոմպեոս, ժամանակակից Տիտոս Լիվիոսի, հետևելով Հուստինոսի, Կալիսի մեջ դրած է Խալիպ ժողովուրդներ:

Հ. Մանանդյան, Հայաստանի առևտուրը և քաղաքները (անգլ. թրգմ.), Լիզբոն, 1965, էջ 44, կհիշե Ստրաբոնի վկայությունը ԺԱ 14,5, ըստ որու ք. ա. երկրորդ դարուն Հայաստան ընդարձակված էր ի վնաս խալյուպներուն և մոսինույկներուն, որոնցմե նվաճած էր Քարենիդիտը և Տերքսենեն, «նահանգներ, որ այսօր,—կըսե Ստրաբոն,—սահմանակից են Փոքր Հայաստանի կամ անոր մաս կկազմեն»: Ստրաբոն կտեղեկացնե նույնպես, որ իր ժամանակ այս Հայաստանի բոլոր բնակիչները նույն լեզուն կխոսեին:

միջին դարու ամենեն հետաքրքրական մեկ թագավորության, Փոքր Հայաստանի թագավորությունը կամ Կիլիկյան Հայաստանը՝ Փոքր Ասիո հարավակողմը, Միջերկրականի ափերուն վրա, որ պիտի տևեր մինչև ԺԴ դարու վերջին քառորդը:

Ճիշտ է որ միջին դարու ընթացքին փորթուկալցիներու և հայերու հարաբերությունները եղան դրվագային և պատահական, սակայն սկսան, եթե կարելի է ըսել, սկզբնավորութենեն իսկ, և իշխանական մակարդակի վրա, դատելով «Տոհմագրություններու գիրքեն»[8]—այսքան Հին գիրք որքան այն որ ճանչցված է կոմս Տոն Փետրոյի գիրք անվան տակ—«Պրականսաո»-ներու շառավիղագծին ծագման մասին[9]:

Արդարև, ըստ այս աղբյուրներուն ու նաև համաձայն եղբ. Անթոնիո Պրանտաոյի պատմության, իր Երրորդ մաս Լուսիտանական միաբանության[10] հատորին մեջ, փորթուկալցի ֆիտալկոներուն մեջ, որոնք փառքի տիրացան Քամփո տ'Ուրիքի ճակատամարտին ընթացքին, կգտնվեին երեք եղբայրներ, որոնք թոռներն էին հայ իշխանուհիի մը: Այս իշխանուհին, աղջիկը Հայաստանի թագավորի մը, քանի մը ընկերուհիներու հետ ուխտի եկած էր Սանթիակո տը Քոմփոսթել: Սան Սալվատոր տը Քասթրո տը Ավելլաշի մեջ, Պրականսայի շուրջը[11], հյուր եղավ Տոն Մենտո Ալտո տը Պրականսայի, ուխտադիր ազնվական

---

[8] «Տոհմագիծներու գիրքեր»-ուն (Livros de Linhagens) մասին տ. Alexandre Herculano-ի ուսումնասիրությունը, Portugaliae Monumenta Historica, Scriptores, հատ. Ա, էջ 133—143, Լիզբոն, 1856: Ըստ Հերքուլանոյի, էջ 135, գոյություն ունեին չորս «Տոհմագիծներու գիրքեր», ԺԶ դարեն առաջ. որոնք են. Ա. Այն որ կկոչվի Հին գիրք Livro Velho—1, Բ. հատված մը մոտավորապես նախորդին ժամանակեն, զոր կներմուծեն նույն Հին գիրքի կոչումին մեջ—2, Գ. Ազնվականներու ցանկ մը, որ կցված է «Հավաքածո հին երգերու» ձեռագրին և կկոչվի նաև «Թմբավորում ազնվականներու» —3, Դ. Գիրք տոհմագիծներու, որ կվերագրվի կոմս Տոն Փետրոյի և կգտնվի Թորրե տե Թոմպոյի Ազգային արխիվներուն մեջ —4: Չորս գիրքերը հրատարակված են նույն գործին մեջ, Ա. էջ 143—175, Բ. էջ 1—183, Գ. էջ 184—299, Դ. էջ 300—390:

[9] Հին գիրք, Ա, անդ, էջ 165: Հին գիրք, Բ, էջ 175: Այս անունը կերևի հավասարապես հետևյալ ձևերուն տակ. Պարկանսաո, Պրականսաո, Պարկանսա, Պրականսա:

[10] Լուսիտ. միաբ., մաս Գ, հեղ. Անտոնիո Պրանտաո, Լիզբոն, 1632, նոր տպ. Լիզբոն, 1973, թերթ 123—126:

[11] Այս հռչակավոր վանքեն, որ Պրականսայեն 7 կիլոմետր հեռավորության վրա էր և որ վանական կյանքի կարևոր կենտրոն մը եղավ Պրականսաոներու ատեն ԺԲ—ԺԶ դար, շատ քիչ բան կմնա այսօր, այն է մեկ մասը եկեղեցիին. տ. Ուղեցույց Փորթուկալի, Guia de Portugal, Trás-os-Montes e Alto-Douro II Lamego, Bragança e Miranda, 954—5.

որ տիրեց իրեն բռնությամբ և իրենց երկիրը ուղարկեց իր ընկերուհիները[12]։

Ունեցան երկու զավակ, Տոն Ֆերնան Մենտըշ, ավագը և Տոնա Ուրխանա Մենտըշ։ Առաջինը ամուսնացավ Քասթիլիո թագավոր Ալֆոնս Զ-ի աղջկան հետ, դառնալով քենակալ կոմս Հանրիի[13], որ ամուսնացած էր Թարեժայի հետ, ուրիշ մեկ աղջիկը նույն թագավորին։ Տոն Ֆերնան Մենտըշի որդին, Տոն Մեմ Ֆերնանտըշ, ամուսնացավ Տոնա Սանչա Վիեկաշի հետ, աղջիկը Տոն Էկաշ Կոսենտըշ տը Րիպա Տուրոյի, որ իրեն տվավ երեք որդի, Ֆերնան Մենտըշ, Րուի Մենտըշ և Նունո Մենտըշ, այսինքն անոնք որ առաջին գծի վրա քաջաբար կռվեցան Քամփո տ'Ուրիքի հաղթական ճակատամարտին մեջ, 25 հուլիս 1139-ին[14], որու ընթացքին անդրանիկը, աներորդի Աֆոնսո Էնրիքըշի, շահեցավ «Քաջն Տոն Ֆերնան Մենտըշի» տիտղոսը[15]։ Այս վերջինը կըգտնենք իբր վկա Աֆոնսո Էնրիքըշ թագավորին և խաչակիրներուն միջև կնքված դաշինքին, որով այս վերջինները օգնեցին թագավորին վերագրավելու Լիզպոնը մավրիտանացիներեն, 1147-ին[16]։

---

12 Կարելի է հարց տալ, թե այս իշխանուհին աղջի՞կն էր վերջին Բագրատունի թագավոր Գագիկ Բ-ի։ Այս վերջինը ուներ երեք զավակ, երկու մանչ Հովհաննես և Դավիթ և աղջիկ մը, որուն անունը չէ հասած մեզի, տ. Վ. Հ. Րյուտ Քոլլեմպերկ, Ռուբինյանները, Հեթումյանները և Լուսինյանները, Կազմություն հայ-կիլիկյան հարստություններուն, Փարիզ, 1963, էջ 46։ Իշխանուհին էր եկած Կոստանդնուպոլսե՞ն Պարսըլոն, և հետո Սանթիակո տը Քոմփոսթել, Հակոբ առաքյալին աղոթելու իր գրավյալ երկրին ազատության համար։

13 Կոմս Հանրի, հայր Փորթուկալի թագավոր Ալֆոնսո Ա-ի։ Չորրորդ որդին էր Հանրի տը Պուրկոնեյի։ 1086-ին եկավ իր հորեղբորորդի Ռեմոն տը Պուրկոնեյի հետ մտնելու Լեոնի և Քասթիլիո թագավոր Ալֆոնսո Զ-ի ծառայության մեջ։ Ամուսնացավ Թերեզայի հետ, աղջիկը նույն թագավորին և Շիմենա Նունըշի։ Իր աներհոր կողմե անվանվեցավ կառավարիչ Փորթուկալենսի կոմսության, զոր արդեն կկառավարեր անկախորեն 1097-ին։ Մեռավ Աստորկայի մեջ 1112—1114-ին։ Գերեզմանը կգտնվի Պրակայի մայր եկեղեցիին մեջ տ. Enciclopédia Luso-Brasileira de Cultura-Editorial Verbo-Lisboa, հատ. 9 սյունակ 1766—9, Henrique (Conde).

14 Լուսիտ. միապ., Գ. մաս, էջ 122։ Նյութեր, թ. 138։

15 Նույն, անդ, թ. 121։

16 Conquista de Lisboa aus Mouros (1147), Narracoos pelos Cruzados Osberno e Arnulfo, testemunhas presenciais do cerco (Լիզպոնի գրավումը մահմետականներու ձեռքեն 1147-ին, պատմված ականատես վկա Օզպերնո և Արնուլֆ խաչակիրներուն կողմե, լատիններեն բնագիր և փորթուկալերեն թարգմանություն, Լիզպոն 1936, էջ 71։ Լատիններեն բնագիրը արդեն հրատարակված էր

եղբ. Անթոնիո Պրանտաօ կպատմե հետևյալ մանրավեպը, քաղված Տոն Փետրո կոմսին գիրքեն, հեքիաթային պատմություն անվանելով հանդերձ զայն. Քոիմպրայի մեջ թագավորական խնջույքի մը ընթացքին, հայ իշխանուհիին թոռը քաջն Ֆերնան Մենտըշ, սեր թափեց մորուքին վրա, խնդուք պատճառելով բոլոր ներկաներուն։ Ինքզինքը անարգված զգալով, Ֆերնան Մենտըշ սաստիկ բարկության մեջ ինկավ։ Ալֆոնսո Էնրիքըշ թագավորը զինքը հանդարտեցնելու համար Կոնսալո տը Սուզայի հրամայեց անոր տալ իր ինչքերը և ստիպեց Սանչո Նունըշ տը Պարպոզային՝ անոր տալ իր կինը, Տոնա Թերեզա, որու համար կոմս Տոն Փետրո կըսե թե թագավորին աղջիկն էր[17], բայց ըստ Անթոնիո Պրանտաոյի, Ֆերնան Մենտըշ իբր կին առավ ոչ թե Աֆոնսո Էնրիքըշ թագավորին աղջիկը, այլ քույրը՝ Էնֆանթա Տոնա Սանչա, ինչպես կապացուցանեն, կըսե, 1145-ին գրի առնըված թուղթերը[18]։ Եթե Տ. Ֆերնան Մենտըշ զավակ չունեցավ այս Էնֆանթեն, Տոնա Թերեզա Սոարըշի[19] հետ առաջին ամուսնութենե մը ունեցավ որդի մը, Պետրո Ֆերնանտըշ տը Պրականսա[20], որ այս անվան տեղ առավ Լաետրա անունը, մինչ իր հաջորդները կառնեին Շավին անունը, երկուքն ալ անունները Պրականսա գավառին երկու ավան-

---

Լիզպոն, 1858-ին Portugaliae Monumenta Historiae, Scriptores-ի մեջ, հատոր Ա, էջ 392—405, ինչպես և William Stubbs-ի կողմե Itinerarium peregrinorum e gesta regis Ricardi, (Chronicles and Memorials of the reign of Richard I, London). Այս վավերագիրը մաս կկազմե Քեմպրիճի համալսարանին Corpo Christi մատենադարանին, թ. 470 ժողովածուին։

17 Լուսիտ. միապ., Գ. մաս, էջ 128բ։ Անտոնիո Պրանտաօ կըսե թե կասկածի տակ չի դներ թափված սերի պատմությունը, բայց չի կարծեր, որ այդպիսի աննշան պատահար մը ունեցած ըլլա այդքան արտասովոր հետևանքներ։

18 Լուսիտ. միապ., Ե մաս, Ֆրանսիսքո Պրանտաօ, Լիզպոն, 1650, ն. տպ. 1976, Լիզպոն, էջ 108. Արձանագրություն 10 հունիս 1145-ի, որ կհայտարարե. «Ես, Ֆերնան Մենտըշ, կնոջս Էնֆանթ Տոնա Սանչայի և զավակներուս և Փորթուկալի թագավոր Տոն Աֆոն-Մենտըշ Բարիի, Մենտըշ տե Մայիաներու ընտանիքեն և իր եղբայրներուն Տ. Փայիո Մենտըշ կհիշե իր առաջին կնոջն են, քանի որ զավակ չունեցավ Տոնա Սանչայեն։

19 Լուսիտ. միապ., Գ. մաս, էջ 123բ Տոնա Թերեզա Սոարըշ աղջիկն էր Տ. Սուերո Մենտըշ Բարիի, Մենտըշ տե Մայիաներու ընտանիքեն և իր եղբայրներուն Տ. Փայիո Մենտըշի, Պրակայի արքեպիսկոպոս և Կոնսալո Մենտըշ Ռազմիկի հետ գտնվեցավ 24 հունիս 1128-ին Սան Մամետեի ճակատամարտին մեջ, որ այնքան մեծ կարևորություն ունեցավ Փորթուկալի ճակատագրին համար, Joao Ameal, Historia de Portugal—Porot 1968, 53; Guia de Portugal, Entre Douro e Minho. 1 Douro Litoral, 451.

20 Նույն, անդ, էջ 123բ. Գիրք հին, անդ, Ա, էջ 165, նույն Բ. էջ 183. Տոն Պետրո Ֆերնանտըշ ամուսնացավ Ֆրոյլե Սանչեզի հետ, որ աղջիկն էր Տ. Սանչո Նունըշի և Էնֆանթին Տ. Սանչա կամ Թերեզայի հետ, որ իրեն տվավ չորս զավակ։

ներու[21]։ Այս հաջորդներեն մեկը, Նունո Մարթինշ, Պրականսաներու նշանավոր ընտանիքեն, Ալֆոնսո Գ թագավորին կողմե ստացավ Տ. Տինիշ արքայազունին դաստիարակության պաշտոնը։ Այս վերջինը, երբ թագավոր դարձավ 1279-ին, զայն անվանեց իր տան մեծ վերակացու, պահելով հանդերձ անոր Պրականսայի հողին կառավարիչի տիտղոսը[22]։ Նունո ամուսնացավ երկու անգամ, ձգելով կրսե Ֆրանսիսքո Պրանտաո, բազմամարդ սերունդ մը, որ կընդգրկե Փորթուկալի և Քասթիլիո ազնվականութենեն մեծ մաս մը, անջատաբար անկե, որ ծագում կառնե Տոնա Ինես տը Քասթրոյի և իշխան Տոն Փետրոյի փոթորկալից սերեն, որ երբ 1357-ին թագավոր եղավ զայն թագուհի նվիրագործեց, հակառակ անոր, որ մեռած էր 1355-են ի վեր։ Ինես տը Քասթրո շառավիղն էր Նունո Մարթինշ տը Շասին, այս վերջնույն երկրորդ ամուսնութենեն սերած իգական ճյուղեն[23]։

Գալով Տոնա Ուրրանա Մենտըշի, երկրորդ զավակը Ալան տը Պրականսայի և հայ իշխանուհիին, ան ամուսնացավ կոմս Ֆաֆըշ Սերազիմ տը Լանիոզո առաջինի հետ և իրենց զավակներեն սերած են «Կոտինիոնները»[24]։ Ֆաֆըշ Սերազին մեռած ըլլալով Քոիմպրայի մոտ Ակուաշ տը Մայաշի մեջ պատերազմի ընթացքին ընդդեմ Քասթիլիո թագավոր Տոն Սանշոյի, Տոնա Ուրրանա վերամուսնացած ըլլալ կթվի Տիոկո Կոնսալվըշի հետ, քաջամարտիկ ֆիտալկո մը, որ մեռավ Քամփո տ'Ուրիքի ճակատամարտին մեջ։ Ըստ Անթոնիո Պրանտաոյի, իրենց ամուսնութենեն ծնան արական ճյուղեն՝ Ֆրեյթաշները և Տուռշները, և իգական ճյուղեն՝ Լեյթոնշները և իրենց քրոջմեն կսերին Մաշատոները։ Իգական ճյուղեն կսերին նույնպես Ավելարի կողմինները՝ Պրանտոնշները և ուրիշներ։ Վալանթըշ անունով ազնվականները ևս կսերին Տիոկո Կոնսալվըշեն[25]։

Եթե այս սերնդաբանությունը, հիմնված «Տոհմագիծերու գիրքերուն» վրա, միշտ կմնա խնդրո առարկա, իրողություն է, որ Պրականսաներու ծագումը, զոր ավանդական կհամարեն ոմանք, պիտի ամրապընդվի, երբ ավելի ետքը ցույց պիտի տանք, թե ոչինչ կա անճշմար-

[21] Նույն, անդ, թ. 108բ։

[22] Նույն, անդ, պետք է նշել նաև, որ ըստ կոմս Փետրոյի գիրքին, անդ, Դ, էջ 325, Ֆերնան Մենտըշ էնֆանթ Տոնա Սանշայի տվավ Պրականսայի իր հողը, որ հետո անցավ Փորթուկալի թագին, որովհետև զավակ չունեցավ անկե։

[23] Նույն, թ. 5բ։

[24] Գիրք Տոն Փետրոյի, անդ, Դ, էջ 328. Լուսիտ. միապ., մաս Դ, թ. 57։

[25] Նույն, Դ, էջ 343, մաս Դ, թթ. 121—126։

տանման այն իրողության մեջ, որ հայ իշխանուհի մը և իր ընկերուհիները Սանթիակո տը Քոմփոսթել գացին ԺԱ դարուն վերջը։

Հայ և փորթուկալյան այս առաջին հարաբերությունները այստեղ կանգ չեն առներ։ Կոմս Րյուտ-Քոլլեմպերկ, նկարագրելով հայ-կիլիկյան հարստություններուն ունեցած տոհմային կապերը, տպավորիչ պատկերը կուտա միջին դարուն Միջերկրականի և Մերձավոր Արևելքի իշխող ընտանիքներուն աշխարհաքաղաքացիական տիեզերականության[26]։

Այսպես կհայտնվի, հետաքրքրական կերպով, Փորթուկալի և Կիլիկյան Հայաստանի իշխող հարստությունները զուրկ չեն ընտանեկան կապերե։ Արդարև, Փորթուկալի թագավորներ Սանշո Բ «Քափելո» (1223—1247) և իր եղբայր Աֆոնսո Գ «Պոլոնիացի»[27] (1248—1249) իրենց մոր Ուրրաքա տը Քասթիլի կողմե չորրորդ աստիճանով կսերին Ֆուլք տ'Անժուեն, ճիշտ ինչպես հայոց թագավոր Լևոն Բ (1236—1249), որ իր մոր Զապելի կողմե նույն ազգականական աստիճանը ունի Ֆուլք տ'Անժուի հետ, որ եղավ Երուսաղեմի թագավոր (1131—1140), իր երկրորդ ամուսնությամբ Մելիզանդի հետ, որ ինքն ալ ծնած էր հայ մորմե մը և ժառանգորդուհին էր Երուսաղեմի թագավորության[28]։

Հետևաբար Փորթուկալի թագավորներ Սանշո Բ և Աֆոնսո Գ կրնային «սիրելի զարմիկ» կոչել Հայոց թագավոր Լևոն Բ, ինչպես կընե արդեն Շառլ Ա, թագավոր Նափոլիի և Սիկիլիո (1226—1285), որդի Պլանշ տը Քասթիլլի, որ քույրն էր իրենց մոր Ուրրաքայի[29]։ Նմա-

[26] Րյուտ-Քոլլեմպերկ, անդ, խնամություններ. ցուցակ ԺԲ—ԺԴ դարերու։

[27] Տոն Աֆոնսո, կոմս Պոլոնիի, երբ տակավին Փորթուկալի թագավոր չէր և Ֆրանսա կգտնվեր, Իննովկենտիոս Դ պապեն ստացավ 30 հունվար 1245-ի «Սուրբ երկիր» կոնդակը, որ քրիստոնյա իշխանները կհրավիրեր խաչակրության Պաղեստինի մեջ։ Պոլոնիի կոմսը պատասխանեց, որ կնախընտրեր Սարակինոսներու դեմ կռվիլ Սպանիո մեջ։ Այդ նպատակին համար պապը իրեն շնորհեց նույն ներողագիրները, որ կուտար անոնց որ կերթային Ս. Տեղյաց մեջ ծառայելու, տ. Monumenta Henricina, հատ. Ա, Քոիմպրա, 1960, էջ 78, կոնդակ «Եռանդիվ հավատու», 8 ապրիլ 1245-ի։

[28] Ղ. Ալիշան, Սիսուան կամ Կիլիկյան Հայաստան, Վենետիկ, 1899, համտ. Սիսուան, էջ 43, ծան. 1. Մելիզանտ անդրանիկ աղջիկն էր Պոտուեն տյու Պուրի, նախ կոմս Եդեսիո և հետո թագավոր Երուսաղեմի, և Մարսիլի կամ Մորֆիի, աղջիկը Մելիտենեի հայ կառավարիչ Գաբրիելի։

[29] Քոլլեմպերկ, ծ. 26։ **Langlois**, Le trésor des Chartes d'Arménie, ou Cartularie de la Chancellerie Royale des Roupiniens, Venise, 1863, էջ 211. Լևոն Բ-ի վերջին շառավիղը Լևոն Ե թագավոր Հայաստանի, մեռած Փարիզ 1393-ին, իր կտակին մեջ կհիշե իր զարմիկներ Անգլիո, Քասթիլիո և Արակոնի թագավորները. կրնար նմանողաբար նույն ձևով կոչել նաև Փորթուկալի թագավորը։

նաեւ Հայոց թագաւորին զարմիկն էր Ֆրանսայի թագաւոր Լուի Թ (Սան Լուի) (1215—1270), եղբայր Շառլ Ա-ի։ Եվ արդէն իր ծոռը Ֆիլիփ Դ տը Վալուա 1332-ին կգրեր Լեոն Դ-ի, թոռ Լեոն Բ-ի, զայն կոչելով «մեր շատ սիրելի զարմիկ թագաւոր Հայաստանի»։ Այս նամակով իրեն կառաջարկեր տասը հազար ոսկեդրամ որպեսզի կարենա դիմադրել սարակինոսներուն[30]։ Այսքան կարեւոր գումար մը իր տեղը հասցնելու հոգը հանձնված էր Հովհաննես ԺԲ պապին—այն որ հավանութիւն հայտնեց Տոն Տինիշ թագաւորին կողմե Քրիստոսի կարգին հաստատման, պաշտպանելու համար Փորթուկալի թագավորութիւնը մավրիտանացիներուն դեմ[31]։ Պապը խաչակրութիւն մը քարոզել տվավ Սուրբ տեղյաց գրավման համար։ Ֆրանսայի թագավորը անվանվեցավ պետ այս արշավանքին, որուն ի վերջո հարեցան Նավառի, Պոհեմիո և Արակոնի թագավորները։ Ալֆոնս Դ Փորթուկալի և Քասթիլիո թագավորը չուզեցին միանալ անոր, որովհետև, կըսեին, նույն թշնամիներուն դեմ կռվի մեջ են իրենց սեփական հողամասին վրա։ Ամեն պարագայի մեջ միջազգային կացութիւնը և դրամական խնդիրներ ձախողեցուցին խաչակրութեան այս ծրագիրը[32]։ Հայաստանի մայրաքաղաք Սիսի անկումեն և Լեոն Ե Լուսինյան թագավորին գերութենեն ետք, Գրիգոր ԺԱ պապը 8 դեկտեմբեր 1375 թվակիր նամակով մը ջերմորեն հրավիրեց արեւմուտքի իշխանները պաշտպանել արեւելյան քրիստոնյաները և մանավանդ հայերը, որոնք օգնութենե զրկված կըսկըրկեին թուրքերուն և սարակինոսներուն հարվածներուն տակ[33]։ Քիչ մը ավելի ետք, 1337-ի գարնան, հրամայած էր Անգլիո, Պոհեմիո, Քասթիլիո, Ֆրանսայի, Նավառի և Փորթուկալի Հոսփիտալական ասպետներու կարգին զինելու 500 ձիավոր և 500 սկուտեղակիր սպասարկուներ։ Այս փորձը ևս, որ նպատակ ուներ մասնավորապես պաշտպանելու հույները, ձախողեցավ[34]։

Հայերը իրենց կողմե անգնահատելի օգնութիւն բերին խաչակիրներուն. 1584-ին Գրիգոր ԺԳ պապին կոնդակը կհայտարարեր.

«Ոչ մեկ ազգ ավելի փութով և եռանդով քան հայերը անոնց (խաչակիրներուն) բերավ իր օգնութիւնը մարդով, ձիերով, պաշարով և խորհուրդներով, իրենց ամբողջ ույժերով և ամենամեծ քաջութեամբ և հավատարմութեամբ անոնք օգնեցին քրիստոնյաներուն այս սրբազան պատերազմներուն մեջ»[35]։

Դեպքերու արտասովոր զուգադիպութեամբ մը Լեոն Ե, վերջին թագավոր Հայոց, 17 մայիս 1383-ին Պառաժոզի մեջ ներկա եղավ Քասթիլիո թագավոր Հովհաննես Ա-ի և Փորթուկալի էնֆանտ Պեաթրիսի ամուսնութեան։

Լեոն Ե (1374—75) հերոսական դիմադրութենե մը ետք հարկադրված էր 1375 ապրիլին հանձնելու իր մայրաքաղաք Սիսը Եգիպտոսի մամլուքներու սուլթանին։ Գերվեցավ իր ամբողջ ընտանիքին և շուրջիններուն հետ և տարվեցավ Կահիրե, ուր կալանավոր մնաց 6 տարի։ Ֆրանսիսկյան կրոնավոր Ժան Տարտել ջանաց ստանալ պապեն և եվրոպական արքունիքներեն պատանդին գինը։ Հաջողեցավ համոզել Արակոնի թագավոր Փետրո Դ և մանավանդ Քասթիլիո թագավոր Հովհաննես Ա վճարելու այդ գումարը։ Լեոն Ե ազատ արձակվեցավ 1382-ին և որոշեց անձնապես շնորհակալութիւն հայտնել գինքը ազատողներուն[36], նախ Կղեմես Ը պապին, Ավինյոնի մեջ, որ իրեն շնորհեց

Նույն շրջանին ի զորու եղող կանոնական օրենսդրութեան տառացի կիրարկութեամբ՝ ոչ Սանչո Բ, ոչ իր եղբայրը Աֆոնսո Դ չէին կրնար ամուսնանալ Լեոն Բ քույրերեն մեկուն հետ, առանց պապին բացառիկ թույլտվութեան։ Սակայն, ինչպես դիտել կուտա Քոլլեմպերկ, անդ, էջ 15, Հովհաննես ԻԲ պապը 1321-են սկսյալ ընդհանուր թույլտվութիւն շնորհեց 3-րդ և 4-րդ աստիճանի ազգականներու միջև ամուսնութեան։ Պատճառն այն էր, որ պատերազմներու հետեւանքով ազնվականութիւնը այնքան տասանորդված էր, որ անկարելի դարձած էր գտնել կին մը, որ ազգական չըլլա։

[30] Միսուան, էջ 468—9։ Թուրնըպիզ, Քաղաք. և կրոն. պատմութիւն Հայաստանի, էջ 652։

[31] **D. Joaquim de Azevedo**, Chronologia dos Summos Pontifices Romanos (*Ժամանակագրութիւն Հռոմեական քահանայապետներու, Լիզպոն, 1789, էջ 223—4*)։

[32] Միսուան, էջ 469։ Մոնումենթա հենրիսինա, հատ. Բ, էջ 170, ծան. 1։

[33] Թուրնըպիզ, անդ, էջ 736։

[34] Նույն, էջ 736։

[35] Կոնդակ 1584-ի, տ. Թուրնըպիզ, անդ, էջ 174։

[36] Իր ազատագրումեն ետք Լեոն Ե-ի ուղևորութիւնները մեծ մասամբ քաղված են Թուրնըպիզի վերոհիշյալ գործեն, էջ 742—753։ Սպանական աղբյուրներուն համար տեսնել մասնավորաբար **Don Caetano Rosell**, Crónicas de los Reyes de Castilla, desde Don Alfonso El Sabio, hasta los Católicos Don Fernando y Dona Isabel (*Ժամանակագրութիւն Քասթիլիո թագավորներուն սկսյալ Ալֆոնսո Իմաստունեն մինչև կաթոլիկ թագավորները Տոն Ֆերնանտո և Տոնա Իզապել, Մատրիտ, հատ. Բ, էջ 69—70*). «Ինչպե՞ս Տոն Ժուան թագավորը նամակներ ստացավ Հայաստանի թագավորեն, որ գերի էր Բաբելոնի մեջ», էջ 81. «Ինչպե՞ս Հայաստանի թագավորը Տոն Ժուան թագավորին մոտ եկավ Պառաժոզի մեջ», էջ 81—82. «Ինչպե՞ս թագավորին մոտ եկան, Հայաստանի թագավորին հետ, պատգամավորներ զորս թագավորը ուղարկած էր Բաբելոնի սուլ-

ոսկի վարդը, հետո Արակոնի թագավորին և վերջապես Քասթիլիո թագավոր Հովհաննես Ա-ին, որու առատաձեռնությունը վճռական դեր կատարած էր իր ազատագրման մեջ։ Լևոն Ե ճամփա ելավ Արակոնի արքունիքեն դեպի Քասթիլիա, բայց Հովհաննես թագավոր այն ատեն կգտնվեր Պատաժոզ, ուր 12 մայիսին տեղի պիտի ունենար իր երկրորդ ամուսնությունը Փորթուկալի իշխանուհի 12 տարեկան Պեաթրիսի հետ, աղջիկը թագավոր Տոն Ֆերնանտոյի և Տոնա Լեոնոր Թելեշի։ Հովհաննես Ա քանի մը օր հետաձգեց հարսանեկան արարողությունը որպեսզի Հայոց թագավոր կարենա ներկա ըլլալ։ Այս վերջնույն Պատաժոզ հասնելուն լուրը առնելուն Հովհաննես թագավորը քաղաքեն դուրս ելավ մինչև մեկ մղոն հեռավորության վրա և Լևոն Ե երբ տեսավ Քասթիլիո թագավորը իջավ իր ջորիեն, ծունկի եկավ և հանեց իր գլխարկը. Հովհաննես ևս ոտքը գետին դրավ, երկու վեհապետները ողջագուրվեցան և բարձրանալով իրենց գրաստներուն վրա, միասին գացին քաղաք[37]։ 17 մայիսին, Երրորդության տոնին կիրակի օրը, տեղի ունեցավ պսակը։ Ֆերնան Լոփըշ, ժամանակակից Տ. Ֆերնանտո թագավորին, կպատմե այս վերջնույն ժամանակագրության մեջ երկու ամուսնացողներուն գալուստը ձիով դեպի Պատաժոզի մայր եկեղեցին[38], իրենց կողքին ունենալով մեկ կողմե Լևոն Ե, թագավոր Հայաստանի, որ կբռներ Պեաթրիս թագուհին ձիուն սանձեն բռնած[39] և Ֆերնանտո թագավորին եղբայրը Տոն Ժուան, տեր Ավիշի, ապագա թագավոր Փորթուկալի և հիմնադիր Ավիշներու հարստության[40], իսկ մյուս կողմե Տոն Քարլոս Նավառայի էնֆան, աներորդի Քասթիլիո թագավոր

թանին և նամակը զոր ստացած ուղարկեց իրեն», էջ 82—83. «Այն նամակը զոր ծովակալը, պալատական և Բարկլոնի սուլթանին խորհրդական, ուղարկեց Տոն Ժուան թագավորին»։

[37] Բոզել, անդ, էջ 81։

[38] **Fernao Lopes,** Croónica de D. Fernando, Porto, 1966, 459.

[39] Տուարբե Լեաճ, անդ, էջ 406։

[40] **A. H. Oliveira Marques,** Histoire de Portugal des Origines à nos jours, Ed. Horvath (Պատմություն Փորթուկալի սկիզբեն մինչև մեր օրերը), 1978, էջ 96. Ավիշի տերը ինքզինքը թագավոր հռչակել տված էր Ժոան Ա անվան տակ 1385-ին Քոիմպրայի մեջ գումարված քորթեսներուն կողմե, ուր հաջողեցավ զահեն հեռացնել ուրիշ երկու թեկնածուներ, Ժոան և Տենիշ, ապօրեն զավակները Փետրո թագավորին և Ինես տը Քասթրոյի, որոնք կհայտարարեին թե թագավորը պաշտոնորեն ամուսնացած էր իրենց մոր հետ։ Այս երկու թեկնածուները ունեին հայկական արյուն իրենց երակներուն մեջ։

Հովհաննես Ա-ի և ուրիշ մեծ իշխան մը այս թագավորության։ Հանդեսներեն ետք Հայոց թագավորը ընկերացավ իր ազատարարին դեպի Սեն Ժաք տը Քոմփոսթել, ինչպես ուխտած էր իր գերության մեջ[41]։ Հովհաննես Ա նվիրեց Լևոն Ե-ի, ցկյանս, երեք մեծ քաղաք՝ Մատրիտ, Վիլլարեալ և Անտուհար։ Հոկտեմբեր 1383-ին Լևոն Ե հանդիսավոր կերպով ընդունեց Մատրիտի բնակիչներուն մեծարանքը։ Անոնց տերը մնաց 8 տարի և այնտեղ վերաշինել տվավ Ալքազար Րեալ[42] ամրոցին աշտարակները։ Երբ մեռավ Քասթիլիո Ժան թագավորը Մատրիտ քաղաքը վերջնականապես վերադարձավ թագին։ Իսկ Լևոն Ե մեռավ Փարիզի մեջ 29 նոյեմբեր 1393-ին և իր գերեզմանաքարը այսօր պահված է Սեն-Տընիի աբբայարանին արքայական դամբաններու նկուղին մեջ։

Լևոն Ե օրինավոր ամուսնութենե դուրս ծնած որդին էր Կիպրոսի գունտստապլ, խնամակալ և պայլ Ժան տը Լյուզինիանի և հայ իշխանուհիի մը։ Մեռած ըլլալով անժառանգ, իր թագը անցավ Կիպրոսի Լուսինիաններուն։

2326

1394-ին Հակոբ Ա, Կիպրոսի թագավոր, օծվեցավ Հայաստանի թագավոր, ավելացնելով այս տիտղոսը Կիպրոսի և Երուսաղեմի թագավորի իր տիտղոսներուն վրա։ Իր հաջորդները ջանադիր եղան պահելու այդ տիտղոսները և իրենց արքունիքին մեջ շարունակեցին մեկ քանին Հայաստանի թագավորության բարձր պաշտոններեն, որոնց օրինավոր ժառանգորդներն էին։ Անոնցմե «Հայաստանի մարաջախտի» պաշտոնը, որ երրորդ աստիճանը ուներ թագավորության բարձր պաշտոններու կարգին վրա, վերջին անգամ վիճակվեցավ, իբր պատվո տիտղոս, Կիպրոսի թագավոր Ժանյուսի (1398—1432)[43] ապօրեն զավակ Ֆեպյուս տը Լյուզինիանի (1459—1463)։ Ֆեպյուսի աղջիկը Էլեանոր երկրորդ անգամ ըլլալով ամուսնացավ Վասքո Ժիլ Մոնիշի հետ, որ ընկերն էր

---

[41] **Madalena Saez-Pomés,** Un Rey de Priente en Compostela: Léon V de l'Arménie, senor de Madrid (Cuadernos de Estudios Gallegos, N VI) 1946, էջ 243—249. (Արևելքի թագավոր մը Քոմփոսթելայի մեջ. Լևոն Ե Հայաստանի, տեր Մատրիտի)։

[42] Langlois, Cartulaire..., էջ 205. պատճեն Լևոն Ե Լուսինյանի կողմե Մատրիտի բնակիչներուն տրված առանձնաշնորհումներուն..., 13 հոկտեմբեր 1389։

[43] Վ. Ալիշան, Լևոն Մեծագործ, առաջին թագավոր Սիսուանի կամ Հայկ. Կիլիկիո, թրգմ. Հ. Կ. Պալյանի, Վենետիկ, 1888, էջ 207—8։

Վիքթոր Լանկլուա, Պատմական և քննական ուսումնասիրություն Հայաստանի ընկերային և քաղաքական կազմին Ռուբինյան հարստության թագավորներու օրով (ֆրանս.), Սեն-Փեթերսպուրկ, 1860, էջ 56։

Փորթուկալ-Քոիմպրայի իշխան Ժանի։ Մոնիշները իրենց խնամութեամբ հպարտացած, իրենց անվան աւելցուցին Լյուզինյան անունը, դառնալով Մոնիշ տը Լյուզինյան, նախնիք Փորթուկալի պատմութեան ակադեմիայի մեր մեծանուն պաշտոնակցին՝ մարքիզ Սան Փայոյի[44]։ Ըստ կոմս Քոլեմպերկի, Ֆեպյուսի մեծ մոր մայրը Ալիքս Իպըլեն, որու երակներուն մեջ կհոսեր հայկական արյուն, ամուսնանալով Կիպրոսի թագավոր Հյուկ Դ-ի հետ, Հեթումյաններու արքայական արյունը փոխանցեց Կիպրոսի ընտանիքին, հետևաբար նաև Սավուայի Տան և Եվրոպայի բոլոր կարևոր ընտանիքներուն[45]։

Գալով Փորթուկալ-Քոիմպրայի իշխան Ժանի, ան 1456-ին ամուսնացավ Շառլոթի հետ, որ աղջիկն էր Կիպրոսի Ժան Բ թագավորին խորթ եղբայրը Ֆեպյուսի։ Դառնալով իշխան Անտիոքի, մեռավ հաջորդ տարին և թաղվեցավ Նիկոսիո Սեն Ֆրանսիս[46] եկեղեցվույն մեջ։ Թունավորմա՞մբ մեռավ, ինչպես կկասկածեր Պիոս Բ պապը, թերևս զոհ օրթոտոքս հույներու և կաթոլիկ լատիններու մրցակցութեան, անտարակույս երբեք պիտի չգիտնանք։ Իր այրին Շառլոթ, որ կժառանգեր թագավորությունը, երկրորդ անգամ ամուսնացավ Լուի տը Սավուայի հետ և ժառանգորդ չունենալով՝ Կիպրոսի և Հայաստանի թագավորի տիտղոսը անցավ Սավուայի տան, որ մինչև այսօր իր զինանշաններուն մեջ կպահե Հայաստանի առյուծը[47]։

Ֆլորանսի մեջ կա եկեղեցի մը, ուր փորթուկալցիներ և հայեր կողքկողքի են առանց գիտնալու, այն է Ս. Մինիաթո ալ Մոնթե պազիլիքան։ Փորթուկալցիք կերթան այնտեղ ի հարգանս կարտինալ Տոն Ժեմի, եղբայր Փորթուկալ-Քոիմպրայի թագավոր Տոն Ժանի, մեռած 1459-ին և թաղված ավանդատան մեջ հաստատված «Փորթուկալի կարտինա-

[44] **Marques de Sao Payo,** Messire Jehan de Coymbre o Senhor Dom Joao, Principe de Antioquia (Portugueses e Cipriotas no Século XV), Braga, 1959, էջ 18—20 (Պարոն Ժեհան Քոիմպրայի, տեր Տոն Ժուան, իշխան Անտիոքի, Փորթուկալցիները և կիպրացիները ԺԵ դարուն)։

[45] Քոլլեմպերկ, անդ, էջ 36։

[46] **Francis M. Rogers**, The travels of the Infante Dom Pedro of Portugal, Cambridge, Massachusetts, 1961, 82. Fr. Pantaleao d'Aveiro, Itinerario da Terra Santa e suas particularidades, Լիզպոն 1593, տ. Նոր տպագր. Քոիմպրա 1927, էջ 67—8, Այս կրոնավորը տեսած էր իր գերեզմանը, որ գոյություն չունի այսօր, վանքը քանդված ըլլալով վենետիկցիներուն կողմե. տ. Սան Փայո, անդ, էջ 16։

[47] Քոլլեմպերկ, անդ, էջ 39։

լին» մատրան մեջ[48]։ Հայերը կերթան մեծարելու սբ. Մինասը, զոր միջին դարու լատինաբանները վերածած են Մինիաթյոսի կամ Մինիաթոյի։ Այս սուրբը եկած է Հայաստանեն, ինչպես կհետևի Պենետիկտոսի կարգեն հմուտ պատմաբան Հ. Փլասիտ Լուկանոյի հրատարակած աշխատություններեն, որոնց համաձայն եկեղեցին ԺԱ դարեն ի վեր պահպանված էր Բարսեղյան հայ կրոնավորներու կողմե[49]։

Տոն Ժեմի մատրան վերին զարդաշերտին վրա կան շարք մը զինանշաններ, որոնց մեջ եղբոր՝ Տոն Ժուան տը Քոիմպրայի զինանշանը, որ ցույց կուտա կապը Հայաստանի, Հայաստան-Լուսինյանի և Հայաստան-Կիպրոսի զինանշաններուն միջև։

Տոն Ժուան տը Փորթուկալ-Քոիմպրայի[50] զինանշանն է, քառամաս.

Ա. քառորդ, արծաթի վրա Երուսաղեմի խաչափյուռ ոսկեխաչով,
Բ. քառորդ, քառամաս, 1 և 4 Փորթուկալ-Ավիշ, 2 և 3 Անգլիա (Լանքասթըր),
Գ. քառորդ, ոսկիի վրա կարմիր առյուծով (Հայաստան)[51],
Դ. քառորդ, արծաթի վրա կարմիր առյուծով (Կիպրոս-Լուսինյան)։
Հայաստանի առյուծը, կարմիր տարագույն արծնապակի լեզվով,

[48] **Antonio Belard da Fonseca,** O Mistério dos Paineis. As personagens e a Armaria. Լիզպոն, 1959, էջ 13—33 (Նկարներու խորհուրդը։ Անձերը և զինանշանները)։ Հետաքրքրական է նշել, որ կարդինալ Տոն Ժեմի հուշարձանին ընդօրինակությունը, հավասար մեծությամբ, կգտնվի Մոսկվա, Պուշկինի անվան թանգարանին մեջ,

[49] Հ. Մինաս Նուրիկյան, Մխիթար Սեբաստացի, Վենետիկ, 1922, էջ 174—175 և 181, Կհիմնվի Հ. Փլասիտ Լուկանոյի գործին վրա՝ Ս. Մինիաթո Ֆիրենցեի մեջ, պատմություն և ավանդություն, Ֆիրենցե, 1902։ Հ. Մ. Նուրիկյան կշեշտե նաև, որ Վենետիկի Մխիթարյան Հ. Հովհ. Ավգերի կողմե վերջնականապես ապացուցված է, թե սբ. Մինաս կամ Մինիաթոս նույն անձն է, որ Իտալիո մեջ կմեծարվի Իքսփետիթուս անվան տակ։ Ս. Մինասի ուղղված հայերեն աղոթքները և շարականները անոր կուտան էքսփետիթուս տիտղոսը, այսինքն «փութաջան օգնական», տ. Զիվիլթա Քաթոլիքա, 1906, հատ. Ա, էջ 459, «սբ. Էքսփետիթ մարտիրոսին պաշտամունքին մասին»։ Ամբողջ Հայաստանի և Փոքր Ասիո, ինչպես Երուսաղեմի մեջ, անհամար եկեղեցիներ և մատուռներ կան իր անվան։ Ըստ Հ. Լուկանոյի, Թոսքանայի մեջ քառասունե ավելի եկեղեցիներ կային ի պատիվ Ս. Մինասին։ Հ. Նուրիկյան կըսե թե իր պաշտամունքը մուտք գործեց Իտալիա և Եվրոպայի մնացյալ մասին մեջ հայ գաղթականություններուն հետ։

[50] Ֆոնսեքա, անդ, էջ 22, պատկեր 21։

[51] Սան Փայո, անդ, էջ 6, կուտա նույնպես Հայաստան։ Ըստ Ֆոնսեքայի այս երրորդ քառամասն է Կոմս Հոլանտայի կամ Հայաստան։ Կհիշե հետևյալները. **Riestap,** Armorial Général, հատ. 4, Ցուցատախտակ ԾԴ, և **Santos Perreira,** Armorial Portugues, էջ 220։

ներմուծվեցավ Լուսինյաններու և Կիպրոսի թագավորներու զինանշաններուն մեջ։ Լուսինյաններու զինանշանն էր ուղղաձիգ «Եռամասն Հայաստանի առյուծով և Երուսաղեմի խաչով Լուսինյաններու առյուծին հետ»[52]։

Կիպրոսի թագավորները, որոնք Հայաստանի թագավորական տիտղոսը կկրեին (Հայաստանեն պահեցին միայն Կոռիկոսի սեփականությունը մինչև 1458) ունեին հետևյալ զինանշանը.

Քառամասն, ա—խաչ Երուսաղեմի
բ—Առյուծ Լուսինյաններու,
գ—Առյուծ Հայաստանի,
դ—Առյուծ Կիպրոսի[53]։

Շնորհիվ ԺԶ դարու սպանացի գրող Կոմեզ տը Սանթիստեպանի բեղուն երևակայության, ժան տը Փորթուկալ-Քոիմպրայի և կարդինալ Տոն Ժեմի հայրը՝ Էնֆան Տոն Փետրո ևս եղավ դերակատար մը հայ և փորթուկալյան հարաբերություններու թատերաբեմին վրա[54]։

Եթե Էնֆան Տոն Փետրո (1392—1449), որդի Փորթուկալի թագավոր Ժոան Ա-ի (1385—1433), այնքան հռչակ չվայելեց, որքան իր եղբայրը Հանրի Նավարկուն, իր կյանքի ընթացքին ունեցավ մեծ ճամփորդի մը համբավը, շնորհիվ Եվրոպայի մեջ 1425-են 1428 կատարած իր բազում շրջագայություններուն։ Ասիկա առիթ դարձավ, որ Կոմեզ տը Սանթիստեպան խմբագրե երևակայական գործ մը, տպագրված Սևիլի մեջ 1415-ին, որ կպատմե իշխան Տոն Փետրոյի մտացածին ուղևորությունները աշխարհի չորս մասերուն մեջ։ Առանց շատ մտահոգվելու պատմական ճշմարտության, ժամանակի և հեռավորու-

52 Քոլլեմպերկ, անդ, էջ 39—40։

53 Նույն, անդ։

54 **Gomes de Santisteban**, Libro del Infante Don Pedro de Portugal, publicado segundo as mais antigas edicoes, por Francis M. Rogers, Լիզպոն, 1962, սպաներեն բնագիր. **Rogers**, Travels, էջ 124—153 տված է անգլ. թարգմանություն մը հիմնված այս գործին քննական հրատարակության վրա, որուն առնվազըն 111 տպագրությունները հաշված է, սկսյալ ԺԶ դարեն, առնվազն 59 ըլլալով սպաներեն և մնացյալը փորթուկալերեն։ Նշելի է, որ ըստ Կ. տը Սանթիստեպանի Տոն Փետրո Հայաստանի թագավորին հետ խոսեցավ թարգման ունենալով Կարսի Բամբրեկ։ «Աշխարհի բոլոր լեզուներուն մեջ զորս թարգմանը գիտեր» հայերենը և հունարենը առաջին անգամը ըլլալով այստեղ ներմուծված են սպաներեն տպագրության մեջ, 1720, էջ 126։

թյան հարցերով, հեղինակը Տ. Փետրոն կտանի Երուսաղեմ, ինչպես վայել է, հետո Հայաստանի Սև լեռը, ուր է Նոյի տապանը, այսինքն Մեծ Հայաստան, նախքան հառաջանալը 15 փարսախ, որ հեռավորություն է, կըսե, որ կբաժնե տապանը Հայաստանի մայրաքաղաքեն, ուր գնաց խոնարհելու Հայոց Թագավորին առջև, որ այդ միջոցին գոյություն ուներ միայն Կիպրոսի և Կիլիկյան Հայաստանի կապված տիտղոսով[55]։

Այս վերջինը արդեն բավական ճանչցված էր ԺԳ դարուն Կղեմես Դ պապին (1265—1268) ժամանակ, երբ Հեթում Ա կիշխեր Փոքր Հայաստանի մեջ (1226—1269), ներշնչելու չափ Լեոնի և Քասթիլիո Թագավոր Ալֆոնս Ժ Իմաստունը (1221—1284), իր կալիսիեռ-փորթուկալյան լեզվով գրված գլխավոր գործին՝ Երգեր սրբուհի Մարիամի մեջ[56]։ Երգ 115-ի մեջ կպատմե մեծ տառապանքները զորս կրած է երիտասարդ մը հասնելու համար Հայաստան և երթալու համար Սև լեռը, ուր ճգնավոր մը զինքը պիտի ազատեր սատանայեն։ Կիլիկյան երկրին մեջ Սև լեռը, սուրբ կոչված, ապաստանն էր այլազան ազգերե բազմաթիվ մենակյացներու, գլխավորաբար հայեր, սուրիացիներ, հույներ և նույնիսկ լատիններ խաչակրություններու շրջանին[57]։ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ինքն ալ, ըստ ավանդության, ատեն մը բնակեցավ Սև լեռան առանձնության մեջ[58]։

Իր գոյության երեք դարերու ընթացքին, 1080-են 1375, Կիլիկյան Հայաստանի Թագավորության առևտրական կապերը զարգացան Միջերկրականի արևմտյան ժողովուրդների հետ, ճենովացի, վենետիկցի, սիցիլիացի, փրովանսցի և քաթալոնիացի[59]։ Առաջին համաձայնագրերը, հօգուտ ճենովացիներուն, կստորագրվին 1200-ին, վենետիկցիներուն հետ՝ 1201-ին, մինչ 1298-ին է որ Արագոնի Թագավոր Ժաք Բ-ի խնդրանքով (1291—1327) Հայաստանի Թագավոր Հեթում Բ Քաթալոնիո վա-

[55] Նույն, գլ. Թ. «Թե ինչպե՞ս Տոն Փետրո Երուսաղեմեն մեկնեցավ երթալու համար Հայաստանի լեռը, ուր կգտնվի Նոյի տապանը, և գլ. Ժ. «Թե ինչպե՞ս էնֆան Տոն Փետրո գնաց Արմենիա քաղաքը խոնարհելու համար Հայաստանի Թագավորին առջև», էջ 18—20 սպաներեն բնագրին և 132—133 անգլ. բնագրին։

[56] **Afonso X. O. Sabio,** Cantigas de Santa Maria, Երգեր Ս. Մարիամի, հրատ. Valter Mettmann, հատ. Բ, Երգ 115, էջ 37—46, Քոիմպրա, 1961։

[57] Սիսուան, էջ 485—6։

[58] Նույն, անդ։

[59] Նույն, էջ 430։ Հեղինակը կնշե, որ Այաս կուգային «Քաթալոնիայեն, Սևիլեն, Պարսըլոնեն, Սարակոսեն և Մաժորք կղզիեն»։

ճառականներուն շնորհեց Այասի նավահանգիստին մեջ մթերանոց հաստատելու և տուրքե զերծ մնալու իրավունքը[60]։ Այնտեղ կներածվեին Ասիո խորքերեն, Պարսկաստանեն, Հնդկաստանեն, նույնիսկ Չինաստանեն համեմներ, թանկագին քարեր, կերպասներ և ամեն տեսակ ապրանք, որ կշահագրգռեին հարավային Եվրոպայի նավարկու ժողովուրդները[61]։

Փորթուկալցիները չեն հիշատակված Այասի նավահանգիստը հաճախողներուն մեջ, բայց կարելի է մտածել, որ սկսյալ 1270-են, երբ իտալացի վաճառականներ հաստատվեցան Փորթուկալի մեջ, Իտալիո և Ֆլանտրի միջև ծովային ճանփորդությունները սկզբնավորության հետ միաժամանակ[62], որոնք 1319-են Վենետիկեն մեկնող նավերու կանոնավոր սպասարկություն մը դարձան[63], վենետիկցի, ֆիրենցեցի, ճենովացի վաճառականներ Լիզպոն ներածեցին Արևելքեն եկող ապրանքներ ինչպես համեմներ, մետաքսեղեն, զենքեր, ապակեղեն և այլ թանկարժեք իրեղեններ, զորս ձեռք կբերեին Եվրոպայի նախադուռ Կիլիկյան Հայաստանի մեջ[64]։ Եթե առևտրական այս անուղղակի հարաբերությունները գոյություն ունեցած են՝ երկար չեն տևած, որովհետև մահմետականներուն կողմե 1375-ին Կիլիկիո գրավումեն ետք

[60] **C. Marinescu,** La Catalogue et l'Arménie au temps de Jacques II (1291—1327) (Քաթալոնիա և Հայաստան Ժաք Բ-ի ժամանակ). տ. Mélange de l' Ecole Roumaine en France, Paris, 1923.

[61] Սիսուան, էջ 429—448։ Լանկլուա, անդ, էջ 88—94։

[62] **Oliveira Marques,** անդ, էջ 70—71։

[63] **Conde de Tovar,** Portugal e Veneza na Idade-Média (մինչև 1495), (Փորթուկալ և Վենետիկ միջին դարուն), Քոիմպրա, 1933, էջ 6։

[64] Հ. Դ. Փափազյան, Ռաշիտ-էդ-Դին Կիլիկյան Հայաստանի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1978, թ. 2—31։ Հոդվածը կտեղեկացնե Ավստրիո մեջ հրատարակությունը Քարլ Իանի կողմե «Պատմության Ֆրանկներու» գործին, որու հեղինակն է ԺԴ դարու պարսիկ պատմագիր և աշխարհագիր Ռաշիտ-էդ-Դին Ֆազլ Ալլահ Թաբիբ։ Մինչև այժմ ծանոթ էին Բ մասին Գ և Դ գլուխները, հրատարակված 1951-ին Ինդիա Օֆիսի և բավարիական մատենադարանի ձեռագիրներուն վրա։ Ք. Իան գտած է ամբողջությունը այս գործին Ստամպուլի Թոփ-Գափի թանգարանին մեջ, երեք օրինակով, որոնցմե ամենահինը կթվի գրված ըլլալ հեղինակին կենդանության։ Գիրքը կխոսի, ի մեջ այլոց, Կիլիկյան Հայաստանի մասին, զոր հեղինակը կկոչե «Եվրոպայի նախադուռը» և կուտա ամենահետաքրքրական տեղեկություններ աշխարհագրական, քաղաքական և պատմական, կըսե Հ. Փափազյան, որ կներկայացնե անոնց ամփոփումը։

Այսպես նավահանգիստը կորսնցուց իր կարևորությունը, մահացու հարված մը տալով անոր առևտուրին[65]։

Իսկ Արագոնի թագավոր Ժակ Բ երկու առաքելություն ղրկած էր Հայաստան և Սմբատի օրեն երկու անգամ ընդունած էր հայ դեսպաններ. նույնիսկ 1314-5-ին խոսք եղավ Ժակ Բ աղջկան ամուսնության Օշինի (1308—1320) հետ, որ հաջորդած էր Հեթում Բ-ի[66]։ Օշին Արագոնի թագավորին ուղարկեց սրբուհի Թեքլայի նշխարները, որոնք հանդիսավորապես դրվեցան Թարագոնի մայր եկեղեցին[67]։ Սրբուհիին պաշտամունքը տարածվեցավ Փորթուկալի մեջ, իր անունը տալով Ալթո Մինիոյի կարգ մը վայրերուն, նույնպես Կալիսիո մեջ, ուր Քամինիայեն ոչ շատ հեռու առանձնացած կոնաձև լեռ մը կա իր անունով[68]։

Հովհաննես ԻԱ փորթուկալցի միակ պապը, Հայոց հետ հարաբե-

---

[65] Սիսուան, անդ, էջ 429։ **Langlois**, Cartulaire, էջ 99։ Այսպես նավահանգիստը գրավված է մամլուքներեն 1347-են իվեր, կտրելով Փոքր Հայաստանը ծովի վրա ամեն ելքե, տ. **Paul Bedoukian**, Trade and Commerce of Cilician Armenia (The Armenian Revew, Spring, 1973, vol. XXVI, № 1—101).

[66] **N. Iorga**, L' Arménie Cilicienne, Paris, էջ 134։ Մինչդեռ Մարինեսքու իբր կարելի խոսեցյալ ցույց կուտա Քոնսթանս կամ Պլանշ Քոլլեմպերկ, անդ, էջ 72, թիվ 160, կկրկնե նույն տեղեկությունը, բայց (էջ 34) կըսե թե հավանաբար եղավ էնգաժմենը։ Բայց այս ամուսնությունը տեղի չունեցավ և 1316-ին Օշին ամուսնացավ, երկրորդ անգամ ըլլալով, Արագոնի Ժան իշխանուհիին հետ, որ աղջիկն էր Ֆիլիփ տը Թարանթի, տ. Քոլլեմպերկ, Ցուցակ Գ (H. 2) Հայաստանի և Արագոնի միջև կապը հաստատվեցավ ավելի ետքը Օշինի որդվույն՝ Լևոն Դ-ի (1320—1341) կողմե, որ այրիանալով 1331-ին ամուսնացավ Քոնսթանս տ'Արագոնի հետ, այրին Կիպրոսի թագավոր Հանրի Բ-ի։

[67] **Մարինեսքու**, անդ, 35։ Առաքում Օշին թագավորին կողմե սրբուհի Թեքլայի նշխարներուն։

Կ. Հ. Բասմաճյան. Հակոբ Բ թագավոր Արագոնի և Օշին, թագավոր Փոքր Հայաստանի, ըստ Արագոնի թագին արխիվներուն (ֆրանսերեն և լատիներեն), Փարիզ, 1908. Relacion verdadeira de la translacio des Bras de la gloriosa Verge e Invicta Protho-martyr Santa Tecla, dexebla del Apostol Sant Pau, y Patrona de la Ciutat e Iglesia Metropolitana de Tarragona dasde Armenia a dita Ciutat (Ճշմարիտ պատմություն ս. Թեքլայի նշխարներուն Հայաստանեն Թարագոն փոխադրությանը Պարսելոն, տպ. Ժ. Լոփես, 1698, հիշված Mariano Aguilo y Fuster-ի կողմե, տ. Catalogo de obras de lingua Catalana, Madrid, 1927, № 1207։ Գրացուցակին հեղինակը կըսե. «Հետաքրքրական պատմություն, որ կթվի գրված ըլլալ ԺԶ դարուն սկիզբը։ Կպարունակե նաև, կըսե, ժամփորդության նկարագրություններ և տոնակատարություններ։

[68] Ուղեցույց Փորթուկալի, Guia de Portugal, Entre Douro e Monho, 11, Minho, էջ 1044։

րություններ պետք է ունեցած ըլլա իր 9 ամսվա 1276—7 քահանայապետության միջոցին, ծանոթ ըլլալով իբր մեկը, որ մեծ խնամքով ջանաց պահպանել Պաղեստինի այն մասը, որ տակավին քրիստոնյաներուն ձեռքն էր, ղրկելով անոնց դրամ և աշխատելով նաև բարվոքել հարաբերությունները հույն եկեղեցիին հետ[69]։

Բայց Իննովկենտիոս Դ (1243—1245) պապին է, որ կպարտինք առաջին իրական շփումը փորթուկալցի կրոնավորի մը Հայաստանի հետ։ 1245-ին[70] Լիոնի մեջ գումարված եկեղեցական ժողովեն ետք այս պապը Արևելք ուղարկած էր ֆրանսիսկյան և դոմինիկյան կրոնավորներ և այս վերջիններուն մեջ փորթուկալցի եղբ. Լորան։ 1247-ին պապը զինքը կանվաներ նվիրակ, բացարձակ իշխանությամբ «Հայաստանի, Իկոնիո, Թուրքիո, Հունաստանի և Բաբելոնի թագավորության մեջ և բոլոր հույներուն վրա, որոնք կապրին Անտիոքի պատրիարքության մեջ, ինչպես նաև հակոբիկյաններուն, մարոնիներուն և նեստորականներուն վրա»։ Քիչ հետո Իննովկենտիոս Դ կգրեր Արևելքի պատրիարքներուն, արքեպիսկոպոսներուն և եպիսկոպոսներուն, որոնց մեջ Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա, հանձնարարելով անոնց, որ թիկունք տան իր նվիրակին, Լորան փորթուկալցիի հեղինակության[71]։

---

[69] **P. Miguel de Oliveira**, Historia Ecclesiastica de Portugal, Lisboa, 1940, էջ 36; **P. Jose de Castro**, Portugal em Roma, 2 հատ., Lisboa, 1939, հատ. Ա, էջ 34; **Joaquim de Azevedo**, անդ, էջ 213—4։

[70] **Օլիվեյրա**, անդ, էջ 120. 1245-ի Լիոնի էկումենիկ եկեղեցաժողովին Փորթուկալեն եկան Տ. Ժոան Էկաշ, արքեպիսկոպոս Պրակայի, Տ. Թիպուրսիո, եպիսկոպոս Քոիմպրայի, Տ. Փետրո Սալվատորըշ, եպիսկոպոս Փորթոյի և Տ. Այրըշ Վասքըշ, եպիսկոպոս Լիզպոնի, և քանի մը փորթուկալցի ազնվականներ։

[71] **Եղբ. Ժոան Պաքիսթա տը Ս. Անթոնիո**, Սերաֆիկական պարտեզ քավության՝ ս. տեղյաց մեջ հաստատված..., մաս Բ, Լիզպոն, էջ 411—3. ըստ ֆրանսիսկյան հեղինակին, փոխ-գործավար և ընդհանուր մատակարար ս. տեղյաց, 1245-ին պաշտոնի կոչված միջոցին, Մինորներու կարգին պատկանող փորթուկալցի կրոնավորը Հռոմ կգտնվեր իբր առաքելական դատավոր։ Պաշտոնաշնորհման իր նամակին մեջ Իննովկենտիոս Դ պապը գովեստը կըներ իր առաքինության և ս. գրոց իր հմտության, հանձնարարելով իրեն որ աշխատի լատին և հունական եկեղեցիներու միացման։ 9 հունիս 1247-ին Լիոնեն թվագրված կոնդակով մը (հրատ. էջ 412), պապը կրկին անգամ նվիրակ կանվաներ եղբ. Լորանը Հայաստանի և ուրիշ երկիրներու համար։ Եղբ. Ժոան Պաթիսթա կնշե նույնպես, որ պապին 3 օգոստոս 1247-ի նամակը, ուղղված Արևելքի եկեղեցականներուն, թվագրված էր Լիոնեն և կսկսեր այսպես.

Թուրնըպիզ, անդ, էջ 289, ծան. 1, հիմնվելով Րենալտիի «Եկեղեցական տարեգրության» վրա, տարի 1247, թ. 31 և 38, կհիշատակե Իննովկենտիոս Դ-ի նամակը Հայոց կաթողիկոսին, հանձնարարելով եղբ. Լորանը։

Մոնարքիա Լուզիթանայի հինգերորդ բաժնին մեջ Ֆրանսիսքո Պրանտաո կպատմե, որ 1299-ին Կազան, Թաթարներու թագավորը, ամուսնացած հայ իշխանուհիի մը հետ, որ աղջիկն էր Հայաստանի թագավոր Հեթում Ա-ի, ուրացավ Մոհամետի օրենքը, ընդունելով քրիստոնեական հավատքը և աներհոր դրդումին վրա, պատերազմ հայտարարեց սարակինոսներուն դեմ, ազատագրելու համար սուրբ քաղաքը[72]: Հեղինակը կնշե, որ Երուսաղեմը վերագրավելու համար Կազանղանը կոչ ըրած է Թամփլ-ի և Օսփիտալ-ի ասպետներուն, որոնք Կիպրոս կգտնվեին: 1299-ի սկիզբը լսելով այս պատրաստություններուն լուրը, Փորթուկալի թագավոր Տ. Տինիշ (1279—1325) հրամայեց, որ իր տեղը «ասպետ մը երթա սուրբ երկիրը, երկու տարվան համար, ծառայելով Աստուծո ի փրկություն իր հոգվույն: Կընծայեր 3000 խաչակրության մասնակցելու համար»: Այս առաքելության համար թագավորը ընտրեց Տ. Ժոան Սիմոն, «գլխավոր բարապան իր տան»[73]: Եթե այս

Baron Henrion, Histoire Générale des Mission Catholiques depuis le XIIIe siècle jusqu'à nos jours (*Ընդհ. պատմություն կաթոլիկ առաքելություններուն ԺԳ դարեն մինչև մեր օրերը*), *Փարիզ, 1847, գիրք Ա., մաս Ա., էջ 20:*

Եղբ. Ժան Փլան Քարբեն հաջորդած պիտի ըլլա եղբ. Լորանի իբր արքեպիսկոպոս Անդիվարիի աթոռին, մայրաքաղաք Տալմացիո: **Sirarpie Der Nersessian, West**ern Iconographic themes in Armenian Manuscripts. „Byzantine and Armenian Studies", Louvain, *1973, հատ.* 1, *էջ 618:*

«Շատ քիչ բան գիտենք Փորթուկալի Լորանի մասին, բացի անկե, որ նամակ մը ստացավ պապեն»: **G. Golubovitch,** Bibliografica della Terra Santa, 1913, vol. II, *էջ, 319—324:* **P. Pelliot,** Les Mongol et la Papauté, Revue de l' Orient Chrétien XXIII (1922—3), *էջ 7—9:* **G. Soranzo,** Il Papat, l' Europa Cristiana e i Tartari, Milan, 1930, *էջ 92—94, 113—4:*

[72] *Լուսիտ. միապ., մաս Ե, էջ 276, ա-բ: Ֆր. Պրանտաո այս տեղեկությունը քաղած է անտարակույս Քրոնիք տը Սեն-Տընի-են, գլ. ԻԴ, որ կըսե. «Այդ տարին, (1266) Թաթարներու թագավորը Քասասհան, զոր մեծ-խան կկոչեին, սքանչելիորեն և հրաշքով, բազմաթիվ մարդոց հետ քրիստոնեացավ և դարձի եկավ Հայաստանի թագավորին աղջկան կողմե, որ քրիստոնյա էր (և) որու հետ ամուսնացած էր...:* (Է. Հյուրի, *Քրիստոնեությունը Չինաստանի, Թաթարիստանի և Թիպեթի մեջ, Փարիզ, 1857, հատ. Ա, էջ 352, ծանոթ. 1): Ըստ* Քոլլեմպերկի, *անդ, Ցուցակ ԺԴ (M),* Իլխանի տակը. *յոթը կիներեն մեկը եղած է հայ տիկին մը, բայց ոչինչ կըսե Հեթում թագավորին հետ անոր ազգակցության մասին: Կհիշե, սակայն, երկու թոռները այս թագավորին, Թորոս, թագավոր Հայաստանի (1293—1294) սպանված 1298-ին և իր եղբայրը Սմբատ, որ թագավորեց 1297—1298, որոնք 1297-ին ամուսնացան Կազանի ընտանիքեն երկու մոնղոլ իշխանուհիներու հետ, ամուսնական կապերով ամրապնդելու համար հայերու և մոնղոլներու քաղաքական և զինվորական դաշնակցությունը:*

[73] *Ժամակարգություն սուրբ Անտոնինոսի, Գ մաս, գլ. Ը, թերթ 82, հիշված Հյուրի*

վերջինը ամբողջապես կատարեց իր առաքելությունը, այդ պարագային բախտը ունեցավ Երուսաղեմի մեջ հանդիպելու Հայաստանի թագավոր Հեթում Բ-ի, որ 1300 տարվույն վերջը հաղթական մուտք գործեց սուրբ քաղաքին մեջ և հանդիսավորապես այնտեղ տոնեց աստվածահայտնությունը 6 հունվար 1301-ին: Փառքի օր մը եղավ այդ բոլոր քրիստոնյաներուն համար, բայց չտևեց երկար, որովհետև փետրվարին Կազան կհեռանար Սուրիայեն և Հեթում Բ առանձին մնալով, կստիպվեր վերադառնալ Հայաստան[74]:

Այս միևնույն թագավորն է, որ 1292-ին ֆրանսիսկյաններու վանքը մտած էր եղբայր Հովհաննես անվան տակ, փոխն ի փոխ կրելով արքայական թագը և Ս. Ֆրանսիսկոսի զգեստը: Հետո 1305-ին վերջնականապես լքեց թագը և հանդիսավոր ուխտ կատարեց ֆրանսիսկյաններու առաքելական կանոնին, ինչպես կհետևի վկայականեն, զոր տված է իրեն Միաբանության ընդհանուր պետը, եղբ. Կոնսալո տը Պալպոա, ազգությամբ փորթուկալցի[75]: Այս պարագան պատճառ ե-

---

կողմե, նույն, էջ 352: Ըստ այս վերջինույն ս. Անտոնինոս այս տեղեկությունները առած էր Ֆիրենցեի քաղաքացիե մը, որ երկար տարիներ բնակելե ետք Թաթարներուն մեջ, նվիրակ ուղարկված էր պապին և քրիստոնյա իշխաններուն հաղորդելու համար այս կարևոր լուրը:

[74] **Mosheim,** *Եկեղեցական պատմություն Թաթարներու, Հելմսթատիվ, 1740, էջ 86, հիշված Հյուրի կողմե, նույն, էջ 352, որ կավելցնե. «անտարակույս այդ բանը կարելի է, բայց հրաշք մը ավելի կարելի է»:*

[75] **Ժոան Պաքիսը,** *էջ 528: Գլուխ ԼԸ-ի մեջ հեղինակը իբր մեկ անձ կներկայացնե Հեթում Ա և իր թոռը Հեթում Բ, եղբայր Հովհաննես Մակար անվան տակ, Հեթում Ա-ի կրոնավորի անունը եղող Մակարը միացնելով Հեթում Բ-ի առած Հովհաննես անվան: Ավելի ըլլալով, կըսե թե այս վերջինույն մահը պատահած է 1310-ին, կռիվի ընթացքին, սարակինոսներու կողմե արձակված նետով մը: Կավելցնե թե իր զինվորները իրեն տվին պատվո դամբան մը Հայաստանի Սիս քաղաքին սուրբ Ֆրանսիսկոս վանքին մեջ: Քանի մը տարի ետք, կնշե, կատարվեցավ իր աճյուններու փոխադրությունը Աքիթեն: Արդ, ծանոթ է, որ իր ողբերգական մահը, իր եղբորորդվույն երիտասարդ թագավոր Լևոն Դ-ի հետ, տեղի ունեցավ 16-են 17 նոյեմբեր 1307-ի գիշերը: Հեղինակը թերևս շփոթություն մը կկատարե Հեթում պատմիչի մահվան, կարելի, բայց անծանոթ թվականին հետ (որու համար կըսե թե եղբորորդին էր Հեթում Բ-ի, մինչ ան Հեթում Ա-ի եղբորորդին էր), որ Անտոն (Հեյթոն) անվան տակ Փրեմոնթրե կրոնավորներու կարգը մտած էր Կիպրոսի անոնց վանքին մեջ: Ալիշան չի թերանար ցույց տալու (անդ, էջ 404, ծան. 1), որ իրենց մահեն ետք այս երեք Հեթումները մեկզմեկու հետ շփոթված են տարօրինակ կերպով: Կհայտարարե, որ չի գիտեր թե ինչպես և երբ մեռած է Հեթում պատմիչը բայց կնշե, որ (էջ 404) անոր վերջին գործը այն է, զոր կհիշատակե Պյուսթրոն պատմագիրը. «1300-ին կգտնվեր Կիլիկիա, վերադարձած ըլլալով Կիպրոսեն և խորհուրդ կուտար Օշին թագավորին իր մոտ ընդունելու*

ղավ, որ ինքն ալ երևի Կոայի ս. Ֆրանսուա տ'Ասիզ եկեղեցվույն գըլխավոր մատուռին որմերը զարդարող ութը ֆրանսիսկյան թագավորներու դիմանկարներուն շարքին մեջ «Եղբ. Ժոաննես, թագավոր Հայոց» անվան տակ։ Եկեղեցին օծված էր 1603-ին Հնդկաստանի կղերապետ Տ. Ալեյշո տը Մենեզըշի կողմե, Օգոստինյանց կարգեն[76]։

Եթե միջին դարերուն փորթուկալցիներու և հայերու միջև առևտըրական հարաբերություններու բացակայությունը առիթ չստեղծեց, որ երկու ժողովուրդները ունենան ավելի սերտ շփումներ, սակայն կրոնական պատճառներով անոնք իրարու պիտի հանդիպեին Ֆլորանսի և Բազելի եկեղեցական ժողովներուն ընթացքին և մանավանդ քրիստոնեության վերին վայրերուն մեջ, ինչպես էին սուրբ Հակոբ Կալիսի, Երուսաղեմ և Մելիափոր Հնդկաստանի մեջ, ուր 1517-ին հայ վաճառականներ առաջինները եղան, որ նույն տարին Մալաքայի երկու փորթուկալցիները և անոնց ճանչցուցին ս. Թոմասի դամբանը, ըստ Կասպար Քորրեայի և Ժոան տը Պարրոսի պատմածին[77]։ Այս ուխտագնացությունները գլխավոր պատճառները եղան, որ թույլ ավին այս շփումները, որոնք անտարակույս պատահական էին, բայց ըստ բավականի բազմաթիվ եղան հետքեր ձգելու համար։ Քանի որ կխոսինք Հընդկաստանի մասին, ԺԶ դարու այս առաջին քառորդին կարժե հիշել անունը Աբունայի, որ կոչված է նաև Մար Ժակոպ և որ շուրջ 1523-ին Քոշեննեն նամակ մը կգրեր Փորթուկալի թագավոր Ժոան Գ-ի, ուր ինքզինքը կանվաներ «Հայ կրոնավոր մը, որ կղեկավարե Հնդկաստանի քրիստոնյաները ...ձեռնադրված և այնտեղ է ուղարկված Բաբելոնի

Կիպրոսի թագավոր Հենրիկոսը, զոր գահազուրկ ըրած էր իր եղբայրը Ամորի։ Ըստ Հ. Թորոսյանի, Պատմություն հայ գրականության սկիզբեն մինչև մեր օրերը, Փարիզ, 1951, Հեթում պատմիչ մեռած է Փութիեյի մեջ հավանաբար 1308-ին։

76 Հին Կոա, Պատմական ուղեցույց, Կոա, Ազգային տպարան, 1952, էջ 52. ֆրանսիսկյան թագավորներու ութը նկարներն են. եղբ. Բալդըինոս, Երուսաղեմի թագավոր, եղբ. Ժաքոպուս, Երեց, Իբարիա թագավոր, եղբ. Հենրիկոս, Կիպրոսի թագավոր, եղբ. Պետրոս, Արակոնի թագավորը, եղբ. Լուտովիկոս, Արակոնի թագավոր, եղբ. Ատոլֆուս, Հոլսաթիո թագավոր, եղբ. Հովհաննես, Հայաստանի թագավոր, եղբ. Հովհաննես, Կայսր Կոստանդնուպոլսոյ։ Ալիշան, անդ, էջ 441, ծան. 1, «Հեթում Բ, վանական և թագավոր միանգամայն, քանի մը ֆրանսիսկյան ժամագիրքերու մեջ հիշատակված է իբր Երջանկահիշատակ»։

77 **Gaspar Correia,** Lendas da India (Հնդկաստանի ավանդությունները), հատ. Բ, Քոիմպրա, 1925, էջ 722։ **Joao de Barros,** Da Asia, Década Terceira Երրորդ տասնամյակ, մաս 2ա, Լիզպոն, 1563, տ. տպ. 1777, (Ասիո մասին) էջ 223—224։

պատրիարքին կողմե»։ Ս. Ֆրանսուա Քսավիե, նույն թագավորին ուղղված նամակով մը, Քոշենեն, թվագրված 26 հունվար 1549-ին, կանդրադառնա նույն կրոնավորին հետևյալ բառերով. «Հայաստանեն եպիսկոպոս մը, Ժաքոմե Աբունա անունով, այս շրջաններուն մեջ ծառայեց Աստուծո և Ձեր բարձրապատվության 45 տարի, շատ ծեր, առաքինի և սուրբ մարդ մը[78]»։ Ջանադիր ըլլալով լավ հարաբերություններու մշակումին ս. Թոմասի քրիստոնյաներու և փորթուկալցիներուն միջև, կարևոր դեր կատարեց այս վերջիններուն տալու համար համեմներու առևտրին մենաշնորհը[79]։

Խաչակիրներուն կողմե Երուսաղեմի գրավումեն ետք, փորթուկալցիները, իրենք ալ հրապուրված վտանգավոր բայց սքանչելի արկածախնդրութենեն, որ էր Ս. Տեղյաց ուխտագնացությունը, կատարեցին զայն բավական մեծ թվով, որպեսզի հարաբերաբար ավելի կարևոր վավերաթուղթեր մնան անկե, քան թե Քոմփոսթելի ուխտագնացութենեն, ինչպես ցույց տված է հայր Մարիո Մարթինշ իր թանկարժեք գիր-

78 **Geor Schurhammer,** Armenian Bishops in Malabar (Հայ եպիսկոպոսներ Մալապարի մեջ), Arquivos do Centro Cultural Portugues, Փարիզ, 1972, հատ. Դ, էջ 141—8։ **Roberto Gulbenkian,** Jacome Abuna, an Armenian Bishop in Malabar (1503—1550), Նույն, էջ 149—176։ Այս ուսումնասիրությունը հայերենի թարգմանված է Հնդկահայերի պատմությունից վերնագրով «Հասարակ. գիտությունների գիտական ինֆորմացիայի» հայագիտության արտասահմանում մատենաշարին մեջ, 1973, էջ 1—34։ **Joseph Costello,** հիսուսյան, գերմաներեն բընագրեն անգլիերենի թարգմանած է Կ. Շուրհամմերի **Franz Xaver:** Sein Leben und Seine Zeit. Erster Band: Europa 1506—1541 գործը, հր. Freiburg im Breisgau 1955, հետևյալ վերնագրով՝ Francis Xavier, His life, His Time, vol. I, Europe 1506—1541, Rome 1973, որու էջ 680-ի էջ 7 ծանոթագրության մեջ հարմար դատած է ներկայացնել վերի երկու կարծիքները փորթուկալյան հին վավերագիրներու մեջ «Արմենոյի» նշանակության մասին։ Նույնպես Ինտիա 1541—1545 (Հռոմ, 1977)-ի մեջ Քոսթելլո (էջ 578—9) Շուրհամմերի էջ 154 ծանոթ.-ին առթիվ Աբունա Սուրիացիի մը մասին, ուր ան կհաստատե թե «Պարրոս և Քուտո զայն կկոչեն հայ, ինչ որ այստեղ և այլուր կնշանակե քաղդեացի», Քոսթելլո պարտք համարած է ավելցնել. «հակառակ փաստի համար տեսնել Ռ. Կյուլպենկյան, հատ. Ա, էջ 680։ Կարելի է ըսել առանց սխալելու, թե եթե անոնք զորը փորթուկալցիները հայ կկոչեին ամենն ալ հայ չէին, բոլորն ալ արևելյան քրիստոնյաներ էին։ Այնպես որ անոնց մեջ տեսնել միայն հայեր կամ չտեսնել ոչ մեկ հայ՝ հավասարապես սխալ պիտի ըլլար։

79 **G. M. Moraes,** A History of Christianity in India from early times to St. Francis Xavier A. D. 52—1542, Bombay, 1964 (Պատմություն քրիստոնեության սկիզբեն մինչև սբ. Ֆրանսուա Քսավիե, Հնդկաստանի մեջ), էջ 220—221։

քով, որ է Ուխտագնացություններ և հրաշքի գիրքեր մեր միջին դարուն մեջ[80]։ Երուսաղեմ գալով փորթուկալցիները չէին կրնար շփումներ չունենալ հայերու հետ, որոնք այնտեղ համայնք մը կազմած էին առնվազն Ե դարեն իվեր և հակառակ բոլոր վերիվայրումներուն, տեվական ներկայություն մը մինչև մեր օրերը։

Այսօր հայկական վանքը կգրավե ամբողջ Սիոն լեռը, շուրջ 150.000 քառակուսի մետր տարածության մը վրա, գրեթե մեկ վեցերորդը հին քաղաքին, պարիսպներեն ներս։ Իր շրջապատին մեջ կգտնվի ս. Հակոբի մայր եկեղեցին, որ է Աթոռը Երուսաղեմի հայ պատրիարքներուն։ Կառուցված է այն վայրին վրա, ուր եղած էր տունը քրիստոնյա եկեղեցվո առաջին եպիսկոպոսին՝ Քրիստոսի եղբայր սուրբ Հակոբի առաքյալին։ Մայր եկեղեցվո մատուռներեն մեկուն մեջ պահված է գլուխը մյուս Հակոբ առաքյալին, եղբայրը ս. Հովհաննես Զեբեդեի։ Մուտքին ձախակողմը կգտնվի ուրիշ մատուռ մը ս. Մինասի, պաշտպանը հռոմեական բանակի հայ լեգեոնին, որ Երուսաղեմ կրնակեր Բ դարուն։ Ասկե զատ նույն գոտիին մեջ և հայոց պատրիարքին իրավասության տակ կգտնվի նաև ս. Հրեշտակապետաց եկեղեցին, որ կառուցված է քահանայապետ Անայի տան հողին վրա, ինչպես և ս. Փրկիչ եկեղեցին կառուցված Քայիֆի տան հողին վրա և ս. Թորոս մատուռը[81]։

Վանքը կպարունակե պատրիարքին, միաբանության անդամներուն, քաղաքային պաշտոնյաներուն հարկաբաժինները, դպրոց մը, ընծայարան մը, տպարան մը, հանրային գրադարան մը, կառուցված Գալուստ Կյուլպենկյանի կողմե 1929-ին ինչպես նաև հայ ուխտավոր-

[80] **P. Mario Martins,** S. J. Peregrinacoes e Livros dos Milagres na Nossa Idade Média (*Ուխտագնացություններ և հրաշքի գրքեր մեր միջնադարուն մեջ*), *Լիզպոն, 1957, էջ 117.*

[81] Album of the Armenian Monastery of Jerusalem (*երկլեզու՝ հայերեն-անգլ.) Նյու-Յորք, 1950, էջ 86—7, Հայ պատրիարքը մեկն է Երուսաղեմի երեք պատրիարքներեն։ Լատին և հույն պատրիարքներուն հետ կրաժնե պատասխանատվությունը և առանձնաշնորհումը միջազգայնացած ս. Տեղյաց պահպանության։ Հայ պատրիարքը մյուս երկու պատրիարքներուն հետ հավասար իրավունքներ ունի ս. Տեղյաց վերաբերմամբ՝ ժամերուն, վայրերուն, հաճախումին և պաշտամունքի կարգերուն համար։ Այս է պարագան մանավորաբար ս. Գերեզմանին և ծննդյան եկեղեցիներուն, Համբարձման վայրին համար։ Վերափոխման տաճարը բաժնված է միայն հայերուն և հույներուն միջև։ Տ. նաև* History of the Armenians in the H. Land, *Երուսաղեմ, տպ. ս. Հակոբյանց, 1976, հեղ. Գեորգ Հինդլյան։*

ներուն բնակության շենքերը, հին օթևանի մը մեջ, որուն սկզբնավորությունը կերթա մինչև ԺԲ դար[82]։

Ս. Ժերոմ Երուսաղեմ գացող ուխտավորներուն մեջ կհիշե հայերը Դ դարուն[83]։

Ֆրանսիսկյան եղբ. Փանթալեոն տ'Ավեյրո, Ալկարվի նահանգեն, որ գնաց այնտեղ 1563-ին, իր զարմանքը կհայտնե ոչ միայն մեծ թիվին համար այն հայերուն, որոնց հանդիպեցավ այր կամ կին ս. շաբթվան ընթացքին, այլև այն երկարատև ճամփորդության համար, զոր կկատարեին երբ կուգային Մեծ Հայաստանեն[84]։ Եղբ. Փանթալեոն կընդգծե, որ հայերը իրենց Սիոն լեռան վանքին մեջ կընդունեին իրենց ուխտավորները և «նույնիսկ շատ հաճախ մերինները, երբ որոշ տարիներ շատ բազմաթիվ կըլլան անոնք և ասիկա այն պատճառով, որ մեր վանքը շատ պզտիկ է և շատ մեծ է հայոց բարեկամությունը մեզի հանդեպ»[85]։

Անհրաժեշտ չէ հիշել բոլոր ուխտավորները, որոնք Փորթուկալեն Երուսաղեմ գացած են ի հայտ բերելու համար շփումները երկու հասարակություններուն միջև. այսպես Տ. Թելո, հիմնադիր Քոիմպրայի Սանթա Քրուզ վանքին, որ ԺԲ դարուն սկիզբը «Երուսաղեմի մեջ տեսած էր Ս. Տեղիքը և բազմաթիվ վանքեր զանազան կրոնքներու և ծե-

[82] **Josua Prawer,** Armenians in Crusader Jerusalem *տ.* Armenians in Biblical Studies, *Երուսաղեմ, 1976, էջ 230. 1141-ին հայերը արտոնված էին իջևան մը կառուցանելու իրենց եկեղեցիին մոտ Հայաստանեն եկող ուխտավորներուն համար և մայր եկեղեցին ընդարձակված էր։ Շուրջ քսան տարի ետք Թորոս Բ թագավորը Երուսաղեմ եկավ 1163-ին Ամորի Ա թագավորին օրով։ Նույն շրջանին գոյություն ուներ նաև փողոց մը կամ թաղ մը, որ կկոչվեր «Րուկա Արմենորում» ինչպես հիշված է դիվանական վավերաթուղթերու մեջ 1222-ին, տ. Գոմմեր Բ. էջ 142, և Ալիշան, Լևոն . . ., էջ 19[illegible], ծ. 1։*

[83] **Jerome Labourt,** Lettres de St. Jérome (*ս. Ժերոմի նամակները) հրատարակություն և թարգմանություն, հատ. Բ, էջ 110, նամակ ԽԴ։ Սկսյալ Դ դարեն հայերը, ինչպես պարսիկները, վրացիները, Պոնտոսի բնակիչները, կապադովկացիները են, կերթային Երուսաղեմ, հիշված Հ. Պերպերյանի կողմե, Հայկական ուսմանց հանդես* (REARM) *հատ. Ե, էջ 435*

[84] Փանթալեոն, *անդ, էջ 190։*

[85] Նույն, *էջ 223։ Տ. նաև Հայկ. ուս. հանդես* (PEARM) *հատ. Դ, նոր շարք, Փարիզ, որ կուտա ֆրանսերեն թարգմանությունը փորթուկալերեն բնագրին Լ գլուխի 161—164 էջերուն։ ԼԷ գլուխի 216—221 էջերուն և ԼԸ գլուխի 221—225 էջերուն Հայերը Ս. Տեղյաց ուղեգրության մեջ վերնագրին տակ, տ. էջ 369—380 և 378։ Փանթալեոն կհիշե նաև (էջ 370) «Երուսաղեմի հայ եպիսկոպոս Անդրեասը, որ մեզի ցույց կուտար մեծ բարեկամություն, ինչպես կընեն ճշմարտապես բոլոր հայերը, որոնք հաճախ տեսա որ ներկա կըլլան մեր ժամերգություններուն և մեր պատարագներուն մեծ ջերմեռանդությամբ և ուշադրությամբ»։*

սերու պատկանող»[86], ինչպես կվկայե Քարողիչներու կարգեն Մեսթր Ալվարո տա Մոթայի ԺԶ դարու բնագիրը. Նույնպես և ԺԶ դարուն Տ. Աֆոնսո, կոմս Ուրեմի, թոռ Ժոան Ա-ի և եղբորորդի Տ. Տուարթե Թագավորին, որ Պալի եկեղեցական ժողովին մասնակցելե ետք ուխտի գընաց Երուսաղեմ[87]։

Ամենն ալ անտարակույս հետևած էին այն ուղեգծին և այցելած էին այն Ս. Տեղերը, ուր գացած էր Փանթալեոն տ'Ավեիրո, կողք կողքի հայ ուխտավորներուն և կրոնավորներուն հետ, ըլլա Ս. Գերեզմանին ներսը, ուր այս վերջինները, կըսե, «ավելի լավ դիրք գրաված են քան մյուս քրիստոնյաները... շնորհիվ բարեկամական հարաբերություններուն, որ ունին մեր եղբայրներուն հետ»[88], ըլլա հայոց վանքին մեջ, որ կկոչվի Ս. Փրկիչ (Քաիֆի տուն), ուրկե Փանթալեոն բերավ փոքր մասունք մը «սուրբ քարեն, որ զետեղվեցավ մեր Փրկչին գերեզմանին դռան մեջ»[89], նույնպես և Հրեշտակապետաց եկեղեցիին մեջ (Անայի տուն), որու կողքին տեսավ «շատ հին ձիթենի մը, որու համար տեղվույն բնակիչները կըսեն թե Փրկիչը անոր կապեցին»[90] և որ մինչև հիմա գոյություն ունի և դարձյալ փառաշուք եկեղեցիին մեջ, որ կառուցվեցավ Սիոն լեռան վրա ի պատիվ Ս. Հակոբ առաքյալին, որու ներսը տեսավ թավիշե գորգեր, որոնք արևելյան Հնդկաստանեն բերված էին փորթուկալցի կնոջ մը կողմե, որ կկոչվեր Մեսիա Փիմենթա, ծնած Վիլա Վիսողայի մեջ և որ արդեն կատարած էր Հնդկաստանեն Երուսաղեմ դարձի ճամփորդությունը հայերու հետ[91] և վերջապես փոքր մատուռին մեջ, որ կար նույն եկեղեցվույն մեջ, այնտեղ ուր գըլխատվեցավ Ս. Հակոբ առաքյալը և որ միշտ ամբողջական քավություն կշնորհե և ուր «Երուսաղեմ բնակող մեր եղբայրները սովորություն ունին ուխտի երթալու Ս. Հակոբ առաքյալի նախատոնակի երեկոյան ժա-

[86] Մարբինչ, անդ, էջ 133։

[67] Քասրո, անդ, հատ. Ա, էջ 21—22։ Diogo Barbosa Machado, Biblioteca Lusitana Լուսիտանական մատենադարան, Լիզպոն, 1665, հատ. Ա, էջ 21—22։

[88] Փանբալեոն, անդ, էջ 163։ Փանթալեոն կգրէր նույնպես էջ 151-ին մեջ, թե «Հայերը բնակարան մը ունին, որ կից է հնդիկներու մատուռին, զոր մեր եղբայրները տված են անոնց շատ տարիներ առաջ, որովհետև մեր բարեկամներն են և որովհետև շատ հավատարիմ եղած ատեն մը, ուր եղբայրները (ֆրանսիսկյան) բանտարկվեցան քաղաքին զղյակին մեջ, որովհետև վենետիկցիները խզած էին խաղաղությունը Մեծ Թուրքին (Թուրք սուլթանին) հետ»։

[89] Փանբալեոն, REARM, Գ, էջ 373։

[90] Նույն, էջ 375։

[91] Նույն, էջ 377։

մերզության մասնակցելու և իր տոնին օրը պատարագ մատուցանելու», ինչ որ ըրավ նաև եղբ. Փանթալեոն, պատարագը ընծայելով, կըսե, «Տեր Աստուծո, վասն մեր Փորթուկալի թագավորության և իմ բարեպաշտ հավատացյալներուս ի մասնավորի»[92]։

Բայց վերադառնանք Ս. Հակոբ Քոմփոսթելի, ուր, ինչպես տեսանք, Հայոց թագավորին աղջիկը ուխտի գացած էր իր ընկերուհիներուն հետ ԺԱ դարուն վերջը։ Դժվարավ կարելի է հավատալ, որ այս օրիորդները իրենց ցեղին առաջինները եղած էին, որ ձեռնարկած էին այս երկար և վտանգավոր ճամփորդության, Հայաստանեն Ս. Հակոբ, Կալիսի մեջ։ Ուրիշներ իրենցմե առաջ կատարած պիտի ըլլան այդ ճամփորդությունը։ Ս. Հակոբի գիրքին մեջ, ուր կվերագրվի Կալիքստ Բ պապին, գրված 1139-են 1173-ին և հետո վերամշակված, կգտնենք ձոներգ մը Ս. Հակոբի, ուր հիշատակված են հայ ուխտավորներ[93]։

1569-ին Սալանքի մեջ հրատարակված Քոմփոսթելյան ժամագիրքին «Վարք Սանթա Մարինայի» գլուխին մեջ կհիշե Արմենիա քաղաքը, Կալիսի «Քամփո տը Լիմիա» սարահարթին վրա, սահմանակից Փորթուկալի թագավորության, որմե մնացորդներ կգտնվեին տակավին այդ շրջանին[94]։ Ս. Հակոբի համբավը կճառագայթեր նույնիսկ մինչև Թա-

[92] Նույն, էջ 378—9։ Ծանոթ. 26-ին մեջ Հ. Պերպերյան կնշե, որ «Շուրջ հարյուր տարին իվեր գոյություն չունի այս սովորությունը»։ Էջ 85—87, ծանոթ.ներուն վերաբերյալ փորթուկալերեն բնագիրը կգտնվի Ուղեգրության 216—225 էջերուն մեջ։

[93] Մարբինչ. անդ, էջ 106—7 — Liber Sancti Jacobi — Codex Calixinus, Սանթիակօ Քոմփոսթելի, 1944, էջ 194 բնագրին.

«Hic Zebedei Iacobus
Maior Vocatur et probus,
Qui facit in Gallecia
Miraculorum milia.
Ad Templum cujus splendidum
Cunctorum cosmi climatum
Occurrunt omnes populi
Narrantes laudes domini.
Armeni, Greci, Apuli,
Angli, Galli, Daci, Frisi,
Cuncte gentes lingue, tribus
Illuc pergunt numeribus».

[94] „Breviario Compostellano", հիշված Bernardino José de Senna Freitas-ի կողմե Mémoires de Braga-ի մեջ (Պրակայի հուշագրություններ), Պրակա, 1890, հատ. Դ, էջ 88։ D. Juan Bautista de Arro y Azpiroz, El Mundo primitivo

Թարխատան, ուր 1253-ին, Գոտէոր կրոնավոր Կիյեոմ տը Րյուպրիքիլը հանդիպեցավ հայ կրոնավորի մը, որ հարցուց իրեն թե կկարծե՞ որ կրնա խոսիլ պապին հետ, եթե երթա զայն տեսնելու Մեծ խան Ման-

(Նախնական աշխարհ), Մատրիտ, 1815, էջ 208—243։ Համաձայն այս հեղինակին, անունները երկիրներու, ինչպես ի մեջ այլոց Կիլիկիա, Արմենիա կամ լեռներու, ինչպես՝ Կովկաս, Ամանոս, կամ գետերու ինչպես՝ Արաքս, Տիգրիս, Եփրատ, ծագում կառնեն նմանապես պասքերենե։ Իսկ Adrien Balbi, Atlas ethnographique du globe, ou classification des peuples anciens at modernes d'après leur langues (Ազգագրական ատլաս երկրագունդի կամ դասավորում հին և արդի ժողովուրդներու ըստ իրենց լեզվին...), Փարիզ, 1826, էջ 44, կհայտնե իր սեփական կարծիքը հիմնվելով լեզվաբան Ապել տը Րեմյուզայի հեղինակության վրա, թե Քատրբեն Ֆերոլ, Լիզպոնեն Փամփըլյուն կգտենք որքան քաղաքներ, գավառներ, գետեր, լեռներ, որոնք ժամանակին կրած են, այսօր ալ պահած են պասքերենե առնված անուններ։ Լայպնից իրավացիորեն տեղի անունները կհամարեր ամենեն ավելի ատակ պահելու կորսված լեզուներու մնացորդները և անհետացած ազգերու գոյության հետքերը։ Կրալեն, էջ 196 և 277—9, հիշելով Պալլի և Ազիիրոչ, կեզրակացնե, թե բանավոր քննություն մը խարսխիկ և երևակայական պետք է համարե պասքյան բոլոր կարծեցյալ ստուգաբանությունները։ Իր կողմե պասք փիլիսոփա Փապլո Փետրո Ասթարլոս իր «Ջատագովություն պասքյան լեզվին» գործին մեջ, Մատրիտ, 1805, չի՞ պնդեր, որ իր արտակարգ կատարելությամբ պասքերենը միակ լեզուն է, զոր արարիչը ներշնչած պետք է ըլլա առաջին մարդուն, Կրալեն, էջ 249։

Ըստ Պերնարտո տը Պրիթոյի, Gèographia Antiga de Lusitanian, Alcobaça, 1597 (Հին աշխարհագրություն Լուսիտանիո), 3 թերթ հրատարակված Լուսիտանական միապետության վերջավորությանը (Ա մաս), Լուսիտանիո ամենեն նշանավոր լեռն էր Մեծ էրմինիո (Herminio Maior), որ մեր օրերուն կկոչվի Սերրա տա Էշթրելլա (Էշթրելլայի լեռ)։ Մյուս կողմե, գոյություն ունեցած է, կըսվի, Փոքր էրմինիո (Herminio Menor) լեռը, որ պետք է համապատասխանե այսօր անոր, զոր կկոչեն Սերրա տո Մարիան։ Խոսելով այս մասին Լուսիտանական միապետության մեջ (Ա մաս, թերթ 320)։ Պրիթո կհիշատակե Հուլիոս Կեսարի մղած պատերազմը փորթուկալցիներուն դեմ, որոնք կկոչվեին էրմինիո (Herminio) և բնակիչներն էին, կըսե, Սերրա տա Էշթրելլայի, անենոր կոչված Մոնս էրմինիուս (Mons Herminius) Մոնթե էրմենիո (Monte Hermenho) կամ Մոնթե էրմենո (Monte Hermeno)։ Կավելցնե թե նմանապես Մոնթե էրմենիո կկոչեին Փորթալեկրեի մոտ գտնվող լեռը, որ ԺԶ դարուն վերջը տակավին կկրեր Արամինիա (Haraminha) կամ Արամենիա (Haramenha) անունը, ինչպես կըսե Անտրե տը Րեզենտե։ Այս լեռը այսօր կկոչվի Սերրա տը Մարիան։ Պրիթո (Աշխարհագրություն, թ. 3) կըսե, թե Սերրա տ'Էշթրելլայի հին բնակիչները, էրմինիոները, դժվարամերձ, խստամբեր, զենքով անընկճելի, կոշտ իրենց ձևերով և հագուստներով, պատրաստ էին կռվելու և քիչ վստահելի իրենց հարաբերություններուն մեջ։ Կհիշե, էջ 323, Փինիերո եպիսկոպոսը, որ կըսե թե Սպանիո հին լեզվին մեջ էրմինիո կնշանակե խստաբարո, անզիջելի։ Քանի մը արդի պատմաբաններու կողմե ընդունված, Սերրա տ'Էշթրելլայի ինքնության մասին այս կարծիքը վիճարկված է ուրիշներու կողմե, որոնց համար Herminio կամ Erminio հռոմեացիներուն մեջ կնշանակե բարձունք, բարձրավայր և ուրիշ ոչինչ կուզե

գուի կողմե և թե արդյոք պապը կուզե՞ տրամադրել ձիեր Կալիսի Ս. Հակոբի ճամփորդության համար»[95]։

Հայոց վերաբերմամբ զարմանալի ոչինչ կա, որ գային այդքան հեռուեն, նկատի ունենալով անոնց մեծ հարգանքը հանդեպ առաքյալին, որուն գլուխը կպահեին ջերմեռանդորեն Երուսաղեմի իրենց մայր եկեղեցիին մեջ։ Այս պարագան ևս պատճառ պիտի դառնար հարաբերության մեջ գնելու փորթուկալցիները և հայերը, Մորիս Պուրտենի միջոցով, որ բենետիկտյան մըն էր և դարձած էր եպիսկոպոս Քոիմպրայի, հետո արքեպիսկոպոս Պրակայի և իվերջո հակապապ։ Քոմփոսթելյան պատմությունը մեզի կըսե թե գնաց նախ Երուսաղեմ, 1104-են 1108-ի միջև և գաղտնորեն յուրացուց առաքյալին գլուխը, կատարելով «բարեպաշտիկ գողություն» մը։ Դեպի 1112, Պրակայի արքեպիսկոպոսը իբր զգուշական միջոց, Սեն-Զոիլ տը Քարիոն քլյունիական վանքին մեջ դընել տվավ իր բերած գլուխը[96]։ Ոմանք ենթադրություններ ըրած են նըման արարքի մը մեջ հետին միտքեր տեսնելով, այն է թե Մորիս Պուրտեն ուզած է սուրբին պաշտամունքը Քոմփոսթելեն Պրակայի թեմին

ըսել, եթե ոչ պարզ անվանում մը, որ հատուկ է զանազան լեռներու։ Տ. Enciclopedia Luso-Brasileira de Cultura-Verbo, Լիզպոն, հատ. 10, 16, Herminus (Montes) A. G. Mattoso J. Leite de Vasconcellos, Religioes de Lusitania, Լիզպոն, 1905, հատ. Բ, էջ 34, կըսե թե որոշ տեղ մը կարելի չէ ցույց տալ Մոնս էրմինիուսի համար հակառակ անոր, որ ոմանք զայն կնույնացնեն Էշթրելլայի կամ ուրիշ լեռներու հետ։ Ուղեցույց Փորթուկալի, հատ. Գ. Պեյրա, Բ, Սարրեն Պեյրա, Վերին Պեյրա, էջ 882, ծծաղիկ մը, զանգակածաղիկ Էրմինիա, մանիշակագույն բուսաթերթերով, կծաղկեր միայն Սերրա տա Էշթրելլայի վրա։ Ինչ որ ալ ըլլա, զուգադիպություն հետաքրքրաշարժ է, որ Փորթուկալի մեջ հռոմեացիներու շրջանին «Էրմինիո Մայոր» և «Էրմինիո Մինոր» գոյություն ունեցած ըլլան, ճիշտ այնպես ինչպես հայ, հույն և լատին աշխարհագիրները Հայաստանը կբաժնեին Մեծ Հայքի և Փոքր Հայքի, տ. Մ. Ժ. Սեն-Մարտեն, Պատմական և աշխարհագրական հուշարձաններ Հայաստանի վրա, Փարիզ, 1818, էջ 17։ Ճիշտ է նույնպես, որ Բյութանիո մեջ կար Արմենիուս կամ Օրմենիուս լեռը Պրուսա քաղաքին մոտ, զոր պետք չէ շփոթել նույնինքն Հայաստանի հետ, զոր «Արմենիահ» կամ «Արմինիահ» կկոչե Պարոն d'Herbelot, La Bibliothèque Orientale ou le Dictionnaire Universal, Փարիզ, 1647, էջ 128։

[95] **Bergeron**, Voyages faits principalement en Asie dans les XII, XIII, XIV et XVe siècles . . . Voyage de Guillaume de Rubriquis en Tartarie et à la Chine (Ճամփորդություններ, որոնք գլխավորաբար կատարված են Ասիո մեջ ԺԲ, ԺԳ, ԺԴ և ԺԵ դարերուն . . . տ. Ճամփորդություն Կիյոմ տը Րյուպրիքի Թաթարիստանի և Չինաստանի մեջ), էջ 68—93։

[96] Historia Compostellana (Քոմփոսթելյան պատմություն), F. Henrique Florez, Espana Sagrada-ի մեջ, Մատրիտ, 1766, հատ. Ի, էջ 83—84։

փոխադրել։ Ճիշտ է, որ այս վերջին թեմը կպահանջեր առաջնությունը ամբողջ Սպանիո մեջ։ Այս պահանջը հենելով հանդերձ այն ավանդության վրա, թե առաքյալը ծովու ճամփով էր Կալիսի ափը, իբր հիմ կառնե, ըստ Անթոնիո Պրանտոայի, այն իրողությունը, որ սուրբ Հակոբ երեց, անմիջապես գնաց Պրակա, ուր հաստատեց եկեղեցի և ձեռնադրեց առաջին եպիսկոպոսը նախ քան ուրիշ ոևէ մեկը Սպանիո մեջ[97]։ Եղան սակայն որ կասկածի տակ դրին ասիկա, հիմնվելով հայկական ժամագիրքի մը վրա[98]։ Այս վերջինը կենթադրվի թե գրված է 1054-ին Երուսաղեմի եպիսկոպոսի մը կողմե և թարգմանված Փաոլո Փաչեքո անունով մեկու մը կողմե, որու համար կըսեն թե Մոնսի[99] եպիսկոպոս էր, բայց որ անտարակույս նույն է, որ այն ատեն Լիզպոն կբնակեր և 1590-ի վավերաթուղթի մը մեջ հիշատակված է իբր եպիսկոպոս Հայաստանի[100]։ Անտարակույս ասիկա նաև այն «Փափեքո»-ն է, որու համար Ալիշան կըսե թե Մյուսսի եպիսկոպոս էր և ԺԶ դարուն սպաներենի թարգմանել տվավ ինչ որ Հայոց մեջ ավանդված էր Ս. Հակոբ երեցի վրա[101] ըստ

[97] Լուսիտ. միապ., Գ մաս, գլ. ԺՀ, թթ. 36—37. «Սպանիո առաջնության իրավունքի մասին, որ կպատկանի Պրակայի եկեղեցիին»։

Սեննաս Ֆրեիրաս, անդ, հատ. Ա, էջ 228, կնշե, որ դեպի 400 թվականը սուրբ Փրուքթուոս, ափրիկյան ազգե, արքեպիսկոպոս Պրակայի, նմանողությամբ արևելյան եկեղեցիներուն և քանի մը ուրիշներու Արևմուտքի մեջ, վերանորոգեց Պրակայի ծեսը, բարեզարդելով զայն նոր շարականներով, ժամասացություններով և աղոթքներով, ճիշտ ինչպես ըրած էին Արևելյան եկեղեցվո հայրերը, որոնց մեջ մեծն Սբ. Բարսեղ, որ վերանորոգեց հունական ծեսը, Սբ. Հովհաննես Ոսկեբերան՝ Կոստանդնուպոլսո ծեսը և «կենթադրվի որ Հայոց մեջ սբ. Գրիգոր, իրենց եպիսկոպոսը, նույնը ըրած էր արդեն»։

[98] Լուսիտ. միապ., Գ մաս, էջ 36բ։

[99] **Սեննաս Ֆրեիրաս**, անդ, հատ. Ե, էջ 404։ Սարտեննիո եկեղեցին ալ կհիմնվի այս հայկական աղոթագիրքին վրա ապացուցանելու համար, որ սբ. Հակոբ առաքյալը եկած էր այս կղզին քարոզելու համար։

[100] Տ. ատ, ծան. 141։

[101] Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 457—9։ Ըստ հեղինակին այս «Փափեքո»-ն եղած է որդի դեսպանի մը կամ պատգամաբերի մը, զոր Սպանիո թագավոր Կարլոս ղրկած է Երուսաղեմի հայոց մոտ, տեղեկություն քաղելու համար Սպանիո պաշտպան սբ. Հակոբի երեցի մասին։

Փրավեր, անդ, էջ 232. ԺԶ դարուն կաթոլիկ թագավորները, այսինքն Իզապել թագուհին և Ֆերտինանտ թագավորը, ակսան նվիրատվություններ կատարել Երուսաղեմի Ս. Հակոբ եկեղեցիին։ Երախտագետ հայերը եկեղեցվույն մեջ դրին Սպանիո արքայական տան զինանշանը։ **Փանթալեոն** (Հայկ. սս. հանդես, էջ 377), կըսե թե ավագ մատուռին ճակատին վրա սպանական զինանշանին նկարը, միագլուխ արծիվով, ավրվելու վրա էր։ Կավելցնե թե «այս մայր եկեղեցին մեկն է այն երեք հարյուր եկեղեցիներեն, զորս Հեղինե թագուհին կառուցանել տվավ Սբ. Տեղյաց մեջ և կհավատեն թե, կըսե, արքայական

հայկական Հայսմավուրքի և Տոնամակի։ Համաձայն այս ժամագիրքին, առաքյալը ծովափ ելավ ոչ թե Կալիսի մեջ, այլ Կարկեդոնի մեջ Միջերկրականի վրա։ Անթոնիո Պրանտաո ասոր կպատասխանե, թե այդ ավանդությունը չի ժխտեր բնավ, որ ան գացած ըլլա անմիջապես Պրակա Մերիտայի ճամփով։ Ինչ որ ալ ըլլա քանի մը տարի ետք Տոնա Ուրրաքա, Ալֆոնս տ՚Արակոնի կինը, գնաց Քարիոն, առավ մասունքը զոր նվիրեց Տիեկո Ժելմիրեզի, եպիսկոպոս Քոմփոսթելի և այսպես, ըստ երևույթին, առաքյալին գլուխը միացավ մարմնին 1116-ին մեծ արարողության մը ընթացքին, կղերին և համայն ժողովրդյան ցնծության ցույցերուն մեջ[102]։

Ինչպես Փիեռ Տավիտ կըսե Զ դարեն ԺԲ դար Փորթուկալի և Կալիսի պատմության մասին իր ուսումնասիրություններուն մեջ, «ԺԲ դարու այս առաջին քառորդին՝ Փորթուկալի մեջ չէին հայտարարեր, թե Ս. Հակոբի գլուխը և մարմինը միաժամանակ բերված էին առաքյալին աշակերտներուն կողմե։ Ավելի ետքը, չուզեցին այլևս կասկած հայտնել այս մասին, նախկին պատմումները շրջափոխվեցան այս իմաստով, այդ է որ կհաստատենք նույնինքն Քոմփոսթելի Պատմության մեջ, ուր «մարմինը գլուխին հետ» բառերը ներմուծված են Ա գիրքին Ա գլուխին մեջ, որ կպարունակե փոխադրության պատմությունը։ Այն օրը, ուր այս համոզումը գոյացավ, այլևս կարելի չէր ընդունիլ, որ Երուսաղեմեն Մոռիս Պուրտենի կողմե բերված մասունքը Հակոբ երեցինը ըլլա, ըսին որ Աղփեոսի որդի Հակոբինն էր»[103]։

Հայերը շատ չխռովվեցան այս ամենեն, սակայն ԺԳ դարեն իսկ, կամ նույնիսկ ավելի առաջ, Հովհաննես վարդապետ գնաց Սպանիա

զինանշանները նկարվեցան Քասթիլիո կաթոլիկ թագավորներուն՝ Ֆերտինանտի և իր կնոջ Իզապելի ժամանակ»։ Ասիկա մեզ ֆրանսիսկյան հայր Պոնիֆաս տը Րակյուզը, որ Փանթալեոնի այցելության ատեն Սիոն լեռան պահապանի և առաքելական գործավարի պաշտոն ուներ, հայտարարելու թե մայր եկեղեցին սպանիացիներուն կպատկաներ։ **Փրավեր**, անդ, էջ 232, կնշտե այս առթիվ, որ տոմինիկյան հմուտ պատմաբան Ֆ. Մ Աբել, որ ուսումնասիրած է խնդիրը, վերջնականապես հաստատած է, որ այս կրոնական շենքը երբեք չէ պատկանած սպանիացիներուն։ Մյուս կողմե, հ. Հակոբ **Իսավերտենս**, Պատմություն Հայաստանի, Վենետիկ, 1888, հատ. Բ, էջ 334, կըսե թե երբ 1147-ին Սալատին գրավեց Երուսաղեմը այնտեղ գտնվող հայերը իրեն նվիրեցին մեծ գանձեր ստանալու համար սուրբ Հակոբի գեղեցիկ վանքը։

[102] **Piere David**, Etudes historiques sur la Galice et le Portugal du VI-e au XIIe s. (Պատմական ուսումնասիրություններ Կալիսի և Փորթուկալի մասին Զ-են ԺԲ դար), Լիզպոն-Փարիզ, 1947, էջ 476, նաև Քոմփոսթելյան պատմություն, հատ. Ի, գիրք 1, գլ. 112։

[103] Նույն, անդ, նաև **Ֆլորեզ**, անդ, հատ, ԺԲ, էջ 252։

և հայերենի թարգմանել տված առաքյալին գլխատման պատմությունը[104]։ Միշտ հաստատ մնալով իրենց համոզման վրա, թե ս. Հակոբ Երեցի գլուխը երբեք չէր հեռացած Երուսաղեմեն[105], շարունակեցին երթալ Քոմփոսթել, անշուշտ, ոչ այնքան մեծ թիվով որքան փորթուկալցիները, որոնք բազմությամբ կուգային սահմանագլուխին մոտիկ այս վայրը, բայց և այնպես բավական թիվով՝ այնտեղ հիվանդանոց մը ունենալու համար, որ կկոչվեր «Երուսաղեմ»։ Գեթ այս է, որ կըհայտարարեին ԺԶ դարուն։ Այս հիվանդանոցը 1309-ին հատկացում մը ստացավ Քոմփոսթելի եղած նվիրատվություններուն կարգին, Տոն Ռոտրիկո եպիսկոպոսին կողմե, աղքատներուն ապաստան տալու պայմանով[106]։ Ըստ երեվույթին կգտնվեր հրեա վաճառորդներու նախկին թաղին մեջ, պարիսպներեն դուրս, այսօր Երուսաղեմ կոչված թաղին մեջ, որ նախապես կկոչվեր Ապրիլի և Ցիկեիրայի փողոց[107]։ Կըսեն թե հիվանդանոցը ուներ հայերեն գիրքեր և պատարագը այնտեղ կըմատուցվեր հայկական ծեսով և արարողություններով։ Դժբախտաբար գիրքերը և արարողությունները անհետացան այլազան փոփոխություններու ընթացքին և բոլոր ջանքերը, որ կատարվեցան ԺԷ դարու սկիզբը զանոնք գտնելու համար ապարդյուն մնացին[108]։

ԺԴ դարուն Լևոն Ե թագավորը ինքն ալ կատարեց Քոմփոսթելի

104 Ալիշան, Սիսական, էջ 457—9։

105 **Փրավեր**, անդ, էջ 233։ Շահե արքեպս. Աճեմյանը Երուսաղեմի հայ պատրիարքութենեն, կպատմե որ ըստ հայկական ավանդության մը, երկու սպանիացի ֆրանսիսկյաններ փորձեցին ձեռք անցնել ս. Հակոբ Երեցի գլուխը։ Արդեն կոտրած էին սուրբին գերեզմանը ծածկող մարմարը, երբ վրա հասան հայ վանականներ, որոնք, կըսեն, սպաննեցին զանոնք։

106 **Luis Vasquez de Parga, José Ma Lacarra, Juan Uria Riu,** Las Peregrinaciones a Santiago de Compostela—(Ուխտագնացությունները դեպի Սանթիակո Քոմփոսթելի, Մատրիտ, 1919, էջ 383)։

107 Նույն, էջ 384։

108 Նույն անդ, ծան. 68։ Հայ ուխտավորներ ընդունող և հայերեն գիրքեր ունեցող այս իջևանին վերաբերյալ տեղեկությունները քաղված են Castellá y Ferrer-են (Historia dek Apóstol . . . A Martin Balboa), Zepedano, Historia y sescription arqueológica de la Basilica compostelana: Զեփետանո (Պատմություն և հնախոսական նըկարագրություն քոմփոսթելյան պազիլիքին, Լուկո, 1870, էջ 84 և ծ. 1) կկրկնե ինչ որ կըսեն Քասթելյա-Ֆերրեր (Պատմություն առաքյալին . . . Ա. Մարթին, Պալպոա, Մատրիտ, 1610, թ. 23ա)։ Տես նաև Fernandez Sanchez y Freire Barreiro, Սանթիակո, հատ. Ա էջ 269։

Այս վերջինները կկարծեն, որ այս իջևանը գոյություն ուներ գրեթե առաքյալին նշխարներուն գյուտեն իվեր։ Ինչ որ բոլորովին անհիմն կհայտարարեն Ուխտագնացություններ դեպի Սանթիակո Քոմփոսթելի հեղինակները։

այս ուխտագնացությունը։ Իրմե առաջ այնտեղ գացած էր Մարթինո Էսթեֆանո արքեպիսկոպոսը, հայազգի, որ թագավորության անկումեն ետք ապաստանած էր Եվրոպա, Արակոնի թագավոր Փետրո Դ-ի հողերուն վրա։ Օգոստոս 1376-ին Ուրբանոս Զ պապը իրեն իրավասություն տված Արակոնի և Քասթիլիո մեջ իր կրոնական պաշտոնը կիրարկելու[109]։ 1381-ին կհիշվի հայ բախտախնդիր մը, կեղծ կոմս Կոռիկոսի, որ Արակոնի թագուհիին արքայական գանձեն դրամական նըպաստ մը կստանա Սանթիակո երթալու համար[110]։

109 **Madalena Saez-Pomes,** Exilados de Armenia en los dominios de Pedro IV de Aragon, dans Estudios de Edad Media de la Cordna de Aragon, Seccion de Zaragoza, vol. II. «Հայաստանի աքսորյալներ Արակոնի թագավոր Փետրո Դ-ի հողերուն վրա», տ. Արակոնի թագին միջնադարին մասին ուսումնասիրություններ, Սարակոսի բաժանմունք, հատ. Ե, Սարակոս, 1946, էջ 417—424, տ. 417—420։ Նույն ատեն երբ Լևոն Ե գերի կերթար Եգիպտոս, Մարթին Ստեփան, Սելկիո Սելեֆքե հայ արքեպիսկոպոսը կապաստաներ Արակոնի Փետրո Դ թագավորին հողերուն վրա։ 7 հուլիս 1376-ին Արակոնի գահաժառանգ Տոն Ժուան, դուքս Ժերոնայի և կոմս Սերվերայի, Պարսըլոնեն կգրեր Ավինյոն Գրիգոր ԺԱ պապին և Արակոնի կարտինալ Փետրո տը Լունայի, հանձնարարելով զայն։ Արակոնի իշխանը զինքը առավ իր շրջախումբին մեջ և Ժեմ Վերտակուեր իր հաշվետումարին մեջ կնշե, որ Սարակոսի հայ արքեպիսկոպոսը ստացավ 15 մոմ Շանտըլեռի տոնին առթիվ։ Նույն տարվա 17 օգոստոսին նոր պապը, Ուրբանոս Զ արտոնեց Մարթին Ստեփանը պաշտոնավարելու Արակոնի և Քասթիլիո մեջ։ 23 ապրիլ 1379-ին սուրբ Գեորգի տոնին նախօրյակին արքեպիսկոպոսը կգտնենք Հայաստանի թագավորին «կըրտսեր եղբայրներուն» հետ։ Առաջինը կստանար «երեք չափ հաց և վեց չափ գինի», մինչ մյուս երկուքը «տասներկու չափ հաց և մեկ չափ գինի»։ Այս երկուքն էին եղբարք Անտոն տը Մոնոփոլի և Ժան Տարտել, հեղինակը Քրոնիկ Հայաստանի-ի և 1 մարտ 1379-ին Պարսըլոն եկած էին Լևոն Ե-ի ազատագրության բանակցությունները կատարելու։

1380-ին արքեպիսկոպոսը կգտնենք Փերփինյանի մեջ, ուր կպատրաստեին Արակոնի գահաժառանգին ամուսնությունը Վիոլանթ տը Պառի հետ։ Ստեփանի մասին հիշատակությունները կդադրին Պարսըլոնեն 8 օգոստոս 1381-ին գրված նամակով մը։

110 Նույն, էջ 422—3. Կոռիկոսի կեղծ կոմսը ուրիշ մեկը չէր, եթե ոչ Թարգման Մանուելը, որդի ճենովացի ասպետ Ժանի, ծագումով հայ։ 1375-ին Մանուել բանտարկված էր Հալեպի ամրոցին մեջ Լևոն Ե-ի հետ, որ հաջողեցավ ազատ արձակել տալ զինքը։ Այն ատեն ինքզինքը ներկայացուց իբր ֆրանսացի Սոհիե Տուլսառը, որ ամուսինն էր Կոռիկոսի կոմսին այրիացած կնոջ։ Լևոն Ե մարաջախտի աստիճան տված էր Սոհիե Տուլսառի։ Եվրոպայի մեջ Կոռիկոսի կոմսի տիտղոսով Մանուել մոտեցավ Կղեմես Է պապին, որմե ստացավ հանձնարարագիրներ Արակոնի և Քասթիլիո արքունիքներուն համար։ Տոնա Սիպիլիա թագուհիեն դրամական օգնություն մը ստացավ, Արակոնի ոսկի ֆլորիններով, ուխտի երթալու համար Սանթիակո տը Քոմփոսթել, ինչպես կհաստատվի թագուհիին արքայական ստացվածքներուն հաշվետումարեն. (Ժուան Քալյոս, Արխիվ արքայական ստացվածքներուն, Գանձատետր, 510, թերթ 156բ, 28 դեկտեմբեր 1381 թվականով, Թորթոզա)։ Հայ-ճենովացի Մանուելի մասին տեսնել նաև **Թուռնըպիզ**, էջ 740, և

ԺԵ և ԺԶ դարերու հայ ուխտավորներուն մեջ ծանոթ են երեք հոգի, որոնք ձգած են ձեռագիրներ, որ կպատմեն ս. Հակոբ Քոմփոսթելի իրենց ճամփորդությունը։ Առաջինը, Մարտիրոս Երզնկացի եպիսկոպոսը մեկնեցավ իր Հայաստանի վանքեն 29 հոկտեմբեր 1489-ին, ամբողջ Եվրոպայեն և հասավ Հռոմ, ուրկե մեկնեցավ 9 հուլիս 1491-ին, երեք անգամ ընդունվելե ետք Իննովկենտիոս Գ պապին կողմե և գնաց ս. Հակոբ Կալիսի, ուր մնաց 84 օր։ Զախող նախակարապետ Վասքո տե Կամայի՝ 8 ապրիլ 1494-ին, երբ Պիլպաո կգտնվեր, արտոնվեցավ բարձրանալու մեծ նավու մը վրա 80.000 բեռնաբարձությամբ, որ նպատակ ուներ նոր երկրամասեր գտնելու և ուր ոչ մեկ վաճառական կգտնվեր, այլ միայն նավային անձնակազմը և կրոնավորներ։ 68 օր նավարկելե ետք իրենքզինքնին գտան Անտալուզիա, Քատիքս նավահանգիստը։ Այնտեղ հայ եպիսկոպոսը թողուց նավը և ձեռք առավ ուխտավորի գավազանը մինչև Հռոմ, ուր հասավ 20 փետրվար 1496-ին[111]։

Երկրորդը, եղբ. Հովհաննես, ճամփորդեց Նախիջևանի Ապարաներեն մինչև ս. Հակոբ Կալիսի, ուր այցելեց երկու անգամ, Լիզպոն եր-

Amada Lopes de Meneses, Un aventurier arménien dans l'Espagne médiévale, (Manuel, faux comte Sohier du Sarde, Հայ արկածախնդիր մը միջնադարյան Սպանիո մեջ, Պ. Այրես։

111 **J. Saint-Martin,** Relation d'un voyage fait en Europe et dans l'océan Atlantique à la fin du XVe siècle, sous le régne de Charles VIII, par Martyr, évêque d'Arzendjan, traduit de l'arménian et accompaghé du texte original. Paris, 1827. (Պատմություն Եվրոպայի և Ատլանտյան օվկիանոսի մեջ կատարված ճամփորդության մը ԺԵ դարուն վերջը Կարլոս Ը-ի օրով Երզնկայի եպիսկոպոս Մարտիրոսի կողմե, թարգմ. հայերենե, ընկերակցությամբ սկզբնական բնագրին, Փարիզ, 1827)։ Սեն-Մարթենի հրատարակածը սկզբնագիրը չէ, ընդօրինակված է 1684-ին Կ. Պոլսո մեջ և կգտնվի Փարիզի Ազգային մատենադարանը։

H. Berberian, Le voyage d'un évêque arménien en Europe et dans l'océan Atlantique au XVe siècle 14 p. Հայ եպիսկոպոսի մը ճամփորդությունը Եվրոպայի և Ատլանտյան օվկիանոսի մեջ ԺԵ դարուն, էջ 14։

Relación de Un viaje por Europa con la peregrinavion à Santiago de Galicia, verificado a fines del Siglo por Martir, Obispo de Arzanyan. Թարգմանություն Սեն-Մարթենի բնագրին, սպաներենե վերածված Էմիլիա Կայանոս տե Բիանիոյի կողմե, առանց թվականի։

Տե՛ս նաև Un obispo armenio en Guipuzcoa en el siglo XV հոդվածը Euskal-Erria պարբերական հանդեսին մեջ, հատ. ԾԴ, 1906, Սան Սեպաստիան. Վազգեն Հակոբյան, Մարտիրոսի ճամփորդական օրագիրը, «Պատմա-բանասիրական հանդես», № 6, Երևան, 1957, էջ 97—110։

թալե առաջ։ Այս քաղաքին մեջ 1558-ին ճանչցավ երջանկահիշատակ Իգնատիոս տէ Ազևտոն, որ իբր մարտիրոս պիտի նահատակվեր 15 հուլիս 1570-ին Սանթիակո նավուն վրա, որ Պրազիլիա կերթար։ Հիսուսյան կրոնավորը եղբ. Հովհաննեսի տվավ չորս ավետարաններու հայերեն ձեռագիր մը, որ Հռմուզեն Լիզպոն ուղարկված էր հիսուսյան Մեսթր Կասբար Կարզեույի կողմե 1549-ին։ Այս ձեռագիրը այժմ կըգտնվի Երուսաղեմի ս. Հակոբյանց հայոց վանքին մեջ[112]։

Երրորդը, Սարգիս աբեղա, երկար ուղևորություն մը ձեռնարկեց 1587—1590 տարիներուն[113]։ Սպանիա երթալու համար նավ նստավ Նանթի մեջ և Պիլպաո հասավ 25 օր ետք, ուրկե գնաց Քոմփոսթել, ուր, կըսե, չհաջողեցավ տեսնել սուրբին անգլուխ մարմինը, որովհետև գերեզմանը տանող դուռը փակ էր։ Ստիպվեցավ ութը ամիս սպասել իր ուխտը կատարելու համար։ Այս ժամանակամիջոցին մտավ «Փորթուկալի երկիրը», «այնտեղ ես, կըսե, լեզվին ծանոթ չըլլալով, չարչարվեցա, մինչև կարողացա սորվիլ»։

Սարգիս աբեղա գնաց Վալանսա, Քամինիա, Պրակա, Վիլլա Նովա Վիանա և հասավ մեծ քաղաքը, որ կկոչվի Փորթո ուր կային 200 եկեղեցի, սուրբերու 100 մասունք—հետո ծովու ճամփով ինքզինքը գըտավ Կաիա։ Այնտեղ գնաց Քոիմպրա, ուր ես կային շատ եկեղեցիներ և հետո Սանթարեմ, Քասթանեյրա, Սարավեմ և Լիզպոն։ Այս վերջինը շատ մեծ քաղաք մըն է, կըսե մեր ճամփորդը, նշելով որ բնակչությունը կհասնի 100.000 տան, նավահանգիստին մեջ կան 500 նավեր, կան 300 եկեղեցիներ ևն։ Կըսե նաև, որ խոսած է թագավորին հետ, առարկա եղած է անոր հարգանքի արտահայտություններուն և ընդունած է անոր մեկ ողորմությունը։ Սարգիս աբեղա Լիզպոնեն կերթա նավով Ալյամոնթե, հետո Սևիլ և հետո կվերադառնա Հայաստան։ Սպանիո Ֆիլիփ Բ-են 22 մարտ 1588 թվակիր Լիզպոնեն Հնդկաստանի փոխարքա Տոմ Տուարթե տը Մենեզըշի ուղղված նամակ մը կըսե թե Տոմ Թոմաս, արքեպիսկոպոս Հայաստանի մեջ, ինքն ալ ուխտի եկած է Քոմփոսթելի Սանթիակոյին։ Ծովի ճամփով վերադառնալու արտա-

112 Ռ. Կյուլպենկյան, Պատմություն ԺԵ դարու հայերեն ձեռագրի մը, «Բանբեր Մատենադարանի» № 10, Երևան, 1971, էջ 359—372։ Այս հոդվածին սկզբնական բնագիրը հրատարակված է փորթուկալերեն, տե՛ս Studia, Centro de Estudos Históricos Ultramarinos. Lisboa, ապրիլ, 1970, էջ 29, հետևյալ վերնագրով՝ Uma carta de Mestr Gaspar Barzeu S. J. num manuscritu arménio do século XV, էջ 45—55։

113 Լ. Խաչիկյան, Սարգիս աբեղայի ճամփորդությունը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1970, № 3 (50), էջ 125—148։

նություն տրված ըլլալով անոր, Թագավորը կհրամայե որ երբ Հնդկաստան հասնի անմիջապես «ուղարկվի իր երկիրը, որովհետև իրեն համար չի թվիր, որ երկար մնա Հնդկաստանի մեջ»[114]։

Ինչպես արդեն հիշեցի, Ֆերրարե—Ֆլորանսի և Թրանթի եկեղեցական ժողովները նմանապես հարաբերության մեջ դրին փորթուկալցի և հայ կրոնավորները։ Առաջին եկեղեցական ժողովին բացման արարողության, որ տեղի ունեցավ 9 ապրիլ 1438-ին Ֆերրարեի մեջ, Փորթոյի արքեպիսկոպոս Անթոնիո Մարթինշ է, որ հանուն Եվգինեոս Դ պապին կարդաց **Մակնաս Օմնիփոթենթի Տեո** կոնդակը, վճռելով և հայտարարելով՝ համաձայնությամբ Բյուզանդիոնի կայսր Հովհաննես Ը Փալեոլոկի, հունաց պատրիարք Հովսեփ Բ-ի և բոլոր ներկաներուն, որոնց մեջ երկու հայ արքեպիսկոպոս, փոխանորդ պատրիարքին կամ արքեպիսկոպոս ամբողջ Հայաստանի, թե «այս սինոդը սրբազան, տիեզերական և էքյումենիք է»[115]։ Հույներու հետ միացման վճռագիրը ստորագրվեցավ Ֆլորանսի մեջ 6 հուլիս 1439-ին, հայոց վերաբերյալը, որ «Ցնծացեք առ Աստված» կոնդակն է, կկրե նույն տարվո 22 նոյեմբեր թվականը, ինչպես և պապին, ութը կարտինալներու, երկու պատրիարքներու, հինգ արքեպիսկոպոսի, երեսունըհինգ եպիսկոպոսի, որոնց մեջ Փորթոյի Տ. Անթոնիո Մարթինշ և քսանըհինգ աբբաներու ստորագրությունը, իսկ Հայոց կողմե երկու վարդապետներու, Սարգիս և Թոմաս, այս վերջինը Կաֆայեն, Խրիմի մեջ[116]։ Այսուհանդերձ Արև-

[114] Boletim da Filmacoteca Ultramarina Portuguesa, vol. II, Lisboa 1955, Livros das Moncoes N 3-A (1585—1589), *տ. անդ. Գիրք Մուսոններու (Փորթուկալյան նավերու ճամփորդական օրագիր), վավերաթուղթ 48։ Նամակ Թագավորին առ Տուարթ Մենըզըզ։*

[115] **Joseph Gill,** S. J. Le Concile de Florence, traduit de l'anglais par M. Jossua, *(Ֆլորենցիի եկեղեցաժողովը, թրգմ. անգլիերենե Մ. Ժոսուայի կողմե)։ Թուռնե (Բելճիքա) 1964, էջ 104—105։* **Տե Քասթրօ,** *անդ, էջ 15 և 21, Տոն Անթոնիո Մարթինշ Շավըշ, կարտինալության բարձրացած 1439-ին։ Հիմնադիրն է Հռոմի մեջ փորթուկալցիներու սբ. Անտոնիո եկեղեցիին, Սեպտեմբեր 1438-ին Եվգինիոս Դ դեսպան նշանակած էր Փորթոյի եպիսկոպոսը բանակցելու համար Բյուզանդիոնի կայսր Հովհաննես Ը Փալեոլոկի հետ։ Այդ միջոցին անտարակույս շփումներ ունեցավ ան Կոստանդնուպոլսո և Բերայի հայ եկեղեցական նվիրապետության հետ։ Հոկտեմբեր 1438-ին Կոստանդնուպոլիս կհասներ նաև փորթուկալցի եկեղեցական Լուի տե Ամարոլ, եպիսկոպոս Վիզեուի, կայսեր մոտ ներկայացուցիչ Պապի հայերուն։*

[116] *Նույն, էջ 275—9։ Միության հրովարտակին և ստորագրողներուն անուններուն համար տ.* **A. Balgy,** Historia Catholicae inter Armenos unionisque eorum cum Ecclesia Romana in Concilio Florentino, *Վիեննա, 1878, լատիներեն բնագիր, էջ 102—131, հայերեն բնագիր, էջ 132—151։*

վելքի և Արևմուտքի բաժանյալ եկեղեցիներուն միացումը վաղանցիկ եղավ, քրիստոնյա բանակներուն պարտությունը Վառնայի մեջ և Կոստանդնուպոլսո առումը Թուրքերուն կողմե 1453-ին մահազանգը հընչեցուցին այս ձեռնարկին[117]։

Հաջորդ տիեզերական ժողովը նիստ գումարեց Թրանթի մեջ 1545-են 1563, բայց փորթուկալցի և հայ ներկայացուցիչները ժողովին վերջին միայն իրարու հանդիպեցան։ Փորթուկալեն դեսպան Ֆերնանտո Մարթինշ Մասքարենիաշի հետ եկած էին Պարթոլոմեո տոս Մարթիրոս արքեպիսկոպոսը, ինչպես և Քոիմպրա եպիսկոպոս Ժոան Սոարես, Լեիրիա եպիսկոպոս Կասբար տո Քազալ և Փորթոյի եպիսկոպոս Պալթազար Լիմփո[118]։ Հայոց կողմե Միքայել Սեբաստացի կաթողիկոսը նշանակած էր իր քարտուղար հմուտ Աբգար Եվդոկիացին իբր դեսպան Պիոս Դ պապին մոտ[119]։ Եղբ. Փանթալեոն տ՚Ավեիրո, որ 1563-ի սկիզբը կգտնվեր Նիկոսիա, Կիպրոսի մեջ, կհիշե գալուստը հայ պատգամավորի մը, որ կերթար Թրանթի ժողովին «հնազանդություն հայտնելու համար հանուն 24 հայ եպիսկոպոսներու»[120], կըսե։ Բայց այս ծրագիրն ալ հետևանք չունեցավ[121]։

[117] *Ժիլ, անդ, էջ 279, կավելցնե, որ «Այս միացման պատմության շարունակությունը ծանոթ չէ, բայց ամեն պատճառ կա կարծելու, թե տևած է մինչև 1475 թվական Կաֆայի գրավման Թուրքերու կողմե»։*

[118] **Սենեաս Ֆռեիրաս,** *անդ, էջ 248, ծան. 1. լոկ Փորթոյի եպիսկոպոս Պալթազար Լիմփո մասնակցած էր եկեղ. ժողովին նախորդ նիստերուն, Պողոս Գ և Դ-ի օրով։*

[119] **Placido Sukias Somal (Mgr),** Quadro della Storia Letteraria di Armenia *(Պատկեր հայ գրականության պատմության), Վենետիկ, 1829, էջ 146—7։*

[120] **Փանթալեոն,** *Հայկ. ուսմանց հանդես, հատ. Գ, էջ 370—1։*

[121] *Միացման հարցին առնչությամբ՝ հայ և փորթուկալյան հարաբերություններուն— կրոնական մարզին մեջ—գագաթնակետը կգտնվի ԺԷ դարու սկիզբը, երբ 12 մայիս 1607-ին Հայոց կաթողիկոս Դավիթ Դ վեց եպիսկոպոսներով, հարյուրվեց եկեղեցականներով և անոնց թեմականներով հնազանդություն հայտնեց պապին, դրդումով և ներկայությամբ լոկ օգոստինյան կարգի փորթուկալցի կրոնավորներուն։ Թեև այս ձեռնարկումը հետևանք չունեցավ պարսիկ վեհապետին, շահ Աբբաս Ա-ի ընդդիմության պատճառով, օգոստինյան հայրերը այս արարողությունը պատկերազարդեցին ԺԸ դարու սկիզբը, կապույտ և ճերմակ* **ազուլեժոներու** *մեծածավալ որմնանկարով մը ի շարս անոնց, որոնք կզարդարեն Լիզբոնի Կրասա վանքին եպիսկոպոսական սրահը։ Ցավալի է ըսել թե, հակառակ անոր որ վանքին այդ մասը, որ այն ատեն զինվորական իշխանության իրավասության տակ էր, դասված է ազգային հուշարձան, խնդրո առարկա որմնանկարը անհետացած է։ Այս դեպքը պատահած պետք է ըլլա 1972-ի վերջավորության—այդ թվականին Լիզբոնի մեջ լույս տեսած է իմ հատորս «Պարսկաստանի դեսպանություն Լուիս Փերեիրա տե Լասերտայի և օգոստինյան փորթուկալցի հայրեր Պելշիոր տոս Անժոս և Կիլեռմե տը Սանթո Ակոսթինիոյի 1604—1605», որու 58—59 էջերուն վրա կգտնվեր լուսանկարը*

Ամեն պարագայի մեջ Թրանթի ժողովը անդրադարձումներ ունեցավ Հնդկաստանի հայոց առնչությամբ։ Արդարև, գործադրելով այս ժողովին հրատարակած հրովարտակները և կանոնները, Գոայի արքեպիսկոպոս Ժորժ Թեմուտո 1567-ին նույն քաղաքին մեջ գումարեց առաջին նահանգային եկեղեցական ժողով մը, որ տվավ զանազան հրահանգներ և որոշումներ[122]։ Այս հրահանգներեն երկուքը (որոնք եկեղեցական օրենսդրության հանգամանք չունեին) խնդրանքներ էին Փորթուգալի թագավոր Տոն Սեպաստիանի հաստատելու օրենքներ, որոնցմե մեկը պետք էր, որ պարտավորություն դներ «օտար քրիստոնյաներուն վրա, ինչպես հայերը, վրացիները և կամ ուրիշ ոևէ քրիստոնյա, որոնք մեր հողերուն վրա կուգան, մեր քրիստոնյաներուն պես հագվելու կամ գոնե իրենց գլխին դնելու մեր գլխարկը, որպեսզի ճանչցվին իբր քրիստոնյաներ[123] և մյուսը՝ «թույլ չտալ, որ անհավատները առուծախ կատարեն քրիստոնյա գերիներու, որոնք անարդարորեն գերված են, ինչպես հապեշները, չերքեզները, վրացիները, հայերը և ուրիշ ազգությանց պատկանողներ, զանոնք մահմեդականացնելով և ծախելով հավատացյալներու կամ անհավատներու»։ Խնդրագիրը կըսեր, որ «ամեն քրիստոնյա որ այս պայմաններուն մեջ կգտնվի դուրս բերվի իր տերոջ իշխանութենեն և անհրաժեշտը կատարվի որպեսզի աշխարհիկ արդարությունը վերադարձնե զանոնք իրենց նախկին ազատության[124]։ Հա-

որմնանկարին—և փետրվար 1974-ի միջև, երբ հաստատվեցավ այս անհետացումը։ Այս դեպքեն անմիջապես ետք վանքին այս մասը վերադարձվեցավ Կրասայի եկեղեցիին։

122 **P. Antonio da Silva Rego**, Documentacao para a historia des Missões do Padroado Portugues de Oriente, India,—Լիզպոն, հատ. 10, 1566—1568 (Հրովարտակներ և որոշումներ Գոայի Նահանգային առաջին եկեղեցաժողովին), էջ 334—404։

123 Նույն, էջ 363—4. Հրովարտակ Թ. 39, որ կհայտարարե. «Հարկ կտեսնվի, որ բոլոր օտար քրիստոնյաները, ինչպես վրացիներ, հայեր և ուրիշ ինչ ազգե որ ըլլան, որոնք կուգան մեր հողերուն վրա, հագված ըլլան ինչպես մեր երկրի քրիստոնյաները կամ գոնե կրեն մեր «գլխանոց»-ը, որպեսզի ճանչցվին իբր քրիստոնյա. Նույնը պետք է ընեն նորոգ հավատացյալ դարձած քրիստոնյաները և ոչ մեկ մահմեդական կամ ուրիշ անհավատ պետք չէ որ քրիստոնյայի հագուստ կրե և որպեսզի անհավատ կիները զանազանվին երկրին քրիստոնյա կիներեն, եկեղեցաժողովը կխնդրե Ձեր բարձրապատվությենեն որ ոևէ նշան կրեն իրենց հագուստին վրա ճանչցվելու համար»։

124 Նույն, էջ 364. Հրովարտակ Թ. 40. «Տրված ըլլալով, որ անհավատներ այս երկրին նավահանգիստներուն և հողերուն, ինչպես իր առևտուրին մեջ, կբերեն շատ ստրուկներ, որոնց մեջ քրիստոնյաներ անարդարորեն գերված, ինչպես հապեշներ, չերքեզներ, վրացիներ, հայեր և ուրիշ ազգե մարդիկ և զանոնք մահմեդական կդարձնեն և այնպես կծախեն զանոնք հավատացյալներուն և անհավատներուն, ինչ որ հակառակ է Աստուծո ծա-

մաձայն եկեղեց. ժողովին հրահանգներուն, Հնդկաստանի փոխարքա Անթոն տը Նարոնիա 4 դեկտեմբեր 1567-ին հրատարակեց հանուն Տոն Սեպաստիան թագավորին օրենք մը, որ կհրամայեր ի միջի այլոց, որ «օտար քրիստոնյաները ինչպես հայերը և վրացիները, և կամ ուրիշներ, կրեն գլխարկ կամ գդակ զանազանվելու համար անհավատներեն և թե օտար կիները, երբ իրենց տունեն դուրս կգտնվին, դնեն կարմիր կերպասի փոքր կտոր մը իրենց բաց ուսին վրա, մեկ թանկա տուգանքով հայուն և մեկ փինբեմ օտարուհիին համար, հօգուտ անոր, որ զանոնք կամբաստանե»[125]։ Քրիստոնյա գերիներու համար, որոնք անարդարորեն գերված են խնդրագիրը նվազ բացահայտ էր և կըսեր պարզապես. «Եվ այսպես կհրամայեմ Աստուծո և իմ ծառայությանս համար, որ օտար գերիները չբերվին իմ հողերուս վրա առանց որ անոնց գերությունը ստուգված ըլլա»[126]։

1145-ի աշնան, ըստ գերման քրոնիկագիր Օթոն տը Ֆրայզինընկենի, Ժապալայի (Սուրիա) եպիսկոպոս Ուկո որ Հռոմ գացած էր տեղեկացնելու համար Եդեսիո գրավումը Զենկի Թուրքին կողմե, հայտնեց Եվգինոս Գ պապին Հայաստանեն և Պարսկաստանեն անդին գոյությունը Հովհաննես կրոնավորին թագավորության[127]։ Այս լուրը պի-

ռայության և վնաս կբերե մեր սուրբ հավատքին, թող հրամայե սուրբ Սինոտին, որ եկեղեցականները և վիճակավորները մեծ խնամքով քննեն հիշյալ ստրուկները, որոնք կգտնվին մեր հողերուն վրա և մեր մեջ, այն տեղերը ուր առևտուր կկատարենք և երբ անոնց մեջ գտնեն քրիստոնյաներ, զանոնք ազատեն իրենց նույնիսկ քրիստոնյա տերերուն իշխանութենեն և զանոնք կրթեն հավատքի մեջ, որքան որ պետք ըլլա և կարգադրեն, որ աշխարհիկ արդարությունը զանոնք վերադարձնե իրենց նախկին ազատության»։

125 Նույն, էջ 405—413, «Օրենք զոր տեր փոխարքան հրատարակեց եկեղեցաժողովին խնդրանքին վրա», Գոա, 4 դեկտեմբեր 1567, էջ 411—12։ (Թանկա—ասիական դրամ մը զանազան մետաղներե, փոփոխական արժեքով։ Փինբեմ—պղնձե դրամ, որ կարժեր քսան րեալ)։

126 Նույն, անդ։

127 **Steven Runciman**, History of the Crusades, vol. II, Cambridge, 1957, էջ 247—8։ Օգտագործելով հանդերձ Օթոն տը Ֆրայզինկընի Քրոնիկին աղբյուրը, **A-meal**, Historia de Portugal, Փորթո, 1968, էջ 189—190, Հյուկո տը Կապալան կըներկայացնե իբր «հայ եկեղեցական», մինչդեռ Մոնումենթա հենրիսինա, հատ. Բ, էջ 274—5, ծան. 2, նույն եկեղեցականը կհիշե իբր սուրիացի եպիսկոպոս և **V. V. Barthold**, La Découverte de l'Asie գործին մեջ, Փարիզ, 1947, էջ 86, զայն կանվանե կաթոլիկ եպիսկոպոս Կապալա քաղաքին, Սուրիո մեջ։ Տե՛ս Օթոն տը Ֆրայզինկըն, Քրոնիքոն, Ը, 33, հրատ. Monumenta Germaniae Historica, „Scriptores"-ի մեջ, հատ. 20, էջ 266։ Հակառակ այս հակադիր կարծիքներուն կասկած չկա, որ Հյուկո յատին եպիսկոպոս մըն էր։

տի գրգռեր բազմաթիվ դարեր երևակայությունը արևմտյան քրիստոնյաներուն և ճամփա պիտի բանար փորթուկալցիներու ապարդյուն փորձերուն ի խնդիր Հովհաննես կրոնավորի հայտնաբերումին։ 1486-ին Տ. Ժուան Բ առաջին արշավախումբ մը ղրկեց ծովի ճամփով, Պարթոլոմեու Տիասի հրամանին տակ, որու արդյունքը եղավ Բարեհուսո հրվանդանին գյուտը։ Հաջորդ տարին թագավորը երկրորդ առաքելություն մը ուղարկեց ցամաքի ճամփով, գլխավորությամբ Աֆոնսո տե Փայվայի և Փերո տե Քովիլիայի։ Այս վերջինը հասավ Հաբեշիստան, ուր իրեն հանդիպեցավ Բոտրիկո տե Լիմայի դեսպանությունը 1521-ին։

Հարկ է հիշել նաև, որ Մաթեոս, դեսպան Եթովպիո էլենի թագուհիին, որ Լիզպոն հասավ 1514-ին և ընդունվեցավ Մանուել Ա-են, ինքն ալ հայ վաճառական մըն էր, բուն անունով Աբրահամ։ Տամիան տը Կոըշ, որ շատ անգամներ հանդիպած էր անոր, զայն հայ կորակե, ինչ որ իրեն հաստատեց հաջորդ տարին Սակ-զա-ապ, որ Լեպնա Տենկել կայսեր դեսպանն էր Ժուան Գ-ի մոտ[128]։ Սակ-զա-ապ պիտի ըսե արդեն Տամիան տը Կոըշի, թե Մաթեոսի հայտարարություններուն մեջ հա-

[128] **Jean Aubin.** L'Ambassade du Pretre Jean a D. Manuel *(Հովհաննես կրոնավորի դեսպանությունը Տոն Մանուելի մոտ)*, տ. **Mare Luso-Indicum,** Փարիզ, հատ. Գ, 1976, էջ 1—56։ էջ 22-են 33 Օպեն կընե ծանոթ աղբյուրները Մաթեոսի վերագրված ազգություններուն և դավանանքներուն վերաբերմամբ։

P. Francisco de Sousa, Oriente Conquistado a Jesus Cristo pelos Padres da Companhia de Jesus da Provincia de Goa. *Արևելքը գրաված ի շահ Հիսուս Քրիստոսի, Գոա նահանգին հիսուսյան ընկերության կողմե*, Լիզպոն, 1710, տ. Գ տպագր., Փորթո, 1978, էջ 716, հատ. 14։ Այս հեղինակը, զոր չի հիշեր Օպեն, կանվանե «Մաթեոս հայը» ուղարկված Հելենա կայսրուհիին կողմե։ Հայ վաճառականի մը նշանակումը իբր դեսպան Եթովպիո թագուհիին ոչինչ ունի զարմանալի։ Այդ պատահեցավ դարձյալ 1664-ին, երբ Ֆասիլատաս կայսրը դիվանագիտական պաշտոնով հայազգի Մուրատը ուղարկեց Հնդկաստանի կայսր Օրանկզեպի մոտ և 1673-ին անոր հանձնեց նման առաքելություն մը Արևելյան Հնդկաստանի ընկերության մոտ Պաթավիո մեջ։ Իր հաջորդը՝ Լիաղու կայսրը նույնը ըրավ ուղարկելով զինքը նաև 1690-ին և դարձյալ 1696-ին։

Մուրադ հայու դեսպանության առնչությամբ տե՛ս նաև **Franken et Copedi Valromita,** «Եթովպիա համաձայն ԺԷ դարու քանի մը հոլանտացի պաշտոնատարներու ուսումնասիրություններուն» (իտալ.), հրատարակված Revista Storica Italiana-ի մեջ, Ե-րդ շարք, հատ. Ա, պրակ 2 (1936), էջ 49—88։ Օպեն, անդ, էջ 59—60, Վատ. պարսկ. 33, կպարունակե 32 վավերաթուղթեր արաբերեն և պարսկերեն, որոնք կվերաբերին Պարսից ծոցի, Սուրաթի և Հոլանտական Հնդկաստանի մեջ հոլանտական առևտու-

վատքի մասին գտնված անճշտությունները հետևանքն էին անոր, որ ան հայ էր, քիչ ծանոթ եթովպացիներու կրոնքին գաղտնիքներուն[129]։

2 ապրիլ 1515-ին, քանի մը օր առաջ նավատորմին մեկնումեն, որ Հնդկաստան կերթար, Մաթեոս ստացավ Քրիստոսի կարգին ասպետի զգեստը[130]։ Պետք է հիշել նաև Տ. Ժուան Պերմուտեզի առաքելությունը, որ 1520-ին Եթովպիա գացած էր Բոտրիկո տե Լիմա դեսպանին հետ, որ Մանուել թագավորին կողմե ուղարկված էր Հովհաննես կրոնավորին։ Շուրջ 1531—3 տարիները Ժուան Պերմուտեզ ցամաքեն վերադարձավ Փորթուկալ, Հաբեշիստանեն անցնելով Հռոմ։ 1539-ին վերստին մեկնեցավ Լիզպոնեն, Հնդկաստանի նավախումբին հետ, միասին տանելով երկու հայեր, Անթոնիո Ֆերնանտեզ և Գասպար Սուրիանո, որոնք Հովհաննես կրոնավորին հրամանով եկած էին զինքը փնտրելու և որոնց Ժուան Գ թագավորը ընծայեց շատ շնորհներ, անոնցմե մեկուն տալով Քրիստոսի կարգին զգեստը և գրեց Հովհաննես կրոնավորին, հանձնարարելով զանոնք[131]։

րին։ Անոնցմե մեկըն է Եթովպիո նեկյուսին արաբերեն նամակը ուղղված Պաթավիո կառավարիչ Յոհաննես Քամֆիուսի (1684—1697), զոր բերած էր պատգամավոր Մուրադը։ Մյուս կողմե Մաթեոսի Փորթուկալ ճամփորդութենեն ետք առաջին դեսպանը, որ անվանվեցավ կաթոլիկ երկիր մը երթալու համար եղավ հայազգի Մուրատ իպն Մազլումը, որ կոչված է նաև Մուրատ իպն Մակտեսոն, կամ Մուրատ Շալապի, նախորդին եղբորորդին, որու Լիաղու կայսրը դիվանագիտական պաշտոն մը հանձնեց Ֆրանսայի թագավոր Լուդովիկոս ԺԴ-ի մոտ։ Այս պաշտոնը, որու միացած էր բժիշկ Փոնսե, եկած Կահիրեեն կայսրը խնամելու համար, պատմություններու և սադրանքներու ասպարեզ դարձավ։ Իվերջո Մուրատ անշարժացավ Կահիրեի մեջ, մինչ Փոնսե սեպտեմբեր 1701-ին Աղեքսանդրիայեն նավ կնստեր իր հետ տանելով\ Մուրատի նամակը և նվերներուն մնացյալ մասը, որոնք լավ ընդունելություն գտան Լուդովիկոս ԺԴ-ի կողմե. տ. Հայկական ուսմանց հանդեսին մեջ, հատ. ԺԲ, 1977, Փարիզ, էջ 273—345, **R. Pankhurst**, The History of Ethiopian-Armenian Relations.

[129] **Damiao de Gois,** Fides, Religio, Moresque Aethiopium sub imperio preciosi Ioannis, Լուվեն, 1540, փորթուկալերեն թարգմանությունը, տե՛ս Opusculos Historicos-ի մեջ, Փորթո, 1945, էջ 162—163։ Իր Crónica do felicissimo Rei D. Manuel (*Ժամանակագրություն գերերջանիկ թագավոր Տոն Մանուելի*) գործին մեջ Տամիան տե Կոըշ կրկին կանդրադառնա նույն նյութին ըսելով, որ Սակա-զաապ իրեն հայտնած էր, թե Մաթեոս «քիչ բան գիտեր աստվածաբանության և կրոնական արարողություններուն մասին Եթովպիո մեջ, որովհետև օտարական էր և հայ ազգությամբ», տ. հրատ. Քոիմպրա, 1923, էջ 162—3, Ա հրատ., նույն գործին, Լիզպոն, 1576։

[130] **Օպեն,** անդ, էջ 55։

[131] Breve Relacao da Embaixade que o Patriarcha D. Joao Bermudez tro-

Մաթեոս ուրեմն եղավ առաջին հայը, որ 1515-ին ստացավ Քրիստոսի կարգին զգեստը։ Ավելի քան չորս դար ետք, 1950-ին Գալուստ Կյուլպենկյան կստանար Քրիստոսի զինվորական կարգին Մեծ խաչի պատվանշանները[132]*։*

ԺԵ դարու կիսուն հայ գաղթողներ և ուրիշ արևելյան քրիստոնյաներ որոնք Կոստանդնուպոլսեն խույս տված էին, երբ Թուրքերը գրավեցին այս քաղաքը, 1453-ի վերջավորության ներկայացան Տուրոյի նավահանգիստը։ Իրենց հետ ունեին նշխարները ս. Փանթալեոնի, որ նահատակված էր 305-ի Նիկոմիդիո մեջ[133]*։ Ըստ պատմվածին, մասունքները, որոնք պահված էին Կոստանդնուպոլսո մեջ, քրիստոնյաներու կողմե փրկվեցան, երբ Թուրքերը գրավեցին քաղաքը։ Քրիստոնյաները բերին զանոնք մինչև Միրակայա, ուր իրենց արտոնություն տրվեցավ ցամաք ելլելու։ Արևելյան քրիստոնյաները մասունքները հանձնեցին Միրակայայի ս. Փետրո եկեղեցիին, ուր մնացին ավելի քան 40 տարի։ 12 դեկտեմբեր 1499-ին Փորթոյի եպիսկոպոս Տիեկո տե Սուզա Փորթոյի մայր եկեղեցին տարավ ս. Փանթալեոնի մասունքը, որ քաղաքին պաշտպան սուրբը կդառնար։ Այդ շրջանեն սկսյալ Միրակայայի մեջ կար հայոց փողոցը, որ հիմա կկոչվի* Armenia *փո-*

uxe do Imperador da Ethiopia chamado vulgarmente Preste Joao. Dirida a El-Rei D. Sebastiao, conforme a edicao de 1565 (*Համառոտ պատմություն դեսպանական պաշտոնին, զոր Ժոան Պերմուտեզ պատրիարքը ստացավ Եթովպիո կայսրեն, զոր աշխարհաբար կկոչեն Հովհաննես կրոնավոր, ձոնված Տ. Սեբաստիան թագավորին, հար և նման 1565-ի հրատարակության), Լիզպոն, 1875, տ. էջ 78, «Ցուցակ Քրիստոսի կարգի ասպետներուն, որոնք զգեստ ստացան Մանուել թագավորին և իր հաջորդներուն օրով». Թթ. 136—187 Թոմպրայի մատենադարանին Թ. 656 ձեռագրին։ Այս ցուցակը, զոր ԺԸ դարուն գրած է Հ. Ժասինթո Լեիթան Մանոու և հրատարակված է* Antonio Machado Faria*-ի կողմե Քրիստոսի կարգի ասպետներու ցուցակ ԺԶ դարու* Arqueologia e Historia VI *(1955)-ի մեջ, ոչ մեկը կուտա այս անուններեն, բացի Անթոնիո Ֆերնանտեշ Քուարեսմեն, որ հիշված է երկու անգամ, 1515-ին և 1516-ին։ Կա նաև Անթոնիո Ֆերնանտեզ մը, զինագործ, որ ընկերացավ Ֆերնան Կոմեշ տե Լեմոսի, դեսպան շահ Իսմայիլի մոտ. տ. Աֆոնսո Ալպուքերքի նամակները, հատ. Զ, Լիզպոն, 1915, էջ 273, նամակ 22 ապրիլ 1515-ի։*

[132] *Անվանում 15 փետրվար 1950 հրովարտակով, ստորագրված Փորթուկալի հանրապետության նախագահ զորավար Քարմոնայի և արտաքին գործերու մինիսթր տքթ. Քաուլտա Մաթայի կողմե։*

[133] Ալիշան, *Սիսուան, էջ 289 կհիշե գերմանացի ճամփորդ Վիլպրպրանտը, որ կպատմե թե 1212-ին իրեն ցույց տվին ս. Փանթալեոնի գերեզմանը Մսիսի մեջ, նախկին Մոփսուեսթը, նաև Մանիսթեր կոչված, Փոքր Հայաստանի մեջ։ Մսիս Փոքր Հայաստանի մայրաքաղաք դարձավ երկրին և Սիս քաղաքին ընդհանուր կործանումեն ետք։ Նաև* Վիքթոր Լանկլուա, *Ճամփորդություն ի Կիլիկիա, Փարիզ, 1861, էջ 459—460։*

ղոց, որու շարունակությանը մեջ կգտնվի Միրակայայի ս. Փետրո եկեղեցին, վերակառուցված 1672-ի և 1740-ի միջև։ Կոստանդնուպոլսեն փախչողները հաստատվեցան շուրջը և շինեցին իրենց փուքը Սիտրալ փողոցին մեջ[134]*։*

Քամոենշ չթերացավ ակնարկելէ Հայաստանի և Հայոց Լուսիտանականներուն *մեջ, հրատարակված 1572-ին։ Երգ Գ-ին մեջ հիշելով Պատաժոզի մեջ առաջին պարտությունը Փորթուկալի առաջին թագավոր Աֆոնսո Էնրիքեշի և անոր դառնությունը գերի բռնված ըլլալու իր փեսային Ֆերնանտո տ'Արակոնի կողմե, Քամոենշ զուգակշիռ մը կըկատարե Պոմպեոսի հետ, որ պարտվեցավ Փարսալի մեջ Կեսարեն, որ իր աներհայրը եղած էր, մեղմացնելու համար անոր վիշտը։*

«Անտարակույս, փարթամ Արաբիան, եռանդուն հենիոքները և կողքիսցիները, որոնց անունը ծավալեցավ շնորհիվ ոսկեգեղմին և Կապադովկիան և Հուդայի երկիրը, ուր կպաշտեն ու կմեծարեն միակ

[134] Guia de Portugal IV Entre-Douro e Minho I Douro Litoral *(Ուղեցույց Փորթուկալի), Լիզպոն, 1964, էջ 258—260։* Boletim da Direccao Geral dos Edificios e Monumentos Nacionalis № 40—43, *հունիս-սեպտեմբեր-դեկտեմբեր 1945, մարտ 1946. Աթոռանիստ մայր եկեղեցի, էջ 15, Ֆրանսիսքո տե Սանթա Մարիա, Պատմական տարի, Փորթուկալյան օրագրություն, համառոտ ծանոթագրություն Փորթուկալի մեծ մարդոց և նշանակելի իրադարձություններու, Լիզպոն, 1743, էջ 477, 8 օգոստոս՝ տոն ս. Փանթալեոնի, պաշտպան Փորթո քաղաքին։* A. Meyrelles do Souto, A iconografia de S. Pantaleao *(Պատկերագրություն ս. Փանթալեոնի), տ.* Museu *հանդես, հատ. Ե, թ. 11, հունվար 1949, էջ 32—45, Փորթո։*

1495-ին Ժոան Բ հրամայեց շինել արծաթապատ արկղ մը պահելու համար ս. Փանթալեոնի նշխարները, բայց այս շինությունը 1502-ին դեռ ավարտած չէր, երբ Մանուել Ա, որ Քոմփոսթել երթալու համար Փորթոյեն կանցներ, վերջացնել տվավ այդ շինությունը։ Ավելի ետք, 1631-ին, նշխարները ամփոփվեցան ամբողջովին արծաթյա անոթի մը մեջ, որ գողցվեցավ 1841-ին և այլևս չգտնվեցավ։ Այժմ ս. Փանթալեոնի աջ բազուկը միշտ կգտնվի Միրակայայի Սան Փետրո եկեղեցին, արծաթյա նշխարատուփի մը մեջ զետեղված, իսկ ձախ բազուկը կգտնվի Լիզպոն։ Գանգը, բացի ճակատոսկրեն, Քոլոներ տարված է կըսվի 1202-ին մարմնույն Փորթուկալ փոխադրութենեն առաջ։ Ճակատոսկրը խնամքով տեղադրված ս. Փանթալեոնի նշխարհապահ կիսանդրիին մեջ, հանձնված է Փորթոյի թագավորներու ազգ. Սոարես թանգարանին պահպանության։ Այս վերջին նշխարը, անջատված, կպատկաներ Միրակայայի ս. Փետրո եկեղեցիին, ուրկե ամեն տարի հանդիսավոր թափորով դուրս կհանվեր, մինչև սուրբին մարմնույն հետ Փորթոյի մայր եկեղեցին փոխադրությունը 1499-ին։ Նույնիսկ հետո, մայր եկեղեցիեն դուրս պիտի ծառայե ամոքելու հավատացյալներու ախտերը, որոնք կխնդրեին սուրբին միջնորդությունը։ Ըստ Jean Coulson *-ի Սուրբերու պատմական բառարանին, 1958, մասունքներ, որոնց համար կըսեն թե ս. Փանթալեոնի արյունեն են՝ պահված Կոստանդնուպոլսո, Մադրիտի և Իտալիո հարավը՝ Րավալլոյի մեջ։*

Աստված մը, անշուշտ Ծոփքի մեղկ ժողովուրդը և բոցեռանդ կիլիկեցիները և Հայաստանը, ուր կհոսին ջուրերը երկու գետերու, որոնց ակը կցայտե ուրիշ լեռան մը մեջ ավելի հեռավոր և ավելի սրբազան.

«Անշուշտ, վերջապես, Ատլանտյան ծովեն մինչև Սկյութական Տավրոսի բարձր լեռնաշղթան, ամենն ալ քեզի տեսան հաղթական, բայց մի զարմանար եթե Էմաթիո դաշտը միայն տեսավ քու պարտությունդ։ Տես Աֆոնսո, իշխան փառապանծ և բախտավոր։ Ամեն ինչ տեղի կուտա իր առջև, բայց ինքն ալ իր կարգին կկքի։ Վանդի աստվածային նախախնամությունը կամեցավ, որ քու աներհայրդ հաղթե քեզի և իր փեսան՝ իրեն»[135]։

Կոստանդնուպոլսո գրավման և անոր հաջորդող վերիվայրումներուն նվիրված իր այս տողերուն մեջ Քամոենշ չթերացավ իր արդար և անվախ մարդու ձայնը բարձրացնելե, իր դյուցազներգության է երգին մեջ, արթնցնելու համար արևմտյան քրիստոնեության խիղճը. «Հրետանիի մահացու գործիքները, ահարկու գյուտ նոր ժամանակներու, պարտավոր եք անոնց փորձին ենթարկելու Բյուզանդիոնի և Թուրքիո պարիսպները։ Ըրեք այնպես որ Կասպյան լեռներու և սառնաշունչ Սկյութիո անտառային քարայրներուն վերադառնա այդ Թուրք ժողովուրդը, որ կհորդի ձեր հարուստ Եվրոպայի բարեզարդ երկիրներուն վրա։ Հույները, Թրակացիները, հայերը, վրացիները, ամենն ալ կաղակեն ձեզի, թե այդ վայրագ ժողովուրդը կստիպե իրենց սիրեցյալ զավակները հետևելու ղուրանի սրբապիղծ կանոններուն (ծանր տուրք)։ Փառք քաղեցեք ձեր քաջությենեն և ձեր ճարտարությենեն պատժելով զայն իր անմարդկային ոճիրներուն համար և մի փնտրեք անբարտավան առանձնաշնորհումը քաջ և զորավոր ըլլալու ձեր սեփական եղբայրներուն դեմ»[136]։

1898-ին միայն, Վասքո տե Կամայի ճամփորդության և Հնդկաստանի ծովային ճամփուն գյուտին չորս հարյուրամյակին առթիվ Քամոենշի երեք տուներ հայերենի թարգմանվեցան հայր Արսեն Ղազիկյանի կողմե, Մխիթարյան միաբանութենեն։ Այս թարգմանությունը հրատարակվեցավ Ժոաքիմ տե Արոժոյի կողմե, որ զանոնք տպել տրվավ Վենետիկի Ս. Ղազարու հայկական վանքին տպարանին մեջ։ Նույն

[135] Լուիս տը Քամոենշ, *Լուսիտանականք*, թարգմ. Ր. Պիսմյութ, Լիզպոն, 1961, Երգ Գ, 72, էջ 61։ Պոմպեոսի և Հայաստանի միջև հարաբերություններու և պատերազմներու մասին տ. Հ. Մանանդյան, *Տիգրան Բ և Հռոմ*, ֆր. թրգմ., Լիզպոն, 1963։

[136] Քամոենշ, անդ, Երգ Է—13, էջ 145։

թարգմանությունը վերահրատարակվեցավ Պրակայի մեջ, Փորթուկալ, ապրիլ 1900-ին[137]։

Վերջացնելու համար պիտի փափաքեի խորհրդածության առարկա դարձնել ծագումը Արմենիո անվան, զոր կկրեն այսօր բազմաթիվ փորթուկալցի քաղաքացիներ։

Արդեն Դ դարու կեսուն կգտնենք Արմենիո անունով մեկը, որ Իսպերյան թերակղզիին մեջ կտարածեր ագնոստիկական և մանիքեական գաղափարներ։ Այս գաղափարները զարգացան Փրիսիլիականություն կոչված աղանդի մը կողմե։ Կպատմվի թե Մարքոս եգիպտացին, Մեմֆիսեն, ներմուծեց զանոնք թերակղզիին մեջ, ուր հրապարակվեցան Փրիսիլիանոյի կողմե, որ իր ընկերներուն Ֆելիսիսիմոյի և Արմենոյի հետ գլխատվեցավ Թրեվերոսի մեջ 386-ին[138]։ Ավելի ետքը, Սուեններու և Վեստկոթերու տիրապետության ատեն (Ե-են Է դար), մասնավորաբար վեստկոթյան տիրապետության միջոցին, տեղի ունեցան կաթոլիկ Սպանիո բազմաթիվ ազգային և նահանգային եկեղեցական ժողովներ. Թոլետի յոթներորդ ժողովին, 646-ին, ներկա եղան 28 եպիսկոպոս և 11 նվիրակ, որոնց մեջ՝ Ցարմո՝ Վիղեուեն, Սիսիլբո՝ Էվորայեն, Վիթորիքո՝ Լամեկոյեն, Նեֆրիտիո՝ Լիզպոնեն և Արմենիո՝ Էժիթանիա քաղաքեն, որ այսօր կկոչվի Իտանիա-ա-Վելիա, Փորթուկալի հյուսիսային արևելյան կողմը[139]։

[137] Giacinto Manupalla; Camoniana Italica (*Մատենագրություն Քամոենշի իտալական հրատարակություններուն*), Քոիմպրա, 1972, էջ 48, թիվ 57, կհիշե. Հարյուրամյակ Հնդկաստանի—երեք տուն Քամոենշի—հայերեն թարգմանված հ. Արսեն Ղազիկյանե, հրատարակված Ժոաքիմ տե Արոժոյի կողմե, Վենետիկ, տպ. Ս. Ղազարի, 1898, գրքույկ 230×155 մմ, 8 էջ, որոնցմե 3—5-ը Արոժոյի հառաջաբանը։ Լուսիտանականքի առաջին երեք ութնյակներուն թարգմանությունը կգրավե 7—8 էջերը։ Թիվ 58-ը կհիշե. José Joaquim da Silva Pereira Caldas, երեք տուն հայերեն լեզվով Քամոենշի Լուսիտանականքեն, Մխիթարյան կրոնավոր Արսեն Ղազիկյանի կողմե, Պրակա, ապրիլ, 1900։ Գրքույկ 225×155 մմ, 8 էջ։ Թիվ 95-ի տակ Մանուփելլա կհիշե նաև Քամոենշի «Նավաբեկությունը—հնչյակ թաղված Պ. Ժ. տե Արոնժոյի բերթվածեն—Լուիս տը Քամոենշ—և հայերենի թարգմանված հ. Արսեն Լազիկի (Ղազիկյան) կողմե, Մխիթարյան, Վենետիկ, Ս. Ղազար կղզի, 1896։ Գրքույկ 242×180 մմ, 4 էջ, տպաքանակ 24։

Գտնիմ նաև 40 էջնոց գրքույկ մը, հայերեն, հրատարակված հ. Փլասիտո Սուքիաս Եփրիկյանի կողմե, Վենետիկ, 1898, ի պատիվ Վասքո տե Կամայի և Լուսիտանականքի, զոր Մխիթարյան հեղինակը ձոնած է «բարեկամս Պ. տե Արոժոյի, Փորթուկալի հյուպատոս Ճենովայի մեջ»։ Այս վերջինը գրած է փորթուկալերեն հառաջաբան մը։ Մանուփելլա չի հիշեր այս գրքույկը։

[138] Օլիվերա, անդ, էջ 19—23։

[139] Քասթելո Պրանքո գավառին Իտանիա-ա-Վելիա կոչված վայրին մեջ տակավին,

Եթէ այս երկուքը եղան առաջինները, որոնց հանդիպեցա այս անվան տակ իմ պրպտումներուս ընթացքին, կ՚ակիմ մտածելու, թե միայն ԺԶ դարեն սկսյալ է, որ Արմենիո անունը եկած է ավելնալու փորթուկալյան անվանացանկին վրա։ Այն կարծիքը ունիմ, որ Արմենիո հատուկ անունը փորթուկալյան լեզվին մեջ աճած է, որովհետև կուգար ավելնալու անվան վրա հայ ազգին պատկանող անձերու, որոնք ԺԶ դարեն սկսյալ Փորթուկալի և Հնդկաստանի մեջ փորթուկալյան անուններ առին։

Այսպես, «Անթոնիո և Կրեկորիո, հայեր», որոնցմե յուրաքանչյուրին Աֆֆոնսո Ալպուքերքե 1515-ին երեք փերտաո վճարել կուտա հանուն թագավորին իբր վարձատրություն[140], կամ Ժոան, Արմենիո, աղեղնավոր, որուն Օրմուզի գործակատարը Աֆֆոնսո Ալպուքերքեի հրամանով նույն տարին կվճարե 1 փերտաո իբր վարձք իր պաշտոնին[141], կամ Տոմինկոս Տիաս, «Արմենիո», փորթուկալցի կնոջ մը հետ ամուսնացած, որ իր մատուցած ծառայություններուն համար Մաթիաշ Ալպուքերքեյի կողմե կոչված է Օրմուզի մաքսատան դռնապան և չափա, պաշտոն որ թագավորին կողմե կ՚հաստատվի 6 մարտ 1598-ին, «թեև օտար հայ է, բայց չեն խախտվիր օրենքները և հրամանագրերը, որոնք հակառակը կտրամադրեն»[142], և կամ Սիմոն Ֆերնանտեզ Արմե-

կցանվին մնացորդները նախաքրիստոնեական երեք սրահով տաճարի մը, որու վրա նախ Զ դարուն էժիոթանիայի եպիսկոպոսները բարձրացուցին վեստկոթյան պաղիկէքա մը և հետո միջնադարյան մայր եկեղեցին, տ. Փորթուկալի գեղարվեստական գանձերը. Լիզպոն, 1976, էջ 302։

Նույնպես Պրակայի մոտ կցանվի վեստկոթյան Սան Ֆրուքթիուզո տե Մոնթելիուշ, Փորթուկալի նախարոման ամենեն կարեւոր հուշարձանը, կառուցված Ը դարու երկրորդ կիսուն, երեք ապսիտով հունական խաչի հատակագծի մը վրա. տ. նույն, էջ 477—78։ Այս վերջինը իբր օրինակ հիշատակված է Ք. Փերոկալլիի զեկուցումին մեջ, «Վիզիկոթյան և աստուրական ճարտարապետությունը, արեւմտյան զուգապատկեր մը հայկական արվեստին», տ. Առաջին միջազգային սիմփոզիում հայկական արվեստի, Պերկամո, 28—30 հունիս 1975, Ս. Ղազար, Վենետիկ, 1978, էջ 543—554։

[140] Աֆֆոնսո Ալպուքերքեի նամակները, հատ. Զ. Լիզպոն, 1915, էջ 221. նամակ, 25 հունվար 1515-ի ուղղված Ֆրանսիսքո Քուրվձնելի, գործակատար Կոայի։

[141] Նույն, էջ 260, նամակ, 11 ապրիլ 1515-ի առ Մանուել տա Քոսթա, գործակատար Օրմուզի։

[142] **Sousa Viterbo**, Viagens da India a Portugal por terra e vice-versa (Ուղևորություններ ցամաքի ճամփով Հնդկաստանեն Փորթուկալ և փոխադարձաբար), O Instituto հանդեսին մեջ հրատարակված, Քոիմպրա, 1897, հատ. ԽԴ, թ. 7, հուլիս, էջ 446—7։ Դոմինիկ Տիաս, հայ, մեկն ավելի անգամներ եկած պիտի ըլլա Հնդկաստանեն Փորթուկալ ցամաքի ճամփով, երկու անգամ կըսե վավերագիր մը, քանի մը անգամ, կըսե ուրիշ մը։

նիո, որու կղիմեն 1554-ին Պարսկաստանի և Հնդկաստանի գործերուն մասին տեղեկություն քաղելու համար[143], և կամ Մանուել արմենիո, որ 1547-ին տուն մը կնվիրե Կոայի ճեզվիթներուն[144], ինչպես նաև ուրիշներ, որոնք թագավորության մեջ գործ ունեցան Հավատաքննության հետ, որոնցմե կ՚հիշվի Սիմոն Քարլոս «արմենիո», որ մարտ 1573-ին դատարան ներկայացավ իբր թարգման իր հայրենակից Գասպարի[145], և կամ Անթոնիո տը Սուզա, արմենիո, քեռայր Փաոլո Վենեզիանոյի, որ երկու տարիե ի վեր կբնակեր Հայաստանի եպիսկոպոս Փաոլո Փախեքոյի տան մեջ և 16 հուլիս 1590-ին դատարան ներկայացած էր[146] և դարձյալ Գասպար Լոփեզ Արմենիո, բնակիչ Սեութայի, որ 1632-ին Լիզպոն գտնվելով փոխատվություն մը կատարեց քաղաքի կառավարիչ դուքս մարքիզ Վիլա Ռեալի[147], նաև Հնդկաստանի մեջ, Ժոան Կարսըշ մը, ամենիո, ամուսնացած և բնակիչ Պենկալի նավահանգիստ Սաթկաոնի, որ ընկերացավ հայր Ժիլ էանշ Փերեյիրայի և իբր թարգման ծառայեց անոր, երբ այս վերջինը 1578-ին Ֆաթեհփուրի մեջ այցելեց Աքբար կայսեր[148], կամ Տոմինկոս Փիրըշ, արմենիո, թարգման թագա-

[143] Լիզպոնի Ազգ. մատենադարան, Հավաքածո քրոնիկներու, Մաս Ա, տրցակ 93, թ. 1, 2 հուլիս 1554, նամակ Ճենովայեն Հռոմի «Վերին հրամանատարին» կողմե ուղղված թագավորին։

[144] **G. Schurhammer**, Die Zeitgenossichen Quellen Zur Geschichte Portugiesisch Asens und seiner Nachbarlander (Ostafrika, Abessinien, Arabien, Persien vorder -u. Hinterindien, Malau, scher Archipel, Philippinem, China u. Japan 6 zur zeit d. hl. Franz Xaver 1538—1552, Հռոմ, 1962, էջ 225, թ. 3440, որ կ՚հիշե եկեղեցապետին 15 նոյեմբեր 1547 թվակիր նամակը թագավորին։

[145] Archivo historico Portugues, հատ. Է, 1909, A Inquisicao em Portugal e no Brasil (Հավատաքննությունը Փորթուկալի և Պրազիլիո մեջ), էջ 229. «19 մայիս 1573-ին դատարան ներկայացավ Սիմոն Քարլոս հայը, որ իր հետ բերավ իր հայրենակիցներեն մեկը, որ կկոչվեր Գասպար, որուն կծառայեր իբր թարգման։ Այս Գասպարը խոստովանվեցավ, որ Կոստանդնուպոլսո մեջ հեռեած է Մուհամմետի կրոնքին։ Սուրբ Օֆիսին ներկայացած է վենետիկցիներու հյուպատոսին խորհուրդով։ Ծանոթ. բացակայեցավ որոշումը տրվելեն առաջ»։

[146] Նույն, հատ. Ը, էջ 418։

[147] Ցուցակ Լիզպոնի զանազան նոտարներու պաշտոնեագրություններուն ԺԶ—ԺԷ դար, հատ. Գ, Լիզպոն, 1944, էջ 215։

[148] **J. Wicki**. Documenta Indica, հատ. ԺԱ, 1577—1580, Հռոմ, էջ 593—598. Նամակ Հ. Ժիլ էանըշ Փերեյիրայի առ տ. Հենրիկ տե Թավորա, արքեպիսկոպոս Կոայի, Ֆաթեհփուր Սիքրի, 5 հունիս 1579, էջ 595։

վորին, որ Աքբարի կողմէ Կոա ուղարկվեցավ բերելու համար ժեզվիթ հայրերը Անթոնիո տը Մոնսերրաթ, Ռոտոլֆո Աքուավիվա և Ֆրանսիսքո Հենրիքըշ, որոնց հետ վերադարձավ Մեծ Մողոլին արքունիքը 1580-ին[149]։ Անհրաժեշտ չէ հիշել ուրիշ օրինակներ ենթադրելու համար, որ հայերը, որոնք անհիշատակ մնացած են ավելի բազմաթիվ եղած են, քան անոնք որոնց անունները հասած են մեզի։ Պետք է նշել նաև, որ 1563-ին Տոն Սեպաստիան փորձ կատարած էր հակակշռի տակ առնելու հայերու, հույներու և պարսիկներու բնակությունը Փորթուկալի մեջ[150] և թե 1596-ին Սպանիո թագավոր Ֆիլիփ Բ հրահանգ տված էր Հնդկաստանի փոխարքա Ֆրանսիսքո տը Կամայի «հսկել Օրմուզի հրամանատարին տրված հրամանին գործադրության, առանց դայթակղության տեղի տալու, արգիլելու համար, որ վենետիկցիներ, հայեր և ուրիշ օտարականներ մուտք գործեն Հնդկաստանի մեջ»[151]։ Այս հայերուն առաջին շառավիղները եղած են ուրեմն, որ ավելցուցած են իրենց փորթու-

[149] Նույն հատ. 12, 1580—1583, Հռոմ, 1972, էջ 14. Նամակ Հ. Ֆրանսիսքո Հենրիքեսի առ Հ. Լաւրենտու Փերըշ, գրված 28 փետրվար և 29 մարտ 1580-ի միջև։

[150] Արտասովոր օրենքներ (հետկղեմեսյան օրենքներ) հավաքված և ներկայացված մեր Տեր բարձրապատիվ և մեծազոր թագավորին Տոն Սեպաստիանի հրամանով, Քոիմպրա, 1796, էջ 553—554, Օրենք թ. 5, «Հայեր, արաբներ, պարսիկներ մտնեն թագավորության մեջ։ 14 օգոստոս 1563-ի հրովարտակով, թերթ 241, գիրք 4-րդ»։ Նույնպես Լիզպոնի Ազգ. մատենադարանին մեջ պահեստ 91—32ա։ Տպագրված մեկ էջի վրա նույն թվականով, «Օրենք, որ չգան հայեր, հույներ և ոչ ալ պարսիկներ»։ Թեև վերնագիրները տարբեր են, երկու պարագաներուն ալ գրությունը կճշտե, որ սկսյալ այս թվականեն Լիզպոն քաղաքին կամ թագավորության ոևէ մեկ վայրին մեջ անձեր, որոնք իրենց հագուստով, լեզվով ու սովորություններով կթվին ըլլալ հայեր, հույներ, արաբներ, պարսիկներ կամ ուրիշ ազգություններու պատկանողներ, որոնք հպատակ են Թուրքերուն, թող ձերբակալվին որպեսզի ստուգվի անոնց ինքնությունը և պատճառը իրենց այցելության և իրենց առևտուրին և թե որքան ժամանակ պիտի մնան»։ Ազգ. մատենադարանին տպագրյալ էջը հիշված է Antonio Joaquim Anselmo-ի կողմե Bibliografia das obras impressas em Portugal no S.XVI (Մատենագրություն ԺԶ դարուն Փորթուկալի մեջ տպագրված գործերուն, Լիզպոն, 1926, էջ 324, թ. 1161), ինչպես նաև Luis de Matos, Das Relacoes entre Portugal e a Persia (1500—1758)-ի մեջ (Փորթուկալի և Պարսկաստանի հարաբերություններու մասին), Լիզպոն 1972, էջ 224։

[151] Boletim da filmoteca Ultramarina (Տեղեկատու Անդրծովյան վավերագրերու ֆիլմաշարքին, թ. Գ, Լիզպոն, 1955, Գիրք մուտներու, թ. 4, 1595—1598, էջ 422, նամակ, 28 փետրվար 1596-ի։

կալյան մականունին վրա «Արմենիո» անունը, այսպես հավերժացնելով զայն փորթուկալյան անվանացանկին մեջ[152]։

[152] Ամենավերջին օրինակ մըն է պարագան հայ ուսանողի մը, պաղտատցի, վկայալ Լիզպոնի Մարմնակրթանքի բարձրագույն ինստիտուտեն։ Իր ուսման վերջավորության Իրաք վերադառնալե ետք, ամուսնացավ ու վերադարձավ հաստատվելու համար Լիզպոն, ուր 1978-ին ստացավ փորթուկալյան քաղաքացիությունը, պաշտոնապես ավելցնելով Արմենիո փոքր անունը իր ամբողջական անվան։

Ծանոթ. Արշակ Ալպոյաճյան հրատարակած է ուսումնասիրություն մը, Փորթուկալ և Հայաստան, Էջմիածին հանդեսին մեջ, 1963, դեկտեմբեր, թ. 12, էջ 42—51 և հունվար 1964, թ. 1, էջ 17—24։

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՐԹՈՒԿԱԼԻ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ԺԶ—ԺԷ ԴԱՐԵՐՈՒՄ ԵՎ ՊԵԼՇԻՈՐ ՏՈՍ ԱՆԺՈՍԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Անթոնիօ Պայիան, տնօրեն Լիզպոնի Թորրե տօ Թոմպոյի ազգային արխիվներուն, 1923-ին Քոիմպրայի մեջ հրատարակեց «Ուղեգրություններ Հնդկաստանեն Փորթուկալ ցամաքի ճամփով» վերնագրին տակ, ԺԷ դարուն Անթոնիօ Թենրեյրոյի և Մեսթրե Աֆոնսոյի կողմե կատարված ճամփորդություններուն ուղեգրությունները։ Հառաջաբանին մեջ կհրատարակեր անտիպ ձեռագիր մը Թորրե տօ Թոմպոյի[1] մեջ պահ դրված և վերնագրված «Տեղեկագրություն քրիստոնեության վիճակին մասին, ինչպես որ տեսանք Պարսկաստանի և Հայաստանի մեջ», հետևյալ հակիրճ մեկնաբանությամբ. «պարզամիտ և հուզիչ պատմություն անծանոթ և ջերմեռանդ կրոնավորի մը ԺԷ դարուն»։ Կատարելով փրնտրտուքներ փորձելու համար գտնել հեղինակի անունը, ճշտել այս տեղեկագրության մեջ հիշատակված իրադարձություններուն թվականները, ինչպես նաև առարկան այս ճամփորդության, որ կանդրադառնա առաքելությանը «ֆրանկ դեսպանի մը՝ եկեղեցականներու հետ», նույն արխիվներուն մեջ գտանք, իբր շարունակություն այս տեղեկագրության, վավերաթուղթ մը նույն ձեռքով գրված և բաժնված երկու մասի[2], առաջինը իբր վերնագիր ունենալով. «Տեղեկագրություն, որ կվերաբերի այն պատճառներուն, որոնց համար շահը պատերազմեցավ Թուրքերուն դեմ և ատկե հառաջացող իրադարձություններուն, 14 սեպտեմբեր 1603-են մինչև սեպտեմբեր 1605»[3], և երկրորդ՝ «Տեղեկագրու-

[1] *Ազգ. արխիվներ Թորրե տօ Թոմպոյի (ԱԱԹԹ), Լիզպոն, Դրադարան, Ջանազանք, ձեռ. 1113, էջ 120—124 (նոր թվագրություն, էջ 219—223ա)։*

[2] *Նույն, Դրադարան, ձեռ. 1113, էջ 125բ (նոր թվագրություն, էջ 223բ—227)։*

[3] *Կթվի թե ընդօրինակողը գրչասխալ մը կատարած է և պետք է կարդալ «մինչև սեպտեմբեր 1604» և ոչ 1605։*

թյուն Թուրքերուն դեմ շահին մղած պատերազմներուն նոյեմբեր 1604-են մինչև սեպտեմբեր 1605 և քանի մը դեպքերու ձմռան ընթացքին, երբ Թավրիզ էինք»։ Այս ձեռագիրը կամբողջացնե Անթոնիօ Պայիանի հրատարակած տեղեկագրությունը և, ինչպես պիտի տեսնենք ավելի ետքը, թույլ կուտա մեզի ըսելու, թե անոնց հեղինակն է Հայր Պելշիոր տոս Անժոս, մեկը երկու օգոստինյան կրոնավորներեն, որոնք Պարսկաստանի մեջ ընկերացած էին դեսպան Լուիս Փերեյիրա տե Լասերտայի։ Այս տեղեկագրությունը անտարակույս այն է, զոր Տոն եղբայր Ալեյիշո Մենեզըշ ծանուցած է թագավորին Կոայեն գրված և 21 հոկտեմբեր 1605 թվակիր նամակով մը, հետևյալ բառերով. «անհրաժեշտը պիտի կատարեմ որպեսզի ծովային սուրհանդակով Ձերդ վեհափառությանը հաղորդվի տեղեկագրություն մը այն բաներուն մասին, զորս գիտեցին մյուս կրոնավորները, որոնք դեսպանին հետ գացին այնտեղ, ուր շահը կպատերազմեր»[4]։

[4] *Անդրծովյան պատմական արխիվներ—Լիզպոն, Հնդկաստանի բաժին, անտուկ 1, Կարտինալ Սարայիվա, Ամբողջական գործեր, Լիզպոն, 1876, հատ. Ջ, էջ 100—101, թիվ 141, կգրե, թե սեպտեմբեր 1841-ին տեսած է գործ մը վերնագրված այսպես. «Պատմություն շատ նշանակելի բաներու, զորս ս. Օգոստինոսի կրոնավորները կատարեցին Պարսկաստանի մեջ ի ծառայություն հռոմեական սուրբ եկեղեցիին և Նորին վեհափառության մինչև անցյալ 1607 տարին, հրամանավ ս. Օգոստինոսի վիճակային հոր։ Տպագրված սուրբ հավատաքննության արտոնությամբ։ Լիզպոն։ Վիսենթե Ալվարեզի կողմե։ Կծախվի Սիմոն տե Քարվալիոյի մոտ, գրավաճառ»։ Կճշտե, որ փոքր հատոր մըն է, երկտասան ծալքով, երեսունմեկ էջով, որու տասնըչորրորդ էջին մեջ կգտնենք «Պատմություն պատերազմին, զոր Պարսկաստանի թագավոր շահը մղեց Թուրքին դեմ սեպտեմբեր 1603-են մինչև դեկտեմբեր 1604, և հաղթանակներուն, որոնք տարվեցան և բարիքներուն, որոնք հետևեցան քրիստոնեության և ավետարանական օրենքին ծավալման համար»։ Կարելի է մտածել, թե այս անանուն գիրքին հեղինակն է կամ հայր Կուվեիյա, ինչպես կըսե Շ. Շեֆեր, հրատարակելով հայր Ռաֆայել տյու Մանի գործը՝ Պարսկաստանի վիճակը 1660-ին, Փարիզ, 1890, էջ ԺԵ և կավելցնե թե այս պատմությունը իբր հիմ ծառայեց հայր Ժորժ Մեկրեյի երկին՝ Համառոտ պատմություն ավետարանի հառաջադիմություններուն պարսիկներու թագավորության մեջ, մահմեդականներու հավատափոխության, պարսիկներու պատրաստության ավետարանական հունձքին և հայերու Հռոմի եկեղեցվույն միացման ս. Օգոստինոսի կրոնավոր եղբայրներուն կողմե. նմանապես Պարսկաստանի մեծ թագավորին աշխարհակալությունները մեր հասարակաց թշնամի Թուրքերուն վրա, Լիեժ 1610, և նույնպես Տիոկո Պարպոզա Մաչատո Հայր Կուվեյիայի կվերագրե «Պարսկաստանի և Արևելքի տեղեկագրություններ»-ը, Լիզպոն, 1609, որ լույս տեսավ առանց հեղինակի անվան և որ տարբեր է 1611-ին հրատարակվածեն (տ. ստո, ծանոթ 7),* Տիեկո Պարպոզա Մաչատո, *Լուսիտանական մատենաշար, Լիզպոն, 1741, 4 հատոր, նույնը Քոիմպրայի հրատարակություն, 1965, հատ. Ա, էջ 295 և կամ՝ Հայր Պելշիոր տոս Անժոսի, որ գրեց երկու ձեռագիր տե-*

Արդարև, Լուիս Փերեյիրա տե Լասերտայի և ս. Օգոստինոսի կարգին երկու կրոնավորներու դեսպանութենեն առաջ, 1602—1603-ին տեղի ունեցած էր ուրիշ մը, դարձյալ նույն կարգեն երեք միաբաններու կողմե, որոնք են հայր Ժերոնիմո տա Քրուզ, հայր Անթոնիո տե Կուվեյիա և հայր Քրիստոֆան տո Էսփիրիթո Սանթո։ Այս վերջինները իրենց ճամփորդության մասին նկարագրություններ ուղարկած էին Փորթուկալի վիճակային հայրերուն, որոնք հրատարակեցին զանոնք Քոյիմպրայի մեջ 1606-ին։ Այդ հրատարակությունը վերջին մասը կկազմեր հատորի մը, զոր հեղինակած էր հ. Անթոնիո տե Կուվեյիա և կպատմեր, թե ինչպես Կոայի արքեպիսկոպոս Տոն Ալեյիշո տե Մենեզըշ Հռոմի եկեղեցիին հնազանդության ենթարկած էր Մալապարի քրիստոնյաները[5]։ Օգոստինյան ուրիշ կրոնավոր մը, հ. Ֆելիշ տե Ժեզյու, որու Կոայի մեջ հանձնարարված էր գրել Արև. Հնդկաստանի օգոստինյաններու պատմությունը, օգտվեցավ նմանապես անկե իր ժամանակագրության

զեկագրությունները, զորս կհրատարակենք և որ ըստ Գարպոզա Մաշատոյի (անդ, հատ. Ա, էջ 486) խմբագրած է նաև ձեռագիր մը, որ վերնագրված է «Պատմություն նահատակության եղբ. Նիքոլաո տե Մելլոյի և եղբ. Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիոյի, ինչպես և այն նշանակալի գործերուն, զորս Պարսկաստանի մեջ կատարեցին ս. Օգոստինոսի կրոնավորները տասնըչորս տարվան ընթացքին։ Գրված Սպահան, 20 փետրվար 1616-ին», որ կբաղկանա 23 գլուխներե և կգտնվի Լիզպոնի Բոկատ կարմելյաններու վանքին գրադարանին մեջ։ Տքթ. Փերեիրա տա Քոսթա, բարեհաճ և ձեռնհաս տնօրենը Լիզպոնի Թորրե տո Թոմպոյի, ուր պահ դրված են հիշյալ վանքեն եկած ձեռագիրները, չկրցավ զայն գտնել իր արխիվներուն մեջ։ Սակայն կթվի թե գոյություն ունի անոր սպաներեն մեկ թարգմանությունը, Մադրիտի Ազգ. մատենադարան, ձեռ. 1269, թ. 37, էջ 289ա—298բ, հրատարակված օգոստինյան է. Հարթմանի կողմե «Օգոստինյան Վիլերմ և իր ժամանակը», Օգոստինյան հավաքածոյին մեջ, 1970, էջ 181—234, 580—636, սպաներեն բնագիր, էջ 603—628։ Աշխատությունս մամլո տակ էր, երբ ծանոթացա այս նշանակալի ուսումնասիրության Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիոյի մասին։ Անհրաժեշտ է կարդալ զայն այս վերջնույն լավագույն ճանաչման համար։

[5] Անթոնիո Կուվեյիա, Ճամփորդություն Կոայի արքեպիսկոպոս Տ. Ալեիշո Մենեզըշի, Քոիմպրա, 137—152 էջերուն մեջ կխոսի օգոստինյան երեք կրոնավորներուն մասին, զորս արքեպիսկոպոսը ուղարկեց Պարսկաստանի շահին։ Կուվեյիա ասոր հառաջաբանը գրած է Կոայի մեջ 27 սեպտեմբեր 1603-ին, Պարսկաստանեն վերադառնալեն անմիջապես ետք։ 1611-ին Լիզպոնի մեջ հրատարակեց ուրիշ տեղեկագրություն մը. տ. ստորև ծանոթ. 7։ Ընթերցողին ուղղված ազդարարությամբ մը, գրված Կոայի մեջ 18 ապրիլ 1609-ին, կհիշե որ դեսպանության մեջ իրեն ընկերացող հայրերը իրենց Լիզպոնի կրոնավոր եղբայրներուն ուղարկած էին տեղեկություններ առանց հրատարակության նպատակ ունենալու, հետևաբար այնտեղ կային անճշտություններ և դեռ ավելին շատ բան կմնար 1606-ին հրատարակվածին վերաբերմամբ։

մեջ, զոր խմբագրեց 1606-ի հունվարին[6]։ Կթվի թե կրցավ նաև օգտագործել այն մասը տեղեկատվության, զոր կատարած էին «մյուս կրոնավորները, որոնք գացին դեսպանին հետ», և որ կվերաբերեր «քրիստոնեության գործերուն», զորս անոնք տեսած էին Պարսկաստանի և Հայաստանի մեջ, որովհետև իր ժամանակագրության մեջ ութը գլուխներ էապես հիմնված են Անթոնիո Գույիանի կողմե հրատարակված ձեռագրին վրա։

Երբ հայր Կուվեյիա Լիզպոնի մեջ հրատարակեց նոր տեղեկատվություն մը[7] անտարակույս ինքն ալ առիթը ունեցած էր նախապես ծանոթանալու հայր Պելշիորի տեղեկագրին և անոր մեջ նաև այն մասին, որ կվերաբերեր «թուրքերու դեմ շահին մղած պատերազմներուն»։ Ասկե զատ ժամանակ ունեցած էր այս մասին խոսելու դեսպան Լուիս Փերեյիրա տե Լասերտայի մյուս ընկերակիցին, հայր Կիլեերմե տե Ժեզյուի հետ, որ իրեն կընկերանար, երբ 1608-ին Պարսկաստան վերադարձավ։ Արդարև ըսելով հանդերձ, թե 1604-ին Լուիս Փերեյիրա տե Լասերտա, ընկերակցությամբ փորթուկալցի օգոստինյան կրոնավորներ հայր Պելշիոր տոս Անժոսի և հայր Կիլեերմե տե Ժեզյուի, հասավ շահին բանակատեղին, Շուրաքելի (Շորագյա՞լ) ամրոցին մոտ, Կարսեն[8] 7 մղոն հեռու, Կուվեյիա կտեղեկացնե նաև, որ ճամփու ընթացքին դես-

6 Առաջին մաս Արևելյան Հնդկաստանի մեջ ս. Օգոստինոսի միաբանության ժամանակագրության և տեղեկագրություն անոր այնտեղ ունեցած սկզբնավորության և այն պատվույն և փառքին, զոր շահեցան այդ երկրին մեջ աստուծո համար անոր առաջին հիմնադիրները ի փրկություն հոգիներու, Կոա, 1606, ձեռ. Էվորայի հանր. մատենադարանին, հին ձեռագիրներ, ԾԵ—1—18։ Էվորայի ձեռագիրը հրատարակված է Էնըլֆ Հարթմանի կողմե «Օգոստինյանները Կոայի մեջ, օգոստինյան Ֆելիշ տե Ժեզյուի մեկ ձեռագիրը», Օգոստինյան հավաքածո, հատ. 1, Հռոմ, 1967։ Էվորայի ձեռագրին երկրորդ գիրքին 11-են 18-րդ գլուխները կխոսին Անթոնիո Կուվեյիայի առաջին դեսպանության մասին էջ 88-են 114, իսկ 4-են 11-րդ գլուխները, էջ 129—164, կպատմեն առաքելությունը մյուս կրոնավորներուն, որոնք շահին արքունիքը գացին Լասերտայի հետ։ Թորրե տո Թոմպոյի ազգ. արխիվներուն մեջ կա ուրիշ օրինակ մը՝ «Հուշագրություն միաբանության», ձեռ. մատենադարան, թիվ 731։

7 Անթոնիո Կուվեյիա, Տեղեկագրություն ուր կպատմվին Պարսկաստանի մեծ թագավոր շահ Աբբասի պատերազմները և տարած հաղթանակները ընդդեմ թուրք թագավոր Մեհմետի և իր որդին Ահմետի, ինչպես կհայտնվի ս. Օգոստինոսի կարգեն կրոնավորներու դեսպանութենեն, զոր այս վերջինները կատարեցին հրամանավ Փորթուկալի թագավոր Ֆիլիփ Բ կաթոլիկ վեհափառության, Լիզպոն, 1611։ Գոյություն ունի ֆրանսերեն թարգմանություն մը, վերամշակված և համանման վերնագրով, հրատարակված Ռուան, 1646-ին։

8 Կուվեյիա, անդ, էջ 104։

պանության անդամները անցան Էջմիածին[9], ուր Նոյի զոհաբերության քարին վրա երկու կրոնավորները տախտակե խորան մը հաստատեցին և պատարագ մատուցին[10]։ Արդ, «Քրիստոնեության գործերուն» հեղինակը նույն դեպքը կհիշե ավելցնելով նաև, թե երկրորդ անգամ պատարագ մատուցին, երբ վերադարձան շահին բանակատեղին[11]։

Կուվեյիա կպատմե նույնպես, որ այն ատեն, երբ Հայր Պելչիոր տոս Անժոս շահ Աբբաս Ա-ի արքունիքը կգտնվեր, բանակցեցավ Վրաստանի երկրամասերեն մեկուն թագավոր Աղեքսանդրի հետ, այս վերջինույն ընկերանալու համար դեպի այդ երկիրը։ Բայց արգիլվեցավ Լուիս Փերեյիրա տե Լասերտայի կողմե, որ ոչ մեկ կերպով չէր ուզեր, որ Հայրը կատարե այդ ճամփորդությունը[12]։ Իր կողմե, տեղեկատվության հեղինակը կհայտնե, որ շահին բանակատեղին հասնելով, փորթուկալցի կրոնավորները հանդիպեցան Աղեքսանդր խանի, դուքս Վրաստանի և խոսակցություններ ունեցան անոր ընկերացող վրացի եպիսկոպոսին հետ, հասկնալու համար այն կարելիությունները, որ գոյություն ունեին այնտեղ հռոմեական եկեղեցի մը ունենալու, եթե Վրաստան երթային իրեն հետ[13]։

Այս տվյալները ի ձեռին ունենալով, գիտենք ուրեմն, թե երկու տեղեկագրություններուն ձեռնարկուներն էին դեսպան Լուիս Փերեյիրա տե Լասերտա և իր ընկերները Հայր Պելչիոր տոս Անժոս և Հայր Կիլեերմե տե Ժեզյու (կոչված նաև Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիո)։ Կմնար սակայն գիտնալ, թե որը այս երկու կրոնավորներեն կրնար հեղինակը ըլլալ այս տեղեկագրություններուն։

Եթե նկատի ունենանք, ինչպես պիտի տեսնենք հետագային, որ Հ. Պելչիոր հակում ուներ տեղեկագիրներ պատրաստելու, և թե, համաձայն Լուիս Փերեյիրա տե Լասերտայի հրահանգներուն, որ խաղվին մնացած էր Հ. Կիլեերմեյի հետ, ինք միայն Թավրիզ մեկնեցավ 1605-ին այնտեղ շահ Աբբասը տեսնելու և թե թիվ 2 տեղեկագրության երկրորդ մասին վերնագիրը կնշե այն դեպքերը, որոնք տեղի ունեցան ձմռան ընթացքին՝ «գտնված ըլլալով Թավրիզ», անցյալ դերբային գործածությունը

9 Էջմիածին, Աթոռ ամենայն հայոց կաթողիկոսին։

10 Կուվեյիա, անդ, էջ 144։ Կուվեյիա անշուշտ լավատեղյակ էր այս մանրամասնության, որովհետև 1608-ին իր Պարսկաստան կատարած երկրորդ ճամփորդության միջոցին իրեն կընկերանար նույն Հայր Կիլեերմե տե Ժեզյուն, էջ 170—171։

11 Պելչիոր տոս Անժոս, Տեղեկագրություն քրիստոնեության գործերուն մասին, զորս տեսանք Պարսկաստանի և Հայաստանի մեջ, տ. աստ, էջ 97։

12 Կուվեյիա, անդ, էջ 189։

13 Պելչիոր տոս Անժոս, անդ, էջ 94։

մեզի կթույլատրե Պելչիոր տոս Անժոսի վերագրել անոր հեղինակությունը։ Առաջին տեղեկագրության մեջ այս վերջինը արդեն ընդհանրապես կգործածե «մենք» դերանունը, բացի այն պարագայեն, ուր անձնապես խոսիլ կուտա Հայր Պելչիոր եզակի առաջին դեմքով, ինչ որ ույժ կուտա մեր տեսակետին, որովհետև անգամ մը միայն հիշատակելով Հայր Կյուլիել մը (ըստ երևույթին համառոտագրություն Կյուլեելմոյի) հեղանակը անոր մասին կխոսի երրորդ դեմքով, ըսելով «զոր Հայր Կյուլիել իր տրամադրության տակ ունի»[14]։ Պետք է հիշել, նաև վկայությունը հայ Տիոկո տա Սանթա Անայի, որ ճամփորդեց Կոայի դեսպանության երեք անդամներու հետ մինչև Սպահան, ուր օգոստինյաններու վանքը կերթար։ Արդարև Թորրե տո Թոմպոյի ուրիշ մեկ ձեռագրին մեջ Հայր Տիոկո կճշտե, որ դեսպանին երկու ընկերներեն «գլխավորը, Հայր Պելչիոր տոս Անժոս կտեղեկագրեր ամեն ինչ»[15]։

Հաջորդող էջերուն մեջ կգտնվի թարգմանությունը Հայր Պելչիոր տոս Անժոսի երկու տեղեկագրություններուն, որոնցմե առաջինը արդեն հրատարակված է փորթուկալերեն, առանց հեղինակի անվան, 1923-ին։

Ասոր վրա ավելցուցինք թարգմանությունը շահ Աբբաս Ա-ի անթվակիր մեկ նամակին, ուղղված Սպանիո Ֆիլիփ Բ թագավորին[16], որ առնչություն ունի այս դիվանագիտական առաքելության հետ։ Պարսկերեն սկզբնագիրը չէ գտնված, բայց Թորրե տո Թոմպոյի մեջ գոյություն ունեցող փորթուկալերեն մեկ օրինակը ստորագրված է Լուիս Փերեյիրա տե Լասերտայի կողմե, առ ի վավերացում[17]։

Ամբողջացնելու համար Լասերտայի դեսպանության վերաբերյալ փաստաթուղթերու թարգմանությանց շարքը, ավելցուցինք նաև Հայր Տիոկո տա Սանթա Անայի ձեռագրին այն մասը, որ կխոսի իր կատա-

14 Նույն, էջ 87։ Սակայն Պելչիոր տոս Անժոս անգամ մը հիշված է երրորդ դեմքով, նույն, էջ 88։

15 Տե՛ս աստ, ծանոթ. 18։

16 1581-են սկսյալ Սպանիո թագավոր Ֆիլիփ Բ իշխեց Փորթուկալի վրա առնելով Ֆիլիփ Ա թագավոր Փորթուկալի տիտղոսը։ Սակայն իրենց Սպանիո թագավորական անվանակարգով պիտի հիշենք երեք Ֆիլիփները, որոնք առին Փորթուկալի թագը մինչև Փորթուկալի թագավոր Ժուան Դ-ի վերահաստատումը 1640-ին, այն է Ֆիլիփ Բ (1581—1598), Ֆիլիփ Գ (1598—1621) և Ֆիլիփ Դ (1621—1640)։ Այս վերջինը մնաց Սպանիո թագավոր մինչև 1665։

17 Արխիվ Թորրե տո Թոմպոյի, Լիզպոն, ձեռ. թիվ 1104, էջ 117—119։

րած գործերուն վրա Պարսկաստանի մեջ իր բնակության միջոցին 1604-են 1608[18]։

Ձեռագրին այս մասը հետաքրքրական տեղեկություններ կպարունակե փորթուկալցի կրոնավորներուն և հայ կաթողիկոս Դավիթ Դ-ի միջև տեղի ունեցած բանակցություններուն, որոնց հետևանքով,—ինչպես ձգտում է հավաստացնել տեղեկագրի հեղինակը,—այս վերջինը վեց եպիսկոպոսներու և հարյուրվեց եկեղեցականներու հետ Պողոս Ե պապին հնազանդության հայտարարություն մը կատարեց 1607-ի մայիսին Սպահանի մեջ։ Հայր Տիեկո գլխավոր դերակատարը եղավ այս գործին, բայց միացման ծրագիրը մեռյալ տառ մնաց շահ Աբբասի ընդդիմության պատճառով։

Օգտակար համարեցինք իբր հավելված հրատարակել այս չորս վավերաթուղթերը, պահելով Թորրե տո Թոմպոյի ձեռագիրներուն ուղղագրությունը։ Կմաղթենք, որ անոնց հրատարակությունը և թարգմանությունը կարենան օգտակար և լրացուցիչ տարրեր ընծայել մասնագետներուն, որոնք կզբաղին ԺԷ դարու դիվանագիտական, առևտրական և կրոնական հարաբերություններով Եվրոպայի և Արևելքի, և մասնավորաբար Պարսկաստանի և Փորթուկալի միջև։ Նմանապես, անոնց մեջ կարելի է գտնել տվյալներ պարսիկներուն և թուրքերուն միջև մղված պատերազմներուն և անոնց հետևանքներուն մասին հայոց համար, որոնք փոխադրվեցան Արաքսի հյուսիսակողմեն Սպահան և որոնց ականատես վկան եղավ Հ. Պելչիոր, տվյալներ որոնք կթույլատրեն լա-

[18] Արխիվ Թորրե տո Թոմպոյի, Լիզպոն, ձեռ. թիվ 674. Տիեկո տե Սանթա Աննա. «Նամակ օգոստինյան գերհարգելի հայրերուն Փորթուկալի թագավորության և թույլ կցյալ, զոր կուղարկե եղբ. Տիեկո տե Սանթա Աննա, Սանթա Մոնիքա Կոայի, 15 դեկտեմբեր 1637», որու կհետևին «Տեղեկություններ օգոստինյան կարգեն Արև. Հնդկաստանի միսիոնար անպետ ծառա Հ. Տիեկո տե Սանթա Աննայի անբավարար նպաստներուն մասին», էջ 65—91բ։ Ձեռագրին վերջավորությանը կգտնվի 13 նոյեմբեր 1638 թվակիր նամակ մը Հ. Տիեկոյեն, որ կհայտարարե թե այս վավերաթուղթին պատճենը իր կողմե ուղարկված էր նավով մը, որ հրկիզվեցավ մահմեդականներուն կողմե, երբ արդեն մոտեցած էր Լիզպոնի։ Ձեռագրին այն մասը, զոր կհրատարակենք իբր վերնագիր ունի՝ «Ինչ որ կվերաբերի անոր, զոր անպետ ծառա հայրը՝ անուն զոր Հ. Տիեկո կուտա ինքզինքին ամբողջ իր պատմության ընթացքին, կատարեց Պարսկաստանի թագավորության մեջ Աստուծո շնորհիվ», էջ 68—80բ։ Տիեկո տե Սանթա Աննա, ծնած Պրականսա քաղաքին մոտ, Վիլլա Նովա տե Զամփազըշի մեջ, Հնդկաստան գնաց 1594-ին, մեռավ 6 հոկտեմբեր 1646-ին Կոայի մեջ և թաղվեցավ Սանթա Մոնիքայի կրոնավորուհիներուն վանքին մեջ. տ. Պաւպոզա Մաչատո, անդ, էջ 630—631։ Կկարծվի թե հեղինակած է պարսկերեն բառարան մը։

վագույն կերպով ճշտել դեպքեր և թվականներ[19]։ Այս տեղեկագրություններեն կհաստատենք, որ Ջուղայի և Նախիջևանի հայոց բռնագաղթը դեռ չէր սկսած, երբ առաջին անգամ շահին բանակատեղին այցելեցին 1604-ի հոկտեմբերին վերջը, մինչ հայր Պելչիոր անոնցմե հազարավորներու հանդիպեցավ Թավրիզի մոտ իր երկրորդ այցելության ընթացքին 1605-ի մարտի վերջը։ Օգոստինյան հայրերուն մեկ կողմե պարսիկ և թուրքոման մահմեդականներու հետ և մյուս կողմե հայ և վրացի արևելյան քրիստոնյաներու հետ առաջին լուրջ շփումներեն քաղված տպավորությունները ցույց կուտան թե որքան իրապես բացառիկ պայմաններու մեջ կգործեին անոնք։ Այնտեղ կտեսնենք, թե ինչ եռանդով և խանդավառությամբ անոնք ձեռնարկեցին Պարսկաստանի մեջ իրենց ավետարանական առաքելության, որ սակայն մնաց շատ ապարդյուն առաջիններուն հետ, իսկ բազմազան վերիվայրումներու ենթակա՝ արևելյան քրիստոնյաներու հետ, որոնց վրա կենտրոնացուցին իրենց քարոզչական եռանդը։

Լիզպոնի տա Կրասա վանքին եպիսկոպոսական ժողովասրահին պատերը կզարդարեն հախճապակիներով կատարված երեսուն մետր երկարության և ութը մետր լայնության որմնանկարները, որոնք ստորագրված չեն։ Այդ հարուստ որմնանկարները ԺԷ դարու առաջին քառորդին կպատկանին և կներկայացնեն ս. Օգոստինոսի կարգին փորթուկալցի միաբաններուն գործերը իրենց պատմագրության լույսին տակ։

Ուշագրավ են նահատակության տեսարանները հայր Նիքոլաո տե Մելոյի 1614-ին Աստրախանի մեջ և հայր Կիլեերմե տե Սանթո Ակո-

[19] Թուրք և պարսիկ պատերազմներուն և բռնագաղթյալ գաղթին մասին, որու ենթարկեց շահ Աբբաս Նախիջևանի և Երևանի նահանգներուն, ինչպես և Ջուղա քաղաքին հայերը, օգտակար է դիմել, իբր հայկական աղբյուր, Առաքել Դավրիժեցիի պատմագրքին։ Հայոց գաղթին մասին ուրիշ ժամանակակից աղբյուր մըն է Արքայական մատենադարանի թիվ 31 ձեռագիրը, Հավելված, էջ 131—154 (Ներկայիս Ազգ. մատենադարան Փարիզի), ֆրանսերենի թարգմանված Կրտսեր Պրոսեի կողմե, տ. Ժուռնալ Ազիատիկ, մարտ 1837, էջ 209—245 և մայիս 1837, էջ 401—421. «Ճանապարհորդություն գերհարգելի Օգոստինոս Պաճեցիի, Նախիջևանի հայ եպիսկոպոս, քարոզիչ եղբայրներու կարգեն, Եվրոպայի ընդմեջեն»։ Օգոստինոս Պաճեցի, որ շուրջ տասնըհինգ տարեկան էր Արաքսի հյուսիսակողմը ավերող դեպքերուն առեն, գտնվեցավ հազարավոր հայերուն մեջ, որոնք պարտավորվեցան թողուլ իրենց բնակավայրերը։ Կպատմե իր տառապանքները մինչև իր Պարսկաստան մեկնումը «Ֆրանկ դեսպանի» մը հետ, որ Ռոպըրթ Շըրլեյը միայն կրնար ըլլալ, անդ, էջ 218—228։

Ներկա հատորին մեջ Դավրիժեցիեն կատարված մեջբերումները առնված են Վաղարշապատի տպագրութենեն (1896)։

սթինիոյի Նախիջևանի մեջ նույն տարին, ինչպես և մեծածավալ եռապատկերը, որ կներկայացնե Վրաստանի թագուհի Քեթևանի նահատակությունը Շիրազի մեջ 1624-ին և անոր մասունքներուն հանձնումը իր որդվույն՝ Թեյմուրազ Ա-ի Գորիի մեջ։ Շարքը կավարտվի այն արարողության պատկերմամբ, երբ Հայոց կաթողիկոս Դավիթ՝ Պողոս Ե պապին հպատակվելու հայտարարություն կկատարե, ի ներկայության ս. Օգոստինոսի կարգեն փորթուկալցի կրոնավորներուն, որոնք այս գործին միջնորդը եղած էին։

Այս սքանչելի հախճապակիները շատ քիչ ծանոթ են, որովհետև կգտնվին Տա Կրասա վանքին անգործության դատապարտված մեկ մասին մեջ (վանքն օգտագործվել է իբր զորանոց քանի մը տասնյակ տարիե իվեր)[20]։

Հիշենք նաև, որ դեռ այսօր Տա Կրասայի եկեղեցիին մեջ իսկ գոյություն ունի «Պարսկաստանի Աստվածամոր» նվիրյալ խորան մը։ Աստվածամոր պատկերին այս հորջորջումը ծագում կառնե պարսիկներու կողմե Օրմուզի գրավումեն, 1622-ին։ Ըստ պատմվածին, մահմեդական մը զայն գտած է նույն քաղաքին մեջ և նախ պահած է, հետո տարած է Սպահան ծախելու վաճառականի մը, որու քով մնացած էր տասներկու տարի, մինչև որ Սպահանի օգոստինյան վանքին մեծավորը, եղբ. Ֆրանսիսքո Ռիպեյրո, զայն գնած է 8 «փաթաքա»-ի։ Կրոնավորը տարած է պատկերը Գոա և այնտեղեն քառակայմով մը ուղարկած է Լիզպոն 1643-ին, ուր հասած է հաջորդ տարին։ Նկարը դրված է մատուռի մը մեջ, որ նվիրված էր սրբուհի Աննայի։ Ժողովուրդը սկսավ զայն կոչել «Գերի» կամ «Պատանդ» Աստվածամայր, բայց որովհետև կուգար Պարսկաստանեն, դեռ այսօր ընդհանրապես զայն կկոչեն «Աստվածամայր Պարսկաստանի»։

1650-ին մատուռը կպատարկվեր 250 կրոնավորներու կողմե, որոնք այս եղբայրակցության մեջ մտնելու համար պարտավոր էին նվիրել 600 րիալի ողորմություն մը և ամեն տարի վճարել 400 րիալ։

[20] Բժիշկ մը, ողբացյալ տքթ. Մեիրելըշ տօ Սութօ, որ վախճանեցավ վերջերս, գեղեցիկ նախաձեռնությունը ունեցած էր դիմելու Ազգային հուշարձաններու տնօրենության, կազմելու համար Կրասայի վանքին հախճապակիներու լուսանկարչական ցանկը, զոր հրատարակեց Թաղապետական հանդեսին մեջ, Միշակութային հրատարակություն Լիզպոնի Թաղապետական սենյակին, թ. 120—121, Ա և Բ եռամսյակ, 1969, էջ 51—70։

Ջատկին այս մատուռին մեջ տեղի կունենար Աստվածամոր տոնակատարությունը[21]։

Պարսկաստանի հետ պատմական հարաբերություններեն մնացած էր նաև հիշատակը Տոն Աֆֆոնսո Նորոնիի, որդի Օրմուզի «մահմետական Կալիֆ»-ին եղբորորդի թագավորին, քեռայր և թոռ պարսկական թագավորի մը։ Տոն Աֆոնսո Նորոնի կաթոլիկությունը ընդունած էր 1585-ին Օրմուզի մեջ, հետո մեկնած էր Գոա և այնտեղեն Լիզպոն, Մաթիաշ տե Ալպուքերքեյի հետ, որ ավարտած էր Օրմուզի բերդին հրամանատարության իր պաշտոնը։ Լիզպոն բնակության ընթացքին ապրեցավ Կրասայի վանքին մեջ և մեծ պատիվներով ընդունվեցավ թագավորին կողմե, որ իրեն շնորհեց ամրոց մը Հնդկաստանի մեջ և իրեն տվավ ազնվականության տիտղոս։ Նորոնի ճամփա ելավ դեպի Հնդկաստան Մաթիաշ տե Ալպուքերքեյի հետ, որ անվանված էր Հնդկաստանի փոխարքա, բայց մեռավ ճամփու ընթացքին։ Իր հիշատակին նվիրվեցավ մատուռ մը Կրասայի եկեղեցիին հակադասին մեջ, ուր սովորություն ուներ լսելու պատարագը[22]։

[21] Պատմություն Լիզպոնի վանքերուն, մենաստաններուն և կրոնական շենքերու, Լիզպոն, 1650, հատ. Ա, էջ 131—132։ Հայր Ռիպեյրո, որ գնած էր պատկերը, Սպահանի վանքին մեծավոր անվանվեցավ 1 դեկտեմբեր 1628-ին. տ. Մարիօ Սամփայիօ Ռիպեյիրօ, «Լիզպոնի Կրասա եկեղեցին և վանքը», Օլիսիպոյի մեջ՝ տեղեկատու Լիզպոնի բարեկամներու միության, 1939, թ. 5, 6, 7 անդ՝ Պարսկաստանի պատկերին մասին, թ. 6, էջ 73—74, հախճապակիներու մասին, թ. 7, էջ 147։

[22] Ֆ. տե Ժեզյու, անդ, էջ 16—17բ. և Տիոկօ տե Քութօ, Ժ տասնամյակ, էջ 325։

5—945

ՓՈՐԹՈՒԿԱԼԻ ԴԵՍՊԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԺԶ ԴԱՐՈՒ ՍԿԶԲԵՆ ԺԷ ԴԱՐՈՒ ՎԵՐՋԸ

Շահ Աբբաս Ա-ի մոտ 1604—1605 տարիներուն Լուիս Փերեյրա տե Լասերտայի դեսպանության մասին խոսելէ առաջ, օգտակար կը համարենք հիշել նախորդ պաշտոնական կամ պարագայական ներկայացուցիչները, զորս փորթուկալցիները ուղարկած են Պարսկաստան, «Հնդկաստանի տերության» հաստատումեն ետք՝ 1505-ին։

Պարսկաստանի մեջ Սաֆավիներու հարստության հիմնադիր շահ Իսմաիլ Ա-ի և Աֆֆոնսո Ալպուքերքեի միջև առաջին շփումները ի հայտ կբերեին այն շեշտը, զոր պիտի ստանային հետագա հարաբերությունները։

Հոկտեմբեր 1507-ին, մինչև փորթուկալցի նվաճողը զբաղած էր Օրմուզի ամրոցին առաջին քարը դնելով, լուր ստացավ, թե շահ Իսմաիլի կողմե դեսպան մը եկած էր Օրմուզի թագավորեն պահանջելու տարեկան հարկը։ Դեսպանը մնացած էր ցամաքամասին վրա։ Իբր պատասխան, Աֆֆոնսո Ալպուքերքե իր ասպետներեն մեկուն միջոցավ իրեն ուղարկեց թնդանոթի գունտերու, փամփուշտներու և այլազան մեծությամբ նետերու պաշար մը, հայտարարությամբ մը, թե այս էր դրամը, որ Փորթուկալի մեջ կկոխվեր տրվելու համար անոնց, որոնք հարկ կպահանջեին Փորթուկալի, Հնդկաստանի և Օրմուզի թագավոր Տոն Մանուելեն և թե լավ կըլլար, որ շահ Իսմաիլ գիտնար այս բանը։ Դեսպանը անակնկալի եկավ, բայց շահ Իսմաիլ, երբ լսեց պատասխանը, իրեն անախորժ չթվեցավ այս լեզուն և անոր հեղինակը մեծ հարգ ստացավ իր աչքին, որուն ավելի ետքը Կոա դեսպան մը ղրկեց, նվերով մը, երբ Աֆֆոնսո Ալպուքերքե Հնդկաստանի տերության կառավարիչ դարձած էր[23]։

[23] Ֆեռնաւ Լոփըշ տը Քասթանետա, *Պատմություն փորթուկալցիներու կողմե Հնդկաստանի հայտնաբերումին և նվաճումին, Քոիմպրա, 1928—1933, հատ. Ա, գիրք Բ, էջ 355։ Ութը գիրքերը, որոնք կկազմեն այս գործը առաջին անգամ հրատարակվեցան 1551—1561-ին և կընդգրկեն 1487—1538 տարիները։*

1510-ին, իբր փոխադարձություն շահ Իսմաիլի դեսպանին Կոա այցելության, Ալպուքերքե որոշեց Պարսկաստան ուղարկել փորթուկալյան առաջին դիվանագիտական առաքելությունը։ Ռուի Կոմըշ տը Քարվալիողա պաշտոն ստացավ գլխավորելու այս դեսպանությունը, որուն մաս կկազմեր նաև տոմինիկյան կրոնավոր մը, հայր Ժոհամ, և սպասարկու մը։ Ստացած ըլլալով ճշգրիտ հրահանգներ մարտ 1510 թվականով[24], փորթուկալցիները ճամփա ելան պարսիկ ներկայացուցչին հետ դեպի Օրմուզ, ուր այս ձեռնարկը ապարդյուն մնաց մահվամբ Ռուի Կոմըշ Քարվալիողայի, որ թունավորվեցավ կղզիին կառավարիչ Խոջա Աթարի հրամանով։

Աֆֆոնսո Ալպուքերքեի կողմե իր ներկայացուցիչներուն տրված հրահանգներուն մեջ կգտնենք, բացի այն բնական փափաքեն, զոր մեծ հրամանատարը ցույց կուտար իր երկիրը և թագավորը արժեցնելու, նաև հիմերը այն անփոփոխ ուղղության, որոնք կկազմեն Փորթուկալի և Պարսկաստանի մերձեցման կետերը ամբողջ մեկուկես դարու ըն-

[24] *Աֆֆոնսո տը Ալպուքերքեյի նամակները, Լիզպոն, 1884—1935, 7 հատոր։ Այսուհետև գործը պիտի անվանենք Նամակներ։ Հատ. Բ, էջ 79—83. 1510-ին Ալպուքերքեյի կողմե տրված հրահանգները Ռուի Կոմըշի և հ. Ժոհամի։ Սկզբնագիրը կգտնվի ԱԱԹԹ-ներուն մեջ, ծրար Թ. 1 Օրենքներու և կանոնագրություններու, առանց թվականի, թ. 27։*

Գրաշ տը Ալպուքերքե, *Մեկնությունք Մեծն Աֆֆոնսո տը Ալպուքերքեի, որ Արևելյան Հնդկաստանի ընդհանուր հրամանատար եղավ մեծազոր թագավոր Տոն Մանուելի օրով, Քոիմպրա, 1923 (առաջին տպագրություն 1557-ին), 2 հատոր, հատ. Ա, մաս Բ, էջ 351—363, կհրատարակե նույն հրահանգները, ինչպես նաև նամակը, զոր Ա. տը Ալպուքերքե ուղղած է շահ Իսմաիլի Ռուի Կոմըշի միջոցավ։*

Կասպար Քոռրեա, *Հնդկաստանի ավանդություններ, Քոիմպրա, 1923, հատ. Բ, մաս Ա, էջ 70—73։ Կասպար Քոռրեա Հնդկաստան գնաց 1512-ին, մեռավ 1561-են ետք։ Իր Ավանդությունները հրատարակվեցան 1858-ին միայն, Լիզպոնի մեջ։*

Ժոաե տը Պառրոս, *Ասիա մասին, ինչ որ փորթուկալցիները կատարեցին իբր արևելյան ցամաքամասերու և ծովերու գյուտ և նվաճում, Լիզպոն, 1777—78, 9 հատոր, տասնամյակ Բ, հատ. Բ, մաս Բ, էջ 467։ Առաջին տպագրություն տասնամյակ Բ-ի 1553-ին, Լիզպոն, կընդգրկե 1506—1515 տարիները։*

Տամիաե տը Կոըշ, *Ժամանակագրություն գերերջանիկ թագավոր Տոն Մանուելի, Քոիմպրա, 1926, նման 1556—67-ի հրատարակության, մաս Դ, էջ 15։*

Պարսկաստանի մեջ փորթուկալյան դեսպանություններուն մասին, որոնք իրարու հաջորդած են 1510-են 1524 կարելի է օգտակար տեղեկություններ քաղել Ռոնալտ Սմիթ եպիսկոպոսի գործեն։ «Պարսկաստանի մեջ փորթուկալյան դեսպանություններու, նավագնացություններու և ճանապարհորդություններու առաջին դարը 1507—1524 (անգլ.) Պեթսետա, Մերիլենտ, 1970։

թացքին, այն է զինվորական դաշնակցությունը ցամաքի և ծովու վրա ընդդեմ ընդհանուր թշնամի՝ Թուրքին։

Այս շահագրգռությունը միշտ գերակշիռ պիտի ըլլա նույնիսկ երբ անհամաձայնությունները սուր հանգամանք ստանան ըլլա Պահրեյնի և Օրմուզի առնչությամբ, ըլլա ԺԷ դարուն սկիզբը օգոստինյան կրոնավորներուն կողմե կատարված փորձերուն, որոնք կջանային իրենց հոգևոր պաշտպանության տակ առնել հայ, վրացի և ս. Հովհաննեսի քրիստոնյանները, որոնք ամենն ալ Պարսկաստանի շահին հպատակներն էին։

Անմիջապես որ շահ Աբբաս զգաց, այն քաղաքական հասունությամբ, որ զինքը կհատկանշե, թե կրնա պետք չունենալ քրիստոնյա իշխաններուն ընդդեմ Թուրքին, չվարանեցավ, ինչպես ըրավ 1622-ին, զինու զորությամբ և անգլիացիներուն նեցուկով վերագրավել Օրմուզ կղզին, իրագործելով խոր փափաքը իր նախորդներուն ավելի քան հարյուր տարիե իվեր։

Երկու կողմեն իրար ավելի լավ ճանչնալու ցանկությունը և շահը շատ մեծ ըլլալով, շահ Իսմաիլ և Աֆֆոնսո Ալպուքերքե չէին կրնար անշարժ մնալ Ռուի Կոմըշ տե Քարվալիոզայի դեսպանության ողբերգական վախճանեն ետք։ Մեկ կողմ դնելով անձնական վարկի հարցը, երկուքն ալ շահագրգռված էին իրենց փոխադարձ ույժերը կշռելու և խորհելու թե թերևս լավագույն է համբուրել ձեռքը, զոր փոխադարձօրեն իրարու կերկարեին չկարենալով արդեն իսկ խածնել զայն։ Ասկե զատ, չէ՞ որ անմիջականորեն երկու հասարակաց թշնամի ունեին, զորս պետք էր ընկճել, Գահիրեի սուլթանը և Թուրքը։

Շահ Իսմաիլ բանագնաց մը ղրկեց Կոա պատահածին համար իր ցավը հայտնելով և կրկնելով իր փափաքը, թե Աֆֆոնսո Ալպուքերքե փոխադարձաբար դիվանագիտական առաքելություն մը ուղարկե Պարսկաստան։ Աֆֆոնսո Ալպուքերքե դեսպան նշանակեց Միկուել Ֆերրեյիրա, որուն ուղեկցեցավ, իբր զգուշական միջոց, իր մեկ ազգականը, Ժոան Ֆերրեյիրա, որ զինքը պիտի փոխարիներ, եթե դժբախտություն մը պատահեր։ Միևնույն հրահանգներով զորս ստացած էր իր նախորդը, Միկուել Ֆերրեյիրա մեկնեցավ Քոչինեն (Մատրաս) 1513-ի դեկտեմբերի կիսուն և գնաց Օրմուզ իրեն հետ ունենալով շահ Իսմաիլի բանագնացը, որ պաշտոն ուներ զինքը ողջ առողջ հասցնելու մինչև Թավրիզի արքունիքը։ Մազ մնաց, որ այս դեսպանական առաքելությունը նախորդին նման ողբերգական վախճան մը ունենա, որովհետև

ճամփու ընթացքին ծառա մը, զոր Մ. Ֆերրեյիրա գանակոծել տված էր, փորձեց զինքը թունավորել։ Երեք ամիս մնաց կյանքի և մահվան միջև։ Տեղեկանալով կացության, շահ Իսմաիլ հրահանգ տվավ, որ հիվանդը բերվի մինչև իր արքունիքը, ուր իր անձնական բժիշկը պիտի խնամեր զայն։ Միկուել Ֆերրեյիրա բժշկվեցավ և առարկա եղավ մեծ ակնածանքի արտահայտություններու շահ Իսմաիլի կողմե, որ տեղեկություններ քաղեց մասնավորաբար Մանուել Ա. թագավորին, մեծ հրամանատար Աֆֆոնսո Ալպուքերքեի, փորթուկալյան ույժերուն մասին։ Իր կողմե դեսպանը իր շուրջը ուշադրություն կդարձներ պարսիկ վեհապետին զինվորական ույժին, կերթար այցելել Հայաստան և տեղեկություն կքաղեր քրիստոնյաներու մասին։ Իր առաքելությունը ավարտելե ետք Միկուել Ֆերրեյիրա վերադարձավ Օրմուզ, ուր հասավ 1515-ի սկիզբը դեսպանի մը հետ, զոր շահ Իսմաիլ կուղարկեր Ա. Ալպուքերքեյի, պաշտոնական հանգամանքով[25]։

1514-ի սկիզբը Աֆֆոնսո Ալպուքերքե ուղարկած էր իր եղբորորդին Փերո Ալպուքերքե Պարսից ծոցը չորս նավերով, տեղվույն վրա, քննելու համար տիրող կացությունը[26]։ Արդարև Օրմուզի թագավորը երկու տարիե իվեր հարկ չէր վճարած և կթվեր թե տրամադրություն ցույց կուտար դարձյալ շահ Իսմաիլի պաշտպանության տակ մտնելու։ Մյուս կողմե Աֆֆոնսո Ալպուքերքե կցանկար տիրել Պահրեյն կղզիին, որ մեծ հարստության համբավ կվայելեր և կպատկաներ Օրմուզի թագավորին։

Փերո Ալպուքերքե կատարեց իր առաքելությունը իբր հարկահավաք և գնաց դիտելու Պահրեյնը առանց ցամաք ելլելու, որովհետև նույն միջոցին շահին հրամանատարներեն մեկը գրաված էր կղզին։

---

[25] Միկուել Ֆերրեյիրա ճամփու նոթատետր մը ձգած է, այսօր կորսված, ուր պատմած է ամեն ինչ, որ պատահած է մինչև իր Օրմուզ վերադարձը և զոր Կասպար Քորրեյա իր ձեռքը ունեցած է, երբ գրած է իր Հնդկաստանի ավանդությունները, անդ, հատ Բ, մաս Ա, էջ 357—360 և 409—417։

Պրաշ տե Ալպուքերքե, անդ, հատ. Բ, մաս Դ, էջ 278—286։

Պարրոս, անդ, հատ. Բ, մաս Բ, էջ 177—179 և 412—414։

Քաստանիետա, անդ, հատ. Բ, գիրք Դ, էջ 333—335։

[26] Փերո Ալպուքերքեյի առաքելության մասին տեսնել Քաստանիետա, հատ. Բ, գիրք Դ, էջ 311—312։

Պարրոս, հատ. Բ, մաս Բ, էջ 400—402։

Կորչ, մաս Դ, էջ 218—219։

Պրաշ տե Ալպուքերքե, մաս Դ, էջ 302—303։

վերադարձավ Օրմուզ և հետո Կոա ուր հասավ 29 սեպտեմբեր 1514-ին։ Իր տեղեկագրին լույսին տակ, Աֆֆոնսո Ալպուքերքե եզրակացուց, որ անհրաժեշտ է ավելի բացարձակ հսկողություն մը հաստատել Օրմուզի վրա հօգուտ Փորթուկալի թագին և այս ընելու համար պետք էր ավարտել ամրոցին կառուցումը, որ սկսած էր 1507-ին։ Աֆֆոնսո Ալպուքերքե մեկնեցավ Կոայէն կարևոր ուժի մը գլուխը և կղզին հասավ 26 մարտ 1515-ին[27]։ Անմիջապես գործի սկսավ իրագործելու համար իր ծրագիրը, որ կվախնար թե կիսատ կմնար իր խախուտ առողջության պատճառով։ Հաջողեցավ ամրոցին կառուցումը վերջացնել Կոա վերադառնալե առաջ նույն տարվույն նոյեմբերին։ 16 դեկտեմբեր 1515-ին, Հնդկաստան վերադարձին հաջորդ օրը, Աֆֆոնսո Ալպուքերքե ավանդեց հոգին։ Օրմուզ բնակության միջոցին կրցած էր խոսիլ Մ. Ֆերրեյիրայի հետ շահ Իսմաիլի մոտ իր առաքելության մասին և շքեղ փայլով ընդունած էր դեսպանը, զոր պարսիկ վեհապետը ուղարկած էր իրեն։

Պարսիկ դեսպանը շատ գոհունակ աչքով դիտած ըլլալու չէ փորթուկալյան իշխանության այս ամրապնդումը Օրմուզի մեջ, բայց կրցավ զսպել իր սրտմտությունը և բավականացավ կարգ մը պահանջներ ներկայացնելով հանուն շահ Իսմաիլի։ Ի մասնավորի, այս վերջնույն հասկացողությամբ՝ Օրմուզի մեջ գանձված մաքսատուրքերը այն ապրանքներուն վրա, որոնք Պարսկաստանի ճամփով կուգային՝ իրեն կպատկանեին։ Նաև կպահանջեր նավային օժանդակություն իր զորքը անցնելու համար Արաբիո ափերուն վրա, ուր կգտնվեին Քաթիֆ և Պահրեյն կղզին։

Աֆֆոնսո Ալպուքերքե ժխտական պատասխան տվավ տուրքերու բաժանման առաջարկին, բայց ընդհանուր առմամբ ավելի հասկացողական ոգի ցույց տվավ նավերու հայթհայթումին համար, պայմանավ որ շահ Իսմաիլ ապահովություն տա թե անոնք պիտի չգործածվին ի վնաս Օրմուզի թագավորին ստացվածքներուն։ Մյուս կողմե Աֆֆոնսո Ալպուքերքե պատրաստ էր անպայման կերպով վստահեցնելու իր զո-

27 Աֆֆոնսո Ալպուքերքեյի Օրմուզ այցելության մասին տեսնել Պրաշ տե Ալպուքերքե, մաս Դ, էջ 323—338։ Պարրոս, հատ. Բ, մաս Բ, էջ 410—414։ Քասթանհետա, հատ. Բ, գիրք Դ, էջ 332—333։ Կոյշ, մաս Դ, էջ 220—223։ Քորրեա, հատ. Բ, մաս Ա, էջ 406—410։

28 Օրմուզի մեջ պարսիկ դեսպանին վերապահված ընդունելության և իր առաքելության առարկաներուն մասին. Պրաշ տե Ալպուքերքե, մաս Դ, էջ 339—342։ Պարրոս, հատ. Բ, մաս Բ, էջ 423—429։ Քասթանհետա, հատ. Բ, գիրք Դ, էջ 333—335։ Կոյշ, մաս Դ, էջ 225։ Քորրեա, հատ. Բ, մաս Ա, էջ 423—425։

րավոր դաշնակիցը թե փորթուկալյան ուժերը թիկունք պիտի ըլլան իրեն Գահիրեի սուլթանին և Թուրքին դեմ իր պատերազմին մեջ[29]։

Աֆֆոնսո Ալպուքերքե նկատեց, որ իմաստություն է ապահովություններ ձեռք առնել Օրմուզի կատարված իրողության և իր պատասխաններուն պարունակության վերաբերմամբ շահ Իսմաիլի կողմե աննպաստ հակազդեցության մը կարելիությանը հանդեպ։ Որոշեց ուրեմն, 1515-ի մայիսին, պարսիկ բանագնացին ընկերակցությամբ ուղարկել նոր դեսպան մը, որուն պաշտոնը պիտի ըլլար արգիլել, որ երկու երկիրներուն միջև գոյություն ունեցող բարվոք հարաբերությունները խաթարվին։

Ֆերնան Կոմըշ տե Լեմոշը նշանակվեցավ դիվանագետի այս դերը ստանձնելու համար և կպարտինք գրող Ժիլ Սիմոնշի, որ իրեն կընկերանար, գրավոր տեղեկատվություն մը իրենց ճանապարհորդության և շահ Իսմաիլի հետ իրենց հանդիպումին մասին Մարաղայի մեջ 1515-ի ամառը[30]։ Այս վերջինը Ֆերնան Կոմըշ տե Լեմոշի ըսավ թե անհրաժեշտություն չէր տեսներ Փորթուկալ դեսպան մը ուղարկելու ծովու կամ ցամաքի ճամփով ի նշան իրենց դաշնակցության. շատ հեռու էր այս երկիրը և ինք որոշած էր մանավանդ պատերազմ սկսիլ Թուրքերուն դեմ նույն տարին իսկ։ Մյուս կողմե շահ Իսմաիլ դեսպանեն պահանջեց գործադրել Աֆֆոնսո Ալպուքերքեի խոստումը նավերու անմիջական հայթայթումին վերաբերմամբ, մանավանդ որ Պահրեյնի բնակիչները կրկին ըմբոստացած էին։ Դեսպանը սակայն պատասխանեց, որ անկարելի էր անմիջական գոհացում տալ իրեն, որովհետև կառավարիչը արդեն Հնդկաստան մեկնած էր և Օրմուզի հրամանատարը չէր կրնար ոևէ նավային օժանդակություն ընծայել իրեն առանց Աֆֆոնսո Ալպուքերքեի արտոնության։

29 Քորրեա, հատ. Բ, մաս Ա, էջ 442—443։

Պրաշ Ալպուքերքե, մաս Դ, էջ 363։

Պարրոս, Տասնամյակ Բ, հատ. Բ, մաս Բ, գիրք Ժ, էջ 427—429։

Տե՛ս նաև Ա. Թ. Ուիլսըն, Պարսից ծոցը, պատմական ուրվագիծ մը հին ժամանակներեն մինչև քսաներորդ դարու սկիզբը (անգլ.), Օքսֆորտ, 1928, էջ 121, ծանոթ. 1։

30 Ամբողջությամբ հրատարակված Նամակներուն մեջ, հատ. Ա, էջ 391—394 և հատ. Բ, էջ 233—250։ Տե՛ս նաև Ալպուքերքեի կողմե տրված հրահանգներ Նամակներուն մեջ, հատ. Ա, էջ 389—390։ Այս վավերաթուղթը կգտնվի Լիզպոնի Ազգ. մատենադարանը, Հին ձեռ. թ. 297, էջ 171ա—171բ։

Պրաշ Ալպուքերքե, մաս Դ, էջ 361—364։ Պարրոս, հատ. Բ, մաս Բ, էջ 445—447։ Քասթանհետա, գիրք Դ, էջ 345—353։ Քորրեա, հատ. Բ, մաս Ա, էջ 443—444։ Կոյշ, մաս Դ, էջ 225 և մաս Դ, էջ 19—28։

Շահ Իսմաիլ դժվարավ լսեց այս խուսափողական պատասխանները առանց սրտնեղության, չկրցավ ինքզինքը զսպել իր բուն մտածումը ըսելու համար, հայտարարելով թե «ուրիշ տեղեր և ուրիշ նավահանգիստներ ունի, ուր կրնա նավեր գտնել և թե ցամաքամասը որմե կախում ունեն կղզին իրեն կպատկանեն և թե առանց անոր Օրմուզ կորսված պիտի ըլլար»[31]։

Պարսիկ թագավորը մտածեց սակայն որ լավագույն է առայժմ լռեցնել իր վիրավորված զգացումները և պատրաստվիլ դեմ դնելու ամենամեծ վտանգին, որ կներկայացնեին Թուրք սուլթանին ույժերը։ Պետք էր հաշտ երթալ փորթուկալյան դաշնակցին հետ։ Ֆերնան Կոմեշ տե Լեմոշ Հնդկաստան վերադարձավ առանց շատ գիտնալու, թե ինչ ընթացքի պետք է հետևիլ։

Օրմուզի վրա տիրապետությունը առանց մեծ դժվարության չէ, որ կշարունակվեր։ Թագավորը կջանար ամեն միջոցներով ձերբազատվիլ փորթուկալցիներու գերիշխանութենեն, որոնց ծանր հարկեր կվճարեր և ըմբոստացավ 1521—1522 տարիներուն։ Մյուս կողմե շահ Իսմաիլ հաճույքով չէր տեսած Օրմուզի մաքսին հասույթներուն մեկ մասին կորուստը։ Օրմուզի թագավորեն կպահանջեր վճարումը հետևյալ պարտքերուն, որոնք կմնային այն ժամանակեն, ուր կղզին իր վեհապետության տակ էր։ Ավելի ազդու դարձնելու համար իր պահանջքը, իր հրամանատարներեն մեկը կարգիլեր, որ ցամաքեն ճամփորդող կարավանները Օրմուզ հասնին։ Թագավորը պատճառ բռնելով կղզիին պաշարումը, փորթուկալցիներուն կհայտներ, որ չի կրնար վճարել հարկերուն ամբողջությունը։ Քաղաքական-տնտեսական այս կացության մեջ Օրմուզ հասավ կառավարիչ Տոն Տուարթե տե Մենեզըշ, որ քննելե ետք իրերու վիճակը որոշեց դեսպան մը ուղարկել շահ Իսմաիլի մոտ։

Պալթազար Փեսոա, պալատական, ասպետ Սանթիակոյի կարգին, նշանակվեցավ այս պաշտոնին համար, որ դարձյալ քիչ մնաց որ ձախող ելք ունենա, ճամփու ընթացքին խնդիր ստեղծված ըլլալով Լարի սուլթանին մարդոց հետ, որ ենթակա էր շահ Իսմաիլի։

Պալթազար Փեսոա, շուրջ քսան հետևորդներով, մեկնեցավ Օրմուզեն 1 սեպտեմբեր 1523-ին և 1524-ի մարտին հասավ Թավրիզի արևելյան շրջանը, ուր այն ատեն կգտնվեր շահ Իսմաիլի բանակատեղին։ Թագավորը զիրենք հրավիրեց ներկա ըլլալու Նեւրուզի տոնակատարություններուն, որոնք կնշեն գարնան առաջին օրը և հաճույքով ըն-

[31] Նամակներ, հատ. Բ, էջ 243։

դունեց Հնդկաստանի կառավարիչին և Օրմուզի թագավորին ընծաները, բայց դեսպանին առիթ չտրվավ խոսելու իր առաքելության նյութ կազմող հարցերուն մասին։ Եվ որովհետև շահ Իսմաիլ հաճախակիորեն կտեղափոխվեր իր բանակատեղիին հետ, Պալթազար Փեսոա պարտավորվեցավ անոր հետևելու մինչև Արտապիլ կարենալու համար իր առաքելության մասին խոսիլ։ Բայց դեռ չէին վերջացած դեսպանին վերապահված դժվարությունները։ Իրեն տեղեկացուցին, որ շահ Իսմաիլ շատ ծանր վիճակի մեջ էր և թե իր անձին և իր հետևորդներուն համար խոհեմություն էր վերադառնալ Թավրիզ, ուր ավելի մեծ ապահովության մեջ պիտի կարենար սպասել դեպքերու ընթացքին։ Մեկնեցավ ուրեմն և քանի մը օր ետք երկուշաբթի րաճապ 19, հեճիրի 930-ին (23 մայիս 1524) իմացավ շահ Իսմաիլի մահը։ Իր որդվույն շահ Թահմասպի գահակալության ծանուցումը չուշացավ և Թավրիզի մեջ լուր տարածվեցավ, որ նոր շահը իր բանակատեղին հաստատած է քաղաքին արևելակողմը երեք օրվան հեռավորության վրա։

Պալթազար Փեսոա որոշեց երթալ իր մոտ վերջ դնելու համար իր առաքելության, բայց ի մեծ ցավ իրեն ոևէ գոհացում չկրցավ ստանալ երիտասարդ վեհապետեն, որ քիչ կարևորություն տվավ իր անձին։ Հասկանալի է, որ շահ Թահմասպ գրավված էր ավելի ստիպողական գործերով[32]։

[32] Դեսպան Պալթազար Փեսոայի Օրմուզեն Թավրիզ հետևած ճանապարհորդագիծը նկարագրված է իր ընկերներեն մեկուն, Անթոնիո Թենրեիրոյի կողմե «Ճանապարհորդագրություն... ուր կպատմվի թե ինչպե՞ս Հնդկաստանեն ցամաքի ճամփով եկավ Փորթուկալի թագավորությունը», Քոիմպրա, 1560։ Այս գործը հրատարակված է վեց անգամ, օգտագործեցինք վերջին հրատարակությունը, 1923-ին, Ա. Պայիանի կողմե, որ հետևած է երկրորդ հրատարակության 1565-ին։ Խնդրո առարկա ուղևորությունը կգրավե 3—44 էջերը։ Գալով Անթոնիո Թենրեիրոյի, որ դեսպանեն բաժնված էր ճիշտ շահ Իսմաիլի մահեն ետք, Թավրիզի մեջ, ճամփորդություն մը ձեռնարկեց դեպի Երուսաղեմ, բայց չկրցավ հասնիլ այնտեղ, որովհետև ճամփու ընթացքին ձերբակալվեցավ Տիարպեքիրի փաշային հրամանով, որ զինքը հարցաքննեց Պալթազար Փեսոայի դեսպանության նպատակին մասին։ Թուրքերը կկասկածեին, որ Հնդկաստանի կառավարիչը դեսպանին միջոցով Պարսկաստան ուղարկած է թնդանոթի և հրետանիի կազմածներու ձուլիչներ։ Թըրքական տեղեկատվության սպասարկությունները լավատեղյակ կթվեին։ Աֆֆոնսո Ալպուքերքե երբ 1515-ի գարնան Օրմուզ կգտնվեր նամակ մը ստացավ շահ Իսմաիլեն, որ կխնդրեր իրեն ուղարկել թնդանոթաձգության քանի մը վարպետներ (Քասթանիետա, գիրք, Գ, գլուխ ՁԹ, էջ 335)։ Թենրեիրո ազատվեցավ բայց և այնպես հսկողության տակ ուղարկվեցավ Գահիրե, ուր ճշտվեցան իրողությունները։ Ազատվելե ետք վերադարձավ Օրմուզ և քանի տարի ետք մեկնեցավ Փորթուկալ ցամաքի ճամփով, Ճանապարհորդություն, էջ 58։

Պալթազար Փեսոայի դեսպանության և անոր ելքին մասին տ. Քասթանիետա, գիրք

Փորթուկալ-պարսկական հարաբերությունները սակայն այստեղ կանգ պիտի չառնեին և ուրիշ դիվանագիտական բանագնացներ գացին այնուհետև շահ Թահմասպի մոտ, բայց միայն 1549-ին է որ դարձյալ կգտնենք դեսպանական տիտղոսով ուղարկյալ մը, որուն անունը մեզի հասած է[33]:

Այդ տարին Ժոան Գ-ի հրահանգներուն վրա, Հնդկաստանի կառավարիչ Ժորժ Քապրալ իբր դեսպան շահ Թահմասպի մոտ ուղարկած էր Էնրիք տե Մասետո: Հազիվ թե դեսպանը ժամանակ ունեցած էր մեկ անգամ շփում ունենալու պարսիկ թագավորին հետ, երբ միջադեպ մը անմիջապես եկավ վնասել իր առաքելության ընթացքին: Օրմուզի մահմետական երևելի մը, որ մեծ վարկ կվայելեր շահ Թահմասպի մոտ, արքունիք հասած էր, ուր գանգատած էր, թե Շաուլ քաղաքը գացած ըլլալով, Հնդկաստանի մեջ, այնտեղ իր կինը բռնադատած էին քրիստոնեությունը ընդունելու և շատ դրամ առած էին իրմե: Շահ Թահմասպ հավատք ընծայելով գանգատողին, գայթակղեցավ և պարտադրեց Էնրիք տե Մասետոյին նամակ մը գրել Օրմուզի հրամանատարին պահանջելով բռնադատված կնոջ ձերբազատումը, հայտարարելով, որ որքան ատեն որ կինը վերադարձած պիտի չըլլա, դեսպանին թույլ պիտի չտրվի, արքունիքեն մեկնելու: Նամակը հանձնվեցավ դեսպանին ընկերակցող արքունական պատանի սպասյակի մը, Անթոնիո Մենտեզ տ'Օլիվեյրա, որ զայն տարավ Օրմուզի հրամանատար Ալվարո տե Նարոնիային: Այս վերջինը պաշտոն տվավ Անթոնիո Մենտեզի իր պատասխանը հաղորդելու շահ Թահմասպի և կթվի թե տրված բացատրությունները, մեկ կողմե այն թե գանգատողին կինը իր ազատ կամքով կրոնափոխ եղած էր և թե մյուս կողմե այլևս Օրմուզ չէր գտնվեր, բայց մանավանդ երկու վեհապետներուն միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերություններուն հիշատակումը վճռական եղան, գոնե Էնրիք տե Մասետո արտոնվեցավ վերադառնալու Օրմուզ: Ճիշտ է որ թուրքերը այն ատեն տեր էին Պասրայի նավահանգիստին և կթվեր թե կփափագեին առևտրական հարաբերություններ մշակել Օրմուզի հետ և այս նպա-

Զ, էջ 223—225, Պարրոս, Տասնամյակ Գ, գիրք Է, էջ 199—205: Թենրեիրոյի մասին տեսնել Ժան Օպեն, «Անթոնիո Թենրեիրոյի «Ճանապարհորդության» մասին քննադատության մը համար», Արխիվ Փորթուկալյան մշակույթային կենտրոնի, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության, Փարիզ, 1971, հատ. Գ, էջ 238—252:

[33] Նամակ Օրմուզի ամրոցին հրամանատար Ալվարո տե Նարոնիայի առ Փորթուկալի թագավոր Տոն Ժոան Գ, 22 նոյեմբեր 1550 թվականով. Ձեռ. ԹԹԱԱ-ներու, ժամանակագրական հավաքածո, մաս Ա, ձեռ. 85, վավ. 105, թ. 11107:

տակով խաղաղության առաջարկներ կատարած էին ամրոցին նախորդ հրամանատար Տոն Մանուելի: Բայց այս վերջինը ականջ չէր կախած մերձեցման այս փորձերուն և թուրքերը համար սեպած էին հարձակիլ Օրմուզի թագավորին հողերուն վրա: 1550-ի աշնան սկիզբը կգրավեին Քաթիֆը[34] և կպատռնային Պահրեյն կղզին: Նույնիսկ զրույց կըշրջեր, որ կարևոր նավատորմիղ մը պիտի գար պաշարելու Օրմուզը: Շահ Թահմասպ չէր կրնար հաշտ աչքով դիտել թուրքերուն հողային ծավալման այս փորձերը ծոցին մեջ. նախընտրելի էր փորթուկալցի դաշնակիցին բարեկամությունը:

Այս դեսպանական առաքելութենեն ետք քսան տարի պետք էր սպասել փորթուկալցի նոր բանագնացի մը ուղարկումը լսելու համար:

1572-ի հունվարի վերջը կարտինալ Ալեքսանտրինոյի, Վենետիկի «տիրոջ» և Ֆրանսայի մեջ Փորթուկալի դեսպանին ուղղված նամակներով Տոն Սեպաստիան թագավորը կիմացներ, որ դեսպան մը պիտի ղրկե Պարսկաստանի թագավորին մոտ հրավիրելու համար զայն, որ միանա քրիստոնյա իշխաններու լիկայի ընդդեմ թուրքերուն[35]:

26 փետրվար 1572 թվակիր նամակով Տոն Սեպաստիան իր առաջարկը կներկայացնե շահ Թահմասպին[36] և հրահանգներ կխմբագրե իր դեսպանին, Միկուել տ'Ապրեու տե Լիմայի համար, որ արդեն բազմաթիվ տարիներ ծառայած էր Հնդկաստանի մեջ[37]: Այս վերջինը Լիզպոնեն մեկնեցավ Կոա մարտ 1572-ին, բայց չենք գիտեր Սուֆիին մայ-

[34] Փորթուկալցիները զայն կկոչեն Քաթիֆա, վայր որ կգտնվի Սաուտյան Արաբիո մեջ, Ռաս Թանուրայի մոտ, Պահրեյն կղզիին դիմաց:

[35] Նամակ Տոն Սեպաստիան թագավորին ուղղված կարտինալ Ալեքսանդրինոյի, Ալմեյրիմ, 31 հունվար 1572. տ. Փորթուկալի դիվանագիտական ժողովածու, որ կպարունակե Փորթուկալի քաղաքական և դիվանագիտական պաշտոնաթուղթերը և հարաբերությունները աշխարհի զանազան ինքնակալներուն հետ, սկսյալ ԺԶ դարեն մինչև մեր օրերը: Լիզպոն, 1867, 15 հատոր, հատ. Ժ, էջ 437—438:

Նամակ 31 հունվար 1572-ի Տոն Սեպաստիանեն առ Վենետիկի տիրությունը, տ. ընդօրինակություն այս նամակին Լիզպոնի Ազգ. մատենադարանին մեջ, այսուհետև ԼԱՄ Ընդհանուր հավաքածո թ. 887, էջ 190բ, տ. արտագրությունը Պարպոզա Մաշատոյի մեջ, Հուշագրություններ Փորթուկալի պատմության համար, որոնք կվերաբերին Տոն Սեպաստիան թագավորին, առաջինը անունով և տասնըվեցերորդը Փորթուկալի միապետներուն. 1568-են մինչև 1574. ձոնված Ժոան Ե թագավորին 1747, 4 հատոր, հատ. Գ, մաս Գ, գիրք Բ, գլուխ ԺԲ, էջ 413—414:

[36] Ժ. Վերիսիմո Սերրաո, Ուղեգրություններ Տոն Սեպաստիան թագավորին, Լիզպոն, 1957: Վավերաթուղթ Սիմանքասի արխիվներուն մեջ, Պետական թղթածրար 390— առանց էջի նշանակումի:

[37] Նույն, էջ 230: Վավերաթուղթ՝ տ. Սիմանքաս, նույն, 81 և 154:

քաղաքը հասնիլը[38]։ Իր կողմէ, քրիստոնյա իշխաններուն հետ կապերը սերտացնելու միևնույն նպատակով, շահ Մոհամմետ Խոտապանտե 1579-ին Փորթուկալ ուղարկեց պատվիրակ մը[39]։

Տոն Սեպաստիանի մահէն ետք 1578-ին, որու հետևեցավ իր հաջորդին, կարտինալ թագավոր Հենրիկի մահը 1580-ին առանց որու ժառանգորդի, Սպանիո թագավոր Ֆիլիփ Բ պահանջեց Փորթուկալի թագին ժառանգությունը և փորթուկալցիներուն պարտադրեց երկու թագավորություններուն միացումը, որ պիտի տևեր մինչև 1640 և որ ժամանակի ընթացքին կարևոր անդրադարձումներ պիտի ունենար Փորթուկալի հարաբերություններուն վրա իր ավանդական դաշնակիցներուն հետ։ Այս նոր կացությունը այնքան բացահայտ վտանգ մը կստեղծեր Եվրոպայի համար, որ Ֆիլիփ Բ-ի դեմ պիտի միացներ Անգլիան, Հոլանտան և Ֆրանսան և հետագային աննպաստ հետևանքներ պիտի ունենար փորթուկալցիներուն համար, որոնք հակառակ իրենց կամքին կմտնեին գերակայության այս պայքարին մեջ։ Պարսկաստանի և իր դրացիներու հետ առևտրական հարաբերությունները ևս պիտի կրեին հակադարձ ազդեցությունը այս կացության և 1622-ին Օրմուզ, (որ մետաքսի առևտուրին օղակներեն մեկն էր) գրավվեցավ պարսիկներուն կողմե անգլիական նավատորմին օգնությամբ[40]։ Մինչ այդ, Ֆիլիփ Բ չէր ուզեր

[38] Կարմելյանները Պարսկաստանի մեջ, այսուհետև՝ Կարմելյաններ, Լոնտոն, 1939, 2 հատոր, հատ. Ա, էջ 21։ Ըստ 2 մարտ 1573 թվակիր հուշագրության, զոր Նափոլիի մեջ գրած է Մաթիաշ Պիկոտո Ֆուրթատո, որ Տոն Սեպաստիանի ծառայության մեջ էր և ուղղած Ալվարո Տոն Ժուանին, «Պողոս Ե պապը կուզեր զինքը նամակներով ուղարկել Պարսկաստանի թագավորին», բայց ինքը մերժած է առաջարկությունը և պապը Փորթուկալի թագավորին խնամքին հանձնած է նշանակել դեսպան մը։ Ըստ Ֆուրթատոյի, այս բանագնացը Լիզպոնեն մեկնեցավ մարտ 1572-ին և պետք էր սեպտեմբերին հասած ըլլար Հնդկաստան և այնտեղեն Պարսկաստան պետք էր մեկներ 1573-ի սկիզբը. «Կրնա ըլլալ նաև, որ Սուֆիին մայրաքաղաքը հասած ըլլա հառաջիկա ապրիլ ամսուն»։ Ֆուրթատո 16 տարի մնաց Թուրքիա Փորթուկալի թագավորի ծառայության մեջ։

[39] Կարմելյաններ, հատ. Ա, էջ 23։ 10 հունիս 1579-ին Վատիկանի կողմե Լեհաստանի առաքելական նվիրակ Քալիկարի արք.ին ուղղված նամակի մը մեջ հիշատակություն կատարված է թե հավանաբար Պարսկաստանեն Փորթուկալ հասնի «Պարսկաստանի թագավորին մեկ պատգամավորը թախանձելու համար քրիստոնյա իշխաններեն, որ միանան Թուրքին դեմ կռվելու համար և թե շուտով ավելի մանրամասնություններ պիտի ունենանք այս պատգամավորության»։

[40] Օրմուզի գրավման մասին տ. Լուսիանո Քորտեյիրո, Ինչպե՞ս կորսվեցավ Օրմուզ, Լիզպոն, 1896, նաև Ք. Ր. Պոքզըր, Մեկնությունք Ռուի Ֆրեյիրե տե Անտրատի, Լոնտոն, 1930։ Անգլիերեն հրատարակություն, որ իբր ներածություն ունի «Մեկնությունք մեծ հրամանատար Ռուի Ֆրեյիրե տե Անտրատի», Լիզպոն, 1647։

կորսնցնել շփումները. իր հրահանգին վրա, 1582-ին Հնդկաստանի փոխարքա Տոն Ֆրանսիսքո Մասքարենիաշ (1581—1584) դեսպան նշանակեց փորթուկալցի կրոնավոր մը, եղբ. Սիմոն տե Մորաեշ, որ կըկոչվեր նաև Սիմոն տա Քոնսեյիսան և այն ատեն Օրմուզի օգոստինյաններու վիճակավորն էր և որ թագավորին նամակը պիտի տաներ շահ Մոհամմետ Խոտապանտեի, միշտ այդ դաշնակցության ամնչությամբ, զոր ջերմորեն կփափագեին երկու կողմերն ալ։ Քաշանեն (Պարսկաստան) 20 հոկտեմբեր թվականով Գրիգոր ԺԳ պապին ուղղված լատիներեն նամակով մը հայր Սիմոն կտեղեկացնե, թե Քաշան հասած ժամանակ շահը մեկնած էր Խորասան և թե պաշտոն տված Հովհաննես Մկրտիչ անունով հայու մը, որ Կոայեն իրեն ընկերացած էր, Ֆիլիփ Բ-ի նամակը շահին հանձնելու[41]։

Սիմոն հանդիպեցավ շահին ավելի ետքը և Հնդկաստան վերադարձավ պարսիկ դեսպանի մը ընկերակցությամբ, որու հետ ճամփա ելավ դեպի Եվրոպա 1585-ի մուսոնին «Բարի ճանապարհ» նավով, որ ծովամույն կորսվեցավ ամբողջությամբ։

[41] Ֆ. տե Ժեզյու իր ժամանակագրության մեջ, անդ, տ. ատտ, ծանոթ. 6, որ Սիմոն տե Մորաեշի դեսպանութենեն քսան տարի ետք գրված է, այս մասին կկատարե տարբեր տեղեկատվություն մը, որ վիճելի կթվի, էջ 31ա։ Ըստ իրեն հ. Սիմոն հայուն ընկերակցությամբ մեկնեցավ Կոայեն 1583-ին. Ճամփու ընթացքին, Օրմուզը ձգելե ետք, այս վերջինը փորձեց սպաննել զայն, բայց չհաջողելով, փախավ և այլևս զինքը չտեսան։ Սպաննության փորձի այս պատմությունը գոյություն չունի Կուվեյիայի տեղեկատվության մեջ, հրատարակված 1611-ին (անդ, էջ 2—3), որ կպատմե հայուն այցելությունը Կոա և հ. Սիմոնի հետ անոր Պարսկաստան վերադարձի գրվագը։ Նույնպես հաստատված ըլլալ չի թվիր Վատիկանի գաղտնի արխիվներուն սկզբնագիր վավերաթուղթերուն մեջ. Ջանազանք հայկ., Բ, 117, էջ 130, 142, 154, ըլլա Քաշանեն 20 հոկտեմբերին Գրիգոր ԺԳ պապին ուղղված Սիմոն տե Մորաեշի լատիներեն նամակին մեջ, ըլլա հրեա Ժոզեֆի տեղեկատվության մեջ, որ պաշտոն ունեցավ Քաշանի այս նամակը և նույն թվակիր Ֆիլիփ Բ-ի ուղղված նամակ մը բերելու, որով հ. Սիմոն կհայտներ, որ այս հայը, Հովհաննես Մկրտիչ անունով (հայերեն Կարապետ), իրմե առաջ Մոհամմետ Խոտապանտեի մոտ հաջողությամբ գլուխ հանած էր Նափոլիի փոխարքա Ինեյիկո Լոփեզ տե Մենտոսայի կողմե իրեն հանձնված դիվանագիտական առաքելություն մը։ Հայը վերադարձ ճամփուն վրա Կոա հասած ըլլալով, մինչդեռ Փորթուկալ գացող նավախումբը արդեն մեկնած էր, փոխարքա Ֆրանսիսքո Մասքարենիաշ օգուտ քաղեց այս պարագայեն, խնդրելով իրմե, որ Պարսկաստան վերադառնա հ. Սիմոնի հետ. տե՛ս Կարմելյաններ, հատ. Ա, էջ 25—26։ Մյուս կողմե սպանության փորձի նույն պատմությունը կգտնենք ուրիշ ձեռագրի մը մեջ, ԹԲԱԱ, Լիզպոն, Ձեռ. մատենադարան, թ. 581, էջ 241—247. «Եղբ. Սիմոն տե Մորաեշի մասին, գլ. 1, ինչպե՞ս կրոնավոր եղավ, գնաց Արև. Հնդկաստան և ուղարկվեցավ իբր դեսպան Պարսկաստանի թագավորին»։

Հայր Սիմոն տե Մորալշի դեսպանությունը առաջինն էր դիվանագիտական պաշտոնական առաքելություններու շարքի մը, որ վստահված էր փորթուկալցի կրոնավորներուն։

Պարսկաստանի գահաժառանգ իշխան Համզա Միրզա[42] մեռած ըլլալով սպանությամբ, իր եղբայրը գահակալեց շահ Աբբաս Ա անունով։ Փորթուկալցիներուն և Պարսկաստանի միջև դիվանագիտական հարաբերությունները կշարունակեին մշակվիլ և Ֆիլիփ Բ կուզեր օգտվիլ այս պարագայեն։ Լիզպոնեն 15 փետրվար 1594 թվականով Հնդկաստանի փոխարքա Մաթիաշ տե Ալպուքերքեի ուղղված նամակով մը կհրահանգե, որ «դեսպանություն մը ուղարկե Պարսկաստանի թագավորին, անոր սահմանված նամակներով, ընդառաջ երթալու համար շահին կողմե հայտնված փափագին փորթուկալցիներու հետ բարեկամական հարաբերություններ ունենալու»[43]։

Նույնպես 1596-ին Ֆիլիփ Բ կհայտներ Հնդկաստանի նոր փոխարքա ծովակալ Տոն Ֆրանսիսքո տե Կամայի, կոմս Վիտուկեյիրայի, թե լավ կըլլա դեսպան մը ուղարկել Պարսկաստանի թագավորին քաջալերելու համար զայն իր պատերազմական եռանդին մեջ ընդդեմ Թուրքերուն, փորթուկալյան սեփականություններուն դրացի շրջաններուն մեջ և խորհուրդ կուտա, որ այդ դեսպանը բարձրաստիճան մեկը ըլլա և կամ ազնվականության հանգամանք ունենա, ինչպես եղած էր այն զոր Տոն Սեպաստիան ուղարկած էր Պարսկաստան[44]։

Ճիշտ ԺԶ դարու վախճանեն առաջ պարագաներու բերմամբ իբր բանագնաց ծառայեց Օգոստինյան կարգեն ուրիշ փորթուկալցի կրոնավոր մը, Հայր Նիքոլաու տե Մելո[45]։ Այս եկեղեցականը, որ այն ա-

42 Համզա Միրզա, Մոհամմետ Խոտապենտեի անդրանիկ որդին, գործնականորեն թագավորության խնամակալը եղած էր իր հոր իշխանության ատեն։ Սպանվեցավ իր սափրիչին կողմե 1587-ին. տե՛ս Իսլամական Հանրագիտարան, հատ. Գ, էջ 161։ 1579-ին ամուսնացավ վրացի իշխանուհիի մը հետ, որ աղջիկն էր Կախեթի Աղեքսանդր Բ թագավորին. տե՛ս Վ. Է. Տ. Ալլեն, Ռուսական դեսպանություններ վրաց թագավորներուն մոտ, (1589—1605), (անգլ.), Քեմպրիճ, 1970, 2 հատ., էջ 259։

43 Փորթուկալյան անդրծովյան ֆիլմաթեքայի տեղեկատու, ՓԱՖ, թ. 2, էջ 198—200, վավերաթուղթ 55։

44 Նամակ, 7 մարտ 1596-ի. տ. ՓԱՖԲ, 3, էջ 417—418, վավերաթուղթ 17։

45 Հայր Գոնզալո տե Սանթիակո, Փոքր ս. Օգոստինոսի կարգին Իպեր-ամերիկյան դրադարանի մը, հատ. Գ. Մատրիտ, 1920, էջ 373—377, ուր հետաքրքրական նոտագրություն մը կհատկացնե հ. Նիք. տե Մելոյի։ Հրատարակած է նաև Սպան և օգոստինյան պատմական արխիվներուն մեջ, հատ. ԺԷ, Մատրիտ, մարտ—ապրիլ 1922, էջ 150—156, քանի մը վավերաթուղթեր քասթիլյան լեզվով նույն կրոնավորին վերաբերյալ,

տեն կգործեր Ֆիլիփինյան կղզիներուն մեջ, 1598-ին Գոա հասավ Լիզպոն երթալու և այնտեղեն Հռոմ անցնելու համար։ Այդ տարին թագավորութենեն եկող նավերը հասած չըլլալով, որոշեց ուղևորությունը շարունակել ցամաքի ճամփով։ Հայր Մելո Գոան ձգեց 1599-ի փետրվարին և Օրմուզի ճամփով ապրիլին հասավ Սպահան, ուր մեծ պատիվներով և շնորհներով ընդունվեցավ շահ Աբբասի կողմե, որ այսպեսով կուզեր ցույց տալ իր զգացումներուն ջերմությունը առաջին կրոնավորին, որ կուգար զինքը տեսնելու իր գահ բարձրանալեն իվեր։ Հայրը, անշուշտ, դրդեց շահը պատերազմելու Թուրքերուն դեմ և այս վերջինը իր կողմե ուզեց գիտնալ թե ինչու կաթոլիկ կրոնավորներ չըկան իր արքունիքին մեջ, երբ անոնք ներկա են Թուրքերուն մոտ և Մեծ Մոկոլ Աքպարի արքունիքին մեջ, որոնք նվազ բարեկամ են քրիստոնյաներուն, քան ինքը։ Հ. Մելո անմիջապես Գոայի արքեպիսկոպոսին տեղեկացուց այս պարագան նամակներով, սկիզբ տալով Պարսկաստանի մեջ փորթուկալցի օգոստինյան կրոնավորներու առաքելության հաստատման, որ սակայն գործնական ձև պիտի առներ 1602-ին միայն։

Պատմելե առաջ հ. Մելոյի վերադարձը և ողբերգական վախճանը, օգտակար է անդրադառնալ Էնթընի Շըրլեյի Պարսկաստանի առաքելության[46]։ Այս անգլիացի բախտախնդիրը, որ այն ատեն Էսեքսի կոմսին հրամանին տակ էր, Իտալիա գացած էր և այնտեղ մնաց քանի մը ամիս, նախ քան իր եղբոր Ռոպըրթի և քանչորս ուրիշ ընկերներու հետ Պարսկաստան ճամփորդելը, ինքն ալ իր կարգին համոզելու համար, որ միանա քրիստոնյա իշխաններուն ընդդեմ Թուրքերուն։ Վենետիկեն մեկնեցավ մայիս 1598-ին և Սպահան հասավ 25 հունվար 1599-ին։ Էնթընի Շըրլեյ լավագույն տպավորություն գործեց շահ Աբբասի վրա, որ հաճոյակատար տրամադրությամբ լսեց իր ջատագովականը քրիստոնյա իշխաններուն դեսպան մը ուղարկելու ծրագրին։ Էնթընի Շըրլեյի փաստարկությունը կարելի եղածին չափ համոզիչ եղավ, քանի որ շահ Աբբաս զինքը իր դեսպանը նշանակեց այս եվրոպական առաքելության համար, իրեն տալով գերագահությունը պարսիկ դեսպանին,

որոնք պահված են Սիմանքասի մեջ, Պետական քարտուղարություն, թղթածրար 972։ Ֆ. տե Ժեզյու, անդ, նույնպես կանդրադառնա այս վերջինույն Պարսկաստանի առաքելության, գլ. Բ, էջ 61—63։ Տե՛ս Էռնեկի Հարըման, Հայր Նիքոլաու Մելո և եղբայր Նիքոլաու ս. Օգոստինոսի, Մարտիրոսներ, Լովեն, 1959 (անգլ.)։

46 Մանրամասն կենսագրության մը համար տեսնել սըր Է. Տընիսըն Ռոս, Սըր Էնթընի Շըրլեյ և իր պարսկական արկածները, Լոնտոն, 1933 (անգլ.)։

Հյուսեին Ալի պեկի վրա, որ իրեն պիտի ընկերանար, մինչ իր եղբայրը Րոպերթ Սպահան պիտի մնար իբր պատանդ։ Քանհինգ հոգինոց այս բազմանդամ դեսպանության միացան հ. Նիքոլաու տե Մելո, ինչպես նաև ուրիշ փորթուկալցի կրոնավոր մը, ֆրանսիսկյան Ալֆոնսո Քորտեյիրո, որ իրեն հետ էր Կոայեն սկսյալ, Հռոմ երթալու համար։ Սպահանեն մեկնեցան վերջ ապրիլ—սկիզբ մայիս 1599-ին[47]։ Էնթընի Շըրլեյ իրեն հետ կտաներ նամակներ շահին կողմե, ուղղված պապին, Ռուտոլֆ Բ կայսեր, Ֆրանսայի, Սպանիո, Սկովտիո, Լեհաստանի թագավորներուն, Անգլիո թագուհիին և էսեքսի կոմսին, ինչպես նաև Վենետիկի իշխանապետության և Ֆլորանսի դուքսին։ Ճամփորդության ընթացքին, չլուսաբանված պատճառներով, եկեղեցականին ներկայությունը թշնամական զգացումներ ներշնչեցին Էնթընի Շըրլեյի, որ զայն իբր լրտես մատնանիշ ըրավ Մոսկովիո իշխանին, որու հետևանքով փորթուկալցի կրոնավորը երկար տարիներ բանտարկված մնաց և Աստրախանի մեջ հրկիզվեցավ խարույկի վրա[48]։

[47] Կիլանեն 24 մայիս 1599-ին Սպանիո թագավորին ուղղված նամակի մը մեջ հ. տե Մելո կխոսի Էնթընի Շըրլեյի կողմե ղեկավարված դեսպանության և շահին որոշման մասին, որ զինքը, տե Մելո, իր գործավարը նշանակած էր պապին և Սպանիո թագավորին մոտ. տե՛ս Ընդհանուր արխիվներ Սիմանքասի, (նույն) թղթածրար 972, տե՛ս Հարրման, անդ, էջ 55—56, որ նույն իրողությունը կարձանագրե նույն թվակիր նամակով մը ուղղված Հռոմի օգոստինյանց մեծավորին, Պիպլիոթեքա Անժելիքա, Հռոմ, Ա—6—19։ Կիլան, որ հիմա Ռաշտի գավառը կկազմե, Սաֆավյան պետության միացվեցավ շահ Աբբասի կողմե 1592-ին, Իսլամական հանրագիտարան, Նոր տպ. հատ. Բ, 1137—1138։ Նիքոլաու տե Մելոյի մեկնումեն անմիջապես ետք, ուրիշ փորթուկալցի կրոնավոր մը, տոմինիկյան Էմմանուել տոս Սանթոս, որ Կոայեն մեկնած էր փետրվար 1599-ին Հռոմ երթալու համար, Սպահան հասավ 1599 հունիսին. Հարրման, անդ, էջ 25, ծանոթ. 94։ Հայր Էմմանուել քսան օր մնաց Սպահան, հետո բնակեցավ Ղազվին և Կիլանի գավառը մինչև հուլիս 1600, հետո Արտապիլ և Թավրիզ, նախ քան 1600-ի հոկտեմբերին Հալեպ մեկնիլը, անցնելով Վանեն, Պիթլիսեն և Քարքամիշեն. տե՛ս Կարմելյաններ, էջ 79—80։ Գալով Ֆրանսիսքո տա Քոսթայի, նախկին հիսուսյան, որու մասին պիտի խոսինք ավելի ետքը, ան Սպահան հասավ 12 հուլիս 1599-ին. նույն, էջ 71։

[48] Անթոնիո Կուվեյիա, Փառապանծ հաղթություն երեք սպանիացի մարտիրոսներու, օգոստինյան կարգեն երկու փորթուկալցի եղբայրներ և մադրիտցի Քասթիլյանի մը, Մադրիտ, եղբ. Ժուան Կոնզալեզ, 1623, տ. ԼԱՄ, տեղացույց 19688։ Կուվեյիա անտարակույս հիմնված է հայր Պելչիորի ձեռագրին վրա, որ կպատմե Նիքոլաու տե Մելոյի և Կիլեերմե տե Սանթո Ակոսթինոյի նահատակությունը, խմբագրված 1616-ին Սպահանի մեջ, այսինքն՝ օգոստինյան հայրերուն Նիքոլաու տե Մելոյի մահվան լուրը ստանալեն մեկ տարի ետք, և մեկ տարի առաջ՝ հ. Պելչիորի նախաձեռնությամբ հ. Կիլեերմեի աճյուններուն փոխադրութենեն, տ. աստ, ծանոթ. 4։ Տե՛ս նաև Ն. տե Մելոյի նահատակության մասին նամակ Կարմելյան հ. Ժուան Թատեոյի առ Ալեյշո տե Մենեզըշ, գըր-

Մինչ այդ, Շըրլեյի Եվրոպա գալուստը 1600-ի հոկտեմբերին և Ռուտոլֆ Բ-ի արքունիքը ներկայանալը, ինչպես և իր դեսպանության նպատակը ականջը հասած էր քրիստոնյա իշխաններուն և Կղեմես Ը պապին։ Այս վերջինը, առաջինը, առանց սպասելու որ Էնթընի Շըրլեյ Հռոմ գա, ինչ որ տեղի ունեցավ 25 ապրիլ 1601-ին, սկսավ դեսպան մը փնտրել։ Իր ընտրածները եղան երկու փորթուկալցիներ Տիոկո տե Միրանտա, լիզպոնցի զինվորական մը, որ լավ կճանչնար արևելյան և արևմտյան Հնդկաստանը ինչպես և Ֆիլիփինյան կղզիները և կրոնավոր մը, որ Կոա ծնած էր, Ֆրանսիսքո տա Քոսթա և հիսուսյան միաբանության պատկանած էր։ Երկրորդը Հնդկաստանեն գալով Սպահան անցած էր հուլիս 1599-ին և Հռոմ հասնելուն ներկայացուցած էր տեղեկագիր մը, որ պապին ձեռքը անցած էր և ուր կխոսեր Պարսկաստանի շահին կողմե Եվրոպա ուղարկված դեսպանության մասին և կըհաստատեր ինքն ալ թե շահ Աբբաս Ա լավ տրամադրված էր քրիստոնյաներուն հանդեպ և թե կփափաքեր Պարսկաստան ընդունել կրոնավորներ[49]։

Տանելով պապին 24 փետրվար 1601 թվակիր երկու նամակները, մեկը ուղղված Պարսկաստանի թագավորին և մյուսը թագուհիին, երկու դեսպանները փութացին մեկնիլ Հռոմեն դեպի Պարսկաստան Թուրքիո ճամփով, զոր կճանչնային արդեն։ Իրենց հետ ունեին հրահանգներ մեկ կողմե կրոնական հարցերու մասին և մյուս կողմե Թուրքիո դեմ քրիստոնյա իշխաններուն և Պարսկաստանի թագավորին դաշնակցության վերաբերյալ։ Ճամփու ընթացքին Տիոկո տե Միրանտա և Ֆրանսիսքո տա Քոսթա որոշեցին անցնիլ Լեհաստանեն և Մոսկովիայեն և այսպես

ված 27 մարտ 1616-ին, որ կպատմե թե 1615-ի օգոստոսին բյութենցի երկու դեսպաններ և Պարսկաստանի թագավորին ծառայող վաճառականներ, որոնք Աստրախանեն կուգային հայտնեցին հ. Նիքոլաու տե Մելոյի մահը խարույկի վրա. տե՛ս Հարրման, Հայր Նիքոլա Մելո (անգլ.), էջ 45—55, որ կարտագրե Հավատքի տարածման միաբանության արխիվներուն տեղեկատվությունը՝ Հին նամակներ, հատ. 189, 271ա—272բ, ինչպես և համառոտագրյալ տեղեկագրությունը Մադրիտի Ազգ. մատենադարանին, ձեռ. 1269, էջ 131։ Իսկ հ. Մանուել տա Փյուրիֆիքասաոյի ձեռագիրը տ. աստ, ծանոթ. 93, կհիշե ուրիշ ձեռագիր մը, որ այնատեն կգտնվեր Սպահանի օգոստինյան հայրերուն վանքին մեջ. «Հիշատակ այն բաներուն, որոնք պատահեցան ս. Օգոստինոսի մեր հայրերուն Պարսկաստանի մեջ», ծանոթագրությամբ մը, թե 28-րդ էջին մեջ կգտնվի կարմելյան հ. Ժուան Թատեոյի տեղեկագրության օրինակը հ. Մելոյի կյանքին և մահվան մասին, որ հաղորդված է Ալեյիշո տե Մենեզըշ արք.-ին 27 մարտ 1616-ին։

[49] Կարմելյաններ, հատ. Ա, էջ 91—92։

նախատեսված երեք ամսվան ճանապարհորդության տեղ տասնումեկ ամիսեն հասան պարսկական արքունիքը, մեկը մյուսեն զատված, Միրանտա ըլլալով առաջին ժամանողը։ Բայց երկուքն ալ կանխված էին օգոստինյան հայրերեն, որոնք 4 սեպտեմբեր 1602-ին արդեն հասած էին Մեշետ, ուր կգտնվեր շահը, հետո գացած էին Սպահան, ճամփան հանդիպելով Տիոկո տե Միրանտայի, որ նույն քաղաքը կուգար 10 նոյեմբեր 1602-ին։ Դժբախտաբար Տիոկո տե Միրանտայի ընթացքը և իր անձնական գժտությունները Ֆրանսիսքո տա Քոսթայի հետ մեծ վնաս բերին իրենց դեսպանության վարկին, որ արդյունքի մը չհասավ[50]

1603-ի փետրվարին Միրանտա մեկնեցավ Հնդկաստան Օրմուզի ճամփով ընկերակցությամբ Անթոնիո տե Կուվեյիայի և Պասթամ-կուլի պեկի, որ Պարսկաստանի դեսպանն էր Հնդկաստանի փոխարքային և Սպանիո թագավորին մոտ[51]։

Ֆրանսիսքո տա Քոսթա Սպահան մնաց դեռ ժամանակ մը նախ քան Հռոմ մեկնիլը 1604-ի հունիսին։ Կթվի սակայն, թե 1605-ի մարտի վերջավորությանը տակավին չէր ձգած պարսկական հողը, որովհետև կարելի է ենթադրել, որ ինքն էր պապին այն դեսպանը, որ Թավրիզ կգտնվեր հ. Պելչիորի ժամանած պահուն[52]։

Ֆրանսիսքո տա Քոսթա բռնեց Մոսկովիայի ճամփան, կանգ առնելով Աստրախան, ուր կգտնվեր տակավին 1607-ի հուլիսին, չկարենալով շարունակել իր ճանապարհորդությունը երկրին մեջ պատահած խռովություններուն պատճառով և ասկե զատ անտարակույս շատ փութկոտություն չէր կրնար ցույց տալ ենթարկվելու սուրբ Աթոռին շանթե-

[50] Հայր Սեպաստիան Կոնսալվեշ, Պատմություն հիսուսյան միաբանության արևելքի մեջ, Լիզպոն, 1614, հրատարակված հիսուսյան հ. Ժոզե Վիքիի կողմե, հատ. Գ, գլ. 27, էջ 308—313։ Տե՛ս համառոտագրությունը Կոայեն 13 փետրվար 1605 թվակիր նամակին, զոր Ալեյշո տե Մենեզըշ ուղղած է պապին, պատմելով Ֆրանսիսքո տա Քոսթայի և Տիոկո տե Միրանտայի գայթակղալի ընթացքը, հրատարակված օգոստինյան Ք. Ալոնսոյի կողմե, «Անտիպ վավերագրություն Կոայի արքեպիսկոպոս օգոստինյան Ալեյշո տե Մենեզըշի կենսագրության համար, 1595—1612, Օգոստինյան հավաքածո, հատ. ԻԷ, 1964, էջ 308։

[51] Պասթամ-կուլի պեկ մեռավ ծովու ճանապարհին Եվրոպա հասնելե առաջ, տե՛ս սստ, ծանոթ. 77։ Գալով Միրանտայի, զայն կգտնենք Վալլատոլիտի մեջ փետրվար 1605-ին, տե՛ս Ք. Ալոնսո, Կղեմես Ը և կաթոլիկ առաքելությունները հաստատումը Պարսկաստանի մեջ Աստուծո քաղաք, հատ. ՀԱ, էջ 232։

[52] Ֆ. տե Ժենյու, անդ, էջ 72ա երբ Պելչիոր տոս Անժոս մարտ 1605-ին հասավ շահին բանակատեղին Թավրիզի մեջ, այս վերջինը զինքը հրավիրեց նստելու «պապին դեսպանին մոտ»։

րուն[53]։ Այսուհանդերձ օգտվեցավ Ալի-կուլի պեկի անցքեն, որ շահ Աբբասի կողմե ուղարկված էր պապին, անոր միանալու և անոր հետ Հռոմ հասնելու համար 1609-ի ամառը[54]։

[53] Երբ Կարմելյան եղբ. Փոլ Սիմոն Պարսկաստանեն Աստրախան կերթար Ֆրանսիսքո տա Քոսթայի հանդիպեցավ Փոլկայի ափերուն վրա, Կարմելյանները, էջ 92։

[54] Նույն, էջ 146—147։ Ալի-կուլի պեկի տրված էր այս պաշտոնը գրեթե միաժամանակ Ռոպըրթ Շըրլեյի տրված առաքելության հետ։ Այս վերջինեն առաջ մեկնած էր և Հռոմ հասած անոր ժամանումեն առաջ։ Ալի-կուլի պեկ Հռոմը ձգեց 1609-ի սեպտեմբերի վերջը ցամաքի ճամփով Պարսկաստան վերադառնալու համար, Ռ. Շըրլեյի գալեն քանի մը օր առաջ։

Ս. ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ԿԱՐԳԻ ՓՈՐԹՈՒԿԱԼՑԻ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՍՊԱՀԱՆԻ ՄԵՋ

Այստեղ կարևոր է վերադառնալ Ս. Օգոստինոսի կարգին փորթուկալցի միաբաններուն, որոնք Սպահան կգտնվեին 1602-ի նոյեմբերեն ի վեր, ինչպես և անոնց առաքելության պատճառներուն, որովհետև անոնց է, որ կպարտինք առաջին կաթոլիկ կրոնական կարգի մը հաստատումը Պարսկաստանի մեջ։ Հետագային, այս առաջնությունը պահպանելու նախանձախնդրությունը միշտ պիտի որոշե ընթացքը Օգոստինյան հայրերուն, որոնք Պարսկաստանը համարեցին իբր իրենց առաքելական նվաճումին առանձնաշնորհյալ երկիրը։ Եվ սակայն ստիպվեցան, 1609-են իսկ, բաժնել այդ դերը Բոկոտն կարմելյաններու հետ, հետո 1630-ին քափուչինյաններուն, և 1656-ին հիսուսյաններուն հետ, 1747-ին այդ տեղը վերջնականապես ձգելե առաջ։

1601-ի նավախումբին հետ Կոա հասավ Ֆիլիփ Գ-են նամակ մը Պարսկաստանի շահին ուղղված և ուրիշ նամակ մը ուղղված փոխարքա Աիրըշ տե Սալտանիայի, հրահանգելով, որ պարսիկ վեհապետին փոխանցե առաջինը, որուն բովանդակությունը կվերաբերեր դեսպաններուն, այսինքն էնթոնի Շըրլեյի և Հյուսեին-Ալի պեկի, զորս շահը ուղարկած էր պապին և քրիստոնյա իշխաններուն Թուրքերուն դեմ դաշնակցություն մը կազմելու համար[55]։

Օգուտ քաղելով առիթեն, որ վերջապես կթույլատրեր իրագործել Սիմոն տե Մորաեշի և Նիքոլաու տե Մելոյի ծրագիրները, Կոայի արքեպիսկոպոս Ալեյշո տե Մենեզըշ համոզեց փոխարքան, որ նպատակահարմար է այդ նամակը հանձնելու պաշտոնը վստահիլ օգոստինյան կարգին պատկանող կրոնավորներու։ Ընտրվեցան Ժերոնիմո տա Քրուզ, որ այն ատեն ավելի քան վաթսուն տարեկան էր[56], հայր Ան-

[55] Ֆ. տե Ժեզյու, անդ, էջ 48բ—49ա։

[56] Հայր Ժերոնիմո տա Քրուզ արժանացավ շահ Աբբասի վստահության, որ քանի մը տարի ետք կհայտարարեր, թե իր արքունիքը եկող բոլոր Ֆրանկներեն ոչ մեկը իրեն այնքան հաճելի էր, քան հ. Ժուան Թատեո, սպանիացի։

թոնիո տե Կուվեյիա և Քրիսթովան տո Սանթո էսփիրիթո։ Կոայեն նավ նստան փետրվար 1602-ին դեպի Օրմուզ, ուր հասան ապրիլ 1602-ին։ Քաղաքը գտան մտատանջության մեջ և ամեն բանե զրկված, որովհետև Կոմպրոնի[57] բերդը, որ ցամաքի վրա էր և ուրկե կուգար պարենավորումը, պաշարված էր[58]։ Պահրեյն կղզին գրավված էր պարսիկներուն կողմե, մահմետականի մը դավաճանության հետևանքով, որ հանուն շահին սպաննած էր «կազիլ»-ը։ Կրոնավորները կմտածեին սակայն, թե շահը տեղյակ չէր Պահրեյնի դավաճանության և Կոմպրոնի պաշարման մասին։ Օրմուզը ձգեցին 26 մայիս 1602-ին երթալու համար Խորասան, ուր շահը կպատերազմեր։

Երբ մտեցան Մեշետ, որ այս նահանգին մայրքաղաքն էր, հայրերը որոշեցին իբր նախագնաց ուղարկել հայ մը, որ պիտի տաներ փոխարքայի կողմե շահին ուղղված գրություն մը, տեղեկացնելով կրոնավորներուն այցելության նպատակը։ Պահրեյնի կռվին և այս առաքելության առարկայի մասին շահը կթվեր տարբեր տեղեկություններ ստացած ըլլալ Լարի սուլթանեն, որ կրոնավորները ներկայացուցած էր իբր Օրմուզի հրամանատարին կողմե ղրկված բանագնացներ Պահրեյնը պահանջելու պաշտոնով։ Այստեղ հայը շատ դժվարություններու հանդիպեցավ վերջը շահին հետ խոսիլ կարենալու և փոխարքային գրությունը հանձնելու համար։ Շահը անմիջապես հայտնեց իր գանգատները փորթուկալցիներուն մասին, որոնք իրեն դեմ կկռվեին Պահրեյնը առնելու համար, մինչդեռ ինքը ամեն առթիվ կգործեր ի նպաստ իրենց։ Սակայն կարդալով Աիրըշ տե Սալտանիայի գրությու-

[57] Փորթուկալցիները զայն կկոչեն Քարմարաո։ Օրմուզի գրավումեն ետ 1622-ին պարսիկները կղզու հանդիպակած ափին հիմնադրեցին Պենտեր-Աբբասի նավահանգիստը։ Այստեղ կար օգոստինյաններու պզտիկ եկեղեցի մը, բնակիչ կամ անցորդ քանի մը քրիստոնյաներուն հոգևոր պետքերուն համար։ Այս եկեղեցին կորսվեցավ երբ պարսիկները Կոմպրոնը գրավեցին 1617-ին։

[58] 24 դեկտեմբեր 1602-ին Կոայեն փորթուկալերեն գրված և պարսկերեն ստորագրված Ֆիլիփ Գ-ի ուղղյալ նամակով մը շահին դեսպանը Հյուսեին-Ալի պեկ կտեղեկացնե, թե Կոա հասած ատեն Օրմուզի բերդը պաշարված էր և թե գրած է շահ Աբբասին հիշեցնելով երկու վեհապետներուն միջև գոյություն ունեցող բարեկամությունը և հույս հայտնելով, որ խաղաղությունը պիտի վերահաստատվի։ Բրիթիշ Մյուզեում, Լոնտոն, ձեռ. հավել. 28—432, էջ 52, Ցուցաքարտերու տուփ 1, գզրոց Ա, բաժանում 25-րդ. Փորթուկալյան գաղթավայրերու վերաբերյալ նամակներ և վավերաթուղթեր, 1599—1640։ Հյուսեին-Ալի պեկի նամակը հիշատակված է ՓԱՖ-ի Տեղեկատուին մեջ, թ. 3, էջ 376, Ֆոլիո 56—59։

նը, որ իրեն կծանուցանէր Ֆիլիփ Գ-ի նամակին ուղարկումը, շահը մտածեց, որ սխալ տեղեկություններ տրված էին իրեն և անմիջապես իր ավագանիեն մեկը ուղարկեց դիմավորելու համար կրոնավորները, որոնք Մեշետ մուտք գործեցին 4 սեպտեմբեր 1602-ին։ Քիչ ատեն ետք շահը որոշեց Սպահան երթալ և ճամփու ընթացքին հայրերը չթերացան իրեն պարզել իրենց առաքելության գլխավոր կետերը, մասնավորաբար պապին և քրիստոնյա իշխաններուն հետ Թուրքերուն դեմ դաշնակցություն մը ստեղծելու հարցը, որու մասին այնքան խոսված էր։ Պետք չունեցան մեծ ճիգ կատարելու համոզելու համար շահը, որ կըցանկար ամբողջական կործանումը և քանդումը Օսմանյան կայսրության։ Շահ Աբբաս դիտել տվավ սակայն, որ ձմեռը կմոտենար և անկարելի էր զինվորական գործողությունները ձեռնարկել, բայց անգամ մը որ ձմեռ անցներ՝ հանձն կառներ սկսիլ պատերազմը և հայրերը Պարսկաստանեն պիտի չմեկնեին, կըսեր, առանց անոր արդյունքները տեսնելու։

10 նոյեմբեր 1602-ին Սպահան հասնելե ետք հայրերը արտոնություն ստացան Պարսկաստան բնակելու և անմիջապես ուզեցին ունենալ եկեղեցի մը հասարակության համար։ Այս խնդրանքը մեծ ընդդիմության հանդիպելով պարսիկ կրոնավորներուն կողմե, փորթուկալցի հայրերը նախընտրեցին չպնդել և հանրության աչքին պահել միայն իրենց դեսպանական հանգամանքը, իրենց Սպահան բնակության գլխավոր պատճառը ցույց տալով Թուրքերուն դեմ պատերազմը։ Հայրերը սակայն հաջողեցան շահեն ստանալ Սպահանի մեջ տուն մը ունենալու արտոնությունը և այս նպատակին համար շահը իրենց շնորհեց հարմար, զով և կանաչազարդ վայր մը։ Այդտեղ է, որ հայրերը հիմնեցին ս. Օգոստինոսի վանքը և կառուցեցին «եկեղեցի մը ոչ շատ մեծ, առանց շատ շքեղության և համեստորեն զարդարված, բայց շատ խնամքով և մաքրությամբ, որ ջերմեռանդության կհրավիրեր ամեն անոնք, որ մուտք կգործեին այնտեղ»[59]։ Ավելի ետքը շահ Աբբաս վանք ուղարկեց պաշտոնատարներ և նկարիչներ վերանորոգելու և ներկելու համար եկեղեցին ոսկեգույն և կապույտ, եթե հայրերը կփափաքեին, ինչ որ անոնք ընդունեցին երախտագիտությամբ[60]։

59 Ֆ. տը Ժեգյու, էջ 58։

60 Կուվեյա, էջ 78, Շահ Աբբասի այս առաջարկության տեղեկացավ Սպահան մնացած օգոստինյան հայրերու նամակին, զոր ստացավ Շիրազի մեջ, ուր հասած էր 1603-ի մայիսի վերջերը։ Հ. Մանուել տա Ավե Մարիա կպատմե (տ. ստ, ծանոթ. 93), էջ 203,

Սակայն փոխարքա Աիրըշ տե Սալտանիա իմանալով թե ինչպես շահը գրաված էր Պահրեյնը և պաշարած էր Կոմպրոնի բերդը և կշըրջեր և կգրավեր հողերը Օրմուզի Թագավորին, որ ենթակա էր նորին վեհափառության, որոշեց Օրմուզ ուղարկել Տոն Ժոզե տե Քասթիլլո «Ռոմա Կուալե» ցոկանավով և հինգ ուրիշ նավերով, ազատագրելու համար այս հողերը և ցույց տալու համար պարսիկներուն, թե փորթուկալցիները պիտի պաշտպանվին։ Շահը Շիրազի սուլթանեն իմացավ այս նավատորմին գալուստը, մինչ կրոնավորները իրեն կգանգատեին Օրմուզի Թագավորին հողերուն վրա իր հրամանատարին ա-

«Թե շահ Աբբաս, արքայական գանձին հաշվույն Սպահանի մեջ կառուցանել տվավ եկեղեցի մը և կրոնավորներու բնակության համար հարմար տուն մը և որոշեց, որ նույն գանձեն իրեն տրվի տարեկան 100 Թուման անոնց պահպանության համար և այս պիտի ավելնար 400 Թումանի վրա, որ պիտի հատկացվեր հայրերուն ծախքերուն, որոնք ընդունեցին տանը և եկեղեցիին նվեր, բայց հայտարարեցին թե ոչ մեկ կերպով պիտի ընդունեին Թումանները (յուրաքանչյուր Թուման կարժե 40 շերաֆին), պատասխանելով, որ Թագավոր մը ունեին իրենց օգնելու համար ըստ իրենց պետքերուն»։ 1608-ի դեկտեմբերին վանքը ավելի վայելուչ երևույթ մը ստացած էր արդեն ընդունելու համար, ծընունդի օրը, շահ Աբբասը և իր ավագանին եկեղեցվույն մեջ, որ ձոնված էր Վերափոխման Մայր Աստվածածին և «շատ գեղեցկորեն զարդարված էր, գետինը գորգերով ծածկըված, բազմաթիվ խնկամաններ և բուրումնավետ անոթներ վառված, այնպես որ շահը և իր մարդիկը մեծապես գնահատեցին տեսնված մաքրությունը և զարդարանքները։ Խորանին վրա կային քանի մը բարեպաշտական նկարներ Ս. Կույսին և մեր Փրկիչ Քրիստոսի, զորս շահը մանրակրկիտ կերպով դիտեց, որովհետև մասնավորապես կհետաքրքրվեր գեղեցիկ նկարչությամբ և յուրաքանչյուր նկարի առջև ցույց կուտար մեծարանք և կխոնարհեր։ Ինք աթոռի մը վրա նստած, իր հետևորդները նստեցուց գորգերուն վրա և հայրերը սկսան երգել քանի մը հատվածներ, իրենց օգնական ունենալով փորթուկալցիները և հայ տղաք, որոնք արդեն կրթված էին այդ ուղղությամբ։ Այս երգերուն կընկերանար երգեհոնը, քանի մը մասեր կերգվեին տավիղով և հայրերուն ունեցած ուրիշ գործիքներով, ինչպես կրավը, կիթառ։ Շահը և իր մարդիկը մեծ գոհունակություն ցույց տվին»։ Կուվեյա, էջ 207։ Համաձայն ԹԹԱԱ-ներու ձեռագրի մը, «Հիմնարկություն Պարսկաստանի վանքին Սպահանի մեջ» ձեռ. մատենադարան Թ. 581, էջ 435—436ր, «Օգոստինյան հայրերուն արտոնություն տրվեցավ եկեղեցի մը կառուցանելու արքայական պալատին հողերուն վրա իսկ, ուր բնակություն հաստատեցին Սպահանի մեջ, երբ հ. Սեպաստիան տե Ժեզյու իրենց մեծավորն էր։ Առաջին քարը դրվեցավ ի ներկայության հայոց եպիսկոպոսին, գլխավոր կրոնավորներու և արքունիքի մահմետական պաշտոնյաներու։ Կառուցումը արժեց ավելի քան 12.000 քրուզատո, երբ տրամադրելի ունեին միայն 7000 քրուզատո։ Շինարարության աշխատանքներուն ընթացքին, որոնք տևեցին առնվազն երկու տարի ամենեն տագնապալի օրերուն ստացան նախախնամական օգնությունը կոացի վաճառականի մը, որ կկոչվեր Ժաքոմո տե Քոսթո, ինչպես և ժառանգությունը հ. Պերնարտո տե Ազեվետոյի, որ մեռավ 1620 Պարսկաստանի ճամփուն վրա, իրենց ձգելով 700 էսկուտո ոսկեդրամ։ Կառուցումը ավարտելու համար նույնիսկ հոլանտացի վաճառա-

բարքներեն։ Լսելե ետք այս գանգատները, սուրհանդակ մը ուղարկեց Շիրազի սուլթանին հրահանգելով, որ ոչինչ չկատարէ առանց իր հրա-

կան մը, որ Սպահան կրնակեր, իրենց փոխ տուավ 1500 փաթաքա, երկու տարիեն վճարելի։ Ավագ խորանին վրա կար վենետիկյան նկար մը, որ կներկայացներ Վերափոխումը։ Որովհետև Օրմուզի գրավումեն ետք օգոստինյան հայրերը ծայրահեղ չքավորության ենթարկված էին, շահը իրենց նվիրեց երեսուն թուման, զոր չուզեցին մերժել ինչպես նախորդ անգամ և «պահպանելու համար այս նվիրատվության հիշատակը, պարսկական տառերով արձանագրեցին զայն ավանդատան մեջ». տե՛ս Նոր Տեղեկագրություն Արևելքի կամ ուսումնասիրության պարսիկներու, հայերու և Գաղղիո կրոներերուն, կառավարության և սովորություններուն, Լիոն, 1671, էջ 141։ Հեղինակը, հ. Կաբրիել տը Շինոն, քսան տարի մնաց Սպահան քափուչինյաններու վանքին մեջ ու նաև Թավրիզ, նախ քան Մալապար ուղարկվիլը, ուր մեռավ 27 հունիս 1678-ին։ Գիտեր պարսկերեն, թուրքերեն և հայերեն։ Իր Պարսկաստան բնակության միջոցին խմբագրած է բազմաթիվ հուշագրություններ, զորս ուղարկած է Հալեպի ֆրանսական հյուպատոս Ֆրանսուա Փիքեյի, որ իր կարգին զանոնք հանձնեց Մորերիի և այս վերջինը հրապարակեց այդ գրությունները վերոհիշյալ վերնագրին տակ։ Թոմաս Հերպըրթ, որ Սպահան գնաց 1627-ին, Մեծն Բրիտանիո դեսպան սըր Տոմըսը Քոթթընի հետ, կնշէ որ «փորթուկալցի կրոնավորները երկու վանք ունին, որոնցմե մեկը կարմելյաններուն և մյուսը օգոստինյաններուն կպատկանի։ Իրենց մատուռները գեղեցիկ են և օժտված են երգեհոններով, խորաններով, խաչելություններով և նկարներով, որոնց միջոցով կկարծեն քրիստոնեության կամ հռոմեական կաթոլիկության դարձնել բնակիչները։ Բայց հայերը նորություն չեն սիրեր, իսկ պարսիկները կխորշին նկարներեն իրենց կրոնքին մեջ։ Բայց այս վանականները իբր լրտես կծառայեն և լուրեր կուղարկեն Հռոմ և Եվրոպա քրիստոնյաներուն». Թովմաս Հերպըրթի, Ճանապարհորդություն Պարսկաստանի և Արև. Հնդկաստանի, ֆրանս. թարգմանություն, Փարիզ, 1663, էջ 265։ Տոլիե Տելանտ, որ բնակեցավ Սպահանի վանքին մեջ, 1665-ին, կգրե. «Այստեղ այս վանքը շատ գեղեցիկ է և լավ դասավորված, կա գեղեցիկ պարտեզ մը, որ կշրջապատե շենքը, բայց եկեղեցին մանավանդ, որ բավական մեծ է երկրին համար, կրնա ամոթ պատճառել Ֆրանսայի մեր եկեղեցիներեն շատերուն, որոնք գեղեցիկ կկարծվին։ Վերեն վար գեղազարդված է մորեսքներով ուր ոսկեզօծումը չէ խնայված։ Խորանին զարդերը նոր են և գորգերը, որ միշտ կծածկեն սալահատակը շատ գեղեցիկ են։ Վերջապես այնտեղ ամենուրեք կտեսնվին հին փորթուկալցիներուն պերճությունները, որոնց հիշատակը միայն մնացած է մեր մոտ, հոլանտացիները ամեն տեղ կործանած ըլլալով զանոնք։ Այստեղ սակայն կար անոնցմե հատ մը շենքին մեջ, որ տակավին հարուստ է և մատակարարն է Պանտար Քոնկի մեջ Փորթուկալի թագավորին կալվածներուն». Նամակ Տոլիե Տեալնտի իր եղբոր, ուղղված Սպահանեն 15 փետրվար 1665 թվականով, հրատարակված իբր հավելված (էջ 292—3) հ. Ռաֆայել տյու Մանի Պարսկաստանը 1660-ին հատորին, հրատ. Շ. Շեֆերի կողմե 1890-ին։ Տոլիե Տելանտ պաշտոն ստացած էր քանի մը ֆրանսացի վաճառականներու կողմե Պարսկաստանի հետ առևտրական հարաբերություններ հաստատելու միջոցները ուսումնասիրելու։ Սպահան հասավ ասպետ Շարտենի հետ, որ նույնպես կանդրադառնա «Օգոստինյաններու տան, որ փորթուկալյան առաքելություն մըն էր։ «Արքայական մեծ պալատ մըն է, ուր կան շատ պարտեզներ մարմարյա ավազաններով և բնակարաններ ոսկեզօծված՝ կապտագույն, որոնք բավական կըլլան հարյուր հոգինոց համայնքի մը համար։ Այս պալատին ամենամեծ մասը անբնակ է, որովհետև

մանին, ոչ մեկ վնաս չհասցնե փորթուկալցիներուն և վերադառնա Շիրազ։ Հրամայեց նաև, որ ցամաքի հողամասերը վերադարձնե Օրմուզի

հիմա երեք կամ չորս կրոնավոր կա յոթը կամ ութը ծառաներով։ Ավելի մեծ թիվ մը կներկայացնեին երբ գացին հաստատվիլ Սպահան։ Այն ժամանակն էր, ուր փորթուկալցիները հզփացած էին հարստությամբ և ծանոթ է, որ այդ ազգին մեջ հարստության մեծ մասը վանքերուն սեփականությունն էր»։ Շարտեն կավելցնե «Ինծի պատմեցին, որ օգոստինյաններու այս տունը ավելի քան քառասուն տարի կահավորված էր ոսկյա դիպակներով և մեծ ծախսեր կըլլային այնտեղ։ Եկողը սիրով կընդունվեր և ճոխ սեղան կըլլար»։ Շարտեն կտեղեկացնե որ Պարսկաստանի իր երկրորդ ճամփորդության ատեն, 1670-ին, որ վեց տարի տևեց «օգոստինյանները անձուկ վիճակի մատնված էին։ Երկրացիներեն մեկ քրիստոնյա չէր երթար իրենց մոտ»։ Օգոստինյաններու վանքը և եկեղեցին կգտնվեին Հյուսեինիյե թաղին մեջ, ուր կար մզկիթ մը, զոր կկոչեին «Միաբանության հին մզկիթը»։ Մեկ ժամե ավելի հեռու էին արքունիքեն և Ջուղայի քրիստոնյաներեն. «Ճամփորդություն ասպետ Շարտենի Պարսկաստանի և Արևելքի ուրիշ վայրերու մեջ» Ամստերտամ, 1735, 4 հատոր, Բ հատ., էջ 75—76։ Ճաեմելլի Քարերի կըսե (Ճամփորդություն աշխարհի շուրջ, Փարիզ, 1719, հատ. Բ, էջ 84—85), թե Սպահանի մեջ նախընտրեց բնակիլ փորթուկալցի օգոստինյաններուն մոտ, ոչ այնքան սորվելու համար իրենց լեզուն, որ շատ գործածական է Արև. Հնդկաստանի և Չինաստանի մեջ, որքան նկատի ունենալով այն հարգը, զոր կվայելեն թագավորին մոտ, ըլլալով առաջին ազգերեն մեկը, որ հաստատված է այս թագավորության մեջ։ Շատ ազնվորեն ինծի տվին իրենց տան ամենեն գեղեցիկ հարկաբաժինը, որ կբաղկանա երկու կամարված ննջարաններե, երկրին սովորության համաձայն նկարազարդված ոսկեգույն արաբեսքներով և կապույտով, և որ պտուղներու, զանազան տեսակ ծաղիկներու բաժիններե կազմված գեղեցիկ պարտեզի մը վրա կնայի։ Իրենց պզտիկ եկեղեցին, ավանդատունը և սեղանատունը կառուցված են կանոնավորապես։ Այս վանականները շատ լավ կապրին և կուտեն ինչ որ կա առավել փափկաճաշակ, զոր փորթուկալցի խոհարար մը կպատրաստե, տասներկու սպասավորներ կծառայեն իրենց, երեք պարսիկ, երկու արաբ, երեք հայ և չորս հնդիկ»։ Եղբ. Լեանդր տը Սենթ-Մեսիլիա, որ երկրորդ անգամ Սպահան ճամփորդեց 1736—37-ին, խոսելով օգոստինյաններու և Բոկոսի կարմելյաններու վանքերուն մասին, կըսե. «Երկուքն ալ կատարյալ և եկեղեցիները նախանձելիք ոչինչ ունին եվրոպականներեն՝ իրենց զանգակատուներով և զանգակներով։ Ունին նաև իրենց շատ, շատ գեղեցիկ պարտեզները, առատ պտուղներով»։ Հիշված Կարմելյաններուն մեջ, էջ 642։ Փորթուկալցի կրոնավորներուն ծախքերը, համաձայն արքայական որոշմնագիրին, կհասնեին 15.500 շերֆինի, որ իրենց կվճարեր արքայական կալվածեն, Պանտեր-Քոնկի գործակատարին կողմե, բայց երբ այս նավահանգիստը կորսվեցավ, Տամանի կալվածը պիտի փոխարիներ զայն, որու հասույթներեն սակայն կրոնավորները երբեք բան մը չստացան, և ասոր անխուսափելի հետևանքը այն եղավ, որ վերջին վանահայրը, Ժոզե տե Ս. Թերեզա, պահանջատերերեն հալածված, վանքը փոխանցեց Բոկոսի կարմելյաններուն և գաղտնորեն գնաց Գոա 1747-ին, որ թվականն է Սպահանի մեջ փորթուկալցի օգոստինյան հայրերուն առաքելության վախճանին և իրենց եկեղեցիներուն կորուստին. տե՛ս Մանուել տե Ավե Մարիա, Սիլվա Ռեկոյի մեջ, հատ. ԺԱ, էջ 204—205 և ասոր, ծանոթ. 93։ Ստիպվեցան նույնպես ձգել Շիրազի փոքր հիվանդատունը և եկեղեցին, ձոնված ս. Մարիամի և հիմնված 1626-ին եղբ. Ամպրոզիո տոս Անժոսի կողմե։

թագավորին, պայմանով որ փորթուկալյան նավատորմը հրաժարի Պահրեյն գալե և իրեն ձգե անոր սեփականությունը։ Եվ որովհետև Այրըշ տե Սալդանիա Օրմուզի հրամանատարին հրահանգ տված էր թըշնամական գործողություններու չսկսիլ, այլ ջանալ պարսիկներուն հետ խաղաղություն և բարեկամություն պահպանելու, դեպքերը ընթացան ինչպես որ շահը հրամայած էր[61]։ Շահ Աբբաս պատերազմի մտած ըլլալով թուրքերուն դեմ, ինչպես որ հանձն առած էր, արտոնեց Անթոնիո Կուվեյիայի, Տիոկո տե Միրանտայի և Պասթամ-կուլի պեկի մեկնումը։ Սպահանը ձգեցին փետրվար 1603-ին երթալու համար Օրմուզ, բայց չկարենալով նավ նստիլ դեպի Հնդկաստան, Հ. Կուվեյիա մեկնեցավ Շիրազ Հյուսեին Ալի պեկի հետ, որ Կոայեն կուգար վերադառնալով Եվրոպայի իր դեսպանութենեն[62]։ Կուվեյիա այնտեղ պիտի բանակցեր, բայց առանց հաջողության, Պահրեյն կղզին փորթուկալցիներուն վերադարձնելու հարցին մասին[63]։ Շահ Աբբաս պատասխանեց ընդհանուր խոսքերով, ըսավ թե այդ կղզին կուգար իր նախահայրերեն և թե իր սեփականության մեջ մնալով ավելի լավ պիտի ծառայեր Փորթուկալի թագավորին շահերուն, քան թե պատկանելով Օրմուզի թագավորին[64]։ Հ. Կուվեյիա վերադարձավ Օրմուզ ուրկե մեկնեցավ Կոա, իրեն հետ տանելով քսանըյոթը նորահավատներ, որոնց մեջ փորթուկալցիներ, օտարականներ և հնդիկներ, որոնք նախապես իսլամացած էին[65],

61 Ֆ. տե Ժիզյու, էջ 59բ—60ա։

62 Կուվեյիա Օրմուզեն Շիրազ գնաց 1602-ի մայիսի վերջը, ուշ մնացած ըլլալով Կոա գացող նավը առնելու համար, որ արդեն մեկնած էր, էջ 76։ Ըստ շահ Աբբասի նամակին առ Ֆիլիփ Գ (տ. թարգմանությունը ներկա հատորին մեջ), Հյուսեին-Ալի պեկի վերադարձին շահը իր բանակատեղին հաստատած էր Ադրպեյճանի մեջ, կռիվ մղած էր թուրքերուն դեմ, հաղթելով և գերի բռնելով Թավրիզի փաշան, ինչ որ կնշանակե թե պարսիկ դեսպանը վերադարձած էր 1603-ի գարնան վերջը։

63 Անտարակույս այս առթիվ է, որ Անթոնիո Կուվեյիա շահ Աբբասին հասցուց Ֆիլիփ Գ-ի անթվակիր նամակը, որ հիշված է ՓԱՖ-ի Տեղեկատուին մեջ, թ. 3, էջ 522, վավ. 46—Գիրք մուսոններու, թ. 6 (1605)։ Այս նամակին մեջ թագավորը հիշեցնելե ետք, թե Լուիս Փերեյիրա տե Լասերտան ուղարկած է իբր դեսպան, հույս կհայտնե թե ողջամբ հասած է ան։ Կխոսեր այն նամակին վրա զոր նախորդ տարին գրած էր, երբ իմացած էր Հնդկաստանի իր փոխարքային և Օրմուզի հրամանատարին նամակներեն, թե Շիրազի սուլթանը գրաված է Պահրեյն կղզին, որ կպատկանի իրեն ենթակա Օրմուզի թագավորին, պահանջելով, որ կղզին, զոր իրենց հասարակաց թշնամի թուրքերեն գրաված էր իր սեփական ույժերով և մինչև այսօր պահպանած՝ վերադարձվի իր Հնդկաստանի պետության։ Վստահ ըլլալով գոյություն ունեցող բարեկամության վրա, Ֆիլիփ Գ կկրկներ իր պահանջը և կտեղեկացներ, որ այս նյութին վրա մասնավոր կերպով իրեն պիտի խոսի իր դեսպանը, Լուիս Փերեյիրա տե Լասերտա, կամ իրեն պիտի հանձնե սույն նամակը, որ իրականին մեջ շահին հանձնված պիտի ըլլա Հ. Կուվեյիայի կողմե։

64 Հնդկաստանեն ղրկված վավերաթուղթեր կամ Գիրք մուսոններու, Լիզպոն, 1880—1935, 5 հատոր, զոր պիտի կոչենք Հնդկաստանի վավերաթուղթեր. տ. նամակ թագավորին առ Տոն Մարթիմ Աֆոնսո տե Քասթրո, փոխարքա Հնդկաստանի, 26 փետրվար 1605 թվականով, հատ. Ա, վավ. 3, էջ 11—16։

65 Ֆ. տե Ժիզյու, էջ 61բ։

ԼՈՒԻՍ ՓԵՐԵՅԻՐԱ ՏԸ ԼԱՍԵՐՏԱՅԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ կ՚անցնինք Լուիս Փերեյիրա տը Լասերտայի և Պելչիոր տոս Անժոս, Կիլլերմե տը Սանթո Ակոսթինիո հայրերուն դեսպանության։ Մինչ էնթընի Շըրլեյ Հռոմ մնացած էր, Հյուսեին-Ալի պեկ 1601-ի մայիսին գնաց Վալլատոլիտ, Սպանիո արքունիքը։ Ֆիլիփ Գ-ի կողմե ջերմորեն ընդունվելե ետք, Լիզպոնեն նավ նստավ Հնդկաստանի ճամփով Պարսկաստան երթալու համար, իրեն հետ տանելով թագավորին պատասխանը, որ կ՚հայտներ թե իր արքունիքեն դեսպան մը պիտի ղրկե շահին հետ բանակցելու համար[66]։

Որոշած ըլլալով, որ այդ դեսպանը աշխարհական մը պիտի ըլլար և ոչ թե կրոնավոր մը, այդ պաշտոնին կոչեց Լուիս Փերեյիրա տե Լասերտա, արքայական ավագանիին ազնվականներեն մեկը, որ պիտի ստանար իր աստիճանին համապատասխանող պատիվները։ 26 մարտ 1602 թվակիր վավերաթուղթով մը, Լուիս Փերեյիրա տե Լասերտա, նախկին հրամանատար Կոայի, կխոսի իր մոտալուտ մեկնումին մասին իբր դեսպան Պարսկաստանի շահին մոտ և փափաք կ՚հայտնե, որ հատուցումներ հատկացվին իրեն ու նաև իր կնոջ այն պարագային եթե ճամփու ընթացքին մեռներ[67]։ Նախապես արդեն ի վարձատրություն Հնդկաստանի մեջ իր և իր հոըր՝ Ռյուի Տիաս տե Փերեյիրայի մատուցած ծառայություններուն, Ֆիլիփ Բ-են ստացած էր Կոա քաղաքին հրամանատարությունը 1587 տարիեն սկսյալ, երեք տարվան առաջին շրջանի մը համար, 600 րեյի ռոճիկով և 86 րեյի հատկացումով մը, ի փոխարեն իր բնակության ծախքերուն[68]։ 1596-ին Կոա քաղաքը կտեղեկացնե, թե

[66] *Նույն, էջ 69ա—բ։* Տրճիարճ Րոս, անդ, էջ 51—52. *Տոն Ժուան Պարսկաստանի (անգլ.), հրատ. և թարգմ. Կ. լը Սթրենճ, Լոնտոն, 1926, էջ 7—9։*

[67] Սիմանճաս, *Նահանգային դիվան Բ, Հին ձեռ.1462 (Որոշմնագիրք և սկզբնագիրներ), տարի 1602։*

[68] *Նամակ առ թագավորն, Լիզպոն, 28 հուն. 1588, գիրք 5, էջ 224բ, ամփոփված Փորթուկալի Արև. արխիվներուն մեջ, Նոր Կոա, պրակ 5, էջ 1162, վավ. 922։*

հրամանատարը իր պաշտոնը կկատարե ի մեծ գոհունակություն բնակչության, բայց նյութական անբաղձալի պայմաններու մեջ[69]։ Լասերտա պատվաբեր ընթացք մը ունեցած էր Մելիքին կողմե Պասայիմ բերդին պաշարման միջոցին Մաթիաշ տ՚Ալպուքերքեի փոխարքայության օրով (1591—1597) և Կոա քաղաքը այդ կետը վեր կ՚հաներ անոր նյութական կացության բարելավումը ստանալու համար[70]։ Այնուհետև Եվրոպա վերադարձած պետք է ըլլա, որովհետև իր դեսպան անվանման պահուն Սպանիո արքունիքը կգտնվեր[71]։

Ֆիլիփ Գ-ի կողմե փոխարքային ուղղված 15 փետրվար նամակե մը կտեղեկանանք, թե թագավորը Լասերտայի շնորհած էր նաև 1500 փերտաոյի թոշակ մը իր ամբողջ կյանքին տևողության, իբր հատույթ Շոլի մաքսին գլխավոր գործակատարի պաշտոնին։ Սակայն 23 փետրվար 1608-ին թագավորը Լիզպոնեն կգրեր, որ իմացած է, թե Շոլի գործակատարական հասույթը 8000 փաթաքանի շուրջ էր և կոնար ավելի ալ ըլլալ, հետևաբար Լուիս Փերեյիրա տե Լասերտա որոշվածը միայն պետք էր ստանար, այսինքն 1500 փերտաո, պահելով հանդերձ Շոլի գործակատարի պաշտոնը և տարբերությունը պիտի մուծեր արքունի գանձարան[72]։

Լիզպոնեն Հնդկաստանի նոր փոխարքա Տոն Մարթիմ Աֆոնսո տե Քասթրոյի[73] ուղղված 26 փետրվար 1605[74] թվակիր նամակով մը Կրշոսի փոխարքա Աիրըշ տե Սալտանիայեն ստացած[75] նամակներուն վրա, որոնք իրեն կտեղեկացնեին, թե շահին մեկ դեսպանը հասած էր Կոա[76] և թե փոխարքան անոր թույլ չէր տված անցքը, որովհետև Լա-

[69] *Նույն, պրակ 1, մաս ԲԱ, Նամակներ, Կոայի թաղապետության առ թագավորը 1595—1609, վավ. 3, էջ 47—48.—Նամակ Կոա քաղաքին առ թագավորը 1596։*

[70] *Նույն, վավ. 4, էջ 59։ Նամակ Կոա քաղաքին առ թագավորը 1597։*

[71] Տիոկո տե Սանթա Աննա, ձեռ., տ. առա, ծանոթ. 18, էջ 68բ։

[72] *Հնդկաստանի վավերաթուղթեր, հատ. Ա, վավ. 65, էջ 191—202։ Նամակը կգտնվի նաև ՓԱՖ-ի Տեղեկատուին մեջ, թ. 3, էջ 518—519, վավ. 35։*

[73] *Տոն Մարթիմ Աֆոնսո տե Քասթրո, փոխարքա Հնդկաստանի 20 մայիս 1605-են 3 հունիս 1607։*

[74] *Հնդկաստանի վավերաթուղթեր, հատ. Ա, վավ. 3, էջ 11—16։ Նաև Տեղեկատու ՓԱՖ-ի, թ. 3, վավ. 35, էջ 518—519։*

[75] *Աիրըշ տե Սալտանիա, փոխարքա Հնդկաստանի 25 դեկտեմբեր 1600-են 20 մայիս 1605։*

[76] *Հյուսեին Ալի պեկ, որ Լիզպոնեն մեկնած էր ծովու ճամփով 1602-ին և Կոա կգտնվեր 1602-ի դեկտեմբերի վերջը։ Հետո գնաց Օրմուզ, ուրկե հ. Կուվեյիայի հետ մեկնեցավ Շիրազ 1603-ի մայիսին։*

սերտա կպատրաստվեր երթալու շահին արքունիքը և փոխարքան չէր ուզած կրկնապատիկ ծախք ընել զանոնք անջատաբար ճամփա հանելով։ Թագավորը կհայտներ թե համաձայն չէր նման ընթացքի մը և հրահանգ կուտար նոր փոխարքային անմիջապես ճամփա հանելու պարսիկ դեսպանը առաջին նավով, եթե տակավին չէր մեկնած, և հոգալ իր բոլոր ծախքերը, իսկ եթե արդեն մեկնած էր ըսել Լուիս Փերեյիրա տե Լասերտային, որ իր կողմե ներողություն կխնդրե շահեն և փոխարքային, շահին հայտնե այն հոգածու վերաբերումը, զոր ունեցած է ինքը, թագավորը, հանդեպ պապին մոտ Պարսկաստանի դեսպանին քարտուղարին, դեսպանին մահեն ետք իր ծովային ճամփորդության ընթացքին[77]։

Միևնույն նամակին մեջ Ֆիլիփ Գ կըսեր թե արդեն հրահանգ տրված է իր դեսպանին, Լուիս Փերեյիրա տե Լասերտայի, որպեսզի առանց պատերազմի հայտարարության ապահովե Պահրեյնի իրեն վերադարձը և կավելցներ, որ այն պարագային եթե այս ձեռնարկը ապարդյուն մնա, նախորդ տարի պարտականություն տված էր փոխարքային Պահրեյնը պաշարելու։ Շահեկան է դիտել, որ այս նամակին մեջ թագավորը կանդրադառնա փորթուկալցի օգոստինյան կրոնավորներուն, որոնք կմնան շահին արքունիքին մոտ Սպահանի մեջ. բացի այն ծառայություններեն զորս կհուսա, որ անոնք պիտի մատուցանեն Տիրոջ՝ դարձի բերելով և հռոմեական եկեղեցիին ենթարկելով քանի մը հերձվածողներ, թագավորը կսպասե, որ անոնք տեղեկություն քաղեն շահին գործերուն մասին, զայն մղեն թուրքերուն դեմ պատերազմը շարունակելու և իր փոխարքաներուն հասցնեն ամեն տեղեկություն, որ անհրաժեշտ կդատեն։ Նամակը կհանձնարարե նաև, որ այս ամենուն մեջ շարժին խոհեմությամբ և զգուշությամբ որպեսզի ընդառաջ չերթան ոևէ վտանգի, որմե հառաջ պիտի գար վարկի և հեղինակության կորուստ իրենց սուրբ կրոնքին համար։ Ֆիլիփ Գ իր փոխարքային կըհրահանգե նաև Լուիս Փերեյիրա տե Լասերտայի հետ շարունակական թղթակցություն պահել անհրաժեշտ զգուշություններով, գործածելով ծածկագիրը, երբ նյութը այդ կպահանջե, որովհետև ինքը, թագավո-

[77] Ակնարկություն Պասթամ-Կուլի բեկի, որ կընկերանար Տիոկո տե Միրանտայի և որ մեռավ Իտալիա հասնելե առաջ, Հնդկաստանի վավերագրեր, հատ. Ա, վավ. 31, էջ 115, նամակ թագավորին 27 հունվր 1607 թվականով առ փոխարքան, բացատրելով պատահածը, դեսպանին քարտուղարն ալ սպաննված ըլլալով իր պարսիկ ընկերներեն։ ԹԹԱԱ Դիրք մուսոններու, գիրք Ա, էջ 57 և 201։

րը, ընդհանուր խոսքերով միայն կգրե իրեն։ Ֆիլիփ Գ կըսե նաև թե եթե Լասերտա տակավին Պարսկաստան չէ մեկնած, ուղարկե զայն կարելի եղածին չափ շուտ, իր նպատակներուն համապատասխանող հրահանգները տալով իրեն։

Այս դեսպանության վերաբերյալ բոլոր անցքերուն հետևելու համար վերադառնանք հ. Ֆելիչ տե Ժեզյուի ժամանակագրության[78]։ Ֆիլիփ Գ գրեց փոխարքա Աիրըշ տե Սալտանիայի հրամայելով, որ ամեն դյուրություն տա իր դեսպանին և անոր ընկերացնե ս. Օգոստինոսի միաբանութենեն երկու կրոնավորներ, որոնք պիտի անվանվեին Կոայի մեջ իրենց կարգին նահանգային վիճակավորեն։ Թագավորը շեշտած է, որ այս կրոնավորները ուրիշ մեկ կարգե պիտի ըլլան, ոչ իսկ հիսուսյան կարգեն, որոնք ըստ պատմողին, Մատրիտի արքունիքին մեջ հավակնություն ցույց տված են այս առաքելությունը ստանձնելու։ Նահանգային հայրը, ժողովրդապետ արքեպիսկոպոս Տոն Ալեյշո տե Մենեզըշի[79] հավանությամբ, նշանակեց եղբ. Պելշիոր տոս Անժոս և եղբ. Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիո, որ կկոչվեր նաև Կիլեերմե տե Ժեզյու։

Լուիս Փերեյիրա տե Լասերտա և երկու օգոստինյան հայրերը Կոայեն մեկնեցան 14 փետրվար 1604-ին հ. Տիոկո տե Սանթա Անայի ընկերակցությամբ, որ իր ծառայությունը առաջարկած էր օգնելու համար Սպահանի վանքին կրոնավորներուն։ Հասան Օրմուզ, ուրկե մեկնեցավ դեպի Սպահան 22 ապրիլ 1604-ին։ Այնտեղ ընդունվեցան մեծ փայլով ի բացակայության շահին և քանի մը օր մնացին օգոստինյաններու վանքը։ Շահը կգտնվեր շատ հեռու, Էրզրումի նահանգին մեջ, ուր կպատերազմեր թուրքերուն դեմ։ Անհրաժեշտ եղավ երթալ փնտրել զինքը կատարելով հոգնեցուցիչ ճամփորդություն մը, որ տևեց 9 օգոստոսեն 10 հոկտեմբեր 1604[80]։ Հասնելով բանակատեղին, մեծ շուքով ընդունվեցան

[78] Օգտված ենք նաև «Տեղեկատվություն Հնդկաստանի խորհուրդին Լուիս Փերեյիրա տե Լասերտայի դեսպանության մասին» վավերաթուղթեն, Միմանրաս, Նահանգային դիվան, 1749, էջ 6, հրատարակություն Ֆրանսիսքո Պաուլո Մենտես տա Լուզի, Հնդկաստանի խորհուրդը, Լիզպոն, 1952, էջ 390—393։

[79] Ալեյշո տե Մենեզըշ, արքեպիսկոպոս Կոայի, կառավարիչ Հնդկաստանի 3 հունիս 1607-են 27 մայիս 1609, ժամանակավորապես, երբ փոխարքա Մ. Ա. տե Քասթրո գնաց Մալաքքա քաղաքին օգնության, ուր մեռավ։ Ա. տե Մենեզըշ Փորթուկալ վերադարձավ 3—6—1611-ին, Կոայի արքեպիսկոպոսութենեն հրաժարելե ետք և անվանվեցավ արքեպիսկոպոս Պրակայի և քիչ հետո փոխարքա Փորթուկալի։ Մեռավ 3—5—1617-ին։

[80] Մենտես տա Լուզ, անդ, էջ 390։ Ֆ. տե Ժեզյու կուտա 17 հոկտեմբեր թվականը։ Ըստ Պելլանի, «Շահ Աբբաս Ա», Փարիզ, 1932, էջ 134—5, Կարսի շրջանին մեջ է, ուր շահը մնացած էր մինչև 26 հոկտեմբեր, որ ընդունեց Լասերտայի դեսպանությունը։

շահին և իր զորավարներուն կողմե։ Շահին տրվեցան Ֆիլիփ Գ նամակը և նվերները, պատճառելով մեծ գոհունակություն։ Ուրիշ օր մը շահը զիրենք հրավիրեց խնջույքի մը, որու ընթացքին մեծ պատիվներ մատույց դեսպանին, որմե խնդրեց, որ հանգստանա և երթա բնակվելու Ղազվին, հեռու բանակներեն, ուր ինք կերթար։ Դեսպանը և երկու կրոնավորները փութկոտ գտնվեցան և Սեն-Թ'Անտրեյի տոնին նախօրյակին հասան Ղազվին, ուր ընդունվեցան և բնակարան ստացան համաձայն շահի հրահանգներուն։ Երեք ամիս անցած էր, որ դեսպանը և կրոնավորները Ղազվին կգտնվեին, երբ Լասերտա որոշեց միմանտարին[82] միջոցավ գրել շահին և բանակներու ընդհանուր հրամանատար Ալլահվերտի[83] խանին, խնդրելով իր դեսպանության առնչությամբ պատաս-

Ըստ շահ Աբբասի կողմե Ֆիլիփ Գ ուղղված նամակին պատճենին (ԹԲԱԱ ձեռ. մատենադարան, 1104, էջ 117—119) ու. ասա, Թարգմանությունը, «Երևանի գրավումեն ետք է, որ երբ արշաված էր Թրքական հողը և կգտնվեր «էս բաղասա» կոչված հողերուն վրա, ուր հաստատած էր իր բանակատեղին, ընդունեց Լուիս Փերեյիրա տե Լասերտայի այցելությունը»։ Ըստ «Պատմություն շահին հաջողություններուն 9 սեպտեմբեր 1603-են մինչև սեպտեմբեր 1604» տեղեկագրության Երևանի անձնատվությունը տեղի ունեցավ 5 հուլիս 1604-ին։ Կովեյիա, անդ, էջ 104 կգրե. 25 հունիս 1604-ին շահը հաստատված էր Շուրակերի (Շորագյալ) ամրոցին մոտ, Կարսեն յոթը մղոն հեռու։ Քանի մը օր ետք շահին բանակատեղին հասավ Լուիս Փերեյիրա տե Լասերտա»։

[81] 30 նոյեմբեր 1604 ըստ այսօրվան օրացույցին։

[82] Դեսպանները արքունիք մտցնող պաշտոնատար։

[83] Տրնխուրն Բոսի համաձայն, անդ, էջ 19 և 125, Ալլահվերտի խան իսլամացած վրացի մըն էր։ Իսկ համաձայն Փիեթրո տելլա Վալլեյի «Հռչակավոր ճամփորդություններ... ֆրանս. հրատ. 1670—1675», հատ. Գ, էջ 450—2, «Ալլահվերտի քրիստոնյա մըն էր, ծագումով հայ, բայց վրացիներու երկրեն, որ իր երիտասարդության մեջ իբր ստրուկ ծախվեցավ 30 ոսկիի առաջին անգամ, բայց բազմաթիվ անգամներ ծախվելե և կրելե ետք բազմաթիվ տերերու խստությունը, ոմանք քաղքենի, ոմանք արհեստավոր, ի վերջո սահմանվեցավ թագավորին ծառայության, և եթե չեմ սխալիր, Թահմաս թագավորին, մեծ հայրը Աբբաս թագավորին, որ այժմ կիշխե։ Շատ տարիներ ծառայելե ետք արքունիքին մեջ բազմաթիվ թագավորներու օրով իբր քաղաքապահ զինվոր, վերջապես բարձրացավ Շանտե Շիրազի գերագույն աստիճանին, իր անձնական արժանիքներով և իրեն այս թագավորության սեփականությունը տվող վեհապետին օրով միշտ եղավ, որքան որ ապրեցավ, ընդհանուր հրամանատար բոլոր միւսներուն վրա։ Իրավամբ Պարսկաստանի մեջ չկար մեկը, որ կարենար բաղդատվիլ իրեն հետ, ոչ արժանիքով, ոչ խոհեմությամբ ոչ ալ մեկը, ինչ որ ամենեն ավելի կարևորն է, որ իրմե ավելի բախտավոր ըլլա իր մղած բոլոր պատերազմներուն և կռիվներուն մեջ»։ Իր որդին Իմամ-կուլի խան, իբր մայր ունեցած էր վրացի տիկին մը։ Իրեն է, որ վստահված էր Քեթեան թագուհիին և անոր երկու թոռներուն պահպանությունը. Ալլեն, անդ, հատ. Ա, էջ 263—4։ Կովեյիա, էջ 115, կըսե թե Ալլահվերտի քրիստոնյայի զավակ էր, առանց ճշտելու իր հայկական կամ վրացական ծագումը։

խան մը։ Դեսպանը այս պարտականությունը հանձնեց Հ. Պելշիորի, որ ընդունեց հակառակ դժվարություններուն և ձմռան խստություններուն։ Ղազվինեն մեկնեցավ 10 մարտ 1605-ին, այնտեղ ձգելով Հ. Կիլեերմե տե Սանթո Ակուսթինիոն դեսպանին հետ։ Ճամփան, ձյունով ծածկված, կերևի շատ դժնդակ եղավ, բայց արագ շարժելով հասավ Թավրիզ, ուր շահը կգտնվեր, նավրուզի տոնին օրը (21 մարտ 1605) և կրցավ անմիջապես շահին հաղորդել իր առաքելության նպատակը։ Քանի մը օրեր անցան առանց որ շահը տա իր պատասխանը։ Ավելի ետքը շահը տեղեկացուց իրեն, որ «Թյուրքոման ցեղե» դեսպան մը անվանած էր, որ կկոչվեր Փաքիզե Իմամ-կուլի պեկ, որ քանի մը ամիս առաջ իբր դեսպան գացած էր Մոսկովիա և Պալաքեա, ուղեկիցներու թագավորության մեջ։ Հ. Պելշիոր տոս Անժոս դեսպան Լասերտայի կողմե շահին նվիրեց ոսկեզրված և կիտվածազարդ աթոռ մը։ Շահը հարցուց թե Վենետիկե՞ն կուգար այդ աթոռը։ Հայրը պատասխանեց, թե փորթուկալյան գործ մըն էր և թե դեսպանը զայն իրեն կուղարկեր որպեսզի իր արհեստավորները գնահատեն անոր շինվածքին գեղեցկությունը։

Իր Թավրիզ կայքի միջոցին կթվի թե խաղաղության բանակցություններ սկսան շահին և Ջիղալզատեյի միջև, որ կհրամայեր թրքական բանակներուն։ Իմանալով ասիկա, Հ. Պելշիոր որոշեց խոսիլ բանակներու հրամանատար Ալլահվերտիի հետ համոզելու համար զայն, որ հրաժարիլ տա պարսիկ վեհապետը այս ծրագրեն. Հ. Պելշիոր նույնը ըրավ արքունիքի միւս մեծերուն հետ, հաջողելով, կըսեն, համոզելու զանոնք, որ խաղաղություն չկնքվի[84]։

Հայր Պելշիոր իր պաշտոնը ավարտած ըլլալով հրաժեշտ տվավ և Թավրիզեն մեկնեցավ Ղազվին։ Հետաքրքրական է բաղդատել Ցելիշ տե Ժեզյուի այս գրանցումը այն տեղեկության հետ, զոր կուտա Ֆիլիփ Գ թագավորը, հիմնվելով Հ. Պելշիոր տոս Անժոսեն իր ստացած լուրերուն վրա։ Արդարև, Տոն Մարթիմ Աֆֆոնսո Տե Քասթրոյի ուղղված 18 հունվար 1607 թվակիր նամակի մը մեջ Ֆիլիփ Գ կհիշե թե նամակե մը, զոր ստացած է Հ. Պելշիորեն, որ գնաց և եկավ Լուիս Փերեյիրա տե Լասերտայի հետ, տեղեկություն ունեցած է այս դեսպանու-

[84] Ֆ. տե Ժեզյու, անդ, էջ 74ա-բ։ Պելլան, անդ, էջ 139, կգրե անորոշության մեջ ձգելու համար Սիղալան (Ջիղալզատե), շահ Աբբաս իրեն ուղարկած էր առաջարկություններ 1555-ի Ամասիո դաշնագրին հիման վրա, զոր միւսը բնականաբար չէր կրնար ընդունիլ։

թյան ընթացքին անցած դարձածներուն մասին[85]: Այսպես, տեղյակ է, որ շահին բանակատեղին հասնելեն երկու օր ետք Լասերտա այս վերջինեն արտոնություն խնդրած է Հնդկաստան վերադառնալու, այդ բանակատեղիին մեջ ութը օր միայն մնալե ետք մեկնած է Ղազվին համաձայն շահին հրահանգին, որ նկատի առած է իր ցանկությունը: Շահը այնտեղ պիտի գար ձմեռը անցնելու համար և պիտի կարենար իրեն հետ բանակցիլ իր առաքելության նպատակին մասին: Ղազվինեն Լուիս Փերեյիրա տե Լասերտա քանի մը ամի ետք Հայր Պելքիորը ուղարկեց ստանալու համար շահին պատասխանը իր առաքելության մասին: Այս տեղեկություններուն լույսին տակ Թագավորը կմտածե թե Լուիս Փերեյիրա տե Լասերտա թերացած էր իր դեսպանի պարտականություններուն մեջ, ձգելով շահին բանակատեղին այդքան աճապարանքով և հետո իրեն ուղարկած չըլլալով տեղեկատվություն մը: Նույնպես, Ֆիլիփ Գ անգոհացուցիչ կգտներ նախորդ փոխարքա Աիրըշ տե Սալտանիայի ընտրած նվերը շահին համար, որ հարգի չէր համարվեր Պարսկաստանի մեջ և 1000 քրուզատո կարժեր: Թագավորը կհրահանգեր ուրեմն Աֆֆոնսո տե Քասթրոյի դարմանել սխալը ըստ պատշաճի: Կխնդրեր՝ նաև այս վերջինեն, որ մեղադրանքներ ուղղե Լասերտային և իրեն տեղեկագիր մը ուղարկե առաջին նավով, որովհետև փոխարքայի 2 նոյեմբերի նամակին հետ չէր գտած Լասերտայի կողմե փոխարքային ուղղված նամակին պատճենը, որ ծանուցված էր: Թագավորը կհայտներ նաև, որ պետք է դեպի իր թագավորությունը ճամփա հանել դեսպան Փաքիզե Իմամ-կուլի պեկը, զոր շահը նշանակած էր ընկերանալու համար Լասերտայի, բարվոք վերաբերում ունենալ անոր հանդեպ և հոգալ իր բոլոր անհրաժեշտ ծախքերը: Երկու դեսպանները Օրմուզ հասած էին Կոա երթալու համար 1605-ի աշնան[86]: Իր կողմե շահ Աբբաս քանի մը ամիս առաջ իր դեսպանին անվանումին

[85] 1610-ին Ֆիլիփ Գ անդրադառնալով 18 հունվար 1607-ի իր նամակին կշարունակեր գանգատիլ, որ տեղեկագիր չէ ստացած Լուիս Փերեյիրա տե Լասերտայի արարքներուն մասին. Նամակ 19 մարտ 1610-ի Թագավորեն առ փոխարքա Ռյուի Լուրենսո տե Թավորա (փոխարքա 5 սեպտեմբեր 1609-են 25 դեկտեմբեր 1612): Հնդկաստանի վավերաթղթեր, հատ. Ա, վավ. 139, էջ 387—391:

[86] Հնդկաստանի վավերաթուղթեր, հատ. Ա, վավ. 26, էջ 100—111: Տ. տառ, ծանոթ. 85, Թագավորին 18 հունվար 1607-ի նամակին վերաբերմամբ, ուր Ֆիլիփ Գ կխոսի Կոային ստացված և փոխարքային կողմե գրված 2 նոյեմբեր 1605 թվակիր նամակներուն վրա, որոնցմե իմացած է, որ իր Պարսկաստան ուղարկած դեսպանը Լուիս Փերեյիրա տե Լասերտա հասած է Օրմուզ. Արևելյան արխիվներ Փորթուկալի, պրակ 1, մաս 2, վավ. 16, էջ 214—215: 1607 տարվո նամակ առ Թագավորը, որ կհայտնե թե Լասերտա իր դեսպանությենեն վերադարձած է և վերստանձնած է քաղաքին կառավարիչի պաշտոնը տասներեք ամիսե իվեր, առանց ռոճիկ ստանալու: Նկատի ունենալով Պարսկաստանի մեջ Ն. Վեհափառության իր մատուցած ծառայությունները և բարի համբավը, զոր շահած է իր առաքելության ընթացքին ի ծառայություն Աստուծո և Ն. Վեհափառության Թագապետությունը կհուսա որ պիտի վարձատրվի:

միջոցին գրած նամակին մեջ կխոսեր Լուիս Փերեյիրայի մասին գովասանական բառերով, վեր հանելով անոր գիտությունը, իմաստությունը, կարողությունը և խոհեմությունը և շեշտելով այն տառապանքները զորս կրած էր ան իր մոտ գալու համար պատերազմական գոտիին մեջ թրքական հողի վրա[87]:

Անանուն տեղեկագրի մը մեջ, որ հավանաբար 1608 տարիեն է, ըսված է, որ Ֆիլիփ Գ «հրահանգ տված էր Լուիս Փերեյիրա տե Լասերտայի այնպես ընել, որ Տոն Ռոպերթո Շըրլեյ Պարսկաստանը թողու ողջ կամ մեռած, ինչ որ ալ ըլլա անոր գինը: Տոն Ռոպերթո հավանեցավ մեկնիլ, որովհետև Սպանիո դեսպանը իրեն խոստացած էր տարեկան 4000 սկուտեղ և ուրիշ վարձատրություններ, իրեն ցույց տալով Թագավորին հրահանգները, ըստ որոնց կրնար կատարել այդ ամենը,—թեև չկատարվեցավ»: Տեղեկագիրը կշարունակեր. «Կկարծեմ որ անհարմար է Աստուծո և սուրբ եկեղեցիին ծառայության համար, որ այս անգլիացին Պարսկաստան վերադառնա»[88]: Տոն Ռոպերթո Պարս-

[87] Տ. Հավելված, էջ :

[88] Թորկեզյան գիվանաթուղթեր Բ.Թ. 20, էջ 181, հիշված Կարմելյաններու մեջ, հատ. Ա, էջ 143—144: Միևնույն անանուն աղբյուրը կհայտնե, որ Ֆիլիփ Գ գրած էր շահին օգոստինյաններու միջոցով, խնդրելով անկե որ Պարսկաստանեն վտարե Տոն Ռոբերթոն, որովհետև այս վերջինը Սպանիո թշնամի էր, բայց շահը հետևանք չտվավ: Անտարակույս այս թելադրությունը շահին ուղղված այն նամակին մեջ է, զոր Ֆիլիփ հիշած է Լիզպոնեն Հնդկաստանի փոխարքա Աիրըշ տե Սալտանիայի ուղղված իր 6 հունվար 1602 թվակիր նամակին մեջ: Այնտեղ Թագավորը ի մեջ այլոց կուզե, որ փոխարքան հասկնա թե ինչ ճամփով Պարսկաստան մտած են երկու անգլիացիներ, որոնք ինքզինքնին սպանիացիներուն բարեկամ ներկայացնելով լավ ընդունելության արժանացած են: Կավելցնե որ եթե անոնք մաս կկազմեին այն դեսպանություններուն, զորս շահը ուղարկած էր Փորթուկալի Թագավորին, սուրբ աթոռին և կայսեր՝ այն ատեն անհրաժեշտ էր կարելի եղածին չափ շուտ շահին հասցնել իր նամակը, որով կտեղեկացնե այս վերջնույն, թե հիշյալ անգլիացիները թշնամի էին կաթոլիկ եկեղեցիին և թե անոնց գործունեությունը կրնար մեծ վնասներ պատճառել. Տեղեկատու ՓԱՖ-ի, թ. 3, վավ. 9, էջ 558—559: Հռոմ բնակութենեն ետք Տոն Ռոբերթո անցավ Սպանիա, ուր մնաց մինչև հունիս 1611, նախքան Անգլիա երթալը, ուր 1 հոկտեմբերին իբր դեսպան Պարսկաստանի իր հավատարմագրերը ներկայացուց Ջեյմս Ա-ի, որուն առաջարկեց ազատ և բացարձակ կերպով երկու նավահան-

կաստանեն մեկնեցավ 1608-ի փետրվարին Մոսկովիո ճամփով և Հռոմ հասավ սեպտեմբեր 1609-ին։

Նամակի մը մեջ, զոր Ֆիլիփ Գ ուղղած է շահ Աբբաս Ա-ի 17 հունվար 1607-ին[89], կկարդանք, որ իր դեսպան Լուիս Փերեյիրա տե Լասերտա մեկնումեն իվեր նամակ չէ ստացած շահեն, բայց կհուսա թե պիտի ստանա, ինչ որ ուրախություն պիտի պատճառե իրեն։ Նամակը կբացատրե նաև թե Լուիս Փերեյիրա տե Լասերտա և շահին դեսպանը Փարիզե ժամանակին չեն հասած Կոա և այդ պատճառով չեն կրցած 1606-ի նախորդ տարին Հնդկաստանեն եկող նավերը առնել, ինչպես որ իմացած է փոխարքայեն, որ սակայն իրեն հաղորդած է այն մեծ հաղթանակները, զոր շահը տարած է Թուրքերուն վրա։ Կավելցնե, որ գրած է փոխարքային անհրաժեշտը կատարել դեսպան Փաքիզեյի ճամփորդության համար, եթե նա տակավին չէ մեկնած։ Նույնպես Թագավորը կանդրադառնա միշտ Պահրեյն կղզիին, որ գրավված է Շիրազի սուլթանին կողմե և զոր այս վերջինը չէ վերադարձուցած Օրմուզի Թագավորին, որ իրեն ենթակա է[90]։

Մյուս կողմե, Ֆիլիփ Գ լրջորեն կկասկածեր, որ միսիոնար Հայրերը կարենան Պարսկաստանի մեջ ընդլայնել իրենց գործունեության դաշտը, ինչպես կարելի է դատել այն կարծիքեն, զոր կհայտնե նույն օրը իր փոխարքային, Տոն Աֆֆոնսո տե Քասթրոյի ուղղած իր նամակին մեջ[91]։ Անդրադառնալով այս վերջինույն 22 դեկտեմբեր 1605-ի նամակին, որ կվերաբերեր Պարսկաստանի մեջ քրիստոնեության գործերուն և օգոստինյաններու ընծայարանին Սպահանի վանքին մեջ, Թագավորը կխոսի այս միաբանության կրոնավորներու խնդրագրին մասին, որով անոնք կհայտնեին թե այսքան արժանավոր գործ մը շարունակելու համար օժանդակության պետք ունեին, ընծայարանին ինչպես և այնտեղ դաստիարակվող տղոց համար և կըսե. «...և որովհետև

գիտեներ տրամադրել պարսկական հոգի վրա. Սըր Վ. Ֆօսթըր, Արձանագրություններ անգլիական շահաստաններու (Արևելյան Հնդկաստանի ընկերություն), հիշված Կարմելյաններու մեջ, էջ 155։

[89] Տեսնել նաև Ֆիլիփ Գ-ի նամակը շահ Աբբասի 23—12—1606-ին, որ նույն նյութին կվերաբերի. Գիրք մուսոններու, թ. 6—Ա. 1604—1605, հիշված ՓԱՖ-ի Տեղեկատուին մեջ, թ. 3, էջ 500, վավ. 60։ Այս նամակը շահին տրվեցավ հ. Կուվեյիայի կողմե հունիս 1608-ին։ Իբր պատասխան շահը գրեց Թագավորին տեղեկացնելով, որ իրեն կուղարկե հայրը ընկերակցությամբ իր դեսպան Տենկիս պեկի։ Տե՛ս Կուվեյիա, էջ 181։

[90] Կուվեյիա, էջ 176։

[91] Հնդկաստանի վավերաթուղթեր, հատ. Ա, վավ. 24, էջ 80—89։

կթվի թե որքան ատեն որ շահին գործերը հաստատուն հիմ մը չունին, պետք չէ նյութական կարևոր միջոցներ գործածել իր հողին վրա, ոչ ալ պետք է ընծայարաններ պահել, մանավորաբար որքան ատեն որ ստուգություն չունինք թե այն բարեացակամ զգացումները զորս շահը ցույց կուտա քրիստոնյաներուն հանդեպ գոյություն պիտի ունենան երբ անցած ըլլան առիթները, որոնց համար ան պետք ունի Թագավորին և պապին օգնության, զոր ներկայիս կփնտրե այնքան ջերմորեն։ Հետևաբար, կըսե Թագավորը, բավական պիտի ըլլա առայժմ Սպահանի մեջ պահել երեք կամ չորս օգոստինյան հայրեր, այս քրիստոնյաները նպաստավորելու և կրոնքի մեջ կրթելու պատրվակով և կանոնավորապես տեղեկագիրներ ուղարկել շահին գործերուն և Թուրքերուն դեմ իր հաջողություններուն մասին, մղելով զինքը պատերազմը շարունակելու»։ Թագավորը փոխարքային կհրահանգե նաև օգոստինյան հայրերուն ուղարկել 5-են 600 քրուզատոյի լումա մը սովորական օժանդակութենեն զատ, որպեսզի բաժնեն քրիստոնյա հայերուն, քանի որ անոնք կթվեին ըլլալ գլխավոր առարկան օգոստինյան հայրերուն գործունեության, որոնք կուզեին Հռոմի միացնել զանոնք։ Ֆիլիփ Գ կրոնավորներուն կձգեր այս գումարները բաշխելու հոգը իրենց հարմար դատած ձևով և գործնական ոգիով տոգորված՝ կավելցներ իր փոխարքային համար. «Համաձայն այս գործունեութենեն իր տեսած արդյունքին, կարելի պիտի ըլլա ավելի լայնորեն ձեռք բանալ»։

Հայր Պելշիոր և հայր Կիլեերմե իրենց Պարսկաստանի առաքելութենեն Կոա բերին քսան հոգի, որոնց մեջ կային երեք Թուրք, վեց հայ, մեկ քյուրտ և մեկ վրացի աղջիկներ, մեկ հայ և երկու Թուրք մանչուկներ։ Աղջիկները, որոնք գեղեցիկ էին և բարեհամբույր, տրվեցան «Ֆիտալկո»-ներու Կոայի մեջ[92]։

[92] Ֆ. տե Ժեզյու, էջ 84բ։

ՀԱՅՐ ԿԻԼԵԵՐՄԵ ՏԵ ՍԱՆԹՈ ԱԿՈՍԹԻՆԻՈ

Տեսնենք այժմ ինքնությունը այս երկու կրոնավորներուն. Հայր Գելշիոր տոս Անժոս և Հայր Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիո, որոնք ընկերացան Լուիս Փերեյիրա տե Լասերտայի։

Հայր Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիո[93] ծանոթ նաև Կիլեերմե տե Ժեզյու անվան տակ, որ ծնած էր Թերթյուկալ, Քոիմպրայի[94] մոտ,

[93] Հ. Կիլեերմեյի մասին տ. Հանրային մատենադարան Էվորայի, ձեռ. ցուցանիշ ԿՁ 1—3, 514 էջ. Արևել. Հնդկաստանի միաբանության ս. Օգոստինոսի որդիք, 296—298։ Ուրիշ օրինակ մը Աժուտայի մատենադարանին մեջ 49—1—51 ցուցանիշին տակ։ Լիզբոնի Ազգ. մատ., ընդհանուր դիվան, թ. 197, Ն. Մանուել տա Փյուրիֆիքասաո, Հուշագրություններ օգոստինյան միաբանության Արևել. Հնդկաստանի մեջ, էջ 262—289, Հայր Սիլվա Ռեկո, Վավերագրություններ... Հնդկաստանի մեջ, հատ. 12 (1572—1582), էջ 39—40։ Ըստ Հարթմանի, սատ, ծանոթ. 6, ավելի ճշտօրեն հեղինակը եղած ըլլալու է Ֆրանսիսքո տա Փյուրիֆիքասաո, որ նահանգային փոխանորդ եղավ 1720-են 1723, էջ 6, ծան. 3։ Լիզբոնի Ազգ մատ. ընդհ. դիվան, թ. 59, էջ 3—58, ուրիշ օրինակ թ. 745, էջ 1-են 70։ «Հիշատակարան կրոնավորներու առաքելության, զորս Հնդկաստան ուղարկեց Փորթուկալի ս. օգոստինյան մեր վիճակը և գործերը, որոնցմով անոնք զբաղեցան, հեղինակությամբ Հ. Անթոնիո տե Մորայիշի, նահանգային փոխանորդ նույն միաբանութենեն», Սիլվա Ռեկոյի մեջ, Վավերագրություններ, նույն, էջ 139—140։ Հ. Սիլվա Ռեկո հիմնված է Լիզբոն Ազգ. մատ.-ի երկու ձեռագիրներուն վրա։ Երրորդ օրինակ մը կգտնվի ԹԹԱԱ-ի մեջ, մատ. ձեռ. թ. 1699, էջ 183—241։ Քոիմպրայի համալսարանական մատենադարան, հին ձեռագրեր, թ. 1650 «Առձեռն միաբանական Արևել. Հնդկաստանի ս. օգոստինյան կարգին կամ Պատմություն սույն կարգին հիմնարկության և անոր բոլոր կրոնավորներուն, ինչպես և անոնց, որ Փորթուկալի վիճակին եկան, նաև անոնց, որ ուխտ կատարեցին անոր մեջ, խմբագրված, դասավորված և ի նորոգ սրբագրված Հ. Մանուել տա Ավե Մարիայի կողմե, աշակերտ նույն միաբանության և ներկա փոխանորդ անոր, 1812», Սիլվա Ռեկոյի մեջ, Վավերագրություններ, հատ. Բ, սկսյալ էջ 95-են և էջ 259։ ԹԹԱԱ Մատ. ձեռ. թ. 581, էջ 434բ—437 «Ի մասին սուրբ մարդուն եղբ. Կիլեերմեյի, զոր մահմեդականները սպաննեցին ատելությամբ Հավատքին։ Նույն, մատ. ձեռ. թ. 674, էջ 396-են 398, «Կյանք երանելի Հ. Կիլեերմե տե Սանթո Ակթ.-ի, մարտիրոս և իր ընկերներուն»։ Տ. Հարթման, Վիլիամ ս. Օգոստինոսի և իր ժամանակը, տ. սատ, ծանոթ. 4 (անգլ.)։

[94] Ուրիշներ իբր անոր ծննդավայր ցույց կուտան Անսաո, Քոիմպրայի արքեպիսկո-

միաբանության մեջ մտավ Սանթարեմի կրասա (Տիրուհի շնորհաց) վանքը, ուր նորընծա էր 1598 տարվո ընթացքին։ 1559-ին ղրկվեցավ Հնդկաստան, ուր ուսավ արվեստները և աստվածաբանությունը Կոայի «Տիրուհի ժողովրդյան» դպրոցին մեջ, ուր եկեղեցական ձեռնադրվեցավ։ Իր Պարսկաստանի առաջին ճամփորդությունը կատարեց 1604 և 1605 տարիներուն դեսպան Լուիս Փերեյիրա տե Լասերտայի և Հ. Գելշիոր տոս Անժոսի հետ և հետո վերադարձավ Կոա։ Երկրորդ ճամփորդություն մը կատարեց Պարսկաստան 1608-ին ընկերանալով Հ. Անթոնիո Կուվեյիայի, որ երրորդ անգամը ըլլալով կերթար Պարսկաստան։ 20 փետրվար 1608-ին մեկնեցավ Կոայեն և կարճ ժամանակ մը Օրմուզ մնալե ետք հունիսի վերջը հասան Սպահան, մինչդեռ շահը կըպատրաստվեր երթալու բանակ, Համատան քաղաքեն երկու օրվան հեռավորությամբ։ Այնտեղ է, որ Հ. Կուվեյիա, Հ. Կիլեերմեի հետ իրեն հանձնեց Ֆիլիփ Գ-ի 17 հունվար 1607-ի նամակը և քանի մը օր ետք արքայական նվերները, որոնց մեջ կգտնվեին չինական և ճապոնական քանի մը հովհարներ, որոնք մանավորապես գնահատվեցան շահեն, որ մեծ հիացող մըն էր նկարչության և որովհետև, կըսե Կուվեյա, «ասոնք առաջիններն էին, որ կմտնեին Պարսկաստան»։

Հայր Կուվեյիա Լիզբոն վերադարձավ պարսիկ դեսպան Տենկիզ պեկի հետ, իսկ Հայր Կիլեերմե կմնար Պարսկաստան, ուր առաքելական եռանդով մը տարված կնվիրվեր կաթոլիկ հավատքը այս թագավորության մեջ տարածելու գործին։ Հ. Կիլեերմե, որ քիչ մը թուրքերեն գիտեր, չէր վարաներ քարոզելու Ղազվինի փողոցներուն մեջ[95]։ Լսած ըլլալով, որ զանազան հայ եկեղեցիներու մեջ կային մասունքներ ս. Գրիգոր Լուսավորչի և սրբուհի Հռիփսիմեի և ուրիշ սուրբերու, որոնք հիշատակված են հռոմեական կաթոլիկ օրացույցին մեջ, Հ. Կիլեերմե որոշեց ձեռք անցնել զանոնք։ Իր մեծերուն արտոնությամբ և շահին թույլտվությամբ 1610-ին ճամփա ելավ Ակոսթինիո տ'Ասպրեոյի հետ, որ սուրիացի կաթոլիկ մըն էր և իրեն իբր թարգման կծառայեր այս ուղևորության ընթացքին։ Հասնելով Նախիջևան Հ. Կիլեերմե շահին հանձնարարական նամակը ցույց տվավ Ազրպեյճանի կառավարիչ Մաքսուտ-սուլթանի, որ զինքը պատվով ընդունեց։ Դժբախտաբար խոսակցությունը շեղելով դեպի կրոնական հարցերը, Հ. Կիլեերմե Հայտ–

պոսության մեջ, ուրիշներ նույնանուն վայր մը Մոնսանթոյի կոմսության մեջ և ուրիշներ՝ Լիզբոն քաղաքը, ԹԹԱԱ Մատ. ձեռ. թ. 674, էջ 396—398, սատ, ծան. 93։

[95] Ֆ. տե Ժեզյու, էջ 77բ—78ա։

նեց կարծիքներ, զորս սուլթանը չէր ուզեր լսել, բայց ջերմեռանդությամբ ոգևորված հայրը շարունակեց և սուլթանը զայրացած ապտակեց և փորձեց խեղդել կրոնավորը ի ներկայության ուրիշ մահմետականներու և հայու մը։ Սուլթանը վախնալով շահին հակազդեցութենեն, ներողություն խնդրեց հ. Կիլեերմեեն, որ հաշտվելով, շարունակեց իր ճամփան ի խնդիր մասունքներուն։ Հասավ Երեք եկեղեցիներ կոչված վայրը (Ուչքիլիսե—էջմիածին), ուր էր Աթոռը կաթողիկոս Մելքիսեդեկի, որ շատ լավ ընդունելություն կատարեց իրեն։ Երբ հայրը բացատրեց իր առաքելության նպատակը, կաթողիկոսը իրեն ընկերացուց հայ եպիսկոպոս մը ցույց տալու ճամփան և իրագործելու համար իր փափաքը։ Հասնելով ս. Հռիփսիմեի նվիրված եկեղեցին[96], հ. Կիլեերմե երևան հանեց ոսկորոտիքներ, որոնց մեջ կըգտնվեին, կըսվեր, սրբուհիին մասունքները։

Խնդիրը հասավ Հայոց կաթողիկոս Դավիթի ականջը, որ Մելքիսեդեկի հակառակորդն էր և այդ միջոցին կգտնվեր Թավրիզ, շահին մոտ։ Դավիթ, որու կողմնակից էին Ջուղայի հայերը, ուր Դավիթ կընակեր հայերու բնագաղթեն իվեր, լավ առիթ մը գտավ հարվածելու Մելքիսեդեկը, որ Երևանի բնակիչներուն օգնությամբ ձեռք ձգած էր Դավիթի աթոռը[97]։ Այս վերջինը դառնորեն գանգատեցավ շահին, որ հ. Կիլեերմե, Մելքիսեդեկի հավանությամբ և ուրիշ հայերու ընկերակցությամբ պղծած էր հին սրբավայրերը, գողնալով «ինչ որ իրեն համար աշխարհի ամենեն սրբազան գանձերն էին»[98]։

---

[96] Մյուս երկուքն են էջմիածնի Մայր եկեղեցին, նվիրված ս. Գրիգոր Լուսավորիչին և ուրիշ մը, նվիրված ս. Գայիանեի։

[97] Դավիթ Դ (1587—1629) աթոռակալ էր էջմիածնի և իրեն աթոռակից անվանած էր Մելքիսեդեկ (1593—1628), Կարմելյաններ, էջ 210։

[98] Քարլոս Ալոնսո, Ս. Օգոստինոսի կարգին առաքելությունները Վրաստանի մեջ, «Օգոստինյան հավաքածո», հատ. ԻԸ, 1965, էջ 223—228, «Տեղեկություններ օգոստինյան հայր Կիլեերմե տե Ս. Օկյուսթենի սպանության մասին, տրված հ. Ամատոր տե Սան Անթոնիոյի, օգոստինյան, Ալեխանտրո Օթուեննտոլոյի, վենետիկցի վաճառական և սուրիացի կաթոլիկ Օկյուսթեն տե Ապրեոյի կողմե, հավաքված հրամանավ Պարսկաստանի մեջ առաքելական այցելու օգոստինյան հ. Անթոնիո տե Կուվեյիայի, 30 և 31 մարտ 1615-ի օրերուն Օրմուզի մեջ», Արխիվ Հավատքի տարածման միաբանության, հատ. 189, էջ 277—278 (սպաներեն)։ Նույն դեպքերուն հայկական պատմումին համար՝ տ. Առաքել Դավրիժեցի, անդ, գլ. ԺԶ, էջ 178—197, «Պատմութիւն վասն նշխարաց սրբուհւոյ Հռիփսիմեայ, թէ որպէս գտեալ և հանեալ ի ֆռանկաց և թէ որպէս տարեալ եղև յԱսպահան քաղաք»։ Հեղինակը այս արարքին դերակատարները կկոչե «Գիլեոմ և Աբրահաճել հայրերը»։ Հայր Միքայել Չամչյան, Պատմութիւն հայոց, հայերենե թարգմանված (անգլ.)

Մինչ այդ, հայր Կիլեերմե, մասունքը Ապարաների մեջ պահ դնելե ետք, ուր կար հայ կաթոլիկ կրոնավորներու վանք մը, գնաց Թավրիզ շահին մոտ, որ շատ գեշ տրամադրված գտավ հանդեպ իրեն և Մելքիսեդեկի։ Գիտակցելով տեղի ունեցած փոփոխության, հ. Կիլեեր-

---

Հովհ. Ավտալի կողմե, Կալկաթա, 2 հատ, հատ. Բ, էջ 359—360, խոսելով 1611-ի Հայաստանի մեջ տեղի ունեցած դեպքերուն վրա, կհիշատակե այցելությունը երկու լատին կրոնավորներու, որոնք իրենց կյանքը վերջացուցին Գեղարքունիքի մեջ և կըսե. «Մինչդեռ առաջ կտարվեին վանքերու այս նորոգությունները, երկու լատին եղբայրներ եկան Արարատյան երկիրը, ուր հանդիպեցան Մելքիսեդեկ հայրապետին, որմե ստացան, իրեն տալե ետք նվերներ, որ այս նպատակին համար բերած էին, Հայաստանի բոլոր վանքերը այցելելու արտոնությունը։ Երկու եղբայրները կատարեցին բստ այնմ շրջան մը, որու ընթացքին գտան և յուրացուցին այլազան սուրբ մասունքներ, մասնավորաբար ս. Անդրեաս առաքյալին գլուխը։ Էջմիածին երթալով այդ տեղվույն եկեղեցիեն առին ս. Հռիփսիմեի մասունքները, զոր իրենց հետ տանելու ատեն բռնվեցան տեղվույն եկեղեցականներուն կողմե, որոնք ձեռք անցուցին թանկագին մարմինը, բայց ոչ ամբողջությամբ, լատին եղբայրները հաջողած ըլլալով պահել անկե չորս մասեր։ Հետագային առնցմե մեկը դարձյալ հայերու ձեռքը ինկավ և այժմ կգտնվի Վենետիկի հայ եկեղեցիին մեջ։ Երկրորդը Հնդկաստան տարվեցավ և պահվեցավ Կոայի լատին եղբայրներու վանքին մեջ։ Երրորդը զետեղված էր եկեղեցվո մը հիմներուն տակ, որ կառուցված էր այդ միջոցին Պողոս վանականին կողմե Վարդաղուխ գյուղին մեջ, Նախիջևանի մոտ և ձոնված սրբուհի Հռիփսիմեի։ Չորրորդը նախ Նոր Ջուղայի մեջ պահված էր, բայց 1755-ի բերվեցավ Ղալաթա, ուր ձեռքը ինկավ Պողոս անունով մեկու մը, մականունյալ Քարախլաչ օղլու, մարգարիտի վաճառական մը, որ զայն տարավ Կոստանդնուպոլիս և, երբ տարիքը առավ, նվիրեց Ղալաթիո սուրբ Լուսավորիչ եկեղեցիին, ուր կգտնվի հիմա։ Երկու սուտհակ վանականները, գացած ըլլալով Գեղարքունիք, այնտեղ սպաննվեցան պարսիկներուն կողմե»։ Առաքել Դավրիժեցի, էջ 193, կըսե թե Գեղարքունիքեն անցնելու ատեն զգլպաշ ձիավորներ հասան իրենց ետևեն և սպաննեցին իրենց խումբեն երկու հոգի, որոնք հափշտակիչներն էին Հռիփսիմեի մասունքներուն։ Ըստ Լեոն Արփիի, Պատմություն հայկական քրիստոնեության սկիզբեն մինչև մեր օրերը, Նյու-Յորք, 1946, էջ 217, Հռիփսիմեի մասունքները վերստին ձեռք անցվեցան և ուղարկվեցան էջմիածին, բացի մեկ մասեն, որ 1736-ին Զմյուռնիո հայ եպիսկոպոսին կողմե, ներկայացվեցավ պապին և ուրիշ մաս մը, որ շահ Աբբասի կողմե տրվեցավ լատին կրոնավորներուն, որոնք կպահեն զայն Կոայի մեջ։ Օգոստինյան հ. Թուան տե Սան Էլիզեոն է, որ ստացավ շահին կողմե նվիրված մասունքի կտորը, ինչպես որ նկարագրված է Վատիկանի մատենադարանեն քաղված տեղեկագրի մը մեջ (ձեռ. Պատմություն առաքելություններու, գլ. ԼԴ, գիրք 3, Բ մաս, արտագրված անգլիերեն լեզվով Կարմելյաններու մեջ, հատ. Բ, էջ 245—246), ուր կպատմվի շահ Աբբասի մասնակցությունը 1620-ին Հայտնության հայկական տոնին Ջուղայի մեջ և քաղաքին գլխավոր հայուն Խոճա Սաֆարի տան մեջ տեղի ունեցած երեկույթին. «Պարսիկ վեհապետը իր անմիջական հետևորդներով և կաթոլիկ միսիոնարներեն երեքին հետ բաշխվեցավ գլխավոր հայուն, հանգուցյալ խոճա Սաֆարի տունը և այնտեղ անցուց օրվան և գիշերվան մնացյալ մասը։ Այնտեղ, կրոնական հարցերու շուրջ տեղի ունեցող

մե վերադարձավ Ապարաներ, ուր մասունքներուն տեղ դրավ ուրիշ ոսկորներ։ Շահը լսելով, որ հայրը Ապարաներ գացած է, ձերբակալել տըվավ զայն և բերել տվավ Թավրիզ իր առջև։ Իր բախտեն այդ միջոցին

խոսակցություններու ընթացքին, անոնք գիշերը կանխող ժամերը կլեցնեին, շահ Աբբաս բազմաթիվ անգամներ հայտարարեց, թե «ան որ կհավատա Հիսուս Քրիստոսի բայց չի հավատար Հիսուս Քրիստոսի Աստուծո որդին ըլլալուն՝ «քաֆիր» մըն է և անհավատ»։ Հետո ան փափաքեցավ տեսնել և ուզեց որ իրեն բերեն սուրբերու որոշ մասունքներ, որոնք Հայաստանե բերված չէին, երբ Ջուղայի ժողովուրդը արմատախիլ եղած և Սպահան տեղափոխված էր. և երբ քանի մը եկեղեցականներ շուրջառներ հագած, ճրագներով և մոմերով, երկյուղածությամբ ներս բերին զանոնք, Աբբաս տեղեն ելավ, համբուրեց մասունքները և զանոնք դրավ գլխուն վրա. հետո հրահանգեց շուրջ կեցողներուն հարգանքով կանգնիլ նման սուրբ իրերու դիմաց, անոնց տալով գրեթե այնքան հարգանք, որքան քրիստոնյա վեհապետ մը կրնար ընծայել։ Ավելի զարմանալին—իսլամ վեհապետի մը մոտ—հայ կղերականները հանդուրժեցին ատոր առանց վրդովվելու, որովհետև ներկա եղող երկու օգոստինյան հայրերը գայթակղեցան,—այն է, որ շահը որոշեց Հայաստանի նշանավոր նահատակ կույսին, ս Հռիփսիմեի մասունքեն կտոր մը նվիրել հ. Հովհ. Թադեոսին և ոչ միայն զայն, այլև կտրեց սրբուհիին ոսկորը իր սեփական ձեռքերով և մաքուր թուղթի կտորի մը մեջ փաթթելով զայն երկարեց կարմելյան վիճակավորին»։ Առաքել Դավրիժեցի, էջ 197, կգրե. «Յետ ժամանակաց անցելոցդ պատմութեանցդ՝ զոր յառաջդ պատմեցաք, եկեալ է շահն յԱսպահան, և ըստ հանապազորդ սովորութեան իւրում՝ եկեալ է ի տուն խօջայ Սաֆարին. պատահեալ են և անդ ոմանք պատրիկք ֆռանկաց՝ որք էին ի կարգէ վերոյասացեալ պատրիկ Գէլըումին. և ի մէջ խօսից յիշեալ են զնշխարս սրբոց Հռիփսիմեանց և բերեալ են զամենայն նշխարս սրբուհւոյն Հռիփսիմեայ առաջի շահին ի տեսութիւն ամենեցուն։ Եւ յորժամ բացեալ են զնշխարն, յայնժամ պատեհ ժամ գտեալ են պատրիկքն և ի շահէն խնդրեալ են իբրև զպարգևս տալ նոցա մասն ինչ ի նշխարացն այնոցիկ։ Եւ շահն ինք առեալ է ոսկր մի յոսկերացն, և զայն ևս դանակաւն հարեալ է և կոտրեալ, զկէս ոսկերն դարձեալ ձգեալ է ի մէջ այլ ևս նշխարացն, և զկէս տուեալ է ի պատրիկսն, և նոքա առեալ են և ամփոփեալ յինքեանս։ Եւ զայլ ևս զնշխարսն զհասարակն, հրամայեալ է խօջայ Սաֆարին տանել և պահել. և նա բարձեալ ի միջոյ՝ տարեալ է տեղին ուր յառաջն եղեալ էր և կայ անդէն մինչև ցայսօր։ Իսկ վասն մասին, զոր այժմ առին պատրիկքն տարեալ են ի Բանտարայ աշխարհն՝ ի քաղաքն, որ կոչի Գուայ, շինեալ են վանք ի նմին քաղաքի, և զմասն այն եդեալ են ի հիմունս եկեղեցւոյ այնմ վանացն, և է վանքն այն այժմ կուսանաց վանք, յորում բնակեալ բազում ճգնաւոր կանայք»։ Կոայի այս կուսանաց վանքը Սանթա Մոնիքայի վանքն էր, որ կառուցված էր Ալեիշո տե Մենեզըշի կողմե և որուն գլխավոր վարիչը եղավ հ. Տիոկո տե Սանթա Անա։ 150 քույրեր կրնային բնակիլ այնտեղ և իր խուցերուն թիվով ինչպես իր մեծությամբ ամբողջ փորթուկալյան հողամասերուն մեջ այս վանքը երկրորդն էր Օտիվըլաշի վանքեն ետք, Լիզպոնի մոտ։ Վանքին շինությունը տևեց քանըմեկ տարի և վերջացավ 1627-ին, արժելով երկու հարյուր հազար քրուզատոյի ժամանակին համար պատկառելի գումարը, այսինքն քանըհինգ լաք ռուփի. տ. Հին Կոա Պատմական ուղեցույց, Կոա, 1952, էջ 125—142։

նույն քաղաքը հասավ հ. Պելշիոր տոս Անժոս, որ Թագավորին հրամանով ընկերացած էր պարսիկ դեսպան Փաքիզե Իմամ-կուլի պեկի, որ կվերադառնար Սպանիայեն։ Հ. Պելշիոր կրցավ ազատ արձակել տալ զայն, Սպահանի օգոստինյաններու վանքը վերադառնալու պայմանով։ Արձակվելեն ետք, հ. Կիլեերմե գաղտնորեն գնաց Ապարաներ, ուրկե Սպահան բերավ մասունքները, թաքցնելով զանոնք։

Հայր Կիլեերմե տակավին Սպահան կգտնվեր 1613-ի հուլիսի վերջը[99], երբ շահը վճռեց հայերը բռնի իսլամացնել։ Օգոստինյան և Բոկոտն կարմելյան երկու կարգերուն կրոնավորները այն ատեն որոշեցին հեռանալ Սպահանեն։ 19 հոկտեմբեր 1613-ին հ. Կիլեերմե մեկնեցավ հ. Պերնարտո տ'Ազեևտոյի հետ դեպի Բաբելոն, Պարսկաստանի թագավորութենեն դուրս, բայց ճամփան՝ որոշեց ետ դառնալ, փոխանակ Լիզպոն երթալու, ինչպես ըրավ իր ընկերը։ Հ. Կիլեերմե ճամփա ելավ և կրկին անցնելով Նախիջևանի կառավարիչին հողերեն, հարձակման ենթարկվեցավ մահմեդական ձիավորներու կողմե, որոնք զինքը գլխատեցին[100]։ Իր սպասարկուն, Հովսեփ անունով կաթոլիկ հայ մը, ձիեն վար ցատկեց և փորձեց իր սուրով պաշտպանվիլ, բայց հարձակողները նետերով ծածկեցին իր մարմինը։ Երկրորդ ընկերը, ուրիշ կաթոլիկ հայ մը Պետրոս անունով, մեռած կարծվելով ձգվեցավ տեղվույն վրա, բայց վիրավորված էր միայն և կրցավ հասնիլ առաջին գյուղը, որ կըկոչվեր Գեղարքունիք, ուր տեղվույն հայ բնակչության տեղեկացուց եղածը։ Հայերը եկան դեպքին վայրը և ճամփուն եզերքը թաղեցին երկու նահատակները, զատ հողաթումբերու տակ, յուրաքանչյուրին վրա դնելով որոշիչ նշան մը[101]։

---

99 Ստորագրած է Սպահանի օգոստինյաններու վանահայր Ժոան տե Սանթո Ակոսթինոյի, Պերնարտո տ'Ազեևտոյի և էմմանուել տոս Սանթոսի հետ լատիներեն նամակ մը, Սպահանեն, 31 հուլիս 1613 թվակիր, ուղղված Պողոս Ե պապին, որով անոր շնորհակալություն կհայտնեն շահ Աբբասին գրած իր նամակին համար ի նպաստ քրիստոնյաներուն. Պորկեզյան արխիվներ Վատիկանի, Գ հատ., 19-ի, էջ 62—63 (սկզբնագիր), հրատ. Քարլոս Ալոնսոյի կողմե, «Առաքելություն Վրաստանի մեջ», էջ 221։

100 Համաձայն Սիրենի եպիսկոպոսին քաղած վկայություններուն 1614-ին է որ սպանվեցավ հ. Կիլեերմե։ Ս. Օգոստինոսի որդվոց միաբանության Առձեռն միաբանականի և հուշագրություններու ձեռագիրները, տ. ատ, ծանոթ. 93, սխալմամբ է, որ կուտան, ըստ երևույթին, 15 և 5 հունվար 1612 թվականները և «Նակումբուե Մեծ Հայքի մեջ», իբր նահատակության վայրը։

101 Համաձայն Առաքել Դավրիժեցիի, էջ 195, այն որ վերապրեցավ կկոչվեր Աղամիր «Կայր այլև ոմն աշխարհական այր ընդ նոսա, որ էր սպասաւոր պատրեարցն, և անուն

Համաձայն քափուչինյան Հ. Կապրիել տը Շինոնի, որ XVII դարուն քսան տարիեն աւելի մնաց Պարսկաստան, հայերը շատ լույսեր տեսան իր դամբանին վրա, որոնք կվկայեն իր առաքելություններուն մասին[102]:

1615-ին իսկ Սիրենի եպիսկոպոսը, պապական այցելու Պարսկաստանի մեջ, որոշեց սկսիլ տեղեկատվություններու հավաքման գործողություն մը Հ. Կիլեերմե տե Ժեզյուի մահվան պարագաներուն մասին: Վկայություններ տրվեցան Օրմուզի մեջ 30 և 31 մարտ 1615-ին[103]: Այնուհետև, հավանաբար 27 մարտ 1616 թվակիր Պրակայի արքեպիսկոպոս և Փորթուկալի փոխարքա օգոստինյան Ալեիշո տե Մենեզըշի ուղղված նամակով մը Սպահանի բոկոտն կարմելյաններու վիճակավոր Հ. Թատեո տե Սան էլիզեո, առաջին տեղեկատվությունը կկատարե կյանքին և մահվան մասին Հ. Կիլեերմեյի, որ իր ընկերակիցը եղած էր Պարսկաստանի մեջ 1608-են 1611: Հ. Ժուան Թատեո տե Սան էլիզեո կհիշե նամակ մը, զոր Նախիջևանի հայ կաթոլիկ արքեպիսկոպոս տոմինիկյան Մաթեոս Երազմ[104] ուղղած էր օգոստինյան հայրերուն և իրեն, որու մեջ արքեպիսկոպոսը կհայտնե, որ տեղեկություն քաղած է նահատակության վայրին բնակիչներեն, որոնք ստույգ կերպով հավաստիք տված են, որ այդ տեղվույն վրա տեսած են մեծ շքեղանք, ինչ որ այնքան զարմացուցած է քրիստոնյաները նաև մահմեդականները, որ կուգան խոնարհելու այնտեղ: Ասիկա պատճառ եղավ որ օգոստինյան հայրերը ցանկություն հայտնեն փոխադրելու Հ. Կիլեերմեի աճյունները: Իր առաջին օրերու ընկեր Հ. Պելշիոր տոս Անժոսն է, որ հանձն առավ կատարելու այդ փոխադրությունը 1617-ին, ոչ առանց դժվարության, եթե հավատք ընծայենք Հ. Կապրիել տը Շինոնի, որ կըսե թե, թեև օգոստինյան հայրերը շահ Աբբասեն արտոնություն ստացած էին, բայց հանդիպեցան ընդդիմության «տեղվույն մարդոց»: Կրոնավորները ըս-

Նորա Աղամիր, յԱպրակունիս գեղջէն Ցռանկաց»: Պատմագիրը կավելցնե, որ անձամբ գնաց Ապարաներ, ուր «պատահեցաք և առնս այսմիկ Աղամիրիս և տեսաք զինքն և զտեղիս, և զայխոն վկրացն»:

[102] Հ. Կապրիել տը Շինոն, անդ, էջ 138—141, կակնարկե հայր Կիլեերմեյի առանց անունը տալու:

[103] Տ. վեր, ծանոթ. 98:

[104] Հայազգի Հ. Մարկոսի մահեն ետք 1607-ին, Հռոմի մեջ, Պողոս Ե պապը Նախիջևանի արքեպիսկոպոս անվանած էր Հ. Մաթեոս Երազմ, հայ, որ Իտալիա կգտնվեր, Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 394:

տիպվեցան երթալ գանգատիլ շահին, որ զինվոր տվավ իրենց օգնելու համար իրենց նպատակին իրագործման: Այսպես կրցան վերցնել մարմինը և թև մը ձգեցին Սպահանի եկեղեցիին, ուր երկյուղածությամբ կպահեին տակավին 1670-ին, Հ. Կապրիել տը Շինոնի այնտեղ բնակության միջոցին[105]: Թոքքե տո Թոմպոյի ձեռագրի մը մեջ կկարդանք նաև, որ Նախիջևանի հայ եպիսկոպոսը և իր կրոնավորներեն մեկ քանին ներկա էին փոխադրության արարողության: Իրենց ջերմեռանդությունը հանդեպ «սուրբ մարտիրոսին» այնքան մեծ էր, որ փորձեցին խաբել հայր Պելշիորը և իրեն տալ մարմինը երիտասարդ հայ ընկերոջը, որ սպանված էր Հ. Կիլեերմեի հետ և թաղված էր անոր մոտ: Բարեպաշտիկ խաբեությունը ձախողեցավ և հայ եպիսկոպոսը խնդրեց Հ. Պելշիորեն, որ իրեն տա մասունք մը. հայրը տվավ թևին մեկ ոսկորը[106]: Մարմնույն մնացյալ մասը փոխադրվեցավ Սպահան, հետո Կոա, ուր զետեղվեցավ սև քարե դամբանի մը մեջ, Կրասայի վանքին գավիթը, միասնաբար Սպահանի առաքելության նախակարապետ Հ. Ժերոնիմո տա Քրուզի և Քեթևան թագուհիին ոսկորներուն հետ[107]: 15

[105] Կապրիել տը Շինոն, էջ 138—141: Առ. Դավրիժեցի, անդ, էջ 196, կխոսի նաև Հ. «Մելքիոր»-ի առաքելության վրա՝ «Եւ ապա Մելքիորն առաքեալ է ղոմանս ի տեղին, որ հանեալ են զոսկերս Գլէլումին և զընկերին, և առ ինքն բերեալ, և ինքն ընդ իւր տարեալ ի բուն Ֆռանկիստան յերկիրն իւրեանց՝ իբրև զնշխարս մարտիրոսին»:

[106] ԹԹԱԱ, Մատ. ձեռ., թ. 581, էջ 434ր—437. տ. վեր, ծանոթ. 93:

[107] Տ. վեր, ծանոթ. 93, Առձեռն միաբանական, անդ, էջ 359: Հ. Մանուել տա Ավե Մարիա կվկայե, որ փետրվար 1813-ին տեսած է երեք գերեզմանները, ինչպես նաև Հ. Կիլեերմեյի աղոթագիրքը, որ պահված է Կոայի Կրասայի վանքի «սրբատան» ետևը: Քեթևան թագուհին, զոր փորթուկալցիները կկոչեն Կուաթևանոս, աղջիկն է Մուխրանի իշխան Աշոտանի՝ Քարթլիի Բագրատունիներու կողմնական տոհմագիծեն: Ամուսնացավ Կախեթի թագավոր Դավիթի հետ շուրջ 1581-ին, իրենց զավակ Թեյմուրազ եղավ Կախեթի թագավոր (1605—1663). Ալիշան, անդ, հատ. Բ, էջ 401, ծանոթ. 2: Քեթևան թագուհին և իր երկու թոռները Շիրազ տարվեցան իբր պատանդ: 1624-ին շահ Աբբաս Ա, կատաղած՝ երբ իմացավ, որ Թեյմուրազ ջանացած էր դաշնակցիլ թուրքերուն հետ, հրամայեց որ բռնադատեն թագուհին իսլամանալու, որ մերժեց և սպանվեցավ: Իր մասունքները, բայց ոչ ամենը, տրվեցան իր որդվույն 1628-ին փորթուկալցի օգոստինյան հայրերուն, Ամպրոզիո տոս Անժոսի և Փետրո տոս Սանքթոսի կողմե. «Նկարագրություն ճամփորդության, զոր կատարեցին Հ. Ամպրոզիո տոս Անժոս հայրը և եղբ. Փետրո տոս Սանքթոս Սպահանեն Կյուրճիստան և դեպքերը որ տեղի ունեցան այնտեղ», ԹԹԱԱ, մատ. ձեռ., թ. 731, էջ 163—171ր, հրատ. Սիլվա Րեկոյի մեջ, անդ, հատ. 12, էջ 200—233: Տ. նաև ԹԹԱԱ, մատ. ձեռ., թ. 581, էջ 428—438, ճշմարիտ պատմություն փառապանծ նահատակությանը գերապայծառ թագուհի Կաթիվեննայի, Շիրազի մեջ, նահանգային մայրաքաղաք Պարսկաստանի թագավորության, հրամանավ շահ Աբբասի 1624-ի սեպտեմ-

օգոստոս 1629 թվակիր նամակով մը, ուղղված Ֆրանսայի պապական նվիրակին, «Հավատքի տարածումը» կազմարարն, որ օգոստինյան հայրերուն չարտոներ սկսիլ Քեթևան Թագուհիին, ինչպես և Հ. Կիլեերմեյի և օգոստինյան կարգին պատկանող հայրերուն մարտիրոսացման վերաբերյալ դատաստանական հետազոտություններուն, այլ կհանձնարարե մանրամասն տեղեկագիրներ հանձնել ծեսերու սրբազան միաբանության[108]: Եվ, սակայն, հայր Ավիթապիլե և հայր Տի Սթեֆանո կշարունակեն տալ իրենց վկայությունները 10 հունիս 1633-ին[109], ուր այլևս կխոսեին երանելի հայր Կիլեերմեյի մասին: Լիզպոնի Թորրե տո Թոմպոյի արխիվներուն մեջ կգտնենք նաև գրավոր վկայությունը Օգոստինոս Պաճեցիի, տոմինիկյան կարգեն հայ արքեպիսկոպոս Նախիջևանի, կատարված 4 ապրիլ 1633-ին Սպահանի մեջ[110]:

Հ. Կուվեյիա հետևյալ մանրադեպը կպատմե Հ. Կիլեերմեյի[111] մասին: Շահը հարցուցած ըլլալով, թե ե՞րբ պիտի մեկներ Հ. Կուվեյիա, այս վերջինը պատասխանեց, թե կսպասե որ կատարե Քրիստոսի ծընընդյան տոնին արարողությունը, որ տեղի պիտի ունենար հաջորդ օրը 25 դեկտեմբեր 1608-ին: «Վաղը, հարցուց շահ, Քրիստոսի ծնո՞ւնդը կտոնեք, հայերը Քրիստոսի ծնունդը և մկրտությունը կտոնեն 16 հունվարին[112]: Հ. Կուվեյիա պատասխանեց, թե այդպես է, բայց կարևոր չէ որ ազգ մը այդ տոնը կատարե օր մը, ուրիշ ազգ մը տարբեր օր մը, քանի որ նույնն է մտադրությունը, որ է պատվել և մեծարել Աստված, ինչ որ գլխավոր նպատակն է, որուն համար քրիստոնյաները կկատարեն այդ տոնը: Շահը հարցուց, թե այդ տոնը իր հողին վրա

բեր 22-ին, գրված Հ. Ամպրոզիո տոս Անժոսի կողմե, կրոնավոր ս. Օգոստինոսի կարգեն: Քեթևան Թագուհին Վրաստանի եկեղեցվույն սուրբերուն կարգը դասվեցավ: Իր նշխարներուն մասին վրացական պատմության համար տեսնել Ջ. Ավալիշվիլի, *«Թեյմուրազ Ա և մարտիրոսագրություն Քեթևան Թագուհիին» քերթվածը Ժորժիա հանդեսին մեջ, թ. 4, և 5, էջ 17—42:*

108 Ք. Ալոնսո, *էջ 248:*

109 *Նույն, էջ 168:*

110 *ԹԹԱԱ, Մատ. ձեռ., թ. 731, էջ 291—292, հրատ. Ք. Ալոնսոյի կողմե, անդ, էջ 264—265: Նշանավոր այս եկեղեցականը՝ Օգոստինոս Պաճեցիի (Բաջեցի) ազգանունը եվրոպական աղբյուրներում ներկայացված է այլազան տառադարձությամբ՝ Պաժենց, Փասենսիս, Պաժինենսիս, Պաժիզզի, Պասքրի են, տ. աստ, ծանոթ. 170,* Ուտեներիյե, *անդ, էջ 175:*

111 Կուվեյիա, *էջ 208:*

112 *6 հունվարին և ոչ 16 հունվարին հայերը կտոնեն Քրիստոսի ծնունդը և մկրտությունը:*

այնպե՞ս կկատարեն ինչպես Փորթուկալի մեջ, որու Հ. Կուվեյիա պատասխանեց, որ անխուսափելի է, որ քանի մը տարբերություններ ըլլան, «որովհետև մեր երկրին մեջ թագավորը և իշխանները կմասնակցին ներկա ըլլալով արարողություններուն»: Շահը պատասխանեց, որ չէր ուզեր զիրենք զրկել այդ սովորութենեն և հետևաբար հաջորդ օրը պիտի երթար կրոնավորներուն տունը: Այդ պահուն Հ. Կիլեերմե իր ընկերներեն մեկուն ականջին բսավ. «Միշտ պիտի պակսի մեզի բան մը, զոր պարսիկները չունին, այն է նորածին խոզ մը համաձայն Փորթուկալի սովորության»: Շահը տեսնելով, որ անոնք կխնդան, հարցուց Հ. Կիլեերմեի թե ի՞նչ փսփսացած էր, բայց Հ. Կիլեերմե չէր համարձակեր կրկնել բսածը: Շահ Աբբաս պնդեց, այնպես որ Հ. Կիլեերմե հայտնելով եղածը Հ. Կուվեյիային՝ այս վերջինը բսավ շահին, թե իր բարձրապատվությունը հարցուցած էր, թե արդյոք այս տոնը իրեն երկրին մեջ եղածի՞ն պես կկատարեն, հայրերեն մեկը հիշած է խոզերը, զոր այդ միջոցին սովորություն ունին մորթելու, բայց Պարսկաստանի մեջ չեն կրնար նույնը ընել, քանի որ այնտեղ խոզ չկա: «Կսխալիք, պատասխանեց շահը, այստեղ ալ խոզ կա, որովհետև Վրաստանի իշխանը ինծի ղրկած էր չեմ գիտեր քանի՞ հատ, զորս կըպահեմ մերձակա գյուղի մը մեջ»: Եվ կանչելով սեննկապետը, հրամայեց, որ քանի մը խոզ տրվի եկեղեցականներուն, ինչ որ կատարվեցավ նույն օրն իսկ: Երբ կտանեին, կենդանիին իր խռնչյունները ոտքի հանեցին դրացիները, որոնք առաջին անգամ խոզ մը տեսնելով սկսան հավաքվիլ և հետևեցան մինչև վանքը: Այնտեղ խոզը մորթվեցավ ի մեծ ցնծություն հոն գտնվող փորթուկալցիներուն և ներկաները—անշուշտ հայեր,—որոնք փափաքեցան ճաշակել, այնքան բազմաթիվ էին, որ հայրերը ստիպվեցան սեննկապետին խնդրել, որ ուրիշ մըն ալ ղրկե:

ՀԱՅՐ ՊԵԼՇԻՈՐ ՏՈՍ ԱՆԺՈՍ

Հայր Պելչիոր տոս Անժոս, բուն անունով Պելչիոր Սոարես, ծնած Լիզպոն, ս. Օգոստինոսի միաբաններու կարգին մեջ մտավ 26 դեկտեմբեր 1586-ին, երբ 24 տարեկան էր և եկեղեցական ձեռնադրվեցավ Կոայի վանքին մեջ 1587-ի վերջը։

Ցելիշ տե Ժեզյու կըսե թե Հայր Պելչիոր քսան տարի ապրած էր Հնդկաստանի մեջ, երբ Լուիս Փերեյիրա տե Լասերտայի ընկերանալու պաշտոն ստացավ թե քարոզիչ էր և ուներ Թագավորին կողմե պահանջված հատկությունները այս պաշտոնին համար. մշակված, առաքինի և խոհեմ, վստահ իր կրոնքին, կատարելով ամեն ինչ օրինակելի և չափավոր կերպով։ Լավ գիտեր պարսկերեն և թուրքերեն լեզուները[113]։

Առաջին ճամփորդութենե մը ետք Պարսկաստանի մեջ 1604 և 1605 տարիներուն, իբր անդամ Լուիս Փերեյիրա տե Լասերտայի դեսպանության, Հ. Պելչիոր տոս Անժոս վերադարձավ Կոա, ուր մնաց մինչև 1608։ Հնդկաստանի փոխարքա Տոն Ժոան Փերեյիրա, կոմս Ցեյիրայի, զինքը Պարսկաստանի դեսպան անվանեց 1608-ին։ Հետաքրքրական է նկատել նամակներու հետևյալ փոխանակությունները ընդմեջ Ֆիլիփ Գ Թագավորին, Հնդկաստանի արքեպիսկոպոս կառավարիչ Ալեյշո տե

[113] Ֆ. տե Ժեզյու, անդ, էջ 76բ. կըսե թե Հայր Պելչիոր Ջուղայի Հայոց խոսեցավ քարոզ մը պարսկերեն լեզվով, զոր լավ գիտեր։ Հ. Պելչիոր ինքն ալ կըսե թե գիտեր թուրքերեն, տ. «Ծառայությունները զորս Հ. Մելշոր տե լոս Անժըլես մատույց նորին վեհափառության Պարսկաստանի մեջ» (սպան.), առանց թվականի, հավանաբար սկիզբ 1614-ի, Արխիվ Սիմանքասի, Հին պետական թղթածրար 255, հիշված Զաքարիաս Նովոայի կողմե, «Գերապատիվ Հ. Մելշոր տե Լոս Անժըլոս, ս. Օգոստինոսի կարգեն, առաջին միսիոնար Պարսկաստանի մեջ (սպան.), Օգոստինյան արխիվներու մեջ, Մադրիտ, 1951, հատ. ԽԴ, էջ 270։ Հոդվածին վերնագիրը երկբայելի է, որովհետև Հ. Պելչիոր առաջին միսիոնարը չեղավ Պարսկաստանի մեջ, թեև ինք կհավակնի (սխալմամբ) թե այդ երկիրը եղած է 1602-ին Լուիս Փերեյիրա տե Լասերտայի հետ, նույն, 269։

Մենեզըշի և նախորդ փոխարքա Տոն Մարթիմ Աֆֆոնսո տե Քասթրոյի, որոնք հանգեցան իր անվանումին։

3 հունվար 1608 թվակիր[114] նամակի մը մեջ Ֆիլիփ Գ Թագավորը կանդրադառնա Հնդկաստանի արքեպիսկոպոս կառավարիչ Ալեյշո տե Մենեզըշի 24 դեկտեմբեր 1616 թվակիր նամակին, որով այս վերջինը իրեն կըսեր նույն տարին Պարսկաստան գացած կրոնավորներուն առընչությամբ, որ իր ծառայության համար օգտակար է, որ անոնք միշտ երթան երկուքով և թե պետք է ուղեկցեն շահին, երբ ան կրացակայի Սպահանեն, որպեսզի կարենան անոր ներկայացնել Թագավորին գործերը։ Նույնպես պետք է Թագավորը տեղյակ պահեն կարևոր խնդիրներու մասին, լրացնելու համար դեսպանի մը ներկայության պակասը, ու նաև այն նկատումով, որ շահը համարում ունի հանդեպ այս կրոնավորներուն, որոնց կլսեն ինքը և իր արքունիքին մեծերը։ Ոչ անոնք որ Սպահանի վանքին մեջ են, և ոչ ալ անոնք որ կշրջին դրաղելու համար հայերով, չեն կրնար կատարել նման ծառայություն մը։ Թագավորը կխորհի, թե արքեպիսկոպոսին հայտնած կարծիքը շատ տեղին է, հետևաբար փոխարքային կըսե թե պետք է ընել այնպես, որ երկու կրոնավորներ ընկերանան շահին և ունենան անհրաժեշտը որպեսզի անկախ ըլլան անոր հանդեպ։

1607-ի հունիսին Հայր Տիոկո տե Սանթա Անա, ընկերակցությամբ Հայր Պերնարտո տե Ազևետոյի, գնաց գտնելու շահը, որ կկռվեր Շամախիի շրջանին մեջ։ Այս այցելության նպատակն էր ստանալ շահին հավանությունը հայերու ենթարկումին հռոմեական եկեղեցիին և պապին[115]։

Հ. Տիոկոյի կողմե ներկայացված խնդրանքին շահը սկիզբեն ընդդիմություն ցույց չտվավ։ Օգոստինյան հայրերը մասնավոր կերպով լավատես կերևեին իրենց հետ տանելու շահին ֆերմանը, որ թույլ պիտի տար իրագործել այս միացումը։ Սակայն վերջնական պատասխանը կուշանար։ Այդ միջոցին է, որ շահը իմացավ Հալեպեն եկող վաճառականներեն, որ թուրք սուլթան Ահմետը և Ռոտոլֆ կայսրը խաղաղություն կնքած էին։ Խոստման այս խզումը քրիստոնյա իշխաններու լիգային անդամներուն մեկուն կողմե զայրացուց շահը և աղետալի

[114] Հնդկաստանի վավերաթուղթեր, հատ. Ա, վավ. 59, էջ 109—170։

[115] Տիոկո տե Սանթա Անա, անդ, էջ 69բ—72։

հետևանքներ ունեցավ Պարսկաստան գտնվող միսիոնարներուն հետ հետագա հարաբերություններուն վրա[116]։

Շահը ժամը եկած համարեց երկու կրոնավորներուն ըսելու իր մըտածումը. «Մինչդեռ քրիստոնյա իշխանները իրենց խոսքը կդրժեն, դուք կուզեք եկեղեցինե՞ր ունենալ իմ թագավորությանս մեջ։ Կուզեք որ ձեզի՞ ենթարկեմ հայերը։ Կուզեք ձեր զանգակները հնչեցնել հրապարակա՞վ Կասկածե դուրս է, որ լավ չեմ ըներ չկոտրելով ձեր զանգակները, չքանդելով ձեր եկեղեցիները և ձեզի չարտաքսելով իմ թագավորութենես։ Ձեզմե և ձեզի այստեղ ղրկող իշխաններեն ավելի քան չստացա եթե ոչ խոսքեր, նամակներ, իսկ արարքները այն են, ինչ որ աՀա կտեսնենք»[117]։

Գրեթե նույն ատեն, Ֆիլիփ Գ նամակով մը, որ Կոա հասած էր սեպտեմբեր 1607-ին, հրամայած էր, որ օգոստինյան կարգեն երկու կրոնավորներ շահին ընկերանան իր տեղափոխություններուն ընթացքին։ Կոայի արքեպիսկոպոս Ալեյշո տե Մենեզըշ, նահանգային վիճակավորին հետ, ընտրած էր հ. Կուվեյիան և հ. Կիլեներմեն, որոնք Կոայեն մեկնեցան փետրվար 1608-ին և Սպահան հասան հունիսին[118]։

26 մարտ 1608-ին[119] Ֆիլիփ Գ վերստին կգրեր նույն հարցին վերաբերմամբ և կհանձնարարեր հ. Պելշիոր տոս Անժոսը, որ թագավորին ուղղված իր նամակներով և այս վերջնույն ուրիշ աղբյուրներե քաղած տեղեկություններով կհայտնվեր իբր կրոնավոր մը, որ լավատեղյակ էր պարսկական գործերուն, խելացի և հարգված պարսկական արքունիքին մեջ։ Հետևաբար լավ էր, որ ան ըլլար մեկը շահին մոտ մնացող երկու կրոնավորներեն և իր բոնելիք ընթացքին մասին ստանար իր հրահանգները։ Թեև ընտրված մյուս կրոնավորները արդեն մեկնած էին, հ. Պելշիոր, որ Կոա վերադարձած էր մարտ 1606-ին դեսպան Լասերտայի հետ, կրկին գնաց Պարսկաստան, դիվանագիտական առաքելությամբ։

Ֆիլիփ Գ-ի հրամանով մինչև Թավրիզ ընկերացավ պարսիկ դեսպան Փաքիզե Իմամկուլի պեկի, որ կվերադառնար Սպանիո իր դեսպանութենեն[120]։ Դեկտեմբեր 1609-ին կոչվեցավ Սպահանի վանքին մեծավորի պաշտոնին, ուր 1612-ին իրեն հաջորդեց հ. Պեռնար տե Ազեվետո։ Այդ տարիներուն հ. Պելշիոր նկատվեցավ իբր պաշտոնական դեսպան շահ Աբբաս Ա-ի արքունիքին մեջ և իբր խորհրդական Սպանիո թագավորին[121]։ 1613-ին ցամաքի ճամփով կերթար Սպանիա շահին կողմե մասնավոր առաքելությամբ մը[122]։ Հասկնալու համար այս ուղևորության պատճառները, պետք է հինգ տարի ետ երթալ և վերստին անդրադառնալ հ. Կուվեյիայի երրորդ դիվանագիտական առաքելության Պարսկաստանի մեջ։ Երբ այս վերջինը 1608-ի ամռան կգտնվեր շահին բանակատեղիին մեջ Համատանի մոտ, այնտեղ հասավ Տոմինիքո Սըրոփինե[123], Օրմուզի բնիկ, զոր շահին մոտ կուղարկեր Նափոլիի փոխարքա կոմս Պենավենդե։ Իր առաքելության նպատակն էր համոզել շահը այն քաղաքական և տնտեսական առավելություններուն մասին, զորս կարելի էր քաղել շեղեցնելով մետաքսի ճամփան, որ Եվրոպա կհասներ անցնելով թրքական հողերեն, դեպի նոր ծովային ճամփան, որ Օրմուզեն կերթար Լիզպոն։ Մետաքսը այնուհետև Փորթուկալեն պիտի բաշխվեր դեպի եվրոպական մյուս երկիրները։ Այս ծրագիրը հղացած էր էնթընի Շըրլեյ, որ կրցած էր շահիլ Սպանիո արքունիքին բարեացակամությունը և թշնամի ըլլալե ետք դարձած էր խորհրդական Նափոլիի փոխարքային, Պենավենդեի կոմսին։ Այս վերջինը ուրեմն Պարսկաստան ուղարկած էր Տոմինիքո Սթրոփենեն, իր և էնթընի Շըրլեյի կողմե գրված նամակներով, ուղղված շահին և իր եղբոր Ռոբերթի, որ արդեն Եվրոպա հասած էր երբ բանագնացը հասավ Պարսկաստան[124]։ Մետաքսի առևտուրը կսկսեր շահագրգռել եվ-

[116] Նույն, էջ 72—76։

[117] Կուվեյիա, անդ, էջ 160—169։

[118] Նույն, էջ 170։

[119] Հնդկաստանի վավերաթուղթեր, հատ. Ա, վավ. 78, էջ 237—238։

[120] Կթվի թե Փաքիզե Իմամկուլի պեկ Սպանիա վերադարձավ քանի մը տարի ետք, տանելով շահ Աբբաս Ա-ի 1614 թվակիր մեկ նամակը Ֆիլիփ Գ-ի։ Հավելված Փարիզի Ազգ. մատենադարանին սպանիական ձեռագիրներուն, վավ. 456, էջ 28 («Պատճեն ուրիշ նամակի զոր գրեց Ալպահա շահ Աբբաս Ա, թագավոր Պարսկաստանի»)։

[121] Անրանիո տե Մորաըշ, Առաքելություններ, անդ, տ. Սիլվա Րեկո, հատ. ԺԲ, էջ 189։

[122] Հ. Պելշիոր ճամփորդեց Սպահանի վանահայր Ժոան տե Սան Ժոզեյի (կամ տե Սանթո Ակոսթինիոյի) և երկու ծառաներու հետ, ձերբակալվեցավ Աղեքսանտրեթի կառավարիչին կողմե իբր լրտես։ Ազատ արձակվելե ետք շարունակեց իր ճամփորդությունը, որ տևեց չորս ամիս և վեց օր, հասնելով Սպանիո արքունիքը 1614-ի սկիզբը, Ջաքարիաս Նոլաս, էջ 271—272։

[123] Եղբ. Փոլ Սիմոն, կարմելյան, որ իրեն հանդիպեցավ Հալեպի մեջ մայիս 1608-ին, զայն կկոչե Տոմինիքո Ֆերնանտեզ, Կարմելյաններ, էջ 139։

[124] Ռոպըրթ Շըրլեյ Հռոմ մեկնած էր փետրվար 1608-ին։ Հռոմեն Մատրիտ մեկնեցավ և վերադարձավ Հռոմ 1610-ի հուլիսին վերջը։ Ձինքը Անգլիա կգտնենք հոկտեմբեր 1611-ին, Կարմելյաններ, էջ 155։ ԹՓԱԱ-ի մեջ կա վավերագիրներու շարք մը Սպանիո մեջ Ռ. Շըրլեյի առաքելության մասին Կարտայի վանքը, սնտուկ 6, հատ. 2, էջ 423—

րոպական մեծ պետությունները: Առաջարկը շահին թվեցավ հետաքրքրական և բարեպատեհ: Որոշեց տալ անոր և ուրիշներուն օրինակ ըլլալու համար, հավաքել տված Սպահանի մեջ իրեն պատկանող ամբողջ մետաքսը և հանձնեց վաճառականի մը, խոճա Ռաժապո, որ պիտի ընկերանար իր դեսպան Տենկիզ պեկին: Այս վերջինը Հ. Կուվեյիայի հետ կերթար Սպանիա և Հռոմ, պաշտոն ունենալով համոզելու պապը և Ֆիլիփ Գ-ը պատերազմելու Թուրքիո դեմ, «ինչպես որ խոստացած էին»: Ըլլալով առաջինը, որ կձեռնարկեր օգտագործելու առևտրական այս նոր ճամփան, շահ Աբբաս Ա կհուսար, որ վստահություն պիտի ներշնչե հայ և պարսիկ վաճառականներուն իր օրինակին հետևելու համար[125]: Ապագային համար՝ շահ Աբբաս կառաջարկեր Սպանիո թագավորին, որ ներ-

425. «Պատճեն նամակին զոր Ն. Վեհափառության տված Տ. Ռոպերթո Շըրլեյ՝ Պարսկաստանի թագավորին կողմե ուղարկված դեսպանին անշուկությամբ», իտալերեն բնագիր 13 փետրվար 1610. Կոմս Տ. Ռոպերթո Շըրլեյ կնքեց տպագրված փոքր կնիքով մը ստորագրության տակ: Նույն, էջ 427—430, «Հոդվածներ և պայմաններ զորս կառաջարկե Պարսկաստանի թագավորին դեսպան կոմս Տ. Ռոպերթո Շըրլեյ՝ Նորին Վեհափառության և հիշյալ թագավորին միջև տեղի ունեցող առևտուրին մասին»: Այս վավերաթուղթին վերջավորությունը կկարդանք. «Նամակ Տ. Ռոպերթո Շըրլեյի, դեսպան Պարսկաստանի թագավորին, մետաքսի առևտուրին մասին. տուրքեր և ուրիշ հարցեր նույն առևտուրին վերաբերյալ, փոխարքային ուղարկված Ն. Վեհափառության 31 հոկտեմբեր 1618 թ. նամակին հետ»: Նույն, էջ 421—429. «Ցանկ խաղաղության և զինակցության պայմաններուն, որոնց համար դեսպան Տ. Ռոպերթո Շըրլեյ կըսե թե ընդունելի են իր կողմե»—լուսանցքի մեջ. Դիտողություններ գումտատալին կողմե: Նույն, էջ 443—444: Պատասխան Նորին Վեհափառության կողմե Տոն Ռոպերթո Շըրլեյի, 3 մարտ 1610, Մատրիտ, Անտրեստե Փրատա: Նույն, Թուղթ նույն նյութին մասին (մետաքսի առևտուր Օրմուզի ճամփով): Նույն, էջ 451—453. «Թուղթ Օրմուզի մաքսին մեջ վճարելի տուրքերուն մասին Պարսկաստանեն արտահանվող մետաքսին վրա»:

125 Ըստ Պելլանի, անդ, էջ 175—210, շահ Աբբաս նույն ատեն 50 բեռ մետաքս հանձնած էր խոճա Սաֆար անուն հայու մը, որպեսզի այս վերջինը ծախե զայն Եվրոպայի մեջ: Հ. Կուվեյիայի պնդումներուն վրա, Տենկիզ խան համոզած էր խոճա Սաֆարը իրեն վստահելու 50 բեռ մետաքսը, զոր նվիրած էր Ֆիլիփ Գ-ին: Մինչ Կուվեյիա և Տենկիզ Սպահան վերադարձան 1613-ի գարնան, խոճա Սաֆար Ազարիա գնաց Վենետիկ 1610-ին, ուր կրցավ ձեռք անցնել շահին պատկանող ապրանքներ, զորս հանրապետությունը վերադարձուց իրեն: Ավելի ետք լավ ընդունելություն գտավ Հռոմի մեջ, ուր ստացավ կոմսի և ասպետի տիտղոս, և Պողոս Ե պապը իրեն հանձնեց 9 հուլիս 1610 թվակիր նամակ մը շահ Աբբասի ուղղյալ, բայց այս նամակը շահին հասավ 1619-ին միայն, որովհետև խոճա Սաֆար (վախնալով անտարակույս պարսիկ վեհապետին հետ դեմ դիմաց գալե) գնաց Հնդկաստան և Մոկոլին արքունիքը Պարսկաստան վերադառնալե առաջ: Լիզպոն էր 1612-ի դեկտեմբերին և դեռ այնտեղ կգտնվեր նոյեմբեր 1613-ին, Կարմելյաններ, էջ 192—193:

կայացուցիչներ ղրկե Օրմուզ որպեսզի գնեն բոլոր այն մետաքսը, որ սովորություն ուներ Թուրքիո ճամփով ուղարկելու և կառաջարկե նույնպես որ պարսիկ և հայ վաճառականները ազատություն ունենան Կոա երթևեկելու[126]:

Տենկիզ պեկ, հայր Կուվեյիա և խոճա Ռաժապո Սպահանեն մեկնեցան 1608-ի դեկտեմբերի վերջը, իրենց հետ ունենալով շահ Աբբասի 8 նոյեմբեր թվակիր նամակը, որով Սպանիո թագավորին կտեղեկացներ, որ որոշած է թուրքերը զրկել մետաքսի առևտուրին շահեն, զոր կուզե տալ Ն. Վեհափառության հպատակներուն, որոնք պատրաստ են օգտագործելու Օրմուզի ծովային ճամփան: Երկու բանագնացները ջերմորեն ընդունվեցան Սպանիո արքունիքեն և դեսպանը, իբրև վեհանձն մեծատուն, ընծայեց մետաքսը Ֆիլիփ Գ-ի[127], առանց շատ ծանրանալու շահ Աբբասի սպասած փոխադարձության վրա և խոսեցավ իր առաքելության նպատակի մասին, այն է մետաքսի առևտրական ճամփուն փոփոխումը և թուրքերուն դեմ զինակցությունը:

Շահ Աբբաս ամենամեծ անհամբերությամբ կսպասեր Տենկիզ պեկի և Հ. Կուվեյիայի վերադարձին, իր հաշիվները կատարելու և տեսնելու համար գործողության շահը կամ վնասը, բաղդատմամբ փոխադարձաբար իրեն ուղարկված նվերներուն արժեքին և մետաքսին վաճառման արդյունքին: Տենկիզ պեկ և Հ. Կուվեյիա Օրմուզ մեկնեցան Կոայեն 10 փետրվար 1613-ին, բեռնավորված Ֆիլիփ Գ նվերներով, որոնց վրա Հնդկաստանի փոխարքան ավելցուցած էր բնության արտադրություններ, ինչպես կասիա, մեխակի հատիկ, ընկույզ, խնձոր, ղարապղպեղ, ամենն ալ ուղարկված առանց փոխադրության ծախքի և մաքսային տուրքի, հանձնելի Պարսկաստան, և որոնց արժեքը փոխարքա-

126 Կուվեյիա, էջ 178—186:

127 Արձանագրություն Օրմուզի մաքսատան՝ շահ Աբբասի կողմե Փորթուկալի թագավորին ուղարկված մետաքսին մասին, 1613, ԲԲԱԱ, ժամանակագրական հավաքածո, մաս Ա, ծրար 116, վավ. 2, հրատարակված Փորթուկալյան հնախոսության մեջ, Լիզպոն, 1904: Այս արձանագրությունը, որ Օրմուզի մեջ խմբագրված է 10 օգոստոս 1613-ին կըհաստատե, որ համաձայն 1609-ի տոմարներուն, 10 ապրիլ 1609 թվականով արձանագրված է, որ դեսպան Տենկիզ պեկի և վաճառական խոճա Ռաժապոյի (նույն վավերաթուղթին մեջ կոչված նաև խոճա Ռակա Պոթոնի) կողմե փոխադրված բեռը, բաղկացած 25 հակ Կիլանի և 61 հակ Խորասանի մետաքսե, համաձայն շահագրգռյալներուն հայտարարության, Պարսկաստանի թագավորին տուրքե ազատ նվերն է սահմանված Ֆիլիփ Գ-ի և ոչ թե ապրանք մը: Տ. նաև Կարմելյաններ, էջ 206—208, որ կհիշե Կարմելյան եղբ. Ռոտան տը լա Քռուայի մեկ տեղեկագիրը:

ժերոնիմո կգնահատե իբր 15.000 շերաֆին։ Տենկիզ պեկ Օրմուզեն Սպահան[128] մեկնեցավ առանց Հ. Կուվեյիայի ընկերակցության, որովհետև այս վերջինը Սպահանի հայրերեն իր ստացած լուրերուն լույսին տակ տեղեկացած էր շահին տրամադրություններուն իրեն հանդեպ և նախամեծար համարած էր հետաձգել իր վերադարձը։ Իրավ ալ անմիջապես որ շահը ծանոթացավ կացության սպաննել տվավ Տենկիզ պեկը[129]։

1613-ի ամռան, Կուվեյիա ստիպվեցավ սակայն համակերպելու շահին ներկայանալու անհրաժեշտության. իրեն հետ ուներ Ֆիլիփ Գ-ի 17 մարտ 1612 թվակիր նամակը, որով այս վերջինը Պարսկաստանի թագավորին կտեղեկացներ թե դեսպան մը նշանակած էր հատկապես բանակցելու համար իր գործերուն մասին, որ սակայն ժամանակ չէր ունեցած նավ նստելու Տենկիզ պեկի և Սիրենի եպիսկոպոս Տ. Անթոնիո տե Կուվեյիայի հետ[130]։ Շահ Աբբաս պահանջեց մետաքսին արժեքը և անոր բաղադրյալ տոկոսը, որովհետև մզկիթի մը նվիրած էր այդ դրամը։ Կուվեյիա եպիսկոպոսը, արդարանալու համար, ցույց տվավ Օրմուզի մաքսատան հաստատագիրը, որով Տենկիզ պեկ և խոճա Բաժապո միասնաբար հայտարարած էին և ստորագրած էին, որ մետաքսի բեռը ապրանք մը չէր, այլ Պարսկաստանի թագավորին նվերը Փորթու-

[128] Տեղեկատու ՓԱՖ-ի, թ. 4, էջ 709—710, անթվակիր նամակ փոխարքային Ֆիլիփ Գ-ի։

[129] Է. Ճ. Պրաուն, Գրական պատմություն Պարսկաստանի (անգլ.), 4 հատ., Քեմպրիճ, 1928, հատ. 4, էջ 6—7. պարսկերենե ձեռագիր մը «Ալամ-արա-ի Աբբասի», 1613—1614 տարվան համար կպատմե, որ Տենկիզ պեկի սպանութենեն հետո շահ Աբբաս բացատրեց սպանիացիներուն, թե այդպես շարժած է իբր հետևանք անոր դավաճանական արարքներուն և հարգանքի պակասին, զոր ցույց տված է իր առաքելության ընթացքին, ինչպես արքայական կնիքով փակված նամակներու բացում, հրապարակում անոնց բովանդակության, սուգ պահել Սպանիո թագուհիին մահվան առթիվ, վաճառում առևտրականի մը՝ պալատին ուղղված իր դեսպանական հավատարմագրերուն շահը ներկայացնելու իրավասությամբ, ապահովելով շահեր այս գործողութենեն։ Բայց շահը կեզրակացներ. «Գլխավոր հանցանքը և իր պատժվելուն մեծագույն պատճառը եղավ իր գեշ վարմունքը հանդեպ իր պատգամավորության անդամներուն, զորս անարգեց այնքան, որ շատեր անոնցմե քրիստոնեությունը ընդունեցին և Եվրոպա մնացին խուսափելու համար իր բռնություններեն, այնպես որ իսլամական ջերմեռանդության պահանջն էր պատժել զինքը և այսպես գտավ իր արժանի վախճանը»։

[130] Սիրենի եպիսկոպոս օծվեցավ Լիզպոնի Տիրամայր Կրասայի վանքին մեջ 26 դեկտեմբեր 1612-ին, տ. Սիլվա Րեկո, հատ. ԺԲ, էջ 59—60։

կալի թագավորին[131]։ Շահ Աբբաս ալ ավելի զայրացավ և ստիպեց եպիսկոպոսը, ուրիշ օգոստինյան եկեղեցականի մը հետ (հավանաբար Հ. Պելչիորը) գրելու Ֆիլիփ Գ-ի այս խնդրին մասին։

Այս միջոցին է, որ Հ. Պելչիոր հանձն առավ, շահ Աբբասի հրամանով, այս նամակը տանելու և Սպանիա երթալու ցամաքի ճամփով և հասկցնելու Սպանիո արքունիքին, որ պարսիկ վեհապետը կսպասեր իր մետաքսին փոխարժեքը զոր սահմանած էր՝ բարեպաշտական նպատակի մը։

Մինչդեռ Հ. Պելչիոր արդեն մեկնած էր, շահ Աբբասի խռովություն պատճառեց այն իրողությունը, որ Սիրենի եպիսկոպոսը կկրեր նաև «Հայոց առաքելական այցելուի» տիտղոսը։ Այս վերջինը հայ քրիստոնյաները կկոչեր իր «հոտը»։ Շահ Աբբաս համարեց, որ չափազանցություն մըն էր ասիկա հանդեպ իր սեփական հպատակներուն։ Հայր Կուվեյիա տեսնելով որ կացությունը կծանրանար, որոշեց անհապաղ մեկնիլ։ Պատճառ բռնեց, որ Ֆիլիփ Գ իր 17 մարտ 1612-ի նամակին մեջ ծանուցած էր դեսպանի մը անվանումը, որ ժամանակ չէր ունեցած Տենկիզ պեկի և Հ. Կուվեյիայի հետ նավով մեկնելու։ Դեսպան Ֆիկուերոա, որ պիտի գար, փրկությունն էր Կուվեյիայի որ պարտավոր էր զայն դիմավորելու։ Կուվեյիա Սպահանեն մեկնեցավ 21 հոկտեմբեր 1613-ին սակավաթիվ հետևորդներով և բազում կառքերով ընդունելու համար դեսպանը, որ Սպահան հասավ ապրիլ 1618-ին միայն։

Սիրենի եպիսկոպոսին մեկնումեն ետք հետևանքները չուշացան ի հայտ գալ. շահը սպառնաց բռնի իսլամացնել իր թագավորության բոլոր հայերը։ Ոչ միայն հայոց, այլ և կաթոլիկ միսիոնարներուն մեջ այնպիսի ահուդողի մթնոլորտ մը ստեղծվեցավ, որ չգրգռելու համար շահին սրտմտությունը օգոստինյան Կիլեերմե տե Ժեզյու և Պերնարտո տե Ազևետո հայրերը[132] որոշեցին թողուլ Սպահանի վանքը նոյեմբեր

[131] Կթվի թե Ֆիլիփ Գ կգիտակցեր, որ իր փոխադարձ նվերը համապատասխան պետք էր ըլլար պարագաներուն։ Հնդկաստանի փոխարքային ուղղված իր 17 մարտ 1612 թվակիր նամակին մեջ Հնդկաստանի վավերաթուղթեր, հատ. Բ, էջ 222—224, կհրահանգեր, որ փոխարքան ցուցակին մեջ նշանակվածներուն կրկինը գնե և թե ամեն ինչ լավագույն որակով ըլլա, «որովհետև իրեն համար կարևոր է, որ իր նվերը գերազանց արժեք ունենա, քան շահին իրեն ուղարկածը, և թե հակառակ պարագային կկորսնցնենք մեր վարկը»։

[132] Հ. Պերնարտո տե Ազևետո Սպահանի վանահայր եղավ 13 նոյեմբեր 1612-են 5 դեկտեմբեր 1616։ Մեռավ Պարսկաստանի մեջ 1620-ին, Ս. Րեկո, հատ. ԺԲ, էջ 267։

1613-ին, անոր պաշտպանությունը առժամապես հանձնելով բոկոտն կարմելյան հայրերուն։

Հայր Պելչիոր Պարսկաստան վերադարձավ 1615-ի գարնան բերելով խուսափողական պատասխան մը, այն է թե Լիզպոն կգտնվեր պաշտոնական դեսպան Տոն Կարսիա տա Սիլվա ի Ֆիկուերոա, որ պիտի գար ծովու ճամփով իր հետ բերելով շքեղ նվեր մը[133]։ Շահ Աբբաս անգամ մը ևս զինվեցավ համբերությամբ, բայց կսկսեր արդեն աչք նետել Օրմուզի վրա, որու ամրոցը այնքան մեծ համբավ կվայելեր, ինչպես իր մաքսային հասույթները, այն աստիճան որ շատ անգամ իր շուրջիններուն կըսեր, թե «նույնիսկ եթե պետք ըլլա զոհել իր թագավորության կեսը՝ պիտի գրավեր Օրմուզը»[134]։

1616-ին Հ. Պելչիոր երկրորդ անգամ մըն ալ անվանվեցավ Սպահանի վանահայր։ Իբր այդ 1617-ին զբաղեցավ Հ. Կիլեերմեյի նշխարներուն փոխադրությամբ, նախ Սպահան և ավելի ետքը Կոա։

Նույն տարվո նոյեմբերին, Օրմուզի ճամփուն վրա Լար քաղաքին մեջ, Հ. Պելչիոր հանդիպեցավ Սպանիո դեսպան Տ. Կարսիա տա Սիլվա ի Ֆիկուերոայի որ կերթար պարսկական արքունիքը դարձյալ փորձելու համար որ Սպանիո վերադարձվին Պահրեյնը, ինչպես և Քիշմ[135] կղզին և Կոմրոնի ամրոցը, որոնք գրավված էին պարսիկներեն։ Ֆիկուերոայի և Հ. Պելչիորի այս հանդիպումը նախաբանը եղավ շարք մը դեպքերու, որոնց հետևանքով հետագային դեսպանը տարվեցավ գանգատելու, թե հայրը, Օրմուզ հասնելուն, բերդին փորթուկալցի հրամանատարին հետ հասկացողության եկավ իր դեսպանական առաքելության վնասելու նպատակով[136]։ Իրողություն է, որ Հայր Պելչիոր դարձյալ Պարսկաստան կգտնվեր 1619-ի ամառը։ Կբերեր Ֆիլիփ Գ-ի մեկ նամակը, զոր Փորթուկալի գերագույն խորհուրդը ուղարկած էր ցամաքային սուրհանդակով և որ կվերաբերեր Ռ. Շըրլեյի առաջարկության մետաքսի առևտուրին մասին, ինչպես և պատերազմական նավատորմի մը, զոր Սպանիո թագավորը կուզեր ղրկել Թուրքերուն դեմ Կարմիր ծովուն մեջ։ Փորթուկալի գերագույն խորհուրդը հրամայած էր, որ Հ. Պելչիորի հանձնվի նամակը տանելու պաշտոնը և հետևաբար դեսպանը ուրիշ բան չէր կրցած ընել, եթե ոչ ուղարկել Հ. Պելչիորը Ֆարահապատ, Կասպից ծովուն ափերուն մոտ, ուր կգտնվեր արքունիքը։ Եթե հավատք ընծայենք Ֆիկուերոայի, հայր Պելչիոր այնքան գեշ ընդունելություն գտավ, որ շահ Աբբաս «չուզեց ընավ խոսիլ անոր հետ, այլ բավականացավ Աղամիրին միջոցով անոր ըսել տալով իր բերած նամակին մասին, որ պետք չուներ պատերազմական նավատորմի մը Կարմիր ծովուն մեջ և չէր հետաքրքրվեր մետաքսի մասին պայմանագրությամբ մը, որովհետև խաղաղություն կնքած էր Թուրքին հետ, և թե կուզեր իր ամբողջ մետաքսը ղրկել Հալեպ և Կոստանդնուպոլիս և թիզ մը հող եւ պիտի չտար իր բոլոր նվաճումներեն[137]։ Հայր Պելչիոր անմիջապես մեկնեցավ Սպանիա, տանելով այս պատասխանը։ Սեպտեմբերի վերջը Մատրիտ հասնելով, փութով խմբագրեց «տեղեկատվություն մը Տ. Կարսիա տա Սիլվայի ճամփորդության մասին», որ ճար-

---

[133] Կարմելյանները, էջ 214. Հ. Պելչիոր 30 նոյեմբեր 1615-ին տեղեկագիր մը ուղարկեց Ֆիլիփ Գ-ի, շահ Աբբասի հանդիպելու համար իր Ֆարահապատ երթալուն մասին, ուր կգտնվեր պարսիկ թագավորը, հրատ. Մենտես տա Լյուզի կողմե, էջ 583—7։

[134] Անթոնիո Գոէարրո, Տասնամյակ 13, Հնդկաստանի պատմություն, 2 մաս, Լիզպոն, 1876, Ա մաս, էջ 34—35։

[135] Քիշմ կղզին, ինչպես փորթուկալցիները կկոչեին։ Այնտեղ կար օգոստինյաններու եկեղեցի մը, որ կործանվեցավ երբ պարսիկները գրավեցին կղզին, Օրմուզի հետ միաժամանակ։

[136] Բրիթիշ Մյուզեում, հավել. 28461, Փորթուկալի վերաբերյալ թուղթեր, էջ 185—209բ, «Պատմություն դեսպանության, զոր Պարսկաստանի մեջ կատարեց Տ. Կարսիա տա Սիլվա ի Ֆիկուերոա», Ս. Բեկյայի կողմե արտագրված Անդրծովյան վավերագրություններուն մեջ, Լիզպոն։ Անդրծովյան պատմական ուսումնասիրությանց կենտրոն, 1960, հատ. Ա, էջ 177—195. տ. անդ, էջ 186, Տեյլա Վալլե, անդ, հատ. Բ, էջ 381, Ղազվինեն 28 հուլիս 1618 թ. նամակով մը կպատմե խոսակցություն մը Աղամիրին (շահին քարտուղարը) հետ, որու ընթացքին վերջինս «ի մեջ այլոց ինծի ըսավ թե Սպանիո դեսպանը կուզար և իրեն հավատացուցած էին, թե ան շատ լավ հարաբերության մեջ չէր Սպահանի փորթուկալցի հայրերուն հետ, և մասնավորապես Հ. Պելչիոր տոս Անժոսի հետ, որ ներկայացուցիչն էր Սպանիո թագավորին և այսօր վանահայր այն տեղի վանքին։ Բայց ասիկա շատ կզարմացնե Աղամիրը և արդարև ըստ իր ըսածին, այս դեսպանը իրեն կթվի արտառոց մեկը, որովհետև Աղամիրը կհայտարարեր, թե Հ. Պելչիոր լավ ծառայություններ մատուցած է շատ տարիներե իվեր և մեծ եռանդ տված է ի շահ Պարսկաստանի թագավորին և նույն ինքն դեսպանին, և հայտնեց որ չէր ընդուներ դեսպանին վարմունքը, որ սուրհանդակ մը ղրկած էր Ֆարահապատ, հրամայելով, որ իրեն չհանձնե նամակները, որպես եթե ինք կասկածելի ըլլար իրեն, այլ տա ուղղակի թագավորին ձեռքը և այս պատճառով սուրհանդակը սպասած էր երկար օրեր, առանց ունկնդրության ընդունվելու, և իր տիրոջ՝ դեսպանին մոտ վերադարձած էր առանց պատասխանի»։

[137] Տոն Կարսիա տա Սիլվա ի Ֆիկուերոայի դեսպանություններ Պարսկաստանի մեջ, որ կպարունակե այս մեծ կայսրության քաղաքականությունը, շահ Աբբաս թագավորին բարքերը, և ճշգրիտ տեղեկատվություն մը բոլոր այն վայրերուն մասին, ուր այս դեսպանը մնաց ութը տարիներուն ընթացքին, զորս այնտեղ ապրեցավ, սպաներենե թարգմանված պարոն Վիքֆորթի կողմե, Փարիզ, 1667, էջ 289։

պիկությամբ մեջտեղ կհաներ դեսպանին բոլոր թերացումները։ Այս տեղեկատվությունեն կարելի է հետևցնել բոլոր պատճառները, որոնց հետևանքը եղած էր Տոն Կարսիա տա Սիլվա ի Ֆիկուերոայի դիվանագիտական առաքելության ձախողությունը[138]։ Հայր Պելշիոր Մատրիտի արքունիքը ըլլալով 1643-ին, Ֆիլիփ Դ զայն անվանեց իր քարոզիչը։ Մեռավ 1644-ին։

Պարպոզա Մաշատո կըսեր թե Պարսկաստանի մեջ իր բոլոր առաքելություններուն ընթացքին Հայր Պելշիորի գործերը վկայած են փորթուկալյան ազգին հանդեպ իր հավատարմության մասին[139]։

---

138 Գրիթիշ Մյուզեում, հավել. 28461, նույն, էջ 153—154, «Տեղեկատվություն Տ. Կարսիա տա Սիլվա դեսպանին ճամփորդության, կատարված եղբ. Մելշոր տե լոս Անժըլեսի կողմե», Մատրիտ, 30 դեկտեմբեր 1619, հրատ. Սիլվա Ռեկոյի կողմե, Անդրծովյան վավերագրություններ, հատ. Ա, էջ 139—140։ Պելշիոր գրեց նաև 10 հոկտեմբեր 1619 թվակիր տեղեկագիր մը մետաքսի առևտուրին մասին, «Ուսումնասիրություն եղբ. Պելշիոր տոս Անժոսի Պարսկաստանի մեջ մետաքսի առևտուրին մասին», հրատարակված Մենտես տա Լուզի կողմե, անդ, էջ 588—606։

139 Պարպոզա Մաշատո, անդ, հատ. Ա, էջ 486։

ՓՈՐԹՈՒԿԱԼՅԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐ ԿՈԱՅԻ ՄԵՋ 1580—1640 թթ.

Այստեղ պետք է բանանք փակագիծ մը Հայր Պելշիորի և մյուս փորթուկալցի օգոստինյան հայրերուն վերաբերումին մասին հանդեպ Սպանիո, 1580-են 1640-ի Ֆիլիփյան շրջանին։ Օգոստինյան հայրերը, որոնք կգտնվեին Կոա, Օրմուզ, Մոսքաթ, Սպահան և Շիրազ՝ պահած էին անքակտելի կապ մը իրենց հայրենիքին հետ։ Ասկե զատ խորապես նախանձախնդիր էին Հնդկաստանի և Պարսկաստանի մեջ իրենց կատարած հոգևոր նվաճումներուն համար և կհավատային, որ իրենցմե զատ ոչ ոք պետք էր ունենար Պարսկաստանի հետ կրոնական և դիվանագիտական հարաբերություններու պահպանման առանձնաշնորհումը։ Թեև Սպանիա սեփականացուցած էր Փորթուկալի թագը, միացման պաշտոնագիրը կճշտեր որ փորթուկալցիներ միայն պետք էր ըլլային Արևելյան Հնդկաստանի մեջ։ Սպանիացիները իրավունք չունեին միջամտելու այնտեղ[140]։ Այնքան ատեն որ մնացին միակ կապը այդ երկիրներուն հետ, օգոստինյան հայրերը հարեցան իրենց առաքելության համոզումով և նվիրումով, իրենց հավատքին և իրենց երկրին ծառայելու գիտակցությամբ։

Կացությունը սկսավ ուրիշ դարձվածք մը առնել, երբ 1602-ին Ֆիլիփ Գ առաջին անգամը ըլլալով որոշեց աշխարհական դեսպան մը ուղարկել, հանձին Լուիս Փերեյիրա տե Լասերտայի։ Բայց քանի որ փորթուկալցի էր ան և թե Կոայի կրոնական իշխանությունները հաջողած էին այս դիվանագիտական պատգամավորության մեջ մտցնել Հ. Պելշիորը և Հ. Կիլեերմեն, օգոստինյան հայրերը բարեհաճությամբ ընդառաջ գացին այդ առաքելության, ուրկե սակայն Լուիս Փերեյիրա տե Լասերտա անվնաս դուրս չեկավ, առանց շատ գիտակցելու թե ինչու։

Ամեն ինչ դեպի գեշ գնաց, երբ Ֆիլիփ Գ 1613-ի օգոստոսին ան-

---

140 Շարտեն, անդ, հատ. Բ, էջ 75։

վանից նոր դեսպան մը, առաջին անգամ ըլլալով քասթիլիացի մը, Տոն Կարսիա տա Սիլվա ի Ֆիկուերոա։ Այս պարագային, օգոստինյան հայրերուն համար կարելիություն չկար համակերպելու կացության. այդպիսի որոշում մը անվիճելիորեն խնդրո առարկա կդարձներ իրենց առաքելության դերը Պարսկաստանի հետ հարաբերություններու մեջ և նույն ատեն հարված մը կուտար փորթուկալցիներու վարկին։

Այն ատեն է, որ ի հայտ կուգա փորթուկալյան մղիչ ույժերուն կողմե կազմակերպված գործունեություն մը Հնդկաստանի, Օրմուզի և Պարսկաստանի մեջ, ուր Հնդկաստանի փոխարքա Տոն Ժերոնիմո տե Ազեվետո, Օրմուզի կառավարիչ Տոն Լուիս տե Կամա և հայր Պելշիոր գերակշիռ դեր մը կատարեցին, ոչինչի վերածելու համար դեսպան Ֆիկուերոայի ջանքերը։ Իրողությունները պերճախոս են. Լիզպոնեն մեկնելով մարտ 1614-ին, դեսպանը Կոա հասավ հոկտեմբեր 1614-ին և փոխարքա Ժերոնիմո տե Ազեվետոյի կողմե վար դրվեցավ երկու տարի և յոթը ամիս Օրմուզի համար նավ նստիլ կարենալե առաջ։ Օրմուզ հասավ մայիս 1617-ին։ Այնտեղ Ֆիկուերոա նույն կարգի դժվարություններու հանդիպեցավ և կղզիին կառավարիչ Լուիս տա Կամայի անշարժության քաղաքականության հետևանքով դարձյալ ստիպվեցավ սպասել երկար ամիսներ կարենալու համար ճամփա ելլել։ 1618-ին է միայն, հունիսին, որ դեսպանը հաջողեցավ հանդիպիլ շահ Աբբասի Ղազվինի մեջ և այնտեղեն Սպահան մեկնելե ետք թողուց Պարսկաստանը 1619-ին։ Բայց իր կրած դժվարությունները դեռ չէին վերջացած, որովհետև փորթուկալցիները չէին ուզեր (ոչ առանց պատճառի) դյուրացնել իր Սպանիա վերադարձը։ Ֆիկուերոա այս կամ այն ձևով հասավ Կոա ուրկե նավ նստավ 19 դեկտեմբեր 1620-ին դեպի Եվրոպա, Մոզամպիքի ճամփով։ Բազմաթիվ իրադարձություններե ետք իր նավը, որ այս վերջին նավահանգիստը ձգած էր 14 մայիս 1621-ին Փորթուկալ երթալու համար, տասնըչորս օր ետք ինքզինքը գտավ, նավուղիին սխալով... անգամ մը ևս Կոա։ Այնտեղ փորթուկալցի ազգայնական տարրերուն գործը կարգին էր նորեն. թույլ չտվին որ մարտ 1622-ին Կոայի նավահանգիստեն Փորթուկալ մեկնող նավու մը վրա բարձրանա։ Լուրեր կհասնեին Կոա, թե պարսիկները գրաված են Օրմուզը անգլիացիներուն օգնությամբ։ Դեսպանը միշտ կմնար Կոա անշարժության դատապարտված։ Ապրիլ 1623-ին ուրիշ նավ մը ճամփա ելավ դեպի Լիզպոն։ Բայց ուրիշ դժվարություններ արգիլեցին որ կարենա կատարել այս ճամփորդությունը։ Փետրվար 1624-ին է միայն, որ իվերջո

կրցավ բարձրանալ Սան Թոմաշ նավը հասնելու համար Սան Սեպասթիան, Սպանիո մեջ 1624-ի օգոստոսին։ Ֆիկուերոա ավելի քան տասը տարի հատկացուցած էր կատարելու համար առաքելություն մը, որուն արդյունքեն գոհունակություն զգալու համար քիչ պատճառներ ուներ։ Մեկ կողմե իր դեմ գտած էր արմատական փոփոխություն մը պարսկական քաղաքականության մեջ հանդեպ Թուրքիո, և մյուս կողմե բախած էր փորթուկալցիներուն ջանքերուն աչքառու գործակցության, որոնք չէին կրցած ընդունիլ, որ սպանիացի մը դեսպան անվանվի Պարսկաստանի մեջ։ Ֆիկուերոա ինք ևս վերահասու եղավ իրականության և դառնորեն կգանգատի, որ չէր կրցած տեղյակ պահել իր տեր թագավորը, շահ Աբբասի չար նպատակներուն մասին, իբր հետևանք այն դժվարություններուն, որոնք օրե օր կավելնային, նամակ ղրկելու և ստանալու համար, «այն պատճառով որ Օրմուզի կառավարիչ Լուիս տա Կամա արտակարգ խնամք մը կտաներ սուրհանդակներու երթևեկը արգիլելու։ Սպահան գտնվող վանականներեն մեկ քանին նույնը կընեին, այնքան ջերմորեն լծվելով այս գործին, որ անկարելի էր հաշվել այն ծախքերը զորս կկատարեին Պաղտատի և Հալեպի մեջ պահելու համար այս ուղղությամբ գործող մարդիկը, որոնք առատորեն վճարված էին, ինչպես նաև փորթուկալցիները, որոնք Հնդկաստանեն Սպանիա կանցնեին Պարսկաստանի ճամփով և որոնց կհանձներ դեսպանը իր նամակները, չկարենալով գտնել ավելի վստահելի մարդիկ»։ Եվ Ֆիկուերոա, խոսելով հ. Պելշիորի մասին, կըսե թե այս վանականը այն է, զոր ամենեն ավելի կօգտագործեին թղթակցություններու խափանարարության համար։ Քասթիլիացի դեսպանը կխորհեր, որ այս հարցը սկիզբ կառներ այն պահեն, ուր արքունիքին մեջ պետական խորհուրդը իրեն տվավ իր առաքելությունը հաստատող պաշտոնաթուղթը, որովհետև Փորթուկալի մեջ չէին ուզեր, որ կատարե այս ճամփորդությունը և մինչ գովեստը կկատարե Փորթուկալի օգոստինյաններուն, իր կարծիքը տարբեր է անոնց նկատմամբ «որոնք կգտնվին Հնդկաստան, Օրմուզ և Պարսկաստան, ըլլա այն պատճառով, որ կլիմայի փոփոխությունը դեր մը կկատարե և կամ անոր համար, որ խմբակցությունները և անկարգությունները, որոնք կտիրեն աշխարհականներուն մեջ, վարակիչ են և կամ կա ուրիշ որևէ ավելի հարկադրիչ պատճառ, որու մեջ չենք ուզեր մտնել այստեղ, և որ իրենց կպարտադրեր այդ գործելակերպը. ստույգ է, որ բացահայտորեն հայտարարեցին, որ դեմ են դեսպանին, վարկաբեկելով ամեն ինչ, որ կրնար հարգ տալ իր անձին,

կամ նպաստել հաջողցնելու բանակցությունները, որոնց համար թագավորը զինքը Պարսկաստան ուղարկած էր»։ Դեսպանը չունենալով այլևս ոևէ պատրանք, կմեղադրեր իր նախորդը, Լուիս Փերեյիրա տե Լասերտա, ինչպես և հայր Պելչիոր, որ երբ շահ Աբբասի կհանձնեին կաթոլիկ թագավորին նամակները «անոր երբեք չէին տար Սպանիո թագավորի հանգամանքը, այլ Փորթուկալինը, և այսպես կընեին ամեն անգամ, որ առիթը կներկայանար անոր անունը տալու»։ Կեզրակացներ իր մեղադրագիրը այն ստուգությամբ, որ «փորթուկալցիները այնքան կխորշին սպանիական միապետութենեն, որ չեն ուզեր երբեք որ զիրենք սպանիացի կոչեն կամ իբր այդ նկատեն»[141]։

Փորթուկալցի կրոնավորներուն այս բոցաշունչ հայրենասիրությունը հանդես պիտի գար Հնդկաստանի մեջ՝ սպանիական տիրապետության վախճանով և Փորթուկալի Ժոան Դ թագավորին գահակալությամբ, 1640-ին։ Ճիշտ է, որ Սպանիո ճնշումին վրա պապերը չէին ճանչցած նոր միապետը, ինչ որ առաջնորդած էր զանազան կարգերու պատկանող փորթուկալցի կրոնավորները հետևելու արմատապես ազգայնական քաղաքականության մը, որ կձգտեր վանքերեն հեռացնել օտար կրոնավորները։ Այս կեցվածքին նեցուկ էին Կոայի փոխարքաները, անոնց վարիչ խորհուրդները և այնտեղի ազդեցիկ անձերը, և ասիկա շարունակվեցավ[142]. 1654-ին օգոստինյան հայրերը կըսեին թե փոխարքա Պրանքո տե Քասթրո խիստ հրամաններ տված է արգիլելու համար, որ օտար կրոնավորներ Հնդկաստան այրին։ 1720-ին Փորթուկալի թագավորը հրովարտակ մը հանեց, ըստ որու ամեն ոք որ քահանա պիտի ձեռնադրվեր Կոայի արքեպիսկոպոսեն տարբեր ոևէ եկեղեցականի կողմե՝ պիտի արտաքսվեր փորթուկալյան բոլոր հողամասերեն իր բոլոր ազգականներով և իր ստացվածքները պիտի գրավվեին. մյուս կողմե ոչ մեկ եպիսկոպոս պիտի ճանչցվեր եթե իր անվանումը արձանագրության համար ներկայացված չըլլար Լիզպոնի դիվանապետության[143]։

Պարսկաստանի հետ հարաբերություններու վերաբերմամբ հետաքրքրական է ընդգծել, որ 1649-ին շահ Իսմաիլ Բ կգրեր Փորթուկալի թագավոր Ժոան Դ-ի թե իմացած ըլլալով, որ Սպանիո թագավորը դաշնակցած է Թուրք բռնապետին հետ, համար դատած է այս մասին տեղյակ պահել Կոայի փոխարքան, որպեսզի հանուն Փորթուկալի

[141] Ռիմֆորդ, անդ, էջ 287—289։

[142] Կարմելյաններ, էջ 367։

[143] Նույն, էջ 368։

թագավորին զինակցություն մը կնքե ան, ինչպես ըրած է ինքը՝ Իսմաիլ, Եթովպիո թագավորին և Մեծ Մոկոլին հետ։ Կավելցներ, որ իր խորհրդական և Օրմուզի թագավորին հպատակ Քոմաթ Հակա Մասան կուղարկեր Նորին Վեհափառության, և հետո Ֆրանսայի թագավորին, Լեհաստանի թագավորին և Վենետիկի ծերակույտին, նման համաձայնություն մը հաստատելու և միանալու համար հիշյալ հասարակաց թշնամիներուն դեմ[144]։

Բայց փորթուկալյան միապետության վերահաստատումեն ետք տասնըվեց տարի պետք է անցներ, որպեսզի Կրեկորիո Փերեյիրա Ֆիտալկո ուղարկվի իբր Փորթուկալի նոր դեսպան Պարսկաստանի շահին մոտ։ Եթե դատենք գրավոր հրահանգներեն զորս նոր դեսպանը Կոայի մեջ ստացավ փոխարքա կոմս Վիլլա Վետեեն, փորթուկալցիներու միտքին մեջ տակավին կենդանի էր Ֆիկուերոայի դեսպանությունը։ Արդարև կհանձնարարվեր Փերեյիրա Ֆիտալկոյին իրեն հետ տանիլ իր նախորդին օրագրությունը օգտագործելու համար զայն, «բայց ձեռք առնելով ամեն տեսակ զգուշություն խուսափելու համար այն գանգատումներեն, որոնցմով այս վերջինը կատարած էր իր առաքելությունը և պետք չէր, որ կետ առ կետ հետևեր այս դեսպանության արարողություններուն[145]։ Պետք էր նաև, որ Փերեյիրա Ֆիտալկո գերազահություն ունենար ուրիշ ամեն դեսպանի վրա, ինչպես եղած էր պարագան Կասիա տա Սիլվա ի Ֆիկուերոայի, որ օգտվեցավ այն առանձնաշնորհումներեն, զորս փորթուկալցիները կվայելեին պարսկական թագավորության մեջ։ Այս հրահանգները կճշտեին նաև, որ եթե այդպես եղած էր Քասթիլիո թա-

[144] ԹԹԱԱ, Մատ. ձեռ., թ. 170, էջ 375—378։ Նամակ գրված Ղազվինեն 1649-ին Պարսկաստանի թագավորին առ մեր տեր Տ. Ժոան Դ թագավորն, պարսկերենե իտալերենի թարգմանված։ Գոյություն ունի այս նամակին ուրիշ մեկ թարգմանությունը ֆրանսերենե փորթուկալերենի, քանի մը տարբերակներով։

[145] «Հրահանգներ, որոնց պետք է հետևի Տ. Կրեկորիո Փերեյիրա Ֆիտալկո, որ կերթա իբր դեսպան Պարսկաստանի թագավորին մոտ զայն շնորհավորելու համար իր գահակալության առթիվ, ինչպես նաև վավերացնելու համար զինակցությունը անոր և մեր տեր թագավորին միջև, ըստ հրամանիս առ Օրմուզի նեղուցին և Կարմիր ծովու պատերազմական նավերուն վերին հրամանատար Ֆրանսիսքո Փերեյիրա տա Բիլվայի, այս ամենը կատարվելով իմ իրեն տված կանոններուս ձևին մեջ», արտագրված Հնդկաստանի արխիվներեն, Գիրք արձանագրությանց, էջ 6բ, ամբողջական կերպով հրատարակված «Հավաքածո դաշնագիրներու, զորս Հնդկաստանի պետությունը կնքած է ասիական թագավորներու և իշխաններու հետ»-ի մեջ, ամբողջացած Ժյուլիոն Պիվերի կողմե, Լիզպոն, 1884, հատ. 4, էջ 246—288։

գավորին բանագնացին համար, պատճառն այն էր, որ «այն ատեն քասթիլյան թագավորին բռնությունը յուրացուցած էր մեր ճշմարիտ թագավորին և տիրոջ թագավորությունը և դեսպան մը ուղարկած էր իր անունով, բայց ոչ իբր Քասթիլիո թագավոր, ինչպես էր, այլ հանուն Փորթուկալի թագին, զոր գրաված էր»[146]:

Փերեյիրա Ֆիտալկո կատարյալ հաջողությամբ դուրս եկավ այս գործեն, ըստ հիսուսյան հայր Վիյեոյի, որ Սպահան կգտնվեր 31 հոկտեմբեր 1696-ին, երբ Փորթուկալի դեսպանը իր պաշտոնական մուտքը գործեց քաղաքին մեջ «արտակարգ պերճանքով և շքեղությամբ, որ սակայն արտակարգ չեն փորթուկալցի դեսպաններուն համար, որոնք կթվի թե այս կետին մեջ կուզեն մյուս թագավորներուն դեսպաններեն գերազանց երևիլ, գլխավորաբար Պարսկաստանի մեջ, ուր մարդիկ կըսիրեն փայլը և փառահեղությունը և ուր իշխանի մը զորությունը և իր պետության մեծությունը կդատեն միայն իր դեսպանին կատարած ծախքերուն վրա. այս տեսակետով Պ. Փեյիրա կատարելապես հարմարեցավ պարսկական ոգիին, իր հետևորդներուն թիվով, իր մարդոց հանդերձանքով, իր կառքերուն ճոխությամբ, իր առատաձեռնություններուն շռայլությամբ և հազվագյուտ և մեծարժեք նվերներով. այս ամենը աչքերը շլացուց և շահեցավ արքունիքին և ժողովուրդին հարգը»[147]:

146 Նույն, էջ 276:

147 Ճամփորդություն հիսուսյան միաբանության միսիոնարի մը Թուրքիո, Պարսկաստանի, Հայաստանի, Արաբիո և Պարպարիայի մեջ, Փարիզ, 1730, հրատարակված ըստ հայր Վիյեոթի նոտագրություններուն, որ ապրեցավ Պարսկաստան, Սպահանի և Ջուղայի մեջ 1689-են 1708, էջ 421—422:

ՀԱՅՐ ՊԵԼՇԻՈՐ ՏՈՍ ԱՆԺՈՍԻ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Քրիստոնեության վիճակին» վերաբերյալ տեղեկատվությունը տարբեր շահեկանություն մը կստանա հիմա, երբ գիտենք թե անոր հեղինակն է հայր Պելշիոր տոս Անժոս և թե ան կապ ունի փորթուկալյան դիվանագիտական առաքելության մը Պարսկաստանի մեջ 1604 և 1605 տարիներուն:

Շատ հավանական է, որ այդ գրությունը մեկ մասն ըլլա այն տեղեկագրին, որ կազմվեցավ իբր գործադրություն Պարսկաստան առաքվող բանագնացներուն տրված մնայուն հրահանգներուն, հավատքի խնդիրներուն առնչությամբ: Արդարև, 1510-ին Րյուի Կոմըշ տը Քարվալիոզայի առաջին դեսպանության ատեն իսկ, այս վերջինը Աֆֆոնսո Ալպուքերքեեն կստանար հրահանգներ, որոնք ուրիշ պատվերներու կարգին կճշտեին, կրոնական տեսակետեն, թե «պետք է տեղեկություն քաղել այդ շրջաններու քրիստոնյաներու մասին և հասկանալ թե ունի՞ն մեր հավատքին ծեսերը և կհավատա՞ն թե մեր Տերը ծնած է Տիրամայրեն, մեռած է և չարչարված է խաչին վրա մեզի փրկելու համար և հարություն առած է երեք օր ետք: Տեսնել, եթե այդ քրիստոնյաներեն մեկը հարգանք ունի մեր հավատքին քանի մը մասին վերաբերյալ, թե կրնա՞ք զինքը ձեզի հետ բերել կամ հրամայել, որ երթա Հռոմ, թեև նախընտրելի է, որ Փորթուկալեն անցնելով երթա այնտեղ: Տեսնել անոնց եկեղեցիները և զարդարանքները, անոնց խորանները և սուրբերու պատկերները, և թե ունի՞ն մեր Տերը խաչին վրա և Տիրամոր պատկերը ու նաև տեսնել անոնց վանականները, ապրելու և հագվելու ձևերը, և կա՞ն արդյոք սուրբ առաքյալներու մասունքներ, որոնք կհանգչին այս շրջաններուն մեջ»[148]:

Ինչպես գիտենք, Րյուի Կոմըշ չկրցավ կատարել իր առաքելությունը և այս նույն հրահանգները տրվեցան Միկուել Ֆերեյիրայի, որ

148 Նամակներ, հատ. Ա, էջ 390:

9—495

Պարսկաստան գնաց 1514-ին և կրկնվեցան 1515-ին դեսպան Ֆերնան Կոմեշ տը Լիմոշի։ Կարելի է ենթադրել, թե քրիստոնյաներու մասին տեղեկությունները քաղելու այս ցանկությունը մաս կազմեց նաև Սպահանի մեջ օգոստինյաններու վանքը հիմնող Հայր Կուվեյիայի և իր ընկերներուն 1602-ին տրված հրահանգներուն և Հ. Պելշիոր զանոնք հրատակորեն ուներ իր միտքին մեջ, երբ խմբագրեց իր տեղեկատվությունը։ 1696-ին դեսպան Ֆերեյիրա Ֆիտալկոյի տրված հրահանգները ի մեջ այլոց կըսեին, թե եթե առիթը ներկայանար ան պետք էր օգներ Պարսկաստանի կաթոլիկ հայերուն, որոնց եպիսկոպոսը գրած էր թագավորին օժանդակություն խնդրելով[149]։

Հայր Պելշիորի տեղեկատվության կարևորությունը ավելի կշեշտվի, երբ նկատի առնենք, որ երկու օգոստինյան հայրերը որոշեցին Ջուղա և Նախիջևան ինչպես նաև այդ շրջանի հայ կաթոլիկ համայնքներուն գյուղերը և վանքերը այցելել 1604-ի ամռան վերջը, այսինքն, շահ Աբբասի Արաքսի հարավային ափին վրա նահանջելեն և այս երկու քաղաքները քանդելու և անոնց բնակիչները տարագրելու հրաման տալեն քանի մը շաբաթ առաջ։ Իսկ ավելի ետքը, մարտ 1605-ին, Հայր Պելշիոր առանձին կերթար Ղազվինեն Թավրիզ, ուր ականատես վկան պիտի ըլլար այս որոշման ողբերգական հետևանքներուն, շահ Աբբասի բանակատեղիին մեջ հանդիպելով հազարավոր հայերու, կին և երեխա, որոնք արմատախիլ եղած էին իրենց պապենական հողերեն։

Հայր Պելշիոր և հայր Կիլեերմե կրնան համարվիլ առաջին եվրոպացի միսիոնարները, որոնք այցելած են այս շրջանները և նկարագրած են Նախիջևանի և Երնջակի[150] նահանգներուն մեջ իրենց տեսած եկեղեցիներն ու մասունքները, գեթ ԺԴ դարեն և Պարթոլոմեո տե Փոտիոյի և ունիթոր եղբայրներու առաքելութենեն իվեր, որոնք կաթոլիկության դարձուցին մեծ թվով հայեր նույն վայրերուն մեջ[151]։

Սակայն դեսպան Լասերտա և իր երկու ընկերները առաջին եվրոպացիները չէին, որ անցած էին այս նահանգներեն այդ ժամանակեն

[149] Տե՛ս ծանոթ. 145, Պիէնր, հատ. Ա, էջ 281։

[150] Այս գավառին ամբողջը, որ Նախիջևանի արևելակողմը կգտնվի և կարճ հեռավորություն մը ունի անկե, ծանոթ էր ճամփորդներուն և պարսիկները անոր կուտային Ալնճա (Երնջակ) անունը, որ հետո տարածվեցավ Նախիջևանը շրջապատող բոլոր հողամասերուն վրա, տե՛ս Սեն-Մարթեն, Պատմական և աշխարհագրական հուշագրություններ Հայաստանի, Փարիզ, 1918, հատ. Ա, էջ 146։

[151] Տե՛ս ծանոթ. 175 և 176։

իվեր[152], նույնիսկ 1514-ին զիրենք նախորդած էին անտարակույս Միկուել Ֆերեյիրայի դեսպանության անդամները։ Արդարև Կասբար Քորեյիա կպատմե, որ դեսպանը, կատարելե ետք իր պաշտոնը շահ Իսմայիլ Ա-ի մոտ, այս վերջինույն կողմե ուղարկվեցավ «իր թագավորության իշխաններեն մեկուն հետ տեսնելու համար մեկ քանին այն բաներեն, որոնք կային իր թագավորության մեջ. այս այցելությունը տևեց ամբողջ ամառը, որու ընթացքին շատ բաներ ցույց տրվեցան իրեն, այնքան որ դժվար էր իրեն ամենը պատմել կարենալ և գնաց Հայաստանի թագավորության մեջ, որ անջատ է, ուր տեսավ մեծ գեղեցկությամբ մարդիկ և կիներ, ուր տեսավ մեծ եկեղեցի մը, որ կառուցված էր շատ աշխատված ձևով և մեջը կային բազմաթիվ ոսկեզօծ նըկարներ, իսկ մեջտեղը կար արծաթյա վանդակներով շրջապատված և բազմաթիվ աստիճաններու վրա կառուցված հուշարձան մը, ամեն կողմեն բաց, ոսկյա թերթերով և թանկագին քարերով զարդարված և բաց-

[152] Ամպրոզիո Քոնթարինի, Վենետիկի դեսպան Ակ-քոյունլու Ուզուն Հասանի մոտ, որ այս շրջանեն անցավ 1474-ին, Արաքս գետին ձախ ափին վրա գտավ «հայկական գյուղեր իրարու մոտ, որոնք իրենց եպիսկոպոսը ունին և ամենն ալ կհնազանդին պապին», տե՛ս «Ճամփորդություններ վենետիկցի Ամպրոզիո Քոնթարինիի», Թանայի և Պարսկաստանի ճամփորդություններուն մեջ, Հաքլույթ ընկերակցություն, 1873, էջ 125 և 138, և Ժոզաֆա Պարպարո, որ ճամփորդեց գրեթե նույն ատեն կպատմե, որ Նոյի տապանին լեռնեն երկու օրվան հեռավորությամբ կա «գյուղ մը Քասկրիս կոչված, որու շուրջը կրնակին հայեր, որոնք կաթոլիկ ծեսին կհետևին և ունին երկու վանք, որոնց գլխավորը կկոչվի Ալնճա, որու վանականները կհետևին ս. Պենեդիկտոսի կանոններուն և պատարագ կմատուցանեն իրենց լեզվով։ Իմ Վենետիկ վերադառնալես ետքը մեռավ իրենց վանահայրը և իրենցմե մեկն եկավ այստեղ և Վենետիկի մեջ Սան Ճովաննի Փաոլա հանելով խնդրեց հանձնարարություններ իշխանապետին և Հռոմի եպիսկոպոսին մոտ, որպեսզի միաբանության վանահայր անվանվի, ըլլալով հանգուցյալին եղբայրը, «Ճամփորդություն Ժոզաֆա Պարպարոյի», նույն, էջ 92։ Քաթերինո Զենո կանխեց Վենետիկի երկու դեսպանները Պարսկաստանի ճամփաներուն վրա, տե՛ս «Ճամփորդություն Պարսկաստանի մեջ», «Պատմություն Պարսկաստանի մեջ իտալացիներու ճամփորդություններուն 15 և 16-րդ դարերուն»-ի մեջ, Հաքլույթ ընկերակցություն, 1873, էջ 53. կհիշատակե Ալանճաքալայի բերդը Թավրիզեն երկու օրվան հեռավորությամբ դեպի հյուսիս, որ իրեն մոտակա տասը քաղաքներով բնակեցված է կաթոլիկ քրիստոնյաներե։ Մինչ ԺԶ դարուն սկիզբը Պարսկաստանի մեջ իտալացի վաճառականի մը անանուն պատմությունը (նույն, էջ 191—192), «Ճամփորդություն վաճառականի մը Պարսկաստանի մեջ», կհիշե նմանապես Ալանճաքալա կոչված բերդը. «Թավրիզեն երկու օրվան հեռավորությամբ այս դղյակը տասներկու մոտակա գյուղեր ունի, որոնք բնակված են ուղղափառ քրիստոնյաներե, որոնց պատրիարքը ամեն տարի երկու հոգի կղրկե պապին խունկի նվերով մը։ Իրենց ծեսերը կկատարեն հայերենով, կորսնցուցած ըլլալով իտալական լեզվի գործածությունը»։

վածքները ագուցված էին բյուրեղյա ապակիներով, որպեսզի կարելի ըլլա տեսնել մեջը եղածը, որ կմախք մըն էր։ Միկուել Ցերեյիրա ըլլա հարցուցած ըլլալով, թե ի՞նչ է ասիկա, իրեն պատասխանեցին, թե մարմինն էր այն սուրբ մարդուն, որ հիմնած էր այդ տունը և շատ ուրիշներ ամբողջ Հայաստանի մեջ և իր կյանքին տևողության հրաշքներ գործած է, համաձայն իր ավանդության մեջ եղածին և ըստ ենթադրության, կրնա սուրբ Պարթոլոմեո ըլլալ, համաձայն սուրբ Թոմասի ավանդության մեջ գտնվածներուն, ինչպես պիտի ըսեմ ավելի ետքը[153]»։ Այս նկարագրությունը ենթադրել կուտա թե Միկուել Ցերեյիրա ինքն ալ այցելած է Նախիջևան գավառը, ուր կգտնվեր Քռնայի վանքը, ուր կար Պարթոլոմեո տը Փոտիոյի (կամ տը Պոլոնիի) գերեզմանը, որուն կվերագրեին բազմաթիվ հրաշքներ և որ հիմնադիրը եղավ բազմաթիվ վանքերու, ուր ծաղկեցան մեծ թվով հայ կաթոլիկ կրոնական համայնքներ։ Թեև հեռավորության տեսակետով անկարելի չէ այցելությունը այն հայ վանքին, ուր կգտնվի ս. Բարթուղիմեոս առաքյալին դամբարանը, սակայն չենք կարծեր, որ Միկուել Ցերեյիրա գացած ըլլա այդ մարզին մեջ, որ այժմ քանի մը կիլոմետրով հեռու է Իրանի և Թուրքիո սահմաններեն։ Սրբավայրը կգտնվի քիչ այցելված վայրի մը մեջ, լեռնային անցքի մը գագաթը Ջափպաշը ըսված տեղվույն կից, Պաշքալե գյուղեն տասնըհինգ կիլոմետր դեպի հյուսիս արևելք, Մեծ Զապի հովիտին և Քյուրտիստանի լեռներուն միջև[154]։

Հայր Պեյշիոր և հայր Կիլեերմե իրավունք ունեին կասկածի տակ չդնելու Ջուղայի հայերուն և Նախիջևանի «Ֆրանկ»-ներուն խոսքը, երբ անոնք իրենց ըսին, թե առաջին լատին եկեղեցականներն էին զորս կրտեսնեին իրենց երկրին մեջ գոնե ԺԴ դարեն իվեր։ Նմանապես կրնային հավատալ Էջմիածնի վանականներուն խոսքին, թե «առաջինները եղան, որոնք Հռոմի եկեղեցվույն հրամանով եկան պատարագ մատուցանելու այնտեղ»[155]։ Երկու փորթուկալցի հայրերը եղան նույնպես,

[153] Կասպար Քորրեա, անդ, հատ. Բ, մաս Ա, էջ 417։

[154] Ս. Բարթուղիմեոսի վանքին վերաբերյալ նոր նկարագրություններու համար տե՛ս նաև Մ. Թիեռի, «Նոթեր Թուրքիո մեջ հայկական հուշարձաններու մասին», 1964, Հայկական ուսումնասիրության հանդես (ֆրանս.), Ն. Շ., հատ. Բ, Քլինքսիք, Փարիզ, 1965, էջ 178—189։ Հայ միջնադարյան ճարտարապետությունը (իտալ.), Հռոմ, 1966, էջ 140—141։ Ռոպըրթ Հիլըճպրենտ, Հայաստանի անհետացող եկեղեցիները, Տը Իլըսթրեյթըտ Լընտըն Նիուզ, 8 օգոստոս, 1970։

[155] Ֆ. Տը Ժեզյու, էջ 66ա։

եթե ոչ առաջին, բայց անտարակույս վերջին եվրոպացի կրոնավորները, որոնք հանդիսատես եղան Ջուղայի եկեղեցական արարողության ս. Հովհ. Մկրտիչ և ս. Գեորգ մայր եկեղեցվույն մեջ նախքան հայ եկեղեցականներու տարագրությունը Սպահան իրենց հոտին հետ և քաղաքին քանդումը և հրկիզումը։ Առաքել Դավրիժեցի կնկարագրե ամբողջ հայկական գավառներուն մեջ կործանումը վանքերուն և եկեղեցիներուն և զերկնանման և զբարձրաբերձ և զգմբեթաշէն կոփածու և հաստահեղույս վիմօք կառուցեալ զեկեղեցիս աշխարհիս Հայոց։ Յորում յօրինեալ զանազան եւ պէս պէս նկարս եւ տեսակս շուշանաց եւ կենդանակերպից, գեղեցիկ յօրինուածովք քանդակեալք ի վէմս՝ պէս պէս հնարակերտութեամբ։ Որոց ձեւն և դիր շինուածոյն եւ սիւնքն եւ սխալեղագէսք՝ կամարացն ազգի ազգի, եւ լուսանցոյցքն եւ դրունքն, և ամենայն ինչ խորհրդական»[156]։

Եթե մեր երկու կրոնավորները չեն կրնար պահանջել պատիվը Վրաստանի մեջ առաջին կաթոլիկ առաքելությունը ստեղծած ըլլալու, այդ առաջնությունը պատկանելով ուրիշ փորթուկալցի օգոստինյանի մը, հ. Ամպրոզիո տոս Անժոս, որ Կորիի մեջ վանք մը հիմնեց 1628-ին[157], գոնե ունեցած են արժանիքը քանիցս տարի առաջ բանակցություններու սկսած ըլլալու Կախեթի թագավոր Աղեքսանդրի և իր երկու արքեպիսկոպոսներուն հետ, Վրաստանի այդ հողամասին մեջ օգոս-

[156] Առաքել Դավրիժեցի, էջ 53—54։

[157] Ք. Ալոնսո, «Ս. Օգոստինյան կարգին առաքելությունը Վրաստանի մեջ 1628—1639», Օգոստինյան հավաքածո, հատ. ԻԸ, 1965։ Կորիի վանքը, որ ուներ չորս խուց վանականներուն համար, լքվեցավ 1640-ին։ Տե՛ս նաև Ազգ. մատ. Լիզպոնի, Ընդհ. դիվանաթուղթեր, 1498, էջ 183ա—314բ. «Համառոտ պատմություն ծառայություններուն, զորս օգոստինյան կրոնավորները մատուցին և կմատուցանեն Արև. Հնդկաստանի և մասնավորաբար Պարսկաստանի, Վրաստանի, Պասրայի և Օրմուզի նեղուցին մեջ», հրատ. Ք. Ալոնսոյի նախաբանով Օգոստինյան հավաքածոյին մեջ, հատ. ԻԵ, 1962, հետևյալ վերնագրով. «Օգոստինյան առաքելություններուն վիճակը ըստ 1640-ի անտիպ տեղեկատվության մը», էջ 291—325։ Տեղեկատվության հեղինակն է հ. Փետրո տոս Սանթոս, ընկեր հ. Ամպրոզիո տոս Անժոսի, որու հետ հիմնեց Շիրազի և Կորիի վանքերը։ Վրաստանի մեջ իրենց ճամփորդության մասին տե՛ս էջ 322—325։ Հ. Փետրո երեք անգամ ճամփորդեց Կոայեն Կորի ապահովելու համար կրոնավորներուն գործակցությունը և նյութական օժանդակություն մը։ Իր վերջին ճամփորդության ատեն, հասնելով Սպահան, լսեց որ իր կրոնակից ընկերները Վրաստանի մեջ մեռած էին ժանտախտեն և թե հ. Ամպրոզիո քաշված էր առաքելութենեն Հնդկաստան վերադառնալու փափաքով։

տինյան կարգին պատկանող կրոնական առաքելություն մը հաստատելու և եկեղեցի մը հիմնելու նպատակով[158]։

Հայր Պելչիոր փափագած պիտի ըլլա, կ'թվի, առաջինը ըլլալ նաև երթալու համար Վրաստան Աղեքսանդր թագավորին հետ, որ այնտեղ վերադարձավ 1605-ին, բայց Լուիս Փերեյիրա տե Լասերտա չհավնեցավ, որ կատարե այդ ճամփորդությունը[159]։

Բայց Հայր Կիլեերմե եա չկեցավ և մեռնելե առաջ ունեցավ առավելությունը առաջին լատին կրոնավորը ըլլալու, որ ԺԷ դարուն մտավ Վրաստան, թվականի մը, որ կրնա դրվիլ 1608-են 1610-ի միջև։ Արդարև, Հ. Ժուան Թատեո տե Սան Էլիզեո կ'հայտնե, որ երբ մեկնեցավ Կախեթի թագավոր Թեյմուրազ Ա-ի մոտ, շահ Աբբասի նամակներով, վրացի եկեղեցականները և թագավորը իրմե ստիպողաբար խնդրեցին, որ փութով կատարե անհրաժեշտը որպեսզի Հ. Կիլեերմե վերադառնա այդ երկիրը[160]։ Արդ, 1611-ի սկիզբն է, որ Հ. Ժուան Թատեո Ղուկաս

[158] Կախեթի թագավոր Աղեքսանդր Բ-ի և Սիկստոս Ե պապին 1585—1590 միջև առաջին հարաբերություններուն մասին տե՛ս Ալլեն, էջ 204 և հաջորդները։ Կուվեյիա կպատմե, թե ինքն ալ Սպահանի մեջ ունեցած է խոսակցություններ Մանուչար խանի հետ, իշխան Վրաստանի ուրիշ մեկ հողամասին, որ իրեն ըսած է, թե «շատ գոհ պիտի ըլլար, եթե մեր եկեղեցականներեն մեկ քանին փափագեին իրեն հետ երթալ իր երկիրը և եթե իրենց հետ տանեին բժիշկ մը, որ շատ հարգ պիտի վայելեր»։ Մանուչար Ա, իշխան Մենկրելի (1590—1611), 1591-ին ամուսնացած էր Նեսթան Տարեջանի հետ, որ աղջիկն էր Աղեքսանդր Բ-ի և որ մեռավ ծննդաբերության հետևանքով նույն տարին, Ալլեն, էջ 472, ծան. 2։ Սիմանքասի արխիվներուն մեջ, 1596 տարի, Պետական քարտուղարություն, գիրք 703, կա նամակ մը Քարթլիի թագավոր Սիմոն Ա-ի (1557—1569) և (1578—1599), գրված հայերեն տառերով, ուղղված Ֆիլիփ Բ-ի 1595-ին խնդրելու համար, որ իբր պետը արևմտյան կաթոլիկության, անկարելին ընե միանալու համար եվրոպական իշխանավորներուն, կազմելով նոր խաչակրություն մը ազատագրելու համար Արևելքի քրիստոնյաները թրքական բռնապետութենեն և օգնելու համար անոնց, որպեսզի վերագրավեն Քրիստոսի գերեզմանը Երուսաղեմի մեջ։ Տե՛ս Սիմոնի նամակը և Ֆ. Մաքլերի հոդվածը Հայկ. ուսմանց հանդեսին (ֆրանս.) մեջ, Փարիզ, 1920, հատ. Ա, էջ 68—80 և Տետրակ 2, էջ 85—99։ Սիմոն գերի բռնվեցավ թուրքերեն և տարվեցավ Կոստանդնուպոլիս 1600-ին, ուր մնաց գերության մեջ բազմաթիվ տարիներ և մեռավ հավանաբար 1611-ին. Ժամանագրական ծանոթագրություններ, Ալլեն, էջ 339—340։

[159] Կուվեյիա, անդ, էջ 189։

[160] Նամակ Հ. Ժուան Թատեոյի առ Ալեյշո տե Մենեզըշ, Կոա, 26 դեկտեմբեր 1616, Արխիվներ հավատքի տարածման, հատ. 189, էջ 280—281, հրատ. Ք. Ալոնսո, էջ 228—232։

անունով հայ վաճառականի մը և խոճա Շըվլին[161] կոչված հայ կաթոլիկ եկեղեցականի մը հետ գնաց Կորի, Թեյմուրազ Ա-ի մայրաքաղաքը և Տերպենտ։ Վրացի թագավորը և Տերպենտի կառավարիչը ըստ երևույթին հրավիրեցին կարմելյանները իրենց միաբանության մասնաճյուղերը հիմնել այդ վայրերուն մեջ, բայց այս բաղձանքը չիրականացավ[162]։

Գալով պարսիկներուն և թուրքերուն միջև պատերազմին նկարագրության, եթե պատմված իրողությունները իրենց ընդհանրության մեջ ծանոթ են, հեղինակը կուտա կարգ մը անեքտոթային մանրամասնություններ, որոնք հետաքրքրական են, տրված ըլլալով, որ Լուիս Փերեյիրա տե Լասերտա դեսպանը և իր երկու ընկերները 1604-ի հոկտեմբերին գացին պատերազմական գոտին և այցելեցին շահ Աբբասի, որ սպասողական դիրքով կգտնվեր Կարսի շրջանին մեջ, նվաճելե ետք Թավրիզը, Ջուղան, Նախիջևանը, Երևանը, քաղաքներ և ամրոցներ, որոնց մեջեն անցան դեսպանը և իր ընկերները, երբ դեռ թարմ էին պատերազմական հրատապ գործողություններուն վառ տպավորությունները։

[161] Կարելի է հարց տալ, թե խոճա Շըվլին (Շահվելի՞) իրապես հայ կաթոլիկ եկեղեցակա՞ն մըն էր։ Կհակինք մտածելու, թե հարուստ վաճառական մըն էր։ 1571-են սկսյալ կգտնենք Ջուղայեցի հայ վաճառականներ հիշատակված Իտալիա և մասնավորաբար Վենետիկի մեջ «Քիոֆալինո» անվան տակ, որ կտրվեր ընդհանրապես ամեն հայ վաճառականի։ Տե՛ս Ալիշան, անդ, էջ 413 և Ուռենրիյն, Նախիջևանի եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ, Քարոզիչ եղբայրներու արխիվին մեջ, հատ. Զ, Հռոմ, 1936, էջ 197։ Իր ծախքով է որ կառուցվեցավ ս. Մարիամ կաթողիկե հայերի եկեղեցին Սպահանի մեջ, ուր պաշտամունք կկատարվեր 1609-ին՝ քանի մը տարի ետք միայն Ջուղայի և Նախիջևանի նահանգին հայերուն գաղութեն. Կարմելյաններ, էջ 191։ 14 մայիս 1609 թ. նամակով մը Հ. Ժ. Թատեո կանդրադառնա խոջա Շըվլիին, որ իր մարդոցմով, 250 քրիստոնյա ընտանիք, զինքը ընդունեց Նոր Ջուղայի մեջ։ Խոջա Շըվլին իրեն հայտնեց, թե կփափաքեր Օրմուզի շեյխին գնել Քիշմ կղզիին մեջ հողամաս մը և այնտեղ կառուցանել հաստատություն մը հայերու և ասորիներու համար, ուր Բոկտոն կարմելյանները արտոնություն պիտի ունենային հաստատվելու։ Կառուցվելիք եկեղեցին պիտի ունենար երեք մաս, լատիններուն, հայերուն և ասորիներուն համար։ Եղբ. Վենսան տը Ֆրանսիս այս մասին պիտի բանակցեր Օրմուզի շեյխին հետ. Կարմելյաններ, էջ 171։

[162] Կարմելյաններ, էջ 196։ Ըստ Հ. Ժ. Թատեոյի տեղեկագրին, Կորիի հայ եկեղեցականները և իրենց հավատացյալները հնազանդության խոստում կատարեցին պապին և կաթոլիկ եկեղեցիին։

ԲՆԱԳՐԵՐ

1. ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՄԱՍԻՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Քրիստոնեության առաջին նշանը, որ տեսանք Պարսկաստանի թագավորության մեջ եղավ ս. Օգոստինոսի մեր պզտիկ վանքը Սպահանի մեջ[163], ուր է շահին արքունիքը: Եկեղեցականներն ունեին պզտիկ եկեղեցի մը, շատ մաքուր և լավ դասավորված, ապակիավոր պատուհաններով: Այնտեղ շատ մահմեդականներ կուգային, այր և կին, մեծ մասը հետաքրքրության համար, ու նաև քանի մը հիվանդներ, որոնք կուգային խնդրելու եկեղեցականներեն, որ զիրենք առողջացնեն միջնորդելով մեր Փրկիչ Քրիստոսի մոտ, զոր կկոչեն Իսա[164]: Շատ կպնդեին, որ կարդան Ավետարանը իրենց գլխուն վրա: Եվ եկեղեցականները մեզի հավաստիացուցին, որ շնորհիվ Աստուծո, մեկ քանին բժշկված էին: Տեսանք խալամուհի մը, աղջիկ խանի մը, այսինքն դուքսի մը, որ եկեղեցի կուգար շաբաթը առնվազն մեկ անգամ, բազմաթիվ աղախիններով և կրելով նվերներ. ծանր անկարութենե մը կտառապեր: Շնորհիվ քանի մը եկեղեցականներու աղոթքներուն և Ավետարանի զորության, զոր հաճախ կարդացած էին իրեն համար, վերագտավ առողջությունը: Հաստատեցինք, որ ամեն անոնք, որ այստեղ կուգային, բարեպաշտության համար ըլլա, թե հետաքրքրության համար, կմեծարեին մեր սուրբ պատկերները, զորս կհամբուրեին շատ հարգանքով:

Այն օրերուն ընթացքին զորս սպրեցանք եկեղեցականներուն հետ և զորս այս վերջինները գրեթե ամբողջությամբ անցուցին աղոթելով, ընդունեցինք այցելությունը երիտասարդ գերմանացիի մը, որ տասներեք տարի առաջ առևանգված էր Հունգարիո մեջ և մահմեդական դարձած էր: Բայց կուզեր վերադառնալ մեր սուրբ հավատքին և խոսելով այս մասին, եկեղեցականներեն խնդրեց օգնել իրեն: Քաջալերեցին զինքը և տվին նամակներ Հնդկաստանի համար, հետո հրաժեշտ տվին իրեն ամեն ինչ լավ բացատրելով: Լսեցինք հետո, որ մեկնած էր, մահմեդականներուն կատարած ձեռնարկներուն շնորհիվ:

Ուրիշ մըն ալ, Ֆրանսացի մը, զոր շահը գերի վարած էր Թավրիզի մեջ և որ արգելափակված էր թագավորին հարկարաժիններուն մեջ ուրիշ բանտարկյալներու հետ, ըսել տվավ եկեղեցականներուն, որ արտոնություն ձեռք բերեն գալու և իրեն հետ խոսելու համար, որովհետև քրիստոնյա էր:

Իրեն վրա հսկող կառավարիչին արտոնությունը ստանալով գացինք զինքը տեսնելու: Մեզի տեղեկացուց, որ Թուրքերուն կողմե գերի բռնված էր յոթը տարի առաջ և իր գերությունը կտևեր կայսեր պատերազմներեն ի վեր, բայց միշտ քրիստոնյա մնացած էր, երբեք չէր ըրած մեր սուրբ հավատքը, ոչ ալ դադրած էր ըսելե իր աղոթքները և Տիրամոր ժամասացությունը: Երբ հարցուցինք, թե բռնադատա՞ծ էին զինքը մահմեդական դառնալու, պատասխանեց թե ոչ, բայց մահմեդականները զինքը իրենցմե կհամարեին ոչ թե անոր համար, որ կըկատարեր անոնց ծեսերը կամ կերթար մզկիթ, այլ որովհետև իրենց պես հագված էր, լավ Թուրքերեն կխոսեր ու նաև իր առաջին տերը երբեք չէր զբաղած այդ բանով: Իր ընկերները գիտնալով, որ քրիստոնյա է, հարցուցինք թե պիտի ծածկե՞ր իր հավատքը, եթե շահը իմանար և հարցաքններ զինքը. պատասխանեց թե պատրաստ է իր կյանքը վրա տալու, քան թե ուէ բան ընելու իր սուրբ հավատքին դեմ:

Այս տրամադրությամբ և որոշած ըլլալով փախուստ տալ դեպի քրիստոնյա երկիր մը, եթե կարելիությունը ունենար, ուզեց խոստովանիլ: Սպահանի վանահայրը[165] ըսավ իրեն, որ պատրաստվի 8 օր, որմե ետք իրեն պիտի ուղարկեր խոստովանահայր մը: Հ. Պելչիոր և Հ. Տիեկոն[166] են, որ գացին իրեն և այս վերջինույն խոստովանեցավ լատիներենով և մեծ զղջահարությամբ:

---

[163] *1602-ի վերջավորության շահ Աբբաս Ա արտոնություն տվավ երեք օգոստինյաններու, Ժերոնիմո տա Քրուզ, Անթոնիո Կուվեյիա և Քրիստովան տը Սանթո Էսփիրիթո, եկեղեցի մը ունենալու Սպահանի մեջ: Եկեղեցին նվիրված էր Տիրամոր Վերափոխման: Հ. Պելչիորի նկարագրությամբ կտեսնվի, թե ինչպե՞ս էին վանքը և եկեղեցին, երբ այնտեղ անցավ 1604-ի ամառը: Ավելի մանրամասնության համար տե՛ս ծան. 60:*

[164] *Իսա անունն է, զոր մահմեդականները կուտան Հիսուսի:*

[165] *Այն ատենվան վանահայրն էր Քրիսթովան տը Սանթո Էսփիրիթո, որու տեղ անցավ հետո եղբ. Տիեկո տե Սանթա Աննա:*

[166] *Եղբ. Պելչիոր տոս Անժոս և եղբ. Տիեկո տե Սանթա Աննա: Այս վերջինը Գոայի մեջ միացած էր Լասերտայի դեսպանության անդամներուն մինչև Սպահան ճամփորդելու, օգոստինյանց վանքը մտնելու համար:*

Մեկնեցանք Սպահանեն[167]։ Թավրիզ հասնելով այցելությունը ընդունեցինք ծանրախոհ մահմեդականի մը, բազմաթիվ ուրիշ ընկերներով և որովհետև կրոնքի մասին կխոսեինք, մեզի նշան ըրավ, որ հեռացնենք իր ընկերները, ինչ որ ըրինք, ըսելով թե ուրիշ օր մը իրենցմե յուրաքանչյուրին պիտի խոսեինք և թե այդ օրը կուզեինք խոսիլ այդ մեկին։ Տան դուռները փակել տվավ և մեզի ըսավ թե սիրտով քրիստոնյա էր։ Խնդրեց, որ իրեն սորվեցնեինք մեր հավատքին հատուկ բաները, տեսնելով Աստուծո մատը մեր գալուստին մեջ։ Սկսանք իրեն բացատրել քրիստոնեությունը, բայց ընդմիջվեցանք իր ընկերներեն, որոնք դուռը կզարնեին։ Քանի որ այսպիսով արգելք կըլլային որ մեզի լսե, արտոնություն ուզեց երեկոյին գալու, ինչ որ տվինք ուրախությամբ։ Եկավ ուրեմն իրիկունը և երբ ընդունեցինք զինքը, մեր ոտքը ինկավ արտասվելով։ Իրեն խոսեցանք Քրիստոսի գալուստին և մեր փրկության համար իր մահվան մասին։ Ուրացավ Մոհամմետը քանիցս և աղերսեց որ մկրտենք զինքը։ Հարցուցինք իրեն թե որքա՞ն ատենե ի վեր ուներ այդ փափաքը։ Պատասխանեց թե իր հայրը շատ հարուստ եղած էր (ինչպես ինքն ալ էր տակավին), բայց ունեի ճաշակը ժուժկալության և առանձնության։ Մեռնելու պահուն կանչած էր իր կինը և զավակները և ըսած էր. կհրամայեմ ձեզի դիակս առնել և տանիլ ճամփուն վրա։ Եթե անցորդներուն մեջ գտնվին մարդիկ, որոնք ուզեն շիրիմ մը տալ անոր, անոնց հավատքն է, որ պիտի ընդունիք ձեր փրկության համար։ Այդպես ալ եղավ։ Մահմեդականները և հրեաները անցան առանց ուշադրություն դարձնելու մարմնին։ Հետո եկան քրիստոնյա հայեր, որոնք զինքը այդպես լքված տեսնելով՝ թաղեցին։ Այդ ժամանակեն ի վեր երիտասարդ մահմեդականը միշտ քրիստոնյա եղած էր սրտանց և երբեմն գաղտնի կերթար հայոց եկեղեցիները, անոնց խոսելու համար մեր սուրբ հավատքին մասին։ Այս պատճառով ալ արդեն պատժված և գեշ վերաբերումի առարկա եղած էր։ Այսպես, երբ լսած էր թե ֆրանկ դեսպան մը կուգար եկեղեցականներու հետ, մեծ անհամբերությամբ սպասած էր մկրտվելու համար, իր պառավ մորը հետ, որու ալ փափաքն էր այդ։ Այն ատեն իրեն ըսինք թե չէինք կրնար զինքը մկրտել, եթե պիտի մնար մահմեդականներու մեջ։ Եթե կուզեր փրկվիլ, պետք էր թողուր իր երկիրը և երթար քրիստոնյա աշխարհ, ուր պիտի ստանար մեր Տեր Քրիստոսի հավատքը և պիտի

[167] Դեսպան Լասերտա հ. Պելչիորի և հ. Կիլեերմեի հետ մեկնեցավ Սպահանեն 9 օգոստոս 1604-ին։

փրկվեր։ Բավական դժվարություն կրեցինք զինքը համոզելու համար, այնտեղ իր ունեցած կալվածներուն և ինչքերուն պատճառով և պետք եղավ իրեն ցույց տալ, թե որքա՜ն անցավոր են այս աշխարհի բաները, երբ կերթանք մյուս կյանքին մեջ։ Խոստացավ ծախել ամեն ինչ, որ ուներ և վաճառական դառնալ Օրմուզի մեջ։ Բայց որովհետև չէր կրնար տանիլ իր անկար մայրը, խնդրեց որ երթանք զայն մկրտելու։ Հակառակ մեր փափաքին կարելի չեղավ, որովհետև գյուղը Թավրիզեն 6 մղոն հեռու էր, քաղաքը շրջապատված էր քյուրտերով, որոնցմե ամեն մարդ կվախնար և մենք ալ միշտ ի մտի ունենալով անակնկալ վտանգ մը թամբված կպահեինք մեր ձիերը, ուրեմն ազատ չէինք։ Հասկնալով այս ամենը և ցավելով հանդերձ, խնդրեց, որ քանի մը խոսք Սուրբ Ավետարանեն իրեն տանք, զորս գրեցի իրեն համար, տանելու և մորը գլխին վրա դնելու համար։ Կամի Աստված, որ ս. Հոգվո ներշնչումով այս մկրտությամբ փրկած ըլլա ան և իր որդին իր ամբողջ ընտանիքով ընդունի մեր սուրբ հավատքը։

Թավրիզեն երեք ժամատա[168] հեռու, մտնելե առաջ Ջուղա[169], որ հայերու մեծ քաղաք մըն է, ուր մահմեդական չկա, շատ մը հայ եկեղեցականներ եկան մեզ դիմավորելու, շուրջառներով, խաչելությամբ զարդարված աղոթագիրքերով, բարձրացնելով խաչեր և բուրվառներ, կրելով գավազաններ և երգելով շարականներ իրենց ձևով։ Ձիեն իջանք և ծունկի եկած համբուրեցինք խաչը մեր Տեր Քրիստոսի, հետո անոնց ընկերացանք մինչև ս. Հովհ. Մկրտիչ եկեղեցի մը, ամբողջությամբ մոմերով լեցուն, ուր քանի մը աղոթք երգելե ետք մեզի բարի գալուստ մաղթեցին։ Այն ատեն ըսինք եկեղեցականներուն, թե ուրիշ անգամ մը պիտի ուզեինք լսել իրենց պատարագներեն մեկը և իրենք ալ պիտի լսեին մերը և թե հետո կուզեինք խոսիլ ամենեն գիտուններուն հետ քրիստոնեության մասին իրենց ըմբռնումին վրա։ Շատ ուրախ եղան, որովհետև այս երկրին մեջ դեռ չէին տեսած ուրիշ ֆրանկ կրոնավորներ։

[168] Ժամատա համասար էր 30.000 քայլի, յուրաքանչյուրը 2,5 ոտք, ընդամենը համարժեք 22—23 կիլոմետրի։

[169] Բնագրին մեջ Ջուլֆա. կգտնվի Նախիջևանի հարավ-արևմտյան կողմը, Արաքսի հյուսիսային ափին։ Մոտը կար կամուրջ մը, որ անցքի ճամփա մըն էր Հայաստանեն Պարսկաստան երթալու համար և մեծապես նպաստեց քաղաքին ընդարձակումին, շնորհիվ ստեղծված առևտրական շարժումին. Սեն-Մարթեն, անդ, հատ. Ա, էջ 133։ Այցելությունը տեղի ունեցավ 1604-ի ամառը, քանի մը շաբաթ առաջ շահ Աբբասի հրամանեն քաղաքը քանդելու և բնակչությունը տարագրելու։

Երեք օր ետք ամենն ալ հավաքվեցան իրենց ս. Գեորգ մայր եկեղեցիին մեջ[170] և երգեցին պատարագ մը հռոմական բոլոր արարողություններով: Եկեղեցին ալ հռոմական է և նոտագրեցի անոր բոլոր մանրամասնությունները: Պատարագեն ետք բոլոր վանականները հավաքվեցան և մեր առաջին հարցումը եղավ թե կհնազանդի՞ն Ս. քահանայապետին, զայն ճանչնալով իբր տիեզերական պետը եկեղեցիին: Պատասխանեցին թե այո և թե ան կգրավեր ս. Պետրոսի և մեր Տիրոջ տեղը երկրի վրա: Հարցուցինք թե այդ պայմաններուն մեջ պատրա՞ստ էին հնազանդելու ունէ որոշման, զոր ան պիտի տար եպիսկոպոսական ժողովի մը մեջ. պատասխանեցին թե այո և թե եթե անոր կոչ չէին ըներ իրենց վարչական գործերուն համար, պատճառն այն էր, որ Թուրքերու մեջ կապրին: Թեև ամենն ալ միևնույն բանը ըսին մեզի այդ օրը և ուրիշ խոսակցություններու ընթացքին, որ ունեցանք իրենց հետ, հասկցանք, որ իրենց ծեսին համար այնքան կապված էին հռոմական եկեղեցիին, որ չէին կրնար շեղիլ անկե, այն աստիճան որ երբ պետք էր մեր փաստարկություններուն առջև տեղի տային, կառարկեին թե ս. Գրիգոր այդպես ուզած էր: Ըսին թե իրենցմե շատեր կերթային Հռոմ համբուրելու համար Ն. սրբության ոտքերը, բայց կհնազանդեին Կոստանդնուպոլսո պատրիարքին վախնալով Թուրքերեն: Հարցումներ ուղղեցինք հավատքի կետերու վրա, եկեղեցվո խորհուրդներուն և դավանանքի խորքին մասին: Սխալ չգտանք իրենց պատասխաններուն մեջ, զորս կուտային թարգմանին միջոցով: Գալով խորհուրդներուն, յոթն ալ ունին, բայց մերիննեն շատ տարբեր ծիսակատարությամբ մը: Եկեղեցականները կամուսնանան, բայց չեն կրնար պատարագել. կկատարեն բոլոր մյուս խորհուրդները, բայց միայն վանականները կրնան պատարագել, ամուսնացած չեն, բայց չկրցանք լավ հասկնալ, թե ի՞նչպես ի գործ կդնեն իրենց կրոնքը: Իբր հագուստ իրենց գդակին վրա տեսակ մը բուրդե վեղար կդնեն: Միասին կապրին, բայց չեն գիտեր,

170 Ս. Հովհ. Մկրտիչ և ս. Գեորգ եկեղեցիները մաս կկազմեին Ջուղայի 7 եկեղեցիներուն, 1605-ի ողբերգությենեն առաջ. Ալիշան, էջ 413 և 123: Ս. Գեորգ եկեղեցին, զոր Հ. Պեյշիոր կկոչե մայր եկեղեցի, հիշատակված է ս. Գեորգ Զորավար անվան տակ միաբանաբար Ամենափրկիչ վանք եկեղեցիին հետ 1602 թվակիր վավերաթուղթի մը մեջ, զոր գրած էին Ջուղայի հայերը, կրոնավոր և աշխարհական, որոնք հայ տոմինիկյան Ազարիաս Ֆրիտոնը կհանձնարարեին իրենց Հալեպի հայրենակիցներուն, տե՛ս Վատիկանի արխիվներ, Պորկեզ Գ. 124 D, էջ 49—51: Հիշված մասնակի անգլիերեն թարգմանությամբ Ուտենրիյնի կողմե, Եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ Նախիջևանի, Քարոզիչ եղբայրներու արխիվին մեջ, հատ. Զ, Հռոմ, 1936, էջ 161—216:

թե ո՞վ հիմնած է իրենց կարգը: Կարելի է մտածել, որ վանական անունը ունին միայն այն պատճառով, որ չեն կրնար ամուսնանալ, կըպատարագեն միայն կիրակի և տոնական օրերը: Շատ կհարգեն արարողությունները, բոլոր հայերը միշտ կծնրադրեն եկեղեցիներուն մեջ, կհամբուրեն հողը, վեր կկանգնին խաչակնքելով և ասիկա ամեն քայլի. շատ ծոմապահության օրեր ունին շաբաթվան մեջ, միս չեն ուտեր չորեքշաբթի և ուրբաթ օրերը, այլ միայն շաբաթ օր:

Երբ Ջուղա էինք դեսպանին մոտ տեսանք մուտքը չորս մարդերու, որոնք հագած էին շուրջառաձև հագուստ մը և կկրեին գդակներ, հագուստին վրա կային ճերմակ մեծ փորուրաներ և իբր վերարկու ունեին կնգղավոր և մթագույն թեզանիքով լայն զգեստ մը: Կուգային երեք մղոն հեռու գտնվող գյուղե մը դեսպանեն խնդրելու համար, որ միջամտե ի նպաստ իրենց շահին մոտ, թեթևցնելու համար Թուրքերուն պարտադրած լուծը: Ամենն ալ եկեղեցականներ էին և տոմինիկյան վանական ըսին, հռոմեական եկեղեցվույն ենթարկված, որմե կանվանվին իրենց եկեղեցականները շուրջ չորս հարյուր տարիե իվեր, ինչ որ գիրենք կտարբերե հայերեն. Ֆրանկ[171] կկոչեն զանոնք: Փափագելով տեսնել իրենց եկեղեցիները և իրենց քրիստոնեական վարքը և նըկատելով, որ դեսպանը չէր ուզեր անհրաժեշտ եղող երկու մղոնի շեղումը կատարել, մենք որոշեցինք երթալ, միասին առնելով երեք զինվոր և եկեղեցական մը, որ մեր մոտ մնացած էր այդ նպատակով: Հասանք նույն օրը կեսօրե ետք: Մեծ գյուղ մըն էր[172], և մեզի տեսնելով, քրիս-

171 ԺԴ դարեն սկսյալ ունիթորներու գործոն առաքելությունը Սյունյաց հայ բնակչության մոտ, մասնավորապար Նախիջևանի և շրջակա գյուղերուն մեջ, իբր հետևանք ունեցավ բազմաթիվ գյուղերու բնակչության միացումը Հռոմի հետ: Զանազանելու համար միացողները մյուս հայերեն՝ մահմեդականները և եվրոպացիները զանոնք կոչեցին Ֆրանկներ. Հ. Մարյան, Պատմություն հայ եկեղեցվո հիմնադրություններուն, Պեյրութ, 1965, էջ 298: Ունիթորներու գործունեության դրական և ժխտական արդյունքներուն մասին տ. Հ.Գրիգոր Փետրովիչ, Ունիթոր եղբայրները հայ եկեղեցվո մեջ 1330—1360, Քահանայապետական համալսարան, Հռոմ, 1969, արտատպված Էունթես Տոսեթեն, ԻԲ, 1969, էջ 309—347:

172 Ապարաներ, Ապպարաներ, Ապարան կամ Ապրաներ գյուղաքաղաքը կգտնվի Երնջակի արևմտյան ափին վրա, Նախիջևանեն շուրջ երեք մղոն հեռու: Այնտեղ կար կարևոր վանք մը, ուր էր ԺԶ դարեն իվեր Նախիջևանի արքեպիսկոպոսին աթոռը: Այս վերջինը, ինչպես կաթոլիկ հայերը, հալածանքի ենթարկված էին քաղաքը և ապաստանած էին Ապարաներ, լքելով ունիթորներու կառուցած հին մայր եկեղեցին, որ մզկիթի վերածված էր. Ուտենրիյն, Նախիջևանի արքեպիսկոպոսները, էջ 189—190: Ապարաների վանքին մասին տե՛ս նույն, Արխիվ քարոզիչ եղբարց, հատ. Ա, Հռոմ, 1932, էջ 265—281:

տոնյանները կփութային գալ և համբուրել մեր ձեռքը։ Երբ հասանք եկեղեցիին առջև, բոլոր եկեղեցականները, շուրջ յոթը[173], դուրս ելան սիրալիր ընդունելություն կատարելով մեզի։ Եկեղեցին մտնելով գըտանք օրհնված ջուր, զոր հայերը չեն գործածեր և խորաններ մերիններուն նման։ Աղոթեցինք երկյուղածությամբ, ուրախությամբ տեսնելով Քրիստոսի հավատքը իր ամբողջ կատարելությամբ Թուրքիո մեջտեղը։ Եկեղեցականները մեզի տարին ավանդատուն, ուր մեզի ցույց տվին խույրեր և կրոնական զարդարանքները իրենց եպիսկոպոսին, որ մեռած էր երկու կամ երեք տարիե ի վեր[174]։ Անոնցմե մեկ քանին թանկարժեք էին և կկրեին զինանշանները զանոնք տվող պապերուն։

Մեզի ցույց տվին նաև արծաթյա մեծ խաչ մը Հռոմի մեջ շինված, բազմաթիվ մասունքներով, ինչպես նաև մասունքներ սուրբ խաչին փայտեն և սուրբերեն, ամենն ալ Հռոմեն եկած։ Այնուհետև մեզի հըրամցուցին պարզ ճաշ մը։ Եվ հայր Պելչիոր պատվիրեց, որ հաջորդ առտու եկեղեցի հրավիրեն գյուղին բոլոր բնակիչները, որովհետև կուզեինք պատարագ մատուցանել, լսել նաև իրենց պատարագը և իրենց հետ խոսակցություն մը ունենալ։ Այդպես ալ եղավ։

Եվ հաջորդ օրը բոլոր այս հալածված խեղճ քրիստոնյաները հավաքվեցան եկեղեցին և մեր պատարագին ներկա եղան մեծ բարեպաշտությամբ։ Հետո եղբ. Պելչիոր կարճ ճառ մը խոսեցավ մխիթարելով ներկաները իրենց կրած տառապանքներուն համար և քաջալերելով զանոնք, որ պատրաստ ըլլան կրելու բոլոր գալիքներն ալ ապագային, վասն մեր տեր Քրիստոսի և իր սուրբ հավատքին։ Այն ատեն բոլորն ալ մոտեցան իրեն, ոմանք կհամբուրեին իր շրջազգեստը, ոմանք իր ոտքերը, ուրիշներ իր ձեռքերը, մեծ հուզումով, որովհետև բնավ չէին տեսած ուրիշ «ֆրանկ» եկեղեցականներ այդ վայրերուն մեջ։ Վիճակավորը մատուցանեց նույնպես իր երեքով երգված պատարագը, հռոմեական եկեղեցվույն ամբողջական ծեսովը, տարբեր ըլլալով միայն լեզուն, որ հայերեն էր։ Ընթերցվածեն ետք պատարագիչը ցույցադրեց

[173] Ջիթթատինի կըսե թե 1616-են կային 6 եկեղեցական և 1 ենթասարկավագ, տե՛ս Առեսո, Անճել Մարիա Ջիթթատինի, արքեպիսկոպոս Նախիջևանի, Հռոմ 1970, էջ 212։ Մինչ հայ եղբ. Ազարիաս Ցրիտոն, որ սեպտեմբեր 1601-ին Ապարաներեն Հռոմ գացած էր և տեղեկագիր մը ներկայացուցած էր Կղեմես Ը-ի, ուր կըսեր թե կային 15 կրոնավոր և 8 սարկավագ. տե՛ս Ալիշան, էջ 387, որ հատվածներ կուտա տեղեկագրեն։

[174] Հայ արք. Նիկողայոս Ցրիտոն, որ մեռած էր 1601-ին կամ 1602-ին։ Տե՛ս Ալիշան, էջ 392, կըսե թե վախճանած է 16-րդ դարու վերջը կամ 17-րդի սկիզբը։ Տե՛ս Կենսագրություն Ուռեներիյնի մոտ, էջ 171։

խաչը երգելով շարական մը, մինչ ժողովուրդը կհետևեր ջերմեռանդ պաշտամունքով։ Հետո քարոզեց և մենք մեկնեցանք։ Հարցուցինք կըրոնավորներուն, թե ինչպե՞ս այդ շրջանը քրիստոնյա եղած էր, որքա՞ն ֆրանկ գյուղեր կային և որո՞նք էին կրոնական պաշտոնյաները։ Վիճակավորը մեզի պատասխանեց թե շուրջ 400 տարի առաջ եկած էր կրոնավոր մը, որ կկոչվեր Պարթուղիմե և կքարոզեր Քրիստոսի հավատքը և այս գյուղերեն մեկ քանին դարձի բերելե ետք գացած էր Հռոմ, ուրկե վերադարձած էր եպիսկոպոս[175] անվանվելով։ Այնուհետև շարունակած էր քարոզել, արդեն յոթը գյուղեր[176] կաթոլիկ դարձուցած

[175] Պարթուղիմեո տա Պոլոնիա, բուն անունով Պարթուղիմեո տե Փոտիո, կպատկաներ Քարոզիչ եղբայրներու միաբանության ինչպես այն ատեն կկոչեին Տոմինիկյան միսիոնարները։ 1318-ին ուղարկվեցավ Արևելք իր ընկերներով, որոնց մեջ էր սպանիացի եղբ. Պետրոս տ'Արակոն, և հաստատվեցավ Ուրմիա լիճին հարավ-արևելքը (Մարաղայի մեջ), ուրկե հարաբերության մեջ մտավ դրացի հայ վանքերուն հետ։ 1328-ին Նախիջևանի մոտ գտնվող Քռնայի վանքին մեծավոր Հովհաննես վարդապետը եկավ իրեն քով 1330-ին համոզեց իրեն հետևելու Քռնայի մեջ, ուր Աստվածամոր վանքին մեջ Պարթուղիմեոն մնաց երեք տարի և հիմնեց Նախիջևանի հայ կաթողիկե համայնքը։ Պարթուղիմեո 1331-ին Հովհաննես վարդապետին օժանդակեց հիմնելու Ունիթոր եղբայրներու միաբանությունը, որ կոչված էր ունենալու երկարատև պատմություն մը, մինչև 1794 և որու նպատակն էր իրագործել հայ եկեղեցվո միացումը Հռոմի աթոռին հետ։ 1583-ին ունիթորները միացան Տոմինիկյան միաբանության, որուն սահմանադրությունը և զգեստը ընդունած էին, հետևելով հանդերձ ս. Օգոստինոսի կանոններուն։ Պարթուղիմեո տե Փոտիո մեռավ Քռնայի մեջ 15 օգոստոս 1333-ին և թաղվեցավ Քռնայի վանքին եկեղեցվույն մեջ տե՛ս «Պիպլիոթեքա Սանքթորում» մեջ, հատ. Բ, հրատ. Ինստիթութո ճովաննի ԻԳ-ի 1962, «Պարթուղիմեո տա Պոլոնիա», Նիքոլո Տել Ռեյի ստորագրության տակ, սյունակ 878—880։ Պարթուղիմեո տը Պոլոնեյի մասին տե՛ս նաև «Բառարան եկեղեցական պատմության և աշխարհագրության», հատ. Զ, սյուն. 981։ Այս վերջին հոդվածին հեղինակը անոր կուտա Ապալիաթի անունը, որ Նիքոլո Տել Ռեյի կարծիքով հառաջ կուգա շփոթութենե մը տոմինիկյան միսիոնար Պարթուղիմեո տելլի Ապպալիաթիի տի Սիենի անվան հետ, որ Դավրեժի եպիսկոպոս եղավ։ Բուն Պարթուղիմեո տե Փոտիոն դարձյալ սխալմամբ նույնացվեցավ ուրիշ տոմինիկյանի մը հետ, որ կկոչվեր Պարթուղիմեո Փարվը։

[176] Համաձայն եղբ. Ազարիա Ցրիտոնի տեղեկագրին, 1602-ին Հայաստանի մեջ Նախիջևանի շրջանը և շուրջը կային 12 վանք, 1830 կաթոլիկ ընտանիք, որոնք կներկայացնեին շուրջ 19000 հավատացյալ՝ ենթակա Նախիջևանի տոմինիկյան արքեպիսկոպոսին և կրոնավորներուն, որոնց թիվն էր 117 (Համապարփակ ցուցակ Ալոնսո-Ջիթթատինի, անդ, էջ 231)։ 1604-ի վերջը Ջուղայի, Նախիջևանի և շրջակայքի հայերուն թիվը նվազեցավ բռնագաղթին հետևանքով և Հ. Ջիթթատինի իր 1616-ի տեղեկագրին մեջ կուտա միայն 22 կրոնավորի և 305 ընտանիքի թիվերը, բայց 1617-ի երկրորդ տեղեկագրին մեջ կհիշե 20 կրոնավոր և 40470 կաթոլիկ, նույն, էջ 231—232։ Տե՛ս նաև Ալիշան, էջ 386—

էր, երբ անոնցմե մեկուն մեջ, որուն բնակիչներուն կեսը տակավին անհավատ էին, թունավորելով սպաննեցին զինքը։ Այս երանելին զիրենք դաստիարակած էր և իրենց սորվեցուցած էր հնազանդիլ Հռոմի եկեղեցիին, ուրկե մինչև այն ատեն կուգային իրենց եպիսկոպոսները, որոնք միշտ երկրացի վանականներ էին, որովհետև երբ եպիսկոպոսը կվախճաներ, նամակներով, որ կըսեին արքեպիսկոպոս Նախիջևանի են. վանականներեն երկուքը կմեկնեին Հռոմ, ուրկե իրենցմե մեկը կըվերադառնար արքեպիսկոպոս օծված։ Անոնցմե երկուքը այսպես մեկնած էին երկու տարիե ի վեր և դեռ չէին վերադարձած պատերազմին պատճառով, որ ճամփորդությունը կդժվարացներ[177]։ Իրենց կրոնքը այնքան կատարյալ չէ որքան Եվրոպայի մեջ։ Արքեպիսկոպոսը փորուբար կուտա միայն երբ եկեղեցական ձեռնադրված են և կձեռնադրե անոնք միայն, որ կսպասարկեն եկեղեցվույն մեջ և դաստիարակված են եկեղեցականներու հետ, աոնք կկոչվին նորընծա։ Համաձայն մեր ստուգածին, հիմնականին մեջ կպահեն երեք ուխտերը և գյուղերուն համար քահանաները կնշանակվին նույն կրոնավորներեն և յուրաքանչյուր գյուղի մեջ անոնցմե զատ կան մեկ կամ երկու ուրիշ կրոնավորներ, որ կսպասարկեն նշանակյալներուն։ Արքեպիսկոպոսը միշտ անոնց վիճակավորն է և երբ կբացակայի եկեղեցական մը կնշանակե, որուն ամենն ալ կհնազանդին ինչպես վիճակավորին։

Փափագեցանք տեսնել մոտակա քանի մը եկեղեցիներ։ Կես մղոն հեռավորությամբ կար հատ մը, ուր ընդունվեցանք Տոմինիկոս

389, որ կհիշե եղբ. Ազարիայի տված տեղեկությունները ԺԷ դարուն սկիզբը, ինչպես և հայ դոմինիկյան Նիկոր Նազարյանի 1656-ին տված տեղեկությունը, որ կըսե թե հայ տուներուն և բնակիչներուն թիվը մեծապես նվազած էր։

[177] Ալիշան, էջ 393—394, և Ուտենրիյն, Արքեպիսկոպոսներ Նախիջևանի, էջ 172։ Երբ մեռավ Նախիջևանի արքեպիսկոպոս Նիկողայոս Ցրիտոն կամ Ապարանցի, այսինքն ԺԶ դարուն վերջը կամ ԺԷ դարուն սկիզբը, իր աթոռակիցը Ազարիա Ցրիտոն 1601-ի սեպտեմբերին մեկնեցավ Հռոմ, ուր հասավ 15 օգոստոս 1602-ին, կթվի թե հայր Մարկոսի հետ։ Ազարիա Ցրիտոն Նախիջևանի արքեպիսկոպոս օծվեցավ 7 մայիս 1604-ին Կղեմես Ը պապին կողմե։ Հ. Պեյշիոթի Ապարան այցելության ժամանակ 1604-ի ամռան, օծյալ արքեպիսկոպոսը դեռ Հռոմ էր և երբեք չկրցավ վերադառնալ իր պաշտոնին, որովհետև մեռավ հավիտենական քաղաքին մեջ 7 հունվար 1607-ին, Սպանիայեն վերադարձին։ Իր ընկերը, հայ հ. Մարկոսը, որ դեռ Իտալիա էր, արքեպիսկոպոս օծվեցավ, բայց ան ալ մեռավ նույն տարին առանց կարենալու երթալ իր թեմը։ 22 հոկտեմբեր 1607-ին պապը ընտրեց և օծեց ուրիշ հայ դոմինիկյան մը, որ արդեն Իտալիա կգտնվեր, Մաթեոս Երազմ անունով ճանչցված։ Իրենց կողմե Նախիջևանի հայ դոմինիկյանները լսած ըլլալով Ազարիա Ցրիտոն արք.-ի մահը ընտրեցին Մաթեոս անունով մեկը և ղրկեցին զայն Հռոմ ձեռնադրվելու համար, բայց կերևի մեռած է ճամփան։

անունով ծեր եկեղեցականի մը կողմե, որ սուրբի մը երևույթ ուներ և կկարծենք թե այդպիսին էր։ Աղոթելե ետք մեզի ցույց տվավ մաս մը փառապանծ առաքյալ ս. Հուդա Թադեոսի բազուկեն, ամբողջ նախաբազուկը մինչև արմուկը և ձեռքը, որ մարտիրոսացած էր Պարսկաստանի մեջ[178]։ Անշուք կերպով պարփակված էր փայտի մեջ, որպեսզի թուրքերը չգողնան և տեղ տեղ կերևեր բազուկին ոսկորը։ Մեզի ցույց տվավ նաև երկաթյա խոշոր խաչ մը, զոր սուրբ առաքյալը շինած էր իր ձեռքով, կոփելով երկաթը ինչպես որ տեսանք։ Այս եկեղեցվույն մեջ թաղված է երանելի Պարթողոմեոն, որուն դամբանը տեսանք, ուրկե քրիստոնյաները հող կվերցնեն, որ հավաստեցին մեզի թե կըուժե կարգ մը հիվանդություններ[179]։ Խորանի մը վրա գտանք ս. Հովհաննես Մկրտիչի պատկերատախտակ մը, երկու մասե բաղկացած և ուրիշ մը դարձյալ երկու մասե, որ կներկայացներ կույսը իր որդվույն հետ բազուկներուն մեջ։ Թուրքերը իզուր փորձելով կտրել զայն և չկարենալով՝ դանակի հարվածներ տված են և իրենց դաշույնին ծայրովը հանած են կույսին և մանուկին աչքերը։ Եկեղեցականները կմեծարեին այս նկարը և կըսեին թե հրաշքներ կգործե։ Ուզեցինք այդ նկարը, զոր եկեղեցականը մեզի տվավ շատ բարեսրտությամբ, տարինք զայն մեր հետը, մտածելով որ մեր Տիրուհին թուրքերուն կողմե իրեն եղած անարգանքներուն փոխարինությունը պիտի գտնե այն մեծարանքներուն մեջ, զորս պիտի մատուցանենք մեզ մոտ իր օգնությամբ։

Այդտեղեն մեկ մղոն հեռու եկեղեցիի մը մեջ կրոնավորները մեզի ըսին, թե ունին մեր փրկիչ Քրիստոսի երկաթյա նիզակը[180]։ Բայց

[178] Ս. Հուդա Թադեոս առաքյալին գերեզմանը ըստ հայկական ավանդության կգտնվի ս. Թադեոս վանքին մեջ, ուր այցելեցինք 1971-ի հոկտեմբերին։ Վանքը, զոր թուրքերը կկոչեն Գարա քիլիսե (սև եկեղեցի), կգտնվի արևմտ. Ատրպատականի լեռնային շրջանը, Մակուեն շուրջ 20 կմ հեռու, իրանական հողամասին մեջ։ Վայրին զանազան կոչումները տե՛ս Ուտենրիյն (Նախիջևանի արքեպիսկոպոսները), էջ 188։

[179] Այցելված եկեղեցին Քռնայինն է, ուր թաղվեցավ Պարթուղմեո տե Փոտիս։ Թեև ԺԷ դարուն բազմաթիվ հրաշքներ կվերագրեին իր դամբանին ինչպես կհավաստե, ուրիշ ժամանակակից վկայություններու կարգին, Հ. Րբտան տը լա Քռուայի 1613-ի տեղեկատվությունը։ Տ. Ալոնսո, Չիթթատինի, էջ 30, ծանոթ. 36 և Կովնեյիա, էջ 146—147։ Քռնայի եկեղեցին ձոնված է Այլակերպության, տ. Ալիշան, էջ 387։

[180] Շագրագենի կամ Շաղենի մեջ է, մեկ ու կես մղոն հեռու Սեյթաշեն, այս ալ մեկ մղոն հեռու Ապարաններեն, ուր կգտնվեր ս. Ստեփաննոսի անվան վանք մը, որուն սեփականությունն էր մասունքը նիզակին, որ «վիրավորած էր մեր Տեր Քրիստոսի կուրծքը», տ. Ալոնսո, Չիթթատինի, էջ 218։ Ալիշան, էջ 387, Խոշկաշեն կկոչե այն վայրը, ուր կգտնվեր ս. Նիզակին նվիրված եկեղեցին։ Վայրին զանազան անուններուն մասին տ.

10—495

կարելի չեղավ երթալ տեսնել, որովհետև դեսպանը արդեն մեզմե առաջ անցած էր և հառաջացած էր մեկ ժողնատա ճամփայով. ըսինք կրոնավորներուն թե մեր վերադարձին պիտի անցնենք այդ վայրեն և իրավ ալ համոզեցինք դեսպանը, որ դա և հասանք գյուղ մը, որ կը գտնվեր ձյունով ծածկված լեռան մը ստորոտը: Եկեղեցիին մեջ, որ փոքր էր, գտանք հայրերեն մեկը, որ առաքինի թվեցավ մեզի. բոլոր գյուղացիները մեզի կընկերանային: Աղոթելե ետք խնդրեցինք եկեղեցականեն, որ մեզի ցույց տա մասունքը, ինչպես արդեն պատվեր ըստացած էր իր մեծավորեն: Մեծ բարեպաշտությամբ մեզի տարավ իր ավանդատունը, ուր զարդերու սնտուկին վրա կանխավ դրված էր փայտե արկղիկը, դոները շարժուն կղպանքով մը փակված: Այնտեղ կը գտնվեր սրբազան երկաթը, որուն մասին խոսեցա: Մինչ եկեղեցականը բանալին կմտցներ կղպանքին մեջ, սկսավ դառնորեն արտասվել և հառաչանքներով և հեծկլտուքներով բացավ արկղիկին դուռը և ծունկի գալով չուզեց դպիլ սուրբ մասունքին և որովհետև դեսպանը այնտեղ էր և մեծ բազմություն կար, կարելի չէր լավ տեսնել, հ. Պելշիոր ըսավ. Տեր, դուք որ ինծի թույլատրած եք իմ ձեռքովս հպելու ձեր սուրբ մարմնին, շնորհն ըրեք արտոնելու, որ հպիմ այս սուրբ երկաթին և բարձրացնելով զայն սկսավ երգել **Գովեմք զՔեզ Աստուած են**. և շա-

Ոսկեճյան, *Նախիջևանի արքեպիսկոպոսներ*, էջ 187: Ըստ հայկական ավանդության, ս. Նիզակին մասունքը, որ ծակեց Քրիստոսի կողը խաչին վրա, կգտնվեր Այրիվանքին մեջ (կկոչվի նաև Գեղարդավանք): Մասնատուփը, որ ըստ ավանդության կպարունակե ս. գեղարդը, արծաթյա գեղեցիկ գործ մըն է, որ շինված է 1268-ին Պռոշյան իշխաններու պատվերով: Մասնատուփը վանքեն փոխադրված է Էջմիածնի գանձատունը. Մարյան, անդ, էջ 268—272: Մասունքին վավերականության վերաբերմամբ գոյություն ունեցող տարակույսներուն մասին տ. Ժոզեֆ Լոռան, *Հայկ. պատմության ուսումնասիրություններ*, Հայկ. մատենաշար Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության, հրատ. Փեթերս, Լուվեն, 1971, հոդված «Խաչակիրները և Հայաստանը», էջ 142. «Նույնինքն մասունքները չմնացին անվիճելիորեն հայերուն սեփականությունը, որոնք չթերացան բողոքելու: Այսպես Սուրբ Նիզակը, զոր Ֆրանկները գտան Անտիոքի ս. Պետրոս եկեղեցիին մեջ, այն չէր, ինչպես լատինները կըսեին, որ թափանցեց Աստուծո մարմնին մեջ և որ հայերուն ձեռքն էր, այլ ուրիշ նիզակ մըն էր, անշուշտ այն ալ մեծարելի, բայց և այնպես նվազ թանկագին, որով հրեաները ծակեցին Փրկչին պատկերը»: Ֆ. տը Ժեզյու, անդ, էջ 77ա, կգրե թե «Հայերուն ցույց տվին նիզակի երկաթ մը, որուն համար կըսեն թե այն է, որ ծակեց մեր Տեր Քրիստոսի կողը, ինչ որ չենք կարծեր, հակառակ անոր, որ կպատվեն և կմեծարեն իբր այդ ... և որովհետև գիտենք, թե Հռոմի մեջ պաշտամունքի առարկա է ուրիշ մը, որ ավելի հավանականություն կներկայացնե, կրնանք ենթադրել, որ այդ երկաթը նահատակության գործիքը եղավ Պարսկաստանի մեջ խոշտանգված սուրբ առաքյալներեն մեկուն»:

րունակեցինք մինչև **Քեզ ենտ եմ** տողը, խաչին աղոթքով: Ամենն ալ համբուրեցին երկաթը մեծ ջերմեռանդությամբ և երբ եկեղեցիեն ներսը տարին զայն իր արկղիկով, որու մեջ փաթթված էր մետաքսով և ոսկեթել ասեղնագործությամբ ժողովուրդին գրգռությունը այնքան մեծ եղավ և արցունքները այնքան առատ և այնքան ուժով կծեծեր ամեն ոք իր կուրծքը, որ ամենեն կարծր սիրտը անգամ չէր կրնար չհուզվիլ. այնտեղ չափեցինք այս երկաթը և գծագրեցինք թուղթի թերթերու վրա: Ասոնք է, որ ունի հայր Կյուլիելմո մխիթարության համար են.:

Այս երկաթին սրբության առաջին փաստը հայերուն վկայությունն է. երեք հարյուր տարվան ավանդության մը համաձայն, իրենց վանականներեն մեկը գողցած է զայն հայերուն մեկ եկեղեցիեն, ուր կգտնվեր, հայտնությամբ մը իրեն հրամայված ըլլալով և գողությունը կատարված ըլլալով մեծ ճարպիկությամբ և Աստուծո օգնությամբ: Հայրերը հաստատեցին նաև, որ երբ ժանտախտի համաճարակ մը ըլլար դրացի գյուղերուն մեջ, բավական էր, որ թափորով զայն դուրս հանեին, որպեսզի համաճարակը դադարեր և թե շատ մը հիվանդներ կբժշկվեին անոր դպելով[181]: Ինչ որ մենք կրցանք հաստատել այն է, թե շատ հաճելի բույր մը ուներ և այնպիսի երանություն մը կներշնչեր, որ չէր կրնար սուրբ բան մը չըլլալ. տեսանք նաև, որ իր ձևը նըման էր անոր, որ կներկայացվի նահատակության տեսարաններուն մեջ:

Գաղտնաբար խոսելով գյուղին երեցներեն մեկուն հետ, հ. Պելշիոր ըսավ որ դեսպանը գիտե թե մահմեդականները կնեղեին զիրենք իրենց պարտքերուն համար և թե ան պատրաստ էր անհրաժեշտ դրամը տալու, որպեսզի վճարեն ինչ որ պարտին, եթե մասունքը իրեն տային: Պատասխանեց անմիջապես, որ այդ մասին հարց չէր կրնար ըլլալ նույնիսկ եթե լեռան չափ ոսկի տային իրենց և թե մասունքը առնելե առաջ պետք էր որ իրենց ամենուն գլուխը կտրեին, ինչպես

[181] **Ջեյմս Մորիեր**, *Երկրորդ ճամփորդություն Պարսկաստանեն, Հայաստանեն և Փոքր Ասիայեն Կոստանդնուպոլիս 1810-են 1816 թվականներուն*, Լոնտոն, 1818, էջ 324—325, Էջմիածին այցելության առթիվ կգրե. «Հետո մեծ արարողությամբ անոնք մեր աչքին ցուցադրեցին եկեղեցապատկան ամենեն թանկագին մասունքներեն մեկ քանին: Առաջին և կարևորագույնը ըսվեցավ թե գլուխն է գեղարդին, զոր հռոմեացի զինվորը մեր Փրկչին կողը խրեց: Անմիջապես որ ան բերվեցավ և դրվեցավ խորանին վրա, բոլոր հայերը խոնարհեցին իրենց գլուխը: Մոտավորապես մեկ ոտք երկարություն ուներ: Այս մասունքը իրենց ունեցածներուն առաջինը կնկատվի և ըսին թե ուրիշ հրաշքներու կարգին ունի նաև ույժը ժանտախտի համաճարակին առաջքը առնելու»: Երբ Մորիեր Էջմիածին կգտնվեր պատվիրակություն մը եկավ Թիֆլիզեն, ուր ժանտախտի համաճարակ կտիրեր և խնդրեց, որ իրենց փոխ տրվի մասունքը, ինչ որ կատարվեցավ, էջ 333—334:

իրենց կիներուն և զավակներուն։ Պատմեցին նաև, որ ս. քահանայապետ մը այդ մասունքը ուզած էր իրենց արքեպիսկոպոսներեն մեկեն, որ պատասխանած էր թե շնորհիվ այդ սուրբ երկաթին հրաշքներուն շատ մը անհավատներ դարձի կուգային և թե ան կպահպանե հավատացյալները Թուրքերուն մեջ, իսկ թե Ն. սրբությունը պահանջե, կղրկեն։ Բայց պապը հարմար դատեց զայն իրենց ձգել։ Այս պայմաններուն մեջ, եթե մեր փրկիչ Քրիստոսի նիզակին երկաթը Հռոմ չէ, այն է անտարակույս որ տեսանք և եթե Հռոմ է, ասիկա սուրբ է ուրիշ մարտիրոսության մը պատճառով։ Այս եկեղեցականները աղքատ են և իրենց եկեղեցին ալ ավելի, բայց պարզ և առաքինի մարդիկ են։ Իրենց վիճակավորը հետևեցավ դեսպանին մինչև բանակատեղին, շահեն ըստանալու համար ջնջումը քանի մը պարտքերու, որոնք կմնային Թուրքերու ժամանակեն, բայց որովհետև դեսպանը չէր կրնար օգնել իրեն, որովհետև չխոսեցավ Թագավորին հետ, մեկնեցավ և մեզի ընկերացավ մինչև Ղազվին, ուր բնակեցավ մեզի հետ, չհամարձակելով մնալ իր եկեղեցին, վախնալով, որ պարսիկները կպահանջեն պարտքերուն վճարումը։ Եվ եթե շահը մերժե այդ վճարումեն հրաժարիլ, որոշած է երթալ մինչև Կոա և ողորմությամբ ապրիլ[182]։

«Ֆրանկ» եկեղեցականները ձգելե ետք, երկու փարսախ հեռու, լեռան մը գագաթեն տեսանք Նոյի տապանին երկու լեռները[183], որոնք շատ բարձր են և միշտ ձյունով ծածկված և աղոթեցինք Տիրոջ, արտասանելով գովեցէք Աստուած Երկինքի սաղմոսը Աստուած որ գճարս մեր աղոթքին հետ։ Ութը օր պետք եղավ այդ լեռներուն ոտքը հասնելու համար։ Այնտեղ գտանք երեք եկեղեցի, քարաշեն և սքանչելի կառուցվածքով, որոնցմե մեկը բնակված է։ Այնտեղ է, որ կապրի հայոց պատրիարքը քանի մը վանականներով, նման անոնց, որոնց հանդիպած էինք[184]։ Զինքը չգտանք, որովհետև երկու օր առաջ մեկնած էր Ջուղա, բայց կային իր եպիսկոպոսներեն մեկը և ուրիշ եկեղեցականներ։ Ինչպես Ջուղայի մեջ, դուրս եկան մեզի դիմավորելու և մեզի տարին իրենց եկեղեցին, որ լեցուն էր վառած կանթեղներով, մեջտեղը կըցցվեր քար մը, երկարությունը գրեթե երկու և լայնությունը մեկ արմըկաչափ[185], դիպակով ծածկված և քովը մոմ մը վառած։ Աղոթելե ետք ուզեցինք հարցնել քարին խորհուրդը, որու եպիսկոպոսը պատասխանեց, թե փառապանծ ս. Գրիգոր այս լեռան վրա քալելով, աղոթքներով և ծոմապահությամբ կխնդրեր Աստուծմե, որ իրեն հայտնե այն վայրը, ուր Նոյ նահապետ ջրհեղեղեն ետք առաջին զոհաբերությունը «ընծայած» էր իր աստվածային վեհափառության, և գիշեր մը մեր Տեր Հիսուս Քրիստոս երևցավ իրեն այնպես ինչպես հարության առավ նիզակ մը ձեռքը և իրեն ցույց տվավ այս քարը, նիզակին կոթովը, ըսելով. «այստեղ, Գրիգոր, կատարվեցավ ինչ որ կուզեիր գիտնալ»։ Սուրբը այն ժամանակ այդտեղեն կտրել տվավ քարը և շինեց այս եկեղեցին, մեջտեղը դնելով կտրված քարը, ի հարգանս որու շինեցին մյուս երկու եկեղեցիները և պատրիարքը կբնակի այստեղ, որ նշանավոր պզտիկ գյուղ մըն է։ Եվ մահմեդականները կուգան համբուրելու քարը։ Ասոր վրա արտոնություն ստացանք տախտակներով վրան խորան մը կանգնելու և պատարագ մատուցինք, ոչ այնքան ջերմեռանդությամբ որքան արժանի էր այստեղ առաջին գառնուկին զոհաբերման հիշատակը, պատկերը իրականին, որ խաչի խորանին վրա մեր փրկության համար զոհաբերվեցավ հավիտենական հոր, բայց և այնպես ի մեծ մխիթարություն մեզ և այսպես, երբ վերադարձանք շահին բանակատեղին ուրիշ անգամ մըն ալ պատարագեցինք անհավատները դարձի բերելու համար[186]։

---

182 Կրնա ըլլալ որ այս վիճակավորը եղբ. Նիկողայոսն է, որու կակնարկե Հ. Կովեյիա, «իրենց վիճակավորը, եղբ. Նիկողայոս կոչված, մեզի կպատմեր, որ զինվորները իրմե ուտելիք ուզած ըլլալով իրենց բերավ ընկույզ և նուշ, որովհետև ուրիշ բան չուներ և զինվորները առնելով իր գլխուն վրա կոտրեցին... և զինքը ծառի մը վրա կախեցին ոտքերեն, աջ աչքը կորսնցուց այս արարքին մեջ։ Ամենամեծ աղքատության և անկարության մեջ, բայց տալով առաքինության և սրբության ապացույցները, կյանքը վերջացուց Մոսկովիո Աստրախան քաղաքին մեջ, ուրկե կուզեր Հռոմ երթալ ձեռնադրվելու համար, չկարենալով այդ ճամփորդությունը կատարել Թուրքիայեն, պատերազմին պատճառով», Կովեյիա, էջ 147։

183 Փոքր և Մեծ Արարատը, որուն գագաթը, ըստ աստվածաշնչական ավանդության, Նոյի տապանը կանգ առավ ջրհեղեղեն ետք։

184 Երեք եկեղեցիներ, Թուրքերեն ուչ քիլիսէ, կոչված վայրը կգտնվի Երևանեն քսան կմ դեպի արևմուտք. այնտեղ են Էջմիածնի հռչակավոր վանքը, ուր կբնակի Ամենայն Հայոց կաթողիկոսը։ Ձ. տը Ժեզյու, էջ 65ը կգրե, թե «երեք եկեղեցիներ կան շատ գեղեցիկ, ենթարկված՝ ժամանակին պատճառած վնասներուն, բայց մեծ վեհությամբ մը զգեցած, ամբողջովին քարաշեն, գործ զոր կհավաստեն, թե թագավոր մը շինել տված է»։

185 Բնագրին մեջ «քովատո», հին չափ մը, որ համարժեք է 66 սանտիմետրի։

186 Առաքել Դավրիժեցի, էջ 212. Շահ Աբբաս ապահովելու համար Նոր Ջուղայի մեջ նորահաստատ հայոց կողմե ավելի մեծ հավատարմություն մը իրեն հանդեպ, ուղարկեց իր զորավար Թահմասպ-կուլի խանը Էջմիածինեն մասունքները բերելու։ Տասնըհինգ քարեր Էջմիածինեն քակվեցան և բերվեցան 1614-ին։ Ասոնց մեջ կգտնվեր սուրբ սեղանը,

Ասկէ զատ եկեղեցին ունի շատ լաւ կառուցված դուռ մը, ամբողջությամբ շինված շատ հաստ քարով մը, որ միշտ փակ է։ Վանականները կըսեն թե ս. Գրիգորի մեկ մարգարեությունը կուզե, որ այդ դուռը բացվի միայն այն ատեն, երբ «ֆրանկ» քրիստոնյաները գրավեն բոլոր այս հողամասերը։ Մեզի պատմեցին նաև, որ Թուրքերը իզուր փորձած էին բանալ զայն խոյահար մեքենայի հարվածներով, որոնց հետքերը տակավին կտեսնվին։

Այդտեղեն նվազ քան մեկ փարսախ հեռու, Երևանի ճամփուն վրա... մեր աչքով տեսանք ինք իր վրա դարձած եկեղեցի մը և հաստատեցինք շատ մը մասնահատկություններ, որոնք հրաշքով միայն կրնային կատարվիլ...[187]։

Երբ հասանք շահին բանակատեղին, այնտեղ գտանք Վրաստանի Աղեքսանդր խանը[188], որ իր հետ ուներ երկու արքեպիսկոպոս և երկու

որու վրա տեղի ունեցավ սրբազան զոհաբերությունը և որու վրա օգոստինյան հայրերուն արտոնվեցավ պատարագել։ Ըստ Կովեյիայի Թահմասպ—կուլի խան, զոր կկոչե Թոմաս կուլի պեկ, հայ էր ծագումով, ուրիշներ զայն կնկատեն վրացի։ Ալլեն, էջ 263—4, կկարծե, որ Թահմասպ-կուլի խան էր, ըստ երևույթին, Հանիս, որդի Սոմխեթի Մելիք Մարենի-հայ-վրացական ծագումով տուն մը, որմե սերեցին Լորիս-Մելիքոֆները։ Նոր Ջուղայի Գեորգ եկեղեցիին բակին մեջ տակավին կգտնվին էջմիածնի ճարտարապետական այդ բեկորները։ Այս եկեղեցին շինվեցավ հայ երևելի խոճա Նազարի կողմե 1610—11-ին։ Եկեղեցիին նկարագրությունը տ. Ճոն Քարսվել, Նոր Ջուղա, հայկական եկեղեցիները և ուրիշ շենքեր, Օքսֆորտ, 1968, էջ 37—40, պատկերներ, էջ 21։

[187] Խոսքը հավանաբար Զվարթնոցի մասին է, որ կգտնվի էջմիածինեն քանի մը կիլոմետր հեռու, Երևանի ճամփուն վրա։ Կառուցված է Ներսես Գ Շինող կաթողիկոսին օրով (641—661)։ Գոյություն է ունեցել «ինքն իր վրա դարձած եկեղեցու» մասին ավանդություն։

[188] Վրաստանի նահանգ Կախեթի թագավոր Աղեքսանդր Բ, ծնած 1527-ին, թագավոր 1574-են 1605։ Փորթուկալցի կրոնավորներուն հանդիպելեն քանի մը ամիս ետք վերադարձավ Վրաստան, ուր սպաննվեցավ իր որդի Կոստանդինի կողմե, որ իսլամացած էր։ Այս վերջինը թագավորեց միայն վեց ամիս 1605-ին և սպաննվեցավ։ Իրեն հաջորդեց Թեյմուրազ Ա, որ որդին էր Քեթևան թագուհիին, կինը Դավիթ Ա-ի, որ թագավորած էր 11 ամիս 1602-ին. տ. Ալլեն, էջ 592։ 1604-ի մարտ կամ ապրիլի սկիզբն է, որ Աղեքսանդր Բ եկավ իր բանակով միանալու շահ Աբբասի բանակին Երևանի մեջ։ Երբ 28 մայիս 1604-ին Շարիֆ Մեհմետ անձնատուր եղավ Երևանի ամրոցին բերդապահ զորախումբով, Կախեթի Աղեքսանդր Բ և Քարթլիի Գեորգ Ժ նստած էին շահ Աբբասի ձախակողմը, նույն, էջ 418—420։ Դեպի հունվար 1605 Աղեքսանդր Բ իր որդվույն Կոստանդինի հետ թողուց շահը և գնաց Արտապիլ։ Մարտ 8-ին Աղեքսանդր հասավ իր երկիրը Զակենի մեջ, նույն, էջ 455։ 12 մարտին Աղեքսանդր և իր որդին Գեորգ սպաննվեցան, հայրասպանը, իր որդին Կոստանդին, իրենց մարմինը փոխադրել տվավ Ալլահվերտիի վանքը և գլուխները ուղարկեց շահ Աբբասի։ Վեց ամիս ետք Կոստանդին սպաննվեցավ ճա-

վանական։ Կուզեին գալ մեզի տեսնել, բայց որովհետև կաճապարեինք չուզեցինք սպասել և մեզի հետ տանելով թարգման մը, գացինք իրենց մոտ։ Խոսակցություն մը ունեցանք աստիճանավոր եկեղեցականին հետ[189], որ մեզի ընդունեց սիրալիր կերպով և ճաշի հրավիրեց (ինչպես սովորություն է այս երկրին մեջ ճաշի հրավիրել այցելուները) և իրենց հարցումներ կատարեցինք կրոնքի մասին։

Հայր Ֆրանսիսքո տա Քոսթա[190], որ Մոսկովիայեն եկած էր, մեզի ըսած ըլլալով, որ անոնք կուրանային քավարանը և սխալներ կկատարեին անձերու բնական շարքին մասին, նախ արքեպիսկոպոսին հարցում ուղղեցինք առաջին կետին մասին։ Եթե նախ մեզի թվեցավ թե իրապես կուրանային քավարանը, ավելի լավ հասկնալով իրենց ըսածը տեսանք թե մեզ նման կմտածեին և նույնիսկ մեզ նման կներկայացնեին աստվածային անձերու շարքը, սխալ չգտանք, վասնզի թարգմանը չէր կրնար գտնել բառերը, որ այդ շարքը պիտի ներկայացնեին, բայց հասկցանք թե մեզ նման հավասար կնկատեին Երրորդության երեք անձերը։ Հարցուցինք թե կճանչնայի՞ն պապը իբր տիեզերական եկեղեցվո պետը։ Պատասխանեցին թե այո, և թե երկրի վրա ան կբռնե Քրիստոսի տեղը։ Ուրեմն ըսինք, եթե եկեղեցին ունի միայն մեկ գլուխ, որ Քրիստոսն է և իր փոխանորդը երկրի վրա, ինչո՞ւ ուրիշ գլուխ մը կը հաստատեք Կոստանդնուպոլսո մեջ։ Պատասխանեցին թե չէին կրնար կոչ ընել Հռոմի փոխանորդին և թե քրիստոնյաները թող գրավեն Կոստանդնուպոլիսը և այն ատեն ամեն ինչ մեկ պիտի ըլլա։ Պատասխա-

կատամարտի մը մեջ, ժողովրդական ապստամբության մը ընթացքին, զոր գրգռած էր Քեթևան թագուհին, իր եղբոր Դավիթի այրին. նույն, էջ 454—458։

[189] Անտարակույս Ալլահվերտիի մետրոպոլիտն է, որ կընկերանար Աղեքսանդր Բ-ի և որ վիրավորվեցավ թագավորին դեմ սարքված մահափորձին մեջ, որու ընթացքին մեռավ նաև Մարթյուրոփ Ռուստավի արքեպիսկոպոսը, նույն, էջ 443 և 458, Զաքարիա Նոյա, անդ, էջ 264։ Հ. Պելշիոր, եպ. Ժան տը Սեն-Ժոզեֆի հետ միասնաբար Մատրիտեն 16 հունվար 1614 թ. և Ֆիլիփ Գ-ի ուղղված տեղեկագրի մը մեջ կհայտարարե եղած ըլլալ առաջին կաթոլիկ եկեղեցականը, զոր վրացիները տեսան իրենց երկրի մեջ և իրեն առաջարկեցին հաստատել եկեղեցի մը այնտեղ ապրելու համար, պայմանով որ շահին արտոնությունը ստանան։ Արդ, ինչպես գիտենք, ոչ թե 1602-ին, այլ 1604-ին է որ Պելշիոր գնաց Պարսկաստան և վրացիներուն հետ ունեցավ այս խոսակցությունը։

[190] Կթվի թե Հ. Ֆրանսիսքո տա Քոսթա տակավին Պարսկաստան կգտնվեր Լուիս Փերեյիրա տը Լասերտայի առաքելության միջոցին և Հ. Պելշիոր տոս Անժոս դարձյալ անոր հանդիպեցավ Թավրիզի մեջ 1605-ի մարտի վերջը, երբ Ղազվինեն առանձին գնաց այնտեղ բանակցելու համար դեսպանության հարցերուն մասին։

նեցինք թե որքան ատեն որ այդպես չէ, ս. քահանայապետը միջոցը պիտի գտնե, եթե փափաքի, իրենց ուղարկելու կրոնական պաշտոնյաներ և երկրին մարդոց պիտի ընծայե բոլոր առավելությունները և պատիվները, որոնց կցանկան, և թե միակ բանը, որ կպահանջե իրենցմե հնազանդությունն է, իրենց փրկության համար։ Պատասխանեցին, թե իրենք առանձին չեն կրնար փոխել այս ամենը։ Հարցուցինք թե այն պարագային Վրաստանում ուր որ պիտի երթայինք իրեն հետ, թույլ պիտի տայի՞ն, որ այնտեղ ունենայինք հռոմեական եկեղեցի մը։ Մեզի հարցուց, թե ինչո՞ւ, ըսինք, որպեսզի տեսնեն մեր սովորությունները և արարողությունները և խոսինք այս բաներուն վրա ու թերևս այն ատեն պիտի գնահատեին կաթոլիկ եկեղեցիին գործերը և պիտի կապվեին անոնց։ Պատասխանեց, որ եթե կուզեինք ստիպել, որ ընդունին հռոմեական պապին, պետք է որ սկսինք գլուխեն, բայց եթե կուզենք ուրիշ բան, քան ինչ որ կըսենք, այն ատեն շատ ուրախ պիտի ըլլան մեզի ընդունելու ամեն պատիվներով և ձգելու, որ հաստատենք մեր եկեղեցին հռոմեական ձևով և թե ինքն իսկ, ամենեն հարուստը այդ շրջանի բոլոր եպիսկոպոսներուն, պիտի ըներ մեր բոլոր ուզածները և եթե որոշում տանք պետք է, որ խոսինք խանին, որու կպատկանի երկիրը և որ կճանչնա բոլոր պայմանները և ըստ այնմ տեղյակ պիտի պահե մեզի։

Այն ատեն հրաժեշտ առինք, բայց նախապես մեզի ցույց տվին գիրքի ձևով մասնատուփ մը, թանկագին քարերով ծածկված, ուր կային շատ մասունքներ սուրբ խաչեն։ Աղեքսանդր խան մեզի ցույց տըվավ ուրիշ մըն ալ, ավելի փոքր ուր կա ս. Հովհաննես Մկրտիչի ակրա մը, այնքան թարմ և առողջ, որքան եթե տակավին գտնվեր կենդանի բերանի մը մեջ, ինչպես նաև ոսկորի կտոր մը նույն սուրբեն։

Ասոնք են քրիստոնեության վերաբերյալ այն բաները, զորս տեսանք այս ճամփորդության ընթացքին։ Քանի որ շնորհիվ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ամբողջ Պարսկաստանի մեջ կրցանք պատարագ մատուցանել և մեծարել իր սուրբ մարմինը, կհուսամ, որ ան պիտի գթա այս անհավատներուն վրա այնպես որ բացվին իրենց աչքերը և իրենց միտքը, պաշտեն իր սուրբ անունը և փրկվին։

2. ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԿՎԵՐԱԲԵՐԻ ԱՅՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՒՆ, ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ՇԱՀԸ ՊԱՏԵՐԱԶՄԵՑԱՎ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԴԵՄ

Քյուրտ հրամանատար Ղազի պեկ[191], հպատակ թուրքին և մեծ բարեկամ շահին, կուզեր որ այս վերջինը գրավե Թավրիզի նահանգը և հաճախ կթելադրեր շահին պատերազմիլ թուրքերուն դեմ։ Շահը իրեն ըսել տվավ, որ ինքն իսկ ըմբոստանա Թավրիզի փաշային դեմ[192] և այն ատեն պիտի գար օգնության։ Այսպես է, որ Ալի փաշա, լսած ըլլալով Ղազի պեկի անհնազանդությունը, անոր դեմ քալեց 7000 այրուձիով, որոնց մեջ լավ ձիավորներ, կատարելով յոթը օրվան ճանապարհորդություն մը։ Շահը Ղազի պեկեն տեղեկություն ստացավ անցուդարձերուն վրա և լուրը առած օրն իսկ դուրս եկավ Սպահանեն, առանց որ ոչ ոք գիտնա, թե՛ ուր կերթար, իրեն հետ տանելով մինչև քսան հազար հոգի, որոնք միշտ իրեն կընկերանային։ Այս 24 ժողնատայի[193] ճամփան, Սպահանեն Թավրիզ, կտրեց ինը օրեն և հասնելով Թավրիզեն հինգ փարսախ հեռու գտնվող կայան մը, ուր սովորաբար կան «ռատար»-ներ, որոնք անցնող կարավաններեն տուրք կգանձեն, դուռը զարկավ ըսելով, թե վաճառական մըն է, և «ռատար»-ները բացին անմիջապես, հարցնելով թե ի՞նչ ապրանք կբերե։ Ինքզինքը վաճառական ձևացնելով սկսավ շնորհալի պատմություններ պատմել, մինչև որ եկան իր մարդիկը և կտրեցին «ռատար»-ներուն գլուխները[194]։

Չի հեծնելով, նույն գիշերը հասավ Թավրիզի բերդին դուռներուն առջև, տրված ըլլալով, որ քաղաքը պարիսպ չունի։ Զարկավ դռան և

---

191 Ջեռ. Քազիպե, այսինքն Ղազի պեկ, քյուրտ ցեղապետ Սալմաստի շրջանին, Կուվեյիա, էջ 85, Պելլան, անդ, էջ 121։ Ղազի պեկի ապստամբությունը տեղի ունեցավ 1603-ի գարնան։

192 Ալի փաշա, Ադրպեյճանի օսմանյան պեյլերպեյի, գնաց զսպելու Ղազի պեկի ապստամբությունը Երևանի, Նախիջևանի և Թավրիզի բոլոր օսմանյան ույժերով. Նույն, էջ 123։

193 Ժողնատա կհամապատասխանե 30000 քայլի, յուրաքանչյուր քայլ ըլլալով 2,5 ոտք. ընդամենը 22—23 կմ։ Շահ Աբբաս ձգեց Սպահանը 3 օգոստոս 1603-ին, Նույն, էջ 123։

194 Կուվեյիա, էջ 86, կհիշե նույն դեպքը, որ կդնե 21 մայիս 1603-ին և կըսե թե շահ Աբբաս ինք զինքը ներկայացուց իբր հետևող կարավանին պետը։ 14 օգոստոսին շահ Աբբաս կանգներ Շեպլի քարվանսարայեն, որ անցքի տուրքերու գանձումի կայան մըն էր, Թավրիզեն քիչ մը հեռու, ուր իր ձիավորները ջարդեցին բոլոր պահակները։

պահակ զինվորը հարցուց թե ո՞վ է։ Շահը պատասխանեց, որ վաճառական մըն է իր կարավանով և ըսավ, որ դուռը բանան։ Սպասեցեք, պատասխանեց պահակը, սովորություն չէ բերդին դուռը բանալ գիշեր ատեն (կըսեն թե իր 300 կամ 400 մարդերով եթե սպասեր դրան մոտ կրնար մտնել երբ բացվեր, որովհետև չէին կրնար երևակայել իր գալուստը), բայց ցցել տվավ վրանները և հնչեցնել տվավ փողերը, ի զարմանս ամենուն, որովհետև հանրածանոթ էին իր փողերը։ Անմիջապես փաշային[195] որդիներեն մեկը, որ բերդին մեջ էր, փութացուց երեք ձիավոր մեկը մյուսին ետևեն լուր տալու համար իր հորը, թե շահը եկած էր և կպատմեն թե փաշան, կարծելով թե սուտ կխոսին, կտրեց գլուխը առաջինին և երկրորդին, բայց երբ երրորդը հասավ հասկցավ որ ճիշտ էր, բայց ծածկեց ճշմարտությունը իր զինվորներեն, չհուսաբեկելու համար զանոնք, հայտնելով հանդերձ իրողությունը իր հրամանատարներուն, ավելցնելով թե իր հետ ուներ յոթը հազար զինվոր, այնքան լավ ձիավոր, որ կհուսար հաղթել անոր և մտնել բերդին մեջ ի գին նույնիսկ իրենց կյանքին[196]։

Թավրիզեն երեք փարսախ հեռու կգտնվեր արդեն, երբ շահին հրամանատարներեն մեկը, Զյուլֆիքար խան[197], իր երկու հազար առաջապահներով դեմ դիմաց եկավ իրեն հետ, բայց շուտով կռնակ դարձուց և ուրիշ մը, որ կհառաջանար 1500 պարսիկներով նույնը ըրավ։ Այդ միջոցին երևցավ շահը, որ շրջանակային աղեղ մը կազմեց իր ամբողջ զորքով պաշարելով թուրքերը մեծ աղմուկի մը մեջ։ Թուրքերը նըվաղեցան անմիջապես, որ տեսան իր ներկայությունը և փախուստ տըվին. փաշան գերի բռնվեցավ և մեծ մասը թուրքերուն սպանվեցավ կռիվին մեջ և անոնք որ փախան սպանվեցան, որովհետև կկտրեին իրենց գլուխը, երբ գյուղ մը կհասնեին։ Թուրքերուն դեմ ատելությունը այնքան մեծ էր, որ այս գլուխները կբերեին շահին և կպատմեն իբր բոլորովին ստույգ իրողություն, որ Թավրիզի մեջ եղան պարսիկ կիներ, որ կտրեցին գլուխը իրենց զավակներուն, որ ունեցած էին թուր-

[195] Մինչդեռ Ալի փաշա իր հրամանին տակ ուներ թրքական բանակը Ադրպեյճանի նահանգին մեջ, իր որդին հրամանատարն էր Թավրիզ քաղաքին. Մալքոլմ, Պատմություն Պարսկաստանի, Փարիզ, 1821, հատ. Բ, էջ 321։

[196] Կուվեյիա, էջ 86, կհիշե նույն իրողությունը։

[197] Ձեռագիրը՝ Սյուլֆյուրքան, Զյուլֆիքար խան, Արտապիլի կառավարիչ։ Թավրիզի գրավումեն ետք շահ Աբբաս զայն անվանեց ընդհանուր կառավարիչ Ադրպեյճանի, Պելյան, էջ 124։

քերեն և կբերեին զանոնք շահին[198]։ 260 պարսիկներ մեռան այս կռիվին մեջ։

Այս հաղթութենեն ետք շահը վերադարձավ Թավրիզի բերդը, ուր պատերազմեցավ 25 օր, գերի փաշային նամակները իր որդվույն համար՝ կուգային և կերթային, վերջապես բերդին մարդիկը հայտարարեցին, որ եթե իրենց ցույց տրվեր գերի փաշան՝ անձնատուր պիտի ըլլային, որովհետև կմտածեին թե անկարելի էր ատիկա։ Բերին զայն բերդին մոտ և թույլ տվին, որ խոսի ներսը գտնվողներուն, որոնց ըսավ ան. 500 զինվոր միայն ունիք բերդին մեջ, որ շատ մեծ չէ, չեք կրնար պաշտպանվիլ։ Պատասխանեցին թե պիտի հետևին իր խրատին և հաջորդ առտու բերդեն դուրս եկան և ինքզինքնին հանձնեցին շահին գթասիրության առանց պայմանի[199], բայց շահը ձգեց, որ փափաքողները ազատորեն երթան և թողություն շնորհեց անոնց, որ մնացին իր մոտ։ Բերդին մեջ գտավ երկու հարյուր հազար քրուզատո դրամ, ավելի քան 500[200] թնդանոթ և մեծաքանակ ռազմանյութ, մեծ մըկիթ մը վառոդով լեցուն և այնտեղ մնաց 40 օր քանդելով բերդը, որուն փլատակները տեսանք[201] և այնտեղեն մեկնեցավ թափանցելու համար թըրքական հողերուն մեջ, ամեն ոք անձնատուր ըլլալով առանց դիմադրության։

Հասավ Նախիջևան[202], մեծ քաղաք Հայաստանի, ուր անմիջապես իրեն ղրկեցին բանալիները բերդին, զոր նմանապես քանդեց, որովհետև ոչ ոք կար, որ պաշտպաներ զայն, շատեր փախած ըլլալով։ Խորհելով, որ Երևանի բերդին մեջ մարդ պիտի չըլլա[203], գնաց այնտեղ և տեսավ, որ մեծապես ամրացված է, որովհետև քաղաքին բոլոր բնակիչները և շատեր շրջակայքեն այնտեղ ապաստանած էին և շատ բազմաթիվ ըլլալով և չկարենալով ամենն ալ սեղմվիլ ուրիշ բերդ մը շինեցին արդեն

[198] Նույն, էջ 123, կհիշե նույն պատմությունը։

[199] Կուվեյիա, էջ 88։ Թավրիզ Շահ Աբբասի հանձնվեցավ 6 հունիս 1603-ին։

[200] Նույն, էջ 88, կըսե 400 թնդանոթ։

[201] Լասերտայի դեսպանության բոլոր անդամները Թավրիզեն անցան սեպտեմբեր-սկիզբը հոկտեմբեր 1604-ին, դեպի շահին բանակատեղին, որ կգտնվեր Կարսի շրջանին մեջ։ Այն ատեն է, որ հ. Պելշիոր տեսավ քանդված բերդը։

[202] Ձեռ. Նաշիվան։

[203] Ձեռ. Թոիվան։ Ըստ Կուվեյիայի, էջ 90, շահ Աբբաս քաղաքին առջև հասավ 12 հուլիս 1603-ին։ Բերդին պաշարման և գրավման մասին՝ նույն, էջ 90—99։

գոյություն ունեցողին մօտ 23 օրվան մէջ, կըսէ[204], շատ ամրացած և լավ շրջապատված պարիսպներով։ Շահը որ այն ատեն ունէր գործավորներէն զատ աւելի քան 50000 զինվոր, այնքան սեղմ պաշարում մը կատարեց, որ պարիսպներուն մօտեցած էր երկու գրկաչափ հեռավորությամբ իր պատնեշներով, շինելով հողէ և փայտէ մարտկոցներ աւելի բարձր քան բերդին պարիսպները և աւելի ամրապինդ, ուրկէ իր զինվորները կրնային հասնիլ իրենց հրացաններով բոլոր անոնց վրա, որոնք կերևէին ներսը, չձգելով որ թշնամին կրակէ իր հրետանիով։ Պարսիկները այնպիսի շինարարություն մը իրագործած էին, որ նույնիսկ մեր աչքերով տեսնելով հանդերձ անկարելի կթվէր, որ պարիսպը ծակված ըլլա այնքան ստորերկրյա անցքերով. մեզի հավաստեցին, որ բերդին ախոռներէն ձիեր դուրս հանված էին շնորհիվ այս բացվածքներուն։

Այս պաշարումը տևեց ինը ամիս, Թուրքերը ինքզինքնին կպաշտպանէին քաջաբար։ Կպատմեն, որ իրենց ռումբերուն համար կապարը պակսած ըլլալով, պարսիկները հրամայեցին անձնատուր ըլլալ, որուն Թուրքերը պատասխանեցին, թէ յոթը ամիս կռվեցանք կապարէ ռումբերով, արծաթ ունինք տակավին յոթը ամիս կռվելու համար և հետո ոսկի նույնքան ժամանակի համար։ Հաճախ դուրս կուգային պարսիկներուն հետ ընդհարումներ ունենալու, սկիզբները ումբաձիգով սպաննեցին քանի մը հոգի շահին վրաններուն մէջ։ Ութը օր ետք, այն պահուն, ուր գիշերային հսկողությունը կավարտէր, պարսիկները արշալույսին իրենց պեղած բացվածքներէն սանդուխներով մտան նոր բերդին մէջ և բոլոր Թուրքերը սուրէ անցուցին, սպաննելով հազար հինգ հարյուր հոգի, պարսիկները տվին երեք սպանյալ և քսան վիրավոր։ Ամիս մը ետք հին բերդին պաշտպանները դիմեցին շահին և հանձնեցին բերդը. զինվորները իբր նվէր առաջարկեցին 60 հազար թուման[205], յուրաքանչյուր թուման կարժէ 16 քրուզատ, իսկ վաճառականները՝ հարյուր հազար քրուզատ, բայց շահը ոչինչ ընդունեց, մեզի ըսվածին համաձայն, ընդհակառակը ձգեց որ փափագող զինվորները ազատորեն մեկնին իրենց ունեցվածքներովը և մնացողներուն տվավ Թուրքին տվածէն մեկ երրորդ աւելի զինվորական ռոճիկ։

Պատնեշներուն կառուցման և պաշարման ատեն 2500 պարսիկներ մեռան և շատերը զոհ եղան ցուրտին և ձյունին, որոնք կտիրէին բա-

[204] Նույն, էջ 90, կըսէ 27 օր։

[205] Պեյլան, էջ 130, կըսէ 12.000 թուման։

նակատեղիին մէջ. վստահելի մէկը պատմեց. որ տեսած է քանի մը զինվորներ, որոնք կքնանային իրենց տակը և վրան այնքան ձյունով, որ աւելի մեռյալի երևույթ ունէին քան թէ ողջի։ Բերդին փաշան, անունը Սայիտ փաշա[206], շահին գերի մնաց իր երկու որդիներով։

Ամրոցը, որ անձնատուր եղած էր 5 հուլիս 1604-ին[207], քայքայվեցավ և շահը ներխուժումներ կատարել տվավ Էրզրումի[208] նահանգին մէջ, ուր հողերը ամբողջովին ասպատակվեցան և քաղաքներուն և գյուղերուն բնակիչները գերի առնվեցան կամ սպաննվեցան։ Ի մէջ այլոց, 40 և քանի մը հազար հայերու տուները քանդվեցան, և իրենց կիները և զավակները գերվեցան, այրերը, ամբողջությամբ կամ գրեթե, փախուստ տված էին և պատճառը այն էր, որ, մեզի պատմվածին համաձայն, չէին պատասխանած շահին կոչին, որովհետև տակավին կգտնվէին Թուրքին պաշտպանության տակ։ Շատ արգահատելի էր տեսնել ճամփաները և շահին բանակատեղիները այս թշվառներով լեցված, որոնց մէջ կային մեծ թիվով մանչեր և աղջիկներ, այնքան գեղեցիկ, որ կզարմանայինք և կիներ մեծ գեղեցկությամբ։ Իրենց վերաբերմամբ, բանակատեղիին մէջ պատահեցավ պարագա մը, որ արժանի է պատմվելու, որովհետև ցույց կուտա շահին արդարադատությունը և գութը խեղճ հայ քրիստոնյաներու նկատմամբ։ Անբարոյական կիները, որոնք բանակատեղիին մէջ կգտնվէին զինվորներէն գնեցին ամենէն գեղեցիկ հայուհիները, զանոնք պոռնկության հանձնելու համար։ Արդ, պատահեցավ, որ այս հայ կիներէն մէկը բողոքեց, ինչպես շատ մը ուրիշներ կընէին, բռնանոց տարվելու ժամանակ։ Իր ամուսինը, որ գերութենէն փախած էր և բանակատեղին եկած էր իր կինը վերագնելու համար, լիրբ կնոջ մը մօտ գնաց խնդրելու, որ իր կնոջ չհարկադրէ այդ

[206] Առաքել Դավրիժեցի կըսէ նույնպես, որ (էջ 33) Երևանի բերդը Սայիդ փաշայի և Սուլեյման փաշայի հրամանին տակ էր։ Երբ բերդը գրավվեցավ, Սայիտ փաշա «Շահրեվան» եղավ և շահ Աբբաս իրեն շնորհեց Մեշեդի իմամ Ռեզա մզկիթին հրամանատարի և քննիչի պաշտոնը։ Շահ Աբբասի նամակը, Լասերտայի հանձնված, փաշային «Հասայիտ Մէմետ» անունը կուտա։ Ընդհակառակը, ըստ Կուվեյիայի, էջ 90, բերդին կառավարիչը կկոչվէր Շերիֆ փաշա։ Նմանապես Պեյլան, էջ 130—131, կավելցնէ թէ Շերիֆ փաշա սպահանցի էր և շիա մահմեդականի հավատքը ընդունելով շահ Աբբաս իրեն շնորհեց քաղաքացիի իրավունք Մեշեդի մէջ։

[207] Կուվեյիա, էջ 99, կսխալի անշուշտ, երբ կըսէ թէ շահ Աբբաս Ա. բերդին մէջ մտավ 8 մարտ 1604-ին։

[208] Ձեռ. Աշխարհում։ Կտեսնվի որ 1604-ի ամառէն իսկ Էրզրումի հայերը առաջինները եղան, որ տարագրվեցան Պարսկաստան։

անպատվությունը և թե պատրաստ է տալու ինչ որ կպահանջե վերագնելու համար իր կինը. բայց մյուսը չընդունեց, այլ ընդհակառակը, խեղճ հայը պնդած ըլլալով, ծեծել տվավ զայն սաստկորեն: Իր մեծ տառապանքին մեջ, ան գնաց այն ատեն շահին վրանին մոտ և բարձըր ձայնով պոռաց. Արդարություն, արդարություն: Շահը, լսելով իր մոտ բերել տվավ մարդը և իմանալով անցած դարձածը, ձերբակալել տվավ բոլոր լիրբ կիները, որոնք գերուհիներ ունեին գրավել տալով ամեն ինչ, որ ունեին, ածիլել տալով գլուխնին և բանակատեղիեն վտարել տալով իրենց ամոթին մեջ: Հրամայեց նաև, որ բոլոր գերի կիները տան մը մեջ հավաքվին, որպեսզի հայերը գան գտնել, որը իր կինը, որը իր աղջիկը, որոնք ազատորեն պետք էր իրենց հանձնվին:

Այս իրադարձություններուն ժամանակ եկավ Սիկալա[209], հռչակավոր զորավար Թուրքին, երկրորդ անձը Թագավորության, հավատուրաց իտալացի, որ եկած էր, ըստ ըսվածին, որովհետև ուներ որդի մը, զոր շատ կսիրեր և որ Կանճայի կառավարիչ էր[210]: Սիկալա իրեն հետ ուներ 25000 հոգի և կծրագրեր ավելի շատ զինվոր հավաքել և կազմել բանակ մը, որով պիտի հաղթեր շահին, որովհետև կհուսար, որ Ահմետ փաշա[211] մը, արժանավոր զինվորական, որ քյուրտերու երկիրը կգտնվեր և որու կինը և աղջիկը գերված էին շահին կողմե Թավրիզի մեջ, իրեն պիտի միանար իր քսան հազար մարդերով և հազար Թուրքով, ինչպես նաև քյուրտերով, որոնք պիտի անցնեին իր կողմը: Այս նպատակով բանագնացներ ղրկեց Ահմետ փաշայի և այս վերջինը իրեն պատասխանեց, որ պիտի ծառայե իրեն, եթե սուլթանը զինքը դարձնե իր Թագավորության երկրորդ անձնավորությունը. այսպես չեզոք մնաց ժամանակ մը և հետո միացավ Սիկալային ինչպես պիտի պատմեմ ավելի ետքը:

---

[209] Ձեռ. Սիկալա, Սիկալա-Զատե, Ճղալա Զատե, Յուսուֆ Սինան փաշա կպատկաներ ճենովական Սիքալ ընտանիքին: Ծնած էր Մեսինա, Սիկիլիո մեջ, իր հոր հետ մահմետական ծովահեններու կողմե գերված ըլլալով տարվեցավ Ստամպուլ, ուր իսլամացավ. Իսլամական հանրագիտարան, Ն. Շ., էջ 34—35:

[210] Սիկալայի որդին Մահմուտ փաշա Շիրվանի նահանգին կառավարիչն էր և ոչ թե Կանճայի, Պելլան, էջ 149: Անտարակույս ընդօրինակիչին գրչասխալն է, որովհետև ավելի ետքը Կուվեյիա կհիշե Շիրվանի նահանգը կառավարված Սիկալայի որդիին կողմե:

[211] Ամերիփաշա: Ձեռ. Ահմետ փաշա, նախկին հրոսապետ մը Սվազի շրջանին. Նույն, էջ 121 և 123: Կուվեյիա ևս, էջ 100, կակնարկե «Ատալիուս քաղաքի Ահմետ փաշայի մը, Ասորեստանի և Հայաստանի սահմաններուն վրա»:

Ասկե զատ կհուսար օգնությունը ստանալ քյուրտ պետի մը, Քարի Քաղան[212], որ երեք տարի առաջ ապստամբած էր և ուներ 1200 ընտիր հրացանավոր: Այս վերջինը նախապես հարաբերության մեջ մտած ըլլալով պարսիկին հետ և վախնալով, որ Սիկալա երբ Կոստանդնուպոլսեն մեկնի իր վրա կհարձակի, շահին նամակ մը գրեց, ուր կըսեր թե եթե Սիկալա պատերազմի ձեռնարկե և եթե դեպի ինծի ուղղվի, ձեր բարձրության պաշտպանության տակ պիտի մտնեմ և եթե ձեր վրա հարձակի՝ զինքը կռնակեն պիտի զարնեմ: Այսպես, Քարի Քաղան ի պատասխան Սիկալայի կոչին, ըսել տվավ թե ինք և իր մարդիկը աղքատ էին, թե իրեն պիտի ծառայե եթե ուղարկե հարյուր բեռ ոսկի (իբր անկարելի բան) թե Դամասկոսեն և Մեծ Գահիրեեն զինվորի կըսպասեր, բայց ամենն ալ թերացած էին մինչև այն ատեն, թե ուրիշ զինվորներ կսպասե Թաթար խանեն[213], որու դեսպան մը ղրկած էր սուլթանին կողմե ըսելու համար, որ դուրս ելլե իր բանակատեղիեն, բայց ան մերժած էր, առարկելով որ կհավատար իր նախնիքներուն գուշակության, ըստ որու այն որ պարսիկին վրա պիտի հարձակի պիտի ջախջախվի: Սակայն, դեսպանին պնդումին վրա, թե զինվոր տա, տասը հազար թաթար ղրկեց, հրամայելով որ ետ վերադառնան դեսպանին մեկնումեն ետք, ինչպես որ ըրին: Հետո շահին ըսել տվավ, որ ձեռնարկե էրզրումի նվաճումին և խոստացավ գրավումեն ետք իր որդին ղրկել 15 հազար զինվորով իրեն օգնելու համար: Բոլոր այս օժանդակություններեն զրկված, Սիկալա այլևս բավական ույժ չունեցավ պատերազմ մղելու համար շահին դեմ, բայց հավաքելով ընդամենը 40 կամ 50 հազար հոգի, կովի ձեռնարկեց պաշտպանելու համար այս նահանգին բոլոր քաղաքները, շրջապատելով միշտ իր կայանը սայլերով, որոնք փականքված էին երկաթյա շղթաներով և որոնց մեջ գետեղված էր իր հրետանին: Այսպես օգտագործելով իր բերդերը կհառաջանար շահին ուղղությամբ, որ իր կարգին կուգար իր դեմ, մինչև որ գտնվեցան իրարմե չորս փարսախ հեռու:

Գրեթե ամեն օր տեղի կունենային հառաջապահներու ընդհարումներ, ուրկե կբերեին Թուրքի բազմաթիվ գլուխներ և քանի մը ողջ գերի և մենք տեսանք բազմաթիվ գլուխներ ողջ գերյալներու, բանակատե-

---

[212] Ձեռ. Քարի Քաղան (՞): Գուցե քյուրտ Զաքարիա խանն է, որ Թուրքերուն դեմ ապստամբեցավ և ծառայեց շահ Աբբասի. Կուվեյիա, էջ 112—113:

[213] Ձեռ. Թարթարան: Ղրիմի Թաթար—Գիրեյ խանը:

ղիին մեջ արձակված աղերսանքներուն և տվայտանքներուն մեջ[214]։ Շահը տեղեկացած էր Սիկալայի ծրագրին, որ էր հասնիլ իր բերդերին Կարս կոչվածին և մինչև անոր մոտենալը ձյունը վրա պիտի գար և պիտի արգիլեր ամեն պատերազմական գործողություն։

Երբ իր բանակատեղիին մոտեցանք, շահին մարդոց թիվը 60 հազար ըլլալու էր, որովհետև բազմաթիվ զինվորներ ետ ղրկված էին ձմռան պատճառով։ Երեսուն հազար հոգի ուներ իր գտնված տեղը, մյուսները իրենց հրամանատարներով բաշխված էին հառաջապահ դիրքերու վրա, որոնք իրր դիտարան կծառայեին, որովհետև շատ քիչ պահակ կար իր գտնված բանակատեղիին մեջ և այս զինվորներն էին, որ կկատարեին հարձակումները և ընդհարումները։ Շահին մոտ կգտնվեր Աղեքսանդր խան, քրիստոնյա իշխան Վրաստանի, ինչպես նաև իր թոռներեն մեկը[215], երեք կամ չորս հազար հոգիով։ Երբ շահը կհառաջանար, Աղեքսանդր խանն ալ կքալեր իր մարդերով, իրենց առջև բարձրացուցած երեք խաչեր կարմիր կտավով ծածկված, իբր դրոշակ և իրենց քրիստոնեական նշանացույցերով, ինչ որ ինծի համար մեծ ուրախություն մը եղավ։ Այն ատեն, երբ շահը հառաջացած էր Թավրիզեն 58 փարսախ թրքական հողերուն մեջ, 4 օրվան ճամփայով Վրաստանեն, 45 փարսախ Տրապիզոնեն, ուրկե Սև ծովեն կարելի է 8 օրեն անցնիլ Վալաքիա, որ Լեհաստանի մոտ է, և 40 օրվան հեռավորությամբ Հալեպեն, բանակատեղիին մեջ հանդիպեցանք Լեհաստանի թագավորին գաղտնի դեսպանին[216], որու միջոցով այս վերջինը շահին կառաջար-

[214] Շահ Աբբաս իր բանակատեղին հաստատած էր Կարսի շրջանին մեջ։ Այստեղ է, որ 1604 հոկտեմբերի երկրորդ կեսին ընդունեց Լասերայի դեսպանությունը։

[215] Աղեքսանդր խան, տ. աստ, ծանոթ. 188։ Իր հետ գտնվող թոռը Թեյմուրազ իշխանն էր, որ ընդհատաբար պիտի թագավորեր 1605-են 1664, Ալլեն, էջ 192։ Տոհմական ծանոթություններ Կախեթի Բագրատունիներու մասին։

[216] Այն անանուն դեսպա՞նն է, որու հանդիպեցավ Հ. Փոլ Սիմոն Աստրախանի մոտ 1608-ին, ընկերակցությամբ «Եղբ. Ֆրանսիսքո տե Աքոստայի, որ Պարսկաստան գացած էր Կղեմես Ը-ի ժամանակ Հ. Պեյշիորի բնակության միջոցին և հայու մը, որ իբր դեսպան Լեհաստանի թագավորին, գացած էր Պարսկաստանի թագավորին մոտ և երկու պարսիկ դեսպաններու, մեկը Ալի կուլի պեկ, որ եղբ. Աքոստայի հետ կերթար իբր դեսպան Ն. սրբության մոտ և մյուսը Լեհաստանի թագավորին մոտ, հայուն հետ, զոր հիշեցինք», Կարմելյաններ, էջ 92, ծանոթ. 3։ Եվ կամ այն մյուս դեսպանը, հայ վաճառական Սեֆեր Մուրատովիչ, 1601-ին Պարսկաստան ղրկված Լեհաստանի թագավոր Սիկիզմոնտ Գ Վազայի կողմե, որ 31 մայիս 1601-ին Տրապիզոն հասնելեն ետք անցավ Վրաստանի իշխան Աղեքսանդրի հողերեն, Երևանեն, Նախիջևանեն, Ջուղայեն, Թավրիզեն Ղազվինեն և Քաշանեն. Ալլեն, էջ 366։ Կենթադրվի ընդհանրապես, որ Սիկիզմոնտ Գ թագավորը հայուն

կեր բարեկամություն և զինակցություն թուրքին դեմ, ինչպես և բանագնացի մը, զոր ղրկած էր Մոսկովիո ուրիշ մեկ դեսպանը, որ կըսեին, թե կուգար մեծ շուքով և երեսուն հոգիով և արդեն Վրաստան հասած էր[217]։

3. ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԴԵՄ ՇԱՀԻՆ ՄՂԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՆ ՆՈՅԵՄԲԵՐ 1604-ԵՆ ՄԻՆՉԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐ 1605 ԵՎ ՔԱՆԻ ՄԸ ԴԵՊՔԵՐՈՒ ՁՄՌԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ, ԵՐԲ ԹԱՎՐԻԶ ԷԻՆՔ

Մինչդեռ Սիկալայեն 4 փարսախ հեռու էր, շահը կտեսներ, որ ձմեռը կմոտենա և թե թշնամին շատ զորավոր է, վասնզի Ահմետ փաշա եկած էր միանալու անոր, կազմելով ընդամենը ավելի քան հարյուր հազար մարդ, ետ քաշվեցավ այնպիսի լավ դասավորումով մը իր ույժերուն, որ թշնամիին դեմ քալելու երևույթը ունենալով հանդերձ՝ կըհեռանար անկե կողերեն և թշնամիին կձգեր բոլոր քանդված հողերը և դաշտերը այրած խոտերով, անցած տեղերեն տանելով քաղաքներուն և գյուղերուն բոլոր բնակիչները, առանց ձգելու ապրող ոչ մեկ էակ։ Այսպես անցավ Երևան քաղաքեն և շրջակայքեն, որ կհանդիսանա կըզըլբաշներու[218] շատ բարեբեր երկիր մը, գերի տանելով մեծ մասը այս երկրին հայերուն։ Եկավ Նախիջևան քաղաքը, զոր հիմնահատակ կործանեց, հուրն և սուրն անցնելով բնակիչները, որովհետև իրեն ըսած էին թե Սիկալայի հետ հարաբերություն կպահեին։ Այնտեղեն անցավ Ջուղա[219], գլխավոր քաղաք Հայաստանի, զոր պարպել տըվավ 24 ժամվան մեջ, հայերը թողեցին իրենց հարստութենեն շատ բան, որովհետև չէին կրնար միասին տանիլ, շատ բազմաթիվ էին և տագնապահար, և կպակսեին փոխադրության միջոցները։ Անմիջապես

հանձնած էր, իբր «արքայական սպասարկու», քանի մը դիվանագիտական առաքելություններ շահ Աբբասի մոտ, բայց այդ չի հետևիր նույն դիվանագետին պաշտոնական տեղեկագիրներեն Հ. Գրիգոր Փերովիչ, Հայերը Լեհաստանի թագավորության դիվանագիտական ծառայության մեջ։

[217] Մոսկովիո դեսպանները Թաթիշչև և Իվանոֆ, որոնք ղրկված էին Վրաստանի թագավոր Աղեքսանդրի մոտ, 1604-ի ամռան Վրաստան հասան, ուր հանդիպեցան Աղեքսանդրի որդվույն՝ Գորգի իշխանին, Ալլեն, էջ 378—501։

[218] Ձեռ. կոզելպաշա, կարմիր գլուխ, անուն զոր օսմանցի թուրքերը տված էին յոթը թյուրքման ցեղերուն, որոնք Արտապիլի շեյխերը Պարսկաստանի գահուն վրա դրին և շահ Իսմայիլի (1487—1524) օգնեցին հիմնելու Սաֆավիներու հարստությունը։

[219] Ձեռ. Ժուլֆայի։

գետնին հավասարեցուց քաղաքը և զինվորները կհափշտակեին ինչքերը ինչպես և երեխաները։ Այս մարդոց տառապանքը այնքան մեծ էր, որ շատերը ճամփան մեռան, առանց որ հայրը կարենա օգնության հասնիլ իր զավկին, ինչպես զավակը իր հոր։ Սիկալա միշտ կհետևեր իրեն, հաստատելով իր բանակատեղիները այնտեղ, ուրկե շահը կվերցներ իրենը։ Հասնելով Նախիջևան և տեսնելով ամեն ինչ քանդված, ըսավ իր մարդոց, թե պետք չկար ավելի հեռու երթալու, որովհետև իր հառաջխաղացումը պատճառ պիտի ըլլար, որ ավելի քանդվեին իր տիրոջ՝ Թուրքին հողերը։ Այսպես գնաց պատսպարվելու Վանի ամրոցին մեջ, և Թուրքին զորաբանակը ցրվեցավ Էրզրումի և Երզնկայի նահանգներուն մեջ։

Շահը, որ անցած էր Ջուղայի գետեն, գիտնալով, որ Սիկալա ետ քաշված էր, հրամայեց Ամիր-Կյունե խանին[220] տանիլ Նախիջևանի և իր գյուղերուն բնակիչները, ձմեռը անցնիլ անոնց հետ և պաշտպանել զանոնք։ Ամբողջ ձմեռ այս վերջինը հրեց երեք կամ չորս անգամ Թուրքերուն հարձակումները և սպանդյալներ եղան երկուստեք։ Անգամ մը Թուրքերը սպաննեցին բազմաթիվ պարսիկներ և ձիեն վար ձգեցին Ամիր-Կյունե խանը վիրավորելով զայն, բայց առանց գերի բռնել կարենալու։ Շահը Թավրիզ քաշվեցավ[221] իր մարդերով, զորս ցրվեց շրջակայքը։ Այնտեղեն հրամայեց Վրաստանի իշխան Աղեքսանդր խանին, որ դեռ իրեն հետ էր, վերադառնալ իր թագավորությունը, իրեն հետ տանելով Կոստանդին Միրզա, անդրանիկ որդի նույն իշխանին, բայց հավատուրաց[222], պայման դնելով, որ ամռան սկիզբը հայրը երկու հազար հոգի պիտի տար իր որդվույն և շահը չորս հազար, որպեսզի Կոստանդին Միրզա հարձակի Շիրվան նահանգին վրա, որու կառավարիչն էր Սիկալայի որդին։ Այդ ծրագրով Վրաստան հասնելով, հայրը խնջույք մը սարքեց իր հավատուրաց որդվույն և 40 կամ 50 պարսիկներու համար և ճաշի միջոցին սպաննվեցավ իր հավատուրաց որդվույն ձեռքով։ Ուրիշ քրիստոնյա որդի մը և բոլոր արքայազարմ իշխաննե-

[220] Ձեռ. Մորկանիքան, Ամիր—Կյունե խան, որուն շահ Աբբաս տված Երևանի խանի պաշտոնը քաղաքին գրավումեն ետք 1604-ի գարնան. Նույն, էջ 430։

[221] Շահ Աբբաս Թավրիզ քաշվեցավ 1604-ի նոյեմբերին, մինչդեռ Ճղալա Զատե ձմեռը կանցներ Վանի մեջ. Նույն, էջ 454, ծան. 2։

[222] 1605-ի հունվարի սկիզբն է, որ շահ Աբբաս արտոնեց Աղեքսանդրի Պարսկաստանը թողնելու իր Կոստանդին որդվույն և իր ընտանիքին ուրիշ անդամներու հետ, մինչ իր թոռը Թեյմուրազ, վար դրված էր իբր պատանդ. Նույն, էջ 454։

րը, որոնք այնտեղ կգտնվեին նույն ճակատագիրը ունեցան և հավատուրացը ինքզինքը հռչակեց Վրաստանի թագավոր[223]։ Անմիջապես փութաց այս խուժդուժ արարքը տեղեկացնել շահին, որ եղելությունը տոնեց ցնծության մեջ, ցույցերով և հանրային արարողություններով, որոնք տևեցին երեք օր[224]։ 1605-ի ամռան սկիզբը այս հավատուրաց բռնապետը կարելի եղածին չափ մեծ թիվով մարդ հավաքեց հարձակելու համար Շիրվանի նահանգին վրա և ճակատամարտի մը ընթացքին հաղթեց Սիկալայի որդվույն և սպաննեց անոր մարդոցմե այնքան, որ Թավրիզ շահին ղրկեց հինգ հազար գլուխ, զորս ժողովուրդը գնաց ընդունելու քաղաքեն երկու փարսախ դուրս, և Սիկալայի որդին, վիրավորված, բերդի մը մեջ ապաստանեցավ, ասիկա տեղի ունեցավ, երբ դեռ Պարսկաստան էինք։

Շահը տեղեկացած ըլլալով Թուրքերուն դեմ[225] Ամիր-Կյունե խանի մղած կռիվներուն, երկու ձիավորներ քառավազ եկան, երբ արդեն գիշերը վրա հասած էր և ամբողջ ժողովուրդին առջև լուր տվին, թե Թուրքերը կհառաջանան Մարանտի վրա, որ գլխավոր քաղաքն է Թավրիզի շրջանին։ Անմիջապես զինվեցավ իբր թե իր մարդոց օգնության հասնելու համար և կես գիշերին քաղաքեն դուրս ելավ դեպի Մարանտ ուղղվիլ ձևացնելով, բայց գնաց քյուրտերու երկիրը և երբ հասավ Վանի բերդին գավառը, քանդեց բազմաթիվ գյուղեր, ուրկե բերավ յոթը հազարե ավելի գերի, որոնց մեծ մասը հայ երեխաներ էին և Թուրքերը այնքան անակնկալի եկած էին, որ հազիվ ժամանակ ունեցան բերդերուն մեջ ապաստանելու։

Այդ ձմեռ, Սիկալա, կասկածելով, որ Ահմետ փաշա իրեն դեմ նենգություն կսարքե Թուրքին գրած իր նամակներուն մեջ, խնջույքի մը ատեն թունավորեց զայն. Նույն ձմեռը շահը հրաման հանեց իր ամբողջ թագավորության մեջ, որ ամեն ոք ամռան սկիզբը պետք էր միանար իրեն և անսաստողները մահվամբ պիտի պատժվեին։ Իրեն հնազանդեցան այն աստիճան, որ մայիս 23-ին Թավրիզի մեջ արդեն 50

[223] Կախեթի Աղեքսանդր թագավորի և իր որդվույն Գորգիի սպանության մասին. Նույն, էջ 454—468։

[224] Կոստանդին շահ Աբբասի ղրկեց իր հոր և եղբոր գլուխները, մինչ մարմինները փոխադրված էին Ալլահվերտիի վանքը. Նույն, էջ 460։

[225] 1605-ի աշնան Ճըղալ-Զատե հարձակողական մը արձակեց Ուրմիո լիճին շուրջը. **Այնե**, էջ 463։ Ճըղալ-Զատե պարտվեցավ շահ Աբբասեն Սալմաստի մոտ օգոստոս 1605-ի և մեռավ 2 դեկտեմբեր 1605-ին դեպի Տիարպեքիր իր նահանջին ընթացքին։

հազար ձիավոր կար, զորս անմիջապես ղրկեց Սիկալայի դեմ, Ալլահվերտի խանն ըլլալով իրենց զորավարը[226]։ Որովհետև Սիկալա դեռ չէր կրցած նույնքան մարդ հավաքել, առիթեն օգտվեցավ ան և հարձակեցավ, երբ կգտնվեր Վանի բերդերուն մոտ, սպաննելով 6 կամ 7 հազար հոգի անոր մարդերեն, մյուսները փախուստի մատնելով ամեն կողմե։ Սիկալա ապաստանած ըլլալով ամրոցին մեջ քիչ մարդով և դուռները փակած ըլլալով, Ալլահվերտի խան տերը մնաց բանակատեղիին և գրավեց մեծ ավար, ձիեր, ուղտեր և վրաններ։ Շահը իմանալով ասիկա, իր մնացած մարդերով անմիջապես Թավրիզեն քալեց բերդին վրա և Լարի սուլթանը, որուն հանդիպեցանք ճամփան, մեզի ըսավ որ շահը գրաված էր Վանի բերդը և Սիկալա քսան կամ երեսուն հոգիով ապաստանած էր բերդի մը մեջ ծովու նման լիճի մը վրա։

Օրմուզի ամրոցին մեջ վաճառականներու նամակներեն իմացանք, որ շահը տեղեկացրած էր, որ Սաֆի Միրզա[227] իշխանը կարգ մը մեծերու հետ կդավադրեր թագավորությունը ապստամբեցնելու և իր հայրը սպաննելու համար, ինչ որ շահին առիթ տվավ սպաննելու իր մարդոցմե քանի մը հոգի և իշխանը բերդի մը մեջ բանտարկելու։ Նմանապես Օրմուզի մեջ Սպահանի հայրերեն նամակներ ստացանք, որոնք կըսեին, թե վրացիները[228] հասկնալով որ Կոստանդին Միրզա, հավատուրաց իշխանը, որոշած էր զիրենք ստիպելու, որ ամենքն ալ մահմեդական դառնան, ապստամբեցան իրեն դեմ և սպաննեցին Վրաստան գտնվող բոլոր պարսիկները և Կոստանդին Միրզա, հավատուրաց բռնապետը փախած էր շահին մոտ վերջին պահուն և թե այդ բանը ըրած են մոսկովցիներուն դրդումով, կըսեն նաև որ ըրած են Թուրքերուն օգնությամբ[229]։

[226] Ձեռ. Ալավերտիքան, Ալլահվերտի խան, տ. աստ, ծան. 83։

[227] Ձեռ. Սաֆին Միրիզա։ Շահ Աբբաս, Վրաստանի իշխաններ Կախեթի Թեյմուրազ և Քարթլիի Լվարսաբ Բ-ի ապստամբության հետևանքով 1613-ի աշնան զինվորական արշավանք մը կատարեց անոնց դեմ, որու կթվի թե անուղղակի հետևանքը եղավ ողբերգական սպաննությունը Աբբաս Ա-ի անդրանիկ որդվույն Սաֆի—Միրզայինե։ Շահը որ կնախանձեր վրացի մորմե մը ունեցած իր այս որդվույն ժողովրդականութենեն սպաննել տվավ զայն սպուկի մը ձեռքով։ Իր բարեհամբույր նկարագրին և քրիստոնյաներու հանդեպ իր բարեացակամության պատճառով, միսիոնարները մեծ հույսեր դրած էին Սաֆի Միրզայի վրա, Կարմելյաններ, էջ 211։

[228] Ձեռ. Կյուրճիսթանու

[229] Կոստանդին ինքն ալ սպաննվեցավ վեց ամիս ետք 1605-ին կռվի մը ընթացքին, երբ հետևանք ժողովրդական ապստամբության մը, որ դրդված էր Քեթևան թագուհիին կողմե, այրին Կոստանդինի եղբայր Դավիթի։ Դավիթ ինքն ալ հափշտակած էր իր հոր Ալեքսանդր Բ-ի գահը, տասներմեկ ամսվան կարճ շրջանի մը համար. Ալլեն, էջ 594։

Այս ձմռան վերջավորության շահը գնաց Կանձայի[230] նահանգը, ուր գրավեց քանի մը բերդ և ասպատակեց քանի մը վայրեր, ավարի առնելով ինչ որ կգտներ և գերի վարելով կին ու երեխա։ Ամբողջ ամառը այստեղ անցուց մեծ վնաս պատճառելով թրքական զորքերուն, որովհետև իր առած բազմաթիվ գերիներեն զատ սպաննեց շատ Թուրք, ինքն իսկ քիչ վնաս կրելով։ Այդ շրջանին արդեն դարձած էր ավելի զորեղ, որովհետև արդեն ավելի զինվոր ուներ քան առաջ, քանի որ քյուրտ պետ մը իրեն հետ զինակցած էր իր երեսուն հազար մարդերով, ամենն ալ շատ լավ զինվոր, ըսելով թե կնախընտրե իրեն ծառայել քան թե Թուրքին, վասնզի ինք ավելի առատաձեռն էր զինվորներուն նկատմամբ։ Այսպես, իրեն ուղարկած էր իր կինը և զավակները իրեն միանալե առաջ իսկ, որպեսզի իր հրամանով ապահով տեղ մը դրվին։ Այս լուրերը ունեցանք Հնդկաստանի մեջ զինվորե մը, որ կուգար շահին բանակատեղիեն և այնտեղ գտնված էր երբ շահը քանի մը արշավանք կատարած էր ամառը։ Տեղեկացանք նաև թե ինչպես շահը ըսպաննած էր ոմն Կոստանդին Միրզա, հավատուրաց որդի Վրաստանի թագավորին, որ դաշույնով սպաննած էր իր սեփական հայրը, շահին հաճելի ըլլալու համար[231]։

Այս Կանձայի նահանգը սահմանակից է մեկ կողմե Թուրքերուն, Կասպից ծովուն մոտ և մյուս կողմե Վրաստանի թագավորության։

4. ՊԱՏՃԵՆ ՆԱՄԱԿԻՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐ ՇԱՀ ԱԲԲԱՍԻ, ԱՌԱՔՅԱԼ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԴԵՍՊԱՆ ԼՈՒԻՍ ՓԵՐԵՅՐԱ ՏԸ ԼԱՍԵՐՏԱՅԻ ՄԻՋՈՑԱՎ[232]

Հավիտյան բարձր և զորավոր թող մնա թագավորությունը Ձեր Վեհափառության, թագավոր, շնորհիվն Աստուծո, այնքան մեծ իր տիրապետությամբ, որքան իր իշխանության տակ ապրողներուն իրեն ըն-

[230] Կանճա (Գանձակ) հին Էլիզավեթպոլ, այժմ Կիրովաբադ։ Պաշարվեցավ շահ Աբբաս Ա-են փետրվար-մարտ 1606-ին և վերագրավվեցավ վեց ամսվան պաշարումե մը ետք Ի. Հ. Նոր Շ. էջ 997—998։

[231] Ինչպես գիտենք, Կոստանդին մահացու կերպով վիրավորված էր կռվի մեջ. տ. աստ, ծան. 188։ Հավանական է, թե այս լուրերը Հնդկաստան կհասնեին այլափոխված, անտարակույս փոխանցող բազմաթիվ միջնորդներուն պատճառով։

[232] Այս նամակին պատճենը հիշատակված է իբր կցած մը 10 հունվար 1608 թվակիր վավերաթուղթի մը. տ. Սիմանքաս, Նահանգային քարտուղարություն, ԾԴ, 1479, էջ 4, «Առեղնագրություն Մաքրիտի արքունիքին մեջ Փորթուկալի խորհրդական ժողովին Պարս-

ծայած թիկունքով և բարգավաճումով, այնքան պերճափայլ ամեն բանի մեջ, որ բաղդատելու համար իր մեծությունը պարտիմ դիմել երկնքին, աստղերուն և տարրերուն։ Թագավոր ավելի բարձր քան աշխարհի վրա իշխող բոլոր քրիստոնյա թագավորները, տիեզերական համբավը իր հեղինակության և մեծության այնպես է, որ տարածված է աշխարհի բոլոր մասերուն մեջ։ Այսպես կճանչնամ զայն և այսպես են իր տիրապետությունը և իր իշխանությունը, որ բոլոր մյուս թագավորները իրեն կհնազանդին և իրեն կենթարկվին, որովհետև իրմե կախում ունին իրենց թագավորության աճումը և բարօրությունը։ Քաջ և ահագդու ինչպես անվանի և հզոր Աղեքսանդր Մեծը, իր թագավորության բնակիչները այնքան բազմաթիվ են, որքան երկինքի աստղերը. թագավոր ամենայն Սպանիո, թող իր երկրին բարգավաճումը ավելնա, լուսավորելու համար իրենները։ Բարեկրթության ձևերեն անդին, և նկատի ունենալով սերտ բարեկամությունը և սերը, որ մեզի կմիացնեն, կուզեմ հայտնել շատ բարձր թագավորին, որպեսզի գիտնա, որ երբ Ձեր Վեհափառության ուղարկեցի սքանչելագույն Հյուսեին-Ալի պեկը[233], իմ դեսպանս, իր ծառայության մեջ մտնելու համար, այդպես ալ ըրավ և վերադարձավ իմ արքունիքս մանրամասնորեն պատմելով բոլոր շնորհները և պատիվները զորս ըրած եք իրեն և ինծի հանդեպ հայտնված անկեղծ բարեկամությունը, ինչ որ իրեն պատճառած է մեծ ուրախություն, գովելով անսահման ուշադրությունը, որուն առարկա եղած է։ Մեծ գոհունակություն զգացի ասկե և սիրտիս մեջ աճեցան բարեկամությունը և սերը մեծ թագավորին համար։ Եվ որովհետև Ձեր Վեհափառությունը, իբր թագավոր ամբողջ քրիստոնեության, որոշադրած էր, որ վերագրավեմ և նվաճեմ այս շրջաններուն մեջ այն հողերը, որոնք ինծի կպատկանին ժառանգությամբ և թե այդ հիման վրա կռվի պիտի մտնեինք պատերազմելու համար թուրքին դեմ, անմիջապես, որ Հյուսեին-Ալի պեկ եկավ և ինծի խոսացավ այս հարցին մասին, հաստատեցի իմ բանակատեղիս ի տես ամենուն և ուղղվեցա դեպի Ազարպայճան կոչված երկիրը, ուր պատերազմ մղեցի թուրքերուն բանակատեղիին դեմ։ Օգնությամբն հավիտենական Աստուծո, հաղթեցի անոնց, սպաննելով անոնցմե բազմաթիվ գլխավոր հրամանա-

կատտանի շահին դեսպանին մասին», հրատարակված Մենտես տա Լուզի կողմե, անդ, էջ 490—493։ Այս վավերաթուղթին մեջ շահին նամակը վերլուծված է և տրվելիք պատասխանին եզրերը այնտեղ թելադրված են։

233 Ձեռ. Սինալեպեք։

տարներ և զինվորներ։ Ողջ գերի վարեցի Թավրիզի փաշան և սպաննեցի տասը կամ տասներկու հազար մարդ ամեն տեսակե։ Գրավեցի թագավորանիստ Թավրիզ քաղաքն ու բերդը, մեծագույն մասը Ազարպայճանի[234] բերդերուն։ Այսպես, գրավեցի հետևյալ բերդերը, մեկը կոչված Քամանա (՞), ուրիշ մը կոչված Մարաղա[235] և դեռ ուրիշներ կոչված Յաժի[236], Սալմաս, Մարիքենտ[237], Մագիտ (՞), Կարկար[238], Ջուղա[239], Օրտուպատ[240], Տասմար[240ա], Պարկաշատ[241], Էչիլտյուր (՞), Յուրտյուքափոն (՞), Արսեկվար (՞), Էփիփքանի (՞), Աուսեքալիգիա (՞) և Շուրակիլ[242]։ Գրաված բերդերեն շատերուն մեջ մտա և առի շատ հրետանի, զենք, ռազմանյութ և պաշտպանության ուրիշ միջոցներ։ Այս Ազարպայճանի շրջանի մարդիկը և զինվորները, որոնք ապաստանած էին Երևան կոչված բերդին մեջ[243], ամենեն զորավորը բոլոր բերդերուն, այնտեղ բերելով շատ զենք և դրամ, և շատ ինչքեր, զորս ձեռք բերած էին երկար ատենե ի վեր, ամրացան հիշյալ բերդին մեջ և ինքնապաշտպանության դիմեցին, բայց շնորհիվ բախտիս և հավատքիս, հաղթեցի բերդին որոշ տևողությամբ պաշարումե մը ետք և կռվեցա թշնամիին դեմ մինչև որ Աստուծո օգնությամբ հաղթեցի անոնց, ամբարձիչներով և հրացանով զանոնք խարազանելե ետք մինչև որ արդարև ինչ որ կըհավակներ Հասայիտ Մամետե (՞)[244] փաշա, որ նախապես եղած էր Կազիլ Մետերնամի (՞), գիրկընդխառն կռիվի եկանք և ճակատամարտ մղեցի, ուր սպաննեցի բազմահազար թշնամիներ։ Գրավելե ետք բոլոր հողերը, որոնք ինծի կպատկանեին ժառանգությամբ, ուղղվեցա դեպի Թուրքին հողերը, ուր սպաննեցի, գերեցի, ավարի տվի չձգելով որ ոչինչ ազատի, հուրի և սուրի մատնելով ամեն ինչ։ Բանակատեղիս հաս-

234 Ձեռ. Ատապայեժոն։

235 Ձեռ. Մարակուա։

236 Ձեռ. Ժաղի։

237 Ձեռ. Մարեքոնս, Մարիքենտ (Մարակերտ) Մարանտի և Ջուղայի միջև։

238 Ձեռ. Կվարկվար, Կյուրկյուր կամ Կարկար, Նախիջևանի և Մարանտի միջև։

239 Ձեռ. Ջուլյա։

240 Ձեռ. Օրտեպատ։

240ա Դիզմար։

241 Թերևս Բարգուշատ։

242 Աուսեքալիգիա տեղանունը արդյոք Ուչ-Քիլիսեյի (Էջմիածին) աղավաղումն է, որ թուրքերեն կնշանակե երեք եկեղեցիներ։ Շուրակիլը կարող է Շորագյալը լինել։

243 Ձեռ. Հերոն։

244 Ձեռ. Հասայիտմամետե Փաշա—նույն Սայիտ փաշա՞ն է, որ կհիշե Հ. Պեյլիար իբր կառավարիչ Երևանի բերդին, տ. աստ, ծան. 296։

տառեցի Թուրքին հողերուն մեջ, որ կկոչվին Էսքարաբա (՞)[245], ուր շատ հռչակավոր և իմաստուն Լուիս Ֆերեյիրա տե Լասերտա, արժանի մեծ հարգանքի, դեսպան Ձեր Վեհափառության, Քրիստոսի օրենքով, եկավ իմ բանակատեղիս և ինծի հանձնեց Արքայական նամակը, հայտնելով անկեղծ բարեկամությունը և սերը, որով կայցելեր ինծի։ Մեծ գոհունակություն զգացի շատ հռչակավոր և խոհեմ դեսպանին գալուստեն և մանավանդ ձեր բարվոք առողջության մասին տված լուրերեն, որոնք անգամ մը ևս ուրախացուցին զիս և ձեր նամակին մեջ հայտնված բարեկամությունը կմեծնա մեջս։ Այս տարին Սիկալա[246], Թուրքին գըլխավոր կազիներեն մեկը, հրամանատարի աստիճան ստացավ և իմ երկիրս եկավ Թուրքին հրամանով, բայց չհամարձակեցավ հառաջանալ և ետ դարձավ իր բոլոր մարդերով, ոչինչ կատարելով իր նպատակներեն։ Եվ ես շատ բարձր Թագավորին հռչակավոր դեսպանին, որուն խոհեմության, կարողության և գիտության համար բաղդատություն չեմ գտներ և որուն արարքները շատ հաճելի եղան ինծի, ամեն պատիվ ըրի որուն ինքն իսկ, ինչպես ապացույցը տվավ անձնապես և զինքը ուղարկողը, արժանի էին։ Ուղարկեցի զայն ընկերակցությամբ շատ հռչակավոր Փաքիզե Իմամ-կուլի պեկի[247], արքունիքիս գլխավոր ավագանին, որ պաշտոն ունի այստեղ եկող հրամանատարները և դեսպանները ընդունելու և կվստահիմ իր բարեմտության, բարեկամության և զգաստության, քանի որ Թուրքերուն դեմ կատարեցի ինչ որ խոստացած էի ընել։ Հիմա որ իմ և Թուրքերուն միջև թշնամությունները սկսած են, Ձեր Վեհափառությունը պետք է կատարե ինչ որ խոստացած էր այդ ուղղությամբ, որովհետև կվստահիմ իր մեծության և հավատքին, որոնք այս բանին մեջ գործածության պիտի դնեն իր այնքան մեծ զորության մնացյալ մասը։ Լուիս Ֆերեյիրա տե Լասերտա, ձեր արդար դեսպանը, որուն գիտությունը, իմաստությունը և կարողությունը փորձով ճանչցա, բան մը որու համար շատ սիրելի է ինծի, եկավ ինծի գտնելու Թուրքին հողերուն մեջ, այս դժնդակ ճամփորդությունը իրեն պատճառելով մեծ տառապանքներ, որոնց խոհեմորեն դիմացավ նա մեծ տոկունությամբ, որից ես մեծապես գոհ մնացի, զայն համարելով հիանալի ծառայող մը Ձեր Վեհափառության, որ կըրնա անոր ընծայել բարձրարժեք շնորհներ, որովհետև արժանի է անոնց։ Եվ իմ կողմես ձեզմե կխնդրեմ այդպես ընել, ինչպես և գերհարգելի հայրերուն, որոնք եկան իրեն հետ և որոնք այստեղ իրենց բնակության ընթացքին եղան այնքան հնազանդ և այնքան կատարելությամբ ի գործ դրին իրենց կարգին պարտականությունները, որ մեծ գոհունակություն պատճառեցին ինծի։ Ինչ որ իմ կողմես պիտի հայտնեն շատ բարձր Թագավորին լավ եղած պիտի ըլլա, որովհետև անոնք մեծ վարկի և ճշմարտության տեր մարդիկ են և ես վստահություն ունիմ անոնց վրա, զանոնք կատարյալ գտած ըլլալով և դուք անոնց պարտավոր եք մեծ երախտագիտություն։ Շուտով ուղարկեցեք ինծի դեսպանս, որովհետև կսպասեմ իր գալուստին և միշտ ինծի տվեք մանրամասն լուրեր ձեր բարվոք առողջության և ձեր բարգավաճ վիճակին մասին։ Ինչ որ պիտի հրամայեք ընել այս երկրին մեջ տեղեկացուցեք ինծի, որովհետև պիտի գործադրեմ զայն այն կատարելությամբ, զոր գիտեք, իբր ձեր բարեկամը։ Այսպես, ուրեմն, ավելի չեմ երկարեր, Թող Ձեր Վեհափառության վիճակը շարունակե, են։—Այս նամակին ետև զարնված է սև կլոր դրոշմ մը, որ կըսե. Շահ Աբբաս Թագավոր Պարսկաստանի։

Ստորագրություն՝
Լուիս Ֆերեյիրա տե Լասերտայի

5. ԻՆՉ ՈՐ «ԾԱՌԱ ԱՆՊԵՏ»[248] ՀԱՅՐԸ ԿԱՏԱՐԵՑ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՇՆՈՐՀԻՎ ԱՍՏՈՒԾՈ

Ծ. Հայրը իբր միսիոնար Պարսկաստան ուղարկվեցավ եկեղեցապետ արքեպիսկոպոսին[249] և իր եկեղեցականներուն կողմե այնպես ա-

245 Ձեռ. էսքարաբա, շահ Աբբաս Լասերտայի դեսպանությունը ընդունեց Շուրակերի (Շորագյալի՞) ամրոցին մոտ, Կարսեն յոթը մղոն հեռու. Կովեյիա, անդ, էջ 104։

246 Ձեռ. Սիկալակոլ։

247 Ձեռ. Փաքիզա էմանքյուլիպեք։

248 Պահեցինք «ծառա անպետ» արտահայտությունը իբր թարգմանություն բնագրին մեջ գործածված Սերվո սեմ փրովեյիթոյի, որ կնշանակե միանգամայն «ծառա անշահախնդիր», «ծառա գեշ վարձատրված» կամ «ծառա անպետ»։ Այս վերջին արտահայտությունը մեզի ամենեն ճիշտը թվեցավ։ Համառոտելու համար պատմության շարունակության մեջ պիտի գործածենք ծ. սկզբնատառը։ Կրոնավորը պիտի կոչվի ուրեմն Հայր Ծ.։ Շահնկյան է բաղդատել հ. Տիոկո տե Սանթա Աննայի ձեռագրին այս մասը այն տեղեկություններուն հետ, որոնք կըգտնվին Սպահանեն 7 դեկտեմբեր 1607-ին Պողոս Ե պապին ուղղած իր նամակին մեջ և կվերաբերին նույն նյութերուն. տ. Ս. Լաֆեզ-Ք. Ալոնսո, Երկու նամակ Պարսկաստանի մեջ օգոստինյան առաքելություններուն մասին, Օգոստինյան հավաքածո, հատ. Իե, 1961, էջ 152—201։ Հ. Տիոկո տե Սանթա Աննայի խնդրո առարկա

տեն մը, ուր այս առաքելութենէն մեծ օգուտներ կսպասվէին, այն պատճառով որ շահ Աբբաս, որ այդ միջոցին կթագավորեր, կխոստանար (Ս. Հոգվույն ներշնչո՞ւմն էր, որու չանսաց կամ հնա՞րք մը, զոր գործածեց ամրապնդելու համար իր դիրքը Թուրքերուն դեմ իր մղած պատերազմին մեջ) մեծ հավատափոխումներ։ Այն աստիճան, որ եկեղեցապետ արքեպիսկոպոսը մտածեց ինքն իսկ ստանձնել այս առաքելությունը, գալով Հոր՝ ան կխորհեր թե ձեռնարկը արժանի էր, որ ամբողջ կյանք մը հարատևորեն անոր նվիրվի։ Այն ատեն Սպանիո մեջ մեր գերհարգելի հայրը իբր իրեն օժանդակ ուներ գերհարգելի ուսուցչապետ եղբ. Ֆրանսիսքո Փերեյիրան, ավելի ետքը եպիսկոպոս Միրանտայի և ընտրված Լամեկոյի (նախապես գրված Վեզեու և հետո ջնջված), աթոռին, իր հորեղբայրը, հոր հորեղբորորդին. Ծ. հայրը գրեց իրեն պարզելու համար իր նպատակը և խնդրելու համար իրմե, որ միաբանության գլխավորեն իրեն համար ստանա Պարսկաստանի մեջ մշտնջենական միսիոնար դառնալու արտոնությունը (Աստված հաճեր, որ միշտ եղած ըլլար) և թե իր ստորադասներուն արգիլվեր, որ զինքը ետ կանչեին առանց հիշյալ գլխավորին գիտության։ Արդարև, իր հորեղբայրը ստացավ խնդրված արտոնությունը, որ տրվեցավ իրեն, բայց հետո ետ առնվեցավ, ինչպես կվկայե գերհարգելի ուսուցչապետ եղբ. Ժոան տե Սան Ժոզե, Փորթուկալի նահանգային վիճակավոր և հորեղբորորդի հայր Ծ.-ի, որ վավերաթուղթը ենթարկեց եպիսկոպոսական ժողովին քննության, այս վերջինը մերժեց եկեղեցապետ արքեպիսկոպոսին պահանջով, որ ներկայացուց ուրիշ արտոնագիր մը նույն գերհարգելի հայրեն, որու շնորհիվ կրնար զբաղեցնել միաբանության կրոնավորները, ըսելով թե պետք ուներ Ծ. հոր հիմնելու համար կուսանոց մը, որու մասին պիտի խոսիմ ավելի ետքը։

Այս խոնարհ միսիոնարը մեկնեցավ ուրեմն Պարսկաստան և պատահեցավ, որ այդ միջոցին մեր տեր կաթոլիկ թագավորը իբր դեսպան Պարսկաստանի թագավորին մոտ կուղարկեր այդ վայրերեն ազնվական մը, որ այն ատեն իր արքունիքին մեջ էր և կկոչվեր Լուիս Փերե-

նամակը իտալերեն թարգմանություն մըն է փորթուկալերեն սկզբնագրին, որ չէ գտնված։ Իտալ. թարգմանության երկու օրինակներ կան Վատիկանի արխիվներուն մեջ, Պորկեզյան դիվանաթուղթեր, շարք Բ. հատ. 68, մյուսը՝ Քոնֆալոնիերի դիվանաթուղթեր, հատ. 22, էջ 278—305։ Հ. Տիոկո 1603-ին ինքզինքը կկոչեր «անարժան եկեղեցական», նամակ 5—2—1608-ի առ Պողոս Ե պապը, Լոփեզ-Ալոնսո, էջ 197։

249 Ալեյշո տե Մենեզըշ Կոայի արքեպիսկոպոս։

յիրա տե Լասերտա, որու պետք էր ընկերանային երկու կրոնավորներ մեր սուրբ միաբանութենեն։ Ծ. հայրը եկեղեցապետ արքեպիսկոպոսին խնդրեց զինքը հեռու պահել այդ պարտավորութենեն որպեսզի կարենա երթալ Սպահանի վանքը և այնտեղ ամբողջովին նվիրվիլ իր առաքելության։ Արքեպիսկոպոսը ուրեմն միջամտեց և դեսպանին ընկերանալու համար նշանակեցին երկու ուրիշ կրոնավորներ. ամենեն կարեվորն էր եղբ. Պելշիոր տոս Անժոս, որ լավագույն կերպով կատարեց իր պաշտոնը, մյուսը՝ եղբ. Կիլեերմե[250] տոս Սանթոս Ակոսթինիո, որ պիտի նահատակվեր այս թագավորության մեջ։ Ծ. հայրը միացավ անոնց, բայց ամբողջ ճամփորդության ընթացքին, իբր պարզ վանական մը հիշյալ վանքին և հեռու մնաց և չխառնվեցավ աշխարհական գործերուն։ Մինչդեռ, ինչպես սովորություն է այս երկրին մեջ, ճամփորդող ազնվականներուն, դեսպանը իր հետ կտաներ իր սեփական վրանը, ինչպես անոնք որ կընկերանային իրեն, այնտեղ մնալու համար իրիկունը, երբ կհաստատեին խմբակայանը, հայրն ալ ուներ իր վրանը, ուր կպատսպարվեր ամեն հանգրվանի, այնտեղ առանձնանալու համար, թեև մյուսներուն հետ կանցներ մնացյալ ժամանակը։ Երբ հասավ վանքը, կանգ առավ այնտեղ, մինչդեռ երկու եկեղեցականները կհետևեին դեսպանին և իր դեսպանության։

Սկսյալ այն պահեն, ուր մեկնեցավ, նավուն մեջ Կոայեն Օրմուզ, ինչպես Օրմուզեն Սպահան ճամփուն վրա, այսինքն մեկ ամիս ծովու վրա և երկու ամիս ցամաքի վրա, խոսելով ընդհատումներու մասին, Մոսքաթի[251], Օրմուզի[252], Կոմպրոնի[253] բերդերուն մեջ կանգ առնելու ատեն, ան չդադրեցավ աղոթելե աստուծո, որ իրեն պարգևե ոչ միայն իր սրբազնացուցիչ շնորհը այլև հաջողությունը իր առաքելության մեջ։ Կարավանին յուրաքանչյուր հանգրվանին, երբ կհասնեին մանզիլն, այսինքն այնտեղ, ուր կարավանները կանգ կառնեն գյուղերեն դուրս և միշտ ջուրի ակի մը մոտ, կրոնավորը անմիջապես կթողուր ընկերները, ձգելով իր բեռները անոնց, որ պետք էր ստանձնեին անոնց այդ հոգը, և ուրիշի մը հանձնելով իր վրանը կանգնելու և իրեղենները սարքելու խնամքը, առանձնության մեջ քաշվելու և աղոթելու համար։ Կխնդրեր աստվածային ողորմութենեն, որ օր մը այս հողերը բը-

250 Ձեռ. Կիլեելմե։
251 Ձեռ. Մասքաթ։
252 Ձեռ. Քամրան։
253 Ձեռ. Իասփան։

նակվեին քրիստոնյաներով և անկեղծ հավատացյալներով։ Եվ այս վերաբերումն չշեղեցավ մինչև իր մուտքը Սպահանի[254] վանքը։

Երբ հասան այս քաղաքը, մայրաքաղաք, ուր էր արքունիքը, որովհետև Պարսկաստանի թագավորը այնտեղ չէր գտնվեր, ինքն իսկ մասնակցելով Թուրքերուն դեմ մղված պատերազմին, դեսպանը շարունակեց իր ճամփան։ Ս. հայրը մնաց այնտեղ նվիրվելու համար Աստուծո ծառայության, ուսման և գոհացում տալու համար քրիստոնյա հայերուն հոգևոր և աշխարհիկ ստիպողական պետքերուն. անոնք, խույս տալով շահին և Թուրքերուն միջև մղվող պատերազմեն, եկած էին այս քաղաքին արվարձանները և շրջակայքը, ինչպես պիտի ըսենք ավելի ետքը։ Այսպես անցուց երկու տարի, երբ հասավ պատգամագիր մը, որ կվերաբերեր Կոայի նահանգային եպիսկոպոսական ժողովին մեջ տեղի ունեցած ընտրություններուն և կհաղորդեր, որ Սպահանի վանքին վանահայր ընտրված էր։

Բացինք ուրեմն նամակները, կարդացինք եկեղեցականներուն հրամանները, որոնցմե մեկը ստորագրված էր չորս տարվան համար նշանակված նահանգային փոխ-վիճակավորեն և դրոշմված էր անոր կնիքով. այնտեղ ըսված էր, որ եղբ. Տիոկո տե Սանթա Անա ընտրված է Սպահանի վանքին վանահայր[254], իբր օգնական ունենալով եղբ. Ժերոնիմո տա Քրուզ և եղբ. Քրիսթովան տո Էսփիրիթո Սանթո, որ այն ատեն վանահայր էր, անվանված էին նաև եկեղեցականները, որ այնտեղ կմնային և պետք էր մնային։ Կարդալե ետք այս նամակները, ուր Ս. հայրը նշանակված էր իբր ընտրյալ վանահայր, ինչպես նաև հրամանը, եղբ. Քրիսթովան տո Էսփիրիթո Սանթո, որ պետք էր թողուր իր պաշտոնը զայն հանձնելու համար նոր վանահայրին, կասկած մը ունեցավ, ինչպես մյուս եկեղեցականները։ Առանց բոլորովին վիճելի համարելու եկած վավերաթուղթերը, զանոնք կնկատեին անբավարար, հիմնվելով մեր սուրբ սահմանադրության վրա, որ կպահանջե չվստահիլ նամակներուն, այլ սպասել եկեղեցական ժողովին վճռագրերը տեսնելու, որոնք չէին հասած պահանջյալ պայմաններուն մեջ։ Բոլոր մյուս եկեղեցականները այս տեսակետին համաձայն գտնվեցան և, հետևաբար, նոր վանահայրը չկրցավ իր պաշտոնը ստանձնել վանքին գլուխը։

Ս. հայրը վերահասու եղավ այն ատեն հայրերու տգիտության և

254 Տիոկո տե Սանթա Անա վանահայր ընտրվեցավ 11 նոյեմբեր 1605-ին և Պելչիոր տոս Անժոս իրեն հաջորդեց 1 դեկտեմբեր 1609-ին։

թե որ աստիճան անոնք գեշ կհասկնային մեր սուրբ սահմանադրությունը, որովհետև կպահանջեին տեսնել վճռագրերը, մերժելով ընդունիլ թե, ընտրություններու առնչությամբ, կարդացված վավերաթուղթը, որ անվիճելի էր, կարժեր այնքան որքան վճռագրերը։ Հրաժարելով ատիկա իրենց հասկցնելե, խոսեցավ այսպես. «Գերհարգելի հայր Քրիսթովան տո Էսփիրթո Սանթո, ձեր իրավասությունը իր վախճանին հասած է, այլևս վանահայր չեք, ես վանահայր եմ և իբր այդ ձեզի կփոխանցեմ ամբողջ իմ իրավասությունս, հոգևոր և աշխարհիկ, այս վանքին վրա։ Այժմեն սկսյալ և միշտ, կընդունիմ կատարել ձեր գերհարգելիության հրամանները։ Գալով ինծի, գերհարգելի հայրեր վանքին, ձեզմե յուրաքանչյուրին կուտամ իմ հոգևոր և աշխարհիկ իշխանությունս և դուք կրնաք խոստովանեցնել և քավություն տալ մեկզմյուսին, այնպես ինչպես պիտի խոստովանեիք ձեր գերդասին։ Այսպես, այլևս պիտի չըլլա վիճաբանություն, գալով ինծի, ինքզինքս պիտի համարեմ ազատ և պաշտոնիս բեռը թողած, պիտի կարենամ նվիրվիլ իմ զբաղումներուս և դուք ձերիններուն, համաձայն Աստուծո ներշնչման։

Բայց չորս ամիսեն անցած ըլլալով առանց որ հասնին վճռագրերը կամ ուրիշ նամակներ կամ լուրեր այս մասին, բոլոր հայրերը վանահայրին հետ սկսան մտահոգվիլ և ըսել, որ ավելի ապահով պիտի ըլլար վանքին տեսչությունը հանձնել նոր ընտրված վանահոր։ Գացին ուրեմն գտնելու զայն, որ իրենց ըսավ. «Ժողով գումարեցեք դուք ձեր մեջ, առանց ինծի և որոշեցեք ինչ որ լավագույն պիտի համարեք։ Եթե կկարծեք, որ պարտիք զիս ճանչնալ իբր ձեր վանահայրը և ինծի խոստանալ հնազանդություն, եկեք ինծի տեղեկացնելու և պիտի վարեմ այդ պաշտոնը»։ Այսպես ըրին և միաձայնությամբ եկան զինքը ճանչնալու և իրեն երդվելու հնազանդություն որպես իրենց եկեղեցապետը։ Այն ատեն է, որ սկսավ վարվիլ իբր մեծավոր, համաձայն Աստուծո ներշնչման և հակառակ անոր, որ սկիզբեն իսկ վստահ էր, որ պարտ էին զինքը ճանչնալ և իրեն հնազանդիլ իբր վանքին մեծավոր, երբեք չլսվեցավ նախապես որ գանգատի և պահանջե կատարել ուրիշ դեր մը, եթե ոչ պարզ վանականի մը դերը։ Այս ամենը պետք էր պատմել ցույց տալու համար, թե որքան Ս. հայրը քիչ փառասիրություն ցույց տվավ իր կրոնական կյանքին ընթացքին։

Իր պաշտոնավարության միջոցին Աստված Ս. հոր շնորհեց բազմաթիվ հոգեշեն գործեր, զորս ամենն ալ այստեղ հիշելու չենք, որով-

հետև, պետք է ըսենք, հարկ չկա այս մեղավորին կյանքը պատմելու, այլ պաշտպանելու իր պատիվը և պատասխանելու զրպարտության մը, որուն արժանի չէ եղած։ Պիտի հիշենք միայն ինչ որ համապատասխան եղած է իր նպատակներուն։ Առաջինը այն է, որ ղեկավարեց վանքը բարեկամական ոգով և խաղաղության մեջ. իր ստորադասները կըվստահեին իրեն, ոչխարներ էին գայլերու մեջ, նվիրված էին աղոթքի և Աստուծո պաշտամունքին. կզբաղեր անոնցմով, կզվարճացներ զանոնք, կհայթհայթեր անոնց ամեն ինչ, որուն պետք ունեին իբր սնունդ, ժամանց և հանգստության,—հրեշտակներն իսկ վկա պիտի ըլլան ի բացակայության մարդոց։

Երկրորդ, ոչ մեկ առիթ զանց չէ առած մեր աստվածային հավատքին բերելու համար բազմաթիվ հավատափոխներ, որոնք կգտնվեին այս թագավորության և այս քաղաքին մեջ, ոմանք այն դյուրություններուն և զանազան տեսակի հնարքներուն շնորհիվ, որով փախստական բանտարկյալ քրիստոնյաները կմնեին այստեղ, ուրիշներ, որոնք շահու համար կամ մոլության ճաշակեն մղված հարած էին մահմեդական կրոնքին, մկրտվելե և մեր մայր հռոմեական սուրբ եկեղեցիին վարդապետության մեջ կրթվելե ետք կհրաժարեին անկե թշվառության, տկարության և կարոտության հետևանքով։ Իր վանքը միշտ լեցուն էր այս թշվառ հավատափոխներով և հավատուրացներով և երբեք չդադրեցավ զանոնք քրիստոնյա երկիրներ ղրկելե, այդ նպատակին համար առատորեն ծախսելով ինչ որ կրնար ստանալ և երբ եկավ այս Հնդկաստանի պետության մեջ, իր հետ բերավ շատեր այս խեղճ մոլորյալներեն, որոնց կխնամեր մարմինը և հոգին։

Երրորդ, անմիջապես որ կտեսներ կարելիությունը աստվածային հավատքը քարոզելու և ներկայացնելու մահմեդականներուն, կըներ այդ, խոսքը ուղղելով ըլլա թագավորության մեծերուն, ազնվականներուն, ըլլա ժողովուրդին։ Կվիճեր առանց վախի և ամենայն վստահությամբ բոլոր անհավատներուն հետ, մահմեդական աղանդին պատկանին անոնք կամ հերետիկոս աղանդներեն ոևէ մեկուն, որոնք կուգային թագավորության մեջ կամ կբնակեին այնտեղ, և կգտնվեին արքունիքը։ Ասոնք էին և են տակավին անթիվ։ Այս մասին շատ բան կա ըսելիք, բայց պետք է համառոտել և խոսիլ մյուս կետերուն վրա։

Չորրորդը այն է, որ ի սրտե կապվեցավ քրիստոնյա հայերը մեր սուրբ մայր հռոմեական եկեղեցիին ծոցը բերելու գործին և զանոնք հնազանդեցնելու նորին սրբության պապին, քահանայապետը նույն եկեղեցվույն և երկրի վրա փոխանորդ աստուծո և մեր տեր Հիսուս Քրիստոսի։ Արդարև անոնք մեծ թիվով կուգային այս Սպահան քաղաքը, փախչելով մեծ և փոքր Հայաստանեն, զորս այն ատեն շահը գրաված էր թուրքերեն, այս շրջանի շատ մը ուրիշ հողերու և քաղաքներու հետ, երբեմն քալած էին ավելի քան երկու հարյուր փարսախ, գրեթե անմարդաբնակ դարձնելով հիշյալ երկու Հայաստանները։ Այս բազմությունը իբր պետ ուներ պատրիարք մը Դավիթ անունով, ութը եկեղեցական և ավելի քան հարյուր քահանա, բերելով մեծ մասը իրենց ծխականներուն, ինչպես նաև շատ մը ուրիշ կղերականներ և շուրջ հինգ հարյուր հազար հայ առանց հաշվելու անոնք, որ ցրված էին ուրիշ ուղղություններով։ Այս գաղթին մեջ մեռած էին ավելի քան հարյուր հազար հոգի, անոթութենե և դժնդակ պայմաններե, որովհետև մայրերը կկրեին իրենց զավակները և մեկ քանին հղի էին, ամեն ոք ոտքով կերթար խստաշունչ եղանակին և ձյունին տակ։ Տարագիրներու այս վիթխարի ամբոխը տեղավորված էր ոմանք Սպահանի շուրջ բնակարաններու մեջ, ուրիշներ այնտեղ, զոր կկոչեն հին քաղաքը, նորին մոտը, զանազան թաղերու մեջ և քիչ մը ամենուրեք, քարվանսերայներու մեջ (որոնք մեծ տուներ են վաճառականներու կարավաններուն համար, ուր կարելի է բնակեցնել շատ մարդ և որոնք կնմանին բավական տգեղ վանքերու), ուրիշներ ևս, հարուստ վաճառականները, անոնք որ ինչքեր ունեին և բերած էին ապրանք և դրամ, նոր քաղաքի մը մեջ Ջուղա կոչված[255]։ Այս քաղաքը, զոր սկսած են հիմնել, Սպահանի դիմացն է, մեծ գետի մը մյուս ափին վրա, կպարունակե ավելի քան հարյուր հազար բնակիչ ամենն ալ հայ և անոնց մեջ չի կրնար գտնվիլ ոչ մեկ մահմեդական, շահին հրամանով։ Օրե օր ավելցող այս մարդկային զանգվածին է, որ Ծ. հայրը կբերեր իր օգնությունը, կըսփոփեր բոլոր քրիստոնյաները, կօգներ և օժանդակ կդառնար ամենեն թշվառներուն նույնիսկ նյութապես իր ողորմություններով։

Որովհետև համոզված էր, որ այս հայ եկեղեցին բերելու համար իր ճշմարիտ պետին, Ն. ս. պապին հնազանդության և զայն միացնելու համար սուրբ և տիեզերական հռոմեական եկեղեցիին, պետք էր սկսիլ հիշյալ Դավիթ պատրիարքեն, եպիսկոպոսներեն, ամբողջ կղերականներեն և մյուս պետերեն, վասնզի եթե անոնք, գլուխները, միանային, անոնց պիտի հետևեին անդամները. Ծ. հայրը կերթար անոնց ժողովներուն, ուր կգտնվեին պատրիարքը, եպիսկոպոսները,

[255] Ջեռ. Ժուլֆայի

կղերականները և երեցները, ներկա կըլլար անոնց պատարագին և աղոթքներուն։ Երբ վերջ կգտնեին այս ամենը, կնստեր անոնց հետ իրենց շրջանակին մեջ և զանոնք ամրապնդելու նպատակով, վիճաբանությունը կբերեր հայ եկեղեցվույն և հռոմեական եկեղցվույն տարբերության վրա, ինչպես նաև այն վտանգին վրա, զոր կներկայացներ այս վերջինեն զատված ըլլալը և չհնազանդիլը Ն. ս. պապին, իբր քահանայապետ, գերագույն եկեղեցապետ և տիեզերական հովիվ ամբողջ սուրբ մայր եկեղեցիին, երկրի վրա փոխանորդ Աստուծո և մեր տեր Հիսուս Քրիստոսի։ Հետո խոսքը կբերեր հավատքի այն կետերուն վրա, ուր հայոց եկեղեցիին գիրքը նվազ զորավոր է, որովհետև մոտեն ուսումնասիրած էր զանոնք և լավ կճանչնար այդ կետերը, և պատրիարքը, եպիսկոպոսները, վարդապետները[256] (որոնք իրենց հավատքի տեսուչներն են), կղերականները և երեցները չէին մերժեր վիճաբանիլ և խոսիլ այս բաներուն մասին։ Ծ. հայրը շատ ուրախություն կզգար ասկե և ամեն օր կմատուցաներ պատարագի սուրբ զոհաբերությունը այս մարդոց բարի դարձին համար և դեպի անոնց կերթար բարեկամության մեծ արտահայտություններով։

Քիչ առ քիչ, միացման այս ձեռնարկին ընթացքին, Ծ. հայրը նկատեց, որ այս մարդիկը կերթային այն ուղղությամբ, ուր զիրենք կառաջնորդեին իրենց եկեղեցականները և վարդապետները, որոնք, ինչպես ըսի, իրենց հավատքի տեսուչներն են, և թե մյուս կողմե բավական կապված էին սուրբ մայր հռոմեական եկեղեցիին, որու մասին լավագույն կարծիք ունեին։ Բոլորն ալ, բարձրաստիճան եկեղեցական, վարդապետ, կրոնավոր, աշխարհական, մեծ ու պզտիկ, կընդունեին, որ հռոմեական սուրբ եկեղեցին դեպի փրկություն և հավիտենական կյանք կտաներ անոնք, որ իր զավակները և հպատակները կդավանեին հավատքին։ Միշտ հետզհետե ավելի լավ հասկնալով, որ եթե հաջողեր բարձրաստիճան եկեղեցականները սրբազան պապին ենթարկել ամբողջ իրենց եկեղեցին նվաճված պիտի ըլլար, անոնց վրա կեդրոնացուց իր քարոզչությունը, վիճաբանությունը և համոզելու ջանքը։ Նշմարած ըլլալով, որ բարձրաստիճան եկեղեցականները և վարդապետները կընդունեին Սուրբ գիրքը և զայն միայն նկատի ունեին, բայց վարդապետական ուսուցման մեջ կհետևեին վերիվերո ձևով, աչքերնին փակ՝ այն գաղափարներուն, որոնց մեջ կրթված էին, բայց չէր թվեր թե խաթարած էին հիշյալ Գրոց բնագիրը, որոշեց իր քարոզչությունը ուղղել դեպի լավագույն մեկնությունը և լավագույն հասկացողությունը Ս. գրոց, ցույց տալու համար անոնց, թե շատ գեշ կմեկնեին զանոնք։ Ջանաց հասկցնել, որ եթե հաջողեին լուսաբանել կարգ մը հիմնական կետեր, ատով իսկ պիտի բացահայտեին բոլոր մյուս սխալները, որոնք, դատելով իր տեսածեն և փորձածեն, բավական բազմաթիվ էին։

Նկատի ունենալով այն, որ ամենեն ավելի կպակսեր այս մարդոց, խնդրեց և դյուրավ ստացավ պատրիարքեն, եպիսկոպոսներեն և վարդապետներեն, որ հավաքույթներ կազմակերպվին։ Երբեմն կհավաքվեին Ջուղայի մեջ, որ լեցուն էր մեծ և հարուստ վաճառականներով, երբեմն քարվանսերայներուն մեջ, ուր կմատուցանեին իրենց պատարագները և կկատարեին իրենց աղոթքները, երբեմն նույնիսկ մեր վանքին մեջ։ Երբ հավաքված էինք կվիճեինք գլխավոր կետերուն վրա, ուր Ծ. հայրը դիտած էր, որ հայ եկեղեցին սխալի մեջ էր։

Բայց չեմ կրնար ամեն ինչ ըսել այստեղ, պիտի պատմեմ միայն ամենեն կարևորը, այն որ ամենեն ավելի դժվարություն պատճառեց Հոր, այսինքն որ հարցուց Դավիթ պատրիարքին, թե ինքզինքը կհամարե՞ր ենթակա նորին սրբության և ան պատասխանեց, թե ինքզինքը չէր նկատեր անոր ենթակա, այլ միայն եղբայր, ինչպես էին մյուս պատրիարքները, հաջորդներ սուրբ առաքյալներուն։

Ծ. հայրը հարցուց այն ատեն պատրիարքին, եպիսկոպոսներուն և վարդապետներուն, թե ինչպե՞ս կհասկնային կաթողիկե և առաքելական սուրբ եկեղեցիին միությունը։ Պատասխանեցին, թե սուրբ եկեղեցին միակն էր և մեկ և այսպես կդավանեին հավատամքին մեջ, զոր կերգեին պատարագի ատեն։

Այն ատեն հարցուց դարձյալ Ծ. հայրը, եթե սուրբ և առաքելական եկեղեցին մեկ է, ինչպե՞ս կրնա բաժանվիլ տասներկու պատրիարքություններու տասներկու պետերուն միջև։ Պատասխանեցին, թե բավական է, որ իրարու եղբայր զգան ինքզինքնին և իրենց գլուխ ունենան Աստված և մեր տեր Հիսուս Քրիստոս երկնքին մեջ և պատրիարքը ցույց տվավ պատրիարքական կնիք մը, որ կներկայացներ տասներկու առաքյալները բոլորված Աստուծո և մեր տեր Հիսուս Քրիստոսի շուրջ, ըսելով թե այսպես էր եկեղցվո միությունը։

Ծ. հայրը խոսք առավ այն ատեն այսպես. «Ըստ ձեր ըսածին և ձեր կնիքին վրա ձեր ցույց տվածին, սուրբ եկեղեցին մեկ պետ ունի միայն երկինքին մեջ և ոչ երկրի վրա»։ Պատասխանեցին թե բավական է, որ

[256] Ձեռ. Վարտաբետըչ։

երկինքը ըլլա մեր տեր Հիսուս Քրիստոսը և երկրի վրա սուրբ առաքյալներուն հաջորդող պատրիարքները։ Հռոմեական սուրբ եկեղեցիին քրիստոնյաները լավ կառավարված են, քանի որ իբր պետ ունին ս. Պետրոս առաքյալի հաջորդը, հայերն ալ՝ քանի որ իրենց պատրիարքը հաջորդն էր ս. Հուդա Թադեոսի, նույնպես հույները, վրացիները և սուրբ Թոմասի քրիստոնյաները և բոլոր մյուսները, որ կղեկավարվին սուրբ առաքյալներեն մեկուն հաջորդող պատրիարքներով և բոլորն ալ ունին պատարագի սրբազան զոհաբերությունը և սուրբ խորհուրդները, հետևաբար ուղիղ ճամփու մեջ են։

Ծ. հայրը շատ ուրախացավ տեսնելով, որ այս մեծ վերքը պայթած էր և ի վիճակի էր խնամվելու. իրենց խոսեցավ այսպես. «Ձեր և մեր միջև մեծ տարբերություն մը կա Սուրբ գրոց ճշմարտության մեկնության, ինչպես և կաթոլիկ և առաքելական սուրբ եկեղցվո միության ըմբռնումին վերաբերմամբ, որովհետև այդ միությունը կհասկնաք ինչպես կըսեք, և այնպես ինչպես կխորհրդանշե ձեր կնիքը, մինչդեռ մեզի համար կաթոլիկ առաքելական սուրբ եկեղցվո միությունը կկայանա Ս. գրոց ճիշտ հասկացողության և սուրբ առաքյալներուն ավանդության մեջ, այսինքն համաձայն ս. Պողոսի և սուրբ ավետարաններուն կաթոլիկ և առաքելական ս. եկեղեցին մեկ է քրիստոնյա հավատքին մեջ, մեկ է միակ մկրտության մը մեջ, միակ պետով մը՝ աստված և մեր տեր Հիսուս Քրիստոս երկինքին մեջ,—և այստեղ համաձայն ենք ձեզի հետ,— և երկրի վրա պապը, հռոմեական քահանայապետ և ասիկա դուք չեք ընդունիր, այս մասին համաձայն չեք ոչ մեզի հետ, ոչ ալ Ս. գրոց ճշմարտության հետ։ Եվ այդտեղ է, որ սխալի մեջ եք և չեք հասկնար իշխանությունը, զոր աստված մեր տեր Հիսուս Քրիստոս տվավ սուրբ Պետրոսի և այն, որ տրվեցավ մյուս սուրբ առաքյալներուն, քանզի անոնց տվավ իշխանություն ամբողջ աշխարհի վրա, երթալ այնտեղ քարոզելու համար աստվածային հավատքը, մկրտելու հանուն հոր, որդվո և ս. հոգիին և սորվեցնելու մարդոց հնազանդիլ աստվածային օրենքին, ցույց տալով այսպես, ինչպես ըսված է սուրբ Մաթեոս ավետարանիչի վերջին գլուխին մեջ, իշխանությունները, որոնք իրենց տրված էին երկինքի մեջ և երկրի վրա, գալով սուրբ Պետրոս առաքյալին, անոր ասկե զատ տվավ իրավատեր իշխանությունը իր սուրբ եկեղեցիին վրա, զոր չտվավ մյուս առաքյալներուն, ինչ որ հստակորեն արտահայտված է ս. Մաթեոսի ավետարանին ԺԶ գլուխին մեջ, երբ կըսե թե աստված մեր տեր Հիսուս Քրիստոս իրեն խոստացավ իր վրա կառուցանել իր եկեղեցին և իրեն վստահիլ երկնային թա-

գավորության բանալիները, ինչպես նաև ս. Հովհաննու ավետարանին ԻԱ և վերջին գլուխին մեջ, ուր ըսված է, թե ս. Պետրոս է, որ պաշտոն ունի արածելու իր ոչխարները, ինչ որ ան չխոստացավ և չհրամայեց իր սուրբ առաքյալներեն ուրիշ ոչ մեկուն»։ Այսպեսով, ս. Պետրոսն էր փոխանորդը Քրիստոսի, միակը և իրավատերը, եղած էր նույնիսկ պետը սուրբ առաքյալներուն, որոնք զինքը իբր այդ կճանչնային և հետևաբար ս. Պողոս տարածած էր ս. Պետրոսի ավետարանը միաժամանակ անոր հետ, որ իրեն իսկ հայտնված էր մեր տեր Հիսուս Քրիստոսի կողմե։ Եվ Ծ. հայրը դեռ տվավ բոլոր փաստերը ի նպաստ այս ճշմարտության։

Ծ. հայրը խնդրած ըլլալով, որ նայեն հիշյալ ավետարանին մեջ, հայ վարդապետները բացին ս. Հովհաննու ավետարանը իրենց լեզվով գրված աստվածաշունչին մեջ և այնտեղ գտան ըսված ճշմարտությունը։ Այն ատեն հարցուց պատրիարքին թե ինքը, իր եպիսկոպոսները և իր եկեղեցականները մեր տեր Հիսուս Քրիստոսի ոչխարնե՞րն են և անոր հաստատական պատասխանին վրա շարունակեց. «Լավ ուրեմն, եթե այդպես է, ընդունեցեք, որ Պետրոս ձեզի արածե, ինքը կամ իր հաջորդները երկրի վրա Քրիստոսի միակ փոխանորդի այս պաշտոնին մեջ, այսինքն պապը, որու մասին դուք միշտ լսած եք և կարդացած եք, որ միշտ հաջորդած է ս. Պետրոսի և տևականապես և կաթոլիկաբար նկատված է և ընդունված է իբր փոխանորդը աստուծո և մեր տեր Հիսուս Քրիստոսի, միակ և գերագույն հովիվ, միակ պետը իր սուրբ եկեղեցիին։ Եվ եթե չընդունիք իր տված սնունդը, եթե չհնազանդիք իրեն, վստահ եղեք, որ ոչ ոչխարներն եք, ոչ մաքիները Քրիստոսի»։ Լսելե ետք ասիկա և ամեն ինչ որ Ծ. հայրը ավելցուց այս մասին հիշյալ պատրիարքը, եպիսկոպոսները և վարդապետները ըսին (այս առավել կարևոր հավաքույթին ընթացքին), թե տակավին պիտի մտածեին այս մասին։ Հաջորդ օրը հայտարարեցին, թե կուզեին պապին հնազանդիլ, բայց շատ հեռու էր ան, որու Ծ. հայրը պատասխանեց, որ մեկու մը համար որ կուզե հնազանդիլ՝ ավելի լավ է հեռու ըլլա, քան մոտ, թե ինքն ալ հեռու էր, բայց ատիկա չէր արգիլեր, որ հնազանդի պապին։ Այսպես այս կետին վրա, ինչպես շատ ուրիշներու, շարունակեց իր ջանքերը հովիվներուն և անոնց հոտերուն մոտ և այնքան պնդեց աստուծո օգնությամբ համոզելու համար այս խեղճ մարդիկը, որ վերջապես աստուծմե և մեր տեր Հիսուս Քրիստոսեն ընդունեցավ անոնց հնազանդությունը պապին հեղինակության։ Ասիկա

տեղի ունեցավ Սպահանի մեր եկեղեցիին մեջ։ Հիշյալ Դավիթ պատրիարքը, վեց եպիսկոպոսներ և հարյուրերեք քահանաներ, իրենց և իրենց ժողովուրդին և հոտին անունով երդում կատարեցին մեծ խորանին առջև աղոթագիրքի մը վրա։ Եկեղեցին և վանքը լեփ-լեցուն էին, որովհետև պատրիարքը կանչած էր ամեն ոք։ Այս մեծաշուք արարողությունը տեղի ունեցավ մեկ օրվան մեջ, շնորհիվ աստուծո և մեր տեր Հիսուս Քրիստոսի և միջնորդությամբ,—անշուշտ անօգուտ,—Ծ. հոր, որ իր եկեղեցական զարդարանքները զգեցած, առաջինը եղավ, օրինակ ըլլալու համար, հնազանդության երդում կատարելու, թեև Սիրենի եպիսկոպոսը, պատմելով եղելությունը իր Պարսկաստանի ճամփորդության նկարագրության մեջ[257], սխալ կերպով կըսե թե գեր. հ. Հիերոնիմո տա Քրուզն է, որ երդում կատարեց։ Ծ. հայրն է, որ նախագահեց այս հավաքական երդումին, նույնիսկ բախեցավ իր սեփական եղբայրներուն ընդդիմության[258], որոնք չհավատալով եղածին, զինքը կմեղադրեին, որ ժամանակ կկորսնցնե, փոխանակ մյուսներուն պես նվիրվելու հասարակության, ինքնամփոփման և հայեցողական կյանքի։

Սակայն երկուքը[259] գլխավոր եպիսկոպոսներեն Ջուղա քաղաքին, վերջերս հիմնված Սպահանի դիմացը, գետին մյուս ափին վրա քաղաք մը, ինչպես ըսած եմ, հարյուր հազար բնակիչով, ամենն ալ հայ, ուր մահմեդական չի կրնար գտնվիլ, չէին ինկած իր ուռկանին մեջ։ Ասոնց վրա է, որ Ծ. հայրը կեդրոնացուց իր բոլոր ջանքերը և ուսումնասիրությունը այսուհետև. և որովհետև լավ կճանչնար անոնց սխալները և գիտեր ղանոնք հերքել, դժվարություն չէր կրեր անոնց մոլորությունները երևան հանելու համար։ Շատ աղոթքներե և պատարագներե ետք, շատ վիճաբանություններե ետք, որոնք կրնային մինչև օրական ինը ժամ տևել, և ուր ինքը, խեղճ մեղավոր, առանձին էր բազմաթիվ եպիսկոպոս-

[257] Կովեյիա, էջ 160—161, գլուխ՝ է. «Հնազանդության մասին զոր Դավիթ պատրիարքը հայտնեց հռոմեական քահանայապետ մեր տեր Պողոս Ե-ի Սպահանի վանքին մեջ»։ Այս արարողությունը տեղի ունեցավ 12 մայիս 1607-ին Տ. Ս. Լոփեզ—Ք. Արենս, անդ, էջ 166—173, ուր հ. Տիեկո տե Սանթա Աննա կպատմե «նշանակելի հակաճառությունները, որոնք պատահեցան Պարսկաստանի հայ ժողովուրդին մեջ»։

[258] Այս միջոցին Սպահանի վանքին մեջ կային հինգ կրոնավորներ, Տիեկո տե Սանթա Աննա, որ այն ատեն վանահայր էր և Ժերոնիմո տա Քրուզ, Քրիսթովան տո Էսփիրիթո Սանթո, Պերնարտո տե Ազևետո և Անտրե տա Անունսիասան, Կովեյիա, էջ 146։

[259] Դավիթ կաթողիկոսը և Ջուղայի եպիսկոպոսը լավ հարաբերություններ չունեին։ Այս վերջինը, որ ամբողջ Հայաստանի ամենեն հին եպիսկոպոսն էր, դժգոհ մնացած էր, որ իր կարծիքը չէր առնված. Կովեյիա, էջ 164։ Տ. նաև Ս. Լոփեզ—Ք. Արենս, էջ 167։

ներու դեմ, աստված մեր տեր Հիսուս Քրիստոս իր աստվածային ողորմածությամբ կարելի դարձուց այս երկու եպիսկոպոսներուն միացումը իրենց քաղաքին հետ, որուն առաջնորդությունը կբաժնեին իրենց միջև։ Վերջապես համաձայն եղան իրար հետ, աստուծո է, որ կպատկանի ասոր փառքը։

Հինգերորդն այն է, որ սատանան ուզեց, բարձրացուց փոշիի ամպեր և հակաճառության սոսկալի փոթորիկ մը։ Այն ատեն սկսավ շրջիլ չարամիտ զրույցը, թե շահը շատ գեշ կերպով պիտի ընդուներ այս ենթարկումը, որ տեղի ունեցած էր իր բացակայության միջոցին, որովհետև ծանոթ է, որ այն ատեն կգտնվեր Թուրքիո մոտերը, արյունալի պատերազմի մը մեջ։ Որպեսզի այս զրույցը վնաս չհասցնե իր գործին, Ծ. հայրը որոշեց անմիջապես երթալ գտնել շահը, իրեն այցելելու և իր մեծ հաղթանակներուն առթիվ զինքը շնորհավորելու պատրվակին տակ եղածը իրեն իմացնելու և իր հավանությունը ստանալու համար։ Այսպես է, որ ընկերակցությամբ եղբ. Պերնարտո տե Սանթո Ակոսթինոյի[260], բավարար ուղեկիցներով և լավ թարգմանով մը, փոխադրական վայելուչ կազմածով, մեկնեցավ ուղղությամբ այն վայրին, ուր շահը կկովեր, Սպահանեն շուրջ երկու հարյուր փարսախ հեռու։ Օգտվելով պարագայեն, չվարանեցավ շեղելու ճամփան անցնելու համար այն քաղաքներեն և տեղերեն, ուր կային հայեր, հայկական եկեղեցիներ և համայնքներ։ Ամեն տեղ և մինչև ամենեն հեռավոր վայրերուն մեջ հաստատեց, որ մեծ սխալներ կային այս քրիստոնյաներուն մոտ և մանավանդ ցայտուն սխալ մը եկեղեցականներուն մոտ, ըստ որու պապերուն թիվը տասներկու էր, առաքյալներուն նման, այնպես որ չդադրեցավ քարոզելե և անվերջ վիճելե վանելու համար այս սխալը, չեմ ըսեր, որ հերետիկոսություն մըն է այդ իրենց մոտ, որովհետև բավական է իրենց ցույց տալ սուրբ գիրքերը, որ ունին և որոնք վավերական են, որպեսզի հետս կոշում ընեն, ըսելով հանդերձ, որ պապը շատ հեռու է որպեսզի կարենան անոր հնազանդիլ։ Վերջապես ծավալելով կաթոլիկ վարդապետությունը ամբողջ թագավորության մեջ, շրջելով ամենուրեք, քարոզելե ետք հնազանդությունը հանդեպ հռոմեական սուրբ եկեղեցիին և ս. պապին, իր միակ պետը և քահանայապետը, գնաց շահին մոտ ընդդիմանալու

[260] 7 դեկտեմբեր 1607 թվակիր իր նամակին մեջ հ. Տիեկո իր ընկերները կկոչե Պերնարտո տե Ազևետո և կհիշե, որ միասին ձգեցին Սպահանի վանքը 15 հունիս 1607-ին. Նույն, էջ 173։ Կովեյիա, էջ 165—166, կըսե թե վանահայր Տիեկո տե Սանթա Աննա և եղբ. Պերնարտո տե Ազևետո Սպահանեն ելած էին 27 հունիս 1607-ին։

համար այս չարամիտ զրույցին, որ նետված էր հայերու ենթարկումին դեմ, զրույց, որ անոնց պատճառած էր մեծ երկմտություն և սարսափ։

Վեցերորդը այն է, երբ Ս. Հայրը անթիվ վտանգներե անցնելե ետք հասավ շահին մոտ, որ նոր հաղթանակ մը կտոներ։ Թուրքերեն գրաված էր ամրակուռ և բազմամարդ քաղաք մը, որ լավ պաշտպանված էր երեք պարիսպներով և լավ զինված քաղաքապահ զորագունդով մը։ Այս քաղաքը կկոչվեր Շամախի[261], որ կնշանակե երկաթյա դուռ, որովհետև մայրաքաղաքն էր և անառիկ էր։ Լավ կերպով ընդունվելով այս մեծ թագավորեն, Ս. Հայրը շնորհավորեց զայն այս և նախորդ հաղթանակներուն համար և դժվար է հավատալ, թե ինչ մեծ հաճույքով ընդունեց ան այս շնորհավորությունները. միևնույն ատեն ինչպես սովորություն է այս թագավորության մեջ, Հայրը անոր նվիրեց ընծա մը, որ թեև մեծ կարևորություն չէր ներկայացներ, բայց անհուն գոհունակություն պատճառեց թագավորին։ Այն ատեն ունեցան երկար խոսակցություն մը, որ չորս ժամ տևեց և թագավորը հավանություն հայտնեց եղածին և իրեն բացատրվածին։ Հրամայեց հյուրերով զբաղելու պաշտոն ունեցողին, որ եկեղեցականին վրանը բլուրին կողին վրա տանիլ տա, որու գագաթը կգտնվեր իր և հարեմին վրանները կիներու հատուկ սարքավորումներով. այս բլուրին կողերուն վրա և ստորոտը ուրիշ վրան չկար իր մարդոց համար, որովհետև բանակը հաստատված էր շրջակայքի հողերուն և մյուս բարձունքներուն վրա, այնպես որ կթվեր գրաված ըլլալ երկիրը։ Ս. Հայրը հրաժեշտ առավ մեծ թագավորեն, անոր հրամանները գործադրվեցան և իր վրանը սարքվեցավ բլուրին կողին վրա և այնտեղ մնաց բազմաթիվ օրեր, մինչև այն պահը, որ բանակը ուրիշ տեղ գնաց։

---

[261] Ձեռ. Շամակուի-Շամախի, մայրաքաղաք Շիրվանի նահանգին։ Երբ հեղինակը կըսե, թե Շամախի կնշանակե **«երկաթյա դուռ» չփոթություն** կկատարե Տաղստանի Տերպենտ քաղաքին անվան հետ, որ թուրքերուն ազդեցությամբ ճանչցված էր «Տեմիր գափու» կամ երկաթյա դուռ անունով։ Հ. Տիակո գիտեր արդեն ատիկա, որովհետև հիշյալ 7 դեկտեմբեր 1607 թվակիր նամակին մեջ խոսելով Շիրվանի նահանգին վրա կգրե. «Գլխավոր քաղաքը, ուր գտա շահը կկոչվի Շամանեի, մյուսը Տեմիրգափի Տերպենտ, որ կնշանակե երկաթյա դուռ, Շահ Աբբաս Շամախիի պարիսպները փլցուցած էր 22 մայիս 1606-ին, բայց կառավարիչը ապաստանած էր բերդին մեջ, Կովեյիա, էջ 132։ Տիակո տե Սանթա Աննա իր 7 դեկտեմբեր 1607 թվակիր նամակին մեջ կճշտե, թե 15 հունիս 1607-ին Սպահանը ձգելե ետք ճամփորդեց 37 կամ 38 օր հասնելու համար շահին մոտ, որ բերդը գրաված էր 10 կամ 12 օր առաջ, ինչ որ գրավումը կդնե 9 կամ 13 հուլիս 1607-ի միջև։ Մյուս կողմե Կարմելյաններուն հեղինակը, հիմնվելով օգոստինյան Հ. Փոլ Սիմոնի ժամանակակից մեկ տեղեկագրին վրա, սեպտեմբեր 1607-ը կուտա իբր Շամախիի գրավման թվականը, Կարմելյանները, էջ 144։

Հաջորդ օրերուն թագավորը ձիով վար իջավ, քիչ թիվով ընկերացողներու հետ ինչպես միշտ, մինչև բլուրին ստորոտը, ուր իրեն կսպասեր իր թափորը։ Ս. Հոր վրանին մոտեն անցնելու ատեն անոր լուր ղրկեց, որ ձի հեծնե և իրեն հետ գա և եկեղեցականը և իր ընկերը փութացին իր մոտ երթալ, որովհետև մեծ թագավորը կսպասեր բլուրին մեջտեղը։ Զանոնք տարավ պատերազմական արտակարգ մեքենաներու մոտ, որոնց միջոցով հաղթած էր և գրաված էր Շամախին։ Ասոնք շարժուն աշտարակներ էին, զորս բերած էր շատ մոտ և կհասնեին մինչև պարիսպներուն բարձունքը, անոնց վրա զետեղելով հրետանիի թնդանոթներ, որոնք վեց ափաչափ շրջագիծով գունդեր կարձակեին, ինչպես որ չափեցի։ Շատ գովեց իր քաղաքագորքին շահատակությունները, հետո քաշվեցավ դեպի բանակատեղիին վրանները. իր ազնվականները և Ս. Հայրը հետևվեցան իրեն ավելի շքեղ և ավելի մեծ վրանի մը մեջ. երբ ամենն ալ նըստան գետինը փռված գեղեցիկ գորգերու վրա, ըստ իրենց սովորության և երբ ամեն ինչ հանդարտեցավ, մեծ թագավորը հարցուց եկեղեցականին թե ինչ էին իր փափագները և թե պատրաստ էր զանոնք գոհացնելու։ Հայրը այն ատեն մեծ բարեկրթությամբ և խոնարհությամբ իրեն բացատրեց այն առավելությունները, որոնք գոյություն ունեին եթե հայերը ենթարկվեին, ներկային և ապագային համար, պապին հնազանդության, ինչպես որ թագավորին սեփական շահը կպահանջեր, տրված ըլլալով բարեկամությունը, որ զինքը կկապեր Նորին սրբության և կաթոլիկ թագավորին, ինչպես նաև մյուս քրիստոնյա թագավորներուն և իշխաններուն. իրմե խնդրեց շնորհը հրովարտակով հրամայելու, թագավորական նամակի մը կամ պաշտոնական վավերաթուղթի մը միջոցով, որ իր թագավորության մեջ և իր տիրապետության տակ գտնվող բոլոր քրիստոնյա հայերը պարտավոր պիտի ըլլան բոլոր հոգևոր խնդիրներուն մեջ հնազանդելու Նորին սրբության իբր իրենց գերագույն պետը, որովհետև ասիկա շատ ավելի նախընտրելի էր իր պատվույն և հեղինակության համար, քան թե ձգելու, որ անոնք հնազանդին մասնավոր պատրիարքի մը, զոր իրենց պետը կհամարեին։ Խնդրանքը, անհաճո չեղավ թագավորին և ան հարցուց թագավորության ավագանիին, որ շրջանակաձև նստած էին, թե համաձա՞յն են, որ զիջի այս շնորհը պապին, կաթոլիկ թագավորին և եկեղեցականին, որ այդ կխնդրեր և ամենն ալ, մեկը մյուսեն ետք, պատասխանեցին, թե համաձայն են։ Եվ երբ ամենն ալ խոսեցան, թագավորը ըսավ, թե կշնորհեր։ Այն ատեն եկեղեցականը, որ իր մոտն էր, խնդրեց համբուրել իր ձեռքը այս մեծ շնորհին համար և մեծ թագավորը

ձեռքը երկարեց հոժարակամ. Ս. Հայրը համբուրեց ուրեմն իր ձեռքը և անմիջապես մտածեց հաճություն պատճառել նաև իշխանին[262], որ շրջանակին մեջ էր և շահեն արտոնություն խնդրեց անոր ևս ձեռքը համբուրելու, ինչ որ իրեն շնորհվեցավ և ժեստը շատ մեծ հաճույք պատճառեց իշխանին։ Եվ եկեղեցականը սրտին խորեն շնորհակալություն կմատուցաներ Աստուծո տեր Հիսուս Քրիստոսի, օրհնյալ ամեն բանե վեր։

Նշանակելի է, որ այդ վայրկյանեն սկսյալ մեծ թագավոր շահ Աբբաս իր շուրջը կըսեր թե հայերը չէին կրնար լավ քրիստոնյաներ ըլլալ առանց այդ հնազանդության, որովհետև ինչպես որ լավ հպատակ մը ըլլալու համար պետք է հնազանդիլ իր թագավորին, այնպես ալ լավ քրիստոնյա ըլլալու համար պետք է հնազանդիլ Քրիստոսի փոխանորդին և փոխարքային։ Խոսքը ուղղելով Ս. Հոր, ըսավ թե շատ լավ գիտեր, որ Քրիստոս կենդանի էր, որովհետև թեև մեռած խաչին վրա՝ մեռած չէր և ինքն ալ նույնիսկ եթե մեռներ իր հոգին կենդանի պիտի մնար և այսպես է, որ Քրիստոս միշտ կենդանի է։ Ուզեց գիտնալ թե քանի՞ գամով Քրիստոս խաչված էր, երե՞ք թե չորս և որովհետև Ս. Հայրը պատասխանեց, որ շատ հեղինակներ կխորհեին թե չորս գամ կար, բայց ավելի ճշմարտանման կթվեր, թե երեք հատ միայն կար, շահը անմիջապես ըսավ թե ինքն ալ կհակեր երեք հատի։ Գիտեր նաև թե սուրբ Երրորդությունը կըկայանա երեք անձի, բայց մեկ աստվածային էության մեջ, բռնեց իր կրած քաֆթանին մեկ փեշը, երեք ծալ ըրավ և ըսավ. «ահա երեք ծալք», հետո զանոնք հարթելով, «ահա կերպասին մեկ կտոր, նույն բանն է Աստուծո համար»։ Բայց իրեն ըսած էին, թե եկեղեցականը ուսյալ էր և շատ գիրքեր ուներ, զորս կկարդար անընդհատ, կուզեր ուրեմն որ իրեն բացատրեր այս խորհուրդը։ Ս. Հայրը ասոր պատասխանեց, թե այնքան բարձր խորհուրդ մըն է, այդ այնքան վեր մարդկային իմացականութենեն, որ կարելի չէր զայն հասկնալ առանց հավատքի լույսին և սուրբ մկրտության և թե մենք, քրիստոնյաներս, զայն կհասկնայինք որովհետև Աստված զայն հայտնած էր իր սուրբ եկեղեցիին, բայց մյուս կողմե զայն կհասկընայինք ինչպես որ կրնայինք։ Վասնզի Աստուծո մեծությունը այնքան անհուն է, իր աստվածային ստորոգելիները և խորհուրդները այնքան անպատմելի և խոր, որ կարելի չէ զանոնք հասկնալ և թե Աստված պիտի չըլլար այն ինչ որ է եթե մենք, նույնիսկ եթե հրեշտակները կարենային զայն հասկնալ։ Ահա թե ինչու ոչ ինքը, թեև կրոնավոր, կրնար պատշա-

[262] Սաֆի Միրզա։

ճորեն բացատրել այդպիսի խորհուրդ մը, ոչ թագավորը, որքան ալ խելացի ըլլա, կամ ուրիշ ոևէ մարդ նույնիսկ շատ գիտուն պիտի կարենար (ըսված էր արդեն) լավ հասկնալ ատիկա առանց քրիստոնյա հավատքին։ Բայց անով և Աստուծո օգնությամբ կարելի է ընդնշմարել զայն տարտամ կերպով և հավատալ այս անասելի խորհուրդին անսխալական ճշմարտության կենդանության ընթացքին, սպասելով զայն շատ հստակորեն տեսնելու հավիտենական կյանքի փառքին մեջ. եթե հասնինք անոր։

Բայց Ս. Հայրը վախցավ, որ շահը և իր ընկերները, որոնք ամենն ալ շատ ուշադիր էին, կրնան կարծել որ այսպեսով ինք կուզեր ծածկել դըժվարությունը այս անասանելի խորհուրդը բացատրելու այնքան, որքան թույլ կուտային մեր կոպիտ ձևերը, խորհուրդ որ ամենեն ավելի կբախե այս մահմետական աղանդին, որ կկարծե թե մենք, քրիստոնյաներս, կամ երեք Աստված ունինք, կամ կբաժնենք Աստված երեք նյութական անձի։ Այս պատճառով սկսավ ցույց տալ և բացատրել թե ինչպես մեր աստվածային հավատքը կներկայացնե այս անասանելի խորհուրդը և ինչ որ մեր սուրբ մայր հռոմեական եկեղեցին մեզի կսորվեցնե...

Առաջարկեց այն ատեն բաղդատությունները, զորս կգործածեն աստվածաբանները և իրեն թվեցավ թե ինչ որ կրնար հասկցնել շահին և շուրջիններուն, այն է թե քրիստոնեական հավատքը չէր ընդուներ աստվածներու բազմապատկումը և թե աստվածային երեք անձերը նյութական և բաժնված դեմքեր չէին, ինչպես էր իր աղանդին կարծիքը մեր սուրբ հավատքին մասին, այլ թե հարցը բոլորովին տարբեր էր, թե խնդիրը կվերաբերեր երևակայական, անհասկանալի բանի մը և թե պետք չէր հաշվի առնել ինչ որ մենք քրիստոնյաներս կմտածենք այս անհասկանալի խորհուրդին մասին։

Այս ամենը ըսված էր առանց նրբության, գեշ եզրակացված և ավելի գեշ հասկցված ոչ այնքան շահեն, որքան իր արքունիքեն։ Բայց, ըլլա անոր համար, որ շատ հաստատ չէր իր հավատքին մեջ (որովհետև կինները զորս կգործածե ամենեն ավելի և որոնք ամենեն բազմաթիվներն են իր հարեմներուն մեջ, հերձվածող վրացի քրիստոնյաներ են, Վրաստանի թագավորութենեն եկած, ուր ծնած էր մայրը իշխանին, որ իրեն կհետևեր իբր իր ժառանգորդը և թե անոնց հետ է, որ կխոսեր ամենեն ավելի), ըլլա հետաքրքրութենեն մղված, մեծ թագավորը ըսավ դարձյալ, թե գիտեր, որ Մարիամ աշխարհ բերած էր Իսա (ըսել կուզեր մեր տեր Քրիստոս) կույս մնալով հանդերձ և ահա հասանք երկրորդ խորհուրդին

ս. Երրորդության խորհուրդեն նոք, այն է աստվածային Բանին մարդեղության: Ս. հայրը չտխրեցավ ասոր համար, այլ ընդհակառակը գոհ էր, որ շահը իրեն առիթը կուտար հերքելու ուրիշ զրպարտություն մը այս մահմետական աղանդին, որով անոր հետևորդները կկարծեն զգետներ քրիստոնյաները. կըսեն թե Աստուծո կուտանք մայր մը և Աստված կդարձնենք մարդ մը, ինչ որ իրենց կթվի այնքան արհամարհելի, որ մեզի կկոչեն քաֆր, ինչ որ կնշանակե անաստված և անօրեն մարդ: Բայց Հոր համար կարելի չեղավ հերքել անհավատներուն այս գայթակղալի արտահայտությունները և պարզել ճշմարտությունը Աստուծո մարդեղության այս ուրիշ անսասնելի խորհուրդին մասին, որովհետև արգելք եղավ այն իրողությունը, թե ուշ էր և ունկնդիրները հոգնած էին, ասկե զատ շահը չշարունակեց իր փաստարկությունը, այն ատեն Ս. հայրը խոսքը ուղղելով շահին անոր ներշնչելու համար բարեացակամ տրամադրություն հօգուտ այն ունկնդրության զոր կհուսար ստանալ ըսավ. «Ով թագավոր, այլևս քեզի կպակսի միայն քրիստոնյա հավատքով հարիլ աստվածային խորհուրդներուն և հավատալ անոնց, որովհետև ինչ որ կվերաբերի անոնց պատմության ծանոթ է քեզի»: Եվ շահը պատասխանեց. «Գիտե՞ք թե քրիստոնյա չեմ սրտիս խորը»: Որու Ս. հայրը պատասխանեց. «Գիտցիր, ով մեծազոր թագավոր, թե քրիստոնեական հավատքը չընդունիր սուտը, ան պետք է ծնի սրտին մեջ և խոստովանվի բերնով, որով ուրեմն եթե հավատքը հոգիիդ մեջ պետք է ձգես որ քարոզվի ան և ինքզինքդ հայտարարես քրիստոնյա»: Այն ատեն թագավորը պատասխանեց իր սեփական լեզվին հետևյալ բառերով «անտեք-ու անտեք», ինչ որ կնշանակե «քիչ առ քիչ»: Եվ որովհետև ուշ էր կանգ առավ այդտեղ և բերել տվավ ճաշը, լռեց և զվարճացավ, ինչպես իր մարդիկը, ուրիշ խոսակցություններով: Եվ իր սրտին խորը Ս. հայրը որոշեց փնտրել ուրիշ բարեպատեհ ժամ մը վերադառնալու համար նույն նյութին:

Բերին ուրեմն ընթրիքը և սպասարկեցին շուրջանակի շահին և իր արքունականներուն, որոնք գետին նստած էին գեղեցիկ գորգերու վրա և անոնց վրա փռված էին գույնզգույն սփռոցներ: Եվ նախ եկավ, շահին արքայական անձին համար, ոսկեղեն մեծ անոթ մը նման մեր աղբյուրներուն կամ ջրամաններուն, բայց բաժանումներով, որոնք կիջնեին մեջտեղի բուրգեն դեպի անոթի եզրերները և այս բաժանումներուն մեջ կային զանազան տեսակ կերակուրներ և տարբեր գույներով բրինձ, փիրինջ ինչպես կըսեն ըստ իրենց ունելու եղանակին: Մեկ կարող միայն ծունգի եկավ սփռոցին վրա և բանեց ոչխարի գիստ մը, շատ լավ պատ-

րաստված, բայց ամբողջ, այնպես որ մեկ ձեռքով կրնար բռնել զայն ոսկորին ծայրեն և շերտել կտրել մյուս ձեռքով, ինչ որ սկսավ ընել մեծ փափկությամբ և շատ ճարտարությամբ, ձգելով որ կտրվածը իյնա բաժանումներեն մեկուն մեջ, և շահը սկսավ ուտել: Հետո ուտելիք բերին ամենուն և յուրաքանչյուրին համար մասնավորապես, նաև Ս. հոր ընկերոջ՝ ինչպես մեծ անձնավորություններեն յուրաքանչյուրին, բայց ոչ իրեն համար և շահը ըսավ իրեն. «Գալով ձեզի, պիտի ուտեք այստեղ ինծի հետ և իմ պնակեն»: Եկեղեցականը փորձեց ներողություն խնդրել ամենայն հլությամբ, քաղաքավարությամբ և խոնարհությամբ, ըսելով թե նորին վեհափառությունը թագավոր մըն էր, մեկը երկրագունդի ամենեն մեծ միապետներեն, մինչդեռ ինքը պարզ եկեղեցական մըն էր և թե բավարար շնորհ մըն էր արդեն, որ ըրած էր իրեն առաջին տեղը տալով, իր քովը, ուր պիտի ուտեր ինչպես մեկը մեծ իշխաններեն, որ կշրջապատեին զինքը: Բայց շահը պատասխանեց. «Ես եմ որ արժանի չեմ ուտելու ձեզի հետ նույն պնակեն, որովհետև դուք Աստուծո սուրբ եկեղեցական մըն եք, զգաստ եք և հարաբերություն չունիք կիներու հետ, մաքուր եք և անբիծ: Եվ գիտեմ, որ թագավորությանս մեջ ձեր ամբողջ ճամփորդություններուն ընթացքին ոչ մեկ անպատեհ բան չեք ըրած, ոչ մեկ ատեն ձեր ձայնը չեք բարձրացուցած և չեք ձգած, որ նույնիսկ մեկ հասկ առնվի ձեր ձիերուն համար: Մինչդեռ ես պիղծ մեղավոր մըն եմ, կիներու հետ կհարաբերիմ, ձեզմե բարեկամական ապացույց մըն է, որ պիտի ստանամ եթե ուտեք իմ պնակես: Հայրը դարձյալ պատասխանեց ըսելով, թե իրապես իբր ամենակարող Աստուծո եկեղեցական արժանի էր ամեն շնորհի, բայց միևնույն ատեն մեղավոր, թեև սրբություն քարոզող, արժանի չէր այս պատիվին: Բայց շահը պնդեց ըսելով. «Կերեք, որովհետև մաքուր և զգաստ մարդ եք, իսկ ես չեմ»: Հայրը հնազանդեցավ ուրեմն և երկարեց ձեռքը քաղաքավարության համար դեպի մյուս բաժանումներեն մեկուն և ոչ թե անոր որմե կուտեր շահը. այն ատեն մեծ թագավորը պնդեց. «Այդպես չէ, մենք երկուսս պետք է ուտենք նույն բաժանումեն»: Զայն չնեղացնելու համար հայրը առավ մեկ կամ երկու կտոր իր ձեռքին մեջ (ինչպես սովորություն է թագավորին և իր մարդոց մոտ), կերավ զանոնք և ըսավ, որ կշտացած էր: Շահը գոհացավ ասով, որովհետև (ինչպես հասկցավ Ս. հայրը) ուզած էր միայն զայն պատվել և ցույց տալ նույն ատեն թե քրիստոնյաներու հետ ուտել զզվանք չէր պատճառեր իրեն, երբ զգաստ եկեղեցականներ էին, բան մը, որ չէր կատարած Պարսկաստանի ոչ մեկ թագավոր, պարսիկներու կայսրության սկիզբեն ի վեր,

շատ առաջ Աստուծո և մեր տեր Հիսուս Քրիստոսի գալուստեն՝ փրկելու համար աշխարհը։ Եթե ուզեցի պատմել այս ամենը մանրամասնորեն շատ անկեղծությամբ, ցույց տալու համար, թե ինչպե՞ս մեր տեր Հիսուս Քրիստոսը, վեհապետ և հավիտենական քահանա, գիտե այս աշխարհի մեծերուն ճանչցնել իր կրոնավորներուն արժանավորությունը նույնպես հանձնարարելու համար մեր եկեղեցականներուն զգաստության և անաբատ կյանքի մը օրինակը, որովհետև այս թագավորը և իրենները մեծապես կգնահատեին այս հատկությունները, որոնցմով Աստված, իր անհուն բարության մեջ, ուզեց լիացնել այս մեծ մեղավորը, մանավանդ երբ ան մնաց այս թագավորին և իր ազանգին պատկանողներուն ընկերության մեջ։

Յոթներորդը եղավ այս երջանկավետ եղելությենեն ետք, այն է հաստատումը շահին կողմե հնազանդության, որ խոստացված էր հայոց պատրիարք Դավիթի, եպիսկոպոսներուն, եկեղեցականներուն և հայ եկեղեցվո ծուխերուն կողմե հանդեպ հռոմեական քահանայապետին, պետ և եկեղեցապետ տիեզերական սուրբ եկեղեցիին և երբ արտոնեց ամբողջ Հայաստանին, մեծը և փոքրը, հնազանդիլ Նորին սրբության իբր միակ փոխանորդը Աստուծո և մեր և տեր Հիսուս Քրիստոսի երկրի վրա։ Մեր համառոտակի պատմածեն ետք, Ծ. հայրը ավելի լավ ապահովելու համար իր հաջողությունը մնաց բանակին մեջ, շահին մոտ, առանց ընդունելու անկե ոևէ վճարում, այլ միայն շնորհներ, որպեսզի չկարենան կասկածիլ իրմե։ Ամեն տեղ ուր կերթար բանակը, կերթար նաև եկեղեցականը, ինչպես եթե հպատակներեն մեկը եղած ըլլար շահին, որ շատ գուրգուրանք ցույց կուտար իրեն։ Այդ կողմերը շատ հայեր կային, որովհետև ոմանք այնտեղ ապաստանած էին, ուրիշներ, հարուստներ, կուզեին հետևիլ շահին իրեն հաճելի ըլլալու համար, ուրիշներ առևտուր կընեին, կծառայեին բանակին մեջ կամ կպարենավորեին զայն։ Ծ. հայրը կուսուցաներ ամենուն քրիստոնեության աստվածային հավատքը, կքաջալերեր զանոնք այդ ուղղությամբ, կհորդորեր համբերություն և հույս Աստուծո, հնազանդություն պապին և անոնք մեծապես կզոտեպնդվեին եկեղեցականին խոսքով, ուսուցմամբ և քաջալերությամբ։ Կջանար հռոմեական սուրբ մայր եկեղեցիին ծոցը բերել հավատուրացները և հերձվածող քրիստոնյա վրացիները, որոնց կհանդիպեր։ Կքարոզեր մահմետականներուն, կվիճեր անոնց հետ, կպատասխաներ անոնց և արքունիքը գտնվող հերետիկոսներուն գրպարտություններուն, հանդգնորեն և քրիստոնեական մեծ գիտությամբ։ Ամենքը՝ Աստուծո և մեր տեր Հիսուս Քրիստոսի առա-

վել փառքին համար։ Բանակումներուն շուրջ Ծ. հայրը կկանգներ իր վրանը, մահմետականներու վրաններեն հեռու և այնտեղ ուր շատ հայ կար։ Ամեն կիրակի և սուրբերու տոներուն ինքը և իր ընկերները պատարագ մատուցին (հետերնին տարած էին ինչ որ պետք էր շատ պատշաճ կողովի մը մեջ), մեկզմեկու խոստովանելե ետք։ Հայերը կընդունվեին այս պատարագներուն և որովհետև երկու պատարագ տեղի կունենար, փակ վրաններու տակ, միայն մեկ ընտանիքի անդամները չէին, որ կօգտվեին այս մեծ մխիթարութենեն, այլ շատ ուրիշներ. պետք է գիտել նաև, որ երբ գինին կպակսեր, շահին սեղանեն կխնդրեին և միշտ կտրվեր իրեն մեծ բարեհաճությամբ։ Հայրը շատ սիրված էր և ոչ մեկ կիրակի կամ սուրբի տոնի օր չթերացավ պատարագելե ամեն տեղ ուր գնաց, ճամփորդեց, քալեց և քարոզեց, ինչ որ կներկայացնե գոնե հինգ հարյուր փարասախ այն պահեն սկսյալ, ուր դուրս եկավ վանքեն և մինչև այնտեղ վերադառնալը։ Եվ բոլոր այս պատարագներուն և խոնարհ աղոթքներուն մեջ կխնդրեր Աստուծմե բոլոր այս մարդոց դարձը հավատքի և թե օր մը մատուցվի բոլոր այս հողերուն մեջ աստվածային զոհաբերությունը, հռչակվի իր պաշտամունքը և գովքը։ Թագավորության և բանակին մեծերը և փոքրերը հարգանքով կթույլատրեին իրեն, որ պատարագ մատուցանե, ինչ որ գիտել պետք է ցույց տալու համար, որ ամբողջ աշխարհի մեջ կարելի է ազատորեն գովել Աստուծո և մեր տեր Հիսուս Քրիստոսի փառքը և թե ոչ ոք կրնա արգիլել ատիկա կամ թերանալ հարգանքի մեջ. կերպով մը այսպես կտեսնվեր, որ կկատարվի ինչ որ ըսած էր ս. Պողոս թե ի լուր Հիսուսի սուրբ անվան պիտի չգտնվի ծունկ մը երկնքի մեջ և երկրի վրա կամ դժոխքի մեջ, որ չչոքի, որովհետև Աստված, մեր տեր Հիսուս Քրիստոս պաշտված էր և իր զոհաբերությունը մատուցված այնքան անդորրության մեջ, որքան Հռոմի մեջ։ Գալով Ծ. հոր հարաբերություններուն շահին հետ, ան միշտ կերթար անոր մոտ անմիջապես, որ գյուղի մը կամ իր բանակատեղիին մեջ շահը պատրաստել կուտար գիշերային հավաքույթ մը ինչպես սովորություն էր իր արքունիքին մեջ։ Այս հավաքույթներուն մեջ (զոր իրենք կանվանեն թամաշա), եկեղեցականը առաջին տեղին իրավունքը ուներ իր քովը, և շահը իրեն հետ կբաժներ և իր ձեռքով իրեն կուտար իր առջև դրված պտուղները, որովհետև պտուղ կպատարկեն այս թամաշաներուն մեջ, նաև կխմեն և միշտ կըլլան պար և երաժշտություն. ատիկա կրնա տևել իրիկնամուտեն մինչև արշալույս։ Եվ այնտեղ է, որ շահը կընդուներ իրեն ղրկված դեսպանները և կզբաղի պետության գործերով, ավելի ժամանակ հատկաց-

նելով, ավելի ուշադրությամբ և արդյունավորությամբ, քան ուրիշ ոևէ տեղ։ Այնտեղ է նաև, որ եկեղեցականը կգտներ լավագույն առիթները շահին հայտնելու ամեն ինչ, որու մասին կուզեր խոսիլ և ստանալ շնորհներ։ Կարևոր է նաև գիտել, որովհետև կարժե, որ երբ հասներ կես գիշերը և Ծ. Հայրը կըսեր թե այլևս չէր ուզեր ոչ ուտել, ոչ խմել, քանի որ ծոմ պետք էր պահեր պատարագ մատուցանելու համար, ոչ ոք կպնդեր կամ զինքը անհանգիստ կըներ և հավաքույթը կշարունակվեր և ինքը կբավականանար հանդիսատես մնալով. ատով թագավորը ալ ավելի հարգեց զինքը, ավելի նույնիսկ քան բոլոր դեսպանները, որոնք եկան իր թագավորության և իր արքունիքին մեջ։ Եվ թող թույլ տրվի ինծի ըսել ատոր պատճառը, ոչ միայն փառքի համար, որովհետև Ծ. Հայրը գիտե թե ինք մեծ մեղավոր մըն է և թե ամբողջ փառքը կերթա Աստուծո մեր տեր Հիսուս Քրիստոսի որ այսպես կհրամայեր ավետարանական սուրբ վարդապետության մեծ բարիքին համար, զոր Ծ. Հայրը կդավաներ և կքարոզեր, ամբողջ այս հարգանքը, որ կընծայվեր Ծ. Հոր կուգար այն բանեն, որ թագավորը նշմարած էր, թե զգաստ և անկեղծ էր ան, թե ամեն տեղ, ուր որ գնաց և խոսեցավ երբեք նվազագույն հակումը ցույց չտվավ կիներուն և երիտասարդ մանչերուն հանդեպ, որ մոլություն մըն է, ուր անխորհրդաբար կփութան իյնալ այս ազանդին պատկանողները և հազվադեպ է վարակված չըլլալ անկե։ Ավելի զմայլանքով կտեսնեն այն մեկը, որ զերծ է ատկե քան թե եթե ան մեռյալի մը հարություն տված ըլլա։ Պետք է ըսել ասիկա նաև անոր համար, որ անոնք որոնք ավետարանական աշխատանքի և այս տեսակ առաքելության մը կձեռնարկեն պետք է ոչ միայն աչալուրջ ըլլան իրենց անձին և խղճմտանքին անբծության և զգաստության, այլ և բարի օրինակ տալու և լավ համբավ վայելելու։

Ութերորդը այն եղավ, որ երբ կթվեր թե ամեն ինչ կշարունակե հաջողիլ, նախանձոտ թշնամին, կարծես զայրացած այս հաջողութենեն, սկսավ շարժիլ (ինչպես կըսեն) անոր վնասելու և զայն վիճելի դարձնելու համար։ Այդ միջոցին շահը իմացավ, Հալեպի վաճառականներու միջոցով, որ քրիստոնեության կայսրը[263] խաղաղություն կնքած էր Թուրքիո

263 Գերմանիո կայսրը՝ Ռուդոլֆ. Կովեյիա, էջ 167—168։ Իր 7 դեկտեմբեր 1607-ի նամակին մեջ Հ. Տիրկո, անդրադառնալով հանդերձ շահին հետ իր խոսակցության, իր մասին կըսեր «որ խաղաղություն վայելելու համար չէր պատերազմեր Թուրքին դեմ», և աղետալի հետևանքներուն հայ եկեղեցվո հնազանդության ծրագրին համար, ավելի երկար չի խոսիր այն նպաստավոր նախանշաններուն վրա, որոնք ի հայտ եկած էին շահ Աբբասի

հետ և այս մեծ թագավորը այնքան վիշտ զգաց ատկե, որ կթվեր թե չէր կրնար այլևս ավելի մեծ վիշտ ունենալ, ոչ ալ ավելի անվստահություն՝ մեր տեր կաթոլիկ թագավորին և ամբողջ քրիստոնեության հանդեպ։ Անմիջապես որ այս լուրը իրեն բերին և այն ժամուն իսկ, ուր բանակը կանգ առավ, երբ. Ծ. Հայրը ներկայացավ, շահը ձիեն իջավ և նույնը ըրին իրեն հետևող մեծերը, ինչպես նաև Ծ. Հայրը, որ մոտեցավ իրեն զինքը ողջունելու և շնորհավորական խոսքեր ըսելու համար, շահը իրեն խիստ և հանկարծական կերպով հարցուց թե գիտե՞ր որ կայսրը խաղաղություն կնքած է իր թշնամի թուրքին հետ։ Եվ որովհետև եկեղեցականը կըսեր թե տեղյակ չէ, թագավորը ըսավ թե լուրը տված էին իրեն և ճիշտ էր և թե մեղքը իրն է, որ մտած էր այս պատերազմին մեջ, որովհետև վստահություն ունեցած էր քրիստոնյաներուն վրա, որոնք (ինչպես կըսե առածը) իրեն քաշել տված էին շագանակները կրակեն, բայց թե, օգնությամբ Աստուծո երկինքին մեջ և իր թուրով երկրի վրա,—և զայն բռնեց իր աջ թևով, որովհետև գոտիեն կախված էր,—պետք պիտի չունենար քրիստոնյաներուն և պիտի հաղթեր առանձին։ Պիտի սկսեր վաթսուն փարսախ գնելով իրենց միջև։ Գալով կաթոլիկ թագավորին, ան կընանար, իր ուզածը ընանալ և խաղաղության մեջ ապրիլն էր, մինչդեռ ինքը չարքաշ կյանք կապրեր, ինքզինքը կսպաններ իրեններուն հետ, ինչպես թուրքը նույնը կըներ իրեններով։ Կսպասեին, որ իրար սպաննեն, որպեսզի քրիստոնյաները հաղթանակեն, բայց ինք ատոր ճարը պիտի գտներ։ Ծ. Հայրը կրցածը ըրավ պատասխանելու համար այս ամենուն լավագույն ձևով և ողջամիտ խոսքերով, որքան որ կրցավ գտնել, բայց շահը չուզեց ոչինչ լսել, աչքերը բարկությամբ բռնկած կռնակ դարձուց իրեն և հեծնելով ձիուն վրա շուտով հեռացավ իր մարդոց հետ, ձգելով եկեղեցականը բոլորովին շփոթահար։ Եթե ոչ ոք չխոշտանգեց զինքը (որովհետև ուշադիր էր, որ իր թագավորության մեջ ոչ մեկ վնաս չհասցնեն իր հյուրերուն), ամեն ոք հեռացավ իրմե և այլևս թագավորին չհանդիպեցավ հասնելե առաջ Թավրիզ, որ ատենոր, ըստ Ս. գրոց, պարսկական կայսրության գլխավոր քաղաքներեն մեկը եղած է։

Անգամ մը որ հասավ այս Թավրիզ քաղաքը, շահը որոշեց, կթվի, ետ առնել իր խոսքը և չեղյալ համարել ինչ որ խոստացած էր Ծ. Հոր հայերի պապին ենթարկումին մասին, իբր քահանայապետը քրիստոնյա-

հետ իր տեսակցություններուն ընթացքին և որոնք առաջնորդած էին պարսիկ վեհապետը, կերևի, հաստատելու Հայոց կաթողիկոս Դավիթի խոստացած հնազանդությունը, ինչպես որ կնկարագրե Հ. Տիրկո 6-րդ և 7-րդ կետերուն մեջ։

ներում և ամբողջ սուրբ եկեղեցիին: Մտածած պետք է ըլլա, որ այդ տեղը հարմարագույնն է այդ բանին համար, որովհետև շատ հայ կար քաղաքին մեջ և շրջակայքը: Եվ որովհետև եկեղեցականը իր կողմե կվարվեր այնպես որպես թե չէր կորսնցուցած շահին շնորհները և կչանար ցույնել թե փափագն ուներ և հոգ կտաներ իրեն հետևելու, շահը ոչ մեկ դժվարություն չկրեց առիթն ստեղծելու հրապարակավ ջնջելու համար ինչ որ հրապարակավ խոստացած էր հայոց վերաբերմամբ: Այսպես է, որ գաղափարը ունեցած ըլլալով կազմակերպել երեկոյան հավաքույթ մը կամ թամաշա մը քաղաքին այն մասին մեջ, որ ամենեն հարմարն էր (տեսակ մը կամարակապ տուն, շատ ընդարձակ, ավելի մեծ և տարածուն, քան ինչ որ մենք կճանչնանք մեր երկրին մեջ, որովհետև այս շենքերը, որ կկոչեն քարվանսարայ այս բանին համար եղած են), այնտեղ հրավիրել տվավ հայրը իր միմանտարին[264] (այն որ կզբաղի թագավորին հյուրերով) միջոցով: Մտածելով որ պիտի գտնե կարելիություն մը շահին հետ հաշտվելու, եկեղեցականը գնաց հոժարակամ: Երբ գնաց, շահը զինքը իր մոտ կանչեց նույնիսկ այնքան մոտ, որ օգտվեցավ անոր բարեացակամութենեն ձեռքը առնելու համար շահին դաշույնը և գովելու անոր գեղեցկությունը, բայց այդ շնորհը ձևակերպություն մըն էր միայն և խորքին մեջ միշտ թշնամական զգացումներ ուներ: Կանչեց ուրեմն իր պարուհիներեն մեկը, որոնք սովորություն ունին այս երեկույթներուն ներկա ըլլալու և մասնակցելու խրախճանքներուն, ամենեն գեղեցիկը և անտարակույս ամենեն պոռնիկը, բերավ զայն հոր առջև և շաղակրատելե և կատակելե ետք անոր հետ, ժամանակ տալով անոր, որ ցուցադրե իր հրապույրները, հարցուց հոր թե կուզե՞ր զայն: Հայրը անմիջապես պատասխանեց, որ եթե հավատքի բերելու և քրիստոնեաբար ու ավետարանին համաձայն ապրելու համար է, քանի որ ուրիշ բանի համար չէր եկած այս թագավորության մեջ, կընդուներ զայն հոժարակամ ինչպես անոր բոլոր ընկերուհիները, ինչ որ գոցեց բերանը շահին և իր մարդոց: Գալով պարուհիին, ան ծաղրեց զինքը և անվանեց քոսոտ, ինչ որ չէր փառք Աստուծո, այլ հարգելի և բարեհամբույր, որովհետև Աստված կշնորհե և պարգևները անոնց, որ կտարածեն իր ավետարանը: Հայրը ըսավ անոր, որ շատ բան կկորցներ մերժելով տեսնել տարբերությունը զգաստ կյանքի մը և կորստյան տանող կյանքի մը միջև, խավարին և լույսին միջև, բայց թշվառը կոնակը դարձուց արհամարհանքով և գնաց ընկերուհիներուն մոտ: Շահը այն ատեն

[264] Ձեռ. Մախմունտար:

թարգմանին հրամայեց ըսել Ծ. հոր, որ ամեն մարդ ուներ իր Աստվածը և թե ինքն իրենին հետ պիտի գիտնար հարմարիլ, հետո մահվան սպառնալիք ընելով թարգմանին ըսավ, որ կտոր կտոր կտրել պիտի տա իր մարմինը, եթե բառ մը ծածկե կամ փոխե եկեղեցականին պատասխանին (ինչ որ այս վերջինը հասկցավ կատարելապես), իսկ իր ընկերը, որ ավելի լավ գիտեր լեզուն՝ տժգունեցավ: Ծ. հայրը պատասխանեց իրեն հոգվույն ամբողջ զորությամբը, զոր Աստված շնորհեց թե ամբողջ տիեզերքի մեջ մեկ ճշմարիտ Աստված միայն կա անոնց համար, որ կճանչնան զայն շնորհիվ աստվածային հավատքին և նույնպես անոնց համար ալ, որ չունենալով այդ հավատքը չեն կրնար ճանչնալ զայն: Բայց շահը (որ միմիայն կմտածեր ետ առնել խոստումը, որ տված էր պապին հայոց հնազանդության առնչությամբ և այսպեսով կրցածին չափ վրեժ առնել կայսեր և Թուրքերուն միջև կայացած այս խաղաղութենեն կամ զինադուլեն, անջատվելով քրիստոնյաներեն կամ անոնք երես դարձնելու ձև առնելով) առանց այս կետին վրա կանգ առնելու անմիջապես թարգմանին միջոցով եկեղեցականին ըսել տվավ, թե ամեն մարդ ուներ իր օրենքը, թող ինք իրենինին կապված մնա և հարմարի անոր հետ. եկեղեցականը պատասխանեց, թե փրկություն ապահովող բազմաթիվ օրենքներ չկան, այլ մեկ քրիստոնեական օրենք, ինչպես որ մեկ Աստված միայն կա, մեկ աստվածային օրենք, մեկ հավատք և մեկ մկրտություն, մյուս օրենքները ըլլալով աղանդներ, որ կորստյան կառաջնորդեն (և կոչ ընելով Աստուծո և մեր տեր Հիսուս Քրիստոսի օգնության և ողորմածության, պատրաստվեցավ պարանոցը երկարելու մահմեդական թուրքին, սիրտը ցնծությամբ լեցուն՝ տիրոջը համար կյանքը տալու մտածումով, երբ ան որ Աստված էր, տված էր իր կյանքը իր խոնարհ ծառային համար): Բայց շահը այս բառերով իր խոսքը ուղղեց թագավորության մեծերուն, որոնք կշրջապատեին զինքը. «Այս եկեղեցականները պատիվ կհամարեն մեռնիլ այս դատին համար: Կուզեն, որ սպաննեմ զիրենք, բայց իմ հյուրերս են, ինծի վստահված են ճամփորդելու համար թագավորությանս մեջ, իմ պաշտպանությանս և իմ թիկունքիս տակ, թույլ պիտի չտամ որ ոչ մեկ չարիքի ենթակա ըլլան: Այն ատեն մեծերեն մեկը դուրս եկավ շրջանակեն և, կատաղած, այսպես խոսեցավ հոր. «Շատ անբարտավան եք, դուք որ կուգաք այստեղ շահին առջև ըսելու, թե Աստված ծնած է մորմե մը, թե կին մը ծնունդ տված է Աստուծո և թե Իսայի (այսինքն Քրիստոսի) օրենքը ճշմարիտ է (և շահը ուրախ էր, որ այս իշխանը նախաձեռնությունը առած էր ըսելու ասիկա, որովհետև այսպեսով չէին կրնար զինքը

մեղադրել որ վնաս կխորացնէ)»։ Բայց Հայրը վիրավորվեցավ տեսնելով, որ անբարտավանություն կկոչեին իր պաշտպանությունը աստվածային օրենքին ճշմարտության և պատասխանեց իշխանին. «Ես չեմ անբարտավան, այլ դուք մանավանդ, որովհետև երբ երկուքնիս կխոսինք իմ դավանած հավատքիս մասին, դուք կմիջամտեք անոր՝ ձեր թագավորին և իմ միջև, որ իր հյուրն եմ և որու հետ կուզե խոսիլ օրենքի մասին։ Եվ եթե կկարծեք, որ ինչ որ կպարզեմ ճշմարտությունը չէ, այստեղ շահին թագավորության մեջ եմ և ձեր ամենուն մեջտեղը, թող շահը (և ցույց տալով թագավորը) ժողովե իր թագավորության բոլոր սատրապները, թող լսեն ինծի, վիճին հետս և հերքումներ կատարեն իմ քրիստոնեական հավատքիս մասին, —թե ինչպես Աստված հավիտենական է և ծնած է մորմե մը և ամեն ինչ որ կխրտչեցնե և կխռովե ձեր իմացականությունը։ Եվ եթե ես, մինակս, չհաջողիմ ճշմարտությունը ապացուցանել, ահավասիկ գլուխս, պիտի տամ զայն հավիտենական ճշմարտության համար, բայց եթե ապացուցանեմ ձեզի, թե ուրիշ ճշմարտություն չկա և իրավ ալ չկա, արդար միայն կրնա ըլլալ, որ դուք, ձեր կողմե, հայտարարեք, որ համոզված եք»։ Այն ատեն, չսպասելով ուրիշ պատասխաններու, շահը անմիջապես դուրս ելավ սրահեն, ուր տեղի կունենար երեկույթը. և մեծերը հետևեցան իրեն, ցուցականորեն, արհամարանքով, եկեղեցականը իրենց ետին, բայց ան հետևեցավ թագավորին, ցույց տալու համար, որ կրնկերանար իրեն մինչև որ քաշվի իր տեղը։ Այն ատեն միայն գնաց այն տունը, ուր ապաստան գտած էր այս քաղաքին մեջ և փառք տվավ Աստուծո մեր տեր Հիսուս Քրիստոսի, որ իրեն նեցուկ եղած էր այսքան մեծ թագավորի մը առջև և այնքան մեծ հարցի մը մեջ որքան էր քրիստոնեական հավատքին պաշտպանությունը։

Իններորդը եղավ այն ատեն, երբ պատերազմը դադրած էր այդ տարվան համար։ Արդարև, ձմեռնամուտ էր և ահագին ձյուն կուգա այդ շրջաններուն մեջ, այդ պատճառով կանգ առած էին, հաջորդ ամռան վերսկսելու համար կռիվներուն։ Շահը ուրեմն ղրկեց իր բանակը և որոշեց երթալ իր քառասուն հազար ձիավորներով տանելու իր հաղթանակները կայսերական Սպահան քաղքին մեջ, որու շատ կապված էր, ուր կային իր արքունիքը, իր հարեմը,—շատ գեղեցիկ տուն մը և մեծ մրգաստաններ իր կիներուն համար,— և պալատը, ուր կբնակի խաղաղության ատեն։ Այսպես եղավ և Ծ. հայրը ինքն ալ գնաց Սպահան[265], որ Թավրիզեն եր-

[265] Հ. Տիեկո Սպահանի վանքը վերադարձավ 4 հոկտեմբեր 1607-ին գրեթե չորս ամսվան շրջապտույտե մը ետք. Ս. Լափեզ—Ք. Ալոնսո, էջ 181։

կու հարյուր փարսախ հեռու է։ Երբ մտավ իր վանքը, փառք տվավ Աստուծո բոլոր շնորհներուն համար, որ ընծայած էր իրեն, երբ դուրսն էր և պաշտպանած ըլլալուն համար զինքը վտանգներեն։ Կարելի կըներ պահելու համար հայերը պապին հնազանդության մեջ։ Իսկ շահը, բան մը չեղածի պես, զինքը կհրավիրեր հաղթանակի հանդեսներուն և թամաշաներուն և կշարունակեր իրեն տալ առաջին տեղը, բայց մեր աստվածային հավատքի հարցերուն մոտենալու ձև չէր առներ։ Բայց Ծ. հայրը հասկցավ, որ պետք էր հետամուտ ըլլալ հայերուն մոտ (անթիվ էին ապաստանած այս քաղաքին շրջականերուն մեջ, առանց խոսելու նոր հիմնված Ջուղա քաղաքը գտնվողներուն մասին ուր, ինչպես ըսի, հարյուր հազարեն ավելի են), զանոնք բերելու համար պապին հնազանդության և սրբագրելու համար անոնց տգիտությունները կամ ավելի ճիշտ՝ անոնց սխալները և որոշեց երթալ և Ն. սրբության տեղեկացնել ինչ որ կատարված էր և անոր խոսիլ բոլոր այն բաներուն մասին, զորս պետք էր ընել հասնելու համար հայ եկեղեցվո այնքան բաղձալի հնազանդության սուրբ մայր հռոմեական եկեղեցիին և ինքն իսկ երթալ այնտեղ։ Բայց այս որոշումը ի գործ դնելե առաջ Կոայեն եկած նամակ մը իրեն տեղեկացուց, որ Հնդկաստանի միաբանության վերջին եպիսկոպոսական ժողովին մեջ ուրիշ վանահայր մը ընտրված էր և ինք կկանչվեր եկեղեցապետ արքեպիսկոպոսին և միաբանության եկեղեցականներուն կողմե զբաղվելու համար Կոայի Սանթա Մոնիքա վանքին հիմնարկությամբ, Ս. Օգոստինոսի սուրբ կարգին կրոնավորուհիներուն վանքը, որով նախապես հետաքրքրված էր եկեղեցապետ արքեպիսկոպոսը։ Տոն Փետրո Քութինիո, որ այն ատեն հրամանատարն էր Օրմուզի համբավավոր ամրոցին, լսելով ասիկա Ծ. հոր ղրկեց երեք հարյուր փարտաոյի գումար մը, որ պետք էր բավեր Սպահանեն Օրմուզ ճամփորդության։ Դրամը իրեն հանձնվեցավ վաճառականի մը կողմե, որ ապրանքով եկած էր Օրմուզեն։ Ծ. հայրը մտածեց, թե ասիկա չէր փոխեր իր գլխավոր նպատակը, որովհետև ամեն պարագայի մեջ պետք էր վերադառնար Հնդկաստան և որովհետև տեղեկացուցած էր արքեպիսկոպոսին և եկեղեցականներուն, թե ծրագիր ունի Հռոմ երթալու, չնեղվեցավ որ իրեն կուտային ուրիշ զբաղում մը, որմե միշտ կրնար հրաժարիլ իրականացնելու համար այն գործը, զոր կհետապնդեր։

Բայց մտածելով, որ մեկնումը պիտի զրկեր Սպահանի վանքը իր պահպանման համար անհրաժեշտ հասույթներեն, եթե առներ դրամը, որուն պետք ուներ Սպահանեն Օրմուզ երկու հարյուր փարսախի ճամ-

փորդությունը կատարելու համար, Ծ. Հայրը միջոցը գտավ միանալու վաճառականներու առաջին կարավանին, որ կանցներ (այն ատեն միշտ կարավաններ կային, որ այս ճամփորդությունը կկատարեին), համաձայնեցավ Պանիան վաճառականի մը հետ որ իրեն փոխ պիտի տար ճամփորդության ծախքը, որովհետև ինքն ալ իր գործերուն համար այդ ամրոցը երթալով՝ դրամ կառներ իրեն հետ։ Շատ բարեկամությամբ և մեծ վստահությամբ Պանիանը իրեն փոխ տվավ ինչ որ պետք էր և ավելին ալ առաջարկեց։ Այսպեսով Ծ. Հայրը կրցավ վանքին ձգել երեք հարյուր փարտաոն, զոր Օրմուզի հրամանատարը իրեն ղրկած էր և ասկե զատ խոստացավ որ Օրմուզեն պիտի ղրկեր ինչ որ կրնար։ Որով հրաժեշտ առավ վանքին հայրերեն, իր ծախքով հետը տանելով վեց հավատուրացներ, որ այնտեղ էին։ Դավիթ պատրիարքը ձիով եկավ իրեն ընկերանալու մինչև կայանը, բավական մոտ, ուր կարավանը իր առաջին կայքը կհաստատե քաղաքեն դուրս գալե ետք։ Վերջապես գրկախառնվելով և տալով խաղաղության համբույրը, որ իրենց սովորությունն է սուրբ առաքյալներու ժամանակեն իվեր, պատրիարքը ըսավ Ծ. Հոր, որ պիտի սպասեր իր վերադարձին և կհուսար, որ Աստված մեր տեր Հիսուս Քրիստոս պիտի պաշտպաներ զինքը։

Ծ. Հայրը կատարեց ուրեմն ճամփորդությունը, միշտ կարավանին հետ, որ շատ ապահով է և երեսունհինգ օրվան պետք ունեցավ Սպահանեն Օրմուզ երթալու համար։ Որովհետև միակ կրոնավորն էր և թե հավատուրացներ և ստորին դասակարգի մարդիկ կընկերանային իրեն, միմիայն երկինքի հետ հարաբերություն ուներ, կկատարեր աստվածային պաշտամունքը, կաղոթեր Աստուծո և պարապ ժամանակը կանցներ սուրբ գիրքեր կարդալով։ Անմիջապես որ հասավ Քոմորանի բերդը (որ այն ատեն կպատկաներ կաթոլիկ թագավորին և կբարձրանա պարսկական ափին վրա, Լարի թագավորության մեջ, նեղուցին եզերքը և Օրմուզի ամրոցին դիմացը, զոր այնտեղեն կարելի է տեսնել), հրամանատար Տ. Փետրո Քութինիո, որ շատ խելացի և խոհեմ էր, լուր ստացավ Ծ. Հայրեն, որ հասած էր այնտեղ և թե այն կարավանը, որու հետ էր ահագին էր, բաղկացած էր բազմաթիվ մարդերե, ի մեջ այլոց մեծահարուստ պարսիկ վաճառականներե, որոնք Լարի մեջ փոխած էին իրենց ճամփորդական կազմածը և հագուստները, ինքզինքնուն տալու համար համեստ վաճառականներու երևույթը և թե կփոխադրեին մեկ բոնբոյեն ավելի ոսկի։ Ծ. Հայրը կթելադրեր հրամանատարին (վասնզի գրույց կշրջեր, թե շահը նպատակներ ունի Օրմուզի վրա և Շիրազի խանը, որ զորավոր էր և բեր-

դապահ զորքին իշխանը, օր մը ըսած էր իրեն՝ Ծ. Հոր, որ առայժմ թուրքերուն հետ բռնված էր, բայց հետո պիտի երթար թիկունք ըլլալու շահին հպատակներուն՝ ընդդեմ ամրոցին), որ առևտուրի պատրվակին տակ կրնար գոյություն ունենալ այնտեղ շատ պարսիկներ մտցնելու նպատակ մը, որոնք կրնային վնաս պատճառել։ Եվ հրամանատարը փութաց լրտեսներ ղրկել կարավանին մեջ խառնվելու և տեսնելու համար, թե զենք կփոխադրեի՞ն, ասկե զատ հրաման արձակեց, որ վաճառականներուն թույլ պիտի չտրվի Օրմուզ մտնել առանց իր արտոնության։ Ամեն ինչ կատարեց ըստ իր պարտականության, իբր շատ զգույշ և քաջ մարդ։ Իսկ Ծ. Հայրը գնաց Քոմորանի բերդը, ուր չգտավ ոչ մեկ եկեղեցական և ոչ ոք զինքը խոստովանեցնելու համար քրիստոնյաներուն, ուստի մխիթարելու համար այս մարդիկը, պատարագեց շաբաթ, Ս. Կույսի տոնին, իր ժամանումի հաջորդ օրը, ինչպես և հաջորդող կիրակի օրը։ Կեսօրե ետք գնաց Օրմուզ, ուր շատ սիրով ընդունվեցավ վիճակավորեն և հայրերեն, ինչպես և հրամանատարեն, որ շատ պատիվ ըրավ իրեն։ Դառնալով դեպի Աստված և մեր տեր Հիսուս Քրիստոս, խոստովանեցավ, ինչ որ չէր կրցած ընել երեսունըյոթը օրե իվեր և պատարագեց, և նույն ըրավ ամեն օր (ինչպես կըներ միշտ)։ Վճարեց իր ուղեկից Պանիան վաճառականին ինչ որ պարտ էր անոր, շատ ճշտորեն և նույնիսկ տվավ ավելի։ Մաքսատան տնօրենը Ծ. Հոր տվավ հիսուն լարի փարտաո, որ կհամապատասխանե երկու եռամսյա թոշակին, զոր թագավորը կվճարե եկեղեցական միսիոնարներուն Օրմուզեն Կոա ճամփորդության համար, ինչ որ համարժեք է Կոայի յոթանասունըհինգ փարտաոյի, այս դրամին վրա ավելցուց ինչ որ կրցավ գտնել և ինչ որ իրեն կուտային պատարագներուն համար և ատով կնքված ծրար մը ըրավ, զոր ղրկեց Սպահանի իր վանքին։ Այսպես Օրմուզեն մեկնեցավ առանց իր սեփական պետքերուն համար ոևէ դրամ պահելու։ Չընդունեց հրամանատար Տ. Փետրո Քութինիոյի հրավերը, որ կըմեկներ այն ատեն, ինքն ալ, բայց հարստությամբ լիացած և կփափագեր զինքը իր նավուն մեջ առնել հարգելու և պատվասիրելու համար. Նախընտրեց ուրիշ նավ մը, ուր տեսավ որ եկեղեցական չկար պաշտպանելու համար հոգիները ճամփորդության ժամանակ, մինչդեռ հրամանատարին կընկերանար իր խոստովանահայրը, որ իրեն հետ Կոա կերթար։ Այսպես Ծ. Հայրը հրաժարեցավ իր հանգիստեն ապահովելու համար հոգևոր հանգստությունը մյուս նավուն մեջ գտնվողներուն, ուր շատ պետք ունեին իր կրոնական պաշտոնին։ Եվ քիչ մնաց, որ շատ ավելի պետք ունենային անոր, որովհետև պատահեցավ որ նավը խրեցավ

հրվանդանի մը մոտ կամ ծոցի մը, որ կկոչվեր Ջեսք[266] և խորհեցան ճամփորդները ցամաք հանել ափին վրա, որ բնակված էր մահմեդականներե. կրնար վախցվիլ, որ ստորին դասակարգի պատկանողները ուրանան իրենց հավատքը, եթե չըլլային հոր հորդորները զիրենք իրենց հավատքին մեջ պահելու համար։

Բայց Աստված փրկեց զիրենք. նավը երեք օր այդ դիրքին մեջ մնալէ ետք, ուրկե ափին վրա կտեսնվեին մահմեդականները, որոնք կսպասեին իրենց որսին։ Կթվի թե հրաշք մըն էր ասիկա, բայց այստեղ պիտի չպատմեմ ատիկա։ Այսպես Ծ. Հայրը վերստին կգտնվեր Գոա, ուրկե մեկնած էր իբր ավետարանական միսիոնար, ի գործ դնելու համար իր առաքելությունը հինգ տարի[267], և այս մեծ հունձքեն կբերեր միայն քանի մը պտուղներ, որոնք արդեն հիշվեցան և կմտադրեր վերադառնալ այնտեղ շարունակելու համար իր գործը։ Եկեղեցապետ արքեպիսկոպոսը, որ նույն ատեն Հնդկաստանի տերության կառավարիչ էր, զինքը ընդունեց բարեկամության մեծ ցույցերով։ Հայրը գնաց Նոթըր Տամ տը լա Կրասի վանքը և այնտեղ մտավ այնքան աղքատ, որ երբ ծառան, որ կկրեր իր

266 Ջեռ. Ժասքուըշ։

267 Տրված ըլլալով, որ Հ. Տիոկո Կոայեն մեկնած էր 14 փետրվար 1604-ին դեսպան Լուիս Փերեյիրա տե Լասերտայի հետ, պետք է հետևցնել, որ իր Գոա վերադարձը տեղի ունեցավ ամենաուշը 1609-ի սկիզբը և շատ հավանական է, որ Գոա հասավ 1608-ի աշնան։ Կարմելյան ժոան Թատեոյի կողմե Սպահանեն 6 մարտ 1609 թ. հաղորդագրության մը մեջ, ուղղված Օրմուզ՝ կարմելյան Վինսենթե տե Սան Ֆրանսիսքոյի, ժոան Թատեո կպատմե, որ ըստ Հալեպի ֆրանսական հյուպատոսեն իմացածին ֆրանսացի մը, որ Հ. Տիոկոյի հետ Հնդկաստան գացած էր, այնտեղ վար դրված էր իբր բանտարկյալ. տ. Կարմելյանները, էջ 170։ Հ. Փոլ Սիմոն, տեղեկագրության մը մեջ (Նույն, էջ 125—126) կպատմե, որ 1608-ի հունվարին շահ Աբբասի մոտ ունկնդրության մը ընթացքին, ուր ինք ներկա էր, օգոստինյան հայրերու վիճակավորին հետ, այս վերջինը հայտնեց շահին, որ կփափագեր իր կրոնավորներեն մեկը ուղարկել Հնդկաստան և պարսիկ դեսպանեն խնդրեց, որ պատասխանե այն նամակին, զոր քանի մը օր առաջ հանձնած էր իրեն Ֆիլիփ Գ-ի կողմե։ Շահ Աբբաս պատասխանեց, որ դեսպան մը պիտի ուղարկե և թե Հ. Տիոկո այդ իրիկունն իսկ պետք է որոշե թե կընդունի՞ այդ դեսպանը, որ իրեն հետ Սպանիա պիտի երթա, ապա թե ոչ շահ Աբբաս պիտի չպատասխանե այդ նամակին։ Հ. Տիոկո պատասխանեց, որ չէր փափագեր որ դեսպան մը ուղարկվի Սպանիա և հետևաբար Հնդկաստան պիտի երթա առանց պատասխանի Ֆիլիփ Գ-ի նամակին։ Իր կողմե, հայր Փոլ Սիմոն ընդունեց վերադառնալ Հռոմ և երթալ Սպանիա և Սպահանը ձգեց 26 փետրվար 1608-ին, հետը տանելով նամակ մը ուղղված Պողոս Ե պապին, ստորագրված Հ. Տիոկո տե Սանթա Անայի և օգոստինյան միուս 4 կրոնավորներուն կողմե, թվագրված Սպահանեն 5 փետրվար 1608-ին. տ. Ս. Լոփեզ—Ք. Ալոնսո, էջ 193—200։

անկողինը Մուսքաթի հարդե փսիաթով մը ծածկված, անցավ դուռեն իրեն հետ և հայրերը ընդառաջ եկան ողջագուրվելու համար, մատակարար հայրը ըսավ. «Պիտի ուզեի ընկերանալ Ձեր գերապատվության, բայց կսպասեմ ձեր բեռներուն» և Ծ. Հայրը պատասխանեց «Ահավասիկ իմ բեռներս» և որովհետև ամենն ալ կըսեին թե բան մը չեն տեսած, Ծ. Հայրը հայտարարեց թե այս հարդե փսիաթը միայն ուներ, որուն անցնիլը տեսած էին։ Շատ զարմացան, որովհետև այսքան ժամանակ անցնելե ետք այնքան մեծ միապետի մը հետ ինչպես էր Պարսկաստանի շահը կսպասեին որ ունենար մեծաքանակ գործեր, գեղեցիկ հյուսվածեղեններ և ուրիշ հարստություններ, ինչպես նաև նվերներ ստացած ըլլար Օրմուզի մեջ։ Բայց ճշմարտությունը ըսվածն էր։ Ահա համառոտ կերպով ինչ որ Ծ. Հայրը կատարած է և ինչպես գործած է Պարսկաստանի թագավորության մեջ իր առաքելության ընթացքին և այնտեղի քրիստոնյաներուն մոտ։

Եվ լռությամբ անցանք Ծ. Հոր գործունեության բազմաթիվ կարևոր դրվագներուն վրայեն, զորս կրնայինք պատմել (որպեսզի տեղյակ ըլլան անոնք որ պիտի կարդան) վերաբերմամբ հայոց ենթարկումին, մահմեդականներու մոտ քարոզչության, հավատուրացներու հոգևոր դարձին ու նաև այն մասին, թե ինչպե՞ս վերաբերված է անգլիացիներուն և Եվրոպայի ուրիշ հերետիկոսներու հետ, երբ պետք եղավ պայքարիլ անոնց մեջ հարաշարժ ամեն տեսակ հերետիկոսություններու դեմ։ Եվ մեկ կողմ կթողունք շատ մը վտանգներ, որոնց ենթակա եղավ բանակին մեջ ինչպես դուրսը, անհավատներու մեջ հինգ հարյուր փարսախներու իր ճամփորդություններուն ընթացքին, քարոզելով և բացատրելով քրիստոնեական աստվածային հավատքը և հայտնելով ճշմարտությունը։ Բոլոր այս վտանգներեն պիտի հիշվի մեկը միայն իբր օրինակ այն պաշտպանության, զոր բարձրյալը կշնորհե անոնց, որ կծառայեն իրեն։ Շահին մեծ բանակը կուղղվեր, մռայլ գիշերվան մեջ, դեպի կետ մը, զոր նշանակած էր և ամեն ոք ձի հեծած էր, մեծ թագավորը միավորներ միայն ուներ։ Ծ. Հայրն ալ ձի հեծած էր ինչպես իր ընկերը, ոմն անգլիացիի մը՝ Տ. Ռոպըրթ Շըրլեյի խումբին հետ[268], որովհետև շատ անգլիացի կար շահին արքունիքին մեջ և միմանտարը (այն որուն թագավորը պաշտոն տված է իր արքունիքը զրկված օտարականներով զբաղելու). ամենը կերթային անկարգ և մեծ ժխոր բարձրացնելով, լեռներու մեջեն, ուշադիր ըլլալով հետևելու մեծ դրոշակի մը, որ առջևեն կերթար։ Հանկարծ Ծ. Հոր ձին

268 Ջեռ. Ռոպըրթ Շըրլեյ։

արգելքի մը զարնուեցաւ և ինկաւ իրեն հետ, Ծ. Հայրը նախզգացած էր անկումը և ցատկած էր ձիուն տակ չմնալու համար, բայց ոչ բաւական արագ խուսափելու համար գետնին վրա գլորելէ: Եվ ինչ որ տեղի ունեցաւ այն ատեն արտակարգ եղաւ, որովհետև միմանտարը պոռաց բանակին կանգ առնել, որովհետև եկեղեցականը, հյուր Թագաւորին, ինկած էր, անոնք որ ետևեն կուգային ետ դարձան և բարձրացնելով կացինները (կացին կկրեն) կըսեին. «Կանգ առեք, կանգ առեք, Թագաւորին հյուրը վար ինկաւ» և ամբողջ ետևեն եկողները կանգ առին, ազատ միջոց մը ձգելով իրենց և հառաջապահներուն միջև և մեծերը, որոնք ամենեն մոտն էին (անոնք միայն իրավունք ունին իրենց առջևեն լապտերներ տանիլ տալու) կեցան և լուսավորել տվին տեսարանը, գիտնալու համար թե վիրավորվա՞ծ էր հայրը, որ շնորհիվ Աստուծո անվնաս էր, շոշափեցին նաև իր ձիուն ոտքերը տեսնելու համար թե ի վիճակի՞ էր քալելու, հաստատեցին որ ամեն ինչ լավ էր, ինկած էր, որովհետև արգելքի մը զարնված էր: Հայրը ուրեմն դարձյալ ձի հեծավ և որովհետև ամեն ինչ կարգին էր մեծերը և ամբողջ բանակը վերսկսան հառաջանալ առաջվան պես, աճապարանքով և գրեթե վազելով: Եվ այստեղ կտեսնվի, որ Աստուծո հրեշտակը իր պաշտպանությունը տարածեց քրիստոնյա մեղավորի մը և խոնարհ եկեղեցականի մը վրա հարյուր հազարեն ավելի անհավատ ձիավորներու բանակի մը մեջ, սև գիշեր մը լեռնային ճամփու մը վրա, երբ խնայվեցավ բոլոր այս բանակեն, որ կձիավարեր արագորեն, և չկոխոտվեցաւ ձիերեն հողակույտերուն և մացառուտներուն պես, երբ բանակը ուշադրություն չի դարձներ իր առջև գտնվածին: Օրհնյալ ըլլա բարձրյալն Աստված, որ մեծության և անհուն գթության մեջ փրկեց իր խոնարհ ծառան և իր անարժան եկեղեցականը:

Ցույց տալու համար անքննելի նախասահմանումը հոգիներուն, կարեվոր է պատմել ուրիշ դրվագ մը: Որովհետև մահմեդականները ամենամեծ հարգանք ունին Իսայի սրբության համար (այսինքն մեր տեր Հիսուս Քրիստոս, որ կխորհին թե մարդ մըն էր միայն, բայց շատ սուրբ), շատ կիներ, նույնիսկ ազնվական դասու, կուգային Սպահանի մեր եկեղեցին և կխնդրեին, որ իրենց գլխուն վրա դրվի մեր սուրբ ավետարանը, ցույց տալով այսպես թե նույնիսկ եթե չէին հավատար անոր, զայն կհամարեին իբր սուրբ բան, որու ընդմեջեն Աստված կկատարեր իր բարեբաստիկ գործը: Եվ հանձնարարած էինք ծեր եկեղեցականի մը, եղբ. Ժերոնիմո տա Քրուզ, որ շատ հարգելի էր, գոհացում տալ այս կիներուն ջերմեռանդ բարեպաշտության, որոնք ուրեմն կքարոզեր, աղոթագիրքը

կդներ անոնց գլխին վրա, և անոնք խոնարհաբար կծնրադրեին: Ի հարկին, ուրիշ եկեղեցականներ նույնը կըներին: Շատ հաճախ տեսանք մահմեդական կին մը, որ կթվեր թե կպատկանի ազնվական դասուն և կբերեր փոքրիկ աղջիկ մը, շուրջ մեկ տարեկան: Աղջիկը հիվանդ էր և զայն կբերեր մեր տեր Հիսուս Քրիստոսի որպես մեծ սուրբի մը, բժշկելու համար: Տեսնելով այս խեղճ մոր անձկությունը և որովհետև երեխային վիճակը կծանրանար, Ծ. Հայրը մտածեց, որ եթե հուսահատական դառնար՝ պիտի մկրտեր, ինչպես կրնար ընել նման պարագայի մը մեջ, ըստ բավական տարածված կարծիքի մը, զոր սակայն մյուս հայրերը չէին բաժներ, ունենալով հակառակ համոզում: Խորհուրդ տվավ ուրեմն մահմեդական կնոջ և անոր ընկերացող անձերուն շարունակել բերել երեխան, որովհետև պիտի գտներ առողջությունը,—ինք կհասկնար մկրտության առողջությունը: Եվ որովհետև եկեղեցապետն էր, հրամայեց ծառաներուն շատ ուշադրություն ընել, երբ կերթային բանալ մեր եկեղեցվույն դուռները ներս առնելու համար նման կիներ, տեսնելու համար թե խնդրո առարկա կի՞նն է եկողը և թե ավելի՞ լավ կամ գեշ է երեխային վիճակը. այս վերջին պարագային պետք էր զինքը կանչել և սպասցնել կինը: Եվ ահա իրիկուն մը եկավ մարդ մը աճապարանքով, անձկության մեջ էր և թևերուն մեջ կկրեր մահամերձ երեխան: Մարդը հուսահատած կթվեր և հիվանդը կբերեր մեր տեր Հիսուս Քրիստոսի որպեսզի բժշկե: Երբ կմեկներ աղոթքեն ետք ծառաներեն մեկը, որ իրեն ընկերացած էր գրեթե (կկարծենք) դիպվածով, որովհետև չէր մտածեր այս մասին հորը կատարած հանձնարարություններուն և նույնիսկ վանքին ծառաներեն մեկը չէր, այլ հավատքի եկած հավատուրացներեն մեկը, որ այնտեղ ընդունված էր, բարձրաձայն ըսավ. «Այս պզտիկ աղջիկը պիտի մեռնի, այս պզտիկ աղջիկը պիտի մեռնի»: Ծ. Հայրը լսեց այս աղաղակները, նախզգաց անմիջապես, որ խոսքը կվերաբերեր երեխային, զոր որոշած էր մկրտել, փութաց վազելով և հասավ այն վայրկյանին, ուր մարդը եկեղեցիեն դուրս կելլեր լալով, հոգեվարքի մեջ եղող երեխան գրկած: Թևեն բռնեց, ետ բերավ, տարավ դեպի օրհնված ջուրի ամանը, որ կգտնվեր կողմնակի դռան մոտ, որ կուտա վանքին շենքին վրա: Այն ատեն հանեց երեխային ծածկոցները և տեսնելով թե հոգեվարքի մեջ է, ձեռքերը օրհնված ջուրին մեջ թաթախեց, լեցուց ջուրով, զոր սրսկեց գլխուն և դեմքին վրա փոքրիկ աղջկան, որ ուշակորույս էր, միաժամանակ մեծ սիրով և զայն մկրտելու ցանկությամբ կարտասաներ սուրբ մկրտության խոսքերը: Զգալով ջուրին սառնությունը, երեխան ուշքի եկավ, բայց դարձյալ

նվաղեցավ և մեռավ: Եվ ահա ինչ որ կըսե ս. Պողոս. «Ով գանձ բարձրագիր ևն»: Այսպես Ծ. հայրը, երբ Պարսկաստանի թագավորության մեջ էր, Աստուծո կողմե առաջնորդվեցավ մկրտելու այս հոգին, զոր Աստված նախասահմանած էր և այստեղ ալ ուրիշ բան չենք կրնար ըսել, եթե ոչ ս. Պողոսի պես. «Ոչ կամքն է ոչ պաշտպանությունը, այլ աստվածային գութը»:

ԹԹԱԱ, Ձեռ. Մատենադարանի, «Արևել-ֆի միաբանության ճուշագրություններ», բ. 674, էջ 68—80բ:

ՓՈՐԹՈՒԿԱՅԻ ՕԳՈՍՏԻՆՅԱՆՆԵՐՈՒ ԵՎ ՏՈՄԻՆԻԿՅԱՆՆԵՐՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՏՈՄԻՆԻԿՅԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԺԷ ԴԱՐՈՒՆ

Հայ տոմինիկյան եղբայր Ազարիա Ֆրիտոն 1601—4-ին իր Նախիջևանի թեմեն դեպի Հռոմ կատարեց ճամփորդություն մը, որուն դրվագները ծանոթ են շնորհիվ տոմինիկյան եղբայր Կրավինայի գործին. Համառոտ նկարագրություն Քրիստոնեության և Ս. Տոմինիկոսի կարգին Հայաստանի մեջ, Քաղված հին գրողներեն և նոր տեղեկատվություններեն զոր տոմինիկյան Նախիջևանի հայ արքեպիսկոպոս գերապատիվ եղբ. Ազարիա Ֆրիտոն ներկայացուց մեր տեր Կղեմես Ը պապին 1604-ին, հեղինակությամբ գեր. եղբ. Տոմենիկո Կրավինայի, Նափոլիեն, դասախոս արք. աստուածաբանության, ընկերակից Քարոզիչներու կարգին բնդհ. մեծավորին, Հռոմ, տպ. Լուիջի Զաներթի, 1605[1]:

Սակայն քիչ տեղեկություն ունինք այնուհետև Հռոմեն Մատրիտ իր ճամփորդության մասին, զոր կատարեց Կղեմես Ը պապին կողմե 9 մայիս 1604-ին Նախիջևանի արքեպիսկոպոս ձեռնադրվելեն և նույն տարվո հուլիս 4-ին արքեպիսկոպոսական եմիփորոնը ստանալեն ետք:

Գիտենք միայն, որ Սպանիա գացած էր իր թեմին համար նվիրատվություններ հավաքելու և թե մեռավ Հռոմ վերադարձին ընթացքին 7 հունվար 1607-ին առանց կարենալու հասնիլ իր ծննդավայր երկիրը: Ազարիա Ֆրիտոն, արքեպիսկոպոս Նախիջևանի, թաղվեցավ հավիտենական քաղաքին սուրբ Մարիամ Եգիպտացի եկեղեցիին մեջ, որ այն ատեն հատկացված էր հայերուն: Իր տապանագիրը այժմ կգտնվի Թոլենթինոյի ս. Նիկողայոս եկեղեցիին մեջ[2]:

---

[1] Եղբայր Տոմենիկո Կրավինայի գիրքը իր 7-րդ և 8-րդ գլուխներուն մեջ կպատմե եղբայր Ազարիայի արկածալից ճամփորդությունը այս վերջինույն իրեն հաղորդած տեղեկություններուն հիման վրա:

[2] Գլխավորաբար Ղևոնդ Ալիշանի (Սիսական, Վենետիկ, 1893) և հայր Վան Ոստենրիյնի (մասնավորաբար «Նախիջևանի եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ»: Արխիվ քարոզիչ եղբայրներու, հատ. Զ, Հռոմ, 1936, և «Հայերեն լեզվով գրողներ», Պևոն, 1960) է, որ կպարտինք եղբ. Ազարիա Ֆրիտոնի վերաբերյալ ամենեն մանրամասն տեղեկություն-

Սակայն, փորթուկալցի քարոզիչ եղբայր մը, Ժոան տոս Սանթոս, 1609-ին Փորթուկալի մեջ հրատարակված գիրքով մը[3] մեզի կտեղեկացնե, թե 1606-ին Լիզպոնի մեջ հանդիպած է եղբայր Ազարիա Ֆրիտոնի և և կպատմե անոր հետ ունեցած խոսակցությունները, երբ այս վերջինը կրնակեր ս. Տոմինիկոսի վանքին մեջ, սպասելով, որ կարենա ճամփա ելլել դեպի Հնդկաստան։

Ինքը՝ Ժոան տոս Սանթոս այնտեղեն կուգար, նախապես տասնըմեկ տարի Եթովպիա բնակելե ետք։ Ծնած էր Էվորա, քարոզիչ եղբայրներու միաբանության մեջ մտած էր 1584-ին, հետո առաքելական ջերմեռանդ փափագե մը մղված, Արևելք գացած էր Ավետարան քարոզելու։ Լիզպոն վերադարձած 1606-ին եղբայր տոս Սանթոս կրկին զգացած ըլլալու է իր քարոզչական ցիղին թրթռումը, լսելով Նախիջևանի արքեպիսկոպոսին ողբերգական պատմությունը. հետագային դարձյալ գնաց Հնդկաստան, իր կյանքը ավարտելով Կոայի տոմինիկյան վանքին մեջ 1622-ին[4]։

Եղբայր Ժոան տոս Սանթոսի բերած ճշտումները նոր լույս մը կսփռեն իպերական թերակղզիին մեջ եղբ. Ազարիա Ֆրիտոնի կատարած այցելության վրա։ Եթե Մատրիտ գացած էր այնտեղ դրամ հավաքելու, կտեսնվի որ ավելի խոր պատճառներ ուներ իր ճամփորդությունը շարունակելու մինչև Լիզպոն, այնտեղեն փորձելով վերադառնալ իր Նախիջևանի թեմը, Հնդկաստանի և Պարսկաստանի ավելի ապահով ճամփաներով։ Եղբայր Ազարիա իր երկրեն մեկնած էր 1602-ին Հռոմ երթալու նպատակով, ցամաքի ճամփով Թուրքիայեն անցնելով, «հնազանդություն հայտնելու համար պապին, ինչպես պարտավոր են ընել երեք տարին անգամ մը Հայաստանի տոմինիկյան արքեպիսկոպոսները, ըլլա անձնա-

ները, ինչպես նաև ամենեն ամբողջական ուսումնասիրությունները Սյունիքի այն հայ համայնքներուն վրա, որոնք սկսյալ ԺԴ դարեն դավանապես միացան Հռոմի, ազդեցությամբը քարոզիչ եղբայր Բարթոլեմեո տե Փոտոյի։ 1583-ին ունիթոր եղբայրները մաս կազմեցին Տոմինիկյանց կարգին, որուն սահմանադրությունը և զգեստը ընդունած էին, հետևելով հանդերձ սուրբ Օգոստինոսի կանոններուն։

[3] *Արևելյան Եթովպիա և բազմապիսի պատմություն արևելյան նշանակելի բաներու և քրիստոնեության զոր այնտեղ ի գործ դրին քարոզիչներու կարգին կրոնավորները։ Շարադրված եղբայր Ժոան տոս Սանթոսի կողմե, նույն կարգեն, բնիկ Էվորա քաղաքին։ Ձոնված վսեմապատիվ Տոմ Տուարթի, մարքիզ Ֆրեշիլյոյի և Մալակոնի։ Տպագրված Էվորայի տոմինիկյան վանքին մեջ, սրբ. դիվանի արտոնությամբ և արքայական առանձնաշնորհումով։ Տպ. Մանուել տէ Լիրա, 1609։*

[4] *Կենսագրություն եղբայր Ժոան տոս Սանթոսի,* Պարպոզա Մաշատո, *Փորթուկալյան մատենաշար, Քոիմպրա, 1696, հատ. Բ, էջ 746 և* Ինոսենսիո տա Սիլվա, *Փորթուկալյան մատենագրական բառարան, Լիզպոն, 1860, հատ. 4, էջ 33—34։*

պես, ըլլա ուրիշ կրոնավորներու միջոցավ»[5]։ Իր երթի ճամփորդությունը տեղի ունեցած էր շահ Աբբասի և Թուրքիո սուլթանին միջև թշնամության սկզբնավորութենեն առաջ, բայց անկե իվեր ծայր տված էին բուռն կռիվներ և եղբ. Ազարիա գիտեր, որ վտանգավոր էր, եթե ոչ անկարելի, նույն ճամփորդությունը կատարել հակառակ ուղղությամբ, ցամաքի ճամփով[6]։ Կարելի եղածին չափ շուտ իր թեմը վերադառնալու մտահոգությամբ ծրագրեց, երբ Սպանիա կգտնվեր, ծովու ճամփան ընտրել։ Գնաց Լիզպոն ուր բնակեցավ Ս. Տոմինիկոսի վանքը, սպասելով, որ նավ նստի դեպի Հնդկաստան։ Բայց աստվածային կամքը տարբեր էր և Նախիջևանի արքեպիսկոպոսը չհաջողեցավ կատարել իր ծովային ճամփորդությունը, որովհետև այդ 1606 թվականին Կոա գացող փորթուկալյան նավերը չկրցան ճամփա ելլել Լիզպոնի նավահանգիստեն, որ հոլան-

[5] Սանթոս, *անդ, գիրք Ա, գլ. Գ, էջ 6բ և 7ա։*

Ալիշան, *անդ, էջ 392—3, կըսե իր կարգին թե «պապը հրամայած էր, որ եպիսկոպոսները իրեն ներկայանան ութը տարին անգամ մը»։ Սիքսթոս Ե պապին օրով 1525—1590 Ազարիա Ֆրիտոն Հռոմ եկած էր, իբր ներկայացուցիչ իր հորեղբայր Նիկողայոս Ֆրիտոնի, արքեպիսկոպոս Նախիջևանի և վերադարձած էր 1587-ին.* Ոսկեան, *անդ, 172 և 191։*

[6] *Համենայն դեպս, պատերազմ ըլլար թե ոչ, Թուրքիո ճամփան միշտ վտանգ կներկայացներ, եթե դատենք հ. Ազարիայի հաջորդող Մաթեոս Երազմ արքեպիսկոպոսին վերադարձի ճամփորդության պատահարներեն, երբ այս վերջինը 22 հոկտեմբեր 1607-ին Հռոմի մեջ ձեռնադրվելեն ետք ճամփա ելավ դեպի իր Նախիջևանի թեմը տոմինիկյան աշխարհական եղբոր մը ընկերակցությամբ, անցնելով Սիկիլյաեն, հետո Միջերկրականի վրայեն հասնելով Ալեքսանդրիա։ Այնտեղ, 1608-ի հունվարի կիսուն միացան վաճառականներու կարավանի մը, որ կերթար Հալեպ։ Իրենց հետ էին նաև երկու Բոկոտե Կարմելյան կրոնավորներ, հայր Ըրտան տը լա Քռուա և Պընեն տը Սեն-Միշեն, որոնք Պարսկաստան կերթային։ Հալեպ հասնելե քիչ առաջ կարավանը հարձակման ենթարկվեցավ ավազակախումբի մը կողմե, որ կողոպտեց և վիրավորեց շատերը ճամփորդներեն, որոնց մեջ նաև տոմինիկյան հայր եղբայրը, որուն սրունքը ճեղքված էր նետով մը։ Բարեբախտաբար և հակառակ անոր որ վերքը թարախոտած էր, շուտով բժշկվեցավ։* Եղբ. Ֆլորենսիո տել Նինեո Ժեզյու, *Կարմելյան, միսիոնարական Կարմել-Թերեզյան մատենաշար, հատ. Գ, ի Պարսկաստան, Փամփլոնա, 1930, էջ 49—50։ Նույնպես, 1623-ին Կոստանդնուպոլսեն Ապարաներ ճամփորդության ընթացքին, երեք տոմինիկյան կրոնավորներ, իտալացի եղբայր Կրեկորիո Օրսինի և հայ եղբայրք Օգոստինոս Պաճենց և Նիկողայոս հարձակման ենթարկվեցան ոճրագործներու խումբի մը կողմե, որոնք սպաննեցին եղբ. Նիկողայոսը և ծանրապես վիրավորեցին միւս երկուքը։ Տե՛ս Ք.* Արենս. *Անժել Մարիա Ցիթթատինի, տոմինիկյան, արքեպիսկոպոս Նախիջևանի (+1629), Հռոմ, 1970, էջ 78։*

տացիներուն կողմե պաշարված էր[7]։ Եղբայր Ազարիա ստիպվեցավ վերադառնալ Հռոմ, ուր մեռավ 1607-ին, «ավարտելով իր հեռավոր ճանապարհորդության փորձությունները սրբության նշաններով, արժանի մարտիրոս կոչվելու...»[8]։

Եղբայր Ժոան տոս Սանթոսի գործը, հրատարակված Էվորայի վանքին մեջ 1609-ին, կբաղկանա երկու բոլորովին զատ բաժիններե, որոնցմե մեկը կվերաբերի Արևելյան Եթովպիո պատմության և մյուսը՝ Արևելքի հատուկ նշանակելի դեպքերու բազմապիսի պատմության։ Առաջին մասը որոշ հետաքրքրություն արթնցուց քանի որ միակը եղավ որ թարգմանվեցավ ֆրանսերենի 1684-ին ձեռամբ Կաեթան Շարփիի, Թեաթինյան միաբանի[9]։ Բայց երկրորդ բաժինը, որ ըստ երևույթին անծանոթ մնացած է Մեծ Հայքի քարոզիչ եղբայրներու գործունեությամբ զբաղող տոմինիկյան պատմաբաններուն, կպարունակե այն մասը, ուր հեղինակը այս նյութը կուսումնասիրե և կպատմե իր խոսակցությունները Նախիջևանի արքեպիսկոպոսին հետ։ Ներածության գլուխե մը ետք, որ կվերաբերի «Քարոզիչ եղբայրներու միաբանության առաջին կրոնավորներուն, որոնք Արևելքի երկրամասը այցելեցին և գացին Չինաստան իբր Իննովկենտիոս Դ պապին դեսպանները» եղբայր Ժոան հաջորդ երեք գլուխներուն մեջ կզբաղի այն նյութերով, որոնք մեզի կհետաքրքրեն։ Երկրորդին մեջ, որուն վերնագիրն է «Հայաստանի քրիստոնեության մասին, որ հաստատված է ձեռամբ Բարթողոմեոս Փարմա Պոլոնես եպիսկոպոսին, կրոնավոր քարոզիչներու միաբանության»[10], եղբայր Ժոան տոս Սանթոս կճշտե, որ ինչ որ կպատմե ի հայտ կուգա «շրջաբերության մեջ եղող գիրքերե, որոնք իտալերեն լեզվով տպված են Կղեմես Ը պապին հրամանով և

---

[7] Սանթոս, անդ, էջ 7ա։ Տե՛ս Ա. Պորեյիռ տե Սուզա, *Նյութեր Հնդկաստանի ծովային պատմության համար*, Լիզբոն, 1948, հատ. Բ (1605—17). «1606 տարին նավերը չկրցան Հնդկաստան մեկնիլ, որովհետև հոլանտական նավատորմ մը փակած էր Թաժի գետաբերանը մինչև նավագնացության ժամանակը։ Նավախումբը, որ պիտի մեկներ Ժերոնիմո Քուտինեոյի հրամանին տակ, կբաղկանար 3 նավե և 8 ցռկանավե»։

[8] Սանթոս, անդ, էջ 7ա։

[9] Պատմություն Արևել. Եթովպիո, գրված փորթուկալերեն հ. Ժոան տոս Սանթոսի կողմե, Ս. Տոմինիկոսի կարգեն կրոնավոր և թարգմանված ֆրանսերենի Թեաթինյան կարգին միաբան Մարոնցի Տ. Կաեթան Շարփիի կողմե, Փարիզ, տպ. Անտրե Քրամուազի, 1684։ Լիզբոնի մեջ կատարվեցավ անջատված նոր տպագրություն մը, վերնագրված Արևելյան Եթովպիա, 1891, 3 հատոր, 479 և 390—1 էջ։

[10] Սանթոս, անդ, հարակից նոտագրություն 56։

ընդօրինակված են վավերական գրութենե մը, որ իրեն հասած է Հայաստանեն և քաղված է բուն սկզբնագիրեն, որ կգտնվի արքեպիսկոպոսարանի դիվանատան մեջ»։ Երրորդ գլուխին մեջ՝ «Հալածանքները զորս Հայաստանի քրիստոնյաները կրեցին Թուրքերուն կողմե։ Եվ Տ. Բարթողոմեոս եպիսկոպոսին և տոմինիկյան ուրիշ կրոնավորներու նահատակության մասին», հեղինակը կըսե թե բոլոր այս տեղեկությունները քաղած է Նախիջևանի արքեպիսկոպոսեն, եղբայր Ազարիա Ֆրիտոն, որ իրեն հաստատած է թե բոլոր իր հաղորդածները այնպես են ինչպես արձանագրված է իր թեմին դիվանատան մեջ։ Կարելի է որոշապես հետևցնել, որ այս վերջինը եղբայր Ժոանի տրամադրության տակ դրավ Հայր Կրավինայի գիրքը, միաժամանակ անոր պատմելով Թուրքերուն կողմե կրած իր տանջանքները, երբ Մեծ Հայքի մեջ վանքի մը մեծավորն էր։ Իբր ապացույց տեր Ազարիայի հայտարարություններուն, եղբայր Ժոան պարտք կհամարի վկայել թե «ինքն անձամբ տեսած է, ինչպես Փորթուկալի այնքան ուրիշ կրոնավորներ, անոր վերքերուն նշանները»։ Կներկայացնե Նախիջևանի արքեպիսկոպոսը իբր ջերմեռանդ և բարեպաշտ կրոնավոր մը, խստակրոն և ապաշխարող։

Եղբայր Ժոան տոս Սանթոսի երկը մեզի կուտա նաև օգտակար տեղեկություններ Նախիջևանի շրջանին և Երնջակի հայ կաթոլիկ համայնքներուն և հայ տոմինիկյան վանքերուն վրա, ԺԷ դարուն սկիզբը։ Արդարև, Դ գլուխին մեջ, որ վերնագրված է «Տեղեկատվության մը մասին, զոր ս. Օգոստինոսի հայրերը, որոնք Պարսկաստան եղան, ուղղեցին Կոայի արքեպիսկոպոս տեր Ալեյքսո Մենեզեսի», կընդօրինակեր այդ ձեռագիր տեղեկատվությունը, զոր ս. Օգոստինոսի կարգեն երկու փորթուկալցի կրոնավորներ խմբագրած էին։ 1604-ին այն մասը, որ կվերաբերեր «Ս. Տոմինիկոսի կրոնավորներուն քրիստոնեության»[11]։

Եղբայր Ժոան տոս Սանթոս այս արտագրությունը կհրատարակեր հետևյալ հառաջաբանով.

«1604 տարվույն ընթացքին Կղեմես Ը պապին հրամանով Պարսկաստանի Մեծ Սուֆիին մոտ իբր դեսպան գնաց Հայր Ֆրանսիսքո տա Քոսթա ընկերակցությամբ փառապանծ ս. Օգոստինոսի երկու կրոնավորներու, որոնք մնացին այնտեղ։ Ասոնք պաշտպանությունը կվայելեն թագավորին և արդեն տուն մը հիմնած են Սպահանի մեջ, գլխավոր և արքայանիստ քաղաք, ուր պատարագ կմատուցանեն և առանց ոևէ արգելքի քրիստոնյաներ կպատրաստեն։ Այս կրոնավորները պատմելով իրենց

---

[11] Սանթոս, անդ, էջ 7—9։

ճամփորդության պարագաները և Սուֆիին հաջողությունները 1603-են 1604-ին Թուրքերուն դեմ իր մղած պատերազմին մեջ, միաժամանակ գրեցին ինչ որ տեսան Հայաստանի քրիստոնյաներուն մասին և Կոայի արքեպիսկոպոս տեր Ալեյքսո տե Մենեզեսի ղրկեցին ամբողջ տեղեկատվությունը, որուն ս. Տոմինիկոսի կրոնավորներուն վերաբերյալ մասը հետևյալն է»[12]:

Այս արտագրության փորթուկալերեն բնագիրը տալե առաջ անհրաժեշտ է ճշտել, թե ս. Օգոստինոսի կարգին երկու կրոնավորները, հայր Պելշիոր տոս Անժոս և Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիո, որոնց գործն է այս տեղեկատվությունը, Պարսկաստանի մեջ հայր Ֆրանսիսքո տա Քոսթային չէ որ ընկերացած էին, այլ դեսպան Լուիս Փերեյիրա տե Լասերտային, որ 1604-ին Շահ Աբբաս Ա-ի մոտ գացած էր Սպանիո թագավոր Ֆիլիփ Բ-ի հրամանով[13]: Ֆրանսիսքո տա Քոսթա, նախկին հիսուսյան, Կոա ծնած, Պարսկաստանի մեջ իր դիվանագիտական առաքելության ձեռնարկած էր 1601-ին Կղեմես Ը պապին հրամանով և այնտեղ հասած էր 1602-ին ընկերակցությամբ ոմն աշխարհական Տիոկո տե Միրանտայի նույնպես Հնդկաստան ծնած[14]:

---

[12] Պելշիոր և Կիլեերմե հայրերը Ջուղայեն 8 նոյեմբեր 1604 թվակիր նամակով մը, զոր Հալեպ գացող հայ վաճառականներու կարավանի մը հանձնած էին, իրենց Լիզպոնի մեծավորներուն կհայտնեին թե տեղեկատվություն մը կպատրաստեին «քրիստոնեության» վերաբերմամբ իրենց տեսածին մասին մինչև իրենց Պարսկաստանի շահին բանակատեղին հասնիլը 22 հոկտեմբեր 1604-ին և մինչև իրենց վերադարձը Ջուղա ուրկե կգրեին և կուտային իրենց տեղեկատվության մեկ ամփոփումը: Այս նամակը, որ Փորթուկալ կգտնվի, Պրակայի գավառին արխիվներուն մեջ, հրատարակված է օգոստինյան Ք. Ալոնսոյի կողմե «Հնդկաստանի և Պարսկաստանի մեջ օգոստինյան առաքելությանց վերաբերյալ փաստաթուղթեր», Օգոստինյան հավաքածու, ԼԴ, Հռոմ, 1970, էջ 353—356: Թեև հիշյալ նամակը 1605-ին հասած պետք է ըլլա անոնց, որոնց սահմանված էր, տեղեկատվությունը որ ուղարկված էր Կոայի ճամփով Փորթուկալ հասավ 1606-ի սեպտեմբերին կամ հոկտեմբերին, երբ Նախիջևանի արքեպիսկոպոսը արդեն այնտեղ կգտնվեր:

[13] Տե՛ս Ռոբերտ Կյուլպենկյան, Լուիս Փերեյիրա տե Լասերտայի և ս. Օգոստինոսի միաբան փորթուկալցի Պելշիոր տոս Անժոսի և Կիլեերմե տոս Սանթոս Ակոսթինիո հայրերուն դեսպանությունը Պարսկաստանի մեջ, 1604—1605, Լիզպոն, 1972:

[14] Տե՛ս Հարակից նոտագրություն 15: Համառոտ տեղեկատվություն, էջ 21ա—23բ, նամակ Ֆիլիփ Բ-ի առ Տոն Ժոզեֆ տե Մելլո, Հռոմի գործակալ, թվագրված Վալլատոլիտեն 17 նոյեմբեր 1604-ին, որուն մեջ թագավորը կհրահանգե նորին սրբության տեղեկացնել այն քանի մը անհամաձայնություններուն մասին, որոնք ծագած էին Ֆրանսիսքո տա Քոսթայի և Տիոկո Միրանտայի միջև, փորթուկալցիներ զորս նորին սրբությունը ուղարկած էր շահ Աբբասի մոտ և որոնցմե հառաջ եկավ այն սակավ գոհունակությունը, որ անոնք տվին այս երկրին մեջ: Թագավորը կթելադրե, որ Հռոմի գործակալը պապին հա-

Նույն 1609 տարվույն ընթացքին, ուր եղբ. Ժոան տոս Սանթոս իր գիրքին մեջ կհրատարակեր ս. Տոմինիկոսի կրոնավորներուն քրիստոնեության վերաբերյալ հատվածը, ամբողջական պատմությունը, որուն վերնագիրն է. Տեղեկատվություն Պարսկաստանի և Հայաստանի նին քրիստոնէության, զոր կրօնաւորները տեսան և ամէն ինչի զոր այնտեղ ապրեցան, կարտագրվեր հատորի մը մեջ, առանց հեղինակի անվան և իբր տիտղոս ունենալով Համառօտ տեղեկատվություն Դ, շատ նշանակալի բաներ, զորս ս. Օգոստինոսի կրօնաւորները կատարեցին Պարսկաստանի մէջ ի ծառայություն Հռոմի ս. եկեղեցիին և Ն. Վեհափառության մինչև 1607 տարին: Հրամանաւ ս. Օգոստինոսի նահանգային մեծաւորին: Արտօնությամբ ս. հավատաքննության. Լիզպոն. Վիսենթէ Ալվարեզ, 1609[15]: Կթվի թե Ժ. տոս Սանթոսի գիրքին տպագրությունը քիչ ժամանակով կանխեց Համառօտ տեղեկատվության[16] հրատարակությունը և թե հետևաբար առաջինը եղավ, որ ծանոթացուց Պելշիոր տոս Սանթոս և Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիո հայրերուն տեղեկատվության այն մասը, որ կխոսի տոմինիկյան կրոնավորներու քրիստոնեական գործունեության մասին: Եթե սակայն, այսպես ըսելու համար, այս տեղեկատվությունը նույնն է երկու գրվածքներուն մեջ, այնտեղ բազմաթիվ տարբերություններ կան բաղդատմամբ այն ձեռագրին, որ վերնագրված

զորգե պատահածը, «և որպեսզի նույնը չկրկնվի դարձյալ, Ն. սրբությունը ամեն բանե առաջ Ժոզեֆ տե Մելլոյեն տեղեկություն քաղե փորթուկալցիներուն վրա, զորս կուզե ուղարկել վստահության գոյացնելու համար անոնց հատկություններուն և գործելու եղանակին մասին»: Տե՛ս նաև Ք. Ալոնսո, Անտիպ փաստաթուղթեր Կոայի արքեպիսկոպոս օգոստինյան եղբայր Ալեյքսո տե Մենեզեսի (1595—1612) կենսագրության համար, Օգոստինյան հավաքածու, հատ. ԻԷ, Հռոմ, 1964: Տե՛ս էջ 308: Համառոտագրություն մը Կոայեն 13 փետրվար 1605-ին եղբ. Ալեյքսո տե Մենեզեսի կողմե պապին ուղղված նամակին, որով կտեղեկացնե Ֆրանսիսքո տա Քոսթայի և Տիոկո տե Միրանտայի գայթակղալի ընթացքը:

[15] Այս գիրքը, զոր այսուհետև պիտի կոչենք Համառօտ տեղեկատվություն (շատ հազվագյուտ, քանի որ այժմ մեկ օրինակը միայն ծանոթ է), ընդհանրապես, բայց սխալ կերպով, վերնագրված է օգոստինյան հ. Անթոնիո տե Կուվեյիայի. տե՛ս Ռ. Կյուլպենկյան, Հ. Անթոնիո տե Կուվեյիա և 1609-ի Պարսկաստանի վրա «Համառոտ տեղեկատվության» հեղինակը, Արխիվ Փորթուկալի մշակութային կեդրոնի, հատ. Ը, Փարիզ, 1972:

[16] Ժոան տոս Սանթոսի գործը, թեև 1609-ին հրատարակված, տպագրված է 1608-ին, ինչպես կհաստատենք հատորին վերջը տրված ծանոթագրությամբ. «Տպագրված Էվորայի ս. հավատաքննության արտոնագրով և արքայական առանձնաշնորհումով, ձեռամբ Մանուել տե Լիրայի 1608»: Մինչդեռ «Համառոտ տեղեկատվությունը» տպագրված պետք է ըլլա միայն 1609-ին, քանի որ ս. օֆիսին կողմե տրված արտոնագրերը կկրեն 16 և 17 դեկտեմբեր 1608 թվականները:

է Տեղեկատվություն ի մասին Քրիստոնէության, զոր տեսանէ Պարսկաստանի և Հայաստանի մեջ և որ կգտնվի Լիզպոնի Թորրե տո Թոմպոյի ազգային գրադարանին մեջ[17]:

1610-ին Լիեժի ս. Օգոստինոսի մեծավոր եղբ. Ժորժ Մեկրե նույն քաղաքին մեջ կհրատարակեր ֆրանսերեն թարգմանությունը «Համառոտ տեղեկատվության», ընդլայնված ուրիշ տեղեկություններով[18]:

Եղբ. Լուիս տե Սուզա իր «Պատմություն ս. Օգոստինոսի Փորթուկալի թագավորության և նվաճումներուն առնչությամբ»[19] գործին երրորդ մասին մեջ կմեծարե հիշատակը ս. Օգոստինոսի կարգեն երեք կրոնավորներու, Պելշիոր տոս Սանթոս, Կիլեերմե տե Ակուսթինիո և Տիոկո տե Սանթա Անա, որոնց Պարսկաստանեն գրած նամակները «ծառայեցին Տեղեկատվության մը խմբագրության, զոր միաբանության մեծավորները Լիզպոնի մեջ հրատարակել տվին 1609-ին և որոնք տարածված են ամբողջ քրիստոնեության մեջ»[20]:

---

17 Արխիվ Թորրե տո Թոմպոյի, Լիզպոն, Ջանազանք, ձեռ. թիվ 1113, էջ 120—124, նոր թվագրությամբ 219—223ա, Անտոնիո Պախան, Ճանապարհորդություն ցամաքային ուղիով Հնդկաստանեն Փորթուկալ, Քոիմպրա, 1923։ Հառաջաբանին մեջ Պախան ձեռագիրը կհրատարկե իբր անտիպ, հետևյալ կարճ մակագրությամբ. Միամիտ և հուզիչ պատմություն անանուն և բարեպաշտ կրոնավորի մը ժէ դարուն սկիզբը։ Կյուլպենկյան. Լաւսերտայի դեսպանություն, փորթուկալերեն բնագիր, էջ 143—151 և ֆրանսերեն թարգմանություն ծանոթագրություններով, էջ 81—94։

18 Ժորժ Մեկրե, Համառոտ տեղեկատվություններ ի մասին Պարսկաստանի թագավորության մեջ Ավետարանի հառաջադիմություններուն մանրամասնականներու քրիստոնեացմամբ, պարսիկներու պատրաստության Ավետարանական առաքելության և հայերու միության Հռոմի եկեղեցիին հետ, սուրբ Օգոստինյան ճգնավոր կրոնավորներու կողմէ։ Նույն, Պարսկաստանի մեծ թագավորին նվաճումները մեր հասարակաց թշնամի թուրքերուն վրա, Լիեժ, 1610։

19 Լուիս տե Սուզա, տոմինիկյան, Երրորդ մաս ս. Տոմինիկոսի պատմության, Փորթուկալի թագավորության և նվաճումներուն առնչությամբ, եղբ. Լուիս տե Քասեկասի, նույն կարգեն և երկրեն և քրոնիկագիր անոր։ Վերամշակված ոճին և դասավորության մեջ և ընդլայնված դեպքերով և մասնահատկություններով եղբ. Լուիս տե Սուզայի կողմե, Դեմֆիքայի վանքեն, Լիզպոն, 1678։ Գ տպագրություն, Լիզպոն, 1866, հատ. Դ, էջ 297։ Եղբ. Լուիս տե Սուզա վախճանվեցավ 1632-ին, իր կենդանության հրատարակած ըլլալով առաջին մասը միայն իր պատմության, որ լույս տեսավ 1623-ին։ Երկրորդ մասը հրատարակվեցավ 1662-ին և չորրորդը, որ եղած է ոչ թե Լուիս տե Սուզայի, այլ եղբ. Ղուկաս տե Սանթա Քաթարինայի գրչեն, 1733-ին։

20 Լուիս տե Սուզա, անդ, էջ 297, կարճ ակնարկություն մը ընելով հանդերձ բազմաթիվ եկեղեցիներուն և վանքերուն, որոնք տոմինիկյան կրոնավորներով լեցված էին, ինչպես նաև Հայաստանի և Պարսկաստանի մեջ այն ավաններուն և վայրերուն, որոնք ամ-

Եթե, ինչպես կհավաստե Լուիս տե Սուզա, «Համառոտ տեղեկատվությունը» և անշուշտ նաև իր ֆրանսերեն թարգմանությունը մեծ ծավալում գտան իրենց շրջանին, ոչ մեկը այս գործերեն ուշադրության առարկան չէ դարձած այն հեղինակներուն, որոնք զբաղած են Նախիջևանի թեմին հայ կաթոլիկ համայնքներուն և հայ տոմինիկյան վանքերուն պատմությամբ։

Ճիշտ է, որ «Ս. Տոմինիկոսի քրիստոնեության» մասին օգոստինյան հայրերուն տված նկարագրությունը հարաբերաբար հակիրճ էր և քիչ կամ բնավ փոփոխություն ցույց չէր տար բաղդատմամբ անոր, զոր կատարած էր եղբայր Ազարիա մանրամասն կերպով 1602-ին և զոր Տոմենիքո Կրավինա իտալերենի թարգմանած, ընդլայնած և հրատարակած էր 1605-ին։ Անկե զատ, հայ-տոմինիկյանին կողմե տրված տեղեկությունները մեծ հետաքրքրություն արթնացուցած էին, որովհետև կզուգադիպեին շրջանի մը, ուր քիչ կային նոր ընդհանուր ծանոթություններ Երընջակի գավառին հայ-տոմինիկյան համայնքներուն նյութական և հոգևոր կեցության մասին։ Այսուհանդերձ, Պելշիոր և Կիլեերմե հայրերուն տեղեկատվությունը կարևոր նոր տարր մը կբերեր քանի որ կվերաբերեր 1604-ի հոկտեմբերին և նոյեմբերին իրենց կատարած այցելության, երբ այս հողամասը թրքական լուծեն անցած էր պարսկական տիրապետության։

Այսպես, երկու փորթուկալցի կրոնավորները ժէ դարուն եղած էին ոչ միայն եվրոպացի առաջին քարոզիչները, որոնք կայցելեին Մեծ Հայքի հայ-տոմինիկյան վանքերը, այլև միակն էին, որ ատիկա կընեին այն արմատական փոփոխութենեն առաջ, որ հառաջ պիտի գար Պարսկաստանի շահին ձեռք առած միջոցներեն, թրքական բանակներուն կարելի հակահարձակման առաջքը առնելու համար։ Արդարև, իրենց Ղազվին մեկնելեն քանի մը օր ետք, ուր դեսպան Լուիս Փերեյրա տե Լասերտայի հետ կերթային սպասելու շահ Աբբաս Ա-ի պատասխանը իրենց դեսպանության, այս վերջինը կհրամայեր քանդել և հրդեհել Ջուղա և Նախիջևան քաղաքները, ինչպես և տարագրել այս հողամասերուն բնակիչները։

Եվ սակայն, 1604-ին տեսնելով այս միսիոնարները առաջին անգամ և լսելով անոնց քարոզությունը, այս տոմինիկյան հայ կրոնավորները և անոնց հոտը վերհիշած պետք է ըլլան Բարթողոմեոս տե Փոտիոյի քարո-

---

բողջապես սրբ. քահանայապետին ենթակա հավատացյալներով բնակված էին, զորս երեք կրոնավորները «տեսան և շոշափեցին», չի հիշատակեր ըստ «Համառոտ տեղեկատվության», այլ ըստ այն քաղվածքին, զոր Սիրենի եպիսկոպոս Անթոնիո Կովեյիա կատարած է անկե։

գության շրջանը և տածել հույսը իրենց ճակատագրին բարելավման, մինչ ազատագրված էին Թրքական բռնութենէն և նոր տերը կթվեր հարգ և համարում ցույց տալ այս փոքրուկալցի կրոնավորներուն և անոնց ներկայացուցած իշխանության հանդեպ[21]։ Գալով օգոստինյան հայերուն, հալածյալ քրիստոնյաներու հետ առաջին այս շփման տպավորությունը խոր դրոշմ պիտի ձգեր իրենց վրա։ Սակայն ոչ իրենք, ոչ Նախիջևանի և Երնջակի գավառներուն կաթոլիկ հայերը և ոչ ալ Ջուղայի հայերը չէին կրնար նախատեսել, թե քանի մը օր ետք իրենցմե մեծ թիվ մը պիտի ճանչնար դեպի Պարսկաստանի խորերը բռնի տարագրության սարսափները։

Սկսյալ այդ պահեն և հակառակ անոր որ կաթոլիկ ընտանիքներուն մեծ մասը արտոնություն պիտի ստանար վերադառնալու իր բնակավայրը[22], ողբերգական վատթարացում մը կտեսնենք այս համայնքներուն կյանքի պայմաններուն մեջ։ 1613-ի մայիսին, Բոկոտն կարմելյաններու կարգին պատկանող երկու կրոնավորներ, Բենեթո տա Քրուզ և Պարթոլոմեո Մարիա տե Սան Ֆրանսիսքո, որ այն ատեն Պարսկաստան կգտնըվեին, պաշտոն ստացան երթալու Էջմիածին, Հայոց կաթողիկոս Մելքիսեդեկի մոտ։ Ճամփորդելով Սպահանեն Հայաստան, երկու կրոնավորները առիթը ունեցան այցելելու Նախիջևանի թեմը և խմբագրելու տեղեկագիր մը, որ բացահայտ կդարձնե թեմին հայ կաթողիկե բնակիչներուն ծայրա-

[21] Այս տոմինիկյան կրոնավորներեն չորսը նույնիսկ եկած էին Ջուղա դեսպան Լուիս Փերեյիրա տե Լասերտային խնդրելու համար, որ իրենց ի նպաստ միջամտե պարսիկ վեհապետին մոտ։ Հայր Պելչիոր հիշատակելով այս դեսպանը կավելցնե թե «իրենց վանահայրը հետևեցավ դեսպանին մինչև բանակատեղին շահեն ստանալու համար ջնջում մը քանի մը պարտքերու, որոնք կմնային Թուրքերու ժամանակեն։ Բայց որովհետև դեսպանը չէր կրնար իրեն օգնել, քանի որ չխոսեցավ Թագավորին հետ, մեկնեցավ և մեզի ընկերացավ մինչև Ղազվին, ուր բնակեցավ մեզի հետ։ Չհամարձակվեցավ իր եկեղեցիին մեջ մնալ, վախնալով որ պարսիկները կուզեին իրենց պարտքերը պահանջել։ Եվ եթե շահը մերժե հրաժարիլ այդ վճարումեն, որոշած է երթալ մինչև Կոա և ապրիլ ողորմությունով։ Տե՛ս Կյուլպենկյան, Դեսպանություն Լասերտայի, անդ, էջ 90։

[22] Այս տարագրյալներուն մեջ կգտնվեր Նախիջևանի ապագա արքեպիսկոպոսը, Օգոստինոս Պաճենց, որ 1605-ին շատ երիտասարդ էր։ Հետագային պիտի նկարագրե Երնջակի և Նախիջևանի բնակիչներուն կրած տառապանքները տարագրության ճամփուն վրա, իրենց գավառները վերադառնալու արտոնությունը ստանալե առաջ։ Տե՛ս «Ճանապարհորդություն Եվրոպայի մեջ գեր. եղբ. Օգոստինոս Պաճենցիի, հայ արք. Նախիջևանի, քարոզիչ եղբայրներու կարգեն, թարգմանված արքայական գրադարանի հայերեն ձեռագրեն, 31, Հավելված, էջ 131—154, Կրտսեր Պրոսեի կողմե», Ժուռնալ Ազիաթիք-ի մեջ, մարտ 1837, էջ 209—245 և մայիս 1837, էջ 401—421։

հեղորեն խախուտ կացությունը[23]։ Այս լուրերը վրդովեցին Վատիկանը և Տոմինիկյան միաբանության մեծավորը 1614-ին Նախիջևանի տոմինիկյաններու ընդհանուր վիճակավոր անվանեց հայր Ջիթթատինին[24]։ Այս վերջինը տեղվույն վրա հասնելեն ետք խմբագրեց երկու տեղեկագիր, մեկը 1614-ին և մյուսը 1617-ին Հայաստանի մեջ կաթոլիկության վիճակին մասին, հաստատելով կացության շարունակական վատթարացումը[25]։ 1622-ին հայ տոմինիկյան հայր Օգոստինոս Պաճենց, որ եղբայր Ջիթթատինիի ընկերացած էր առաջին առաքելության մեջ, Հռոմ վերադարձին ինքն ալ հուշագիր մը ներկայացուց նկարագրելով Նախիջևանի հայ տոմինիկյան վանքերուն վիճակը[26]։

Մինչդեռ հայ կաթոլիկ գավառներուն բնակչության մեծ մասը չէր հեռացած իր բնակավայրեն կամ վերադարձած էր այնտեղ, մյուս հայերը, մեծամասնությամբ Ջուղայեն, ճամփա հանված էին դեպի Սպահան, ուր հասան 1605-ի գարնան[27]։ Փոքրուկալցի օգոստինյան ճգնավորները, որոնք եվրոպացի միակ քարոզիչներն էին, որոնք հաստատ-

[23] Տե՛ս Հավատքի տարածման արխիվները, Զանազանք, հատ. 22, էջ 229—230։ «Տեղեկատվություն Նախիջևանի արքեպիսկոպոսության թեմին և Ֆրանկ կոչված հայերու մասին, կատարված բոկոտն կարմելյան հայրերու կողմե, որոնք այնտեղ այցելեցին»։ Օգոստինյան հայր Քարլոս Ալոնսո ասկե սպաներեն թարգմանված մաս մը հրատարակած է իր հատորին մեջ՝ Ջիթթատինի, էջ 24—26։ Անգլերեն հատվածներ ալ հրատարակված են «Քրոնիկ կարմելյաններու Պարսկաստանի» մեջ, հատ. Ա, էջ 211, Լոնտոն, 1939։

[24] Օգոստինոս Պաճենց կհավաստե, որ 1614-ին Պողոս Ե պապին մոտ իր միջամտության վրա է, որ միաբանության մեծավորը ընդհանուր վիճակավոր մը որոշեց անվանել հանձին եղբ. Պողոս Ջիթթատինիի. տե՛ս «Ճանապարհորդություն Օգոստինոս Պաճենցիի», անդ, էջ 414։

[25] Եղբ. Պողոս Ջիթթատինիի երկու տեղեկատվությունները հրատարակված են Ք. Ալոնսոյի կողմե, Ջիթթատինի, անդ, 212—218։

[26] Հավատքի տարածման արխիվ, Զանազանք. հատ. 22, էջ 221—222. Նաև Ալոնսո, Ջիթթատինի, անդ, էջ 64—65։

[27] Անթոնիո Կուվեյա, Պատմություն պատերազմներուն և մեծ հաղթանակներուն զորս Պարսկաստանի մեծ թագավոր Շահ Աբբաս տարավ ընդդեմ Թուրքիո սուլթան Մեհմետի և իր որդվույն Ահմետի, քաղված կաթոլիկ արքայական վեհափառություն Փորթուկալի թագավոր Ֆիլիփ Բ-ի կողմե ուղարկված օգոստինյան ճգնավորներու դեսպանութենեն։ Կա նաև նույն գործին ֆրանսերեն թարգմանությունը, վերամշակված և հրատարակված Ռուանի մեջ 1646-ին նույն վերնագրով։

Կուվեյա, էջ 146, կգրե թե հայ քրիստոնյա ժողովուրդեն համայնքներ որոնք Հռոմի եկեղեցիին կհնազանդին, թեև թալանված և կեղեքված պարսիկներեն, մնացին սակայն իրենց տունը և հայրենիքը առանց ենթակա ըլլալու տեղահանության, ինչպես պարտավորվեցան ընել հերձվածող հայերուն մեծ մասը։

ված էին Պարսկաստանի մեջ 1602-էն իվեր, տեսնելով այս ճարահատ ժողովուրդը, որ կուգար իր գլուխը ունենալով Դավիթ Դ կաթողիկոսը, բերեցին այս դժբախտ քրիստոնյաներուն ոչ միայն իրենց բարոյական նեցուկը, որուն այնքան պետք ունեին անոնք այդքան անգութ հարվածի մը տոկալու համար, անոնց բաշխեցին նաև ինչ դրամ որ ունեին ամոքելու համար ամենեն ավելի գրկյալներուն անձկությունը[28]:

Այս դժբախտ իրադարձություններեն ետք օգոստինյան կրոնավորները չդադրեցան սակայն գործոն կերպով հետաքրքրվելե կաթոլիկե հայերով, որոնք կբնակեին Նախիջևանի և Երնջակի գավառներուն մեջ, մանավանդ որ այս վերջինները բազմաթիվ տարիներ մնացած էին առանց արքեպիսկոպոսի: Նույնիսկ հայ-դոմինիկյան եղբայր Մաթեոս Երազմի իր պաշտոնին գլուխը հասնելեն ետք 1608-ին, օգոստինյանները եռանդուն մրցակցություն մը ցույց տվին բոկոտն կարմելյաններուն հետ, որոնք Պարսկաստան կհասնեին Կղեմես Ը կողմե ուղարկված, կաթոլիկ հայերուն պաշտպանությանը համար, ոչ այնքան պապին, որքան շահ Աբբասի մոտ, որ հասկնալի պատճառներով ավելի ուշադրությամբ կունկնդրեր եվրոպացի քարոզիչներուն, քան թե իրեն հպատակ հայ-դոմինիկյաններուն տրտունջներուն[29]:

1616-ին է միայն, որ քարոզիչ եղբայրներու կարգին ընդհանուր վիճակավոր և հետո (հուլիս 1627-ին) Նախիջևանի արքեպիսկոպոս դարձած եղբ. Պողոս Ջիթթատինիի գալուստով վերահաստատվեցավ իր միաբանության կրոնավորներուն պարբերական այցելություններուն շարքը,

[28] Պատմություն, անդ, էջ 147—150:

[29] Տե՛ս Ս. Լոփեզ—Ք. Ալոնսո, Երկու նամակներ Պարսկաստանի մեջ օգոստինյան առաքելությանց առաջին շրջանին մասին, իտալերեն, Օգոստինյան հավաքածոյին մեջ, հատ. ԻԴ, 1961, էջ 182: Տիոկո տե Սանթա Անա, 3 դեկտեմբեր 1607-ին Սպահանեն պապին գրված նամակի մը մեջ կթելադրե, որ Պարսկաստանի մեջ Կոայի արքեպիսկոպոս Ալեյքսո տե Մենեզեսի ներկայությունը մեծապես օգտակար կրնա ըլլալ հայ-«ֆրանկ»ներու քաղաքը աղջիկներու և մանչերու վարժարանով մը օժտելու համար:

Իր կողմե հայր Կիլեերմե տը Սեն-Թ՚Օկյուսթեն հաջողած էր շահ Աբբասեն ստանալ տուրքերու վրա զեղչ մը ի նպաստ կաթոլիկ հայերուն, շնորհ զոր կարմելյան կրոնավորները եւ իրենց ջանքերուն կվերագրեն, Հարրման, օգոստինյան, Վիլերմ սրբ. Օգոստինոսի և իր ժամանակը (անգլ.) Օգոստինյան հավաքածո, Ի, Լովեն, էջ 227, ծանոթ. 173:

Նմանապես, Նախիջևանի կաթոլիկ հայերուն համար դիմումներուն վրա հայր Բրտան տը լա Քռուա և հայր Պարթելըմի տը Սեն Ֆրանսուա, Բոկոտն կարմելյաններու կարգեն, 1613-ին միջամտեցին շահ Աբբասի մոտ, երբ թագավորը Թավրիզ կգտնվեր, և գոհացում ստացան; որպեսզի այլուր փոխադրվի նահանգին կառավարիչը, որ անգթորեն կճնշեր զանոնք, Ալոնսո, Ջիթթատինի, անդ, էջ 25:

մանավանդ 1622-ին Հավատքի տարածման միաբանության ստեղծումեն ետք[30]:

Ատկե առաջ, 1608-են 1613, փորթուկալցի հայր Կիլեերմե տը Սեն-Թ՚Օկյուսթեն, հաճախ պիտի երթա այցելելու Նախիջևանի և Երնջակի գավառները և 1613 տարվո վերջավորությանը այնտեղ պիտի նահատակվի, գլխատվելով մահմետական հեծյալներու կողմե[31]: Նույնպես պիտի նահատակվի իր երկու հայ կաթոլիկ ընկերակիցներեն մեկը, Հովսեփ Ապարանեցի[32], նետահար եղած, իսկ մյուսը, Պետրոս, որ մեռած կարծված էր, պիտի վերապրի և պիտի երթա լուր տալու Գեղարքունյաց «Ֆրանկ» գյուղին հայ բնակիչներուն: Այս վերջինները գաղտ գաղտ թաղեցին երկու մարտիրոսները, մեկը մյուսեն զանազանելու համար հատուկ նշաններ դնելով երկու գերեզմաններուն վրա, որոնք կմեծարվեին հայերուն կողմե: 1617-ին, հայր Պելշիոր տոս Անժոս ուզեց իր նախկին ընկերոջ մարմինը փոխադրել, բայց հանդիպեցավ հայերու բուռն ընդդիմության: Ի տես հայերուն անկեղծ զգացումին հանդեպ իրենց «սուրբ մարտիրոսին», ինչպես հայերը զայն կկոչեին, հայր Պելշիոր հավնեցավ Մաթեոս Երազմ արքեպիսկոպոսին թողուլ մասունք մը, հայր Կիլեերմի թևին մեկ

[30] Պողոս Ջիթթատինիեն ետք ուրիշ իտալացի քարոզիչ եղբայրներ, Գրիգոր Օրսինի (1623), Թոմաս Վիթալե (1637), գովեստի պիտի արժանան այս երկրամասին մեջ իրենց կատարած քարոզչական աշխատանքին համար, ինչպես նաև հ. Պողոս Փիրոմալլի (1631), որ 1665-ին Նախիջևանի արքեպիսկոպոս պիտի ըլլա, տե՛ս Ուտէնրիյն, անդ, էջ 50:

[31] Կիլեերմե տը Սեն-Թ՚Օկյուսթենի կյանքին և նահատակության մասին տե՛ս Ա. Հարրման, անդ, էջ 181—234, 580—636, և Ռ. Կյուլպենկյան, Լասերտայի դեսպանությունը, էջ 49—57: Անթոնիո Կովեյիա, Փառապանծ հաղթանակ երեք սպանիացի մարտիրոսներու, ս. Օգոստինոսի կարգեն երկու փորթուկալցի եղբայրներու և Մատրիտի զավակ մեկ բասթիլիացիի, Մատրիտ, 1623, անդ, գլուխ Ժ—ԺԷ:

1616-ին Նախիջևանի արքեպիսկոպոս Մաթեոս Երազմ գրեց Սպահանի օգոստինյան հայրերուն և նույն քաղաքին մեջ բոկոտն կարմելյաններու վիճակավոր հայր Ժուան Թատեո տե Սան Էլիզեոյի, պատմելով իր քաղած տեղեկությունները նահատակության վայրին դրացի բնակիչներեն: 4 ապրիլ 1633-ին իր հաջորդը եղբ. Օգոստինոս Պաճենց նույն նյութին վրա կատարած էր գրավոր վկայություն մը, որուն սկզբնագիրը կգտնվի Լիզպոնի ազգ. դրադարանին, Թորրե տե Թոմպոյի մեջ, Ձեռ. Թ. 731, էջ 291—292, վկայություն, զոր հրատարակած է Ք. Ալոնսո «Առաքելություն Ս. Օգոստինոսի կարգին ի Վրաստան 1628—1639»: Օգոստինյան հավաքածո, Հռոմ, հատ. ԼԹ, 1965, էջ 264—265:

[32] Ապարանեցի Հովսեփ չորս տարին իվեր կծառայեր Սպահանի օգոստինյան հայրերու վանքին մեջ: Անբասիր և առաքինի, երդում ըրած էր երբեք զանոնք չթողելու: Մեծավորը իրեն տված աշխարհական ծառայողի զգեստ, ըլլալով անոնցմե, զոր նույն միաբանության սահմանադրության մեջ կկոչե «բոմիզո», տե՛ս Հարրման, անդ, էջ 608:

ոսկորը, զոր տոմինիկյան հայ կրոնավորները տարին մեծ երկյուղածությամբ, մինչ մյուս նշխարները փոխադրվեցան Օրմուզ և հետո Կոա, Կրասայի վանքը[33]։

Եղբ. Ժոան տոս Սանթոսի գիրքին ընթերցումը, որ մասնավորաբար կպարունակեր Մեծ Հայքի մեջ տոմինիկյան կրոնավորներու քրիստոնեական գործունեության մասին Պելչիոր և Կիլեերմե հայերուն խմբագրած բնագիրը, նկարագրելով միաժամանակ Նախիջևանի հայ-տոմինիկյան արքեպիսկոպոս Ազարիա Ֆրիտոնի և անոր նախորդներուն կրած տառապանքները վասն հավատքի, կթվի թե որոշիչ ազդեցություն մը գործեց փորթուկալցի քարոզիչ եղբայր Անթոնիո տա Էնքարնասիոնի քարոզչական կոչումին վրա[34]։

Այս վերջինը, որ ծնած էր Էվորա, ինչպես եղբայր Ժոան, նույն քաղաքին Ս. Տոմինիկոս վանքին մեջ ուսանելե ետք գնաց Հնդկաստան, ուր սորվեցավ սքոլաստիկ գիտությունները Կոայի Ս. Թոմաս վարժարանին մեջ։ 1630-ին ստանալով աստվածաբանության պսակավորի վկայականը, եղբ. Անթոնիո որոշեց Փորթուկալ վերադառնալ և ընտրեց Հայաստանի ճամփան, ուր Նախիջևանի հայ տոմինիկյաններու ոգվույն մեջ Ավետարանի ձայնին արդեն տկարացած արձագանքը իր սիրտին դպավ, և մնաց այնտեղ։ Հայերեն սորվեցավ և այդ լեզվով թարգմանեց Քարոզիչներու կարգին սահմանադրությունը, Պատարագամատույցը և Աղոթարանը։ Շուրջ 1641 թ. համաձայն հայ կրոնավորներու ցանկության, որոնք Հռոմ դիմած էին, անվանվեցավ և հաստատվեցավ նահանգային մեծավոր Նախիջևանի, դառնալով ոչ միայն միակ փորթուկալցի տոմինիկյանը, որ այդ պաշտոնը ստացած էր, այլև առաջին ոչ-հայ տոմինիկյանը ԺԴ դարեն իվեր[35]։ 1642-ին երկու ամիս մնաց Սպահանի Օգոստինյան հայրերու վանքը, ուր քարոզեց հայերեն, սպասելով որ Փորթուկալ մեկնի, որովհետև անհամաձայնություններ ծագած էին իր և Նախի-

[33] Կյուլպենկյան, անդ, էջ 54—55։

[34] Անթոնիո տե Էնքարնասիոնի մասին տ. Պարպոզա Մաշատո, անդ, հատ. Ա, էջ 258—259 և եղբ. Ղուկաս տա Սանթա Քաթարինա, Գ մաս Ս. Տոմինիկոսի պատմության, հատ. Ե, 1886-ի հրատարակության, էջ 88—91։

[35] Ալիշան, անդ, էջ 389, կուտա Նախիջևանի նահանգին ամբողջ եղբայրներու նահանգային մեծավորներու ցանկը 1333-են մինչև 1782։ Առաջին ութը հայեր են և հաջորդը, Անտոն Լուսիտանացի ԺԷ դարու 40-ական թվականներուն անվանված Անթոնիո տա Էնքարնասիոնն է։ Մյուս եվրոպացի նահանգայինները եղան լեհ Անժելո Սմոլենսքի, 1709-ին, և Պեռնաո Պերկումի, 1722-ին, անդ, ծանոթ. 11, էջ 125։

ջևանի արքեպիսկոպոս Օգոստինոս Պաճենցի միջև։ Պաճենց չէր ուզեր, որ եղբ. Անթոնիո տա Էնքարնասիոն նահանգային մեծավորի պաշտոն վարե, վասնզի ինքն է, կըսեր «Եկեղեցականը այդ առաքելության, ժողովուրդին և կրոնավորներուն»[36]։

Բայց ճակատագիրը ուրիշ բան սահմանած էր և եղբ. Անթոնիոյի առաքելությունը կաթոլիկ հայերուն մոտ այդտեղ կանգ պիտի չառներ։ 21 հունիս 1644-ին օգոստինյան հայր Ժոզե տը Ռոզարիոյի կողմե Սպահանեն գրված և Հավատքի տարածման քարտուղար գերապատիվ Ֆրանսիսքո Ինկոլիի ուղղված նամակե մը կտեղեկանանք, որ եղբ. Անթոնիո, որ երեք տարի առաջ ճամփա ելած էր Փորթուկալ վերադառնալու համար, նավաբեկության ենթարկված էր և վերստին գացած էր Սպահան, անձկությամբ բաղձալով վերագտնել Նախիջևանի նահանգը, «հարատևելու և իր միաբանության վերանորոգմամբ դրաղելու, ինչպես նաև հերձվածող հայերը Հռոմի ենթարկելու որոշումով»[37]։

Սպահանի օգոստինյան վանքին մեջ եղբ. Անթոնիո վերագտած էր տոմինիկյան Պողոս Փիրոմալլին, որ այնտեղ կբնակեր ավելի քան երեք ամիսե իվեր և երկուքը միասին որոշեցին երթալ Երնջակ[38]։ Երկուքին ալ մեծ գովեստը ընելով, հ. Ժոզե տե Ռոզարիո ջերմորեն կխնդրե Հավատքի տարածման կարտինալ վերատեսուչեն որ «մեր Տեր Աստուծո սիրույն համար, ինչպես և այնքան բազմաթիվ հոգիներու բարիքին համար՝

[36] Նամակ հայր Ժոզե տը Ռոզարիոյի առ կարտինալ Պարպերինի, Հավատքի տարածման վերատեսուչ, գրված Սպահանեն 13 սեպտեմբեր 1642-ին, հրատարակված ձեռամբ Ք. Ալոնսոյի, օգոստինյան, «Հայր Ժոզե տը Ռոզարիո, օգոստինյան և Օգոստինյան առաքելությունը Պարսկաստանի մեջ», Օգոստինյան հավաքածո, հատ. ԻԹ, Հռոմ, 1966, էջ 290—291։

[37] Անդ, էջ 300—304։ Խնդրո առարկա նամակին մեջ հ. Ժոզե տը Ռոզարիո վեր կհանե մասնավորաբար եվրոպացի կրոնավորներուն համար լավ հայերեն գիտնալու կարևորությունը. «Մեր Տիրոջ համար մեծ ծառայություն պիտի ըլլա, որ Պարսկաստան գտնվող կարգերուն մեջ հայերեն ուսուցանվի և եթե պետք ըլլա կրոնավորները երթան Ալինճա (Երնջակ) և այնտեղ իրենց տրվի անհրաժեշտ և թեմական եպիսկոպոսները իրենց արտոնություն տան այդ նպատակով և կամ հակառակ պարագային այդ լեզուն սորվին իրենց սեփական վանքերուն մեջ։

Հայր Ռոզարիո կըսե թե հոժարությամբ պիտի ընկերանար հ. Փիրոմալլիին Երնջակ երթալու և հայերեն սորվելու համար, բայց կընե միայն ինչ որ իր մեծավորը իրեն կհրամայե։

[38] Մ. Ժ. Սեն-Մարթեն, Պատմական և աշխարհագրական հուշագրություն Հայաստանի մասին, Փարիզ, 1818, հատ. Ա, էջ 147. «Կերևի որ պարսիկները ներկայի Ալինճա (Երնջակ) անունը կուտան Նախիջևանը շրջապատող վայրերուն»։

խնդրէ սրբազան միաբանութենէն, որ ոչ մէկը Աստուծո այս երկու ծառաներէն չհեռանա այդ երկրէն և թե Նախիջևանի արքեպիսկոպոսը անոնց ցույց տա մեծ սեր և ընծայե իր օժանդակությունը և օգնությունը այս կրոնավորներուն և բոլոր այս քրիստոնյա համայնքին վերանորոգման համար, որուն այնքան պետք ունին անոնք»[39]։

Հակառակ Հ. Ժոզե տը Բոզարիոյի հորդորներուն, 1650-ին եղբ. Անթոնիոն կգտնենք Հռոմի մեջ, ուր իբր «տեֆինիտոր» կծառայե Տոմինիկյաններու կարգին եպիսկոպոսական ժողովին։ Փորթուկալ վերադարձին ընտրված էր Պեմֆիքայի տոմինիկյան եղբայրներու տան մեծավոր։ 1622-ին եղբ. Անթոնիո տա Էնքարնասիոն կստանձներ հրատարակությունը ս. Տոմինիկոսի Պատմության, զոր հեղինակած էր եղբ. Լուիս տե Սուզա, խմբագրելով Նախաբանը, ինչպես և հեղինակին կենսագրությունը և կատարելով հավելումներ, ինչպես նկարագրությունը Պեմֆիքայի վանքին։ Եղբայր Անթոնիո տա Էնքարնասիոն վախճանեցավ 15 հոկտեմբեր 1665-ին և թաղվեցավ Լիզպոնի Սան Տոմինիկոս եկեղեցվույն կրոնավորներու դամբանին մեջ[40]։

Փորթուկալցի քարոզիչ եղբայրներու և հայ-տոմինիկյան համայնքներու հարաբերություններուն վերաբերյալ այս գլուխը փակելե առաջ կմնա լուսաբանել երկրայություն պատճառող կետ մը։ Հակառակ անոր, որ խնդրո առարկա չի կրնար ըլլալ ոևէ փորթուկալցի կրոնավորի Նախիջևանի արքեպիսկոպոս ձեռնադրված ըլլալը, քարոզիչ եղբայր Ղուկաս տը Սանթա Քաթերինա տարօրինակ կերպով կհիշե Տ. Եղբայր Ակոսթինեո տաս Շակասը, անվանված Ուրբանոս Ը պապին կողմե և մեռած 1653-ին[41]։

Արդ, անվիճելի է, որ հայ-տոմինիկյան Օգոստինոս Պաճենց Նախիջևանի արքեպիսկոպոս ձեռնադրվեցավ 1629-ին և վախճանեցավ

[39] Տե՛ս ծանոթ. 36, էջ 300—302։

[40] Գալով եղբայր Պողոս Փիրոմալլիի, այլևայլ իրադարձություններե ետք ափրիկեցի ծովահեններու կողմե պիտի գերվի Միջերկրականի մեջ, երբ Իտալիա կվերադառնար. ուր հասած ըլլալով արդեն Նախիջևանի արքեպիսկոպոս Օգոստինոս Պաճենցի մահվան լուրը, անոր հաջորդ ընտրվեցավ 14 դեկտեմբեր 1655-ին։ Նոր արքեպիսկոպոսը 1657-ին միայն իր պաշտոնատեղին հասավ, բայց չկարենալով բարվոք հասկացողության գալ հայ-տոմինիկյաններու հետ Հռոմ վերադարձավ 1662-ին և մեռավ 1667-ին։

[41] Ղուկաս տե Սանթա Քաթերինա, անդ, էջ 435. «Տ. եղբ. Ակոսթինեո տաս Շակաս, փորթուկալցի, Ուրբանոս Ը կողմե ընտրվեցավ արքեպիսկոպոս Նախիջևանի, Հայաստանի մեջ։ Իր մեջ կփայլեին իր մեծ կարողությունները, խոհեմությունը և եռանդը. վախճանեցավ անբասիր եկեղեցականի համբավով 1653 տարին»։

1653-ին։ Կասկածե դուրս կթվի, որ եղբ. Ղուկաս նույն անձին մասին կխոսի և այն ատեն հարց կծագի, թե ինչպե՞ս կրցած է փորթուկալյան ծագում մը վերագրել անոր և Օգոստինոս տաս Շակասի կոչումով անվանել զայն։ Շատ կարելի է, որ Օգոստինոս Պաճենց այս անունը ստացած է 1607 և 1608 տարիներուն, երբ 15-են 16 տարեկան էր և աշխարհական ըլլալով ժամանակ մը ծառայեց Սպահանի ս. Օգոստինյան կարգին կրոնավորներուն[42]։ Օգոստինոս տաս Շակասի, այսինքն «տառապանքներու և ցավերու» անունը կրնա տրված ըլլալ իրեն իբր հետևանք այն տանջանքներուն որոնց ենթարկվեցավ 1605-ին հայերի բռնագաղթին միջոցին և զորս ինքն իսկ նկարագրած է իր ուղեգրության մեջ[43]։

Շատ հավանական է, որ իրեն կակնարկե, առանց անունը տալու, Հ. Տիոկո տե Սանթա Անա, որ կըսե թե 1607-ին հանդիպեցավ ապարաներցի երիտասարդ հայու մը, տասնըհինգ տարեկան, որ կփափագեր կրոնավոր դառնալ ս. Տոմինիկոսի կարգին, բայց ինքը զայն կկրթեր և կպատրաստեր իր ս. Օգոստինոսի կարգը մտցնելու համար[44]։

Օգոստինոս Պաճենց Սպահանեն Հռոմ մեկնեցավ Մոսկովի ճամփով

[42] Նամակ Հ. Ամբրոսիոս տոս Անժոսի, գրված Վրաստանեն 29 հունիս 1628-ին, անդ, էջ 61. Համառոտ պատմություն մեր հայր սուրբ Օգոստինոսի կրոնավորներուն քրիստոնեական գործունեության Արևելքի մեջ, անոնց ձեռք բերած բարեբաստիկ արդյունքներուն, քաղված գլխավորաբար այդ տարիներուն նամակներեն, ուր կպատմվին շատ նշանակելի բաներ, Լիզպոն, 1630։ Տե՛ս նաև Անթոնիո տա Սիլվա Րեկո, Վավերագիրներ արևելքի մեջ փորթուկալցի հայրերուն առաքելության պատմության համար, հատ. 12, էջ 204։

[43] Տե՛ս վերև, ծանոթ. 22։

[44] Լոփեզ-Ալոնսո, անդ, էջ 180. տե՛ս Տիոկո տե Սանթա Անայի նամակը 3 դեկտեմբեր 1607 թվակիր, ուղղված պապին, ուր օգոստինյան կրոնավորը կպատմե իր ճամփորդությունը նույն տարվո հունիս ամսույն Նախիջևանի և Շամախիի շրջանին մեջ շահ Աբբասը գտնելու համար և խոսելով «ֆրանկ» կոչված հայերու մասին կգրե. «Այս ճամփորդության համար գտա շատ ազնիվ երիտասարդ մը, հայու զավակ, Ալպարավիզ (այսպես) կոչված գլխավոր քաղաքեն, որ երեք լեզվի կտիրապետե. պարսկերեն, թուրքերեն և հայերեն և այդ լեզուներով կգրե։ Կուզեր տոմինիկյան կրոնավոր ըլլալ և ես զինքը կկրթեմ և կպատրաստեմ մեր միաբանության եկեղեցական և կրոնավոր դառնալու համար. բայց տարիքը պակաս է, քան տարեկանեն ավելի ցույց չտալով թեև ինքը կըսե թե 15 տարեկան է. բայց մարմնով մեծ է և լավ կազմված։ Ձեր սրբությունը թող ընե ինչպես որ հարմար է և գիտնա որ պետքը անբացատրելի է»։

Արդ, գիտենք, որ Օգոստինոս Պաճենց կծառայեր Րոպեր Շըրլեյի, որ այն ատեն կընկերանար շահ Աբբասի և Տիոկո տե Սանթա Անա հանդիպեցավ Շըրլեյի և անոր հետ ճամփորդեց ատեն մը։ Տե՛ս Կյուլպենկյան, անդ, էջ 138։

դեսպան Ռոպեր Շըրլեյի հետ, 1608-ի փետրվարին։ Քրաքովի մեջ իրարմե բաժնվելով, Օգոստինոս 1610-ին առանձին գնաց Լիվորնո, ուր մնաց 10 օր, և այնտեղ անշուշտ շփման մեջ մտավ օգոստինյան և տոմինիկյան կրոնավորներու հետ, թերևս նույնիսկ Օգոստինոս տաս Շակաս անվան տակ։

Եթե այդպես է, այս կոչումը բոլորովին թողած պետք է ըլլա երբ 2 ապրիլ 1614-ին Հռոմի մեջ տոմինիկյան կրոնավոր ձեռնադրվեցավ[45]։

Մեկ կողմե հայ-տոմինիկյան կրոնավորներու և մյուս կողմե փորթուկալցի տոմինիկյաններու և օգոստինյաններու միջև գոյություն ունեցող հարաբերություններու մասին այս հակիրճ տեսությենեն ետք հաջորդող էջերուն մեջ կուտանք «Պելչիոր և Կիլեերմե հայրերուն ս. Տոմինիկոսի կրոնավորներուն քրիստոնեական գործունեությունը» երկասիրության այն մասը, զոր Ժոան տոս Սանթոս արտագրած է և ուր կճշտե, որ այս նկարագրությունը բոլորովին համապատասխան է շատ կետերու մեջ անոր, զոր Ազարիա արք. Ֆրիտոն իրեն կատարած էր[46]։ Սակայն Ժոան տոս Սանթոս երկուքին միջև նշած ըլլալով տարբերություն մը Բարթողոմեոս տե Փատուայի նահատակության ձևին վերաբերմամբ, ճշտումներ խնդրեց Նախիջևանի արքեպիսկոպոսեն, ինչ որ իրեն թույլ տվավ երկու նկարագրությունները հաշտեցնելու[47]։ Հակառակ անոր, որ Ժոան տոս Սանթոս իր արտագրությունը կատարելե ետք կըսե թե «ասոնք բառերն են այն նկարագրության զոր օգոստինյան հայրերը Պարսկաստանեն ղրկած են», կարելի է հարց տալ թե արդյոք Ազարիա Ֆրիտոն տեղեկանալե ետք այդ տեղեկագրության, չէ՞ թելադրած կատարել քանի մը ճշտումներ և ջնջել կարգ մը մասեր։ Այդ է որ տեղին պիտի ըլլա ենթադրել, երբ կբաղդատենք մեկ կողմե նկարագրության բնագիրը, որ նույն ձևով հիշատակված է Ժոան տոս Սանթոսի և «Համառոտ տեղեկատվության» բանաքաղին կողմե նույն տարին, 1609-ին և մյուս կողմե Թորրե տե Թոմպոյի բնագրին հետ։

Այս վերջինը, որ կրնա սկզբնագիրը ըլլալ, բավական նշանակալից տարբերություններ ցույց կուտա հրատարակված բնագրին հետ և կրնա արդարացնել Նախիջևանի արքեպիսկոպոսին միջամտությունը։ Հետևաբար, շեղագիր նշանակեցինք ինչ որ չի գտնվիր Թորրե տո Թոմպոյի ձեռագրին մեջ և ծանոթագրություններով ցույց տվինք ամեն անգամ, որ ի հայտ կուգան ջնջումներ և բառերու կամ ամբողջ նախադասություններու փոփոխություններ։ Հարկադրաբար, հոս ևս կրկնված են որոշ ծանոթագրություններ, որոնք առկա են նախորդ հոդվածի նշված էջերում։

---

[45] Երբ քանի մը տարի ետք Մեծ Հայք վերադարձավ, եղբ. Օգոստինոս Պաճենց լավ հարաբերություններ պահեց ս. Օգոստինոսի և Կարմելյան եվրոպացի կրոնավորներու հետ։ 1628-ին, երբ վանահայր էր Ապարաների վանքին, օգնություն և աջակցություն ցույց տվավ փորթուկալցի կրոնավորներ հայր Ամբրոսիոս տոս Անժոսի և անոր ընկեր Փետրո տոս Սանքթյուսի, Վրաստանի մեջ անոնց առաքելության առթիվ. տե՛ս նամակ հ. Ամբրոսիոսի 20 հունիս 1628-ին։

Նույն տարվո ընթացքին Օգոստինոս Պաճենց հաջորդ նշանակվեցավ Մաթեոս Երազմի իբր արքեպիսկոպոս Նախիջևանի։ Եպիսկոպոսական ձեռնադրության համար Հռոմ երթալե առաջ գնաց Սպահան իր բարեկամ փորթուկալցի Օգոստինյան և Բոկոտն Կարմելյան կրոնավորներեն պապին ուղղված հանձնարարական նամակներ ստանալու համար։ Տ. Ալոնսո, Ջիթթատինի անդ, էջ 143։

Ավելի ետքը 1633-ին, օգոստինյան հայրերու խնդրանքով Կիլեերմե տե Սանթա Ակոսթինոյի նահատակության մասին պատրաստեց գրավոր վկայություն մը։ Տե՛ս Ալոնսո, Օգոստինյան հավաքածո, հատ. ԼԸ, էջ 264—5։

[46] Սանթոս, անդ, էջ 9ա։

[47] Նույն, էջ 9բ։

Ս. ՏՈՄԻՆԻԿՈՍԻ ԿՐՈՆԱՎՈՐՆԵՐՈՒՆ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Ջուղա էինք տեսանք դեսպանին մօտ մուտքը չորս մարդերու, որոնք հագած էին քիմոնո և կկրեին գդակներ, քիմոնոյին վրա կկրեին ճերմակ մեծ փորուրարներ և իբր վերարկու ունեին կնգղավոր և մթագույն թեզանիքով լայն զգեստ մը։ Կուգային երեք մղոն հեռու գտնվող գյուղե մը դեսպանեն խնդրելու համար, որ իրենց ի նպաստ միջամտե շահին մօտ թեթևցնելու համար թուրքերուն պարտադրած լուծը։ Ամենն ալ եկեղեցականներ էին ու տոմինիկյան վանական, հռոմեական եկեղեցվույն ենթարկված, որմե կստանան իրենց եկեղեցականները շուրջ երեք հարյուր տարիե իվեր[48] *և այս պատճառով զիրենք կկոչեն ֆրանկ, տարբեր ըլլալով մյուս* հայերեն, որոնք կհպատակին Հայոց պատրիարքին և հերձվածողներ են[49]: *Փափաքելով տեսնել իրենց գյուղը և իրենց քրիստոնեական վարքը, և տեսնելով, որ դեսպանը չէր ուզեր երկու մղոն ճամփորդություն մը կատարել, մենք որոշեցինք երթալ, միասին առնելով երեք զինվոր և եկեղեցական մը, որ մեր մօտ մնացած էր այդ նպատակով։ Հասանք նույն օրը կեսօրե ետք։ Մեծ գյուղ մըն էր* կամ ավելի ճիշտ ըսելու համար՝ գյուղաքաղաք մը[50] *և մեզի տեսնելով քրիստոնյաները կփութային գալ և համբուրել մեր ձեռքը։ Եվ երբ հասանք եկեղեցիին առջև, բոլոր եկեղեցականները (շուրջ յոթը)*[51] *դուրս ելան մեզի կատարելով սիրալիր ընդունելություն։ Եկեղեցին մտնելով գտանք օրհնված ջուր* զոր հերձվածող հայեր չեն գործածեր, *և խորաններ մերիններուն նման։ Աղոթեցինք երկյուղածությամբ, ուրախությամբ տեսնելով Քրիստոսի հավատքը իր ամբողջ կատարելությամբ Թուրքիո մեջտեղը, եկեղեցականները մեզի տարին ավանդատուն, ուր մեզի ցույց տվին խույրերը և կրոնական զարդարանքները իրենց եպիսկոպոսին*[52], *որ մեռած էր երկու*[53] *տարիե իվեր։ Անոնցմե մեկ քանին թանկարժեք էին,* բայց արդեն հնամաշ, *և կկրեին զինանշաններ պապերուն, տրված ըլլալով այս վերջիններեն։*

Մեզի ցույց տվին նաև արծաթյա մեծ խաչ մը Հռոմի մեջ շինված, բազմաթիվ մասունքներով, ինչպես նաև մասունքներ սուրբ խաչին փայտեն և սուրբերեն, ամենն ալ Հռոմեն եկած։ Այնուհետև մեզի հրամցուցին պարզ ճաշ մը։ Եվ հայր Պելչիոր պատվիրեց[54], *որ հաջորդ առտու եկեղեցի հրավիրեն գյուղին բոլոր բնակիչները, որովհետև կուզեինք պատա-*

---

[48] *Տես. Թորրե տո Թոմպոյի ազգ. արխիվներու. 400 տարի. Ավելի ճիշտ է երեք հարյուր տարի, ըլլա հիմնվելով Բարթողոմեոս տե Փոտիոյի և Պետրոս տ'Արագոնի Արենեը գալուստին, ըլլա 1333-ին Հայաստանի մեջ ունիթոր եղբայրներու միաբանության հիմնարկության վրա։*

[49] *Կարելի է ենթադրել, որ Նախիջևանի արքեպիսկոպոսն է, որ ուզած էր այս ճշտումը կատարել զանազանվելու համար հայոց պատրիարքեն (կաթողիկոսեն)։*

[50] *Այստեղ կակնարկե Ապարաներ, Ապպարաներ, Ապարան կամ Ապրաներ գյուղաքաղաքը, որ կգտնվի Երնջակ գետին արևմտյան ափին վրա, Նախիջևանեն շուրջ երեք մղոն հեռու։ Այնտեղ կար կարևոր վանք մը, ուր էր ԺԶ դարեն իվեր Նախիջևանի արքեպիսկոպոսին աթոռը։ Այս վերջինը հալածանքի ենթարկված թողած էր քաղաքը և ապաստանած Ապարաներ, լքելով ունիթորներուն կառուցած հին մայր եկեղեցին, որ մզկիթի վերածվեցավ։* Ուտենրիյն, *Նախիջևանի արքեպիսկոպոսներ, անդ, էջ 189—190։ Ապարաների վանքին մասին տե՛ս Ուտենրիյն, Ապարանի վանքերը, Արխիվ քարոզիչ եղբարց, հատ. Ա, էջ 265—281, Հռոմ, 1932։ Տե՛ս վայրին զանազան կոչումներուն մասին* Ուտենրիյն, *Նախիջևանի արքեպիսկոպոսներ, էջ 187։*

[51] *Չիթթատինի կտեղեկացնե, թե 1616-ին կային 6 եկեղեցականներ և մեկ ենթասարկավագ, տե՛ս* Ալոնսո, *անդ, էջ 212։ Մյուս կողմե Ազարիա Ֆրիտոն, որ 1602-ին թողած էր Ապարաները, Կղեմես Ը պապին ուղղած իր տեղեկագրին մեջ կըսեր թե կային 15 կրոնավորներ և 8 սարկավագ.* Ալիշան, *անդ, էջ 387։*

[52] *Տես. Ազգ. արխիվներ Թթ-ի արքեպիսկոպոս։ Ամեն անգամ, շարունակության մեջ, արքեպիսկոպոսի տիտղոսը փոխարինված է եպիսկոպոսով։ Հետաքրքրական է բայց ոչ անկարելի, որ Ազարիա Ֆրիտոն պատասխանատու ըլլա այս փոփոխության։ Ինքն իսկ չէ՞ կոչված ըլլա եպիսկոպոս, ըլլա արքեպիսկոպոս, իր ընտրության (1602—1604) վերաբերյալ փաստաթուղթերուն մեջ. տե՛ս* Ուտենրիյն, *անդ, էջ 163—164։*

[53] *Տես. Ազգ. արխիվներ Թթ-ի երկու կամ երեք տարի։ Եթե Ազարիա Ֆրիտոն հեղինակն է այս ճշտումին, պետք է հետևցնել, որ իր նախորդը, Նիկողայոս Ֆրիտոն մեռած է 1602-ին, ինչ որ կհամաձայնի նաև առաջնույն Հռոմ մեկնումին հետ, եպիսկոպոսական ձեռնադրություն ստանալու համար։ Տ. նամակ Ջուղայի հայերեն, ուղղված Հալեպի իրենց հայրենակիցներուն, 17 հուլիս 1602-ին։* Ուտենրիյն, *Եպիսկոպոսը, անդ, էջ 192—3։*

[54] *Տես. Ազգ. արխիվներ Թթ-ի Եվ հայր Պելչիոր բառը։ Ժոան տոս Սանթոսի բնագրին մեջ հեղինակը միշտ կարտահայտվի եզակի առաջին դեմքով, մինչդեռ Թորրե տո Թոմպոյի ձեռագրին մեջ կարտահայտվի հոգնակի առաջին դեմքով։ Ամեն պարագայի մեջ ատիկա կհաստատե թե հ. Պելչիոր գլխավոր հեղինակն է։*

բաց մատուցանել, լսել նաև իրենց պատարագը և իրենց հետ խոսակցություն մը ունենալ։ Այդպես ալ եղավ։

Եվ հաջորդ օրը բոլոր այս հալածված խեղճ քրիստոնյաները հավաքվեցան եկեղեցին և մեր պատարագներուն ներկա եղան մեծ բարեպաշտությամբ։ Հետո եղբ. Պելշիոր կարճ ճառ մը խոսեցավ մխիթարելով ներկաները իրենց կրած տառապանքներուն համար և քաջալերելով զանոնք, որ պատրաստ ըլլան կրելու բոլոր գալիքներն ալ ապագային, վասն մեր Տեր Քրիստոսի և իր սուրբ հավատքին։ Այն ատեն բոլորն ալ մոտեցան իրեն, ոմանք կհամբուրեին իր շրջազգեստը, ոմանք իր ոտքերը, ուրիշներ իր ձեռքերը, մեծ հուզումով որովհետև բնավ չէին տեսած ուրիշ ֆրանկ եկեղեցականներ այդ վայրերուն մեջ։ Մեծավորը մատուցանեց նույնպես իր երեքով երգված պատարագը, հռոմեական եկեղեցվույն ամբողջական ծեսովը, տարբեր ըլլալով միայն լեզուն, որ հայերեն էր։ Ընթերցվածեն ետք, պատարագիչը ցուցադրեց խաչը երգելով շարական մը, մինչ ժողովուրդը կհետևեր ջերմեռանդ պաշտամունքով։ Հետո քարոզեց և մենք մեկնեցանք եկեղեցիեն։ Հարցուցինք կրոնավորներուն թե ե՞րբ այդ շրջանը քրիստոնյա դարձած էր, որքա՞ն ֆրանկ գյուղեր կային և որո՞նք էին կրոնական պաշտոնյաները։ Մեծավորը ինծի պատասխանեց թե շուրջ երեք հարյուր[55] տարի առաջ եկած էր կրոնավոր մը, որ կկոչվեր Բարթողոմեոս և կքարոզեր Քրիստոսի հավատքը և այս գյուղերեն մեկ քանին հավատքի բերելե ետք գացած էր Հռոմ, ուրկե վերադարձած էր եպիսկոպոս[56] անվանվելով և շարունակելով քարոզել, արդեն յոթը գյուղեր[57] հավատացյալ դարձուցած էր երբ այդ գյուղերեն մեկուն մեջ, որուն բնակիչներուն կեսը դեռ անհավատ էր, թունավորելով սպաննեցին զայն[58]։ Այս երջանկահիշատակ հայրը զիրենք դաստիարակած էր և իրենց սովեցուցած էր հնազանդիլ Հռոմի եկեղեցիին, ուրկե մինչև այն ատեն կուգային իրենց եպիսկոպոսները, որոնք միշտ երկրացի վա-

---

[55] *Ձեռ. Ազգ. արխիվներ, ԹԹ-ի ավելի քան 400 տարի. տես ծանոթ. 48։*

[56] *Բարթուղոմեոս տա Պոլոնիա, բուն անունով Բարթուղոմեո տե Փոտրո կպատկաներ Քարոզիչ եղբայրներու միաբանության (ինչպես այն ատեն կկոչվեին դոմինիկյան միաբանները)։ 1218-ին ուղարկվեցավ Արևելք իր ընկերներով, որոնց մեջ էր սպանիացի եղբ. Փեդրոս տ՚Արակոն, և հաստատվեցավ Ուրմիա լիճին հարավ-արևելքը (Մարաղա), ուրկե հարաբերության մեջ մտավ դրացի հայ վանքերուն հետ։ 1328-ին Նախիջևանի մոտ Քռնայի վանքին մեծավորը Հովհաննես վարդապետ եկավ բնակելու իրեն հետ և 1330-ին Բարթուղոմեոն տարավ Քռնա, ուր երեք տարի բնակեցավ Աստվածածնա վանքին մեջ։ Բարթուղոմեո օժանդակեց Հովհաննես վարդապետին 1331-ին հիմնելու համար Ունիթոր եղբայրներու միաբանությունը, որ ունեցավ երկարատև պատմություն մը, մինչև 1794 և որու նպատակն էր իրագործել հայ եկեղեցվո միացումը Հռոմի աթոռին։ 1583-ին ունիթոր եղբայրները միացան դոմինիկյան միաբանության որուն սահմանադրությունը և զգեստը ընդունած էին, հետևելով հանդերձ ս. Օգոստինոսի կանոններուն։ Բարթուղոմեո տե Փոտրո վախճանվեցավ Քռնայի մեջ 15 օգոստոս 1333-ին և թաղվեցավ Քռնայի վանքին մեջ։ Տես Գիպլիոթեքա Սանքթորում, հոդված Նիքոլո տել Ռեյի, թ. 878—880, Հ. Բ. Ինսթիթութո Ճովաննի ԻԳ, 1962։ Նաև Բառարան եկեղեց. պատմության և աշխարհագրության, թ. 981, հ. Զ, 1932, Բարթ. տը Պոլոներ։ Այս վերջին հոդվածին մեջ հեղինակը իրեն կուտա Ապալիաթի անունը, որ ըստ Նիքոլո տել Ռեյի հառաջ կուգա շփոթութենե մը Բարթուղոմեո տեյլի Ապալիաթի տի Սիենայի հետ, որ դոմինիկյան քարոզիչ էր և Դավրեժի եպիսկոպոս։ Բարթուղոմեո տե Փոտրո սխալմամբ նույնացված է նաև ուրիշ դոմինիկյանի մը հետ, որ կկոչվեր Բարթուղոմեո Փարվո։*

[57] *Համաձայն Ա. Ցրիտոնի տեղեկագրության, 1602-ին Նախիջևանի շրջանին մեջ կային 12 վանք, 1820 կաթոլիկ ընտանիք, որոնք կներկայացնեին շուրջ 19000 հավատացյալ ենթակա Նախիջևանի դոմինիկյան արքեպիսկոպոսին և կրոնավորներուն, որոնց թիվն էր 117։ Տե՛ս Ալեքսո Չիթթատինի, Համապարփակ ցուցակ, էջ 231։ 1604-ի վերջը Ջուղայի, Նախիջևանի և շրջակայքի հայերուն բռնագաղթին հետևանքով անոնց թիվը նվազեցավ և հայր Չիթթատինի իր 1616-ի առաջին տեղեկագրին մեջ կուտա միայն 22 կրոնավոր և 305 ընտանիքի թիվերը, բայց 1617-ի երկրորդ տեղեկագրին մեջ կհիշե 20 կրոնավոր և 40470 կաթոլիկ. Նույն, էջ 231—232։ Տե՛ս նաև Ալիշան, անդ, էջ 386—389, որ կհիշե եղբ. Ազարիայի տված տեղեկությունները ԺԷ դարուն սկիզբը ինչպես և հայ-դոմինիկյան հայր Նիկոր Նազարյանի տեղեկությունը, որ կըսե թե հայ տուներուն և բնակիչներուն թիվը մեծապես նվազած էր։*

[58] *Ձեռ. ԹԹ-ի սպաննեցին թույնով։ Ժոան տոս Սանթոս կնշե, որ տարբերություն մը գտած է Բարթուղոմեո Փոտրո եպիսկոպոսին նահատակության նկարագրության, այնպես ինչպես ներկայացված է իր գիրքին մեջ հիմնվելով եղբ. Ազարիայի տված տեղեկություններուն վրա և այն տեղեկություններուն միջև, որոնք հաղորդված են փորթուկալցի կրոնավորներուն կողմե։ Ժոան տոս Սանթոս կըսեր, որ թուրքերն էին, որ նահատակեցին բազմաթիվ բնակիչներ, որոնք կմերժեին մահմետական դառնալ և որոնց գլուխը կանգնած էր Բարթուղոմեո եպիսկոպոսը, որ իբր «գլուխ և բարի հովիվ իր հոտին առջև կանգնեցավ զայն պաշտպանելու և քաշելու համար մարդակեր գայլերու բերնեն, և տալու իր արյունը և կյանքը անոնց համար», Սանթոս, անդ, էջ 6ա։*

Մինչդեռ փորթուկալցի կրոնավորները կգրեին թե Բարթուղոմեո եպ. արդեն քրիստոնեացուցած էր յոթը գյուղ, որոնցմե «մեկուն մեջ, ուր բնակիչներուն կեսը դեռ հավատքի չէր եկած, իրեն թույն տվին և սպաննեցին»։

Ժոան տոս Սանթոս կուզե բացատրել, որ օգոստինյան կրոնավորները չէին սխալած տալով այս տեղեկությունները, որովհետև եղբ. Ազարիա պատմած էր, թե «հայ հերձվածողները երկու անգամ թույն տված էին հիշյալ եպիսկոպոսին և վերջին անգամ, որ տվին շատ հիվանդացավ այդ պատճառով և այդ միջոցին մտան թուրքերը առաջին անգամ այս երկրին մեջ զինյալ և սպաննեցին հավատքի ատելությամբ, գիտնալով որ եկեղեցական է և քրիստոնյա համայնքին գլխավորն է. սակայն կարելի է ըսել, որ այս սպանության օժանդակեցին հերձվածողները իրենց տված թույնով, որովհետև մահվան դուռը բերած էին զայն, բայց իրողությունը այն է, որ թուրքերուն կողմե սպաննվեցավ, ինչպես ըսված է»։ Տե՛ս Սանթոս, անդ, էջ 9բ։

նականներ էին, Հայաստանի հողամասեն[59], որովհետև երբ եպիսկոպոսը կվախճաներ վանականներեն երկուքը կերթային Հռոմ, ուրկե անոնցմե մեկը կվերադառնար արքեպիսկոպոս ձեռնադրված[60], երկու վանականներ այսպես մեկնած էին երկու տարիե ի վեր և դեռ չէին վերադարձած պատերազմի հետևանքով, որ ճամփորդությունը կդժվարացներ[61]։

Իրենց կրոնքը այնքան կատարյալ չէ որքան Եվրոպայի մեջ[62]։ Համաձայն մեր ստուգածին, հիմնականին մեջ կպահեն երեք ուխտերը և գյուղերուն համար քահանաները կնշանակվին նույն կրոնավորներեն և յուրաքանչյուր գյուղի մեջ անոնցմե զատ կան մեկ կամ երկու ուրիշ կրոնավորներ, որ կսպասարկեն Նշանակյալին։ Արքեպիսկոպոսը միշտ անոնց մեծավորն է և երբ կբացակայի փոխանորդ մը կորոշե, որուն ամենն ալ կհնազանդին ինչպես մեծավորին։ Փափագեցա տեսնել մոտակա քանի մը եկեղեցիներ։ Կես մղոն հեռավորությամբ կար հոտ մը ուր ընդունվեցանք Տոմինիկոս անունով ծեր եկեղեցականի մը կողմե, որ սուրբի մը երևույթ ուներ և կարծեմ թե իսկապես էր։ Աղոթելե ետք մեզի ցույց տվավ փառապանծ առաքյալ ս. Հուդայ Թադեոսի ամբողջ նախաբազուկը մինչև արմուկը և ձեռքը, որ մարտիրոսացած էր Պարսկաստանի մեջ[63]։ Անշուք կերպով պարփակված էր փայտի մեջ, որպեսզի Թուրքերը չգողանան և տեղ տեղ կերևեր բազուկին ոսկորը։ Մեզի ցույց տվավ նա և երկաթյա խոշոր խաչ մը, զոր սուրբ առաքյալը շինած էր իր ձեռքով, կոփելով երկաթը ինչպես որ տեսանք։ Սքանչելիք Աստուծո ձեռամբ սրբոց։ Այս եկեղցվույն մեջ թաղված է երանելի Պարթողոմեոն, որուն դամբա-

[59] Ձեռ. ԹԹ-ի բնիկ վանականներ։ Ազարիա Ֆրիտոն անտարակույս ուզած է շեշտել տեղվույն հայկական նկարագիրը։

[60] Ձեռ. ԹԹ-ի կավելցնե. իր նամակներով որ կըսեին արքեպիսկոպոս Նախիջևանի։

[61] Ակնարկություն Ազարիա Ֆրիտոնի, որ մեկնեցավ 1602-ին և որ տակավին չէր վերադարձած փորթուկալցի կրոնավորներուն այցելության ատեն, նոյեմբեր 1604-ին։

[62] Ձեռ. ԹԹ-ի այստեղ կավելցնե. արքեպիսկոպոսը փորսուրար չի տար, որքան ատեն որ եկեղեցական ձեռնադրված չեն և կձեռնադրվին անոնք միայն որ կսպասարկեն եկեղեցվույն մեջ և պատրաստված են եկեղեցականներուն հետ, ասոնք կկոչվին Նորընծա։

[63] Հետաքրքրական է նշել որ Քռնայի եկեղեցին (տե՛ս ծանոթ. 64) ուներ մաս մը ս. Հուդա Թադեոս առաքյալի բազուկեն, որուն գերեզմանը ըստ հայկական ավանդության կգտնվի ս. Թադեոս վանքին մեջ։ Վանքը, որ Թուրքերեն կկոչվի Կարա քիլիսե (սև եկեղեցի), կգտնվի արևմտ. Ատրպատականի լեռնային շրջանը, Մակուեն շուրջ 20 կմ հեռու, իրանական հողամասին մեջ։ Ս. Թադեոսի մասունքը և գլուխը կգտնվին էջմիածին. տե՛ս Հ. Ֆ. Լինչ, Հայաստան, Լոնտոն, հատ. Ա, էջ 269։ Տես վայրին զանազան կոչումները. Ոսկեճրյան, Նախիջևանի արքեպիսկոպոսներ, էջ 188։

նը[64] տեսանք ուրկե քրիստոնյաները հող կվերցնեն, որ կբուժե կարգ մը հիվանդություններ[65]։ Խորանի մը վրա գտանք ս. Հովհաննես Մկրտչի պատկերատախտակ մը, երկու մասե բաղկացած և ուրիշ մը, դարձյալ երկու մասե, որ կներկայացներ մեր Տիրուհի կույսը իր օրհնյալ որդվույն հետ։ Թուրքերը իզուր փորձելով բեկանել զայն և չկարենալով, դանակի հարվածներ տված են և իրենց դաշույնին ծայրովը հանած են մոր և որդվույն աչքերը։ Եկեղեցականները կմեծարեին այս նկարը և կըսեին թե հրաշքներ կգործե[66]։ Այս եկեղեցականները աղքատ են և իրենց եկեղեցին ավելի աղքատ, բայց պարզ և առաքինի։

Կրոնավորները ինծի ըսին թե այդտեղեն մեկ մղոն հեռու կպահեն մեր Փրկիչ Քրիստոսի կողին մխված նիզակը[67]։ Բայց կարելի չեղավ երթալ տեսնել, որովհետև դեսպանը արդեն մեզի կանխած էր և հառաջա-

[64] Այցելված եկեղեցին Քռնայինն է, ուր թաղվեցավ Պարթողոմեոս տե Փոտիս։ Թեև ժէ դարուն բազմաթիվ հրաշքներ կվերագրեին իր դամբանին ինչպես կհավաստեն Հ. Որտան տը լա Քռուայի 1613-ի պատմության ժամանակակից բազմաթիվ վկայություններ և հակառակ անոր որ ժողովրդական պաշտամունք կվերագրվի անոր հին ժամանակներե իվեր, այդ պաշտամունքը երբեք չէ ճանչցված պաշտոնապես եկեղեցիին կողմե. Այոնսո, Ջիթթատինի, անդ, էջ 30, ծանոթ 36, տե՛ս Կովնեյիա. անդ, էջ 146—147։ Քռնայի եկեղեցին ձոնված է Այլակերպության, Ալիշան, անդ, էջ 387։

[65] Ձեռ. ԹԹ-ը որ իրենց հիվանդությունները կբուժե, ինչպես հավատացին մեզի։

[66] ԹԹ-ի ձեռագիրը այստեղ կավելցնե. ուզեցինք ունենալ այս նկարը և կրոնավորը մեծ բարեսրտությամբ տվավ զայն մեզ. հետերնիս տարինք, մտածելով որ ս. Կույսը Թուրքերուն կողմե իրեն եղած նախատինքներուն համար փոխարինություն մը պիտի գտնե այն պատիվներուն մեջ, որ պիտի մատուցանեինք իրեն, իր օգնությամբ։ Կրնա ըլլալ, որ Ազարիա Ֆրիտոն, ոչ շատ գոհ այս նվիրատվութենեն, նախամեծար համարած է այդ մասին չխոսել։

[67] Խոշկաշենի մեջ է, Սալիթաղեն մեկուկես մղոն հեռու, այս վերջինն ալ Ապարաներեն մեկ մղոն հեռու, որ «կգտնվեր ս. Ստեփաննոսի անվան վանք մը, որուն սեփականությունն էր մասունքը Նիզակին որ վիրավորած էր մեր տեր Քրիստոսի կուրծքը»։ տե՛ս Քարլոս Այոնսո, Ջիթթատինի, էջ 213։ Ալիշան, անդ, էջ 387, նույնպես Խոշկաշեն կկոչե այն վայրը, ուր կգտնվեր ս. Նիզակին նվիրված եկեղեցին։ Վայրին զանազան անուններուն մասին տե՛ս Ոսկեճրյան, Եպիսկոպոսք, էջ 187։ Ժոան տոս Սանթոս, անդ, էջ 9, ինքն ալ կհաստատե այն կարծիքը, փորթուկալցի կրոնավորներուն հիշած նիզակի երկաթին մասին, թե «կթվի որ, եթե այն չէ որուն մասին կխոսին, պետք է ըլլա այն նիզակին երկաթը, որով սպաննված է ս. Հուդա Թադեոս որ այս կողմերը նահատակվեցավ»։ Ըստ հայկական ավանդության, ս. Նիզակին մասունքը, որ ծակեց Քրիստոսի կողը խաչին վրա, կգտնվեր Այրիվանքի հայկական վանքին մեջ։ Կկոչվի նաև Գեղարդավանք (Նիզակին վանքը)։ Մասնատուփը, որ ըստ ավանդության կպարունակե սուրբ գեղարդը, արծաթյա գեղեցիկ գործ մըն է, որ շինված է 1268-ին։ Մասնատուփը վանքեն փոխադրված է Էջմիածնի գանձատունը, Մուրյան, Պատմություն և հիմնադրություն հայ եկեղեցվո (ֆրանս.), Պեյրութ, 1965, էջ 268—272։ Մասունքին վավերականությանը

ցած էր մեկ օրվան ճամփայով և ըսի կրոնավորներուն, թե մեր վերադարձին պիտի անցնեինք այդ վայրեն, և իրավ ալ անցանք[68]: Գացինք գյուղ մը, որ կգտնվեր ձյունով ծածկված լեռան մը ստորոտը: Եկեղեցիին մեջ, որ փոքր էր, գտանք հայրերեն մեկը, որ առաքինի թվեցավ մեզի. բոլոր գյուղացիները մեզի կընկերանային: Աղոթելէ ետք եկեղեցականեն խնդրեցինք որ մեզի ցույց տա մասունքը: Մեծ բարեպաշտությամբ մեզի տարավ ավանդատունը, ուր խորանի մը վրա արդեն դրված էր փայտե արկղիկը, դռները շարժուն կղպանքով մը փակված: Այնտեղ կգտնվեր սրբազան երկաթը: Մինչ եկեղեցականը բանալին կմտցներ կղպանքին մեջ, սկսավ դառնորեն արտասվել և հառաչանքներով և հեծկլտուքներով բացավ արկղիկին դուռը և ծունկի գալով շուզեց դպիլ սուրբ մասունքին և որովհետև մեծ բազմություն կար, կարելի չէր լավ տեսնել: Ես ալ ինքզինքս համարելով սուրբ մասունքին դպելու անարժան, մյուս կողմե նկատելով որ մեր տեր Քրիստոս ինծի շնորհը ըրած էր պատարագի զոհաբերության միջոցին իմ անարժան ձեռքերովս դպելու իր սուրբ մարմնին, բռնեցի սուրբ երկաթը և բարձրացնելով սկսա երգել «Գովեմք զքեզ Աստուած» ընկերոջս հետ, մինչ լալագին կուրծքերնին կզարնեին այնպես, որ ամենեն կարծր սիրտը կհուզվեր: Այնտեղ երկաթին չափերը առինք թուղթերու վրա, որոնցմե մեկը կուղարկեմ Ձեր Գերապատվությանն[69]: Ահա փաստերը սուրբ Նիզակին երկաթը ըլլալուն: Նախ հայրե-

վերաբերմամբ գոյություն ունեցող տարակույսներուն մասին տե՛ս Ժոզեֆ Լորան, Հայկ. պատմության ուսումնասիրություններ, Հայկ. մատենաշար Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության, հրատ. Փեթերս, Լուվեն, 1971, «Խաչակիրներ և Հայաստան», էջ 142. Նույնինքն մասունքները չմնացին անվիճելիորեն հայերուն սեփականությունը, որոնք բողոք բարձրացուցին: Այսպես, սուրբ նիզակը, զոր ֆրանկները գտան Անտիոքի սուրբ Պետրոս եկեղեցիին մեջ այն չէր, ինչպես լատինները կըսեին, որ թափանցեց Աստուծո մարմնին մեջ, որ հայերուն ձեռքն էր, այլ ուրիշ նիզակ մըն էր, անշուշտ այն ալ մեծարելի, բայց և այնպես նվազ թանկագին, որով հրեաները ծակեցին Փրկչին պատկերը: Ա. Հարդման, օգոստինյան. Օգոստինյանները Կոայի մեջ. ձեռագիր մը օգոստինյան հավաքածոյին մեջ, հատ. Լ, Հռոմ, 1967, էջ 772, կգրե թե հայերուն ցույց տվին նիզակի երկաթ մը, որուն համար կըսեն թե այն է, որ թափանցեց մեր տեր Քրիստոսի կողը, ինչ որ չենք կարծեր, հակառակ անոր որ կպատվեն և կմեծարեն իբր այդ... և որովհետև գիտենք թե Հռոմի մեջ պաշտամունքի առարկա է ուրիշ մը որ ավելի հավանականություն կներկայացնե, կրնանք ենթադրել որ այդ երկաթը նահատակության գործիքը եղավ Պարսկաստանի մեջ չարչարված սուրբ առաքյալներեն մեկուն մարտիրոսացման:

[68] Ձեռ. ԹԹ-ի Իրավ ալ համոզեցինք, որ դեսպանը գա:

[69] Ձեր գերապատվությունը, այսինքն Կոայի արքեպիսկոպոս Ալեքսիոս Մենենես: ԹԹ ձեռագրին մեջ «Թուղթի թերթերեն» ետք կարդալ. այդ թերթերը անոնցմե են զորս հայր Կիլեսմե (հայր Պելշիոր) ընկերը կուղարկե վասն մխիթարության են:

րուն վկայությունը, թե երեք հարյուր տարվան ավանդության մը համաձայն, իրենց վանականներեն մեկը զայն գողցած է հայոց մեկ եկեղեցիեն, ուր կգտնվեր[70]: Հայրերը հավաստեցին նաև թե քանի մը անգամ ժանտախտ պատահած ըլլալով բավական եղած է, որ թափորով զայն դուրս հանեին որպեսզի համաճարակը դադրեր, և թե շատ մը հիվանդներ կբժշկվեին անոր դպելով[71]: Ինչ որ կրնամ հաստատել այն է թե շատ հաճելի բույր մը կարտաբերեր ան և այնպիսի երանություն մը կներշնչեր, որ չէր կրնար սուրբ բան մը չըլլա[72]: **Ըսի իրեն թե գիտեն**[73], որ մահմեդականները կնեղեին զիրենք իրենց պարտքերուն համար և թե ան բավական դրամ պիտի տար իրենց պարտքերը վճարելու համար եթե մասունքը իրեն տային: Մեծավորը ինծի պատասխանեց, որ նույնիսկ եթե լեռան չափ ոսկի տան չեն հանձներ սուրբ Նիզակը, զոր առնելու համար պետք է նախ կտրեն իրենց բոլորին գլուխը[74]: Հայրերը պատմեցին նաև որ ս. քահանայապետը այդ մասունքը ուզած էր իրենց եպիսկոպոսներեն մեկեն, որ պատասխանած էր, թե շնորհիվ այդ սուրբ երկաթին հրաշքներուն շատ մը անհավատներ դարձի կուգան և թե ան կպահպանե հավատացյալները թուրքերուն մեջ[75], իսկ եթե Նորին սրբությունը կպա-

[70] Թորրե տո Թոմպոյի ձեռագիրը կավելցնե. հայտնությամբ մը իրեն տրված ըլլալով հրամանը, որ կատարված է մեծ ճարտարությամբ և աստուծո օգնությամբ:

[71] Ջեմս Մորիեր, Երկրորդ ճամփորդություն Կոստանդնուպոլսեն Պարսկաստան, Հայաստան և Փոքր Ասիա 1810—1816 թվականներուն, Լոնտոն, 1818, էջ 324—325: Էջմիածին այցելության առթիվ կգրե. «Մեծ արարողություններով ցույց տվին եկեղեցվույն պատկանող ամենեն թանկագին մասունքներեն մաս մը: Առաջին և գլխավորը այն էր, որ կըսեին թե ծայրն է ճշմարիտ նիզակին, որով հռոմեացի զինվորը խոցեց մեր փրկիչին կողը: Անմիջապես որ հանեցին և դրին խորանին վրա, բոլոր հայերը գլխովին խոր խոնարհություն մը կատարեցին: Իր երկարությունը պետք էր ըլլար շուրջ մեկ ոտք: Այս մասունքը կնկատվեր առաջինը, որ իրենց սեփականության մեջ էր և կըսեին թե ուրիշ հրաշքներու կարգին ուներ նաև զորությունը ժանտախտը դադարեցնելու»:

Երբ Մորիեր էջմիածին կգտնվեր այնտեղ եկավ պատվիրակություն մը Թիֆլիզեն, ուր ժանտախտի համաճարակ կտիրեր և խնդրեց, որ իրենց փոխ տրվի մասունքը, ինչ որ կատարվեցավ: Անդ, էջ 333—334:

[72] ԹԹ-ի ձեռագիրը կավելցնե. տեսանք նաև որ իր ձեռը նման է անոր որ կներկայացվի նահատակության տեսարաններու մեջ:

[73] ԹԹ-ի ձեռ. Գաղտնորեն խոսելով գյուղին երեցներեն մեկուն հետ, հայր Պելշիոր ըսավ, թե դեսպանը գիտե որ նեղություններու կենթարկվին են:

[74] ԹԹ-ի ձեռ-ը կավելցնե. և իրենց կիներուն և զավակներուն:

[75] ԹԹ-ի ձեռ-ը ասոր տեղ կըսե. հակառակ մահմեդականներու հալածանքին:

հանչի, կըրկին։ Բայց պապը հարմար դատեց զայն ձգել իրենց։ Այս պարագաներուն բերմամբ ինձ կթվի որ եթե մեր տեր Քրիստոսի նիզակին երկաթը Հռոմ չէ (կամ այն մասունքներուն մեջ զորս ունի Ֆրանսայի թագավորը, ուր կըսեն թե կգտնվի ան), անպայման ան է զոր տեսանք[76]։

---

[76] Թթ-ի ձեռ.ը կավելցնե և եթե Հռոմ է, այս (ալ) սուրբ է ուրիշ նահատակության մը պատճառով։

Ալիշան, անդ, էջ 389, հրատարակելով ցուցակը Նախիջևանի նահանգին ունիթոր եղբայրներու մեծավորներուն, 1586 թվականին կհիշե եղբ. Պողոս իբր մեծավոր և նախորդող՝ «Լուսիտանացի Անտոնի»։ Արդ, ուշագրավ է նշել 1630-ին գոյությունը Հայաստանի մեծավորի մը, տոմինիկյան եղբ. Յաքոպո տը Ամպրոզի։ Իբր այդ, այս վերջինը միաբանության ընդհանուր պետին 15 ապրիլ 1630 թվականով կգրեր հայերեն նամակ մը, որ իտալերենի թարգմանվեցավ, հետո սպաներենի, Մատրիտի մեջ հրատարակվելու համար 1630-ին. «Ընդօրինակություն նամակի մը, զոր գրած է գեր. հայր Յաքոպո տը Ամպրոզի, մեծավոր Հայաստանի քարոզիչներու կարգին առ, հայր Նիքոլա Ռիտոլֆի, ընդհանուր պետ նույն կարգին։ Որու մեջ կպատմե հրաշքի դեպք մը, որ իրեն պատահած է մահմետականներուն և թուրքերուն հետ, որոնք կապրին այդ երկրին մեջ, ի հաստատում մը սուրբ կաթոլիկ հավատքին»։ Գրված Շավիռլին 15 ապրիլ 1630-ին։ Հայերենե թարգմանված իտալերենի, հետո սպաներենի։ Մատրիտ, արքայական տպ., 1630։

Նույն նամակը տպագրված է 1631-ին Պարսըլոնի, Կըընատի և Մաժորքի մեջ, և փորթուկալերեն՝ Լիզպոնի մեջ, տպ. Անթոնիո Ալվարեզ։

Բոլոր այս նամակները հիշված են Քարլոս Ռոտրիկեզ Ժուլիա Սեն-Սիրի կողմե. «Փոքր մատենագրություն սպան. և մահմետական», Մատրիտ, 1970, էջ 133—135, թ. 613, 620, 622, 623։

Նույնպես Ալիշան կհիշե Հակոբ տը Ժեղյու, Կեցի մեջ 165.../60, իբր հաջորդ Անտոն Լուսիտանացիի։ Իր մասին գոյություն ունի նաև փաստաթուղթ մը սպաներեն հրատարակված Մատրիտի և Սևիլի մեջ 1653-ին։

«Նամակ զոր մեծավոր հայր Յաքոպո տե Ժեղյու, քարոզիչներու կարգեն մեծավոր Մեծ Հայքի, գրեց առ գեր. հայր Քարլոս տե Սան Պուենավանթուրա... Նախիջի նահանգեն, որու մեջ կպատմե հրաշային դեպքերը, որոնք պատահած են այս թագավորություններուն մեջ, ինչպես նաև կաթոլիկ հավատքին վիճակը այնտեղ»։ Մատրիտ։ Կրեկորիո Ռոտրիկեզ, 1653։ Տե՛ս նաև Սեն-Սիր, նույն, 161, թ. 745—746։

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԺԶ ԴԱՐՈՒ ԵՐԿՈՒ ՓՈՐԹՈՒԿԱԼՑԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐՈՒ

Մինչ հաստատված ըլլալ կը թվեր, թե Սասունցի Դավիթի դյուցազնավեպը մեզի հասած է միայն բերանացի հաղորդումի ճամփով և թե Գարեգին եպիսկ. Սրվանձտյանցի կը պարտինք անոր մեկ դրվագին հրատարակությունը 1874-ին[1], ԺԶ դարու երկու փորթուկալցի հեղինակներու ճամփորդական տեղեկագրությունները մեզի թույլ կուտան հավաստելու, թե այս դյուցազնավեպեն դրվագի մը մասին գրավոր հիշատակություններ լույս տեսած են անկե ավելի քան երկու դար առաջ։

Արդարև, Դավիթի հիշատակությունը կը գտնենք հետևյալ երկերուն մեջ, որոնք վերնագրված են. 1. Ուղեգրություն Անթոնիո Թենրեիրոյի, ասպետ Քրիստոսի կարգին, ուր կը պատմվի, թե ինչպես ցամաքի ճամփով Հնդկաստանեն եկավ Փորթուկալի թագավորությունը, 2. Ուղեգրություն ճամփորդության, զոր Հնդկաստանեն դեպի Փորթուկալի թագավորությունը ցամաքի ճամփով կատարեց ավագ վիրաբույժ Մեստր Աֆոն-

---

*Հոդվածը նախապես ֆրանսերեն լույս է տեսել Հ. Պերպերյանի հեղինակակցությամբ։ (Revue des Etudes Arméniennes, t, VIII, 1971).

[1] 1874-ին Կոստանդնուպոլսո մեջ Գարեգին եպիսկ. Սրվանձտյանցի կողմե իր «Գրոց բրոց» հատորով Մուշի մեջ քաղված հայ ժողովրդական դյուցազնավեպի մը հրատարակությունը, զոր վերնագրված էր «Սասունցի Դավիթ կամ Դուռ Մհերի», զգայացունց հայտնություն մը եղավ բանասերներուն համար, որովհետև մինչև այն ատեն ոչ որ լսած էր Սասունցի Դավիթի, ոչ ալ ԺԹ դարուն գոյություն ունեցող ժողովրդական դյուցազնավեպի մը մասին։

Այս հրատարակութենեն ետք սկսան փնտրել այս դյուցազնավեպին տեղյակ եղող անձեր։ Այս պրպտումները քանի մը տասնյակ տարի ետք կարելի դարձուցին հավաքել շուրջ հիսուն տարբերակներ, որոնք հրատարակվեցան երեք հատորով (Երևան, 1936, 1944 և 1951) Մանուկ Աբեղյանի և Կարապետ Մելիք-Օհանջանյանի ջանքերով, «Սասնա ծռեր» վերնագրով։

առ, որ Հնդկաստան եղավ կոմս Վիզրեիի և կառավարիչ Ժուան տե Մենտոնսայի օրով, նույն կառավարիչին հրամանով[2]:

Անթոնիո Թենրեիրոյի տեղեկագրությունը կը վերաբերի բազմաթիվ տարբեր ճամփորդություններու 1523-ի և 1529-ի միջև, առաջինը իբր անդամ շահ Իսմայիլի (1487—1524) արքունիքին մոտ Պալթազար Փեսոայի փորթուկալյան դեսպանության, երկրորդը՝ 1524—1525-ին Թավրիզեն Երուսաղեմ, բայց ընդհատված Գահիրեի մեջ արգելափակման շրջանով մը և շարունակված Աղեքսանդրիայեն Կիպրոս, իսկ երրորդը՝ 1528-են 1529 Կիպրոսեն Օրմուզ և Օրմուզեն Լիզպոն Պասրայի ճամփով, անցնելով Հալեպեն և Կիպրոսեն: Իր երկրորդ ճամփորդության ընթացքին, սկսած Թավրիզեն և անցնելով Հայաստանեն, կը հիշատակե միջանկյալ կերպով, Սամսամ, այսինքն Սասուն, ըլլա, որովհետև շփոթած է ժողովրդական հերոսին և այն վայրին անունը, ուր ապրած պիտի ըլլան, ըլլա որովհետև իր խոսակիցները իրեն հիշած են միայն Սասունի հերոսին անունը՝ Սասունցին:

Մեսթր Աֆոնսո, որ Հնդկաստանի մեջ եղած էր վիրաբուժապետ փոխարքա Ժուան տե Մենտոնսայի օրով, իր Ուղեգրությամբ կը պատմե իր ճամփորդությունը, սկսյալ Քոչինեն, ուրկե կը մեկնի 6 փետրվար 1565-ին «Սանթո Անթոնիո» նավով մինչև Օրմուզ, և հետո ցամաքեն Հայաստանի ճամփով մինչև Լիզպոն, ուր կը հասնի 31 օգոստոս 1566-ին: Իր ճամփորդության նկարագրության մեջ է, որ կը գտնենք Դավիթի հիշատակությունը, որ ամենեն հինն է մինչև հիմա ճանչցվածներուն մեջ:

Թենրեիրո և Աֆոնսո կը պատկանեին Փորթուկալի ընկերային վերին խավերուն: Ուսյալ, մշակված, լավ և առարկայական դիտող, ոչ միայն նկարագրած են այն վայրերը ուր այցելած են կամ որոնց մասին իրենց խոսված է, տված են տեղեկություններ անոնց բնակչության մասին, այլև հավատարմորեն արձանագրված են առավել կամ նվազ ավանդական եղելությունները, որոնք իրենց պատմված են իրենց ճամփորդության ըն-

[2] Անթոնիո Թենրեիրոյի «Ուղեգրությունը» հրատարակված է 1560-ին: Մեսթր Աֆոնսոյինը գրված է հինգ տարի ետք, 1565-ին և առաջին անգամ հրատարակված է Ալպանո Անթերո տա Սիլվեյրա Փինթոյի կողմե ծովային և գաղութային տարեգրություններուն մեջ անցյալ դարու վերջը: Անթոնիո Պաիան վերահրատարակած է այս երկու ճանապարհորդական տեղեկագրությունները «Ուղեգրություններ Հնդկաստանեն Փորթուկալ ցամաքի ճամփով» վերնագրին տակ, Քոիմպրա, 1923, Ուղեգրություններու շարքին մեջ, ուր Թենրեիրոյի ուղեգրությունը կգրավե 3—127 էջերը և Մեսթր Աֆոնսոյինը՝ 131—309 էջերը: Այստեղ օգտագործված հատվածները առնված են Պաիանի հրատարակութենեն և անոնց թարգմանությունը կը պարտինք տիկին Սիմոն Պիպերֆելտի, Փարիզի Փորթուկալյան մշակութային կենտրոնեն (Գալուստ Կյուլպենկյան հիմնարկություն):

թացքին: Կը մնա գիտնալ, թե ինչ միջոցներով կրցած են հարաբերության մեջ մտնել իրենց ընկերացող ճամփորդներու կամ բնիկներու հետ, երբ քանի մը օր կանգ առած են քաղաքի մը մեջ: Չի թվիր թե Թենրեիրո իրեն հետ ունեցած է հայերեն խոսող թարգման մը և «Սասունի հայ թագավոր»-ի ավանդությունը կրնա իրեն պատմված ըլլալ հայերու կամ ցեղային ուրիշ ծագում ունեցող անձերու կողմե: Բայց գիտենք, որ Աֆոնսո, որ կարավանով կը ճամփորդեր, ուներ հայ թարգման մը Սիմոն Ֆերնանտեզ անունով[3] և շնորհիվ անոր է, որ ի վերջո ամենահին ավանդությունը Սասունցի Դավիթի փոխանցված է մեզի:

Թեև Աֆոնսո ճամփորդական տեղեկագրությունը Թենրեիրոյի տեղեկագրութենեն ետքը կուգա, բայց զայն պիտի հիշենք նախ քան այս վերջինը, որովհետև այնտեղ է, որ խոսքը կըլլա Դավիթի:

Մեկնելով Պիթլիսեն, քաղաք որ կը գտնվի Վանա լիճին հարավ-արևմուտքը, Աֆոնսո քանի մը օրվա ճամփայե ետք կը հասնի Հիզյու քաղաքը[4], Սասունի բարձրավանդակին մեջ[5]: Այս քաղաքը այն ատեն կը գտնվեր տիրապետության տակ քյուրտի մը, եղբայրը հափշտակիչի մը, որ սպաննած էր իր հորեղբայրը Թուրք սուլթանին բարեացակամությունը շահելու համար: Հանդուգն և ահազդիկ ամրոց այդ շրջանին մեջ, գրաված էր այդ քաղաքը և ավելի հեռուն ամրոց մը, որ կը պատկաներ իր եղբորորդիներեն մեկուն: «Քաղաքը,—կը շարունակե Աֆոնսո,—կը գտնվի հյուսիս-արևելքը, բարձունքի մը վրա: Ունի լավ շենքեր, քարով և հարդախառն աղյուսով, պատշգամներով: Բնակիչները, թիվով հինգ-վեց հարյուր, մեծ մասամբ հայ են և քրիստոնյա (անոնք—հայերը—ամենն

[3] Տե՛ս Հավելված Ա:

[4] Տե՛ս Հավելված Բ:

[5] Սասուն (նախկին ձև Սանասուն), Աղձնիք—Արզանեն նահանգին գավառներեն մեկն էր: Սասունի մասին տեղագրական և պատմական լավագույն ուսումնասիրությունը կատարած է Վիլհելմ Տոմաշեկ. Sasun und das Quellengebiet des Tigris. Historisch-topographische Untersuchung (Sitzungsberichte der kais. Akademie des Wissenschaften in Wien. Philosophische-historische Klasse, Bande CXXXIII), Wien, 1895. Հայերեն թարգմանությունը Վիեննա, 1896: Տեսնել նաև Ժոզեֆ Մարքուարդ, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930; **H. Hubschmann**, Die altarmenischen Ortsnamen (11, 16· 1904), վերհրա. 1969. Ինճիճեան, Հնախօսութիւն, Վենետիկ, 1822 (հայերեն):

Սասուն—Խոյթի բնիկ ժողովրդյան մասին տեսնել Թովմա Արծրունի, Պատմութիւն Արծրունեաց, էջ 132—135 (տպ. Օրթաքեոյ-Սթամպուլ, 1852)—թրգմ. Պռոսե, Ժողովածու հայ պատմիչներու, Ա, էջ 104—106 (որբագրել տ. 3 վարեն «փիլեպյան ասորիներ» կամ «ասղմիկներ»):

ալ քրիստոնյա են և կրնդունին պապին հեղինակությունը նույնիսկ երբ ատիկա չի մասնավորվիր ամեն անգամ, որ հայու խոսք կըլլա)[6]: Հագված են անոնց նման, որոնց մասին արդեն խոսեցա և նույն լեզուն կը գործածեն. կապրին հողագործությամբ և խաշնարածությամբ, մեկ քանին առևտուր կընեն: Լավ աչքով դիտված են երկրին տիրոջ կողմե, որ թույլ կու տա որ ազատ, հաճախեն իրենց եկեղեցին ի տես ամենուն, պահեն իրենց օրենքները և սովորությունները: Հաշտ կերթան նաև քյուրտերուն հետ (մահմեդական), որոնք բազմաթիվ են երկրին մեջ, հակառակ լեզվի տարբերության: Կա մեծ դղյակ մը, լավ կառուցված, որ իր դիրքով կը տիրապետե քաղաքին վրա և Թիֆլիսի դղյակեն ավելի ամրակառույց կը թվի: Շատ բարձր է, լավ շրջապատված քարաշեն պարիսպներով, վանդակավոր պատուհաններով, ինչպես այնտեղ բնակող քյուրտերուն բնակարանները, որովհետև հայերը կը բնակին վարը, պահապաններով և քանի մը թնդանոթներով: Որսի կենդանիներ կան ավելի առատ, քան այն տեղերը ուրկե անցանք, այծ, ոչխար, վայրի կով և վայրի խոզ, զորս մահմեդականները կը սպաննեն և հաճախ կուտան քրիստոնյաներուն: Մեծ որսորդներ կան, որոնք կը մագլցին մինչև լեռներուն մեջ որս փնտրելու համար: Մինչև իսկ աստիճաններ կը փորեն ձյունին և ցեխին մեջ, սպասելով որ չորնան բարձրանալու համար և հաճախ ետ կը մղվին կոտոշի հարվածներով: Ինծի պատմեցին, որ երբեմն կը սպաննեին ծերացած այծեր և ոչխարներ, որոնց կոտոշները այնքան երկար էին, որ մինչև պոչը կհասնեին և մեկ հատեն կարելի էր ամբողջ աղեղ մը շինել: Երկրին տերը այս աղեղները կը ղրկեր սուլթանին իբր նվեր:

Այս քաղաքին մեջ է որ գրեթե միշտ կը բնակեր (որովհետև շատ կը սիրեր որսորդությունը) այն հսկա Դավիթ թագավորը, որու մասին խոսեցանք և որ կը թագավորեր Հայաստանի վրա և կործանեց Ախլաթ[7] քաղաքը: Այնտեղ էր նաև իր կինը, նմանապես հսկա, Հանդյուդ (Խանդութ) անունով, որ սրունքներուն վրա կը կրեր (ինչպես սովորություն էր) ոսկե օղակներ, այնքան մեծ և լայն, որ մարդ մը իր գլխով և մարմինով կրնար մեջեն անցնիլ: Կինը թաղված է քաղաքեն մեկ ժոռնատա հեռու գտնվող դղյակի մը մեջ և այնտեղ իշխող քյուրտը (այն որ սպաննեց իր հորեղբայրը, ինչպես ըսինք), գերեզմանեն հանեց այս օղակները, որոնք թաղված էին իրեն հետ և թագավորին գերեզմանեն հանեց ոսկե խաչ մը, հայերեն սուրբ նշան[8], որովհետև այնքան զորավոր էր այդ խաչը, որ երբ իրեն հետ պատերազմի կը տաներ զայն ոչ մեկ զենք չէր կրնար դպիլ իրեն: Բայց մեր տերը ուզեց, որ ան (քյուրտը) մեռնի թշվառականի մը պես, ամբողջ մարմինը փտելով: Երբ իր եղբայրը տեսավ ատիկա, մեծ հարգանք զգաց այդ խաչին հանդեպ և դնել տվավ զայն հայերու եկեղեցիի մը մեջ, որ կգտնվեր լեռան մը գագաթը, բերդի մը ներսը, Հիզյուի հյուսիսակողմը կես ժոռնատա հեռավորությամբ և կուտա անոնց ամենօրյա թոշակ մը խաչին առջև տևականորեն

[6] Աֆոնսո ըսել ուզած է, որ քրիստոնյա են: Հավանական չէ, որ կաթոլիկությունը թափանցած ըլլա այդ լեռներուն մեջ:

[7] Ախլաթ կամ Խիլաթ, հայերեն Խլաթ, թուրքերեն Ահլաթ, կարևոր և բազմամարդ քաղաք միջնադարյան Հայաստանի, Վանա լճին հյուսիս-արևմտյան անկյունը:

Օմարի իշխանության օրով, Իյատ իբն Ղանմ դաշնագիր մը կնքեց Խլաթի բնակիչներուն հետ: Չորս դար Խլաթ փոխնիփոխ կառավարվեցավ հայ իշխաններով և տեղական արաբ էմիրներով: 918-ին բյուզանդական վերին հրամանատար Հովհան Քյուրքյուան հարձակվեցավ քաղաքին վրա: 939—940-ին և 964-ին հարձակման ենթակա եղավ համտանյան Սեֆ ալ-Տավլայի կողմե և 983-ին Խլաթ անցավ քյուրտ Պատհի ձեռքը և մարվանյան իշխաններուն ենթակա մնաց մինչև Մանազկերտի ճակատամարտը (1071), որմե ետք գրավված ըլլալ կը կարծվի նույնինքն Ալփ Ասլանի կողմե: 1100-ին գրավվեցավ թուրք էմիր Սյուքման ալ-Քութբիի կողմե և մեկ դարե ավելի դարձավ Շահի Արման անունով ճանչցված հարստության մայրաքաղաքը: 1207-ին գրավեց զայն Այուպյան ալ-Ահվատ, որդի ալ-Ադիլի և անոր մահեն ետք 1212-ին անցավ իր եղբոր ալ-Աշրաֆի:

Նույն շրջանին, 1208-ին և 1210-ին հայ-վրացական զորախմբերը երկու անգամ հարձակվեցան Խլաթի վրա: 1230-ին տասը ամսվան պաշարումե մը ետք գրավվեցավ խվարիզմշահ Ճալալ-ալ-Տինի կողմե, որ քիչ հետո Երզնկայի մեջ պարտվեցավ ալ-Աշրաֆեն, որ դաշնակցած էր սելջուկ Ալա ալ-Տին Քայքուպատ Ա-ի: 1233-ին Քայքուպատ իր կարգին նվաճեց Խլաթը, որ մնաց իր ձեռքը (Վ. Մինորսկի, Իսլամական հանրագիտարան, Ա, էջ 338):

Մոնկոլյան աշխարհակալութենեն ետք Խլաթ մաս կազմեց Իլխաններու և իրենց հաջորդներուն (ճելաիրյաններ, կարա-կոյունլուներ, ակ-կոյունլուներ) թագավորության: 1246-ին կործանեցավ երկրաշարժե մը (Փ. Թեշներ, նույն, էջ 160—161): Մատենագրության համար տեսնել անդ, նույնը, և Իսլամ Անսիքլոփետիսի, Ահլաթ: Հայ պատմիչներու մոտ Խլաթի հիշատակության համար տ. Ինճիճեան, Հնախոսութիւն, էջ 121—122 և Բնաշխարհիկ բառարան, Ախլաթ:

[8] Սուրբ նշան, այսինքն սուրբ նշան խաչի շատ գործածական է խաչը անվանելու համար: Համաձայն դյուցազնավեպին տարբերակներուն, Դավիթ իր աջ թևին վրա կը կրեր խաչ մը, բայց ԺԶ դարու այս տարբերակին մեջ առարկա մըն է, որ կը հիշվի, ինչ որ հակառակն է ուրիշ տարբերակներու ըստ որոնց Դավիթի խաչը, որ կոչված է նաև «թալիսման խաչ», միշտ Սասուն կը մնար: Դավիթի հետ թաղված է ըստ ավանդության:

Դյուցազնավեպին այս խաչը զանազան անուններու տակ կը հիշատակվի: «Սուրբ նշան»-ե զատ կը կոչվի «պարտած»-ի խաչ, «պատրազ»-ի խաչ, «պատրասա»-ի խաչ, «պատերազմ»-ի խաչ, «մարմնի խաչ»: Բոլոր այս բառերը չեն կրցած բացատրվիլ և մեկնված են իբր «պատարագի խաչ», ինչ որ ծանոթ չէ հայ եկեղեցվո ծիսակատարության մեջ:

վառված կանթեղի մը յուղը հայթայթելու համար։ Այս Դավիթ թագավորը շատ մեծ և շատ զորավոր իշխան մըն էր, որ կը թագավորեր ոչ միայն Հայաստանի, այլև շատ մը ուրիշ երկիրներու վրա մինչև Թուրքիա և Գահիրեի սուլթանը իրեն հարկ կը վճարեր։

Այս քաղաքին ամբողջ գավառը, որ մեծ է, կը կոչվի Սանսոն (Սասուն) մեկ կողմե մեծ իշխանության և ույժին պատճառով այս թագավորին, որ միշտ ապրեցավ այնտեղ, մյուս կողմե որովհետև շատ մոտը գտնվող դղյակի մը մեջ պահված են նիզակ մը և վահան մը, որ իրեն պատկանած են»[9]։

Խլաթի մասին խոսած ատեն է, որ Աֆոնսո հիշած է արդեն Դավիթը։ Միշտ ծովուն վրա (Վանա լիճը), հյուսիսակողմեն գրեթե մեկ ժոռնատա հեռավորությամբ կը գտնվի Ակլաթ կոչված գյուղ մը, որ ատենոք եղած է բազմամարդ մեծ քաղաք մը, քանդված է Դավիթ անունով հայ թագավորի մը կողմե, որպեսզի անկե չօգտվին թյուրքոմանները, որոնք այն ատեն երկիրը գրավելու վրա էին... Քաղաքին մոտ ժայռի մը վրա կը գտնվի դղյակ մը, քանի մը գմբեթավոր կլոր շենքերով, շատ բարձր և շատ հին։ Կըսեն թե շինված են Սամսոնի (այսինքն Սասունցի Դավիթ) կողմե, որ ծնած էր այնտեղ[10]։

Թենրեիրո, որ այցելած էր Խլաթ, կը գրեր նախքան Աֆոնսո. «Այդտեղի մոտ կա պզտիկ դղյակ-ամրոց մը և քովը շատ բարձր և շատ հին շինություններ, կլոր, շատ բարձր կամարներով, որ կը կոչվին «քումպեթ»[11]։ Երկրին մեջ կըսեն թե կառուցված են Սամսոնի կողմե և թե ան ծնած է այդտեղ»։

Թենրեիրո այցելած էր նաև Հազո, որ կը կոչե Ազու, ձգելե ետք Պիթլիսը և անցնելե ետք քաղաքե մը, որուն անունը չի տար։ «Ազու կը գտնվի,—

---

[9] Ուղեգրություններ, էջ 226—228։

[10] Ուղեգրություններ, էջ 217։

[11] «Քումպեյթ»-ները թուրքերեն «քունպէթ-քյումպեթ», պարս. «կոմպատ»-են, հայերեն, գմբեթ, ԺԳ—ԺԶ դարերու սելճուքյան, մոնկոլ և թյուրքմեն գերեզմանային հուշարձաններ էին։ Ասոնցմե մեկ քանիին շինության մեջ աշխատած պետք է ըլլան հայ որմնադիրներ, որովհետև այնտեղ կը նշմարվի հայկական ճարտարապետության ազդեցությունը Հ. Յ. Պ. Լինչ, Հայաստան, ճամփորդություններ և ուսումնասիրություններ, Բ, էջ 285—297։ Վալթըր Պախման, Եկեղեցիներ և մզկիթներ Հայաստանի և Քյուրտիսթանի մեջ, էջ 59—60։ Կոտֆրեյ Կուտվին, Պատմություն օսմանյան ճարտարապետության, էջ 101։ Իսլամական արձանագրություններուն համար տ. Ապտյուլ Րահման Ժերիֆ, Ահլաթ քիթապելերի, Սթամպուլ, 1931։

կը գրե,—բարձունքի մը վրա։ Հինգեն վեց հարյուր քրիստոնյա հայ բնակիչներ ունի։ Լավ կառուցված է։ Մյուսներուն (քաղաքներուն) մեջ խոսված լեզուն կը խոսվի այստեղ և հագուստները նույնն են։ Կը կառավարվի ուրիշ մահմետական քյուրտե մը, որ լավ կը վարվի բնակիչներուն հետ, կը ձգե որ ապրին ազատ, առանց արգելքի, իրենց եկեղեցիներով, սովորություններով և օրենքներով։ Այս շրջանին մեջ կան նաև քյուրտ կոչված մահմետականներ, որոնք հաշտ կապրին հայերուն հետ, թեև նույն լեզուն չեն խոսիր։ Ամենուն միջև կը տիրե համակերպություն և միայն հայերը չէին ուզեր հնազանդիլ տեղվույն իշխողին, որ սակայն մեծապես կօգտվի իրենցմե, որովհետև հողագործ և վաճառական են և տուրք կը վճարեն իրեն։ Այս իշխանը իր ազատ կամքով միայն կը հնազանդի Թուրք սուլթանին։ Քանի մը օր մնացի այս քաղաքը, ուր բնակեցա քարվանսերայի մը մեջ, այնտեղ հանդիպեցա կարգ մը հայ քրիստոնյա վաճառականներու, որոնց մեջ կար ջորեպան մը, որ ըսավ թե պատրաստ է զիս առաջնորդելու։ Մեկնումես առաջ քաղաքին տերը կանչեց զիս իր դղյակը։ Զինքը գտա մեծ իշխանի մը շքեղության մեջ, շատ սիրալիր բառերով ինծի հարցուց գործերուս մասին։ Լավագույնս պատասխանեցի իրեն կրցածիս չափ և ըսի որ նպատակ ունեի ճամփորդությունս շարունակելու, որու պատասխանեց, թե սխալ կընեի և թե ավելի լավ էր, որ բավական երկար ատեն մնայի լեզուն սորվելու համար, որովհետև ավելի հեռուն պիտի անցնեի հողամասերե, ուր կը տիրեն Թուրքերը, որոնք շատ չար և կասկածոտ են և կրնան զիս բանտարկել... Ըսավ դարձյալ, որ քանի մը օր իր մոտ մնամ տեսնելու համար այդ մարդոց դեմ իր մղած պատերազմը։ Բայց նախընտրեցի հրաժեշտ առնել կրցածիս չափ սիրալիր կերպով և վերադարձա քարվանսերայը, ջորի մը վարձեցի քրիստոնյայե մը, որու հետ արդեն խոսած էի և մեկնեցանք։ Այս քաղաքին մոտ կա շատ հին պզտիկ դղյակ մը, ուր ինծի ըսին թե կը գտնվին Սամսոնի նիզակը և վահանը»։

Ինչպես կը տեսնվի, Աֆոնսոյի կողմե կատարված Հազո քաղաքին նկարագրությունը մոտ է Թենրեիրոյի նկարագրության։ Նույնն է պարագան Պիթլիսի, Մայաֆարքինի և Ամիդի նկարագրություններուն Աֆոնսոյի կողմե։ Նմանությունը ուշագրավ է։

Այս բաղդատություններուն վրա հիմնվելով և նկատի առնելով, որ Թենրեիրոյի ճամփորդության պատմությունը առաջին անգամ հրատարակված է 1560-ին, Մեսթր Աֆոնսոյի ճամփորդութենեն հինգ տարի առաջ, կարելի է հավաստել, թե այս վերջինը ծանոթ եղած է Թենրեիրո-

յի գործին և օգտագործած է մասնավորաբար կարգ մը նկարագրություններ Հայաստանի քաղաքներու, ուր այցելած են երկուքն ալ, որոնց մեջ Ախլաթը ուրկե Թենրեիրո միայն անցած է, ավելցնելով մանրադեպեր, ավանդություններ և հայերու հետ կապ ունեցող ուրիշ պատմություններ, զորս շատ հավանաբար իրեն պատմած է իր ճամփու ընկերը, Սիմոն Ֆերնանտեզ հայը, իր երկար շրջագայություններուն և քարվանսերայներուն մեջ գիշերային հսկումներուն ընթացքին։ Այս կետը մասնավորաբար բացահայտ է Սասունցի Դավիթի վերաբերյալ մանրամասնություններուն առնչությամբ, որովհետև Թենրեիրոյի տեղեկագրության մեջ կը գտնենք միայն հիշատակությունը Հազոյի դղյակին, ուր պահված էր նիզակը և վահանը, և այն ծանոթությունը, որ կուտա, երբ Խլաթը կը նկարագրե, տեղական ավանդության մասին, ըստ որու Սամսոն ծնած է այնտեղ և շինած է «բոմպեյթ» կոչված կառույցները, սակայն բարեբախտություն մըն է, որ Հազոյի նկարագրության մեջ ավելցուցած է պատում մը Դավիթի դյուցազնավեպին։ Բայց ստույգ է, որ որքան ալ չնչին ըլլան, հսկա Թագավորին վերաբերյալ հիշատակությունները կը գտնվին արդեն Թենրեիրոյի գործին մեջ, որ կը խոսի 1524-ին կատարված ճամփորդության մը մասին, այսինքն Մեսթր Աֆոնսոյի ճամփորդութենեն 11 տարի առաջ։

* * *

Սասունցի Դավիթի ավանդության մասին երկու փորթուկալցի ճամփորդներուն կողմե հաղորդված տեղեկությունները տեղի կուտան հարցումի մը և առիթ կընծայեն քանի մը հաստատումներու։

1. Հիմնական հարցումը, որ կը կատարվի հետևյալն է. ճամփորդները իր ամբողջությա՞նը մեջ փոխանցած են ավանդությունը այնպես ինչպես պատմված է իրենց, կամ թե քանի մը հատվածնե՞ր միայն պահած են անկե։

Այս հարցման դրական կամ ժխտական պատասխան չկա։ Բացահայտ է, որ Թենրեիրո լսած կամ պահած է դյուցազնավեպեն քանի մը պատկերներ միայն, բայց նույնը չէ Աֆոնսոյի պարագան, որ նշած է, շնորհիվ իր հայ թարգմանին, նույնիսկ այնպիսի բաներ, որոնց չի կրնար հավատալ ոևէ ողջամիտ մարդ։ Կարելի է ուրեմն ենթադրել, որ Աֆոնսոյի կողմե հաղորդված ավանդությունը հիմնականին մեջ այն է, զոր կը պատմեին Հազոյի մեջ ԺԶ դարուն։

Եթե այս վարկածը ընդունվի, պետք է եզրակացնել, որ ԺԶ դարուն ծանոթ չէին ոչ Նախահայրեր և ոչ շառավիղներ Դավիթի։

2. Փորթուկալցի ճամփորդները Դավիթի մասին լսեցին միայն Խլաթեն մինչև Հազո (Սասուն)։ Ավանդությունը ծանոթ էր միայն շրջանի մը մեջ, որուն սահմանները կարելի չէ ճշտել ստուգությամբ, բայց որ կը տարածվեր Վանա լիճին շուրջը, Վասպուրականի մեջ, մինչև Արզանենի գավառը, որու մեջ պարունակված է Սասունը։

Այն իրողությունը, որ Աբեղյանի և Մելիք-Օհանջանյանի Ա հատորին մեջ հրատարակված տարբերակները պատմողները մեծ մասամբ բնակիչներ են Մոկսի, Վանա լիճին հարավը և Արզանենի արևմուտքը և մյուսներուն մեծամասնությունը վանեցիներ են, կը հաստատե ինչ որ վերը ըսված է։

3. Հազոյի մեջ պատմված ավանդությունը ԺԴ դարեն ետք կազմված է։ Խլաթ կործանված է 1246-ին երկրաշարժե (կործանում, որ վերագրված է Դավիթի) և Խլաթի Էյումպերները (որոնց կառուցումը ևս վերագրված է Դավիթի) շինված են ԺԴ դարու վերջը։ Եթե ընդունինք, որ քյուրտերը Սասունի վրա իրենց տիրապետությունը հաստատեցին ԺԵ դարու սկիզբը, այդ պարագային ավանդությունը, այնպես ինչպես կը պատմվի, կազմված է ԺԵ դարուն մեջ։

4. Եթե, ինչպես ավանդությունը կըսե, Դավիթ կործանեց Խլաթը որպեսզի չիյնա Թյուրքմեններուն ձեռքը, ուրեմն տերն էր կամ թագավորը քաղաքին։ Արդ, Խլաթ ոչ մեկ հայ տեր չէ ունեցած Ժ դարեն սկսյալ, որ ընդունված է իբր ժողովրդական ավանդավեպին ծագման թվականը,— Խլաթ այն ատեն կը գտնվեր Շահ-ի Արմեններուն ձեռքը։

Կարելի է ուրեմն հարց տալ թե կարգ մը դեպքեր, որոնք տեղի ունեցած են Շահ-ի Արմեններու և իրենց հաջորդներուն ժամանակ չե՞ն օգտագործված դյուցազնավեպին հեղինակներուն կողմե ճոխացնելու և գեղեցկացնելու համար զայն։ Խլաթի պատմության մանրամասն ուսումնասիրությունը կրնա նպաստել դյուցազնավեպին լուսաբանմանը[12]։

5. Հազո քաղաքին մասին ոևէ հիշատակություն չկա Աբեղյանի և Մելիք-Օհանջանյանի կողմե հրատարակված շուրջ հիսուն տարբերակներուն մեջ (տ. Անվանացուցակ Գ հատորի)։

6. Հետաքրքրական է դիտել, որ ԺԹ դարուն Հազոյի հայերը ոչ մեկ հիշողություն պահած էին Դավիթեն, բայց այնտեղ կմեծարեին Թոնիկ

[12] Շահ-ի Արմեններու պատմության համար տե՛ս Հ. Կ. Թուրշյանի ուսումնասիրությունը «Պատմա-բանասիրական հանդեսին» մեջ, 1964, 4, էջ 117—133 (ռուսերեն ամփոփումով, էջ 133—134)։

Մամիկոնյանի հիշատակը, որդի քաջն Մուշեղի, որ հարձակվեցավ Տուղրիլ Պեկի Թուրքերուն վրա և վտարեց զանոնք Սասունեն ԺԱ. դարուն։

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

Ինչ որ գիտենք Մեսթր Աֆոնսոյի հայ թարգմանին վրա, քաղված է նույն ճամփորդին տեղեկագրութենեն։ Ոչինչ կը թույլատրե ենթադրել, որ հայ թարգմանը թողած է գրավոր նոթեր կամ հուշագրություններ։ 1565-ին Օրմուզի մեջ ան ընկերացած է Մեսթր Աֆոնսոյի և միասին մեկնած են կարավանով մը, որ Պարսկաստանի և Հայաստանի ճամփով, կերթար Հալեպ։ Վախնալով, որ կը ճանչցվի Թուրքերեն, Մեսթր Աֆոնսո ինքզինքը կը ներկայացներ իբր հայ վաճառական մը և կը կրեր հայերու հատկանշական հագուստը և գտակը[1]։ Կըսե նույնիսկ, որ Պիրեճիկի մեջ, Ուրֆայի և Հալեպի միջև, մազերը երկար ձգած ըլլալով, զինքը հայ եկեղեցական կարծեցին և Եփրատեն անցնելու համար մեկ «շահի»-ի[2] սակը կիրարկեցին իրեն, ինչպես սովորություն էր հայ եկեղեցականներուն համար, որոնք մեծ թիվով Երուսաղեմ ուխտի կերթային։ Աֆոնսոյի հետ կը ճամփորդեր փորթուկալցի կրոնավորուհի մը, Մայր Մեսիա տե Ժեզյու անունով, որ ուրիշ տիկնոջ[3] մը և քանի մը բարեպաշտներու հետ Ս. Տեղյաց և Բեթլեհեմի եկեղեցիին այցելության կերթար և իրեն հետ կը տաներ Հնդկաստանի փոխարքա կոմս Ռետոնտոյի տված նվերները և ողորմությունները։ Նույն կարավանին մեջ կը գտնվեր նաև վենետիկցի Կալեասո տե Լապալլո[4] և ուրիշ փորթուկալցի մը Ժոան Արակուզեո[5] և բազմաթիվ մարդիկ տարբեր ազգություններե։ Մայր Մեսիա, որ ավելի քան վաթսունըհինգ տարեկան էր, ճամփան մեռավ 20 օգոստոս 1565-ին, Հալեպ հասնելե շատ առաջ և կարգ մը մրցակցություններե ետք Աֆոնսո, Կալեասո տե Լապալլո և Սիմոն Ֆերնանտեզ կտակարար նշանակվեցան. հանգուցյալը պատրաստել տված էր ցուցակը բոլոր թանկագին քարերուն, մարգարիտներուն, զոհարեղեններուն և ոսկեդրամներուն, զորս հետը կը տաներ և կտակ բրած էր, որ բոլոր այս իր ունեցածները հանձնվեին սրբատեղիներու պահապան հոր, Հալեպի մեջ, եթե այնտեղ է, և կամ տարվեին Երուսաղեմ։ Իր պաշտոնը կատարելե ետք Աֆոնսո շարունակեց իր ճամփան դեպի Լիզպոն, անցնելով Թրիփոլիեն, մինչ Սիմոն Ֆերնանտեզ կը վերադառնար Հնդկաստան-Օրմուզի ճամփով, իր հետ տանելով նամակ մը, զոր Աֆոնսո իրեն հանձնած էր և որ ուղղված էր Օրմուզի հրամանատարին. իրեն վստահած էր նույն ատեն իր սարուկը

[1] Քյուրտերը մահմեդականի հագուստ կը կրեին կարմիր գտակով, հայերը և ուրիշ քրիստոնյաներ կապույտ կամ տարբեր գույնով, բացի ճերմակեն, որ վերապահված է Թուրքերուն և ուրիշ մահմետականներու. հրեաները կը կրեն դեղին գտակ (Ուղեգրություններ, էջ 207)։

[2] Շահի-շահի, պարսկական դրամ։ Ըստ «Կարմելյանները Պարսկաստանի մեջ»-ի մեկ ծանոթագրության, 1729-ին մեկ դահեկանը կարժեր 9 շահի։

[3] Մայր Մեսիայի ընկերուհին մեռավ ժանտախտե, երբ Հալեպ հասավ։ Նախապես կատարած էր իր կտակը Աֆոնսոյի ձեռքով, Սիմոն Ֆերնանտեզը իր կտակատարը նշանակելով։ Կը թողուր 200 «քրուզատո»-ի արժեքով մարգարիտներ, զորս Աֆոնսո հանձնեց կտակակատարին։ Մարգարիտները պիտի ծախվեին Հալեպի մեջ և դրամը պիտի օգտագործվեր Երուսաղեմի Սուրբ Տան կողմե պատարագի և աղքատներու համար, վասն իր և ամուսնույն հոգվույն խաղաղության, Ուղեգրություններ, էջ 228։

[4] Փանթալեոն տ'Ավեիրո, իր «Ուղեգրություն Ս. Տեղյաց և անոնց մասնահատկությունները», 1593 (7-րդ հրատ. վերատեսված և վերստուգված Անթոնիո Պախանի կողմե, Քոիմպրա 1927, էջ 227) գործին մեջ կը տեղեկացնե, որ 1563-ին Երուսաղեմեն վերադարձին Դամասկոսի մեջ հանդիպեցավ վենետիկցի Միսեր Կալեասոյի, շատ պատվավոր վաճառական, որու գլխավոր առևտուրն էր աղյուծի, վագրի և ինձի մորթը։ Ունեցած մորթերը ամբողջ տուն մը կը լեցնեին։ Թուրքերուն և վենետիկցիներուն միջև սկսած պատերազմին հետևանքով շատ վաճառականներ հեռացած էին Հալեպեն և Կալեասո ևս կը պատրաստվեր մեկնելու։ Իր գործերը կարգադրելով որոշեց Փանթալեոն տ'Ավեիրոյի ընկերանալ մինչև Թրիփոլի։ Փանթալեոն փախցուց Կիպրոս գացող առաջին նավը, որու վրա բարձրացած էին, կըսե, իր ընկերները։ Կալեասո անոնց մե՞ջ էր կամ Թրիփոլի՞ մնաց։ Չենք գիտեր, բայց իրողություն է, որ մայիս 1565-ին Օրմուզի մեջ միացավ Հալեպ գացող այն կարավանին, ուր էր Մեսթր Աֆոնսո։

[5] Նամակի մը մեջ, զոր Լուրենսու Փիրեշ տե Թավորա, այն ատեն Փորթուկալի դեսպան Հռոմի մեջ, գրած է 9 նոյեմբեր 1560-ին Տոն Սեպաստիան թագավորին (պատճեն Աժուտայի մատենադարանին մեջ, Լիզպոն, Նամակներ Լուրենսու Փիրեշ տե Թավորայի, Ֆոլիո 134, հատ. Թ, էջ 89—93), կը գտնենք անունը Ժոան տե Ժորկա Արակուեզըսի, այն ատեն Գահիրեի մեջ, որ երաշխավորված է պատանդը, որ պիտի վճարվեր Մոսքաթի մեջ Ժոան տե Լիշպոայի հետ գերի բռնված և Գահիրե գտնվող քրիստոնյաներուն ազատագրման համար։ Թավորա նույն նամակին մեջ կը խոսի մտադրությանը մասին Արակուեզըսի, որ վստահելի մարդ և քանի մը լեզուներու տիրապետող, կուզե Հնդկաստան երթալ այնտեղ հաստատվելու համար, և այն առավելություններուն մասին, զորս թագավորը կրնա քաղել այս ծրագրեն այն պարագային, ուր պետք պիտի ըլլար Հնդկաստանեն մեկը ուղարկել ցամաքի ճամփով, որովհետև Արակուեզըս պիտի գիտնար լավագույն և ամենեն կարճ ճամփան։ Եթե Արակուեզըս ի գործ դրավ իր ծրագիրը, ուրեմն Հնդկաստանեն վերադարձի ճամփորդության մը ընթացքին է, որ Օրմուզեն անցնելով միացած պիտի ըլլա մայիս 1565-ին անկե մեկնող կարավանին։

զայն Հնդկաստան տանելու համար, աղատագրման նամակով մը[6]։ Աֆոնսո Սիմոն Ֆերնանտեզի համար կըսէ, թէ «աշխարհի մէջ չկա տեղ մը, ուր ան գացած չըլլա» և կը տեղեկանանք նաև, որ Մայր Մեսիա զայն լավ կըճանչնար, որովհետև իրեն ընկերացած էր ուրիշ առիթով մը, ուրկէ կրնանք հետևցնել, որ Սիմոն Ֆերնանտեզ մասնակցած էր Մայր Մեսիայի ճամփորդության, երբ ան առաջին անգամ Հնդկաստանէն գնաց Երուսաղեմ, քանի մը տարի առաջ, հայ ուխտավորներու հետ։ Արդարև, Ուղեգրություն Ս. տեղյացին մէջ, զոր գրած է Փանթալեոն տ'Ավեիրո[7], որ Երուսաղեմ գնաց 1563-ին, կը հիշատակվի, որ քանի մը տարի առաջ այնտեղ գտնված էր Մեսիա Փիմենթա, զոր կարելի է նույնացնել Մայր Մեսիա տէ Ժեզյուի հետ։ Աֆոնսո կըսէ նաև, թէ երբ կանցնեին Հայաստանէն, ուր գինին չի պակսիր, Սիմոն Ֆերնանտեզ շարունակ կը գտնվեր ալքոլի գոլորշիներուն մէջ[8]։

ՀԱՎԵԼՎԱԾ Բ
(Հիզյու, Հազո են)

1. Աքսո, ըստ Թենրեիրոյի, Հիզյու (Հիզու) ըստ Աֆոնսոյի. պաշտոնապես կը կոչվի Հազո և այսօր գյուղ մըն է միայն, որ կը գտնվի, ըստ Քեոյլերիմից-ի (Մեր գյուղերը), Սթամպուլ, 1938, էջ 336, Մուշի վիլայեթի Սասուն քազային մէջ և ըստ Մեսռուն յերլեր քլավուզը-ի (Ուղեցույց բնակյալ վայրերու), Անքարա, 1946, Ա, էջ 458, Բիթլիսի վիլայեթին Սիմեք պյուսաքին մէջ։ Այս տեղվույն անունը զանազան ձևերով նոտագրված է հայ և օտար հեղինակներէ. Հազզո, Հազու, Հիզու, Հզու, Խզու, Էքսյու, Աքսո։ Երբեմն շփոթված է Հազրոյի հետ (Մ. Նարանյան, Արևելք օրաթերթ, Կ. Պոլիս, 9 հունիս 1884)։

Այս տեղը անծանոթ է է դարու Աշխարհագրության, ինչպես և Վարդանի աշխարհագրության մէջ (ԺԳ դար)։ Այս վերջնույն 19 շարունա-

[6] Այնուհետև իր խոսքը չըլլար։ Բայց փոխարքա Տոն Անթան տէ Նարոնիայի մեկ «ալվարա»-ին (հրովարտակ) մէջ, թվագրված Կոայէն 26 հունվար 1567-ին, հիշատակություն կը կատարվի Սիմոն Ֆերնանտեզի մը, զոր փոխարքան կը նշանակէ Հաշվակալատան մէջ, իրեն ուղղված փաստաթուղթերը արձանագրելու պաշտոնով և պիտի ստանար ռոճիկ, սնունդ և բնակարան (Գիրք 40, Յոլիո 122ր)։ Քաղված «Փորթուկալի Արևելյան արխիվներէն, Կոա, 1865, պրակ 5, 2ա մաս, փաստաթուղթ 586, էջ 625. Բովանդակությունը։

[7] Փանթալեոն տէ Ավեիրո, անդ, էջ 221—222։ Տե՛ս նաև Հայերը եղբ. Փանթալեոն տ'Ավեիրոյի Ս. Տեղյաց ուղեգրության մէջ, Հանդես Հայկ. ուսումնասիրությանց, Ն. Շ., Գ, էջ 369—380 (ֆրանս.)։

[8] Ուղեգրություն, էջ 151։

նակողներուն մէջ (կան ուրիշ անվավեր յոթանասուններ) միայն մեկը (1698-ին և 1716-ին Վենետիկի մէջ ընդօրինակված ձեռագիր 268) կը գրէ. Սասուն, որ հիմա կը կոչվի Հզու Հրատ. Հ. Պերպերյան, Փարիզ, 1960, էջ 43, 1, 230։

Սեն-Մարթեն, Պատմական և աշխարհագրական հուշագրություններ Հայաստանի մասին, Ա, էջ 175, կը շփոթէ Հիզու Հիզանի հետ, որոնք տարբեր տեղեր են։ Սեն Մարթենի աղբյուրը Չամչյանի «Հայոց պատմությունն» է, Գ, 1786, Անվանացանկ, էջ 162. բայց Չամչյան Հզու կամ Հիզու գտած է միայն Առաքել Դավրիժեցիի մոտ (ԺԷ դար)։

2. Մեզի ծանոթ ամենահին հիշատակությունը Հազոյի կը գտնվի իտալացի վաճառականի մը Պարսկաստան կատարած ճամփորդության նկարագրության մէջ, երբ կը գտնվեր շեյխ Իսմայիլի բանակատեղին, 1507-ին։ Պետք է անցած ըլլա Սասունի շրջանէն, ուր կը հիշէ էքսո, Սանսոն և Արսեմ քաղաքները, որոնցմէ յուրաքանչյուր դղյակ մը ունեը (Ռամուզիո, Նավարկություն..., Ա, էջ 78, անգլերենի թարգմանված «Ճամփորդություն դեպի Թանա և Պարսկաստան» հատորին մէջ, Հեքլյութ ընկ., 1873, էջ 153։ Բայց երկու փորթուկալցի ճամփորդներուն կը պարտինք ամենէն մանրամասն տեղեկությունները Հազո) Հիզույի վրա ԺԶ դարուն։ Արդեն հիշված ըլլալով վերը, պետք չկա զանոնք կրկնելու այստեղ։

Դարձյալ ԺԶ դարուն է, որ հայ վաճառական խոճա Մուրատ կը գնէ Մաշտոց մը և Գանձարան (ծիսական երգերու հավաքածո) մը, զորս ավարառուներ ծախու հանած էին Հզույի շուկային մէջ։ Խոճա Մուրատ որդին էր խոճա Հովհաննեսի և եղբայրը խոճա Մելքիսեթեքի։ Իր եղբորորդիները Հովհան և Հուսեփ նմանապես խոճաներ (վաճառականներ) էին (հիշատակարան 1538-ին գրված ձեռագրի մը) (Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջագայից), կազմ. Ս. Մուրատյան և Ն. Մարտիրոսյան, 1967, էջ 124։

ԺԷ դարուն կը հիշվի Ստեփանոսի այցելությունը Հզու (Հ. Տաշյան, Ցուցակ ձեռագրաց Վիեննայի Մխիթարյաններու, էջ 320)։ Վերջապես, Առաքել Դավրիժեցի (ԺԷ դար) կը հիշատակէ երկու վարդապետներ Հզույի կամ Հիզույի, հզուեցի ձեւին տակ (Առ. Դավրիժեցի, Պատմություն, 1896, Ա, էջ 11—Թրգմ. Պրոսեի, Ժողովածու հայ պատմագիրներու, Ա, էջ 273)։

ԺԹ դարու վերջին քառորդէն սկսյալ է, որ կը գտնենք քանի մը հակիրճ, բայց հետաքրքրական տեղեկություններ Հազոյի մասին։

1883-ին Կ. Պոլսո հայերէն օրաթերթ Մասիս-ի մէջ (թ. 21 մայիսի) անանուն թղթակից մը կը նկարագրէ Հաղոն, զոր կը կոչէ Հագգո·

«Հագգո Սասունի լեռներուն մէկ կատարին վրա։ Կան 200 տուներ, որոնցմէ 120-ը հայերու և 80-ը քյուրտերու կը պատկանին։ Հայերը հունական ոճով եկեղեցի մը ունին, Աստվածածին անունով և քաջ Մուշեղի բերդը, տխուր հիշատակ Դ դարու։ Այս բերդին գագաթը կը գտնվին ս. Հովհաննու վանքին ավերակները և ստորոտը ս. Փրկչի վանքին ավերակները։ Քառորդ ժամ հեռու է ս. Կանոնի վանքը...»։

Նույն 80-ական թվականներուն, ճամփորդ մը Մանուել Միրախորյան, ավելի երկարորեն կը խոսի Հաղոյի վրա, զոր կը կոչէ Հզու կամ Խզու. «Գյուղաքաղաքը ատենօք գլխավոր քաղաք-ամրոցը եղած է նույնանուն Ճազային։ Կը թվի թե իր անունը աղավաղումն է նախկին Կղեղ գավառին Աղձնիք (Արզանէն) նահանգին մէջ։ Կը գտնվի ընդարձակ տափաստանի մը վրա, որ շրջապատված է լեռներով և գետերով, բավական ծառախիտ է և անոնց մէջ կը ձևացնէ գրեթէ կղզի մը։ Կլիման կիզիչ է և վատառողջ, որմէ բնակիչները կը տառապին ամառը։ Հայ ընտանիքներուն թիվը կը հասնի 220-ի և մահմետականներունը 100-ի։ Հայերը ունին հին եկեղեցի մը պարզ կառուցվածքով և ս. Աստվածածին անունով, որ կից է մեծ խորանի մը, նվիրված Մուշեղի, որուն անունը ևս կը կրէ եկեղեցին... Հայ բնակչությունը կրոնասեր է և կրթասեր։ Ընդհանրապես կը պարապի առևտուրով, ի բաց առյալ փոքրամասնություն մը գյուղացիներու և արհեստավորներու... Կը պատմեն թե 80—85 տարի առաջ Հզու կը գտնվեր քյուրտ պեկերու տիրապետության տակ և շրջանին քյուրտ ցեղապետը կը բնակեր այնտեղ... Հզույի ամրոցը այսօր ավերակ է։ Երկու կողերուն վրա կը տեսնվին սուրբերու երկու պզտիկ մատուռներ, որոնք կը թվին ըլլալ նախնյաց աղոթարաններ (Մանուել Միրախորյան, Նկարագրական ճամփորդություն Արևելյան Թուրքիո հայաբնակ վայրերու, Ա, Կ. Պոլիս, 1884, էջ 71—75)։

Ըստ Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) Վանի, Պիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 156, որ այս գյուղերը այցելած է 1909—1910-ին, Հաղոյի մէջ կար 150 հայ ընտանիք (տեղեկություն տրված Մուշի առաջնորդարանին կողմե, որ 1914-ին կատարած է թեմին հայկական դպրոցներու վիճակագրությունը, Հաղո 350 ընտանիքե բաղկացած հայ բնակչություն մը ուներ՝ երեք հազար հոգի) Վ. Ա. Պետոյան, Սասունի բարբառը, Երևան, 1954, էջ 177։ Կ. Պոլսո հայ մամուլեն կատարված քաղվածքները կը պարտինք Պ. Լ. Խաչիկյանի (Փարիզ)։

1. Վ. Շ. Սահակյանի ուսումնասիրությունը Պատմա-բանասիրական հանդեսին մէջ, 1971/2, էջ 94—106, կը հաստատէ ինչ որ վերը ըսված է Դավիթի ավանդության տարածման շրջանակին մասին։

2. Վ. Շ. Սահակյան Բանբեր Երևանի համալսարանի մէջ 1971/3, էջ 191, հրատարակած է հատված մը Դավիթի դյուցազնավեպեն, վերնագրված «Առյուծ Մհեր»։ Անծանոթ կը մնան թվականը ուր այդ հատվածը ստացված է, ինչպես և պատմողին և ստացողին անունները։ Միակ ցուցմունքը, որ կա կըսէ. Հավաքված Հագգո գյուղաքաղաքին մէջ տեղական բարբառով։

3. Թորրե տո Թոմպոյի (Վավ. Ա, Թ. 12181) ձեռագիր նամակի մը մէջ, որ գրված է Ճենովայեն և ուղղված է Փորթուկալի թագավորին 2 հուլիս 1554-ին, շատ հավանաբար կրոնավորի մը կողմե, որ այդ քաղաքը կը գտնվեր, Սիմոն Ցերնանտեզի հիշատակությունը կը գտնենք հետևյալ տողերով.

«Հռոմի վերին հրամանատարը կը գրէ ինծի, որ փնտրեմ Սիմոն Ցերնանտեզ հայուն նավը, ինչ որ կատարվեցավ կարելի ամբողջ փութով։ Կուգա Ձեր Բարձրապատվության տեղեկացնելու ինչ որ գիտէ և ինչ որ տեսած է Պարսկաստանի և Հնդկաստանի առևտուրին մասին, ինչպես և Գահիրէ գտնվող գերյալներուն մասին և այս պատճառով ավելի մանրամասն պիտի չգրեմ»։

Հետևաբար միայն Մեսթր Աֆոնսոյի չենք պարտիր ինչ որ գիտենք Սիմոն Ցերնանտեզի մասին։

4. Ճեմս Մորիեր, Երկրորդ ճամփորդություն Պարսկաստանեն, Հայաստանեն և Փոքր Ասիայեն Կոստանդնուպոլիս 1810-են 1816, Լոնտոն, 1818 կը հիշե, որ երբ Էջմիածին այցելեց, կաթողիկոսը իրեն նվիրեց ատարկա մը, զոր հնություն կը կոչեր և որ կը ներկայացներ «պատկեր մը հեծած ձուկի մը վրա, որ բուստի մէջ փորագրված էր և զոր հաճոյությամբ կը կոչեր դիմագիծը Հայաստանի հին թագավորներեն մեկուն՝ Սամսոն անունով և որ ուրիշ բան չէր, եթե ոչ Պոսիթոն մը»։ Ձուկի մը վրա հեծած Սամսոնը, փոխանակ իր Ջելալի նժույգին, ինքնատիպ գաղափար մը կը թվի։

ՀԱՅՐ ԱՆԹՈՆԻՈ ՏԵ ԿՈՒՎԵՅԻԱ ՀԵՂԻՆԱ՞ԿՆ Է 1609-Ի «ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹՅԱՆ» ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎՐԱ

Հայր Անթոնիո տե Կուվեյիա, միսիոնար Ս. Օգոստինոսի կարգեն, որ չորս անգամ Պարսկաստան գնաց 1602-են 1613-ի միջև, հեղինակն է երկու նշանակալի գործերու, որոնք միակն են ուր հիշատակած է իր առաջին առաքելությունները այդ երկրի մեջ. առաջինը՝ «Ճամփորդություն Կոայի արքեպիսկոպոս եղբ. Տոն Ալեյշո Մենեզըշի եկեղեցապետ արևելյան Հնդկաստանի, կրոնավոր Ս. Օգոստինոսի կարգին։ Երբ եղավ Մալավարի լեռներուն և այն վայրերուն մեջ ուր կը բնակին Ս. Թովմասի հին քրիստոնյաները և զանոնք դուրս բերավ բազում սխալներե և հերետիկոսություններե, որոնց մեջ կը գտնվեին և ենթարկեց մեր կաթոլիկ հավատքին և Հռոմեական սուրբ եկեղեցիին հնազանդության, որմե հազար տարիեն ավելի է որ բաժնված էին, քաղված հեղինակավոր անձերու գործերեն, որոնք ականատես եղան ընդ ամենայնի, եղբ. Անթոնիո Կուվեյիայի կողմե, Քոիմպրա 1606» այսուհետև պիտի հիշատակենք Ճամփորդություն *անվան տակ, իսկ երկրորդը՝ «Տեղեկագրություն ուր կը պատմվին պատերազմները և հաղթանակները զորս Պարսկաստանի մեծ թագավոր Շահ Աբբաս տարավ մեծ թուրք Մահոմեթոի և իր որդվույն Ամեթեի դեմ, ինչպես ի հայտ կուգան դեսպանություններեն զորս Փորթուկալի կաթոլիկ վեհափառ թագավոր Ֆիլիփ Բ-ի հրամանով կատարեցին Ս. Օգոստինոսի կարգեն քանի մը կրոնավորներ Պարսկաստանի մեջ, Լիզպոն 1611», պիտի հիշատակենք* Տեղեկագրություն *անունով*[1]։

[1] Jornada de Arcebispo de Goa Dom Frey Aleixo de Meneses Primaz da India Oriental Religioso da Ordem de S. Agostinho. Quando foy as Serras de Malawar & lugares em que morao os antigos Chistiaos de S. Thome, & os tirou de muytos erros, & heresias em que estavao, & reduziu a nossa Fe Catholica, & obediencia de Santa Igreja Romana de qual passave de mil annos que estavao apartados, recopilada de diversos tratados de pessoas de autoridade que a tudo foram presentes, por Frei Antonio Gouveia..., Coimbra, 1606, &

Սովորություն է նաև Անթոնիո Կուվեյիայի վերագրել ուրիշ երկու անանուն գործեր, որոնք երկուքն ալ կը վերաբերին Պարսկաստանի և կը կարծվի թե Լիզպոն հրատարակված են 1609-ին։ Կառաջադրենք ապացուցանել թե Ա. Կուվեյիա կապ չունի այդ գործերուն հետ, բայց օգտակար կը համարենք նախապես ներկայացնել քանի մը նկատողություններ իր միսիոնարական, դիվանագիտական և գրական գործունեության վրա խնդրո առարկա ժամանակամիջոցին ընթացքին 1602-ի և 1613-ի միջև։

1602-ին, ուրիշ երկու օգոստինյաններու հետ, Ժերոնիմո տա Քրուզ և Քրիսթովան տո Էսփիրիթո Սանթո, մաս կազմեց Պարսկաստանի մեջ առաջին պաշտոնական առաքելության։ 1603 փետրվարին, մինչ իր ընկերները կը մնան Սպահանի Ս. Օգոստինյան վանքին մեջ, կը մեկնի Օրմուզ, ուրկե կորոշե Պարսկաստան վերադառնալ, հրաժարելով Հնդ-

Relacam em que se tratam as querras e grandes vitorias que alcancou o grande Rey da Persia Xa Abbas, do grao Turco Mahometo, e suo filho Amethe as quaes resultarao das Embaxadas que por mandado da Catholica Real Majestade del Rey D. Felippe 11 de Portugal fizerao algune Religiosos da Ordem dos Ermitas de Santo Agostinho à Persia, Lisbonne, 1611.

Այս երկու գործերը լայն ծավալում ունեցան։ «Ճամփորդությունը» թարգմանվեցավ սպաներենի, հետո ֆրանսերենի, վերնագիր ունենալով Արևելյան պատմություն առաքելական և հռոմեական կաթոլիկ եկեղեցիին մեծ հառաջդիմություններուն, ներարկումովը ճշմարիտ եկեղեցիին հին քրիստոնյաներու Ս. Թովմասի կոչված, բազմաթիվ ուրիշ հերձվածողներու և հերետիկոսներու. եվ դեռ կրոնափոխություն մահմետականներու, մավրիտանացիներու և հեթանոսներու, բարի արդյամբ գերհարգելի և մեծանուն տեր Տոն Ալեյշո տե Մենեզըշի, Ս. Օգոստինոսի միաբաններու կարգեն, արքեպիսկոպոս Կոայի և եկեղեցապետ ամբողջ Արևելքի. *խմբագրված փորթուկալերեն լեզվով գեր. եղբ. Անթ. Կուվեյիայի կողմե, հետո սպաներենի վերածված գերհարգելի Ֆրանսուա Մունիոզի կողմե և ֆրանսերենի թարգմանված եղբ. Ժան-Պաթիսթ լը Կլենի կողմե։ Պրյուքսել, Ռյութժեր Վելփիուս, 1609, 80։ Նույն տարին ուրիշ հրատարակություն մը կատարվեցավ Անվերսի մեջ Վերտրյուսեմի կողմե, հետո ուրիշ մը Քոլոնեբ քաղաքին մեջ 1611-ին Հենինկի կողմե (տ.* Կրեկորիո տե Սանթիակո Վելա, *Փորձ մը Իսպերո-Ամերիկյան մատենագիտության Ս. Օգոստինոսի կարգին, Մատրիտ, 1917)։ Կուվեիա։ մատենագիտության մեջ, որ շատ երկար է, Սանթիակո Վելա կուտա մանրամասն ուսումնասիրություն մը զանազան թարգմանություններուն, էջ 255—266։*

«Տեղեկագրությունը» ֆրանսերենի թարգմանվեցավ Լիզպոնի մեջ իր հրատարակութենեն երեսունըհինգ տարի ետք, վերնագիր ունենալով Պատմություն մեծ պատերազմներուն և հաղթանակներուն զորս տարավ Պարսկաստանի թագավոր Շահ Աբբաս Թուրքիո կայսրներ Մահամեթի և իր որդի Ահմեթի դեմ և ճամփորդություն Ս. Օգոստինոսի քանի մը կրոնավորներու, որոնք Պարսկաստան ուղարկվեցան կաթոլիկ թագավոր Տոն Ֆիլիփ երկրորդ Փորթուկալի թագավորին կողմե, *հեղինակությամբ գեր. եղբ. Անթուան տը Կուվեյիայի ... թարգմանված փորթուկալերեն սկզբնագիրեն, Ռուան, Ն. Լուազել, 1646, 4°։*

կաստան երթալէ։ Մայիսի վերջը կը ձգէ ուրեմն Օրմուզը Շիրազ երթալու համար, ուր պիտի բանակցի Օրմուզի թագավորին և Շիրազի սուլթանին միջև առկախ մնացած հարցերու մասին[2]։ Կոա կը վերադառնա 1603-ի ամռան վերջը. Նույն տարվո 27 սեպտեմբերին Ճամփորդությունը կը ձոնե Ակոսթինիո տը Ժեզյուի, արքեպիսկոպոս Պրակայի։

Իր նախաբանին մեջ Կուվեյիա կը բացատրե թե իր գործը գրեթե ավարտած էր, երբ 1602-ին Պարսկաստան ղրկվեցավ Կոայի արքեպիսկոպոսին և փոխարքա Այրըշ տե Սալտանիայի կողմե։ Կը տեղեկացնե թե Գ. գիրքին մեջ անցողակի կերպով հարց եղած է Սոքոթորա կղզիին և Պարսկաստանի թագավորության մեջ մեր Ս. Օգոստինոսի կարգեն քանի մը եկեղեցականներու պատահածին մասին, ուղարկված նույն արքեպիսկոպոսին կողմե, երբ հետևանք այդտեղի մարդոց կարգ մը ծեսերուն և սովորություններուն, բան մը որ հաճելի պիտի ըլլա ընթերցողներուն։ Բնագրին մեջ կը ճշտե. «Եվ որպեսզի տեսնվի ամեն ինչ որ պատահեցավ մեզի, թե ճամփու ընթացքին և թե շահին հետ պետության և քրիստոնեության վերաբերյալ հարցերուն մեջ, եկեղեցապետ արքեպիսկոպոսը ուզեց որ այստեղ արտագրվի այն նամակը, որ իրեն ուղղած ենք, ուր հակիրճ կերպով և կատարյալ անկեղծությամբ կը պատմենք ինչ որ տեղի ունեցավ և զոր (եթե աստված կամենա) ավելի հանգամանորեն պիտի պատմենք. ահա այդ նամակը»[3]։

Գրված 1603-ին, Ալեյշո տը Մենեզըշի կողմե Փորթուկալ ուղարկված նույն տարվո դեկտեմբերին մեկնող նավերով[4] և Քոիմպրայի մեջ հրատարակված 1606-ին, Ճամփորդությունը ուրեմն տպագրված առաջին գործն է, որ կը պարունակեր Ս. Օգոստինոսի երեք կրոնավորներուն Պարս-

[2] Կուվեյիա, Ճամփորդություն, թերթ 75—76։

[3] Նույն, անդ, թերթ 141բ։

[4] Պրակայի Seminário Conciliar (գրադարան), Հավաքածո Թ. 42։ Ուրիշ օրինակ մը Անդրծովյան Պատմական արխիվներուն մեջ, Լիզպոն, Հնդկաստանի մասնաբաժին, տուփ Թ. 1, նամակ Ալեյշո տե Մենեզըշի, Կոայեն 20 դեկտեմբեր 1603, ուր կիմացներ Պրակայի արքեպիսկոպոսին. «Այս տարի պիտի ուղարկվի մեծ երկասիրություն մը զոր գրած է եղբ. Անթոնիո տե Կուվեյիա ձեզի համար, ըստ մեջ իմ կատարած ճամփորդության մասին ... հրամայեցի որ անոր կցեն նամակ մը զոր ինծի ուղղված են Պարսկաստանի կրոնավորները այնտեղ դիպվածարար իրենց պատահածին մասին»։ 1603-ի վերջը Կոայեն մեկնող նավերը Լիզպոն հասան, մեկը՝ «Նոսսա Սենհորա տե Պեթանքուռ» 25 հունիս 1604-ին, մյուսը՝ «Սան Մաթեուշ», նույն ամսու 19-ին (տ. Պոթելիո տե Սուզա, նյութեր Հնդկաստանի ծովային զինվորական պատմության համար, Ա, Լիզպոն, 1948, էջ 656)։

կաստան կատարած ճամփորդության պատմությունը (Գ. գիրքին 137—152 թերթերը)։

Պարսկաստանի առաքելութենեն վերադարձին, 15 նոյեմբեր 1603-ին Կուվեիա անվանվեցավ խորհրդական Կոայի միաբանության և քիչ մը ավելի ետք, 8 դեկտեմբերին, մեծավոր Կրասայի վանքին։ Այդ պաշտոնին մեջ պիտի մնար մինչև 18 նոյեմբեր 1605։ Այդ տարվույն վերջավորությանը պատրաստ էր նավ նստելու համար դեպի Փորթուկալ, կառավարիչ Մարթին Աֆոնսոյի հրամանով, բայց Ալեյշո տե Մենեզըշ արքեպիսկոպոսը արգելք եղավ, այն պատճառաբանությամբ, թե «նամակները բավական էին»[5]։ Ընտրվեցավ կառավարիչ Կոայի «ժողովրդական դպրոցին», 25 նոյեմբեր 1605-ին և այդ պաշտոնը վարեց մինչև 8 փետրվար 1608, ուր իր երրորդ ճամփորդությունը կատարեց դեպի Պարսկաստան։

Հավանական չէ, որ Կուվեյիա 1607-ի վերջավորութենեն առաջ իր ձեռք ունեցավ Ճամփորդության օրինակները (որոնք տպագրվեցան, ինչպես ըսինք, 1606-ին), որովհետև 1606-ին դեպի Կոա ճամփա ելլելու պատրաստ նավերը չկրցան ձգել նավահանգիստը, որ խափանված էր հոլանտական նավատորմին կողմե[6]։

Այն ատեն վերստին կարդալով Ճամփորդության մեջ Պարսկաստանի մասին գտնված տեղեկությունները, մտածած պետք է ըլլա, որ այդ առնչությամբ արդեն ավելի բան գիտե, քան 1603-ին։ Արդարև, այդ տարիներուն Կոա գտնված միջոցին ծանոթացած էր ոչ միայն այն նամակներուն և տեղեկագիրներուն զոր Պելշիոր տոս Անժոս և Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիո ուղարկած էին 1604-ին և 1605-ին իրենց Պարսկաստան բնակության ընթացքին, այլև եղբ. Ֆիլիփ տե Ժեզյուի[7] ձեռագրին,

[5] Նամակ Կուվեյիայի առ Հ. Ակոսթինիո տե Ժեզյու, արք. Պրակայի, Կոա, 24 դեկտեմբեր 1605. տ. Ք. Ալոնսո, Նոր վավերագրություններ Օգոստինյան առաքելություններուն մասին Հնդկաստանի և Պարսկաստանի մեջ, 1571—1609, Օգոստինյան հավաքածոյի մեջ, ԼԳ, Հռոմ, 1970, էջ 360։

[6] Պոթելիո տե Սուզա, անդ, Բ, էջ 640։

[7] P. Frei Felix de Jesus, Primeira Parte da Chronica e Relacao do principio que teve a Congregacao da Ordem de Santo Agostinho nas Indias (Առաջին մաս ժամանակագրության և տեղեկագրության Ս. Օգոստինոսի միաբանության սկզբնավորության Հնդկաստանի մեջ, Կոա, 15 հունվար 1606։ Այս ժամանակագրությունը անտիպ էր մինչև 1967, երբ հրատարակվեցավ Էրնըլֆ Հարթմանի կողմե, «Օգոստինյանները Կոայի մեջ, Ֆելիչ տե Ժեզյուի ձեռագիրը» (անգլ.), Օգոստինյան հավաքածոյին մեջ, Լ. Հռոմ, 1967։

որ պարտականություն ստացած էր Միաբանության ժամանակագրությունը խմբագրելու։

Կուվեյիա որոշեց ուրեմն նոր գիրք մը գրել։ Բայց այն ատեն, որ Պարսկաստանի մեջ նոր առաքելության մը համար պաշտոն ստացավ, և իրեն ընկերանալու համար ընտրեց Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիո կրոնավորը, որ քանի մը տարի ետք այդ երկրին մեջ պիտի մարտիրոսանար[8]։ Երկուքը Գոան ձգեցին 1608-ին, և ամբողջ ճամփորդության տևողության, երթալու ատեն ինչպես վերադարձին, Կուվեյիա աշխատեցավ այդ գործին վրա, որ պիտի դառնար իր ընտիր Տեղեկագրությունը[9]։ Հասնելով Սպահան հոմիսին, քանի մը օր ետք այն հիշատակելի արարողութենեն, որու ընթացքին հայ պատրիարքը հնազանդության ուխտ կատարեց պապին, հավաքեց այդ դեպքին վերաբերյալ բոլոր տեղեկությունները և վավերաթուղթերը։ Օգտագործեց նաև, անտարակույս, շատ կարևոր տեղեկագիրը զոր 3 դեկտեմբեր 1607-ին Հ. Տիոկո տե Սանթա Աննա ուղղած էր պապին, որու մեջ ան կը խոսեր «բոլոր այն բաներուն մասին, զորս օգոստինյան հայրերը հաջողած էին կատարել Պարսկաստանի մեջ մինչև այդ թվականը»[10]։

---

[8] Կուվեյիա 1623-ին գրեց գործ մը, ուր Ժ—ԺԷ հատվածներուն մեջ կը «խոսվի այն մասին, թե ո՞վ էր հայր Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիո և ի՞նչ միջոցներով Աստված անոր տվավ մարտիրոսի պսակը»։ տ. «Փառապանծ ճաղթանակ սպանիացի երեք մարտիրոսներու, Ս. Օգոստինոսի կարգեն երկու փորթուկալցի եղբայրներ և քաղդիացի մը Մատրիտի գավառ, ձոնված Սպանիո կաթոլիկ թագուհի տոնիա Իզապել տե Պուրպոնի, հեղինակ եղբ. Անթոնիո տե Կուվեյիա, եպիսկոպոս Սիրենի, Նորին վեհափառության խորհրդական ժողովեն և քարոզիչ Փորթուկալի թագին, Մատրիտ, խուան Կոնզալես, 1623, կը ծախվի Թորրե ս. Քրուզի մեջ»։ Կա օրինակ մը Լիզպոնի Ազգային գրադարանին մեջ (Պահեստ 19688)։ Հ. Կիլեերմեի մասին տ. նաև ընտիր ուսումնասիրությունները Էրնըլդ Հարթմանի, «Վիլերմ ս. Օգոստինոսի և իր ժամանակը» (անգլ.) Օկուսթինիանայի մեջ, Լուվեն, 1970։ Նաև Ռոպերտ Կյուլպենկյան, Լուիս Փերեյիրա, տե Լասերտայի և Օգոստինյան փորթուկալցի հայրեր Պելշիոր տոս Անժոսի և Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիոյի դեսպանությունը Պարսկաստանի մեջ 1604—1605-ին, Լիզպոն, 1972, էջ 49—56։

[9] Տեղեկագրության նախամուտին մեջ Կուվեյիա կը գրեր, թե կրնա ըսել «որ գիրքը ձեռք առնելե ետք հանգիստ օր մը չունեցավ, բոլոր օրերս հատկացվեցան, պիտի չըսեմ աշխատանքի, այլ ճամփորդության և խրարանցումի, որոնք այնքան հակառակ են անոր որ կը գրե»։

[10] Ս. Լոփեզ—Կ. Ալոնսո. «Երկու նամակ Պարսկաստանի մեջ Օգոստինյան առաքելության առաջին օրերուն մասին», Օգոստինյան հավաքածոյին մեջ, ԻԴ, 1961։ Ալոնսո, էջ 153—201, կըսե թե Տիոկո տե Սանթա Աննայի 3 դեկտեմբեր 1607 թվակիր այս նամակին վրա է, որ հիմնված է Կուվեյիայի գործը. հրատարակված 1611-ին։

Մինչ Գոայի մեջ կը սպասեր նավ նստելու դեպի Փորթուկալ, Կուվեյիա կրցավ կարդալ Հ. Ֆրանսիսքո տե Փրեզենթասիոնյի և Հ. Մաթիաշի կողմե ղրկված նամակները, որոնք լավագույն կերպով կամբողջացնեին իր Տեղեկագրությունը[11], որովհետև անոնք կը խոսեին ս. Հովհաննեսի քրիստոնյաներուն մասին, որոնք կը բնակեին Եփրատի մոտ։ Իր ձեռագրին վրա վերջին բարեփոխումները կատարեց դեպի Փորթուկալ իր վերադարձի ճամփորդության ընթացքին[12]։

1609-ի վերջին օրերուն Պարսկաստանի դեսպան Տենկիզ պեկի հետ բարձրացավ «Նոսա Սենիորա տա Փիետատ» ծովակալ նավը[13], որ Լիզպոն հասավ 10 սեպտեմբեր 1610-ին[14]։ Առանց ժամանակ կորսնցնելու, հոկտեմբեր ամսույն մեջ խնդրեց և ստացավ իր գործը հրատարակելու արտոնություն։ Ազատվելով այս հոգեն, կրցավ նվիրվիլ Փորթուկալի մեջ պարսիկ դեսպանին ընկերանալու իր պարտականության։ Երկուքը հասան Մատրիտի արքունիքը փետրվար 1611-ին[15]։ Հակառակ նախատեսվածին, Կուվեյիա և Տենկիզ խան մնացին Մատրիտ փոխանակ երթալու Հռոմ և պապին հետ բանակցությունները տեղի ունեցան այս քաղաքի դեսպանին միջոցով։ Նամակներու փոխանակութենե մը ետք[16],

---

[11] Ալոնսո, *Օգոստինյան հավաքածո*, ԼԴ, տ. հիշյալ հոդ., էջ 380, նամակ Ալեյշո տե Մենեզըշի, 24 դեկտեմբեր 1609, Փորթուկալի նահանգային մեծավորներուն, Լիզպոն, տեղեկացնելու համար որ նահանգային հոր տված է Ֆրանսիսքո և Մաթիաշ հայրերուն մեկ նամակը «ձեզի ղրկելու համար անոր մեկ պատճենը, գերհարգելի հայրեր, որպեսզի տեսնեք, թե ինչ պատահած է այնտեղ»։ Ա. տե Մենեզըշի նամակին մեկ օրինակը կը գտնվի Պրակայի գավառին արխիվներուն մեջ և ուրիշ մը Էվորայի հանրային գրադարանին մեջ, Ցուցանիշ CXV /2—9։

[12] 24 դեկտեմբեր 1609-ի վերոհիշյալ նամակին մեջ Ա. տե Մենեզըշ կը գրեր. «Հիմա Հ. Պելշիոր տոս Անժոս դարձյալ Պարսկաստան կերթա միշտ մնալու համար շահին մոտ ուրիշ ընկերոջ մը հետ»։ Արդ, իր Տեղեկագրության մեջ, էջ 189, Կուվեյիա կավելցներ, Հ. Պելշիորի առնչությամբ, թե «1610-ին Նորին Վեհափառության հրամանով վերադարձավ Պարսկաստան Փարիզեի հետ, որ դեսպան եղած էր Սպանիո մեջ»։

[13] Ալոնսո, *Օգոստինյան հավաքածո*, ԼԴ, էջ 393։

[14] Գորեյիո տե Սուզա, անդ, Բ, էջ 643։ «Նոսա Սենիորա տա Փիետատ» ծովակալ նավը Գոա հասած էր 9 նոյեմբեր 1609-ին։

[15] Iran, Journal of Teh. British Institute of Persian Studies, XI, 1973; R. W. Ferrier, The European diplomacy of Shah Abbas I and the first Persian Embassy to England, p. 78.

[16] A Chronical of the Carmelites in Persia and the Papal Missions of the XVIIth and XVIIIth centuries, I, London 1939.

Պարսկաստանի մեջ Կարմելյաններու այս ժամանակագրությունը 202—203 էջերուն մեջ կը հրատարակե հատվածներ պապին նամակեն Տենկիզ պեկի ուղղված 12 սեպ-

պապը Կովեյիան անվանեց Սիրենի արքեպիսկոպոս և առաքելական այցելու Պարսկաստանի. 1611-ի վերջավորության, Կովեյիա վերադարձավ Լիզպոն, ուր ունեցավ հաճույքը իր գործը տպագրված տեսնելու և Սիրենի արքեպիսկոպոս օծվելու[17]։

տեմբեր 1611-ին և նույն թվականով Պողոս Ե. պապեն Ֆիլիփ Գ-ի Շահ Աբբասի և Սիրենի նոր եպիսկոպոսին ուղղված նամակներեն, որոնք հստակորեն ցույց կուտան թե ոչ Կովեյիա, ոչ Տենկիզ պեկ Հռոմ չգացին, և թե այս վերջինը պարսից շահին նամակը պապին հասցուց կոմս Քասթրոյի միջոցով, տ. Նամակներ և պապական հովվական գիրեր Վատիկանի արխիվներուն մեջ Հայկ. խե, հատ. 7, էջ 46, 47 և 53։ Սանթիակո Վեյա, անդ, էջ 278 կը հիշե իր կարգին նամակ մը, որ կը գտնվի Սիմանքասի արխիվներուն մեջ, Պետական, տրցակ 996, թերթ 131. «Թագավորը առ տ. Ֆրանսիսքո տե Քասթրո տեղեկացնելով Պարսկաստանի դեսպանին հիվանդությունը, որ դայն կարգիլե Հռոմ երթալե հ. Կովեյիայի հետ, որու հետևանքով պաշտոն կուտա անոր որ բանակցի և ձեռք բերե այն որոշումները զորս կը սպասեին Նորին Սրբութենեն, 17 հուլիս 1611»։

Այս առիթեն կօգտվինք նշելու համար, որ Կովեյիա հեղինակը չէ իտալերեն գործի մը Relazioni della gloriosa morte da nove cristiani grapponesi per la fè catholica nel regni di Fingo, Sassume et Ferando, Rome, 1611, in—8°, որ իրեն վերագրված է Թերնո-Քոմփան, անդ, թ. 1058։ Կասկած ունենալով հանդերձ այս նոթագրության ճշտության մասին, զոր չէր գտած ուրիշ ոչ մեկ մատենագիրի մոտ, Սանթիակո Վեյա (անդ, Գ, էջ 267) կը գրե. «Սակայն, ստույգ է, որ 1611-ին Կովեյիա Հռոմ կը գտնվեր և ով գիտե, թերևս, Ճապոնիայեն իր բերած տեղեկություններով և փաստաթղթերով խմբագրած է այս գործը, զոր ուրիշ մը թարգմանած է իտալերենի»։

Արդ, Կովեյիա Հռոմ չգնաց 1611-ին, ուրեմն չէ իրականացած Սանթիակո Վեյայի ենթադրությունը և ինք չէ հեղինակը վերոհիշյալ իտալերեն գրության։ Հավանաբար Սանթիակո Վեյայի մատենագիտական տեղեկատվության վրա հիմնվելով է, որ Սըր Տրնիզըն Րոս, Լոնտոնի Քինկ'ս Քոլեճին մեջ իր կատարած բանախոսության ընթացքին, 14 նոյեմբեր 1933-ին, անխոհեմաբար կարծիք կը հայտներ, թե «Կովեյիա և Տենկիզ 1611-ին Հռոմ կը գտնվեին, գալով Օրմուզեն և Սպանիայեն և այնտեղ հասան նախքան Րոպըրթ Շըրլեյ։ Այս ժամփորդության պատմությունը մեզի չէ հասած, բայց կը թվի թե Կովեյիա Հռոմ կը գտնվեր այդ տարին և այնտեղ հրատարակեց իտալերեն գիրք մը»։ տ. Տրնիզըն Րոս, Անթոնիո տե Կովեյիա, Բոմպայ, 136, թարգմ. Ա. Կոնսալվըշ Բոտրիկըշի, էջ 22։

[17] Էվորայի հանր. գրադարան, ցուցանիշ 111/2—19, թերթ 20բ—21բ. Anais de Portugal (Փորթուկալի տարեգրությունները), հեղ. Manoel Severim de Faria. Կա ուրիշ օրինակ մը Լիզպոնի Ազգ. գրադարանին մեջ, ընդհանուր պահեստ 241, Փորթուկալյան և արևմտյան ուրիշ նահանգներու պատմություն 1610 տարիեն մինչև 1640-ին Տոն Ժուան Դ. թագավորին բարեբաստիկ հաշակումը գրված երեսունըմեկ տեղեկատվություններով Մանուել Սեվերին տա Ֆարիայի կողմե (թերթ 16—17ա)։ Ֆարիա մանրամասն նկարագրություն մը կուտա օծումի արարողության, «որ տեղի ունեցավ կիրակի 8 հունվար 1612-ին Լիզպոնի Նոթր-Տամ տը լա Կրաս վանքին մեջ մեծ հանդիսավորությամբ. ներկա էին բոլոր եկեղեցականները փոխարքային հետ, բարձր անձնավորությունները և

Իր Տեղեկագրության ներածության մեջ, որ այն ատեն տպագրված էր, կը տեսնենք, որ Պարսկաստանեն վերադարձին Կոայի մեջ խմբագրած էր 18 ապրիլ 1609-ին ձոն մը տ. Ալեյշո տե Մենեզըշի։ Խոսքը կուղղե «բարեպաշտ ընթերցող»-ին այսպես. «Թեև բնավ չէի փափագեր,

---

արքունիքը գտնվող ազնվականները և Պրակայի արքեպիսկոպոսը անոնց ընծայեց շքեղ խնձույք մը։ Բախտով ներկա կը գտնվեին նաև երեսուն հայեր, որոնք Հռոմեն եկած էին իրենցմե մեկուն՝ կաթոլիկ կոմսին հետ, որ երկիր տեսնելու փափագով մեր կողմերը եկած էր մեծ շուքով և Պարսկաստանի դեսպանը ամենն ալ իրենց ձևով հանդիսավոր հագուստներ հագած և ընկերացան թափորին և օրհնվեցան նոր եպիսկոպոսին կողմե ամբողջ ժողովուրդին առջև ... Զուգեց ընդունիլ Հայաստանի պատրիարքի տիտղոսը, ինչպես կուզեր շահը որ լեցուն էր եռանդով և հարգանքով, որովհետև տրված ըլլալով որ պիտի երթար քարոզելու մարդոց մեջ, որոնք բնականաբար կատեն լատինները, չուզեց սկսիլ զանոնք գրկելով իրենց պատվո աստիճաններեն։ Ահա թե ինչու ուզեց Սիրենի տիտղոսը և պիտի ըլլա միմիայն առաքելական այցելու բոլոր նահանգներուն Օրմուզեն մինչև Մոսկովիա, ամեն տեղ ուր քրիստոնյաներ կան։ Իբր ռոճիկ իրեն կը տրվի մեկ «քոնթո» և կը տանի հազար «քրուզատո» հայոց պատրիարքին համար։ Իր եղբայրներեն մեկը կերթա իրեն հետ և պիտի ըլլա հյուպատոս բոլոր քրիստոնյաներուն, որոնք կը բնակին շահին հողերուն վրա, որովհետև այս վերջինը այդպես ուզած է և կկարծվի որ տարեկան մեծ բարիք մը պիտի ըլլա այնտեղ քրիստոնյաներուն համար, որոնք ենթակա են մահմետական դատավորներուն և միշտ վնաս կը կրեն»։

«Կաթոլիկ կոմսը» ուրիշ մեկը չէ, եթե ոչ հայ վաճառական խոճա Սաֆար Ազարիա (երբեմն կոչված Սեֆեր), գործակալ Պարսկաստանի թագավորին 1610-ին Շահ Աբբասի կողմե ղրկված Վենետիկ և Հռոմ, ուր Պողոս Ե պապը զինք անվանեց Ասպետ կոմս, նույն ատեն 28 հուլիս 1610 թվակիր երեք նամակներով զայն հանձնարարեց Ռուդոլֆ կայսեր, Ֆիլիփ Գ-ի և Քոմ տը Մետիսիի, դուքս Թոսքանի։ Կոմս Սաֆար եկավ Լիզպոն ներկա ըլլալու Սիրենի եպիսկոպոսին օծման, զոր ճանչցված էր Պարսկաստանի մեջ։ Համաձայն 19 նոյեմբեր 1613-ին կարտինալ Պորկեզի ուղղված նամակի մը, կը տեսնենք որ կոմս Սաֆար տակավին Լիզպոն կը գտնվեր Կովեյիայի և Տենկիզ պեկի Հնդկաստան մեկնելեն ետք։ Կը թվի թե Սաֆար Պարսկաստան հասած է 1619-ին միայն Հնդկաստան և Մոկոլի արքունիքը երթալե ետք (տ. Քրոնիկ Կարմելյաններու, էջ 192—193, և Ր. Կյուլպենկյան, անդ, էջ 63, ծանոթ. 125)։

Լիզպոնի Աշխարհագրական ընկերության մատենադարանին մեջ գոյություն ունի (պահեստ 146, տ. 4, 88, հիշված Լուիս տե Մաթոսի կողմե, անդ, ծան. 21, էջ 271) «Հայտարարություն մը հայ կոմս Սաֆարի, գործակալ Պարսկաստանի շահին» թվագրված Լիզպոնեն 14 փետրվար 1612-ին, որ «հարյուր քրուզատոյի ստացագիր մըն է, փոխարքային հրամանին վրա վճարված «Քրիսթովան տե Ալմատայի կողմե, տնօրեն Հնդկաստանի տան»։

Սիրենի եպիսկոպոսը նավ նստավ Հնդկաստան երթալու համար 10 ապրիլ 1612-ին, իր եղբոր Ֆրանսիսքո Պարրատաս տե Կովեյիայի հետ (տ. Ֆրանսիսկո Մենտըշ տե Լուզ, Հնդկաստանի խորհուրդը, Լիզպոն, 1952, էջ 355) և իրենց հետ էր նաև Պարսկաստանի դեսպանը։ Կոայեն Օրմուզ մեկնեցան 10 փետրվար 1613-ին։ Դեսպանը առանձին ճամ-

զորավոր պատճառներ ունեի այս երկասիրությունը հրատարակելու, որոնցմե նվազագույնը այն չէ, որ լեռան մեջ Տոն եղբ. Ալեյշո տե Մենեզըշի ճամփորդության գիրքին վերջավորության՝ Փորթուկալի նահանգային հայրերը, որոնք կատարած են տպագրությունը, ավելցուցած են բազմաթիվ բաներ այս աշխատության մեջ հիշատակված եղելություններուն վրա: Եվ որովհետև այն տեղեկությունները, որ իրենց տրամադրության տակ ունեին, այնքան ճիշտ չէին, որքան որ կը պահանջեր նյութը և թե իմ ընկերներս և ես այս դեպքերուն պատմությունը չէինք գրեր հրատարակության նպատակով, մեր տեղեկագրությունը շատ սահմանափակ եղավ. այդ մասին համոզվելու համար բավական է բաղդատել զայն ներկա տեղեկագրության հետ. այնպես որ ինծի թվեցավ թե օգտակար է ամբողջապես գրել ամեն ինչ որ պատահեցավ այս ճամփորդության ընթացքին, մեկ կողմե որովհետև ինչ որ ավելցված է շատ շինիչ է, մյուս կողմե որպեսզի ձեռնարկին մեծություն թելադրե շատ թիվով անձերու անոր մասնակցելու մեզի հետ»:

Տրամաբանորեն կարելի է մտածել, որ եթե Կուվեյիա գրած ըլլար, ուրիշ տեղեկագրություններ Պարսկաստանի մասին 1609-ին, անոնց վրա պիտի խոսեր 1611-ի իր տեղեկագրության մեջ, ուր կը հիշատակե միայն, ինչպես կը տեսնվի, 1606-ին տպագրված առաջին պատմությունը, ճամփորդության վերջավորությանը:

Եվ, սակայն, ընդհանրապես Անթոնիո տե Կուվեյիայի կը վերագրվի անանուն երկ մը, հրատարակված Լիզպոնի մեջ հետևյալ վերնագրով. Համառոտ տեղեկագրություն շատ նշանակելի բանի մը գործերու, զորս Ս. Օգոստինոսի կրոնավորները կատարեցին Պարսկաստանի մեջ ի ծառայություն Հռոմեական սուրբ եկեղեցիին և Նորին վեհափառության մինչև անցյալ 1607 տարին: Հրամանով Ս. Օգոստինոսի նահանգային հոր, հրատարակված Ս. Հավատաքննության արտոնությամբ Լիզպոնի մեջ, Վիսենթե Ալվարեզի կողմե: Տարի 1609: Կը ծախվի գրավաճառ Սիմոն տե Քարվալիոյի խանութին մեջ[18]:

փորձեց Օրմուզեն Սպահան, ուր շահը զինքը գլխատել տվավ, մինչ Կուվեյիա Օրմուզի մեջ կը սպասեր պահը, 1613-ի ամռան կատարելու իր վերջին առաքելությունը Պարսկաստանի մեջ, որ ձախորդ վախճան ունեցավ (տ. Ռ. Կյուլպենկյան. անդ, էջ 61—62, Հարթման, Օկուսթինիանա, Ի, հիշյալ հոդ. էջ 584 և շար.):

[18] Գործը հիշատակված է, բայց առանց կարդացված ըլլալու, ինչպես կարելի է հետևցնել անճիշտ ձևեն, որով վերնագրին սկզբնավորությունը արտագրված է Jorge Cesar Figaniere-ի կողմե Bibliografia de Historia Portuguese. Lisbonne, 1850, 273. Inocecio Francisco da Silva, Diccionario Bibliografico Portuguez I. Lisbonne,

Արդ, Լուիս Փերեիրա տե Լասերտայի 1604-ին Պարսկաստանի դեսպանության մասին կատարած ուսումնասիրության մեջ, որ հրատարակված է 1972-ին[19], կը գրեի թե շատ ճշմարտանման կը թվեր նաև ինծի, որ Համառոտ տեղեկագրության հեղինակը ըլլար Օգոստինյան կարգեն ուրիշ փորթուկալցի կրոնավոր մը, հայր Պելշիոր տոս Անժոս, բայց որովհետև չէի կրցած տեսնել այդ գրքույկը, որուն արդեն մեկ օրինակը միայն ծանոթ է, զգուշացած էի վաճառական ըլլալե[20]: Բարեբախտաբար Իրանի միապետության երկու հազար հինգ հարյուրամյակին առթիվ կազմակերպված ցուցահանդեսին քաթալոկին[21] մեջ փրոֆ. Լուիս տե Մաթոս հրատարակած էր պատճենը «Համառոտ տեղեկագրության» տիտղոսաթերթին, ըստ ծանոթ միակ օրինակին: Այս վերջինը պատկանած էր Թրինիտատի դերկոմսին, որ վերջերս զայն նվիրեց Քոիմպրայի համալսարանի գրադարանին[22]: Միանալով տիրող կարծիքին, Լուիս տե Մաթոս ևս իր կարգին կը վերագրե զայն Անթոնիո տե Կուվեյիայի:

Համառոտ տեղեկագրությունը հրատարակվեցավ 1609-ին, երբ. Փերո Մարթիրի 16 դեկտեմբեր 1608 թվակիր մեկ ագդով, տպագրության արտոնագիրը տրված ըլլալով հաջորդ օրը, 17 դեկտեմբերին: Գործը ունի 31 թերթ, որուն առաջին երկուքը կը պարունակեն համառոտագրությունը օգոստինյան Ժերոնիմո տա Քրուզի, Քրիսթովան տե Էսփիրիթո Սանթոյի և Անթոնիո տե Կուվեյիայի Պարսկաստան կատարած առաջին ճամփորդության պատմության 1602-ին, «և այս ամենը կան Կոայի հիշյալ արք-

1858, 152 (751). Charles Schefer, Estat de la Perse en 1660 par le Père Raphael du Mans, Paris, 1890, XV (Շեֆեր կը նշե, սակայն, թե չէ կրցած տեսնել գիրքը. Կրեկորիո տե Սանթիակո Վեյա, անդ, էջ 262: Զորս հեղինակները իբր վերնագիր կուտան Relacao Breve ... իբր ուղիղ վերնագիրն է Breve Relacam". Իսկ կարտինալ Սարաիվա (Ամբողջական գործեր, Լիզպոն, 1876, էջ 100—101) կըսե թե տեսած է գիրքը, բայց չի դներ Breve բառը վերնագրին մեջ և անոր մասին կը խոսի իբր անանուն գործ մը:

[19] Տ. սատ, ծան. 6:

[20] Ռ. Կյուլպենկյան անդ, էջ 14, ծան. 4:

[21] **Luis de Matos,** Das Relacoes entre Portugal e a Persia, 1500—1756... Լիզպոն, 1971, էջ 259—261, կուտա «Համառոտ տեղեկագրության» տիտղոսաթերթին պատկերահանումը, ինչպես նաև բովանդակությունը գրքույկին, զոր պատրաստած է Հ. Ֆրանսիսքո Լեյթե տե Ֆարիա: Պարտք կը համարիմ այստեղ շնորհակալություն հայտնել փրոֆ. Լուիս տե Մաթոսին իր թանկագին խորհուրդներուն համար:

[22] Մեծապես երախտապարտ եմ փրոֆ. Պրակա տա Քրուզի, տնօրեն Քոիմպրայի համալսարանին մատենադարանին, որ տրամադրության տակ դրավ գիրքին լուսանկարը և միքրոֆիլմը:

եպիսկոպոսին և եղբ. Անթոնիո տե Կուվեյիայի նամակներու և Պարսկաստան բնակող Աստուծո հիշյալ ծառաներուն տեղեկատվություններուն մեջ»[23]։

Սկսյալ թերթ 3ա-ի վերջին երեք տողերեն մինչև թերթ 5բ կը խոսվի 1604-ին դեսպան Լուիս Փերեյիրա տե Լասերտայի և իր ընկերներուն Պելշիոր տոս Անժոսի, Տիոկո տե Սանթա Անայի և Կիլեերմե տը Սանթո Ակոսթինիոյի Պարսկաստան կատարած ճամփորդության մասին. այնտեղ կարելի է կարդալ պատմությունը բազմաթիվ «հրաշալիքներու», ի մեջ այլոց եղբ. Պելշիոր տոս Անժոս և իր ընկերները կը պատմեն որ...»։ Հետո կը գտնենք, թերթ 6ա-են թերթ 14բ մեկ կողմե «Տեղեկագրություն Պարսկաստանի և Հայաստանի մեջ հնօրյա քրիստոնեության վրա, զոր հայրերը տեսան և ուրիշ բաներու վրա, որ այնտեղ կատարվեցան»[24], մյուս կողմե «Տեղեկագրություն պատերազմին, զոր շահը, թագավոր Պարսկաստանի, մղեց թուրքին դեմ սեպտեմբեր 1603-են դեկտեմբեր

[23] Ժերոնիմո տա Քրուզ ինքն ալ գրեց Սպահանեն, 1 հոկտեմբեր 1604-ին Պրակայի արքեպիսկոպոսին, խոսելու համար անոր Պարսկաստանի մեջ միսիոնարական հեռանկարներու մասին. տ. Օգոստինյան հավաքածո, ԼԳ, հիշյալ հոդ. էջ 351—353։ Հրատարակված նամակը կը գտնվի Պրակայի գավառի արխիվներուն մեջ։ Ուրիշ նամակով մը, հարաբերաբար կարճ, որովհետև նավերը պիտի մեկնեին թվագրված 16 դեկտեմբեր 1605-ին, Ա. տե Մենեզըշ կը տեղեկացներ Պրակայի արքեպիսկոպոսին, թե իրեն կուղարկե հ. Ժերոնիմո տա Քրուզի նամակները։

[24] 1923-ին Անթոնիո Պաիան, այն ատեն տնօրեն Թորրե տո Թոմպոյի ազգ. արխիվներուն, հրատարակեց այս «Տեղեկագրությունը» «Ուղեգրություններ Հնդկաստանեն Փորթուկալ ցամաքի ճամփով»-ի հառաջաբանին մեջ։ Այս «Ուղեգրությունները վերանայված Ա. Պաիանի կողմե, հրատարակվեցան Քոիմպրայի մեջ և «Տեղեկագրությունը» կը գրավե հառաջաբանին ԺԷ—ԼԲ էջերը։ Ձեռագիրը կը կազմե Թորրե տո Թոմպոյի մատենադարանին 1113 թ-ը, թերթ 120—124 (նոր էջագրությամբ թերթ 219—223ա) և վերնագիրն է Տեղեկագրություն Քրիստոնեության մասին ինչպես որ տեսանք Պարսկաստանի և Հայաստանի մեջ։ Պաիան բնագիրը կը ներկայացնե իբր անտիպ և վերջավորության կավելցնե հետևյալ կարծիքը. «Պարզ և հուզիչ պատմություն անանուն և ջերմեռանդ վանականի մը ԺԷ դարուն սկիզբը»։ Ես ալ հրատարակած եմ նույն ձեռագիրը Լուիս Փերեյիրա տե Լասերտայի Պարսկաստանի դեսպանության մասին կատարած ուսումնասիրության մեջ և ապացուցած եմ, որ անոր հեղինակն է հ. Պելշիոր տոս Անժոս (տ. անդ, էջ 13—17)։ Պետք է նկատել, որ կրոնավորներու անանուն նամակները մեծ թիվով կը շրջեին այն ատեն, քանի որ նույն 1609 տարվույն մեջ Քարոզիչ եղբայրներու միաբանութենեն ուրիշ փորթուկալցի կրոնավոր մը, եղբ. Ժոան տոս Սանթոս, կը հրատարակե հ. Պելշիորի այս Տեղեկագրության մեկ մասը հետևյալ գործին մեջ Varia historia de cousas novateis do Oriente. E da Christandade que os Religiosos da Orde dos Pregadores nelle fizerao. Composto pello P. Fr. Joam dos Santos da mesme Ordem natural da cidade de Evora ... 1609. (Այլազան պատմություն Արևելքի նշանակելի դեպքերու։

1604 և հաղթանակներուն, զորս ան տարավ»[25], որ կը գրավե 14բ-են 24բ թերթերը։ Մինչև 22ա-ը՝ «Շարունակություն կրոնափոխության վերաբերյալ հարցերու պատմության», որ պատմությունն է Լասերտայի առաքելության և իր Կոա վերադարձին Պարսկաստանի դեսպան Իսախան Իմամ Քոլիպեկի հետ[26]. այս վերջինը նստավ «Նոսա Սինիորա տե Օլիվերա» նավը երթալու համար Լիզպոն, ուր հասավ 1 հոկտեմբեր 1607-ին։ Այստեղ ընդունվեցավ Ս. Օգոստինոսի քոլեջին մեջ մինչև իր մեկնումը Մատրիտի արքունիքը 1608-ի հունվարին։ Հետո վերադարձավ Լիզպոն, ուրկե նավ նստավ Հնդկաստան մեկնելու համար նույն տարին[28], մինչ

Եվ Քրիստոնեության զոր Քարոզիչներու միաբանության կրոնավորները կատարեցին այնտեղ։ Խմբագրված հ. Ժոան տոս Սանթոսի կողմե նույն միաբանութենեն, բնիկ էվորացի...) Հետո կուգա Արևելյան Եթովպիա նույն հեղինակեն. Էվորա, 1609։ Դ գլուխին մեջ Ժոան տոս Սանթոս կըսե Սպահանի մեջ տուն մը հիմնող կրոնավորներու առնչությամբ, «որոնք նկարագրեցին իրենց ճամփորդությունը և Թուրքին դեմ սուֆիին մղած պատերազմին իրադարձությունները 1603-ին և 1604-ին, նույնպես ինչ որ տեսան Հայաստանի քրիստոնյա հասարակութենեն և այս ամենուն մասին Կոայի արքեպիսկոպոս Ալեյշո տե Մենեզըշի զրկեցին տեղեկագիր, որուն պատճենը կհետևի, (բայց) պատճենը այն մասին միայն որ կը վերաբերի Ս. Դոմինիկոսի կրոնավորներուն քրիստոնյա հասարակությանը»։ Արդարև ինչ որ կը կարդանք 7-են 9ա թերթերուն մեջ կը համապատասխանե Համառոտ տեղեկագրության (թերթ 7-են 12ա) և Անթոնիո Պաիանի հրատարակած անանուն ձեռագրին մեկ մասին (անդ, էջ 22—27), ինչպես և Ր. Կյուլպենկյանի կողմե հրատարակվածին (անդ, էջ 146) «երբ Ջուղա էինք» մինչև էջ 149 «առանց պակասի մեր տեսածներեն»։

[25] Թորրե տո Թոմպոյի նույն ձեռագրեն, Մատենադարան, Թ. 1113, թերթ 125բ (նոր էջագրությամբ 223բ—227), հրատարակած եմ նաև ոչ միայն «Շահին պատճառները Թուրքին դեմ պատերազմելու համար և դեպքերը 14 սեպտեմբեր 1603-են մինչև սեպտեմբեր 1605» (1605-ը գրչագրին սխալն է, պետք է ըլլա 1604), այլև «Տեղեկագրություն պատերազմներուն զորս շահը մղեց թուրքին դեմ նոյեմբեր 1604-են մինչև սեպտեմբեր 1605 և քանի մը դեպքերու, որոնք պատահեցան մեզ, երբ Թավրիզ էինք» (տ. Ր. Կյուլպենկյան, անդ, էջ 155—161)։ Առաջին տեղեկագրությունը այն է, որ հրատարակված է «Համառոտ տեղեկագրության» մեջ։

[26] Փարիզե Իմամ-Կուլի պեկ տ. Ր. Կյուլպենկյան, անդ, էջ 45։

[27] Գոթեյիո տե Սուզա, անդ, Բ, էջ 640։

[28] Փարիզե վերադարձավ անտարակույս «Սանթո Անթոնիո» ցռկանավով, որ 26 հոկտեմբեր 1608-ին մեկնեցավ փոխարքա Լուրենսո տե Թավորայի հետ և Կոա հասավ 1 դեկտեմբեր 1609-ին, տ. Գոթեյիո տե Սուզա, անդ, Բ, էջ 643 Ֆիլիփ Բ-ի հրամանով, հ. Պելշիոր ընկերացավ Պարսկաստանի դեսպանին Կոայեն Թավրիզ տ. Ր. Կյուլպենկյան, անդ, էջ 59)։ Պարսկաստանի ուրիշ դեսպան մը ըլլալու է, որ Հնդկաստան գնաց «Նոսսա Սինիորա տա Փենյա» նավով, որ 28 մարտ 1609-ին Լիզպոնեն մեկնեցավ և Կոա հասավ 9 նոյեմբերին (տ. Գ. տե Սուզա, անդ, էջ 643)։ Թերևս Ջայնյուլ-Ապտին պեկ դեսպանն է այն (Զենյուլ խան), զոր Շահ Աբբաս ղրկած էր Հոլանտա, ուր հասավ հունիս 1608-ին և հետո գնաց Ֆլանտր, Ֆրանսա և Սպանիա (տ. Քրոնիկ Կարմելյաններու, էջ 170)։

«այս դեսպանին մեր թագավորության մեջ գալուստեն ետք, հինգ մահմետականներ իր հետևորդներեն մեր հավատքը ընդունեցին, Ս. Օգոստինոսի կրոնավորներուն հորդորներուն վրա և ըստ անոնց ուսուցման, մնացին այստեղ և Նորին վեհափառությունը կը հոգա անոնց պետքերը»:

22ա-են 26բ թերթերը կը պարունակեն «Նորին վեհափառության նամակը Հռոմի գործակալ Տ. Ժոժեզ տե Նեյլոյի», թվագրված Վալլատոլիտեն 27 նոյեմբեր 1604-ին և Պողոս Ե. պապին հովվական գիրը ուղղված 17 սեպտեմբեր 1605-ին, «իր սիրելի որդիներուն եղբ. Անթոնիո տե Կուվեյիային, եղբ. Քրիսթովան և եղբ. Ժերոնիմո տա Քրուզի, Ս. Օգոստինոսի միաբան կրոնավորներ, որ Պարսկաստան կը բնակին»[29]: Գալով 26բ-են 31ա թերթերուն, ասոնք կը հիշատակեն Պարսկաստանի հայոց հարումը հռոմեական եկեղեցիին. այնտեղ կը կարդանք նախ փորթուկալերեն թարգմանությունը «Քահանայապետին խոստացված հնազանդության հայոց պատրիարքին և ուրիշ վեց եպիսկոպոսներու, ինչպես նաև մնացյալ բոլոր հավատացյալներուն կողմե Ս. Օգոստինոսի կարգին պատկանող կրոնավորներու առջև, այս միաբանության վանքին մեջ, որ կը գտնվի Պարսկաստանի նահանգին Սպահան քաղաքին մեջ, մեր Տեր Պողոս Ե-ի օրհնյալ օրերուն, մինչ Սպանիո և Արևելյան Հնդկաստանի մեջ կը թագավորե Ֆիլիփ, անունով երրորդ, եղբ. Ալեյշո տե Մենեզըշի կողմե, արքեպիսկոպոս Կոայի և եկեղեցապետ Արևելքի, կրոնավոր հիշյալ Ս. Օգոստինոսի կարգին» և հետո «Հայոց պատրիարք Դավիթի նամակը, ուղղված մեր տեր քահանայապետ Պողոս Ե-ի»[30]:

Վերջապես 31բ թերթին մեջ համառոտակի կը հիշատակվի «մյուս քրիստոնեական հասարակությունը, Հովհաննես Մկրտիչի անունով», խնդրելով բոլոր հավատացյալներեն աղոթել Պարսկաստանի Օգոստինյան առաքելություններուն համար. վերջին թերթին մեջ, որ չէ թվագրված, կա Ս. Օգոստինոսը ներկայացնող պատկեր մը:

Ինչպես կը տեսնվի, ոչինչ թույլ կուտա, որ Համառոտ տեղեկագրությունը վերագրվի Կուվեյիայի, ոչ իսկ ենթադրել տալ, թե հավաքողը եղած ըլլա ան այլազան տեղեկագրություններու, նամակներու և վավերաթուղ-

[29] Անթոնիո տե Կուվեյիա հրատարակած է այս հովվական նամակը իր համբավավոր Տեղեկագրության նախամուտին մեջ:

[30] «Տեղեկագրություն», անդ, թերթ 161ա և 161բ, մինչև 163ա: Կուվեյիա կը հրատարակե պատրիարքին հնազանդագիրը, բայց առանց այն մասին, որ կը վերաբերի եպիսկոպոսներուն, ինչպես նաև Դավիթ պատրիարքին նամակը, որուն կավելցնե Սպահանի թվագրությունը, 13 մայիս 1607, ինչ որ չենք գտներ «Համառոտ տեղեկագրության» մեջ:

թերու: Կառաջադրենք ստորև ցույց տալ գլխավոր աղբյուրները, որոնք օգտագործված են Համառոտ տեղեկագրության մեջ և հայտնել, թե ինչպես հասած են Փորթուկալ, Օգոստինյան նահանգային կրոնավորներուն ձեռքը, որոնք տպագրել տվին զանոնք:

Առաջին աղբյուրն է շատ նշանակալից նամակ մը Ջուղայեն գրված, 8 նոյեմբեր 1604-ին[31], Պելշիոր տոս Անժոսի և Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիոյի կողմե, Փորթուկալի նահանգային մեծավորին պատմելու համար իրենց ճամփորդությունը դեսպան Լուիս Փերեյիրա տե Լասերտայի հետ: Այնտեղ կը նկարագրեն թե ինչպես գտած են քրիստոնյա հասարակությունները մինչև իրենց հասնիլը Պարսկաստանի շահին բանակատեղին 22 հոկտեմբեր 1604-ին և վերադարձի ճամփուն վրա, դարձյալ Ջուղայեն, ուրկե կը գրեին[32]: Արդարև, Հ. Պելշիոր, որ կուղարկեր

[31] Ալոնսո, «Օգոստինյան հավաքածո», ԼԴ, էջ 353—358. հրատարակված նամակը կը գտնվի Պրակայի գավառին արխիվներուն մեջ: Ջուղա քաղաքը Նախիջևանի հարավարևելյան կողմը, Արաքսի հյուսիսային ափին վրա կը գտնվի: Ոչ հեռու անկե կար կամուրջ մը, որ կը կապեր Հայաստանը Պարսկաստանի, ուրկե հառաջ կուգար այս քաղաքին առևտրական և ռազմական կարևորությունը: Հ. Պելշիոր Ջուղայեն իր նամակը գրելեն քանի մը օր ետք, թուրքերուն դեմ պատերազմին ընթացքին, Շահ Աբբաս որոշեց ետ դառնալ և տարագրել տվավ շրջանին բոլոր հայերը դեպի Պարսկաստանի ներքնամասը, մասնավորապես Սպահանի շրջակայքը, ուր տեղափոխված հայերը կառուցեցին Նոր Ջուղա քաղաքը: «Տեղեկագրության» Դ մասին մեջ Կուվեյիա կը պատմե «Հայոց գերությունը, անոնց աքսորը և ինչ որ Ս. Օգոստինոսի հայրերը ապրեցան անոնց հետ զանոնք բերելու համար հռոմեական եկեղեցիին հնազանդության»: Պելշիոր և Կիլեերմե հայրերուն նամակը, 8 նոյեմբեր 1604 թվակիր, հետաքրքրական տեղեկություններ նաև փորթուկալցիներուն շարժումներուն մասին Հնդկաստանի, Պարսկաստանի և Փորթուկալի միջև ժէ դարուն սկիզբը: Հ. Պելշիոր կըսե թե գրած է Օրմուզեն նահանգային մեծավորին, Տիոկո տե Մելո ազնվականին միջոցով, որ «Բաբելոնեն կանցներ», և թե ուրիշ նամակ մը շահին բանակատեղիեն գրված, վստահված էր ուրիշ ազնվականի մը, Ֆերնան տե Քասթրո, «որ ցամաքի ճամփով կերթար Մոսկովիայեն, բայց որովհետև այս ճամփան շատ երկար է, ուզեցի զայն ղրկել նաև հայերու կարավանով մը, որ այս Ջուղա քաղաքեն Հալեպ կերթար, որովհետև կխորհիմ թե այս ճամփով ավելի շուտ պիտի հասնի ձեր հայրության ձեռքը»: Չենք գիտեր թե այս վերջին նամակը ավելի շուտ հասա՞ծ է, բայց ստուգությունը ունինք, որ հասած է անոր որու ուղղված էր:

[32] Միայն «Համառոտ տեղեկագրության» մեջ է, որ կը գտնենք 22 հոկտեմբեր 1604-ի թվականը, զոր Հ. Պելշիոր այս նամակին մեջ կուտա իբր դեսպանին և երկու Օգոստինյան կրոնավորներուն շահին բանակատեղին ժամանման թվականը: «Լուիս Փերեյիրա տե Լասերտայի դեսպանության մասին Հնդկաստանի խորհուրդին տեղեկագրության մեջ (Սիմանքաս, նահանգային բաժին, 1749, թերթ 6) հրատարակված Մենտըշ տա Լուզի կողմե, անդ, էջ 390, կը կարդանք. «Ս. Օգոստինոսի կրոնավորները, որոնք ընկերացան հիշյալ Լուիս տե Փերեյիրային, կը տեղեկացնեն թե Պարսկաստան հասան 10 հոկտեմբեր

այս լուրերը կըսեր. «Պիտի տամ այն լուրերը, որ կրնամ, մնացյալը պիտի գիտնաք ճամփու օրագրութենեն, զոր կը խմբագրե ընկերս՝ եղբ. Կիլեերմե տե Սանթո Ակոսթինիո», և վերջացնելով՝ «Ներփակ կը դնեմ, հայր իմ, Թուրքին դեմ մղված այս պատերազմին մեջ շահին հաջողությունններուն նկարագրության մեկ պատճենը»։

Բայց Փորթուկալի նահանգային հայրերը չեն բավականացած 8 նոյեմբեր 1604-ի այս նամակին պարունակած տեղեկություններով. ամբողջությամբ ընդօրինակած են նաև Թուրքին դեմ շահին ունեցած հաջողություններուն վերաբերյալ բնագիրը (թերթ 14բ-են 20բ), ինչպես և այն բնագիրը, որ կը խոսի «Պարսկաստանի և Հայաստանի հնօրյա քրիստոնեության մասին» թերթ 6ա-են 14բ։ Այս վերջին տեղեկագիրը գրկված պետք է ըլլա ավելի ետք, դեկտեմբեր 1605-ին, Հնդկաստանի ճամփուն նավերով, որոնք Լիզպոն հասան հաջորդ տարվա սեպտեմբերին կամ հոկտեմբերին։ Այդ է որ կը հայտնու, արդարև, միաբանության այցելու հ. Ժոան տա Բոշայի մեկ նամակեն, Պրակայի արքեպիսկոպոսին ուղղված 29 դեկտեմբեր 1605-ին[33]. «այս իրիկուն հասավ եղբ. Պելշիոր տոս Անժոս, որ Պարսկաստանեն կը վերադառնա Ն. վեհափառության դեսպանին, ինչպես և Ն. Վեհափառության մոտ շահին դեսպանին հետ[34]։ Սա-

1604-ին և նույն օրը թագավորը ընդունեց Նորին վեհափառության նամակները դեսպանին ձեռքեն»։ Ձեյիշ տե Ժեզյու, անդ, էջ 112, կուտա 17 հոկտեմբերի ամսաթիվը և Անթոնիո տե Կուվեյիա նվազ հստակ է (տ. «Տեղեկագրություն», թերթ 104), երբ հիշելե ետք 25 հունիս 1604 թվականը, կը գրե «Քանի մը օր ետք Լուիս Փերեյիրա տե Լասերտա հասավ շահին բանակատեղին»։

[33] Պրակայի գավառի արխիվներ, «Այլազան թուղթեր», նամակներ, հրատ. Ալոնսոյի կողմե, Օգոստինյան հավաքածո, ԼԹ, էջ 361—362։

[34] Իրականին մեջ Լասերտա Կոա չհասավ Պելշիորի հետ միաժամանակ։ Ալոնսո, Օգոստինյան հավաքածո, ԼԹ, էջ 356—357, կը հրատարակե Լասերտայի հետևյալ հայտարարությունը 10 նոյեմբեր 1605 թվականով. «Եվ այսպես վերը բոված երկու հայրերը ինծի ընկերացան մինչև Օրմուզի բերդը, ուր հիվանդ ինկա և որովհետև Նորին վեհափառության ծառայության համար պատահեցավ, որ շահին դեսպանը անկե անցավ, երկու հայրերեն խնդրեցի, որ զայն տանին և ներկայացնեն Նորին վսեմության փոխարքային և այդպես ալ ըրին»։ Լասերտա Կոա հասավ մարտ 1606-ին (տ. Մենտոշ տա Լուզ, անդ, էջ 391)։ 1605 տարին գիրքին մեջ հիշված կրնա ըլլալ միայն տպագրական կամ գրչագրական սխալով մը։ Կը թվի նույնպես, որ հ. Կիլեերմե չէ ընկերացած հ. Պելշիորի, որովհետև հրաման ստացած էր Օրմուզ մնալու իբր քահանա, ծառայելու համար Օգոստինյան կրոնավորներու պահած հիվանդանոցին (տ. Հարթման, Օկուսթինիանա, Ի, հիշ. հոդ., էջ 212)։ Իսկ չենք գիտեր, թե շահին դեսպան Փաքիզե Իմամ-Կուլի պեկ Կոա հասավ 29 դեկտեմբեր 1605-ին հ. Պելշիորի հետ և կամ մարտ 1606-ին Լասերտայի հետ, ինչ որ ստույգ է այն է, թե չկրցավ մեկնիլ նավերուն հետ, որոնք պատրաստ էին առա-

բագրողը կուտա քանի մը տեղեկություններ Հայոց վրա, զորս իրեն հաղորդած է հ. Պելշիոր և կավելցնե. «Չկարողացա ստանալ մյուս լուրերը, որովհետև հայրը հասավ, երբ նավերը պատրաստ էին խարիսխ վերցնելու, այն ատեն արքեպիսկոպոսը առավ այդ լուրերը պարունակող տեղեկագիրը և ընդօրինակել տվավ բազմաթիվ օրինակներով և այլևս ժամանակ չունեցա զանոնք ներփակելու. կը խորհիմ որ զանոնք ղրկած է ձեզի»։

Երկրորդ կարևոր աղբյուրը կը կազմեն զանազան վավերաթուղթեր, ղրկված Տիոկո տե Սանթա Անայի կողմե։ Ճիշտ է, որ 1607 մայիսին Պարսկաստան հաստատված օգոստինյանները կրցան մեծ խնդրություն զգալ բարեբաստիկ դեպքի մը առիթով. Սպահանի իրենց վանքին մեջ է, որ Հայոց պատրիարքը, վեց եպիսկոպոսներով, բազմաթիվ եկեղեցականներով և հավատացյալներով երդում կատարեց հնազանդելու Հռոմի քահանայապետին և միանալու հռոմեական եկեղեցիին։ Այդ ուրախությունը սակայն կարճատև եղավ, որովհետև միացման ծրագիրը հետևանք չունեցավ շահին ընդդիմության պատճառով[35]։

Մինչդեռ օգոստինյանները միշտ կը հուսային, որ աստվածային նախախնամությունը իրենց պիտի օգներ իրագործելու այդ ծրագիրը, վանքին մեծավորը, Տիոկո տե Սանթա Անա, որ ընդունած էր Հայոց պատրիարքին ենթարկումը, կուտար այս լուրը[36]։ Արդարև, 16 դեկտեմբեր 1607-ին Հնդկաստանի նահանգային փոխանորդը Անթոնիո տա Կրասա կը հաղորդեր Կոայեն Պրակայի արքեպիսկոպոս Ակոսթինիո տա Ժեզյուի թե Օրմուզեն սեպտեմբերին մուսոնին հետ ստացած է ստույգ լուրեր (ծանուցանող), թե Հայոց պատրիարքը իր բազմաթիվ եպիսկոպոսներուն հետ հնազանդություն հայտնած է քահանայապետին և գրավոր կերպով կը հաստատե զայն[37]։ Քանի մը օր ետք Ալեյշո տե Մենեզըշ կը գրեր Պրակայի արքեպիսկոպոսին, թե իր ձեռքը ունի, պապին ղրկվելու համար, Հայոց պատրիարքին կողմե տրված հնազանդության գիրը հռոմեական եկեղեցիին[38]։

գաստ բանալու դեկտեմբերի վերջը, որովհետև եղելությունը հիշված է 17 հունվար 1607-ի նամակի մը մեջ, ուր Ֆիլիփ Գ Շահ Աբբասի կը հաղորդեր, թե Հնդկաստանի իր փոխարքայեն իմացած է, որ Լասերտա և Փաքիզե ժամանակին չէին հասած Կոա նավ նստելու համար 1606-ին Հնդկաստանեն եկող նավախումբով (Boletim da Filmoteca Ultramarine, № 3, էջ 500, ծան. 60)

[35] Ր. Կյուլպենկյան, անդ, էջ 17 և 58։

[36] Տ. աստ, ծան. 10։

[37] Ալոնսո, Օգոստինյան հավաքածո, ԼԹ, էջ 366—368։

[38] Պրակայի Սեմինարիո քոնսիլիար, հավաքածո 42, թերթ 399. Նամակ Կոայեն 29 դեկտեմբեր 1607։

Հայոց պատրիարքին հնազանդությունը քահանայապետին, տրված Տիոկո տե Սանթա Անայի և Հայոց պատրիարք Դավիթի նամակը Պողոս Ե. քահանայապետին, երկուքն ալ գրված հայերեն, Փորթուկալ հասան «Նոսա Սենիորա տա Փենիա տա Ֆրանսա» նավով, փոխանցվելու համար պապին[39]։ Կոայեն մեկնելով 1607-ի վերջավորության, այդ նավը Լիզպոն հասավ 5 հուլիս 1608-ին[40]։ Երկու վավերաթուղթերը փորթուկալերեն թարգմանությամբ հրատարակված են Համառոտ տեղեկագրության մեջ (թերթ 26բ-են 31ա)։

Կը հայտնվի արդեն, թե Անթոնիո տե Կուվեյիա ոչ մեկ կապ ունի Համառոտ տեղեկագրության հետ, որու գլխավոր աղբյուրներն են նամակները, տեղեկագիրները և վավերաթուղթերը, զորս ուղարկած են Պելշիոր տոս Անժոս, Կիլեերմե տե Սանթօ Ակոսթինիո և Տիոկո տե Սանթա Անա[41]։ Բայց այս խողության հաստատումը պիտի գտնենք, թեև ավելորդ ըլլա, Կոայեն ղրկված նամակի մը մեջ, 26 դեկտեմբեր 1609-ին, Ալեյշո տե Մենեզըշի կողմե Փորթուկալի նահանգային բարձրաստիճան եկեղեցականներուն[42]։ Այնտեղ գանգատ կը հայտնե, որ «տպած են Պարսկաստանի վրա տետրակ մը, տարապայմանորեն հակիրճ և քանի մը անհանդուրժելի սխալներով, որ եթե այստեղ տեսնվի շատ ծիծաղ պիտի շարժե և մեզի վնաս պիտի պատճառե. կենթադրեմ թե պատճառն այն է, որ հիմնված են այստեղեն եկած նամակներու վրա, որոնք արտագրված են վարձկան գրիչի մը կողմե, որ ամեն ինչ շփոթած է։ Այնտեղ կըսվի, որ Թավրիզ քաղաքը անձնատուր եղավ շահին կնոջ, երբ այս վերջինը չէր ընկերանար անոր և այս մարդոց կիները երբեք դուրս չեն ելլեր հարեմե մը, որ ավելի խստորեն փակ է, քան յոթը վանք և ոչ ոք զանոնք կը տեսնե և ուրիշ բաներ նույն կարգի։ Ի մեջ այլոց ինծի ըսին թե այնտեղ կը պատմվին եղբ. Ժերոնիմո տա Քրուզի կողմե կատարված հրաշքներ, որ անշուշտ կատարեց հրաշքներ և խոսեցավ անոնց մասին անպաշտոն նամակներու մեջ, բայց ան ողջ է, այժմ կը գտնվի Օրմուզ[43] և վաղը այստեղ պիտի ըլլա և շատ անվայել է ասիկա, որովհետև (այս հրաշքները)

[39] «Համառոտ տեղեկագրություն», թերթ 27ա։

[40] Պորեյիո տե Սուզա. անդ, էջ 660։

[41] Եղբ. Լուիս տե Սուզա որ մեռավ 1632-ին, կը հաստատե թե գլխավոր հեղինակներն էին երեք կրոնավորները, տ. Terceira Parte de Historia de S. Domingos particular do Reyno de Portugal e suas Conquistas (Երրորդ մաս Ս. Դոմինիկոսի (միաբանության) պատմության, Փորթուկալի թագավորության հատուկ և իր նվաճումները), Լիզպոն, 1678, տպ. 1866-ի, հատ. Դ, էջ 297, ուր կը կարդանք. «Վերջերս տեղեկացանք, ինչպես որ կը հիշատակե մեծապես վստահելի հեղինակ մը (Սիրենի եպիսկոպոսը, Լերան մեջ արքեպիսկոպոսին կատարած ճամփորդության վերաբերյալ գիրքին մեջ), թե Պարսկաստանի և Հայաստանի մեջ դեռ գոյություն ունին շատ եկեղեցիներ և վանքեր, որոնք լեցուն են Ս. Դոմինիկոսի միաբանության պատկանող կրոնավորներով։ Եվ ոչ միայն եկեղեցիներ, այլև քաղաքներ և գյուղեր, որոնք անոնց շնորհիվ կապված են մեր սուրբ հավատքին ու նվաղ, քան չորս հարյուր տարիե իվեր և անոնց ջանքերով մնացած են այդ հավատքին և հռոմեական քահանայապետին հնազանդության մեջ, անհավատ մահմեդականներով շրջապատված։ Ասիկա գրված է Սիրենի գերապատիվ եպիսկոպոսին կողմե, կրոնավոր Ս. Օգոստինոսի կարգին և ասիկա տեսնված և հաստատված է նույն կարգին երեք կրոնավորներե, որոնք 1604 թվականին գացած են Պարսկաստանի թագավորին արքունիքը, ուր կընկերանային Լուիս Փերեյիրային, դեսպան Փորթուկալի Ֆիլիփ Բ և մնացյալ Սպանիո համար Գ թագավորին։ Կարևոր է հիշել այս հայրերը իրենց ջանասիրության համար, որով հաստատած և դիտած են այս ճշմարտությունը։ Կը կոչվին եղբ. Պելշիոր տոս Անժոս, եղբ. Տիոկո տե Սանթա Անա և եղբ. Կիլեերմե տօ Սանթօ Ակոսթինիո։ Իրենց նամակներուն հիման վրա խմբագրված է տեղեկագրություն մը, զոր կարգին մեծավորները տպագրած են Լիզպոնի մեջ 1609-ին և որ շրջած է ամբողջ քրիստոնեության մեջ և անկե է, որ շատ հարգելի Սիրենի եպիսկոպոսը քաղած է ինչ որ կըսենք»։ Ասկե կրնանք հետևցնել, որ այս տեղեկատվությունը 1609-ի «Համառոտ տեղեկագրությունն» է, որ «շրջած է ամբողջ քրիստոնեության մեջ», շնորհիվ նաև ֆրանսերեն թարգմանության, որ տպագրվեցավ Լիեժի մեջ 1610-ին։ Միայն թե Լուիս տե Սուզա սխալած է, երբ կըսե թե Սիրենի եպիսկոպոսը, Անթոնիո տե Կուվեյիա, «Համառոտ տեղեկագրության մեջ քաղած է իր տեղեկությունները Հայաստանի և Պարսկաստանի Ս. Դոմինիկոսի հայ հասարակության մասին, զանոնք օգտագործելու համար իր «Ճամփորդության» գիրքին մեջ, որովհետև այնտեղ չենք գտներ ոչ մեկ տեղեկություն այս առնչությամբ։ Լուիս տե Սուզայի սխալը անտարակույս կուգա անկե, որ «Ճամփորդության» տիտղոսաթերթը կըսե թե հատորը կպարունակե տեղեկատվությունը օգոստինյան երեք կրոնավորներուն, զորս արքեպիսկոպոսը ուղարկեց Պարսկաստանի շահին և առանց ստուգելու այդ տեղեկատվությունը վերագրած է Պելշիոր տոս Անժոսի, Կիլեերմե տե Սանթօ Ակոսթինիոյի և Տիոկո տե Սանթա Անայի, որոնք 1604-ին Հայաստան և Պարսկաստան գացին և գրեցին նամակներ, որոնք կը կազմեն «Համառոտ տեղեկագրությունը», մինչդեռ «Ճամփորդության» մեջ երևցող երեք կրոնավորներն են Անթոնիո տե Կուվեյիա, Ժերոնիմո տա Քրուզ և Քրիսթովան տօ Սանթօ Էսփիրիթօ, որոնք Պարսկաստան գացին 1602-ին։ Սակայն ճիշտ է, որ Կուվեյիա օգտագործեց պապին հնազանդության տակ գտնվող հայերուն և դոմինիկյան կրոնավորներու եկեղեցիներուն և վանքերուն վերաբերյալ տեղեկատվությունները խմբագրելու համար իր հռչակավոր «Տեղեկագրությունը», 1611-ի, տ. թերթ 146—149։

[42] Այռեսս, Օգոստինյան հավաքածո, ԼԳ, էջ 391։

[43] Ժերոնիմո տա Քրուզ մեռավ, կը թվի, 5 մարտ 1605-ին Օրմուզի մեջ (տ. Հարթման, Օկուսթինիանա, Ի, էջ 190, ծ. 29։ Անտարակույս Օրմուզեն եկող լուրերուն հապաղման պատճառով է, որ Ալեյշո տե Մենեզըշ չէր գիտեր ասիկա տակավին դեկտեմբերին։ Նավերը ընդհանրապես Կոա կը հասնեին նոյեմբերին և դեկտեմբերին. ապրիլ ամիսեն ետք այլևս հաղորդակցություն չկար Օրմուզի և Հնդկաստանի մինչև աշնան մուսոնը։

կատարեց ինքնաբերաբար և ոչ թե ապացուցանելու համար հավատքին կամ սուրբ Ավետարանին ճշմարտությունը, ինչպես կրնա պատահիլ մեր ամենուս, քարոզիչներուս, թե Աստված գործե այսպես՝ ամրացնելու համար, մեր քարոզածին ճշմարտությունը, հազարավոր տեսնվեցան Լերան մեջ, բայց ես հեռու եմ սուրբ մը ըլլալե և Աստված տա, որ կարենամ խուսափիլ դժոխքին չարչարանքներեն։ Այսպես է, որ միշտ զայն կոչած են ծերուկ եկեղեցականը և ծերուկ սուրբը, բառեր, որոնք եկեղեցվո ոճին մեջ և հաշվի առնելով այն վերապահությունը, որով պետք է գրել, կը գործածվին մեռյալներու համար։ Պետք է ուշադիր ըլլանք, հարգելի հայրեր, որ այս բաները, եթե պետք ըլլա որ տպվին, վստահվին անոնց, որ կարող են լավ ձևով զանոնք ներկայացնելու, որպեսզի մեզ չանպատվեն և չկարծեն, որ հեքիաթային պատմություններ կը պատմենք։ Այս գործերը պետք չէ վստահիլ փոխանորդներու կամ տխմարներուն»։

Ճիշտ է, որ Համառոտ տեղեկագրությունը շատ հակիրճ էր, մանավանդ այն մասին մեջ, որ կը վերաբերի Կուվեիայի, Էսփիրիթո Սանթոյի և Ժերոնիմո տա Քրուզի 1602-ի ճամփորդության դեպի Պարսկաստան (երկու էջ միայն) և այնտեղ կը պատմվեին ծեր և սուրբ Ժերոնիմո տա Քրուզի հրաշքները[44]։ Կարելի է ուրեմն հայտարարել, կը թվի, թե «Պարսկաստանի վրա տետրակը», որու մասին կը խոսի Ա. տե Մենեզըշ, այս հատորն է, մանավանդ որ այնտեղ կը գտնենք «անհանդուրժելի սխալը» այն է թե Թավրիզի բերդը պաշտպանողները «զայն հանձնեցին Պարսկաստանի թագավորին կնոջ»[45]։

24 դեկտեմբեր 1609-ին նույն նամակին մեջ Ալեյշո տե Մենեզըշ կը խոսի նաև Կուվեյիայի դեպի Փորթուկալ կատարած ճամփորդության վրա Պարսկաստանի դեսպանին ընկերակցությամբ։ Կը հայտներ Փորթուկալի նահանգային մեծավորներուն, թե Կուվեյիա «որ կերթա այնտեղ պիտի բացատրե ամեն ինչ» և անոր զովեստը ընելե ետք կավելցներ. եթե այն

[44] «Համառոտ տեղեկագրություն», թերթ 4ա և 27ա։ Նշենք, որ «Համառոտ տեղեկագրության» ֆրանսերեն թարգմանության մեջ Ժարժ Մեկրե, երբ կը խոսի Ժերոնիմո տա Քրուզի մասին (թերթ 23ա) զայն կը կոչե «բարի ծերունի» և ոչ թե ծեր սուրբ։

[45] «Համառոտ տեղեկագրություն», թերթ 17ա։ Հավանաբար ձեռագրին սխալ ընթերցման հետևանքով է, որ տպած են թե «անձնատուր եղան շահին կնոջ» մինչ ձեռագրին մեջ, զոր հրատարակած եմ, կը կարդանք «շահին գթության» (տ. Ր. Կյուլպենկյան, անդ, էջ 156)։ 1610-ի իր ֆրանսերեն թարգմանության մեջ (տ. սատ, ծ. 51) Մեկրե կը գրե. «Անձնատուր եղան շահին հավատքին»։

գործը, որու համար պիտի աշխատի այնքան կարևոր չըլլար, պետք պիտի ըլլար փորձել զինքը արգիլելու մեկնելե»[46]։

Կը տեսնվի ուրեմն, որ Ալեյշո տե Մենեզըշ ոչ մեկ ակնարկություն կընե, որ բոպե մը իսկ մտածել տար, թե Կուվեյիա հեղինակն է «Պարսկաստանի վրա» տետրակին։ Կանգիտանանք թե առիթը ունեցա՞վ տեսնելու այդ գործը և «ծաղրելու», ինչպես կը վախնար Կոայի արքեպիսկոպոսը և կամ հուսախաբ եղավ կարդալով, որ Համառոտ տեղեկագրությունը արդեն կը ծանուցաներ Հայոց պատրիարքին ենթարկումը և կը տեղեկացներ ընթերցողներուն, շատ հակիրճ կերպով, իրավ է, ուրիշ քրիստոնյա հասարակության մը մասին (Ս. Հովհաննես-Մկրտչի հասարակությունը) հաստատված «Տիգրիսի և Եփրատի ափերուն շրջանին մեջ», ճշտելով, որ «արդեն երկու կրոնավորներ ուղարկված են տեսնելու համար թե ինչ կանցնի կը դառնա այնտեղ»[47]։

Հիմա, որ ապացուցված է թե Անթոնիո տե Կուվեյիա հեղինակը չէ Համառոտ տեղեկատվության, պետք է անդրադառնալ ուրիշ գործի մը, որ կը կոչվի Տեղեկատվություն Պարսկաստանի և Արևելքի վրա, որ կը թվի նույնպես հրատարակված ըլլալ 1609-ին, նմանապես առանց հեղինակի անվան և զոր Պարպոզա Մաշատո կը վերագրե Կուվեյիայի իր Լուսիտանական գրադարանին մեջ, հրատարակված 1741-ին։

Կուվեյիայի մեզի հետաքրքրող գործերուն մեջ հիշելե ետք Ճամփորդություն և Տեղեկագրություն, Պարպոզա Մաշատո կը հիշե Տեղեկատվություններ Պարսկաստանի և Արևելքի վրա գործը, Լիզպոն, 1609, 4°։ Կան շատեր և հրատարակված են առանց հեղինակի անվան, ինչպես կըսե Քարտողը, հատ. Գ, էջ 80, Գիր H»[48]։

[46] Ալոնսո, Օգոստինյան հավաքածո, ԼԳ, էջ 380։

[47] Հեղինակը հայտնապես փութացած է առաջինը ըլլալու համար Արևելքեն լուրերու հրատարակության մեջ։ Արդարև «Համառոտ տեղեկագրության» համար տպագրության արտոնագիրը տրված է 1608-ի վերջը և Ֆրանսիսքո և Մաթիաշ հայրերը իրենց առաքելությունը կատարելու համար 1609-ին միայն մեկնած են Կոայեն։ Կը թվի թե 1607-ի դեկտեմբերին իսկ Կոայի արքեպիսկոպոսը որոշած էր կրոնավորներ ուղարկել Մանտեաշ համայնքներուն, ինչպես կը վկայե Կոայի Արքեպիսկոպոսության դիվանատան նոտար Ժոան Անթոնիո Անթիքայի մեկ նամակը Պողոս Ե պապին, 31 դեկտեմբեր 1607-ին։ Լուրը Փորթուկալ հասավ հուլիս 1608-ին և հայրերը հրատարակեցին զայն առանց գիտնալու, թե նախատեսված ճամփորդությունը տեղի ունեցած չէր։ Մանտեաշներու հետ Օգոստինյաններու առաջին միսիոնարական շփումներուն մասին տ. Ալոնսո, Los Mandeos y las misiones catolices en la primera mitad del S. XVII, Rome 1967, գլուխ Ա, էջ 1—22 և 9.

[48] Պարպոզա Մաշատո, Լուսիտանական մատենադարան, Ա, էջ 295։ Վերհրատ., Քոիմպրա, 1965։

Ժերոնիմո տա Քրուզի անճշտությամբ Ժորժ Քարտոզը կը գրէ. «Այս սուրբ կրոնավորը հիշատակված է հոն. Անթոնիո տե Կուվեյիայի կողմե, եպիսկոպոս Սիրենի, իր Պարսկաստանի մասին տեղեկատվություններուն բազմաթիվ հատվածներուն մեջ: Եվ ուրիշներ առանց նույն հեղինակի անվան, որոնք տպագրվեցան Լիզպոնի մեջ, 1609 տարին, 4°[49]:

Քարտոզի մատնանշումը այնքան տարտամ է, որ կարելի չէ ըսել, ինչպես ըրած է Պարպոզա Մաշատո, թե կը վերաբերի Տեղեկատվություններ Պարսկաստանի և Արևելքի մասին-ին, մանավանդ, որ Պարպոզա Մաշատո և ոչ ալ մյուս հեղինակները, որոնք իր կարծիքը կը բաժնեին, ինչպես Ինոսենսիո տա Սիլվա և Սանթիակո Վելա, ոչ մեկ ապացույց տված են այս Տեղեկատվություններուն գոյության, զորս ոչ ոք մինչև այսօր չէ գտած:

Կուվեյիայի գործերուն մեջ Ինոսենսիո տա Սիլվա ցույց կուտա ոչ միայն 1606-ի Ճամփորդությունը, 1611-ի Տեղեկագրությունը և 1609-ի Համառոտ տեղեկագրությունը, այլև Տեղեկագրություն Պարսկաստանի և Արևելքի մասին-ը, նույն տարիով, որ իրեն գրել կուտա հետևյալ բացատրությունը. «Այստեղ կը հիշեմ այս գործը, ինչպես որ գտած եմ հիշատակված Պ. Թերնո Քոմփանի «Ասիական գրադարանին» մեջ, 1003 թիվին տակ: Սակայն չեմ կարծեր, որ այս խելացի մատենագիրը, գրեթե միշտ ճշգրիտ և խղճամիտ իր նկարագրություններուն մեջ, տեսած ըլլա անոր մեկ օրինակը և համոզված եմ, որ զայն կհիշատակե լոկ Պարպոզայի մեջ իր կարդացածին վրա հիմնվելով, հատ. Ա, էջ 295: Բայց եթե այդպես է, դիտելի է, որ Պարպոզա ըսած է «Տեղեկագրություններ» և ոչ թե «Տեղեկագրություն», ուրեմն կան ուրիշներ և թե անմիջապես հայտարարած է, թե անանուն են, ըստ Ժորժ Քարտոզի (տ. Լուսիտանական սրբաբանություն, հատ. Գ, էջ 87): Այդ ևս ահա կասկածի ենթակա կետ մըն է փորթուկալյան մատենագիտության մեջ և ինծի դժվար կը թվի գտնել անոր լուծումը»[50]:

Ինը տարի ետք, 1867-ին հրատարակված հավելվածի մը մեջ Ինոսենսիո տա Սիլվա կը հայտներ, որ տեսած էր օրինակ մը Կուվեյիայի

---

[49] (Լուսիտանական սրբաբանություն), Լիզպոն, 1666, մաս Գ, էջ 87, գիր, և ոչ թե էջ 80, ինչպես կը գրե «Լուսիտանական մատենագրությունը» սխալմամբ: Կուվեյիա կը խոսի արդարև Ժերոնիմո տա Քրուզի մասին «Տեղեկագրության» Ա գիրքին առաջին գլուխին մեջ: Նշենք, որ այս գիրքին սկիզբը հրատարակության արտոնագրերեն մեկը, 28 հոկտեմբեր 1610 թվականով, հատորին կուտա «Տեղեկագրություն Պարսկաստանի գործերուն վրա» տիտղոսը:

[50] Ինոսենսիո տա Սիլվա, անդ, Ա, էջ 151—153:

գործին, բայց չէր կրցած ստուգել անոր Տեղեկագրություն Պարսկաստանի և Արևելքի, Լիզպոն—4° ըլլալը և կամ 1611-ի մյուս Տեղեկագրությունը ըլլալը և կավելցներ. «Այս օրինակին վերնագրի էջը գրիչով էր և բառերը կրնային պատշաճիլ այս գործերեն մեկին կամ մյուսին: Տեսածս ուներ Զ—215 թերթ, առավել վերջին երկու թերթ չթվագրված: Առիթ չունեցա այս մասին ավելի խոր քննություն կատարելու»[51]:

Բնավ ճշմարտանման չէ, որ խնդրո առարկա հատորը 1609-ի Տեղեկագրություններուն մեկ օրինակը ըլլա: Կը խորհիմ ընդհակառակը, թե 1611-ի Տեղեկագրությունն էր, թեև թերթերու ցույց տված թիվը չի համապատասխաներ: Ցավալի է, որ Ինոսենսիո տա Սիլվա նոթագրություն չէ կատարած, որովհետև անտարակույս գործին վերնագիրը տված պիտի ըլլար, ինչ որ տարակույսները պիտի ցրվեր:

Հիշելե ետք Ճամփորդությունը և Համառոտ տեղեկագրությունը Կուվեյիայի գործին իր մատենագիտական ամբողջական ուսումնասիրության մեջ, Սանթիակո Վելա կը վերլուծե Քարտոզի, Մաշատոյի և Ինոսենսիո տա Սիլվայի բացատրությունները, հանելու համար այն եզրակացության, թե անկասկած գոյություն ունեցած է գործ մը, Տեղեկագրություններ Պարսկաստանի և Արևելքի, Լիզպոն, 1609—4° վերնագրով, որ վերահրատարակությունն էր, ուրիշ պատմություններու հավելումով, Համառոտ տեղեկագրության, հրատարակված նույն տարին ութծալ[52], այս վերջինը թարգմանված ըլլալով ֆրանսերենե հետևյալ վերնագրին տակ. Համառոտ տեղեկագրություն Պարսկաստանի թագավորության մեջ քրիստոնեության հառաջադիմություններուն՝ մահմեդականներու հավատափոխությամբ, պարսիկներու պատրաստությամբ Ավետարանի հունձքին և միացմամբ հայերուն Հռոմի եկեղեցիին, Ս. Օգոստինոսի միաբան եղբայրներու կողմե: Նույնպես մեծ աշխարհակալություններ Պարսկաստանի մեծ թագավորին մեր հասարակաց թշնամի թուրքերուն վրա, Լիեժ, տպ. Քրիսթիան Ուվերքս, երդվյալ տպագրիչ Նորին բարձրապատվության, 1610, գերագահներու արտոնությամբ, 16°, 106 էջ[53]:

---

[51] Նույն, Ը, էջ 167:

[52] «Համառոտ տեղեկագրությունը» հրատարակված էր ծավալ—16-ով, ինչպես ֆրանսերեն թարգմանությունը:

[53] Սանթիակո Վելա, անդ, էջ 263: Այստեղ պարտք կը համարիմ շնորհակալություն հայտնել հ. Ֆրանսիսքո Էմիրիշին, օգոստինյան մատենադարանապետ Վալլատոլիտի քոլեճին, որ իր մատենադարանի այս հատորին լուսատիպ օրինակը տրամադրեց ինծի:

Արդ, Սանթիակո Վեյայի պատճառաբանությունը Տեղեկագրություններուն գոյությունը ապացուցանելու և անոր հայրությունը Կովեյիայի վերագրելու համար սխալ է իր կարգին։ Արդարև, առիթը ունեցանք Համառոտ Տեղեկագրությունը բաղդատելու այս ֆրանսերեն խմբագրության հետ և հաստատելու, որ երկուքն ալ հրատարակված նույն ազդով և նույն տպագրության արտոնագրով, գրված փորթուկալերեն թվագրված մեկը 16 և մյուսը 17 դեկտեմբեր 1608-ին։ Բայց մինչդեռ Համառոտ տեղեկագրությունը տպվեցավ 1609-ին, ֆրանսերենը լույս տեսավ 1610-ին, Ժորժ Մեկրեյի ձոնագրությամբ, 15 հունիս 1610 թվակիր, ուղղված կղերին, ծերակույտին և Թուննի բնակչության։

Նախաբանեն և ընթերցողներուն ուղղված ազդեն ետք, Մեկրե, էջ 12-ին մեջ կը ներկայացնե «Առաջին պատմությունը օգոստինյան հայրերու Պարսկաստանի մեջ առաքելության և հաջող արդյունքներուն»։ Ինչ որ հեղինակը կը գրե մինչև 16-րդ էջը կը գտնվի Համառոտ տեղեկագրության մեջ. հակիրճ նկարագրություն մըն է ան Պարսկաստանի մեջ առաջին դեսպանության, 1582—83-ին», Հ. Սիմոն Մորալըշի կողմե, Օգոստինյան կարգեն, ինչպես որ կը ներկայացնե Կովեյիա»։ Մեկրե կարդացած է ուրեմն, ինչպես կը տեսնվի ճամփորդությունը իր առաջին խմբագրության մեջ և կամ ֆրանսերեն թարգմանության մեջ հրատարակված 1609-ին Բրյուքսել և Անվերս[54] և գիտեր ինչ որ Կովեյիա գրած էր Սիմոն տե Մորալըշի Պարսկաստան կատարած առաջին առաքելության մասին[55]։

Նախքան ամբողջապես Համառոտ տեղեկագրությունը թարգմանելը, Մեկրե հայտնապես ուզած է ընթերցողներուն ծանոթացնել ինչ որ կար այնտեղ օգոստինյաններու Պարսկաստանի մեջ կատարած կրոնական առաքելություններուն ծագման մասին։ Անմիջապես հետո, էջ 16-են մինչև վերջավորությունը, Մեկրե պարզապես կուտա Համառոտ տեղեկագրության ազատ թարգմանությունը[56]։

[54] Տ. տես, ծան. 1։

[55] «Ճամփորդություն» թերթ 138—140։ Կովեյիա ևս հիշած է Սիմոն տե Մորալըշը իր 1611-ի «Տեղեկագրության» մեջ, գլ. 1, թերթ 1—4։

[56] Երբեմն թարգմանիչը կավելցնե բառ մը, կամ կուտա բացատրություններ ընթերցողը լուսաբանելու համար, կը պատահի նաև, որ կը ջնջե քանի մը բառ և անոնց տեղ կը դնե ուրիշներ, բայց հիմնական բնագիրը «Համառոտ տեղեկագրությունն» է։ Օրինակի համար, երբ Մեկրե կը խոսի (անդ, էջ 17) երեք կրոնավորներուն մասին, որոնք Պարսկաստան գացին 1602-ին, կավելցնե Կովեյիայի մասին «հեղինակ Արևելյան պատմության, որ վերջերս ի հայտ եկավ», մինչդեռ այս ճշտումը չկաներ փորթուկալերեն բնագրին մեջ (թերթ 2ա)։ Ուրիշ անգամ մը, թարգմանելով բնագրին այն մասը (թերթ

Կրնանք ուրեմն եզրակացնել, որ հայր Անթոնիո Կովեյիա երկու տեղեկագրություն միայն գրած է Պարսկաստանի վրա, առաջինը խմբագրված 1603-ին, տպագրված 1606-ին ճամփորդության հատորին վերջավորության և հետևաբար նվազ ծանոթ, մանավանդ որ տիտղոսաթերթը չէր ըսեր, որ հատորը կը պարունակեր տեղեկատվություն մը «Ս. Օգոստինոսի կարգեն երեք կրոնավորներուն մասին, զորս արքեպիսկոպոսը ուղարկած է Պարսկաստանի մեծ շահին», երկրորդն է շատ կարևոր Տեղեկագրությունը, գրված 1608-ին, տպագրված 1611-ին Քոիմպրայի մեջ։ Ժամանակ անցնելե ետք, եզրակացված է, թե Կովեյիա գրած է կարգ մը «տեղեկագրություններ» Պարսկաստանի վրա։ Անոնց մեջ կը ճանչցվեր 1611-ի Տեղեկագրությունը, բայց մոռցվեցավ առաջինը, որ մաս կը կազմեր ճամփորդության և հետո, սկսյալ Քարտոզոյեն 60 տարի ետք, ամեն ոք ջանաց փնտրել «մյուսները», ոմանք մտածեցին հանիրավի, թե Կովեյիա հեղինակն է 1609-ի Համառոտ տեղեկագրության[57], ուրիշներ, ինչպես Պարպոզա Մաշատո, «հնարեցին» Պարսկաստանի և Արևելքի մասին տեղեկագրություններ, նույն տարվո թվականով, իրեն վերագրելու համար այս անանուն գործը, որ, ինչպես որ համոզված եմ մինչև որ հակառակը ապացուցվի, գոյություն չէ ունեցած...»։

132) ուր կխոսի «երկու տղոց վրա, որոնք իրարու հետ բնության հակառակ հարաբերություններ ունեին և իրենց մոլությունը գնաց մինչև այն կետը, ուր իրարու հետ ամուսնացան», Մեկրե կավելցնե փակագծի մեջ «կը խնդրեմ զգաստ հոգիներեն չվիրավորվիլ», տ. էջ 52։ Երբ «Համառոտ տեղեկագրությունը» կը հիշե (թերթ 95) «ֆրանկ կրոնավորները», Մեկրե կավելցնե «այսինքն լատին եկեղեցվո պատկանող» (էջ 40). ուրիշ տեղ փորթուկալերեն բնագիրը կը խոսի Ս. Հուդա Թադեոս առաքյալի մասունքին վրա խեղճորեն պարուրված փայտով, որպեսզի թուրքերը չգողնան, Մեկրե կը թարգմանե և կավելցնե. «թանկագին գոհարը շրջանակված էր փայտով և ոչ թե ոսկիով կամ արծաթով, վախնալով որ թուրքերը կը գողնան» (էջ 42)։

[57] Հարթման, Օկուսթինիանա, Ի, էջ 200, կը խոսի Կովեյիայի հոյակապ գործին, 1611-ի «Տեղեկագրության» մասին, որպես ընդլայնումը երկու տարի առաջ հրատարակված տեղեկագրի մը, որ անապարանքով գրված էր Սպանիա բնակության միջոցին և հրատարակված Լիզպոնի մեջ 1609-ին։ Հարթման նույնացուցած է այս տեղեկագիրը «Համառոտ տեղեկագրության» հետ։ Կը թվի, թե կը սխալի, որովհետև, ինչպես տեսանք, 1608-ին և 1610-ին Կովեյիա կատարեց Հնդկաստանեն Պարսկաստանի և վերադարձի ճամփորդությունը և Սպանիա հասավ միայն 1611-ին։ Այսուհանդերձ, խոսելով Մեկրեի կողմե «Համառոտ տեղեկագրության» ֆրանսերեն թարգմանության մասին, զոր տեսած և ուսումնասիրած է, կեզրակացնե, որ գործը պետք է նկատվի անանուն, բաժնելով հանդերձ Սանթիակո Վեյայի կարծիքը, որ զայն կը վերագրեր Կովեյիայի։

ԺԶ ԴԱՐՈՒ ՁԵՌԱԳՐԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրաց մատենադարանի հավաքածոյին պատկանող ԺԶ դարու հայերեն ձեռագիր ավետարանի մը մեջ գտանք փորթուկալերեն լեզվով գրված անթվակիր նամակ մը՝ ստորագրված Հայր Գասպարի մը կողմե։ Ստորև կներկայացնենք այդ նամակին թարգմանությունը.

«Այս գրությունը (ավետարանը—Ր. Կ.) վրացերեն է, որոնք պարսկական սահմանին վրա բնակող քրիստոնյաներ են։ Ասոնք հաշտ կապրին Շահ Թամասին (1524—1576—Ր. Կ.) հետ, բայց պատերազմի մեջ են Մեծ Թուրքին հետ։ Իրենց դրոշակներուն վրա խաչ ունին որպես խորհրդանիշ։ Կապրին ընդարձակ լեռնաշղթայի մը մեջ, ուրկե զորացած, կհարձակին Մեծ Թուրքին հողերուն վրա։ Սպիտակ ցեղին կպատկանին. խոշոր են գերմանացիներուն պես և շատ պատերազմասեր։ Բավական մեծ վնասներ կհասցնեն Թուրքին։ Ունին թագավոր մը։ Այստեղ կան նաև ուրիշ քրիստոնյա ազգեր, ինչպես օրինակ, հայեր ռուսներ, լեհեր և այլ ազգեր, որոնք դարձի եկած են սուրբ Թովմասի միջոցով։ (Նախադասություն մը անընթեռնելի—Ր. Կ.)։ Լեզուն Կյուրղի է։ Ինչպես պիտի տեսնենք, չորս ավետարանիչներու Նոր Կտակարանն է, սկիզբը՝ չորս ավետարանիչներու համաբարբառներով։ Եվրոպայի մեջ ամեն կողմ Ընկերության (Հիսուսյան միաբանության—Ր. Կ.) հայտնի պիտի ըլլա, թե ինչպես սուրբ ավետարանը ինկած է մավրերու իշխանության տակ, որոնցմե ձեռք ձգեցինք զայն։

Ձեր եղբայրը՝ **Մեսթր Գասպար»**

Վերոհիշյալ ձեռագիր ավետարանը կկրե 2583 թիվը Երուսաղեմի Հայոց Սրբոց Հակոբյանց վանքի մոտավորապես 4000 ձեռագիր մատյաններ պարունակող գրադարանի հավաքածոյին մեջ։ Վանքը կգտնվի Սիոն լեռան բարձունքին և կենտրոնն է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության, որուն գոյությունը սուրբ քաղաքին մեջ կերթա եռ մինչև Է դար։



Նկ. 1. Մեսթր Գասպարի նամակը փորթուկալերեն լեզվով

Հայր Պանթալեո տը Ավեյրո, փորթուկալցի Ֆրանսիսկյան մը, որ ուխտագնացություն մը կատարած է դեպի սուրբ քաղաք 1563-ին, Սուրբ Հակոբա վանքին մասին կպատմե հետևյալ բառերով.

«...Հայերուն կպատկանի այդ տեղը, որ Երուսաղեմի իրենց ժողովուրդին նվիրապետության կեդրոնն է։ Այնտեղ կբնակին ամբողջ Հայաստանի կարևորագույն և եկեղեցական դեմքերը։ Այնտեղ կհավաքվին նաև սուրբ քաղաք այցելող ուխտավորները։ Հաճախ մերիններն ալ, այն տարիներուն, երբ ուխտավորներուն թիվը մեծ ըլլա, նախ անոր համար, որ մեր վանքը փոքր է և ապա, որովհետև սերտ բարեկամություն գոյություն ունի հայերուն և մեր միջև»[1]։

Ձեռագիրը կբովանդակե Չորս ավետարանները հայերեն լեզվով, գրված և նկարազարդված 1443-ին Զաքարիա գրիչի կողմե, Վանի շրջանին մեջ գտնվող Վարագա վանքին մեջ։

Մեսթր Աֆոնսո, փորթուկալցի վիրաբույժ մը, 1565-ին Հնդկաստանեն Փորթուկալ ցամաքի ճամփով կատարած իր ուղևորության նկարագրության մեջ Վարագա վանքին մասին կգրե.

«...Բարձր և ընդարձակ լեռնաշարք մըն է, որ Գալիլիա կկոչվի, ստորին հայ վանականներու երկու վանքեր կան։ Մեծին, մեջ, որ կկոչվի Վարեգ, շուրջ 30 հոգի կբնակին միայնուն կերպով։ Կա նաև ուրիշ մը, ավելի փոքր, իր եպիսկոպոսներով։ Լեռան գագաթին վանք մը ևս կա, որ փոքր Վարեգ կկոչվի։ Այստեղ հազիվ երկու կամ երեք վանականներ կան։ Երևելի(?)յան դեմ Վան հասանք»[2]։

Տվյալներեն հետևցնելով, ձեռագիր Ավետարանը 1549-ի վերջերը Օրմուզեն Փորթուկալ ղրկված է Հիսուսյան միաբանության անդամ հայր Գասպարի կողմե, և ավելի վերջ, 1558-ին հանձնված հայազգի վարդապետի մը, որ Լիզպոն եկած էր Մեծ Հայքեն։

Ձեռագիր այս Ավետարանին մեջ կա նաև Լիզպոնի մեջ, 10 նոյեմբեր 1558-ին, լատիներեն, հռոմերեն և սպաներեն լեզուներով գրված հաստատագրություն մը, որ կնկարագրե, թե ինչպես ձեռագիրը ղրկված է Օրմուզեն Փորթուկալ, Հիսուսյան միաբանության պատկանող վարդապետի մը կողմե և թե ինչպես նույն Միաբանության պատկանող վարդապետներ զայն տված են Հովհաննես կոչվող հայազգի վարդապետի մը, պայ-

[1] Itinerário da Terra Sancta e suas particularidades, composed by Fr. Pantaleao de Aveiro. Coimbra 1927, p. 223 (first edition in 1593).

[2] Itinenários da India a Portugal por terra. Coimbra 1923, p. 208.



Նկ. 2. Հաստատագրությունը՝ լատիներեն և հռոմերեն



Նկ. 3. Հայտարարությունը՝ սպաներեն

մանավ որ այն պարագային, երբ ղևպքերու բերումով ձեռագիրը անցնելու ըլլա Հայաստանեն դուրս գտնվող մարդոց ձեռքը, անիկա վերադարձվի նույն Միաբանության գոլեջներեն կամ տուներեն մեկուն։ Հայտարարությունը կավելցնե, թե Ավետարանը իրեն՝ Հովհաննես վարդապետին կհանձնվի, որովհետև ծանոթ է հայերեն լեզվին և պիտի վերադառնա Հայաստանի շրջանները։ Հիշյալ հայ վարդապետը բամծ է իրենց, թե ձեռագիրը պետք է անպայման հանձնել իրեն։

Ներկա հոդվածին վերջավորության կհրատարակենք հայտարարությունը, որ ստորագրված է Լիզպոնի մեջ երեք Հիսուսյան միաբաններու կողմե. Սիփրիանո Ս., Գասպար Ալվարես և Անթոնիո Սոարեզ։

Հայազգի Հովհաննես վարդապետ ևս շատ ամփոփ կերպով և հայերեն լեզվով նկարագրած է իր ճամփորդությունը։ Ստորև կներկայացնենք բազմապիսի աղավաղումներով շարադրված այդ նկարագրության շտկված և սրբագրված վերծանությունը.

Ես, տէր Յովաննէս կուրոր (՞) արեղայ Ապրանոնցին[3],
մեղաւոր ծառայ Տէր Յիսուս Քրիստոսի, Բ (2) անգամ սր. Յակոբայ
առաքելոց գերեզման գնացի, սանեայ (կրկին անգամ)
սուրբ Յակոբոյ գնացի ի Պուրտքալեաց
յերկիր, քաղաք առաջին Վիլկամին, Վէնայ
քաղաք, Կրէնս քաղաք, Ուլուժրոյ
քաղաք մեծի ու զարմանալի, ֆռանկ
լեզու՝ ֆնըստէռ կասեն, հայոց լեզու՝
յեզր աշխարհի քաղաք։ Երբ որ ես՝ Տէր
Յովաննէս արեղայս Ուլուժրոյ քաղաք
գնացի, նայ Ա (1) քահանայ Յուրմուղեայ
երկիր էր (եկեր էր), զայս սուրբ աւետարանս
Յուրմուզայ բերեր էր։ Նայ ես տէր Յովաննէս
մեղաւոր ծառայս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
խնդրեցի յայն քահանայէն զաւետարանն.
Նա ետուր ինձ։ Այն քահանային
Անուն Ինաս կասեն. Աստուած իւր արքայութիւն
տայ, որ զայս մեղաւոր Յովաննէս քահանայս,
անպիտան ծառայս Յիսուսի Քրիստոսի
այնչափ հարգեաց, զայս սուրբ աւետարանս
ինձ բաշխեցի։ ՌՀ, ոհ, ոհ, Ռ (1000) ոհ, որ
իմ դառն զարիպութիւն ի Ֆռանկիստան։

[3] Շատ հավանաբար Ապարանցին։



Նկ. 4. Տեր Հովհաննես աբեղայի հիշատակարանը

Հետաքրքրական է Լիզպոնի մասին Հովհաննես վարդապետի բրած ակնարկությունը, որ ինչպես կըսե. «Ֆռանկ լեզու՝ Ֆնբստէռ կասեն, հայոց լեզու՝ յեզր աշխարհի քաղաք»։

Այս առթիվ տեղին է հիշել պարագան ԺԵ դարու ուրիշ հայ ճամփորդի մը՝ Երզնկացի Մարտիրոս եպիսկոպոսին, որուն դեպի Եվրոպա և Ատլանտյան օվկիանոս ուղևորությունը, 1489—1496 թթ., նկարագրված են ԺԷ դարու հայերեն ձեռագրի մը մեջ[4]։

Այս ուղեգրության մեջ, որ ֆրանսերենի թարգմանված է հայագետ Ճ.Ս.Թ. Մարթին[5] 1827-ին, հիշված են Մարտիրոս եպիսկոպոսին ճամփորդությունները Մեծ Հայքեն դեպի Գալիսիա՝ Սպանիո մեջ, ուր կգտնվի սուրբ Հակոբ Առաքյալի գերեզմանը։ Այնտեղ կըսվի նաև, թե ան հասած էր «աշխարհի ծայրագույն մասը, որ ֆռանկները, կկոչեն Ֆինիսթերրի սուրբ Մարիամ»։ Այսուհանդերձ, ոևէ ակնարկություն չկա մինչև Լիզպոն ալ գացած ըլլալուն։ Այդ ժամանակվա քարտեզներեն կարելի է տեսնել, թե Գալիսիայի ամենեն արևմտյան մասին վրա կգտնվի Ֆինիսթերրայի հրվանդանը։

Հովհաննես վարդապետի ձգած հիշատակարանին երկրորդ մասեն, որ կներկայացնենք ստորև, հայտնի կըլլա թե Մարտիրոս եպիսկոպոսի նման ինք ևս այցելած է Փարիզ։ Իր շատ հակիրճ արտահայտությունը Փարիզի Նոթր Տամի տաճարին մասին կարելի չէ անշուշտ բաղդատության դնել Մարտիրոս Եպիսկոպոսի մանրամասն նկարագրության հետ։

> Ես, տէր Յովաննէս այս Բ (2) անգամ
> Ի Փարէզ քաղաք գնացի։ Ի Փարէզ Ա (1)
> եկեղեցի կա, Զ (6) զանգակ /// մեծի ոյ
> զարմանալի. ԳՃԺԳ (313) աստիչան ունի, որ
> կիլուս (= կելնես)՝ զանկկայ բուրջ (= զանգակի աշտարակը)։
> Բ (2) մեծ զանգակ ունի, որ ԼԱ (31)
> Թիզ է լայնութիւնն. Ե (5) դուռն ունի
> Փարէզոյ մեծ եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին։

Հովհաննես վարդապետի դեպի Լիզպոն ճամփորդության նկարագրության մեջ կարելի չեղավ ճշտել ինքնությունը Վիլկամին և Վենա քաղաքներուն, թեև երկրորդը կրնա ըլլալ Վիանայի նավահանգիստը, որ

---

[4] Մատենադարան, ձեռ. № 3488։

[5] Relation d'un voyage fait en Europe et dans l'Ocean Atlantique à la fin du XV siécle, sous le regne de Charles VIII, par Martyr èveque d'Arzendjan: traduit de l' armènien et accompagnée du texte original. Paris, 1827.

Նկ. 5. Տեր Հովհաննես արեղայի ձեռատետրից

շրջանի երկրորդ մեծագույն քաղաքն էր այդ օրերուն։ Անծանոթ է նաև Կրենա քաղաքը, որ կրնա Գալիսիո մեջ գտնվող Օրենս քաղաքը ըլլալ։

Կկարծենք, թե Ինաս վարդապետը, որուն համար Հովհաննես վարդապետ կմաղթե, որ «Աստուած իւր արքայութիւն տայ», ձեռագիր Ավետարանը իրեն վերադարձուցած ըլլալուն համար, ներկայիս արդեն սուրբերու շարքը դասված Ինասիո տը Ազևետո վարդապետն է, առաջին ընկերը Հիսուսյաններու Լիզպոն կոլեջին, ուր դասավանդություններ սկսած են 1553 հոկտեմբերին։

Ինասիո տը Ազևետո, զավակը ծանոթ ընտանիքի մը, ծնած է 1526-ին Օբորթոյի (Փորթուկալ) մոտերը։ Եղած է Փորթուկալի շրջանի փոխ-մեծավոր, ինչպես նաև ռեկտոր Գոյիմպրայի, Լիզպոնի և Պրակայի գոլեջներուն։ Պրազիլի մեծավոր նշանակվելով, Լիզպոնեն «Սանթիակո» նավով 1570-ին ճամփա կելլե 46 միաբանակիցներու հետ դեպի Պահիա՝ միսիոնարական առաքելությամբ մը։ 1570 թ. հուլիս 15-ին, ծովուն բացերը, ոչ շատ հեռու Գանարյան կղզիներեն, դեպի Պրազիլ ճամփուն վրա «Սանթիակո» նավը հարձակման կենթարկվի ֆրանսացի ծովահեններու կողմե որոնք կսպաննեն գրեթե բոլոր վարդապետներն ու միաբանության անդամները։

1628-ին Գոյիմպրայի մեջ հարկ եղած կանոնական պատճառը կներկայացվի Ինասիո տը Ազևետոյի և իր ուղեկիցներեն 39-ին սրբացման համար։ 1854 մայիս 11-ին անոնք պաշտոնապես կդասվին սուրբերու շարքը, որպես «Պրազիլի 40 մարտիրոսները», որոնց հիշատակը կոգեկոչվի ամեն տարի հուլիս 15-ին։

Ձեռագրին մեջ գտնվող պորթուկալերեն նամակը ստորագրող Մեսթր Գասպարը և Հիսուսյան Հայր Գասպար Պարզեուն կարելի է, առանց ռեւէ տարակույսի, նույն անձը նկատել։ Անթվակիր այս նամակը գրված պետք է ըլլա 1549-ի վերջերը։ Ուրիշ փորթուկալերեն նամակի մը մեջ, որ Հայր Գասպար Օրմուզեն, 10 դեկտեմբեր 1549-ին ուղղած է Գոյիմպրայի (Փորթուկալ) իր միաբանակից եղբայրներուն, կգրե.

«Դրկեցի Քրիստոսի ամբողջ կյանքը նկարագրող Նոր Կտակարան մը, որ գրված է կյուրդիներուն լեզվով։ Անոնք քրիստոնյա համայնք մըն են Պարսկաստանի սահմաններուն վրա և հարկատու մեծն Շահ Թամասին։ Կը խնդրեմ, որ 50 պատարագ մատուցանեք ինծի համար, որովհետև շատ կարիք ունիմ անոնց, ինչպես նաև անոր համար, որ այս գիրքը տվավ ինծի»[6]։

[6] „Documanta Indica" (1540—1549) Father Josephus Wicky, S. J. Tome 1, p. 698.

Ինչպէս կարելի է տեսնել ձեռագիր Աւետարանին հայերէն բովանդակութենէն, Գոյիմպրայի իր միաբանակիցներուն գրած նամակին մէջ Հայր Գասպար կսխալի կարծելով, թէ Աւետարանը գրված է վրացերէն լեզուով: Սխալը կբացատրվի թերևս արևելյան լեզուներու մասին ունեցած իր մակերեսային ծանոթությամբ: Ասիկա հասկանալի է, անշուշտ, որովհետև այդ նամակը գրված միջոցին հազիվ քանի մը ամիս եղած էր իր Օրմուզ հասնելուն:

Կասկած չկա, թե դեկտեմբեր 1549-ին Օրմուզեն Եվրոպա ղրկված «վրացերեն» Նոր Կտակարանը, որուն կակնարկե Հայր Գասպար իր 10 դեկտեմբեր 1549-ի նամակին մեջ (և որ Հայր Ուիկի իր «Տոքումենթա ինտիքա»[7] գործին հառաջաբանին մեջ կնկատե կորսված) միևնույն այս հայերեն Նոր Կտակարանն է, որ բարեբախտաբար, ներկայիս կգտնվի Երուսաղեմի Հայոց վանքի ձեռագրաց մատենադարանին մեջ:

Հայտնի չէ, սակայն, թե ինչ պայմաններու տակ և որո՞ւ կողմե իրեն տրված է ձեռագիրը նախքան Օրմուզեն Փորթուկալ ղրկվիլը 1449-ի դեկտեմբերին: Այս ուղղությամբ մեկ ակնարկություն կա միայն Ավետարանին մեջ Հայր Գասպարի գրած նամակով, ուր կըսե. «Սուրբ Ավետարանը ինկած է մավրերու իշխանության տակ, որոնցմե ձեռք ձգեցինք զայն»:

Այն իրողությունը, սակայն, թե Հայր Գասպար կխնդրեր Գոյիմպրայի Հիսուսյան միաբանության անդամներեն «50 պատարագ մատուցանել իրեն և գիրքը իրեն տվողին համար», ցույց կուտա, թե Ավետարանը իրեն հանձնողը քրիստոնյա մըն է: Ան կրնա եղած ըլլալ հայ կամ վրացի—«որոնք այնքան սերտորեն շփման մեջ են մավրերու, թուրքերու, հրեաներու և հեթանոսներու հետ, որ դժվար է զանազանել»[8], և կամ հետո քրիստոնեությունը ընդունած մեկը, «ամեն օր շատեր դարձի կուգան. Փառք Տիրոջ. անհավատ հայեր, թուրքեր, ենիչերիներ, վրացիներ, հաբեշներ, մավրեր, հեթանոսներ, հրեաներ և անհավատ խալալցիներ, ինչպես օրինակ, ճենովացիներ, հույներ և այլն: Սիրով կընդունիմ զանոնք և կը ղրկեմ Հնդկաստան»[9]:

Հայր Գասպարի ուղեկիցը՝ Հայր Պաղտասար Կակո, Օրմուզեն 1549 սեպտեմբերին գրված նամակի մը մեջ կըսե. «Այստեղ կան զատ և մավրական տարազ գործածող կարգ մը հայեր, որոնք իրենց գացած

[7] Idem, Preface (p. 66, note 18),

[8] Idem, vol. 1. Doc. 87A, Letter in Portuguese from Father Gaspar Barzaeus from Ormuz, of 1st December 1549. p. 606.

[9] Idem, Doc. 87A, Letter in Portuguese from Father Gaspar Barzaeus from Ormuz of 10th December 1549, p. 686.

երկրին համաձայն կփոխեն իրենց տարազն ու սովորությունները. մեկե ավելի լեզուներ կխոսին անոնք[10]: Անոնցմե երկուքը գիշեր մը եկան Հայր Գասպարին խնդրելու, որ իրենց մահամերձ մեկ բարեկամին խոստովանքն առնե: Հայր Գասպար գնաց կես գիշերին և առավ խոստովանությունը: Մարդը մեռավ և զինք թաղեցին կրոնական ծեսով»[11]:

Խոսելով Օրմուզի մասին, Հայր Գասպար կը գրե. «Այս երկրին մեջ կան բազմաթիվ հրեաներ, որոնք սերած են Բաբելոնի առաջին գերիներեն: Անոնք ունին շատ մը սինակոկներ: Կան նաև թուրքեր, պարսիկներ, հայեր, ռուսեր, լեհեր և ուրիշ պարպար ազգեր»[12]: Հետո կշարունակե. «Եթե երբեք Հայր Ֆրանսիս պատեհություն տված ըլլար ինծի[13], կայցելեի նաև լեհերուն, ռուսներուն և հայերուն, որոնք դրացի են և հարկատու պարսիկներուն, որոնց մեկ մարդ կուտան յուրաքանչյուր որոշ թիվի մը վրա: Անոնք շատ կզանգատին քրիստոնյա թագավորներու տկարութենեն, որովհետև այս վերջինները չեն պատերազմիր թուրքին դեմ: Անհավատ ազգերուն լուծին տակն են անոնք: Կհավաքեմ զիրենք եկեղեցվո հովանիին տակ ու դարձի բերելով կազատագրեմ իսկույն»[14]:

Գոյիմպրայի Հիսուսյան միաբանության ուղղված նամակի մը մեջ, գրված Օրմուզեն 24 նոյեմբեր 1550-ին, ան կըսե. «Հաջողության ավելի մեծ կարելիություններ ունիմ հայերու մոտ, որոնք այստեղ կիսով մավր քրիստոնյաներ են, առանց երկարատև ապաշխարանք պահանջելու իրենցմե, ինչպես կընեին Հայաստանի սուրբ հայրերը: Կաշխատիմ կարելի չափով սորվեցնելու վարդապետությունը և եկեղեցիին մոտեցնելու զանոնք. ռուսներ, լեհեր, հունգարացիներ և կարգ մը անհավատ ենի-

[10] „Documenta Indica", Doc. 76, Letter in Portuguese from Father Gago-Ormuz, September 1549, p. 505, note 17.

«Տարազը խորհրդանիշ էր հարստության կամ կրոնքի. և որովհետև հայերը ընդհանրապես առևտրական կամ իրավագետ կըլլային, անոնց այս վարվելակերպը հասկանալի կըլլար»:

[11] Idem, Doc. 76, p. 504

[12] Idem, Doc. 87B, Tome 1, p. 647.

[13] Historia da Vida do Padre S. Francisco de Xavier e do que fizeram na India os mas Religiosos da Companhia de jesu. Composed by Father Joam de Lucena, 2nd edition, Lisbon 1788.

«Մր. Ֆրանսիս էկզեյվյըր, երբ զինք նշանակեց Օրմուզի առաքելությունը ստանձնելու, հրահանգեց իրեն, որ առանց իր կամ Կոայի Ս. Պողոս Գոլեջի ռեկտորին արտոնության պետք չէ երեք տարիներու ընթացքին ոտք կոխե Պարսկաստանի կամ Արաբիո հողին վրա», հատոր Գ, էջ 262:

[14] Idem, Doc. 87B, Tome 1, p. 649.

չերիներ, ինչպես օրինակ, ճենովացիներ, հույներ և ուրիշ քրիստոնյա ազգեր, որոնք հրաժարած են Քրիստոսի հավատքեն»[15]։

Կտարվինք ուրեմն մտածելու, թե, ինչպես հիշեցինք վերը, խնդրո առարկա Ավետարանը նվիրողը քրիստոնյա մըն էր. հայ, վրացի և կամ քրիստոնեությունը վերջը ընդունած մեկը։

Հայր Գասպար Պարզեու, զավակը համեստ ընտանիքի մը, ծնած է Զիլանտ կղզիին վրա Կոեզիայի մեջ (Զելանտը) 1515-ին։ Շրջանավարտ եղած է մագիստրոս արվեստից տիտղոսով Լովենի համալսարանեն, ուր հետևած է իմաստասիրության և աստվածաբանության։ Ղրկված է Փորթուկալ, ուր ապրիլ 1556-են սկսյալ դասավանդած է Գոյիմպրայի Հիսուսյան գոլեջին մեջ։ 1548 մարտ 17-ին, միսիոնարական առաքելությամբ մը, Հիսուսյան չորս միաբաններու հետ Պելեմեն (Փորթուկալ) ճամփա կելլե «Սան Բետրո» նավով դեպի Հնդկաստան, ուր կհասնի նույն տարվա սեպտեմբեր 4-ին և կմնա մինչև ապրիլ 1549 թ. առավելաբար Կոայի սուրբ Պողոս Գոլեջին մեջ միաժամանակ աշխատելով Շոլի և Գոշիմի մեջ։ 1549 ապրիլ 7-ին հայր Գասպար Կոայեն ճամփա կելլե դեպի Օրմուզ, ուր կը հասնի նույն տարվան հունիս ամսուն և կը մնա որպես իրենց առաքելության մեծավորը, մինչև 1551-ի աշունը։ Օրմուզեն կը վերադառնա դարձյալ Կոա, ուր կը մահանա 1553 հոկտեմբեր 18-ին։

Հայր Գասպարի հիշատակը չի մոռացվի, սակայն, և 1607-ին, Պելճիքական միաբանութենեն հայր Գլոտիս Ագուավիվա առաջարկ կներկայացնե Հռոմի վարչական պատասխանատուին, որ հարց տրվի «բոլոր անոնց, որոնք իր ձգած նամակներեն կրնան լույս մը սփռել պելճիքացի հայր Գասպար Պարզեուի կյանքին վրա, միևնույն ատեն թելադրություններ ընելով անոր սրբացման առնչությամբ առնվելիք քայլերուն մասին- «առաջարկ մը», որ Հռոմի վավերացման կարժանանա 1608 թ. հուլիսին։ Այդ օրերուն վարդապետին մարմինը զուր տեղը կփնտրեն Կոայի մեջ։ Նամակները խմբագրված էին Անթուերբի մեջ 1610-ին Հայր Թրիկոյի կողմե «Վիթա Գասպարիս Պարզեու»-ի մեջ[16]։

Հայտարարությունը ստորագրող երեք Հիսուսյաններեն—Սիփրիանո Ս., Անթոնիո Սոարեզ Գասպար Ալվարեզ, Սիփրիանո Ս-ը այսպես կթվի թե Սիփրիանո Սոարեզն է, սպանացի մը, որ ծնած է Օսանա, որ ենթա-

[15] Idem, vol 11, Letter in Portuguese from Father Gaspar Barzaeus from Ormuz to Coimbra, p. 78.

[16] Idem, vol. 1, pref. 49, 50, 51 (biography of Father Gaspar Franciscus Barzaeus (Berze).

կա էր Թոլետոյի արքեպիսկոպոսության, և ապրած Փորթուկալի մեջ։ Ճարտասանության առաջին ուսուցիչը եղած է ան Փորթուկալի մեջ գտնվող իրենց Միաբանության գոլեջներուն։ 1580-ին կքաշվի Գասթիլի նահանգը և Փլասենայի մեջ կը մահանա 1593-ին, 69 տարեկան հասակին մեջ։ Հեղինակն է «Արվեստ ճարտասանության» հատորին, որ լույս տեսած է Գոյիմպրայի մեջ 1562-ին և մինչև 18-րդ դար բազմաթիվ անգամներ վերահրատարակված և սպառած զանազան երկիրներու մեջ։

Հայր Սիփրիանո Սոարեզ, որ մասնագետ եղած է լատիներեն և հունարեն լեզուներու, պետք է եղած ըլլա հեղինակը երեքլեզվյան հայտարարության, որ միաժամանակ ստորագրված է անոր, հայր Գասպար Ալվարեզի և Հայր Անթոնիո Սոարեզի կողմե։ Ասիկա ցույց կուտա, թե ինչպես ավելի լայն տարածումի մը մտահոգությամբ, Հիսուսյաններ դեպքերը կը տեղեկագրեին երեք լեզուներով՝ սպաներեն, լատիներեն և հունարեն։

Երկրորդը, Հայր Գասպար Ալվարես, սպանացի մը Կրիժո տը Փարատայեն (Պրականդայի նահանգ) արդեն վարդապետ էր, երբ 1553-ին Սալամանքայի մեջ կընդունվի Հիսուսյան միաբանության շարքերեն ներս։ Իր սկզբնական շրջանի վարժության սկսած է 1555-ին Գոյիմպրայի մեջ։ Վարած է Սան Անթաո Գոլեջի ռեկտորությունը 1559 և 1560 տարիներուն։ 1562-ին մասնակցած է Մազականի (Մարոքո) գրավումին։ Գոլեջը վարելու համար վերադարձած է Լիզպոն, ուր մնացած է մինչև 13 օգոստոս 1569 թ., երբ զոհ գացած է Լիզպոնի մեծ համաճարակին։

Երրորդ Հիսուսյանը, Անթոնիո Սոարեզ, մեկն է Փորթուկալի նահանգի ամենեն տարեց վարդապետներեն։ Գոյիմպրայի Գոլեջին մեջ ուսանող եղած է 1547-ին և 1558 թ. հոկտեմբերին հոգևորական ասպարեզ ընդգրկվելով մտած Լիզպոնի «Գազա Պրոֆեսա տը Սան Ռոք», ուր և մահացած է 1572 թ. հունվար 11-ին։

Այստեղ չի վերջանար, սակայն, արկածախնդրական գոյությունը այս ձեռագիր Ավետարանին, որ խորհրդավոր պայմաններու տակ 1967 մարտին, աճուրդի դրվելու համար, հայտնվեցավ Լոնդոնի մեջ 23 ուրիշ հայերեն ձեռագիր մատյաններու հետ։ Բարեբախտաբար, սակայն, աճուրդը ի վերջո հետ կոչվեցավ և ձեռագիրը կրկին անգամ վերադարձավ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքը։

Պրոֆ. Չարլս Տոուսեթ, որ կը գլխավորե Օքսֆորտի համալսարանի հայագիտական ուսմանց Գալուստ Կյուլպենկյան ամբիոնը, հետևյալ ձևով կնկարագրե այս ձեռագիր Ավետարանը աճուրդի կաղալոգին մեջ.

«Թուղթ։ 280 թերթ։ 1, 2, 278, 279 և 280 դատարկ։ Ծավալ՝ 200× 145 մմ։ Երկսյուն. 21 տող։ Գրությունն՝ սև մելան։ Յուրաքանչյուր Ավետարանի սկզբնավորության՝ գլուխներու ցանկը։ Խորագրներ և պարբերություններու սկզբնատառեր՝ կարմիր։ Ձեռագիրը լավ վիճակի մեջ է»։

Պրոֆ. Տաունեթ նկատել կուտա, թե Զաքարիա գրիչի կողմե գրված հիշատակարանը կբացատրե, թե ձեռագիրը ձեռք բերված է Մարտիրոս վարդապետին կողմե՝ իրեն և իր ընտանիքին հիշատակին։ Պրոֆ. Տաունեթ կհայտնե նաև այն կարծիքը, թե սպաներեն հայտարարության կողքին՝ 5բ. թերթին վրա երևցող նկարը կրնա հայազգի Հովհաննես վարդապետի դիմանկարը ըլլալ։

Հետաքրքրական կարծիք մըն է ասիկա, որովհետև մեզի առիթ կուտա ենթադրելու, թե Հովհաննես «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կաթոլիկ միաբանության» պատկանող հայազգի վարդապետ մըն էր։ Լատինահայկական այս միաբանությունը հաստատված է հովանավորությանը տակ Մարաղայի Դոմինիկյան եպիսկոպոս Բարթողեմեոս Բոլոնցիի (մահացած 1333-ին), սխալմամբ ճանաչված որպես Պոլոնացի[17]։ Այս միաբանության պատկանող եկեղեցականները կը հետևեին սուրբ Օգոստինոսի կանոններուն և կը գործածեին Դոմինիկյան տարազին մասամբ բարեփոխյալ ձևը։ Սպիտակ տարազը, որով ներկայացված է նկարին վանականը, ավելի նման է կաթոլիկ հոգևորականներու տարազին, քան այն զգեստին, որ սովորաբար կգործածվի Հայաստանյայց եկեղեցվո հոգևորականներուն կողմե։ Այս վարդապետները թիվով բավական շատ էին այդ օրերուն Նախիջևանի, Երնջակի և Ջահուկի շրջաններուն մեջ։ Ժամանակի ընթացքին Նախիջևանի եպիսկոպոսը հեռացավ Նախիջևանեն և իր կայքը հաստատեց Նախիջևանեն հինգ լիգա հեռավորության վրա գտնվող Ապարան կամ Ապարաներ գյուղին մեջ։ Այստեղ կգտնվեր նաև Ապարանի հայ-կաթոլիկ վանքը, ուրկե եկած ըլլալ կթվի Հովհաննես վարդապետ։ Իր կաթոլիկ հայ եղած ըլլալու հանգամանքը լավագույնս կբացատրե Հիսուսյան հայրերուն՝ Ավետարանը իրեն հանձնելու որոշումը և այդ որոշումին ընկերացող պայմանները, որոնք կերևին հայտարարության մեջ։

Հայ կաթոլիկ այս համայնքին առնչությամբ հետաքրքրական է նաև հիշել, թե Նախիջևանի «աթոռակից» արքեպիսկոպոսը՝ իտալացի Անճելո Սիթթատինի, Վատիկանի մայր աթոռին արտոնությամբ, Կոայի

[17] Histoire et Institution de l'Eglise Arménienne. Père Jean Mecerian S. J., p. 294, Imprimerie Catholique, Beyrouth, 1963.

մեջ որ այն օրերուն կը գտնվեր Փորթուկալյան իշխանության տակ, հայ կաթոլիկներու հատուկ Գոլեջ մը հիմնելու համար անհրաժեշտ նյութական միջոցները ապահովելու նպատակով, կձեռնարկե առաքելության մը, որ զինք կտանի մինչև Մեքսիքո[18]։

Օգտագործված գլխավոր աղբյուրներ

1) Francisco Rodrigues, S. J. Historia da Companhia de Jesus na Assistencia de Portugal—7 Tomes. Oporto, 1931
2) Father Antonio Franco Ano Santo da Companhia de Jesus em Portugal no 1 Vol. Oporto, 1931
3) Father Joam de Lucena Historia da Vida do Padre S. Francisco de Xavier e do que fizeram na India os mas Religiosos da Companhia de Jesus—4 Tomes. 2nd ed. Lisbon, 1788.
4) Father Jos'phus Wicky, S. J. Documanta Indica (1540)
5) Serafim Lefte Novas Paginas de Historia do Brasil—7 Vols. Lisbon 1962.
6) M. Gen:alves da Costa Inacio de Azevedo. o homem e sua epoca, 1526—1570—1 Vol. 2nd ed. Braga, 1957

[18] The Carmelites in Persia, p. 411. quoting the Acta of the Sacr, Congregation for 1630, p. 162, 22nd November 1630.

ՋԱԿՈՄԵ ԱԲՈՒՆԱ. ՀԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՄԱԼԱԲԱՐՈՒՄ (1503—1550)*

(ըստ պորտուգալական ժամանակակից աղբյուրների)

Հիսուսյան միաբանության անդամ հայր Գեորգ Շուրհամմերը «Հայ եպիսկոպոսներ Մալաբարում»[1] իր հակիրճ և հմուտ ուսումնասիրության մեջ անհերքելիորեն ապացուցել է, որ սկսած պորտուգալացիների Հնդկաստան գալուն անմիջապես նախորդող ժամանակաշրջանից մինչև 1599 թվականին տեղի ունեցած Դիամպերի եկեղեցական ժողովը, Մալաբարի բոլոր եպիսկոպոսները գալիս էին վերին Միջագետքից և նշանակվում Սելևկիա-Տիզբոնի, այլ կերպ ասած Բաբելոնի ու Մոսուլի արևելյան սիրիական կաթողիկոսների կողմից։ Լիովին համաձայնվելով այս նախադրյալներին, ես կաշխատեմ ցույց տալ, թե ինչու այս հանգամանքը չպիտի ժխտի եպիսկոպոսներից մեկի՝ Ջակոմե Աբունայի հայ լինելը։

Այս կապակցությամբ պետք է քննարկել պորտուգալերեն գրված երկու կարևոր նամակ։ Մեկի մասին խոսվել է վերոհիշյալ ուսումնասիրության մեջ. դա Ֆրանսիս Քզավիեի՝ 1549 թ. հունվարի 26-ին Պորտուգալիայի թագավոր Ժուան Գ-ին Կոչին քաղաքից գրած նամակն է, որտեղ ասված է, որ «Հայաստանից մի եպիսկոպոս, Ջակոմե Աբունա անունով, մի շատ ծեր, առաքինի ու սուրբ մարդ, այս երկրներում քառասունհինգ

* Հոդվածը Վ. Ա. Ավթանդիլյանի և Լ. Գ. Կարապետյանի արևելահայ թարգմանությամբ, նախապես լույս է տեսել ՀՍՍՀ ԳԱ գիտա-ինֆորմացիոն բյուլետենի Գ մատենաշարով № 2 (6) առանձին բրոշյուրով (խմբ.)։

[1] Տես „Arquivos do Centro Cultural portugues" պարբերականի նույն այս Դ հատորում (Փարիզ, 1972) տպագրված նախորդ հոդվածը։ Ես երախտապարտ եմ հայր Շուրհամմերին իր անգնահատելի օգնության և խորհրդի համար, որն ինձ հնարավորություն ընձեռեց իրագործելու ներկա մենագրությունը։

տարի ծառայել է Աստծուն և Ձերդ մեծությանը»[2]։ Շուրհամմերը համոզեցուցիչ կերպով ապացուցել է, որ «Հայաստանից» բառը տվյալ կոնտեքստում չի նշանակում, որ Ջակոմե Աբունան անպայման հայ է եղել։ Բայց մենք պետք է քննարկենք մի ուրիշ, անթվակիր նամակ՝ «Մար Հակոբից Պորտուգալիայի թագավոր Ժուան Գ-ին, Կոչին քաղաքից, մոտավորապես 1523 թվականին», որն սկսվում է այսպես՝ «Վսեմ արքա և տեր, Ջակոմե Աբունան, հայ քահանան, որը գլխավորում է Հնդկաստանի քրիստոնյաներին...», և շարունակվում է հետևյալ բառերով «... լիազորված և այնտեղ է ուղարկված Բաբելոնի պատրիարքի կողմից»[3]։ Մար Հակոբի անունից Տեր Ջոանի գրած պորտուգալերեն այս նամակը ավարտվում է հետևյալ հայտարարությամբ. «Այն, ինչ ասված է ստորև, գրված է հայր Մար Հակոբի կողմից՝ քաղդեերեն լեզվով, որտեղ նա վկայում է, որ իր վերը ասածը ճշմարիտ է»[4]։ Մար Հակոբի, այլ կերպ կոչված Ջակոմե Աբունայի՝ ասորերեն լեզվով գրված տեքստի Շուրհամմերի կողմից կատարված անգլերեն թարգմանությունը փաստորեն հետևյալն է. «Այս նամակը Հնդկաստանի եպիսկոպոս կոչված, խոնարհ Հակոբի կողմից է։ Այս բառերը գրեց տեր Ջոանը «Թագավորին՝ մեր տիրոջը» հասցեով»[5]։ Այս նամակում այլևս վեճի առարկա «Հայաստանից մի եպիսկոպոս» արտահայտության հաստատումը չէ, որ երևում է, այլ Ջակոմե Աբունայի՝ իր անձի մասին սեփական նկարագրությունը, որպես Բաբելոնի պատ-

[2] **Schurhammer Georg, S. J.,** Episrolae S. Francisci Xavierii, 11. 60—63, հիշատակվել է նաև հայր Ա. Սիլվա Ռեգոյի Documentacao para a Historia das Missoes do Padroado Portugues do Oriente աշխատության մեջ, Լիսաբոն, հատ. 4, վավերագիր 52, էջ 270—272

[3] **Schurhammer,** Three letters of Mar Jacob, Bishop of Malabar 1503—1550, in Gregorianum, հատ. ԺԴ, 1933, էջ 71—77. վերատպված Gesammelte Studien 11: Orientalia 333—349, նույնպես Սիլվա Ռեգոյի նշված աշխատության մեջ, հատ. 2, վավերագիր 107, էջ 352 և Quellen № 99-ի հավելվածում, էջ 487, ըստ որի խնդրո առարկա նամակը կարող էր գրված լինել 1524 թ. դեկտեմբերին։

[4] Նույն տեղում, էջ 77։

[5] Նույն տեղում։ Տեր Ջեհանը նույն ինքը հայր Ջոան Կարոն է, դոմինիկյան կրոնավոր։ Անշուշտ այն փաստը, որ նամակը գրված է Ջակոմե Աբունայի համար Ջոան Կարոյի կողմից, որոշ չափով թուլացնում է փաստարկի ուժը, սակայն պետք է նկատի ունենալ, որ Ջակոմեն մոտ քսան տարի պորտուգալացիների հետ սերտ հարաբերության մեջ էր, որը նրան հնարավորություն կարող էր տալ հասկանալու, թե իր անունից ինչ էր հաղորդված նամակում։ Տեղյակ լինելով Արևելքի քրիստոնյաների ազգային պատկանելության վերաբերյալ նախանձախնդրության մասին, կասկածելի է, որ Ջակոմեն կընդուներ «հայ քահանա» կոչվել այն դեպքում, եթե նա պատկանելիս լիներ քաղդեական ազգին։

բիարքի կողմից ուղարկված մի հայ քահանայի։ Խնդիրն այլևս այն չէ, թե նա որ երկրից է եկել, այլ սեփական անձի կամ ազգության անվանումն է, ինչպես որ նշված է։

1. Շուրհամմերի հոդվածի լույսի տակ կարող է հարց ծագել, թե արդյոք հնարավո՞ր էր, որ մի հայ մարդ եպիսկոպոս օծվեր արևելասիրիական կաթողիկոսի կողմից՝ Մալաբարի քրիստոնյաների մեջ կրոնական առաքելություն կատարելու համար։ Ինչպես ինքն է նշել, ազգագրական և լեզվական առումով Դիարբեքիրի շրջանը խառը բնակչություն ուներ. հայերը, արևելյան (նեստորականներ) և արևմտյան (հակոբիկյաններ) ասորիները հանդիսանալով հիմնական բնակիչները, քաղդեացիների համար անսովոր չէր հայերեն իմանալը, իսկ հայերի համար՝ քաղդեերենին կամ ասորերենին ծանոթ լինելը[6]։ Չնայած նեստորականների և հայերի միջև եղած թե պատմական, և թե կրոնական հարաբերությունները բնորոշ էին խոր տարակարծություններով, սակայն հայտնի է, որ հայ կաթողիկոս Գրիգոր Գ-ի (111—1167) հայրապետության ժամանակ պավլիկյան թեքումով մի քանի հայ քահանաներ փոխադարձ համաձայնության եկան Ուրֆայի և Մերդինի միջև ընկած շրջանում ապրող նեստորականների հետ՝ «երկու բնությունների» վերաբերյալ գոյություն ունեցող դավանաբանական վեճերի շուրջ[7]։ Շատ հեռավոր վայրերում նեստորական քրիստոնյաների մեջ կային նաև հայ վանականներ, որոնք երկար ժամանակ ասորի քահանաների հոգևոր խնամակալության տակ էին գտնվում։ Ուիլյամ Ռուբրուկը 1254 թ. գալով Մոնղոլիա՝ Մանգուի պալատը, և հանդիպելով նեստորական քրիստոնյա հավատք ունեցող գլխավոր քարտուղարին, մտավ եկեղեցի, որտեղ գտավ մի հայ վանական, որի հետ աղոթեց[8]։ Հայ վանականը, որի անունը Սարգիս էր և Ռուբրուկից մեկ ամիս առաջ էր եկել այնտեղ, հայտնեց, որ ինքը Երու-

[6] Ըստ Սեն-Մարտենի „Mémoires sur l'Arménie", Փարիզ, 1818, հատոր 1, էջ 156, Աղձնիքի հայկական նահանգը մտնում էր Դիարբեքիրի մեջ և կազմում էր Ամիդի փաշայության հիմնական մասը։ Էջ 157-ում նա շարունակում է. «Աղձնիքից արևմուտք մի ընդարձակ երկրամաս կար, որը ձգվում էր Տիգրիսի ափերից մինչև Եփրատ՝ կցված լինելով այս նահանգին և որը չնայած գրեթե ամբողջությամբ բնակեցված էր հայերով, սակայն իրականում Միջագետքի մի մասն էր կազմում. այն կոչվում էր Միջագետք Հայոց»։

[7] **Arpee, Leon,** A history of Armenian Christianity, New York, 1946, pp 137—38.

[8] **Dawson, Christopher,** The Mongol mission—The journey of William of Rubruck, pp. 150—51.

սաղեմի շրջակայքում է եղել։ Նա եկել էր Մոնղոլիա մի ուրիշ հայի հետ, որը բերել էր չորս թանկագին քարերով զարդարված մի արծաթե խաչ[9]։

ԺԴ դարում Չինաստանում նույնպես եղել են հայեր։ Կաստելոցի Փերեգրին եղբայրը, որը հաջորդեց եղբայր Ջերարդին, որպես երկրորդ եպիսկոպոս Զայտոնի (Խուան-Չոու-Ֆու), միջնադարյան մեծ նավահանգիստ Ամոյի մոտ գտնվող Ֆուկիան նահանգում, 1318 թվականի հունվարի 3 թվակիր նամակում գրել է. «Կայտոն (Զայտոն) քաղաքում ունենք մի լավ եկեղեցի, որը մի տան հետ մեզ է թողել մի հայ տիկին. նա մեզ և հետագայում եկողների համար ստեղծել է այդտեղ ապրելու բոլոր անհրաժեշտ պայմանները»[10]։

Է. Բորեն նույնպես իրեն հատուկ ոճով մեզ ասում է «... դրամանենգ մարդիկ, որոնք նաև գնում են քրիստոնեական ամենահեռավոր երկրները՝ քաղդեացու անվան տակ հանգանակություն կատարելու, որին նրանք արժանի չեն, հանդիսանում են հայեր, որոնք հերձվածողներ են Սավրա ավանից[11], որը գտնվում է Սալմաստի հարավում»։

Կապեր են գոյություն ունեցել նաև հայ կաթոլիկների և արևելյան այն ասորիների (քաղդեացիների) միջև, որոնք 1552 թ. հետևելով Բաբելոնի պատրիարք Սիմոն Սուլակային միաբանեցին Հռոմի հետ։ Սիմոն Սուլակայի պես հայոց պատրիարք Ստեփանոս Գ-ը 1550 թ. գնաց Հռոմ[12] և տեր Աֆոնսոն, որը 1565 թվականին անցել է Դիարբեքիրի նահանգով, ասում է, որ այդ շրջանում ապրող բոլոր հայերը խոստացել էին հնազանդվել Հռոմի պապին[13]։ Հռոմի քաղաքային կոլեջի նախկին ուսանող, հայ քահանա Բարսեղը (Բազիլ) Հռոմում 1670 թ., նախքան Փոքր Ասիա վերադառնալը (որտեղ պաշտոնավարեց Կ. Պոլսում, Էրզրու-

[9] Նույն տեղում, էջ 166։

[10] Նույն տեղում, տես Զայտոնի եպիսկոպոս եղբայր Փերեգրինի նամակը, էջ 232—34։ Եղբայր Փերեգրինը մահացավ Զայտոնում, 1223 թ. հուլիսի 7-ին։

[11] **Boré E.,** Correspondances et mémoires d'un voyageur en Orient. Paris, 1840, vol. I. pp. 357—58.

[12] Սիմոն Սուլակայի մասին տե՛ս Quellen, 4950, 4951. Ստեփանոսի մասին տե՛ս Quellen, 4464—4465—4512. Նույնպես **L. Arpee,** նույն տեղում, էջ 216։ 1349—57 թթ. թուրք-պարսկական պատերազմի ժամանակ Ստեփանոս Ե կաթողիկոսը ճանապարհորդում էր Եվրոպայում, այցելելով Իտալիա, Գերմանիա, Լեհաստան, Մոլդավիա և Ղրիմ։ Սալմաստեցի Ստեփանոս Ե-ը՝ ընտրված 1542 թ., վախճանվեց 1564 թվականին։ Օրմանյան, Հայոց եկեղեցին, Հավելված, 1, էջ 326։

[13] **Antonio, Baiao,** Itinerario da India a Portugal por terra, Coimbra, 1923, էջ 131—309, տե՛ս էջ 226։

19—495

մում, Թիֆլիսում և Թավրիզում), սուրբ միաբանությունից թույլտվություն խնդրեց խոստովանություն ընդունել հայերից և քաղդեացիներից[14]։ ԺԸ դարի սկզբին Դիարբեքիրի քաղդեացի արքեպիսկոպոս տեր Հինդին պահանջեց, որ հայ կաթոլիկները ենթարկվեն իր իրավասությանը, ինչպես որ այդ գոյություն էր ունեցել երկու հարյուր տարի շարունակ, և հետևաբար հաղորդություն ընդունեն քաղդեական եկեղեցում[15]։

Այս հանգամանքները նպաստում են ցույց տալու, որ բացարձակապես անհնարին չէր մի հայի համար եպիսկոպոս օծվել արևելա-սիրիական կաթողիկոսի կողմից, այն դեպքում, երբ նա գիտեր քաղդեերեն լեզուն և համաձայն էր հետևելու նեստորական կամ քաղդեական ծեսին։

Արժե նաև քննարկել հայերի և 1653 թ. Հռոմից անջատված ու միաբնակ վարդապետությանը հարած ասորա-մալաբարյան խմբի միջև գոյություն ունեցած հարաբերությունները. այս վարդապետությունը ենթադրում էր հնազանդվել Անտիոքի հակոբիկյան պատրիարքի իրավասությանը։ Չնայած ընդհանրապես ընդունված է կարծել, որ սկսած Բաբայ կաթողիկոսից (497—502/3) Սելևկիա-Տիզբոնի արևելյան ասորական աթոռը օծել է նեստորական և քաղդեական եպիսկոպոսներին, որոնք բավարարում էին սբ. Թովմասի քրիստոնյաների հոգևոր կարիքները[16], սակայն Մալաբարի հակոբիկյաններն առաջ էին քաշում այն տեսությունը, որ իրենց եկեղեցին նեստորական է դարձել Մար Հակոբի հետ միաժամանակ եպիսկոպոս կարգվածների ձեռքով, որ իրենց աստիճանակարգությունը նախկինում սերել է հակոբիկյան գծից և որ եկեղեցին իր նախկին վիճակը վերականգնեց 1653 թ., ըմբոստանալով Հռոմի դեմ։ Վավերագրերի հրկիզումը, որ տեղի ունեցավ 1599 թ. Դիամպերի եկեղեցական ժողովից հետո, նվազեցրեց միջնադարյան աղբյուրները, որի հետևանքով էլ դժվար է ստուգել այս վարկածը[17]։

---

[14] A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII centuries, London, 1939, vol. I. p. 457, note 2.

[15] Թենեյան Վարդան, Կիլիկիո հայ կաթոլիկ պատրիարքությունը Գրիգոր Պետրոսի ժամանակ (1812—1840), Բեյրութ, 1954, էջ 69—70։

[16] **Tisserant,** Cardinal Eugene, Eastern Christianity in India, փոխադրեց ֆրանսերենից **E. R. Hambye S. J.,** Calcutta, 1957.

[17] Atiya, A. S, A History of Eastern Christianity, London, 1968, p. 166. Հնդկական այս տեսակետի համար տես նաև **E. M. Philip,** The Indian Church of **St. Thomas**, with supplement by **E. P. Mattihew,** Kotteyam, South India, 1950, pp. 124—58.

Եկեք ուրեմն, հետազոտենք հայերի և հակոբիկյանների (արևմտյան ասորիների) միջև գոյություն ունեցած պատմական և կրոնական կապերը։

Հայ կաթողիկոս Ներսես Բագրևանդցին (548—557) 549 թվականին ի պատասխան ուղղափառ ասորիների (հակոբիկյանների) իրենց համար մի եպիսկոպոս նշանակելու հայցին, նրանցից պահանջեց հավատքի գրավոր խոստովանություն, որից հետո օծեց Աբդիշո եպիսկոպոսին[18]։

Միքայել Մեծը՝ հակոբիկյան ասորիների պատրիարքը, ԺԲ դարում, Հռոմկլայում իր հավատքի խոստովանությունը փոխանակեց հայոց կաթողիկոսի հետ[19]։

Հայտնի է, որ դարեր շարունակ Երուսաղեմի հայոց պատրիարքը ոչ միայն եղել է հայ քրիստոնյաների, այլև ասորիների (Ներառյալ Մալաբարի եկեղեցին Հնդկաստանում), ղպտիական և եթովպական եկեղեցիների գերագույն ներկայացուցիչը՝ Երուսաղեմի սրբավայրերը տնօրինելով հույն ուղղափառ և լատինական պատրիարքների հետ միասին։

Ընդունված է նաև, որ Օսմանյան կայսրությունում, 1459 թվականից ի վեր ասորի և ղպտի քրիստոնյաները օսմանցիների կողմից դիտվել են որպես Կ. Պոլսի հայոց պատրիարքության իրավասության ներքո գտնվող համայնքներ[20]։

1956- թվականին, երբ Կիլիկիայի հայոց կաթողիկոսի օծումը կատարեցին մի խումբ եպիսկոպոսներ, նրանց մեջ կար մի ուղղափառ ասորի (Հակոբիկյան) եպիսկոպոս, որպեսզի ըստ ավանդույթի պահանջվող երեք թիվը լրացվեր։

Անթիլիասի կաթողիկոս Գարեգին II Սարգսյանը, նշում է, որ «էթնիկական, մշակութային և պատմական տեսակետից խիստ տարբերություն կա հայի, ղպտու, եթովպացու, հնդիկի և ասորու միջև. Նրանց ծիսակատարությունների ավանդույթները զարգացել են տարբեր ուղղու-

---

[18] **Օրմանյան,** Ազգապատում, Բեյրութ, 1959, հատոր 1, հատված 361, սյունակ 538—39։ Օրմանյանը նաև պարզաբանում է, որ ԺԳ դարի հեղինակ Կիրակոս Գանձակեցին իր «Պատմության» մեջ (ֆրանսերեն թարգմանությունը Մ. Բրոսեի, Պետերբուրգ, 1870, հատ. 1, էջ 31) անդրադառնում է նույն դեպքին, թվականը նշելով 640 թ., Ներսես Բագրևանդցուն շփոթելով Ներսես Շինողի հետ (641—662)։

[19] Chronique de Michel le Grand, Patriarch des Syriens Jacobites, Իշող քահանայի հայկական տարբերակից թարգմանեց Վիկտոր Լանգլուան, Վենետիկ, 1868, էջ 6։

[20] **Fortescue**, A., The Lesser Eastern Churches, London, 1913, p. 418.

թյուններով։ Մինչդեռ հավատքի միասնությունը պահպանվել է ուժեղ ձևով»[21]։

Ես նաև պարտական եմ Գ. Սարգսյանին, որ իմ ուշադրությունը հրավիրեց «Գիրք թղթոցի» մեջ առկա հետևյալ տեղեկության վրա. «Ժ դարում, հայոց կաթողիկոս Խաչիկ Արշարունին (973—992) պատասխանելով Մելիտինեի ուղղափառ հույն (քաղկեդոնական) մետրոպոլիտի նամակին և պաշտպանելով հայերի աստվածաբանական ուղղափառ (հակաքաղկեդոնական) դիրքորոշումը, իր նամակը եզրափակում է, ասելով, որ ոչ միայն հայերը, այլև շատ ուրիշ ազգեր մերժել են Քաղկեդոնի ժողովը։ Նա մանրամասն թվարկում է հետևյալ ազգերին. «Հայք, Աղուանք, Լփինք, Կազփք, Կիղբք, Ասորեստանեայք՝ որք են Յակոբիկ, ամենայն Եգիպտոս, Եթովպիա մեծ, Արաբիա, Արապինար և ամենայն աշխարհն Հնդկաց»[22]։

Այս փաստը հստակ ցույց է տալիս, որ հայերը դեռ Ժ դարից հնդիկներին համարել են հակաքաղկեդոնականներ։ Այդ նշանակում է, որ նրանք ինչ-ինչ կապեր են ունեցել իրար հետ։

2. Թվում է, որ Մալաբարի քրիստոնյաները հիմք չունեին առարկելու ազգությամբ հայ եպիսկոպոսի դեմ, քանի որ վերջինս հետևում էր քաղդեական ծեսին։ Գոյություն ունեին ավանդույթներ, որոնք թեկուզ և կարող էին վիճելի լինել, բայց, անկասկած, հայտնի էին թե Մալաբարի քրիստոնյաներին և թե հայերին, որոնք ներքուստ նման մի նշանակումը անընական կհամարեին։ Մեսրոպ Սեթը նշել է այսպիսի մի ավանդույթ. «Վասկո դա Գամայի Մալաբարի ափը իջնելուց՝ մ. թ. 1498 թվականի մայիսի 20-ի արժանահիշատակ օրվանից ճիշտ յոթ դար առաջ Մար Թովմաս անունով մի ձեռներեց հայ վաճառական մ. թ. 780 թվականին իջավ նույն ափը, երբ Շեռ Ռամ անունով մեկը Կրանգանորի տեղաբնիկ կառավարիչն էր. հայ վաճառականը վերջինիս կողմից արժանանալով մեծ պատիվների, զգալի հարստություն դիզեց գործվածքեղենի և համեմունքների առևտրից՝ հիմնականում նպատակ ունենալով ուսումնասիրել Հնդկաստանի ափերը»[23]։

---

[21] **Sarkissian, Karekin**, The witness of the Oriental Orthodox Church, Beirut, 1968, pp. 48—49.

[22] *Տե՛ս «Գիրք թղթոց», էջ 321—22. հմմտ.* **Օրմանյան**, *Ազգապատում, հատ. 1, 782—785 հատվածները, էջ 1132—1138։*

[23] **Seth, Mesrob**, History of the Armenians in India, Calcutta, 1895, p. 22. *Շարունակության մեջ նա ասում է, որ «Քրիստոնեության վաղ շրջանում Կաախն, ներկայիս Բենարեսը և Հնդկաստանի առևտրական երրհմնի խոշոր կենտրոնը, որ գտնվում է Գանգեսի ափին, կենտրոնն էր հայ վաճառականների, որոնք հանգիստ էին առնում այնտեղ՝ հեռու իրենց տներից, երբ ցամաքային ճանապարհով անցնում էին Պարսկաստանի, Քաբուլի և Բենարեսի վրայով»։*

Հայր Ալվերո Պենտեադոն 1515—1518 թթ. ընթացքում Պորտուգալիայի թագավորին գրած նամակում ասում է. «Թե Կրանգանորից և թե Կոուլաոյից եկած սբ. Թովմասին հետևող քրիստոնյաների այստեղ հաստատվելը տեղի է ունեցել հետևյալ ձևով. դուրս գալով Կոուլաոյից, որի մասին ձերդ պայծառափայլությունը պետք է որոշ չափով տեղյակ լինի, կրանգանորցի մի տարեց հայ վաճառական, որը հայրենիք վերադառնալու ոչ մի հույս չուներ, գնաց այնտեղ. Նա այդ վայրերի կառավարչից մի ամայի հողակտոր գնեց՝ հողից և ջրից ստացվող եկամուտներով, ըստ իր գրած նշանաձողերի, որոնք դեռևս գոյություն ունեն։ Ասում են, որ նա ամուսնացավ և ունեցավ երկու որդի, որոնցից առաջինը դարձավ քահանա և ժառանգն այդ եկամուտների, որոնք իր մահից հետո կտակեց եկեղեցուն, որն այսօր կրում է սբ. Թովմասի անունը։ Վաճառականի ավագ որդին գնեց տեղաբնիկ ողամարդկանց և կանանց, որոնց դարձի բերեց, ամուսնացրեց, պաշտպանեց և օգնեց։ Վաճառականի երկրորդ որդին դարձավ հաշտարար դատավոր»[24]։

Գասպար Կորրեան անդրադառնում է Թոմե Կաներին սոսկ որպես քրիստոնյայի[25], *մինչդեռ Դիոգո դե Կուտոն հիշատակում է Թովմաս Քանաան անունով մի շատ հարուստ հայ քրիստոնյայի*[26]։

---

[24] **Silva, Rego**, Documentacao, *նույն տեղում, հատ. Գ, վավերագիր 112, էջ 547։ Թագավորին ուղղված Հայր Ալվարո Պենտեադոյի նամակը թվական չունի, բայց ենթադրվում է, որ գրված է 1515—1518 թվականներին, քանի որ այնտեղ հիշատակվում է Հնդկաստանի նահանգապետ Լոպո Սոարեսը, որը պաշտոնավարել է այդ ժամանակ։*

[25] **Correa, Gaspar**, Londas da India, Coimbra, 1922, vol. 111, Part I, Lenda do Governador, Nuno da Cunha, Chapter XXVI, p. 423. *Գասպար Կորրեան 1512 թ. գնաց Հնդկաստան և մահացավ Գոայում՝ 1561—1583 թթ. ընկած ժամանակաշրջանում։ Թովմաս քահանայի մասին տես* **Mundadan**, Traditions of the St. Thomas Christians, (Bengalore, 1970), pp. 92—100.

[26] **De Couto, Diogo**, (1542—1616), Decada XII, Lisbon, ed. 1777—1778, Chapter V, pp. 282—283.

De Souza, Francisco, S. J., Do Oriente Conquistado a Jesus Cristo, pelos Padres de Companhia de Jesus da Provincia de Goa, 1710, vol. II, p. 113.

Concalves, Sebastian (1555—1619), Primeira Parte da Histpria dos Religiosos da Companhia de Jesus, 1614. Edited by Jose Vicki, S. J., Coimbra, 1970, Appendix I, p. 363.

De Faria, Manuel, Asia Portuguese, Lisbon, 1666. 1675—1703, vol III pp. 352—53 *կրկնում է նույնը։ Մինչդեռ հայր Ալվարես Սեմեդոն գրում է. «Նա հասել է Հնդկաստան,*

Անդրադառնալով Թովմաս Քանաանին, հայր Ֆրանցիսկո դե Սուզան գրել է. «Այս հայը բազմաթիվ ժառանգներ ուներ, որոնցից մի քանիսը իր օրինական կնոջից՝ քրիստոնյա Նայրայից էին, իսկ մյուսները, հարճից. օրինական ժառանգներն ապրում էին Կրանգանորում, Կատուրտում, Կոտեդում, Դիամպերում և այլուր. ապօրինի զավակները ցրված էին այլ վայրերում։ Բոլորն էլ մեծ չափով լեռնաշխարհում տարածեցին քրիստոնեական հավատը։ Քանի որ բոլոր մյուս քրիստոնյաները, բացի Տրավանկորի և Տոդամալայի, ամուսնական կապեր ունեին այս երկու ընտանիքների հետ, ուստի և առաջացան երկու անջատ խմբեր, որոնք պատվախնդրության հարցերում այնպիսի հակասություններ ունեին, որ իրար հետ ամուսնական կապեր չէին հաստատում»[27]։ Շարունակության մեջ դե Սուզան գրում է, որ բազմաթիվ հայեր, որոնք գնացին Մալաբար, ամուսնացան դաշտավայրում ապրող քրիստոնյաների հետ»[28]։

3. Ս. Թովմասի հանդեպ հայերի ունեցած ակնածանքը հայտնի է։ Հայաստանում ԺԳ դարից իվեր մի ավանդություն գոյություն ունի, ըստ որի Վանա լճի մոտ կառուցվել է Գանձակի ս. Թովմասի վանքը, որպեսզի հավաքվեն նրա մասունքները։ Ըստ այդ ավանդության, մասունքները Դ դարի կեսերին Հնդկաստանից ետ բերվելով Միջագետքի Եդեսիա քաղաքը, անհետացան պարսիկների դեմ մղված պատերազմի ժամանակ. դրանք վերագտնվել են աստծո ողորմածությամբ և պահպանվել վերոհիշյալ վանքում»[29]։

Մյուս կողմից, հայր Լեոո Հենրիկեսին 1567 թ. հունվարի 20-ին հայր Բելշիոր Նունեսի՝ Ցեյլոնից գրած նամակից[30] պարզվում է հետև-

ուր ս. Թովմաս առաքյալը տարել էր հավատքի ջահը, որը մարած լինելով, նորից վառվեց մոտավորապես 800 թվականին, Մոզզուեն կամ Պատանա քաղաքում՝ Թովմաս Քանանեցի անունով մի հայ քրիստոնյայի կողմից, որը վերակենդանացնելով հին կրոնը, վերակառուցեց սուրբ առաքյալի շինած եկեղեցիները և բարձրացրեց խորաններ, մի բան, որ անունների զուգադիպության պատճառով առիթ է տվել կարծելու, որ արդի շինությունները նախորդի՝ ս. Թովմասի գործերն են»։

[27] Նույն տեղում, էջ 113։

[28] Նույն տեղում, էջ 115։

[29] Le Synaxaire Arménien de Ter Israel „Mois de Navasard", ed. and French translation. G. Bayan Patrologia Orientalis, tome V, fasc. 3. pp. 420—26, Փարիզի ազգային գրադարանի հայերեն ձեռագրեր, № 18, 1316 թ.։ Տե՛ս նաև Գանձակի սբ. Թովմասի վանքի նկարագրությունն ու պատմությունը՝ J. M. Thierry, Monastère Arméniens du Vaspurakan in Revue des Etudes Arméniennes, Nouvelle Série, vol. 5, Paris, 1968. pp. 83—86.

[30] Սիլվա, Ռեգո, նույն տեղում, հատ. 10, էջ 194։

յալը. «Չնայած այն ընդունված վարկածին, որ ս. Թովմասի աճյունը Հնդկաստանից ուղարկվել է Էդիրա[31], որը քաղաք է Հայաստանում, տեղաբնիկները հավատացած են, որ երբ Հայաստանից մարդիկ էին եկել խնդրելու առաքյալի աճյունը, նրանց տվել էին նրա աշակերտներից մեկի աճյունը, որը նույնպես կոչվում էր Թովմաս. պատգամավորներին խաբելը բացատրվում է նրանով, որ այդ երկրում հավատացյալներն առաքյալի նկատմամբ ցուցաբերում էին նվիրվածություն և ակնածանք»։

4. Գասպար Կորրեան հաղորդում է, որ պորտուգալական տիրապետության օրոք Հնդկաստանում, 1517 թվականին երկու պորտուգալացիներ Մալակա քաղաքից՝ Դիոգո Ֆերնանդեսը և Բաստիամ Ֆերնանդեսը ճանապարհորդում էին վաճառականների և հայ քրիստոնյաների հետ. հայերից մեկը առաջին անգամ լինելով, նրանց տարավ ուխտագնացության սբ. Թովմաս առաքյալի տունը[32]։

Ջոաո դե Բարրոսը հային անվանում է խոջա էսկանդեր. «Առաջին տեղեկությունը, որ մեր ժողովուրդը ստացավ նրա գերեզմանի մասին, հազար հինգ հարյուր տասնյոթ թվականին էր. Դիոգո Ֆերնանդեսի և Բաստիամ Ֆերնանդեսի միջոցով, որոնք եկան Մալակայից՝ մի քանի այլ պորտուգալացիների, խոջա էսկանդեր անունով մի հայի և նրա ընկերակիցներից մի քանիսի հետ, որոնք նույնպես հայեր էին։ Հիշյալ հայը, որ հաստատված էր Բինագա թագավորության Քորոմանդել նահանգի Պալեակեյտ քաղաքում, Կոմորինի հրվանդանից վերադառնում էր Բենգալիա և ծանոթ էր այն վայրին, որտեղ ասում էին թե գտնվում է ս. Թովմասի աճյունը. հասնելով Պալեյակետի նավահանգիստը, հայը որոշեց ափ իջնել, որովհետև եղանակն անբարենպաստ էր։ Նա մեր մարդկանց ասաց, որ եթե նրանք ցանկանում են այցելել այն վայրը, ուր հանգչում է ս. Թովմասի աճյունը, ինքը կարող է նրանց առաջնորդել, այս առաջարկությունից պորտուգալացիները շատ ուրախացան»[33]։

[31] Հավանաբար Եդեսիա քաղաքն է։ Վիկին Documenta Indica-ում, հատ. 7, էջ 200, հրատարակել է պորտուգալերեն բնագիրը, որտեղ ասված է Եդեսիա։ Նամակն ընդգրկում է 192—206 էջերը։ Սեն-Մարտենը նույն տեղում, հատ. 1, էջ 158, գրում է. «Ըստ հայերի, Եդեսիան մ. թ. 14-ից մինչև 55 թթ. եղել է Հայաստանի մայրաքաղաքը՝ Աբգար թագավորի օրոք, որին հայերը համարում էին իրենց թագավորներից մեկը. ... Եդեսիան այժմ ենթարկվում է Օսմանյան կայսրությանը և կառավարվում փաշայի կողմից. Նրա բնակչության մեծ մասը հայեր են»։

[32] Կորրեա, նույն տեղում, հատ. 2, էջ 72։

[33] De Barros, Joao (1496—1570) in Third Decade, հրատարակված Լիսաբո-

Այն փաստը, որ արդեն ԺԶ դարում Հնդկաստանում հայեր կային, հավաստվում է Կոչին քաղաքից Անդրե Կորսալ Ֆլորենտինի գրած երկու նամակով. առաջին նամակը, որը գրված էր 1515 թ. հունվարի 6-ին, ուղղված էր Ժուլիեն Մեդիչիսին[34]. «Մալաբարի բոլոր մարդիկ բարի են, և բնակչության մեծ մասը մավրիտանացիներ են, քչերը՝ հրեաներ, իսկ մյուսները ս. Թովմասին հետևող քրիստոնյաներ, որոնց մասին վկայում են շատ գեղեցիկ եկեղեցիները, որոնցից մեկը գտնվում է Կոչինից հինգ մղոն և Էլոնգալորից[35] ինը մղոն հեռավորության վրա, իսկ մյուսը՝ Կոլոնում. եկեղեցիներում սպասավորում են հայեր, որոնք հաստատված են Հնդկաստանում»։

Իր երկրորդ նամակում, որն ուղղված էր Իշխան Լորան դը Մեդիչիսին և գրված 1517 թ. սեպտեմբերի 18-ին, Անդրե Կորսալը գրում է. «Ինչ վերաբերում է ինձ, ես որոշեցի շրջագայել և ուշի-ուշով ուսումնասիրել ամբողջ երկիրը. այս տարի Պիեռ Ստրոցցիի հետ հասա մինչև ս. Թովմասի տունը, որը գտնվում է այստեղից երկու հարյուր հիսուն մղոն հեռավորության վրա, իսկ այնտեղից էլ, գնացի Նարսինգա թագավորությունում գտնվող Պալեակեյտ նավահանգիստը, ուր մեծ քանակությամբ սուտակ են բերում Պեգուի թագավորությունից։ Հետագայում իմ մի քանի բարեկամների, քրիստոնյա հայերի հետ որոշեցի շրջագայել մայր ցամաքում և հինգ-վեց ամիս անցկացնել այնտեղ՝ իր հարստություննե-

---

նում, 1563թ., ընդգրկում է 1515—1526 թթ.։ Տե՛ս Decadas, Lisbon, 1777 ed., vol. III, part 2, pp. 223—224.

Նույն պատմությունը մանրամասն հաղորդում է հայր Joao de Lucena, S. J. (1550—1600), Historia da Vida do Padre S. Francisco Xavier, Lisbon, 1600.

Տե՛ս Lisbon 1788 ed., vol. III, Ch. 3. p. 313. Faria Sousa, Asia Portuguesa. Lisbon, 1666—1675. Տես Porto, 1945 ed., vol II, p. 87. Տե՛ս նույնպես MSS վերնագրված Conquista da India por umas e outras armas reaes e evangelicas" Codica n. 1—1646, պատկանում է Բրիտանական թանգարանի էգերտոնյան հավաքածուին։ Դա Ֆերնաո դե Քեյրոզի աշխատությունն է, գրված մոտավորապես 1656 թ., որը վերաբերում է պորտուգալացիների գործունեությանը՝ Հնդկաստանում սկսած 1497 թ. մինչև նահանգապետ Ֆրանցիսկո Բարրետոյի ժամանակները (1555—1558)։ Վերատպված է Սիլվա Ռեգոյի կողմից, հատ. 1, էջ 409։

34 Տե՛ս „Navigation de Vasques de Gamme", հրատարակված Charles Scheffer-ի կողմից, Փարիզ, 1898, էջ 199—220։ Կորսալի երկու նամակների իտալական տեքստը հրատարակված է 1550 թ. Ramusio, Primo volume della navigationi et viaggi (Venetia, 1550), 192 v—203 v. Շեֆֆերի ֆրանսերեն տեքստը տարբերվում է Ռամուզիոյի տեքստից։

35 Այստեղ պիտի կարդալ Կրանգանոր։ Հնդկական բնագրերում կոչվում է Կոդունգալուր։

րով այնքան նշանավոր այդ մեծ թագավորության բոլոր նահանգները տեսնելու համար»[36]։

Սեբաստիան Ֆերնանդեսը, որը Հնդկաստանում ապրել է 25 տարի (1594—1619), ասում է թե շատ հավանական է, որ նախքան պորտուգալացիների գալը, Գոա քաղաքում մավրիտանացիների հետ քրիստոնյա հայեր են ապրել՝ առևտուր անելու նպատակով, ինչպես այդ ժամանակներում այդտեղ հաստատված հեթանոսները, մավրիտանացիները և քրիստոնյա հայերը՝ պորտուգալացիների հետ[37]։

Դեռևս 1535 թ. ս. Թովմասի գերեզմանի շրջակայքում պորտուգալացիների հետ միասին ապրում էին հայեր, ինչպես այդ երևում է ս. Թոմեի բնակիչների նամակից՝ գրված Ջոաո Գ թագավորին, 1535 թ. դեկտեմբերի 27-ին. «Ներկայումս այստեղ ապրում ենք վաթսուն հոգի՝ մեր կանանցով և երեխաներով, այստեղ կան նաև մի քանի ամուսնացած հայեր, որոնք լավ քրիստոնյաներ են. մեզանից շատերը քարից և կրից պատրաստված տներ ունեն՝ փայտյա հատակով»[38]։

Առաքյալի հանդեպ ունեցած նվիրվածությունից դրդված հայերը նույնիսկ Հայաստանից ուխտագնացության էին գնում Միլափոր, ինչպես դա պարզվում է Դոմինիկյան միաբանության անդամ հայր Գասպար դա Կրուզի 1569 թ. գրած տրակտատից։ «Երբ ես այն վայրում էի գտնվում, որտեղ ս. Թովմաս առաքյալը նահատակվեց, և որին պորտուգալացիք անվանում են Սան Թոմե, իսկ տեղացիք Միլափոր, ես իմացա, որ Հայաստանից այստեղ ուխտագնացության է եկել մի հարգարժան հայ՝ դրդված առաքյալի նկատմամբ ունեցած նվիրվածությունից։ Այդ հայը երդումով հավատացրեց (որին մեծ արժանահավատությամբ վերաբերվեցին պորտուգալացիք, որոնք առաքյալի տանը ծառայում էին որպես հսկիչներ), թե հայերն իրենց իսկական և արժանահավատ գրչագրերում նշել են, որ նախքան Միլափորում նահատակվելը, առաքյալը գնացել էր Չինաստան՝ ավետարանը քարոզելու համար և մի քանի օր մնալով, համոզվել էր, որ այնտեղ օգտակար չի կարող լինել, ուստի վերադարձել էր Միլափոր՝ Չի-

---

36 Charles, Scheffer, նույն տեղում, էջ 262։

37 Goncalves, նույն տեղում, հատ. 1, էջ 101—102։

38 Silva, Rego, As Gavetas da Torre do Tombo, vol. II, Doc. 2072, XI, 8—18, pp. 712—14. Նամակը ստորագրողներից մեկը, Դիոգո Ֆերնանդեսը, հավանաբար այն երկու պորտուգալացիներից մեկն է, որոնք 1517 թ. խոջա Էսկանդեր անունով հայի ուղեկիցները դարձան՝ ս. Թովմասի գերեզմանին այցի գնալիս։

նստավանում թողնելով այնտեղ հավաքագրված երեք-չորս աշակերտի։ Այս բոլորը արձանագրվեց տան մատյանում»[39]։

Այս կապակցությամբ Ջոաո դե Լուցենան գրում է. «Որովհետև բացի հայերից, որոնք առաջին անգամ մեր մարդկանց տարան Միլափոր քաղաքը, մենք գիտենք, որ այդ ժամանակ Յորգե անունով մի ազնվական, ազգությամբ հունգարացի, մահացավ և թաղվեց այնտեղ. Յորգեն թողել էր իր երկիրը, ցանկանալով այցելել այդ տունը և սուրբ առաքյալի գերեզմանը։ 1533 թ. նահանգապետ Նունո դա Կունհան կապիտան Միգուել Ֆերեյիրայի միջոցով ուզում է այս դեպքի շուրջ տեղեկություններ ձեռք բերել. մի ֆրանսիացի և մի քանի հայեր երդվում են, որ իրենց նվիրվածությունից դրդված են այցի եկել գերեզմանին»[40]։ Այնուհետև ասվում է, որ «հազար հինգ հարյուր թվականից իվեր Հնդկաստանում ս. Թովմասի անունը ամենուրեք փառաբանվել և պահպանվել է, իսկ նրա քարոզած օրենքները դեռևս հարգվում են. գերեզմանը, որտեղ գտնվում են նրա ոսկորները, լուսավորված է և հայտնի է, որ բարբարոսներն ու անհավատները այցի են գնում նրա գերեզմանին, մավրիտանացիներն ու հեթանոսներն ակնածանք են տածում, հայերը, հունգարացիներն ու ֆրանսացիներն այցի են գնում, իսկ արևմտյան և արևելյան Պորտուգալիայի նորին պայծառափայլություն թագավորները կարգադրեցին հետազոտել գերեզմանը»[41]։

Հետևաբար, հիմք չկա չընդունելու պորտուգալացի հեղինակների կողմից հաստատված փաստը, որ 1517 թվականին առաջին անգամ իրենց դեպի ս. Թովմասի գերեզմանն առաջնորդող քրիստոնյաները հայեր էին, և, որ նրանցից մի քանիսն ապրում էին Մադրասի արվարձան

[39] **Da Cruz, Gaspar,** O. S. D., Treatise in which the thing of China are related at great length, with their particulars, as likewise of the Kingdom of Ormuz, 1569, extracted from South China in the Sixteenth century: edited by C. R. Boxer, London, 1953, pp. 212—213.

[40] **De Lucena, Joao** (1550—1660), Historia da Vida do Padre S. Francisco Xavier, Lisbon, 1660, vol. III, Ch. 4, pp. 317.

[41] Նույն տեղում, գլուխ 6, էջ 341։

[42] **Anne Basil,** Armenian settlements in India, Armenian College, Calcutta, 1969.

էջ 44—45. «Դեռևս ԺԶ դարում Մադրասում կային հայ վաճառականներ, բայց միայն 1666 թ. հայերը գաղութ հիմնեցին այդ քաղաքում, որտեղ նրանք բարգավաճեցին ԺԷ և ԺԸ դարերում։ Հետաքրքիր է նշել, որ երբ Գոլկոնդայի թագավորը, 1662 թ. Սան Թոմեն Միլափորը գրավեց պորտուգալացիներից, Մարկոս Ըռզադ անունով մի հայի նշանակեց կառավարիչ։ (Այս Մարկոսի մասին մանրամասնություններ տե՛ս Ս. Տեր Մ. Գրիգորյանի

Միլափորում, ավելի վաղ, քան ԺԸ դարը, երբ շատ հայ վաճառականներ քրիստոնեական համայնքի մեծ բարերարները դարձան[42]։

Այս հանգամանքներում մի՞թե մենք իրավացի չենք լինի ընդունելու Ջակոմե Աբունայի ինքնության մասին իր տված արժեքավոր տեղեկությունը, որ նա հայ քահանա է։ Անիրավացի կլինի չընդունել այս վկայու-

«Հայք ի հարավային Հնդկաստան», Վենետիկ, 1922, աշխատության մեջ. ծանոթ. խմբ.)։

«Մի հայ վաճառական, ոմն Ոսկան, 1726 թ. կառուցեց Մարմալոնգի կամուրջը՝ Ադյար գետի վրա և նրա պահպանման համար գումար տրամադրեց. արաբերեն և հայերեն արձանագրություն է պահպանվել, որտեղ նշված է, որ կամուրջը կառուցվել է ս. Թովմասի բլուրը գնացող ուխտավորներին օգնելու նպատակով։ Նույն թվականին Ոսկանը բլրի ստորոտից մինչև գագաթը, ուր գտնվում է ս. Թովմասի եկեղեցին, կառուցեց հարյուր վաթսուն աստիճան՝ հարմար տեղերում հանգիստ առնելու ապաստարաններով, որովհետև հազարավոր քրիստոնյա ուխտավորներ այցելում էին այս եկեղեցին, որը կառուցված էր Թովմաս առաքյալի նահատակության հուշակավոր վայրում։ Ոսկանը Մադրասում կառուցեց նաև Հրաշագործ կույսի մատուռը և այն հանձնեց կապուցինյան հայրերի հսկողությանը»։

էջ 47. «Մադրասի հայկական առաջին եկեղեցին կառուցվել է 1712 թ., բայց չի գործել, որովհետև անգլիացիներն առարկեցին ամրոցի շրջանում ստեղծվող նման մի հոյակապ կառույցի դեմ։ Հայկական երկրորդ եկեղեցին, որը կոչվում է ս. կույս Մարիամ, կառուցվել է 1772 թ. հայկական փողոցում, հայկական հին գերեզմանատան տեղում, ուր մինչև նոր եկեղեցու ավարտելը մի մատուռ էր գործում»։

էջ 51—52. «Մադրասի քրիստոնեական ամենահին գերեզմանը հայ խոջա Մարգարինն է, որը մահացավ 1663 թվականին։ Գերեզմանը գտնվում է դեպի Փոքր բլրի վրա կառուցված եկեղեցին տանող աստիճանների ստորոտում... Եկեղեցու ներսում մի քարայր կա, որը ս. Թովմաս առաքյալի նահատակության հուշակավոր վայրն է։ Խոջա Սաֆար Զաքարիա անունով մի հայ, որը մահացել է 1725 թ., թաղված է ս. Կույսի անվան եկեղեցում, որը գտնվում է ս. Թովմասի բլրի գագաթին (Մեծ բլուր)։ Այս եկեղեցու արտաքին պատի վրա կա մի քարե տախտակ, որը կրում է հայերեն և պորտուգալերեն լեզուներով արձանագրություն՝ ի հիշատակ խոջա Սաֆար Զաքարիայի։ Արձանագրության մեջ նշված է, որ եկեղեցու գավիթն ու դուռը կառուցվել են Զաքարիայի կողմից՝ 1707 թվականին։ Հայկական մի այլ գերեզման գտնվում է եկեղեցին շրջափակող տարածության հյուսիս-արևելյան անկյունում։ Դա պատկանում է մարգարտի հայտնի վաճառական, մադրասաբնակ երևանցի աղա Գրիգորին, որը մահացավ 1707 թվականին։ Աղա Շամիրի մայրը թաղված է այս եկեղեցու գավթում, իսկ քրոջ գերեզմանն էլ դրա կողքին է։ Ս. Կույսի անունը կրող եկեղեցու գլխավոր խորանի ետնամասում մի խաչ կա, որի վրա արձանագրված է «Ոսկանի որդի Պետրոսի հիշատակին», իսկ բեմի փայտյա հենարանը կրում է հետևյալ արձանագրությունը. «Աղա Ալավերդի Սարգսի հիշատակին, 1721 թվական»։ Տասնչորս յուղանկարներ կան, որտեղ պատկերված են Քրիստոսն ու առաքյալները, որոնց անունները գրված են հայերեն։ Եկեղեցու ներսում փայտի վրա հայկական ոճով նկարված են կույս Մարիամը և մանուկ Քրիստոսը, իսկ եկեղեցու պատերը զարդարված են Քրիստոսի և առաքյալների հայկական նկարներով։ Վերը նկարագրվածից կարելի է եզրակացնել, որ ԺԸ դարի սկզբներին հայերն այս եկեղեցում ժամերգություն են կատա-

թյունը՝ ելնելով հայր Շուրհամմերի ենթադրությունից, որ այն ժամանակվա պորտուգալացի հեղինակները «Arameo» (քաղդեացի) բառի փոխարեն միշտ գրում էին Armenio (հայ) և ասորի-մալաբարներն էլ թյուրիմացաբար Միջագետքը անվանում էին Հայաստան»[43]։ Մեր պնդումը հիմնավորելու համար կարող ենք մեջբերում կատարել ոչ պորտուգալացի մեկնաբան, ուրբինացի հայր Նիկոլո Լանսիլոտտոյի վկայությունից՝ գրված 1548 թ. դեկտեմբերի 26-ին Կոչինից, որտեղ նա առիթ է ունեցել հանդիպելու Ջակոմե Աբունային. «Այստեղ Կոչինայում մի շատ ծեր հայ եպիսկոպոս կա։ Նա արդեն քառասուն տարի է, որ մեր հավատքն է քարոզում ս. Թովմասի քրիստոնյաներին, որոնք գտնվում են այստեղ, Մալաբարի երկրում»[44]։

Մյուս կողմից էլ Դամիաո դե Գոիսը հաղորդում է, որ Պերո դե Սեկեյրոն, մի վստահելի մարդ, որը Կոչին քաղաքի գանձապահն էր, իրեն հայտնել է, որ 1543 թ. Կոչին ժամանեց «Կրանգանորից մի եպիսկոպոս, Ջակոմբո անունով, ազգությամբ քաղդեացի», որի հետ նա մտերիմ էր և որը հաճախ այցելում էր իրեն[45]։

րել։ Միլափորի Նոսա Սենհորա դա Լուզ կոչված հռոմեական կաթոլիկական եկեղեցում հայկական ութ կտավներ կան, որոնք պատկերում են առաքյալների մահվան տեսարանը։ Կա նաև մանուկ Հիսուսի զգեստավորված արձանը՝ խաչակիր երկրագունդը ձեռքին։ Արձանը պսակված է խաչով, որի հայերեն արձանագրությունից պարզ է դառնում, որ դա խոջա Պետրոս Ուսկանի նվերն է։ Ս. Թովմասի մայրուղու հարավային ծայրում գտնվող ս. Ռիտայի անունը կրող եկեղեցու արևելյան պատի մեջ եղած քարե տախտակի հայերեն արձանագրությունը հայտնում է, որ եկեղեցին կառուցվել է 1729 թվականին՝ հայ ազգի հիշատակին։ Թվականից ենթադրվում է, որ եկեղեցին շինված է ի նշանավորումն ս. Թովմասի հիշատակին կառուցված գերեզմանի բացմանը, որը տեղի է ունեցել 1729 թվականի ապրիլի 29-ին։ Արձանագրության մեջ ասված է, որ հայերը շատ վաղուց պահպանել են սրբի գերեզմանը և պորտուգալացիները 1517 թ. սկսած հետևել են նրանց օրինակին։

[43] **Schurhammer**, Three letters of Mar Jacob, նույն տեղում, էջ 71, ծանոթագրություն 33։ Այս կրկնել է Դեննիսոն Ռոսսը։ Sir Anthony Sherley and his Persian adventure, London, 1933, Index, p. 254. Արևելյան քրիստոնյաներին շփոթելը ընդհանուր երևույթ էր այդ ժամանակ. նույնիսկ մի գիտնական, ինչպիսին ֆլամանդացի Գասպար Բարզեուսն է, 1549 թ. Օրմուզից Պորտուգալիա է ուղարկում Նոր կտակարանի հայերեն մի ձեռագիր, որը նրա կարծիքով գրված էր վրացերեն։ Տե՛ս նույն գրքում «Ժե դարու ձեռագրի մը պատմությունը» հոդվածը (էջ 270—285)։

[44] **Wicki, S. J., Joseph**, Documenta Indica, vol. I, p. 443, and **Silva, Rego**. Documentacao, ibid, vol. IV, doc. 37, p. 198.

[45] **De Gois, Damiao**, Cronica do Felicissimo Rei D. Manuel, Coimbra, edition, 1926, part I, p. 216. Հայր Ալվարո Պենտեադոն Ժուան Գ թագավորի եղբորը՝ կարդինալ Դ. Աֆոնսոյի գրած նամակում անդրադառնում է Կոչին կատարած այցելությանը, առանց անունները տալու։ Վավերագրեր նույն տեղում, էջ 357։

Ինչպես Շուրհամմերը, ես էլ եմ ընդունում Ա. Մոնսերրատեի՝ 1590 թ. հավաստած փաստը, որ ինչպես Հնդկաստանի մահմեդականները բոլոր եվրոպացիներին անվանում էին ֆռանգներ (ֆռանկներ), այնպես էլ բոլոր արևելյան քրիստոնյաները կոչվում էին հայեր, առանց տարբերակելու հույներին, քաղդեացիներին, ասորիներին, նեստորականներին և հայերին[46]։ Պաշտպանել նման մի հավաստում, և ենթադրել, որ առհասարակ հայեր չկային, կնշանակի ընկնել մի այլ ծայրահեղության մեջ. 1580 թ. ինքը՝ Մոնսերրատեն, Ակբարի պալատում օգտվել է Դոմինգո Պիրես պորտուգալական անուն կրող մի հայ թարգմանի ծառայությունից, որը ճիզվիտ հայերի հետ եկել էր Հնդկաստանից և իրականում «հայազգի» էր[47]։ Հանգուցյալ բոլանդիստ հայր Պաուլ Պետերսը ցույց է տվել, որ Գաղիայում «սիրուս»-ը մի ընդհանուր, բայց ոչ այնքան ճշգրիտ բառ էր Արևելքից եկած բոլոր օտարականներին անվանելու համար. երկրում հաստատված ասորիների մեջ կային նաև հույներ, այս հանգամանքը, սակայն, թույլ չի տալիս եզրակացնելու, որ իսկական ասորիներ բնավ չեն եղել[48]։

Արևելյան ասորական կաթողիկոսի կողմից, որի աթոռանիստը Մոսուլի և Դիարբեքիրի միջև գտնվող Ջազիրաթ-իբն Օմար քաղաքն էր, 1490—1503 թվականները հասնող ժամանակաշրջանում նշանակված եպիսկոպոսների մասին մեզ քիչ բան է հայտնի։ Թվում է, որ Մար Հովհաննեսը մահացած պետք է լինի 1503 թ. հետո, իսկ Մար Յահբալլահան ու Մար Դենհան՝ իրենց ժամանումից քիչ հետո, որի պատճառով չեն կարողացել պորտուգալացիների հետ որևէ մտերմական շփում ունենալ[49]։ Մար Թովմասը նրանց հետ լայն համագործակցություն չի ունեցել. որոշ ժամանակ կասկածել են, որ նա հերետիկոս է, և թվում է, որ նա մահացել է 1536 թ. որպես կաթոլիկ[50]։ Հիմք չկա կասկածելու, որ Մար Թովմասը արևելյան ասորական եպիսկոպոս է եղել։

[46] Մեջբերումը կատարված է Շուրհամմերի կողմից իր «Հայ եպիսկոպոսներ Մալաբարում» հոդվածի վերջից։ Տես Mongoliae Legetionis Comentarius, գրված Մոնսերրատեի կողմից 1590 թ. և հրատարակված հայր Հոստենի (Hosten) կողմից „Memoirs of the Asiatic Society of Bengal", vol. III, no 9, Calcutta, 1914, 513—704.

[47] **Silva, Rego**, Documentacao, ibidem, vol. XII, Doc. 61, pp. 654—64, Noticias da Missao do Mogor, Fatepur, 29th April, 1580.

[48] **Peeters, Paul**, Le Tréfonds Oriental de l'Hagiographie Byzantine, Bruxelles, 1950, p. 141.

[49] **Schurhammer**, Three letters, ibidem, pp. 70—71.

[50] **Tisserant**, ibidem, p. 31.

1533 թ. նահանգապետ Նունո դա Կունհան, Ժուան Գ թագավորից ստացած հրահանգների հիման վրա, խնդրեց Միգուել Ֆերեյիրային՝ Գալեակեյտի այն ժամանակվա կապիտանին, գնալ Միլափոր և տեղեկություններ հավաքել ս. Թովմասի, ս. Բարդուղիմեոս և ս. Թադեոս առաքյալների ավանդությունների մասին[51]:

Գասպար Կորրեան այս կապակցությամբ գրել է. «Պեստր երկրից Աբունա անունով մի եպիսկոպոս, որը եղել էր Մալաբարի քրիստոնյաների մոտ, հաստատեց, որ ըստ մալաբարցիների ավանդությունների՝ որ հայերն էլ ունեն, ս. Թովմասը, ս. Բարդուղիմեոսը և ս. Հուդան երեքով դուրս են եկել Երուսաղեմից և գնացել Օրմուզի մոտ գտնվող Բասորա քաղաքը, ապա բաժանվել են. սուրբ Բարդուղիմեոսը գնացել է Հայաստան, որտեղ տարածել է քրիստոնեություն և քարոզել սուրբ ավետարանը. սուրբ Հուդան՝ Արաբիա, Պարսկաստան և իր աշխատանքը շարունակել Սինայի լեռներից այն կողմ[52]»:

Սակայն Ջոաո դե Բարրոսը հայ եպիսկոպոսի վկայությանն անդրադառնում է քսան տարի առաջ (այսինքն՝ 1513 թ.) «Նունո դա Կունհայի մասնավոր ձևով կարգադրված քննության ժամանակ հայ եպիսկոպոսը վկայեց և երդվեց եկեղեցական իր սուրբ աստիճանով, որ քսան տարի առաջ ինքը եկել է այդտեղ և երկրի խորքում այցելել առաքյալի քրիստոնյա մարդկանց, որոնք ապրում էին Քիլոնից ներքև գտնվող երկրամասում: Առաքյալի մասին, ըստ գրավոր արձանագրությունների, նա գիտեր հետևյալը. երբ առաքյալները գնացին ավետարանը քարոզելու աշխարհին, երեքն էլ իրար հետ էին՝ ս. Թովմասը, ս.Բարդուղիմեոսն ու ս. Հուդա Թադեոսը և երբ հասան Բաբելոն, այնտեղ նրանք բաժանվեցին: Ս. Հուդան գնաց հյուսիսում գտնվող մի երկիր, որը կոչվում էր Կաբե-

[51] Schurhammer, Quellen, p. 7, Doc. 70. 1518 թ. կրանգանորցի մի քահանա Դոմ Ջորջե Թեմուդոյի հետ ուխտի գնաց ս. Թովմասի շիրիմը: Նա նոր էր վերադարձել Պորտուգալիայից, որտեղ բնակվում էր (տե՛ս Հայր Ալվարո Պենտեադոյի նամակը թագավորին—1518?): Silva, Rego, Doc., ibid., vol. III, doc. 112, p. 546 and Quellen 69.

Շուրհամմերը իմ ուշադրությունը հրավիրել է նաև 1528 թ. Մուստուչիրայի (Հյուսիսային Տրավանկոր) մի արձանագրության վրա, որտեղ հիշատակված են Մար Ավուփ և Մար Տանայի (Դենհա) անունները. արդյոք 1533 թ. վկայություն տվողը Մար Ավուն չէ՞. Հմմտ. նաև նրա աշխատությունը. Franz Xaver, sein Leben und sein Zeit II, 1 (1963), 570, note 158.

[52] Correa, Gaspar, obodem, vol. II, part I, p. 424.

սադա[53] Դեսպոն, որտեղ նա շատ մարդկանց դարձի բերեց և եկեղեցիներ կառուցեց. ամեն ինչ գտնվում էր մավրիտանացիների ձեռքին: Ս. Բարդուղիմեոսը գնաց Պարսկաստան, որտեղ նա նույն գործերը կատարեց և թաղվեց Տարոն կոչված վայրում, հայ վանականների վանքում, որը գտնվում է Թավրիզ քաղաքից այն կողմ»[54]:

Հետաքրքիր է նշել, որ չնայած Տարոնը հայոց պատմության մեջ շատ հայտնի նահանգ է, բայց ս. Բարդուղիմեոսի գերեզմանի տեղը ճիշտ չի նշված: Ըստ հայկական ավանդության, նրա շիրիմը պահպանվում և փառաբանվում է Աղբակում (Բաշկալե)՝ Հայաստանի հարավ-արևելքում, որը ներկայումս գտնվում է Թուրքիայի տերիտորիայում[55]: Սակայն Տարոնում հայկական երկու հայտնի վանքեր կան. մեկը Մուշի մոտ գտնվող ս. Հովհաննես Մկրտչի վանքն է (ս. Կարապետ)[56], որտեղ նրա մասունքներն ըստ ավանդության, ամփոփված են ս. Գրիգոր Լուսավորչի կողմից[57], իսկ մյուսը՝ ս. Առաքելոց մատուռը, նույնպես Մուշի մոտակայքում, որը կառուցել է Գրիգոր Լուսավորիչը, այնտեղ ամփոփելու համար առաքյալների մասունքները,. որ նա բերել էր իր հետ[58]:

Հենց այս առիթով Կուտոն նույնպես նշում է վկայությունը Բաբելոնում[59] ծնված հայ եպիսկոպոսի, որին Միլափոր քաղաքում խնդրեցին մանրամասնություններ հաղորդել սրբի մասին, նկարագրել նրա կյանքը,

[53] Կաբեսադա կամ Կալակադա (հմմտ. 60-րդ ծանոթագրության հետ) վայրը հավանաբար Բաղդադից հյուսիս-արևելք գտնվող Խալիս գյուղը կամ շրջանն է տե՛ս Schurhammer, Franz Xaver, II, 1, S. 571.

[54] De Barros, Joao, ibidem, vol. III, part 2, pp. 232—233.

[55] Օրմանյան Մաղաքիա, Հայոց եկեղեցին, էջ 3—4: Հայկական եկեղեցին, որպես իր սեփական հիմնադիրների, ճանաչում է ս. Թադեոսին և ս. Բարդուղիմեոսին, որոնց անվանում է Հայաստանի առաջին լուսավորիչներ:

[56] Ըստ ավանդության, Դ դարում ապրած ասորի եպիսկոպոս Զենոբ Գլակի կողմից շարադրված «Պատմութիւն Տարօնոյ» երկի մեջ ասված է, որ Մուշի մոտ գտնվող ս. Կարապետի վանքի տեղը Իննակնյան է կոչվել («Իննակեանն կոչեն տեղայն հնդիկք և պարսիկք»), և որ տեղի բնակիչները մեծ երկյուղածությամբ պաշտել են Հնդկաստանից Հայաստան փախած ու այստեղ աստվածացված Գիսանե և Դեմետրե իշխանների արձանները (տե՛ս Հովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 36, հմմտ. Zenob de Glag, éveque Syrien, Histoire de Daron, V. Langlois, ibid, p. 337.

[57] Ագաթանգեղոս, Պատմություն հայոց: Ֆրանսերեն թարգմանեց Վ. Լանգլուան, Collection des Historiens anciens et modernes de l'Arménie, Paris, 1867, vol. I, p. 174, տե՛ս նաև Zenob de Glag, Վ. Լանգլուա, նույն տեղում, էջ 344:

[58] Zenob de Glag, նույն տեղում, էջ 341:

[59] Այս ակնարկը, որ նա Բաբելոնից էր, չի կարելի որպես փաստ հիմք ընդունել ապացուցելու համար, որ քաղդեական ազգից էր, ինչպես որ «Հայաստանից» արտահայտությունը անպայման չի նշանակում հայ ազգություն:

մահը և կատարած հրաշքները՝ ինչպես, որ կարգադրել էր Դ. Ջոաո Թագավորը։ Այս կապակցությամբ եպիսկոպոսն ասաց հետևյալը. «Տասնըհինգ տարի ինքն ապրելիս է եղել Միլափոր քաղաքում (այսինքն՝ սկսած 1518 թ.) և Բիսնագայի շատ քրիստոնյաներից ու տարեց հեթանոսներից, ինչպես նաև Բաբելոնում, որտեղից նա եկել է, լսել է, որ Քրիստոսը ս. Թովմաս առաքյալին Հուդա Թադեոսի հետ միասին ուղարկել է Հնդկաստանի այս կողմերը. նրանք հասել են Բաբելոն, այնտեղից անցել Բասորա և երբ հասել են Կալականդա կոչված վայրը, ս. Հուդան մնացել է այնտեղ, իսկ ս. Թովմասը ճանապարհը շարունակելով դեպի Արաբիա, գնացել է Սակոտորա կղզին, որտեղ շատերին քրիստոնյա է դարձրել և աղոթքի տուն կառուցել. այնտեղից նա գնացել է Նարսինգա թագավորությունը և Միլափոր քաղաքում շատերին քարոզելով քրիստոնյա դարձրել։ Մի քանի տարի այնտեղ անցկացնելուց հետո նա մեկնել է Չինաստան և բնակություն հաստատել Կամբալիա քաղաքում, որտեղ մի թագավոր էր ապրում, այնտեղ ևս շատերին քրիստոնյա է դարձրել ու տաճարներ կառուցել, ապա վերադառնալով Միլափոր՝ նահատակվել այնտեղ»[60]։

Նկատի ունենալով, որ շատ հայեր էին ուխտի գնում Միլափոր, ուր գտնվում էր ս. Թովմասի շիրիմը, կարող ենք վստահությամբ ասել, որ 1513—1518 թթ. Միլափորի շրջակայքում պետք է որ մի հայ եպիսկոպոս եղած լինի, նույն հայ եպիսկոպոսը, որը 1533 թ. ըստ Բարրոսի ու Կուտոյի, վկայություն տվեց Միգուել Ֆերեյիրային[61], որն ամրապնդեց

---

[60] De Couto, Diogo, Década, IV, Part 2, pp. 390—391.

[61] Միգուել Ֆերեյիրան, Պոլեակեյտի կապիտանը 1533 թ., նույն անձնավորությունն է, որը 1513—1515 թթ. գնաց Հնդկաստան՝ Պարսկաստանի շահ Իսմայիլ Ա-ի մոտ, որպես Պորտուգալիայի դեսպան։

Կորրեա Գասպարը, նույն տեղում, հատ. 2, գլխ. XLVII նկարագրել է Միգուել Ֆերեյիրայի այցելությունը Հայաստանի թագավորություն՝ իր դեսպանությունն ավարտելուց հետո։ Տե՛ս անգլերեն թարգմանությունը՝ **R. Bishop Smith,** The first of the Portuguese Embassies, Navigations and Peregrinations in Persia (1507—1524), Maryland, 1970 pp. 28—9 «Այսուհետև մի քանի օր հետո, թագավորը Միգուել Ֆերեյիրային իր բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի հետ ուղարկում է տեսնելու իր թագավորությունը, ուր նա անցկացնում է ամբողջ ամառը և այնտեղ նրան շատ բաներ են ցույց տալիս, այնքան շատ, որ հնարավոր չէ թվարկել։ Մ. Ֆերեյիրան գնում է Հայաստանի թագավորությունը, որը մի առանձին երկիր էր, և որտեղ նա տեսնում է շատ գեղեցիկ տղամարդկանց և կանանց. այնտեղ նա տեսնում է մեծ վարպետությամբ կառուցված քարաշեն մի մեծ եկեղեցի, որի ներսում կային ոսկեզօծ շատ նկարներ. եկեղեցու մեջտեղում, արծաթյա բազրիքներով պարփակված բազմաթիվ աստիճանների վրա բոլոր

պորտուգալացիների այն համոզումը, թե ս. Թովմասի քրիստոնյաներին ղեկավարող եպիսկոպոսները հայեր էին։

Ջակոմե Աբունայի մահից հետո, որը տեղի ունեցավ 1550 թ., պորտուգալացիները շարունակում էին հաջորդող եպիսկոպոսներին անխտիր համարել քաղդեացի, կամ հայ, բայց կասկած չկա, որ փաստորեն նրանք բոլորն էլ քաղդեացի էին։

Մար Հովսեփը, որը 1557 թ. եկավ Հնդկաստան, հանգուցյալ կաթողիկոս Սուլակայի եղբայրն էր, ուրեմն նա քաղդեացի էր[62]։ Մար Էլիասը, որն ուղեկցում էր Մար Հովսեփին, որպեսզի ներկա լինի նրա հաստատմանը, վերադարձավ Միջագետք և 1580 թ. Ամիդի իր արքեպիսկոպոսարանից նամակ գրեց կարդինալ Կարաֆֆային՝ իրեն անվանելով «Ասորեստանի քաղդեացի»[63]։ Մյուս կողմից, Պիոս Դ պապը 1565 թ. փետրվարին Մար Աբրահամի համար հանձնարարական նամակ է գրում Կոչինի եպիսկոպոսին, որտեղ նրան ներկայացնում է այսպես՝ «անունը Աբրահամ, ազգությամբ քաղդեացի»[64]։

Պորտուգալացի հեղինակների մոտ որոշ շփոթմունք կարող է առաջացնել Օրմուզի վրայով Մար Աբրահամի Հնդկաստան գնալը՝ ծպտված որպես աղքատ հայ[65], որովհետև նա շատ դժվարությունների կհանդիպեր, եթե Օրմուզի և Գոայի վրայով անցներ որպես քաղդեացի եպիսկոպոս[66]։ Հետագայում, երբ նա գնաց Հռոմ, պարզվեց, որ օրինական ձևով

կողմերից բաց մի արձան կար, որը երեսապատված էր ոսկյա թերթով և բավական շատ թանկարժեք քարեր էր կրում. բացվածքներում տեղադրված էին բյուրեղներ, որոնց միջոցով կարելի էր տեսնել ներսում գտնվող կմախքը։ Երբ Միգուել Ֆերեյիրան հետաքրքրվեց կմախքով, նրան ասացին, որ դա մարմինն է մի սուրբ մարդու, որը կառուցել է այդ տունը և նման շատ տներ ամբողջ Հայաստանում, և որ նա հրաշագործ է եղել, որ պատմվում է նրա մասին եղած առասպելում։ Ենթադրվում է, որ այդ անձնավորությունը ս. Բարդուղիմեոսն է, որի մասին հիշատակվում է նաև ս. Թովմասի առասպելում...»։

[62] **Tisserant**, նույն տեղում, էջ 35։ Մար Հովսեփը մահացել է Հռոմում, 1569 թ., նույն տեղում, էջ 200։

[63] **Silva, Rego**, նույն տեղում, հատ. 12, վավ. 68, էջ 716։

[64] Նույն տեղում, վավ. 95, էջ 847։

[65] **Silva, Rego**, Վավերագրեր, հատ. 6, էջ 247—250։ Ֆերնանդո դա Գամի նամակը թագավորին, Կրանգանոր, 10 հունվարի 1557 թ., էջ 248։ Մենք ենթադրում ենք, որ նա Մար Աբրահամն է եղել։ Սակայն Կուտոն Դեկադան 12-րդ վերջին մաս, գլխ. 4-րդ, էջ 992-ում ասում է, որ «Մար Աբրահամը մտավ Մալաբար նավաստու զգեստով»։

[66] **Goncalves**, նույն տեղում, հատ. 3, էջ 333։ Վավերագրեր, հատ. 7, վավ. 53, հայր Բելքիորի նամակը Հռոմի հիսուսյան ընկերության ղեկավարին, Հնդկաստան, 15—1—1559, էջ 241։

չի օծվել, որի համար էլ զրկվեց սահմանված կրոնական աստիճաններից։ Այդ ժամանակ Պիոս Դ պապը նրան կրոնական բարձր աստիճանից զրկեց և ձեռնադրեց քահանա[67]։

Ի հակադրություն Մար Աբրահամի, երևան եկավ Մար Սիմոնը, մի նեստորական եպիսկոպոս, որին նեստորական պատրիարք Էլիաս Է (1576—91) 1572 թվականին ուղարկել էր Մալաբար։ Էլիասը ևս իր կապերը խզել էր Հռոմի հետ[68]։ Սիմոնին կանչեցին Լիսաբոն, ինկվիզիցիայի առջև պատասխանելու իր դեմ հարուցված մեղադրանքներին, և պարզվեց, որ նա ոչ եպիսկոպոս է, ոչ էլ նույնիսկ քահանա. նա մահացավ Լիսաբոնում 1599 թվականին[69]։

Հայր Ֆերնաո Գերրեյրոն, Լահորում[70] 1601 թ. տեղի ունեցած իրադարձությունների մասին գրած իր պատմության մեջ հաղորդում է, որ «որոշ հայեր հնազանդություն հայտնեցին հռոմեական եկեղեցուն, մյուսները լքեցին իրենց մահմեդական և հեթանոս հարճերին, այլև ամուսնացան եկեղեցում։ Բոլոր հայերը, որոնք ապրում են այս վայրերում, այժմ ավելի զգույշ են, քան առաջ, որովհետև նրանք հասկանում են, որ փոխարքան հովանավորում է մեզ՝ մեր ցանկացած բոլոր հարցերում և նա կարող է դատավորի միջոցով քաղաքից վռնդել բոլոր այն մարդկանց, որոնց մենք կմատնանշենք։ Այս իրադարձություններին նպաստեց այն հանգամանքը, որ հայերի արքեպիսկոպոսը, որին նրանք սպասում էին, մահացավ ճանապարհին։ Քանի որ Օրմուզում թույլ չտվեցին, որ նա ծովային ճանապարհով գնա Հնդկաստան, դրա համար էլ նա որոշեց Պարսկաստանի վրայով մեկնել Լահոր, սակայն ճանապարհին մահացավ՝ զրկված աստվածային և մարդկային հովանավորությունից. նրա գրքերն ու ամբողջ ունեցվածքը կողոպտեցին։ Այստեղի հայերը հավատացած էին, որ նա գալիս է դառնալու Մալաբարի ս. Թովմասի քրիստոնյաների արքեպիսկոպոսը։ Գրքերն ընկան իմ ձեռքը, չնայած այն բանին, որ հայերը ցանկանում էին դրանք նվիրել թագավորին»[70ա]։

---

67 **Couto**, նույն տեղում, Դեկադա 12-րդ, էջ 293։

68 Tisserant, նույն տեղում, էջ 43։

69 Նույն տեղում, էջ 44։

70 Լահորը նախկինում պատկանում էր Հնդկաստանին, իսկ 1947 թ. իվեր պատկանում է Պակիստանին։ Տասնվեցերորդ դարի վերջերից մինչև տասնութերորդ դարի վերջը այնտեղ հայկական մեծ գաղութ կար։ Կենտրոնական թանգարանում պահպանված են հայկական չորս շիրմաքար, որոնցից ամենահինը կրում է 1601 թվականը։ Տե՛ս **Anne Basil**, նույն տեղում, էջ 61—64։

70ա **Guerreiro**, Fernao, Relacao Anual das Coisas... Հրատարակվել է 1603 և

Հայր Պիեռ դյու Ժարրիկը հիմնականում հենվելով Գերրեյրոյի հեղինակության վրա, կրկնում է նույն պատմությունը, ավելացնելով, որ գրքերը պատահաբար ընկել են հայր Մանուել Պինհեյրոյի ձեռքը[71]։

Այն գրքերի մեջ, որոնք թվում է որ պատկանելիս են եղել այս հայ եպիսկոպոսին, կա մի ավետարան, որի վրա հայր Ջերոնիմո Քզավիեն և հայր Մանուել Պինհեյրոն նշումներ են կատարել։ 1605 թ. Քզավիեն իսպաներեն լեզվով գրում է, որ գիրքը գրված է պարսկերեն լեզվով հիջրայի 760 թ. (մ. թ. 1359 թ.), բերվել է Երուսաղեմի եպիսկոպոսի եղբայր՝ հայր Նիկոլայի միջոցով և դժվարությամբ հասել է ճիզվիտ հայրերին՝ հայերի դիմադրության պատճառով։ Պինհեյրոն 1609 թ. օգոստոսի 7-ին գրած հիշատակարանում նշում է, որ գիրքը Երուսաղեմից բերել է մի հայ քահանա, Ակբարին հանձնելու համար և որ քահանան մահացել է ճանապարհին և գիրքն ընկել է իր ձեռքը[72]։ Իսպանիայի թագա-

---

1611 թթ. միջև։ Տե՛ս հրատարակությունը, Կոիմբրա, 1930, հատ. 1 (1600—1603), էջ 19։

71 **Jarric S. S., Rierre du**, Histoire des choses plus memorables... Bordeaux 1608, 1610 և 1614 թվականներին լույս տեսավ ևս երկու հատոր, որով այս նույն միսիոնությունների հաշվետվությունը հասցվեց մինչև 1609—1610 թթ.։ Անգլերեն տեքստը տես Akbar and the Jesuits an account of the Jesuit Missions to the Court of Akbar by Father Pierre du Jarric, translated with introduction and notes by C. H. Payne, London, 1926, էջ 135։ «Հայր Պինհեյրոն մի շարք հայերի համոզեց ընդունել կաթոլիկ դավանանք։ Սրանցից ոմանք լքեցին իրենց մահմեդական և հեթանոս հարճերին, մինչդեռ մյուսները եկեղեցում ամուսնացան այն կանանց հետ, որոնց նկատմամբ նախկինում վատ էին վերաբերվել։ Այս երկրի հայերը, ընդհանրապես վերցրած այժմ ավելի քիչ են արհամարհում և վիրավորում եկեղեցուն, քան նախկինում, որովհետև բոլորին հայտնի է, որ հայերը վայելում են փոխարքայի հովանավորությունն ու պաշտպանությունը և որ արդարադատության պաշտոնյաները իրավունք ունեն քաղաքից արտաքսել որևէ մեկին, որի անունը հայերը կտան։ Հայերի վարքագծի վրա ազդեց նաև այն հանգամանքը, որ Հնդկաստանի ճանապարհին մահացավ իրենց արքեպիսկոպոսը, որի գալստյան հետ նրանք հույսեր էին կապում։ Հասնելով Օրմուզ, նրան չթույլատրեցին իր ճանապարհորդությունը շարունակել ծովով, դրա համար էլ նա Պարսկաստանի վրայով ճանապարհվեց դեպի Լահոր։ Նա վախճանվեց ճանապարհին՝ առանց աստծո կամ մարդու սփոփանքի։ Նրա գրքերը և ինչ որ ուներ՝ գողացան։ Գրքերը պատահաբար ընկան Հայր Պինհեյրոյի ձեռքը, որից հայերը շատ վրդովվեցին, քանի որ նրանք ցանկանում էին դրանք նվիրել թագավորին։ Հայերը կարծում էին, որ այս եպիսկոպոսը գալիս է Հնդկաստան՝ Մալաբարի ս. Թովմասի քրիստոնյաների արքեպիսկոպոսը դառնալու նպատակով, բայց այդ պաշտոնը այլ կերպ տնօրինվեց, ինչպես որ կպարզվի քիչ հետո»։

72 **Maclagan**, Sir Edward, The Jesuits and the Great Mogul. Տե՛ս նաև պորտուգալերեն թարգմանությունը, որը ես օգտագործել եմ։ Antonio Doria, Os Je-

վորը 1610 թ. նույն աղբյուրից պարսկերեն լեզվով գրված մի ավետարան է ստացել։ Այս կապակցությամբ Ջերոնիմո Քզավիեն 1608 թ. դեկտեմբերի 21-ին Լահորից հավաստում է, որ ավետարանը Երուսաղեմից բերել է մի հայ եպիսկոպոս, որը Պարսկաստանի թագավորի վրացի դեսպան Մինուչիհր բեկի հետ ճամփորդել է դեպի Հնդկաստան և մահացել ճանապարհորդության ընթացքում[73]։

Վերը նշվածից ուշադրության արժանի է այն փաստը, որ 1601 թ. Լահորի հայերը սպասում էին, որ իրենց պիտի այցելի մի հայ եպիսկոպոս։ Հակասական կարծիքներ[74] կան այն մասին, թե արդյո՞ք նա գնում էր Մալաբար, որ ս. Թովմասի քրիստոնյաների համար ժամասացություն կատարի. բայց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Գեբբեյրոյի կողմից նշված այն փաստին, թե Լահորի հայերը կարծում էին, որ եպիսկոպոսի դժբախտ ճամփորդության վերջնական նպատակակետը իրոք Մալաբարն է եղել։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Հնդկաստանում ապրող հայերի համար նման մի հնարավորություն համարվել է բնականոն։

Հայր Սեբաստիան Գոնսալվեսը հաղորդում է, որ 1611 թ. ս. Թովմասի քրիստոնյաների մեջ կար մի ուրիշ հայ, Աբրահամ անունով, «որն այստեղի քրիստոնյաներին նեստորական մոլորությունների մեջ էր գցել»։ Նրան ձերբակալեցին և ուղարկեցին Գոայի ինկվիզիցիային, որտեղ 1612 թ. հունիսի 3-ին նրան ողջ-ողջ այրեցին որպես հերետիկոսի[75]։

suitas e o Grao Mogol, Porto, 1946, տե՛ս էջ 256—257 և 264-րդ էջի 85-րդ ծանոթագրությունը։ Ավետարանը գտնվում է Լոնդոնի արևելագիտության դպրոցում։

[73] Նույն տեղում, էջ 257 և 264-րդ էջի 86-րդ ծանոթագրությունը։ Այս ավետարանը գտնվում է Էսկուրիալում։ Ըստ Ակրարնամայի, թրգմ. Բևերիջ, III, էջ 1112, Մինուչիհրը 1598 թ. ժամանեց Հնդկաստան։

[74] Ս. Հ. Փեյնը, որը Ժարիկի աշխատությունը («Ճիզվիտ միաբանությունների հաշվետվությունը Ակբարի պալատին») թարգմանել է անգլերենի, նույն տեղում, 264-րդ էջի 5-րդ ծանոթագրությունում նշում է. «Ինչ վերաբերում է եպիսկոպոսին, որը կորցրեց իր ունեցվածքը և կյանքը, թվում է, որ եղել է հայ քրիստոնյա, սակայն չի կարող պատահել, որ նա նշանակված է եղել ղեկավարելու Մալաբարի ասորի քրիստոնյաներին։ Ըստ երևույթին, դյու Ժարիկը նրան շփոթել է մի այլ եպիսկոպոսի հետ, որին այդ ժամանակ պահել էին Օրմուզում և որը փաստորեն ուղևորվում էր Մալաբար, ուր ուղարկվել էր Բաբելոնի պատրիարքի կողմից»։ Մյուս կողմից Մակլագանը, նույն տեղում, էջ 256, կարծում է, որ Մուսուլի նեստորական պատրիարքի կողմից նշանակված եպիսկոպոսը իրոք ուղևորվում էր ղեկավարելու ս. Թովմասի քրիստոնյաներին, և որ ըստ այդ ժամանակվա սովորության ճիզվիտները նրան կարող էին անվանել հայ։

Սեբաստիան Գոնսալվեսը հաղորդում է նաև, որ նույն ժամանակ, 1612 թ. երկու քաղդեացիներ եկան Օրմուզից. մեկը նեստորական էր (արևելյան ասորի), իսկ մյուսը՝ հակոբիկյան (արևմտյան ասորի), որն ասաց, որ իրենց ճամփորդության նպատակն է այցելել ս. Թովմասի շիրիմը։ Վախենալով, որ նրանք ս. Թովմասի քրիստոնյաների խնդրանքով ուղարկված են Բաբելոնի պատրիարքի կողմից, փոխարքա Ռուի Լուրենսո դե Տավորան, հիմնվելով նահանգապետ Ֆրանցիսկո Վիեյրայի ազդանշանների վրա, նրանց ետ ուղարկեց Օրմուզ՝ 1612 թ. ապրիլին, ի մեծ տհաճություն նեստորական ուխտավորի, որը երդվեց, որ ցամաքային ճանապարհով կվերադառնա։ Նա կարողանում էր խոսել պորտուգալերեն, որովհետև ճամփորդել էր Պորտուգալիայում. նա գնացել էր նաև Սանտ Յագո դե Կոմպոստելա և Հռոմ[76]։

Այս կոնտեքստում Սեբաստիան Գոնսալվեսը հստակորեն տարբերակում է հային, նեստորականին և հակոբիկին։ Հետևաբար հիմքեր կան հավատալու, որ այս Աբրահամը, որն իր քարոզներով մոլորեցրել էր ս. Թովմասի քրիստոնյաներին, մի այլ հայ քահանա էր։

Սեբաստիան Գոնսալվեսը պատմում է նաև, որ 1610 թ. Սինայի լեռան ս. Բազիլ վանքից չորս քահանա Մեքքայի վրայով հասան Դիո, բացահայտորեն խոստովանելով, որ իրենց նպատակն է ողորմություն հավաքել Հնդկաստանի ամրոցներում և քաղաքներում։ Սակայն նահանգապետ Վիեյրան վախեցավ, որ իրականում նրանք եկել են Անտիոքից կամ Սիրիայից՝ Մալաբարի քրիստոնյաներին միանալու նպատակով։ Նրա համար էլ նրանց ուղարկեցին Գոա, որտեղի արքեպիսկոպոսը նրանց թույլատրեց ողորմություն հավաքել քաղաքում, ինչպես նաև հյուսիսի ամրոցներում, բայց նրանց արգելեցին հունական ծեսով պատարագ մատուցել կամ անցնել Մալաբարով, որպեսզի ս. Թովմասի քրիստոնյաների կարգավիճակը չփոխեն[77]։

Այս երկյուղները, որոնք թվում է, հիմնված են անցյալի փորձի վրա, ապացուցում են, որ ս. Թովմասի քրիստոնյաները իրենց համար կրոնական հովիվներ ընտրելիս չէին սահմանափակվում միայն նեստորա-

[75] Goncalves S., նույն տեղում, v. III, էջ 333։ Documentos remetidos da India, Coimbra, vol. II, p. 79, doc. 195. 1611 թ. մարտի 10. թագավորը Հնդկաստանի փոխարքա Ռուի Լուրենսո դե Տավորային գրած նամակում հիշատակում է 1610թ. կրանգանորի եպիսկոպոսներից ստացած նամակը։

[76] Goncalves S., նույն տեղում, էջ 333—4։

[77] Goncalves S., նույն տեղում, էջ 317—320։

կաններով կամ արևելյան ասորիներով։ Հակոբիկյանը, հայը, եթովպացին կամ հույնը անպայմանորեն չէր մերժվի, եթե նա ունենար պահանջվող հավատարմագիրը՝ իմանար քաղդեական լեզուն և ասեր, որ ինքը եպիսկոպոս է. եղել են դեպքեր, երբ նրանք ոչ եպիսկոպոս են եղել, և ոչ էլ քաղդեացի։ Նույնիսկ այս պայմաններում ս. Թովմասի քրիստոնյաները, թվում է, չափազանց շատ կարևորություն չեն տվել լեզվին տիրապետելուն, ինչպես որ երևում է Մար Հովսեփի օրինակից, որը չնայած քաղդեացի էր, բայց «իրականում քաղդեական լեզուն քիչ գիտեր»[78]։

Վերոհիշյալ փաստերը գալիս են ապացուցելու իմ համոզումը, որ Ջակոմե Աբունան՝ Հնդկաստանի եպիսկոպոսը, հայ քահանա էր, ինչպես որ ինքն է ներկայացնում իրեն՝ Պորտուգալիայի Ժուան Գ թագավորին պորտուգալերեն լեզվով իր անունից գրած նամակում։

---

[78] **Schurhammer,** Three letters, ibid., p. 84 quoting from Relacao da Cristandade da Serra—1604. Bispo Dom Francisco Roz—Fol. 91. British Museum, Addison 9853.

ՋՈՒՂԱՅԵՑԻ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆ ՑԻԼԻՓ ՏԸ ԶԱՂԼԻ ԵՎ ՊԱՐՍԿԱՀԱՅ ԱՌԵՎՏՈՒՐԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 1696 Թ.

1969-ի մայիսին Հայաստան կատարած ճամփորդությանս ընթացքին այցելեցի Մատենադարանի տնօրեն Լ. Խաչիկյանի և փոխ-տնօրեն Բ. Չուգասզյանի։ Մինչ կխոսեինք հայոց վերաբերյալ այն բազմաթիվ վավերագրերուն մասին, որոնց կհանդիպինք անակնկալ և աննախատեսելի վայրերու մեջ, պ. Խաչիկյան հայտնեց, որ պ. Վ. Ոսկանյանի ջանքերով Րիկայի մատենադարանեն նոր ստացած է ԺԷ դարու վերջավորության պատկանող և գոթական գրչությամբ երեք վավերագրերու լուսանկար պատճենները, որոնք ստորագրված են հայերեն Ցիլիփ տը Զաղլի (Ցիլիփ դե Զաղլի) անունով մեկու մը կողմե։

Այնուհետև խոսեցանք Ցիլիփ կոմս տը Զաղլիի արկածալից կյանքին մասին, որ իր ժամանակին Պարսկաստան այցելող եվրոպացի ճամփորդներու, դեսպաններու, միսիոնարներու և վաճառականներու տեղեկատվություններուն առարկա եղած է և այդ խոսակցության ընթացքին պ. Խաչիկյան առաջարկեց և այս առթիվ իրեն կհայտնեմ շնորհակալություն, որ ինծի տրամադրե այդ երեք բնագիրները լուսաբանելու համար անոնց բովանդակությունը, ինչ որ կատարվեցավ, ոչ առանց դժվարության։ Եվ շնորհակալություններս կերթան նաև օրիորդ Պոհլի, որ ուսումնասիրական պաշտոն ունի Փարիզի գերմանական ինստիտուտին մեջ և որ հանձն առավ ծանր աշխատանքը կարդալու և հետո ֆրանսերենի թարգմանելու հիշյալ երեք բնագիրները զորս կկցեմ ներկա գրության վերջավորության և որոնք վերնագրված են.

Ա. «Շատ խոնարհ հիշատակագիր պարսկական առևտուրին և վաճառականության մասին հանձնված Ձեր գերապայծառ բարձրապատվության Քուրլանտի (Մերձբալթիկայի—խմբ.) դուքսին, պարսիկ Ցիլիփ տը Զակելիի (այսպես) կողմե, Պարսկաստանի մայրաքաղաք Սպահանեն և թվագրված Միթոյի մեջ, 8 սեպտեմբեր 1696-ին»։

Բ. այն տեղեկագիրն է, զոր Նորին գերապայծառ բարձրապատվության կողմե նշանակված հինգ գործավարներ խմբագրած են քննելով այդ հիշատակագիրը և հայտնելով իրենց կարծիքը։

Գ. «Դաշինք պարսկական առևտուրին հաստատման մասին, շնորհված Լիվոնիո, Քուրլանտի (Մերձբալթիկայի—խմբ.) և Սեկալենի դուքս Ֆրետերիք Քազիմիրի կողմե», թվագրված 18 սեպտեմբեր 1696-ին և որուն կցված է Ֆիլիփ տը Զագլիի հանձնառությունը հարգելու 19 սեպտեմբեր 1696-ին Միթոյի մեջ ստորագրված համաձայնագրին հոդվածները։

Ո՞վ էր ուրեմն Ֆիլիփ տը Զագլի պարսկաստանի, ազգությամբ հայ, ծնած և մկրտված Սպահանի արվարձան Ջուղայի մեջ, որդին ոսկերիչի մը որ դրացի եղած է Հիսուսյաններու տան։ Ըստ հայր Վիլլոթի, «ուներ հատկություններ, որոնք իրեն կհատուցանեին ինչ որ իր ծնունդը և բախտը իրեն մերժած էին, որովհետև կատարելապես բարեկամ էր, ուներ արթուն, դյուրաշարժ և թափանցող միտք. ուներ կրթյալ ձևեր, շատ ավելի քան ինչ որ ունին ընդհանրապես իր ազգին պատկանողները։ Աշխարհ տեսնելու և հաջողելու ցանկությունը զինքը մղեցին ձգելու իր երկիրը ուր տեսած էր թե իրեն համար կարելիություն չկար փայլուն դիրք մը գրավելու»[1]։

---

[1] Հայր Ժագ Վիլլոթ մոտավորապես 14 տարի բնակած է Պարսկաստանի մեջ, մասամբ Սպահան և մասամբ Ջուղա, 1689-են 1708-ի միջև։ Իր ծանոթագրություններուն հիման վրա հրատարակված է ճամփորդական տեղեկագրություն մը, որուն վերնագիրն է Հիսուսյաններու միաբանութենեն միսիոնարի մը ճամփորդությունը Թուրքիո, Պարսկաստանի, Հայաստանի, Արաբիո և Պարպարիո մեջ, Փարիզ, 1730, էջ 465։

Ըստ ֆրանսացի ճամփորդի մը, որ Պարսկաստանեն գրած է 1698-ին, Զագլի «որդին էր ջուղայեցի հայու մը, էլիաս կոչված, որ անհաջող գործեր ըրած և մահմեդական դարձած էր»։ Տեսնել Փարիզի ազգ. գրադարանին ձեռագիրը (ֆրանս. բաժին, 11.331, էջ Ֆոլիո 30 ա)։ Կթվի թե այս անանուն ձեռագիրին հեղինակն է Սոլիո-Տելանտ, որ հրատարակած է գիրք մը Պարսկաստանի գեղեցկություններր կամ նկարագրություն այս թագավորության մեջ գտնվող ամենեն նշանավորական քաղներուն, հեղինակությամբ Ա.Տ.Տ.—Վ-ի (Անտոնի Սոլիե-Տելանտ, Վանտոմցի) քանի մը ծովային արկածներով Լ.Մ.Փ.Ռ.Տ.Կ.Տ. Ֆ-ի (այսինքն՝ Լուի Մառո, Ֆրանսայի ցականավերուն արքայական նավուղիղ) Փարիզ, 1673։ Սոլիե-Տելանտ Պարսկաստան գնաց 1664-ին Թավեռնիեի ընկերակցությամբ, որու հետ Սպահան գտնվեցավ 1665-ին։ Սոլիե-Տելանտ տունձին վերադարձավ 1666-ի ապրիլին։ Այս ձեռագիրը, որ կազմված է 30ա և բ էջերեն և 31ա էջին և 30ա էջին լուսանցքին վրա գտնված հիշատակությունը «պատմություն Սանիի, հայ բախտախնդիր, որ Փարիզի մեջ ամուսնացավ տիկին Թավեռնիեի քրոջ հետ շուրջ 1683 թվականին», մաս կկազմե «Հատոր 31 էջերու 13 հունիս 1895»-ի։ Առաջին էջին վերի մասին մեջ կկարդանք՝ Սոլիե-Տելանտ 1712։ Տրված ըլլալով որ հեղինակը մեկ կողմե

Եկավ Ֆրանսա այդ դիրքը փնտրելու. շուրջ 1669-ին է, որ զինքը կգտնենք Փարիզ, ուր գացած էր հայ վաճառականներու հետ։ Երբ Ֆրանսայի մայրաքաղաքը հասավ հայտարարեց թե կկոչվի Սանի կամ Սահակի և որդին է Սպահանի թաղերեն Ապպասապատի «դարուղային» կամ թաղապետին[2]։ Կատարյալ բնականությամբ կխոսեր հայերեն, պարսկերեն և թուրքերեն։

Փարիզի մեջ, ուր ամեն օր ուրիշ հայեր կուգային հաստատվելու, «իր ընտրանիին պատկանող մարդու ձևերը իրեն թույլ տվին նույնիսկ մուտք գործելու մեծերուն և մանավանդ տիկիններուն մոտ, որոնք հաճույքով կտեսնեին պարսիկը և բարեկամություն ցույց կուտային իրեն»[3]։

Հարմարելով իր դերին, նույնիսկ երկրորդ անգամ մկրտվեցավ և պատիվին արժանացավ կնքահայր ունենալու Օրլեանի դուքսը, եղբայր Լուդովիկոս ԺԴ-ի, որ իրեն տվավ իր անունը՝ Ֆիլիփ, կենսաթոշակ մը և կարևոր աստիճան մը իր հրացանակիրներու գունդին մեջ։

Հասնելեն քանի մը շաբաթ ետք ծանոթացավ Թավեռնիեի հետ, համբավավոր ճամփորդ և Օպոնի բարոն, որ նոր վերադարձած էր Հնդկաստան կատարած իր վերջին ճամփորդութենեն։ Ընդունվեցավ անոր տունը, ուր հաճելի տպավորություն գործեց և շուրջ 1692-ին ամուսնացավ տիկին Թավեռնիեի քրոջ հետ, որ տարիքոտ էր և տգեղ[4]։ Հայտնի չէ

կգրե. «Երբ Սպահան էի...», էջ 30ա, և մյուս կողմե մեզի կըսե, խոսելով Զագլիի մասին, թե «Սանի կամ Սակլի այն անունն է, զոր կգործածեր պ. Թավեռնիեի մոտ, ուր զինքը տեսա բազմաթիվ անգամներ», էջ 30բ, կենթադրենք, որ Սոլիե-Տելանտ կրնա ըլլալ հեղինակը։ Զագլիի ամուսնութենեն ետք մեզի կըսե թե «ավելին չէ կրցած գիտնալ և ոչ ալ ուրիշ լուրեր առնել, մինչև քանի մը ամիս առաջ, երբ ֆրանսացի ճամփորդ մը, որ 1698-ին Շամախիեն Սպահան կերթար լսեց Զագլիի պատմությունը և զայն գրեց իր Փարիզի բարեկամներեն մեկուն», որ իրեն հաղորդեց անանուն նամակը։ Այս վերջին մասին մեջ է, որ կգտնենք այն տեղեկությունը, թե Զագլի որդին էր էլիասի։

Ըստ Փիեռ-Վիքթոր Միշելի Զագլի որդին էր ջուղայեցի աղքատ հայու մը։ Տեսնել «Պարոն Միշելի հիշատակները Պարսկաստան կատարած իր ճամփորդության մասին, երբ այնտեղ ուղարկված էր իբր արտակարգ ներկայացուցիչ Նորին վեհափառության, 1706, 1707, 1708 և 1709 թվականներուն»։ Ազգ. գրադարան, ֆրանս. բաժին, ձեռ. 7200։

[2] Ըստ 11331 ձեռագրին, անդ, էջ 30ա։ Ըստ Միշելի, անդ, իր Փարիզ հասնելուն թվականն է 1675։

[3] Վիլլոթ, անդ, էջ 465։

[4] Ըստ 11331 ձեռագրին, անդ (Սոլիե-Տելա՞նտ)։ Ժ. Մաթոռե, որ նույնպես օգտագործած է այս ձեռագիրը իր մեկ հոդվածին մեջ՝ «Քանի մը հայեր, որոնք Ֆրանսա ապրած են», «Հայկական ուսումնասիրությանց հանդես», 1922, հատ. Բ, պրակ Ա. էջ 56, սխալմամբ կգրե թե Զագլի ամուսնացած էր Թավեռնիեի քրոջ հետ, մինչ ըստ Փոլ Լյու-

թե ի՞նչ ձեւով ամուսնացան, որովհետեւ կինը բողոքական էր և ինքը կաթոլիկ։ Կթվի թե ամուսնությունը չհայտարարվեցավ և զույգը, Նանթի հրովարտակին ջնջումեն ետք (1685), քաշվեցավ Զվիցերիա, ուր ատեն մը ապրեցան[5]։

Հետեւինք հիմա Ֆիլիփ տը Զաղլիի թափառումներուն, համաձայն մեր քրոնիկագիրներուն պատմածներուն։ Գացած պետք է ըլլա Ամսթերտամ, հետո Մոսկվա, ուր կերեւի ներկայացած է իբր ուղարկյալ Ֆրանսայի թագավորին կողմե, պաշտոն ունենալով կազմակերպել հրացանակիրներու գունդ մը Պարսկաստանի մեջ։ Բայց չկարենալով մտնել այս երկիրը, կերթա Գերմանիա հետո Շվետ, ուր կամուսնանա արքունի օրիորդի մը հետ, որ թագավորական թոշակառու էր։ Այս վերջինույն հասկցուցած է, որ ազգականական կապեր ունենալով Թավենիեի հետ, որ վերջերս մեռած է Ռուսիո մեջ 1689-ին, այնտեղ պետք է երթա ստանալու համար Թավենիեի ժառանգությունը, որ կարեւոր գումարի մը պետք է հասնի։ Իր կնոջ միջամտությամբ Շվետի արքունիքեն կխնդրե նամակներ ուղղված Պարսկաստանի թագավորին։ Ստանալով այդ նամակները կերթա Մոսկվա, ուր կառնե Աղա կամ Խոճա Ֆիլիփյուս անունը։ Այնուհետեւ Լեհաստան դառնալով, կառաջարկե այնտեղ ուղղել Հայերի առեւտուրը, զոր կկատարեին անոնք ուրիշ երկիրներու մեջ։ Կթվի թե իր առաջարկները չեն ընդունված, բայց և այնպես հաջողած է ինքզինքը արժեցնել այնքան, որ Լեհաստանի թագավորը կարծած է իրեն մեջ գտնել բոլոր այն ձիրքերը, որոնք անհրաժեշտ էին գլուխ հանելու համար դեսպանական առաքելություն մը, զոր թագավորը կուզեր ուղարկել Պարսկաստան։ Թագավորը ուրեմն, դեսպան անվանեց Զաղլին, ազնվականացուց կոմսության տիտղոսը տալով անոր, որ այնուհետեւ կդառնար Ֆիլիփ կոմս Զաղլի[6]։

Հետո կանցնի Թրքական հողերը, նախ Կոստանդնուպոլիս, ուր կլսեր թե նամակներ ունի կայսրեն սուլթանին համար, բայց այնտեղ երկար չի մնար և կերթա Էրզրում, ուր կլսեն թե ներկայացած է որպես սյուննի

քայի Զաղլի ամուսնացավ Թավեռնիեի քրոջ կամ եղբոր աղջկան հետ։ Տեսնել «Ճամփորդություն պարոն Լյուքայի Արեւելքի մեջ», Լա Հեյ, 1705, հատ. Գ, էջ 61, Ա. տպագրություն 1704, հրատարակված ըստ իր նոտագրություններուն Շառլ Սեզար Դոտյո տը Վերվալի կողմե, անդամ Գեղեցիկ դպրությանց ակադեմիայի։ Լյուքա Սպահան բնակեցավ 1700-ի վերջեն մինչեւ 1701-ի ամառը։ Իսկ Միշէլ, անդ, կըսե թե Զաղլի ամուսնացավ Թավեռնիեի աղջկան հետ։

5 Ձեռագիր 11331, անդ, էջ 30բ։

6 Վիլլոբ, անդ, էջ 467։

մահմետական, իսկ նախ քան սահմանագլուխն անցնիլը Սպահան երթալու համար ընդունած է Ալիի աղանդը (շիիթ) և առած Իմամկուլի բեկ անունը։

Բոլոր այս թափառումները[7] մեզի կբերեն մինչեւ 1699 տարին, ուր կատարված դեպք մը, որու գլխավոր դերակատարը եղած է Ֆիլիփ տը Զաղլին և որ վրդոված է Ջուղայի կաթոլիկ միսիոնարներու, ինչպես և կաթոլիկ հայերու կյանքը, մանավորաբար Շեհրիմանյան ընտանիքը (այս անունը կհիշվի զանազան տարբերակներով, ինչպես՝ Շարիման, Շերիման, Շերիմանի են)։

Քանի մը տարի առաջ Ֆիլիփ տը Զաղլի դատ մը բացած էր[8], որ կթվի թե մասնակի արդյունքի մը հասած է 1699-ին[9]։ Կպահանջեր 28.000 թուման (այնատենվան դրամով շուրջ 400.000 լիվռ), զոր իր աներձագը Թավեռնիե երեսուն տարի առաջ տվեր է տոկոսով Շեհրիմանյան եղբայրներուն, որոնք Ջուղայի ամենեն հարուստ և ամենեն կարեւոր վաճառականներն էին, դավանանքով կաթոլիկ։

Եթե հավատք ընծայենք Սպահանի եպիսկոպոս էլիաս տը Սեն-Թ՚Ալպեռի[10] որ խնդրին մեջ շահագրգռված էր, «Սեկլի կոմսը», որ ձեռքը ուներ քրիստոնյա իշխաններեն տրված հանձնարարական նամակներ[11],

7 Այդ միջոցին ամեն տեսակ բախտախնդրական արարքներ ու խաբեբայություններ կվերագրվին իրեն. ըստ Միշելի, անդ, էջ 51, 2000 սկուտեղ չորցած է Շվետի մեջ Ֆրանսայի ներկայացուցիչեն. ըստ Շամախի այցելած ֆրանսացի ճամփորդին, ձեռ. 11331, Էրզրումի մեջ ձերբակալված է դրամ կորզած ըլլալով անգլիացի վաճառականե մը և Բոկոտն կարմելյան կրոնավորե մը, որ իրեն փոխ տված էր հիսուն սքեր (ոսկեդրամ մը, որ կգործածվեր Մերձավոր Արեւելքի մեջ)։

8 Դեռ 1697-ին, կերեւի թե խոճա Գասպար, որ մեկն էր Շեհրիմանյան եղբայրներեն, ենթակա եղած էր այս խնդրին հետ կապ ունեցող դատի մը. «Քրոնիկ Կարմելյաններու Պարսկաստանի մեջ», անգլերեն, Լոնտոն, 1939, հատ. Ա, էջ 484։ Տե՛ս 15 սեպտեմբեր 1697 թվականով էլիաս եպիսկոպոսի նամակը, որ կգրե. «Երկյուղ կա, որ խոճա Գասպար ստիպված ըլլա իր քրոջ պահ դրված որբի մը դրամեն 150 թուման վճարելու մեկու մը, որ անարդար պահանջք մը ներկայացուցած է նեցուկ ունենալով թագավորության ներքիններեն մեկուն բռնադատական օժանդակությունը»։

9 Շեհրիմանյան եղբայրներեն Մարկոս և Միքայել հարկադրվեցան վճարել հակագումար մը Ֆիլիփ տը Զաղլիի, հակառակ անոր, որ խուսափելու համար ատկե մահմետական եղած էին 10 փետրվար 1699-ին։ Նամակներ Ջուղայեն ֆրանսացի կրոնավոր Պագիլ տը Սեն-Շառլի, ուղղված Սրբազան միաբանության 15 հունվար և 2 փետրվար 1700-ին, տե՛ս «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Բ, էջ 1080։

10 Սպահանի հ. էլիասը, տե՛ս «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Բ, էջ 863 և «Կյանք հ. Ֆ. էլիա Սան Ալպերթոյի, հեղ. հ. Ֆրանսիս Մարիա տը Ս. Սիրուս, նաև հատ. Ա, էջ 1078, ծանոթ. Գ։

11 Լյումա, անդ, էջ 62, կըսե թե Զաղլի կայսրեն ևս ստացած էր հանձնարարական

հաջողած էր շահին կողմե ընդունվիլ և թագավորության մեծամեծներեն մեկ քանիին բարեացակամությունը ապահովել, պահանջելու համար 28.000 թումանի գումարը: Իբր փաստաբան առավ մարդ մը, որ որդին էր մահմեդական դարձած հայու մը և եղբորորդին կամ քեռորդին էր հայ լուսավորչական եկեղեցականի մը և ազդեցիկ դիրք մը ստացած էր արքունիքին մեջ շնորհիվ իր խելացիության:

Լյուքա կարծիք կհայտնե, որ «Զաղլի իր կնոջ հորեղբոր բազմաթիվ թուղթերուն մեջ տեսած էր, որ ան շատ առևտուր ըրած է և շատ թղթակցություն ունեցած է Շեհրիմանյաններու հետ: Այս պարագայեն օգտվելու նպատակով կեղծած է անոնց ստորագրությունը, կնիքը, գիրը և հնարած է պարտավորություններ, որոնք այնպես կերևեին, որ վճարելի են Շեհրիմանյաններու կողմե»[12]:

Թավեռնիե Ֆրանսա վերադարձին շուտով փճացուց այն մեծ հարստությունը, զոր դիզած էր 1636-են մինչև 1669 Պարսկաստան և Հնդկաստան կատարած իր վեց ճամփորդություններուն ընթացքին և իր եղբորորդին, զոր Պարսկաստան ձգած էր, այնտեղ անհաշիվ ծախքեր կկատարեր: Թավեռնիե ստիպված եղած էր ծախելու իր Օպոնի պարոնությունը և 1684-ին ընդունած էր Մեծ կայսրին առաջարկությունը, որ կուզեր Գաղութային ընկերակցություն մը կազմել[13]: Կարելի է, ուրեմն, մտածել որ Թավեռնիե խոսած էր Զաղլիի այն գումարներուն մասին, զորս ձգած էր Շեհրիմանյաններուն և իրեն հանձնարարած էր գանձել: Այսուհանդերձ քանի որ Թավեռնիե մեռավ 1689-ին Մոսկվայի մեջ, կմնա գիտնալ թե ինչ փոխանորդագրի հիման վրա Ֆիլիփ տը Զաղլի իրավունք կուտար ինքզինքին այդ գումարները վերստանալու, եթե ոչ հայտարարելով որ պաշտոն ունի գանձելու իր ազգականին ժառանգությունը, ինչպես ըսած էր Շվետի մեջ:

Նամակ մը, որ կհրավիրեր Պարսկաստանի թագավորը արդարությամբ ընդունելու Զաղլիի պահանջքը Շեհրիմանյան եղբայրներեն:

[12] Լյուքա, անդ, հատ. Բ, էջ 61: Շամախիի ճամփորդը, որ 1698-ին կգրե, կըսե թե Զաղլի մուրհակ մը ուներ, որ կհաստատեր թե Թավեռնիե Շեհրիմանյաններու մոտ պահ դրած էր 10.000 թուման և պարսիկ արքունականե մը ձեռք բերած և թագավորական կնիք կրող փաստաթուղթ մը, որուն կնիքը վարպետությամբ քակած էր և փակցուցած հիշյալ մուրհակին վրա: Զաղլի իր ապրուստին համար 20.000 ֆլորեն ավելի հատկացում մը ստացավ Շեհրիմանյան ընտանիքեն, որուն այս խնդիրը մինչև 1698 արժած է ավելի քան 50.000 դահեկան: Ձեռ. 11331, էջ 30բ և 31ա:

[13] Ռաֆայել տյու Ման, Նկարագրություն Պարսկաստանի 1660-ին, հրատարակված ծանոթագրություններով և հավելվածով Շառլ Շեֆերի կողմե, Փարիզ, 1890, էջ Հ:

Բայց ամբողջ այս պատմությունը պետք է զետեղել միջնոլորտին մեջ այն անխնա պայքարին, զոր տարիներե իվեր ծայր տված էր ընդմեջ մեկ կողմե հայ կղերին և Ջուղայի հայ բնակչության և մյուս կողմե կաթոլիկ միսիոնարներուն, որոնք ձեռնարկած էին կաթոլիկ քարոզչություն կատարելու հայ համայնքին մեջ, որոշ հաջողություններ ալ ձեռք բերելով:

Շեհրիմանյան ընտանիքը անոնցմե էր, որոնք ընդունած էին կաթոլիկությունը և հայր Ֆլեռիո 1694-ին կգրեր[14], թե «Սպահան կաթոլիկ ընտանիքներուն մեջ ամենեն փայլունը պարոններ Շեհրիմանյաններու ընտանիքն է[15]: Ասոնք միակ ազնվականներն են ամբողջ հայ ազգին մեջ: Կարևոր ծառայությունները, զորս մատուցած են Պարսկաստանի թագին իրենց տված են այս փառավոր տիտղոսը, բայց ազնվականությունը չէ, ոչ ալ իրենց վայելած վարկը և մեծ հարստությունը, որ կկազմեն իրենց փայլը, այլ իրենց անբռնաբարելի հարումը կաթոլիկ հավատքին և իրենց վառ եռանդը նույն այդ հավատքին տարածման համար: Ասոնք հայտնի պաշտպաններն են միսիոնարներուն և կրոնքին ամենեն հաստատուն նեցուկը ամբողջ Պարսկաստանի մեջ: Գեղեցիկ եկեղեցին[16], զոր կառուցին

---

[14] Ֆլեռիո. *Հայաստանի ներկա աշխարհիկ և հոգևոր վիճակը*, Փարիզ, 1694, էջ 60:

[15] Կթվի թե Սարհատ Շեհրիմանյանի հինգ որդիներն են, որ շուրջ 1681—82 թվականները կաթոլիկ քարոզիչներեն խնդրեցին կաթոլիկ սկզբունքներուն մեջ կրթել ամբողջ իրենց ընտանիքը. Նամակ հ. Էլիաս տը Սան—Թ'Ալպեռի 14 հուլիս 1683-ին, տե՛ս «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Բ, էջ 1076: Սրբազան միաբանության ուղղված անթվակիր տեղեկագրի մը մեջ (անդ, հատ. Ա, էջ 485) իրենց մասին կըսվի. «Սպահանի մեջ ունեին 50 ծառա և 100 հոգի կգործեին իրենց առևտրական հիմնարկին մեջ: Դրամ կպահեին արտասահմանի մեջ և 200.000 սկուտեղ փոխադրած էին Վենետիկ, որուն 100.000-ը պիտի գործածվեր այնտեղ և մնացյալը Հռոմ, համաձայնությամբ Սրբազան Միաբանության: Իրենց հարստությունը կհասնի 70.000 թումանի, այսինքն ավելի քան մեկ միլիոն սկուտեղ և հարգ կվայելեն արքունիքին մեջ». Նամակ հ. Էլիասի առ սրբ. միաբանությունը 30 հունվար 1682-ին, «Կարմելյանները», հատ. Բ, էջ 451:

Շնորհիվ Սպահանի եպիսկոպոս հ. Էլիաս տը Սեն-Թ'Ալպեռի ամուր թիկունքին, Շեհրիմանյան եղբայրները Իննովկենտիոս ԺԲ պապին կողմե 1696-ին Հռոմի քաղաքացի հռչակվեցան և ազատ առևտուրի իրավունք ստացան Հռոմի և Անքոնի մեջ: 1669-ին կայսրը իրենց շնորհեց Հունգարիո կոմսի տիտղոսը, զոր հաստատեց նաև Ֆրանսուա Ա կայսրը 24 հուլիս 1817-ի հրովարտակով: Շեհրիմանյան ընտանիքը մաս կազմեց 1736-ին Օրվիեթոյի, 1740-ին Սփոլեթի, 1742-ին Վիթերպի, 1749-ին Փերուջի և 1751-ին Մաղերաթի ազնվականության: Տե՛ս «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Ա, էջ 485, ինչպես և Շեհրիմանյաններու տոհմական ծառը, անդ, հատ. Բ, հավ. Գ, էջ 1358 և շար.:

[16] Նոր եկեղեցին, որ ճանաչված էր «Շեհրիմանյաններու եկեղեցի» անվան տակ, օծվեցավ 18 դեկտեմբեր 1691-ին, քովը ունենալով պզտիկ վանք մը լատին ծեսին պատկանող 5—6 կրոնավորներու համար: «Կարմելյանները», հատ. Բ, էջ 1077:

հիսուսյան հայրերուն համար, առանց խոսելու այն բարիքներուն մասին, զոր կատարեցին հօգուտ մյուս միսիոնարներուն, հավիտենական կոթողը պիտի ըլլա իրենց ջերմեռանդ առատաձեռնությանը»։

Այս պայքարին վերիվայրումներուն ընթացքին Ջուղայի հայերը հրաման ձեռք բերած էին, որ բոլոր կարմելյան հայրերը, որոնց մեջ նաև Սպահանի եպիսկոպոս հայր Էլիաս, Ջուղայեն արտաքսվին[17], իսկ մյուս տոմինիկյան և հիսուսյան կրոնավորները, որ այնտեղ էին նույն հրամանին ենթարկվելու վտանգին տակ էին, երբ փորթուգալցի հայր Գասպար Տոս Ռեյես, որ Սպահանի օգոստինյան վանքին մեծավորն էր, միջամտեց հայ վարդապետին (Ստեփաննոս) մոտ[18], որպեսզի չշարունակե այդ ձեռնարկը, որովհետև կաթոլիկներու հայտնի թշնամի պիտի համարվեր և Փորթուգալի թագավորը և բոլոր մյուս կաթոլիկ իշխանները միջոցներ ձեռք պիտի առնեին», ավելացնելով որ «իբր բարեկամ կազդարարեր իրեն, որ իր անտեղի եռանդը դժբախտության պիտի ենթարկեր բոլոր հայ վաճառականները, որոնք կգործեին քրիստոնյա աշխարհին մեջ»։ Հայ վարդապետը պատասխանեց, որ «թագավորները իր հոգը չէին, երբ հարցը կվերաբերեր իր հոտին փրկության։ Այսուհանդերձ, մեծավորը և իր փոխանորդը, որոնք հայերեն գիտեին, համոզեցին զինքը, որ իրենց ներկայության պատճառ տոմինիկյաններու և հիսուսյաններու արտաքսման վերաբերյալ թագավորական հրամանագիրը։ Հայ վարդապետը կատարեց իրենց խնդրանքը, հայտարարելով, որ կհամա-

[17] Փորթուգալի դեսպան Գրեգորիո Փերեյրա Ֆիդալգո, որ պաշտոն ստանձնած էր Սյուլեյման շահին ներկայացնելու Իննովկենտիոս ԺԲ պապին 28 հունվար 1695 թվակիր նամակը, արտոնություն ստացավ նոր գահակալած Հուսեին շահեն, որ Էլիաս եպիսկոպոսը և բոլոր կարմելյան կրոնավորները վերադառնան Ջուղա 1696-ին, «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Բ, էջ 1078։

[18] Ստեփաննոս վարդապետ, Ջուղայի առաջնորդ, թագավորական հրովարտակով հոկտեմբեր 1696-ին Էջմիածնի կաթողիկոս հռչակվեցավ, Նահապետ Ա Եդեսացի կաթողիկոսին տեղ (1691—1705), որ գահազուրկ եղավ։ 1697-ին Ստեփաննոս կաթողիկոս բանտ նետվեցավ և Նահապետ վերստացավ իր գահը, կոչելով Հռոմեական եկեղեցին «մայր», առանց սակայն միանալու Հռոմի, «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Ա, էջ 482։ 1698-ին Ստեփաննոս «Ֆրանկներու ոխերիմ թշնամին», մեռավ Երևանի բանտին մեջ. Տոմինիկյան հ. Հովհ. Պարթուղոմե, 9 մարտ 1699, «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Ա, էջ 482։ Բոլոր այս դեպքերուն ընթացքին կտեսնենք նույնիսկ, որ 1697-ին հայր Անթոնիո, փորթուգալցի կրոնավոր մը, որ նախապես Սպահանի օգոստինյաններու մեծավոր եղած էր, մահմեդականությունը ընդունեց, ամուսնացավ և Սպահան հաստատվեցավ և այնուհետև եղավ «Շեհրիմանյաններու թշնամիներուն խորհրդականը», Հայր Պագիլ, 2 փետրվար 1700, «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Ա, էջ 486։

կերպի իբր ապացույց իր բարեկամության[19]։ Նույնպես, 1694-ին իսկ Շեհրիմանյան ընտանիքը կոչվեցավ վճարելու կարևոր տուգանքներ, ինչ որ պատճառ եղավ, որ դադրեցնե իր դրամական օժանդակությունը ի նպաստ միսիոնարներուն[20]։

Իր կողմե Էլիաս տը սեն-Թ'Ալպեռ եպիսկոպոսը Հռոմի մեջ, ուր հասած էր 14 հոկտեմբեր 1702-ին Սպահանեն մեկնելե ետք, երեք գլխավոր նպատակ կհետապնդեր, որոնցմե առաջինը կվերաբերեր Ջուղայի կաթոլիկ հայերուն դեմ եղած հալածանքներուն, և մասնավորաբար Շեհրիմանյան ընտանիքին, որ մեծապես վրդովված էր Ֆիլիփ տը Զաղլիի պահանջքեն, որ եթե հասներ իր նպատակին՝ մեծ աղետ պիտի ստեղծեր միսիոնարներուն համար, ինչպես Շեհրիմանյան ընտանիքին Վենետիկի խոստումներուն ետ առնվիլը, դադարումը Սպահանի եպիսկոպոսին խոստացված եկեղեցիին կառուցման[21]։ Այս պատճառներով, այս վերջինը ուրիշ միջոց չէր տեսներ, եթե ոչ խնդրել կայսրեն, Վենետիկի դոժեն և ուրիշ վեհապետներե, որ ճնշում բանեցնեն շահին և իր արքունիքին վրա և սպառնան հայերը արտաքսել Եվրոպայեն[22]։

[19] Ճեմելլի Քարերի, Ճամփորդություն աշխարհի շուրջ, Փարիզ, 1729, հատ. Ա, էջ 101—102։ Համաձայն ուրիշ աղբյուրի մը, Պովիլիե, Ֆրանս. հյուպատոս Հալեպի մեջ (նամակ 22 դեկտ. 1694-ի), փորթուգալցի օգոստինյան հայրերը գոհացում ստացան Ջուղայի հայերուն սպառնալով հալածանքներ կատարել Հնդկաստանի հայերուն դեմ, «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Ա, էջ 467։

[20] «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Բ, էջ 1078—1079։

[21] Այս դադարումը կվերաբերի այն եկեղեցիին շինության, զոր Շեհրիմանյան եղբայրները դարձյալ խոստացած էին Էլիաս տը Սեն-Թ'Ալպեռ եպիսկոպոսին։

[22] «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Բ, էջ 863։ Փիտու տը Սեն-Թ'Օլոն եպիսկոպոսը 29 հունիս 1694 թվակիր տեղեկագրով մը կհիշե, որ դեպքերուն պատճառով բազմաթիվ անգամներ բոլոր միսիոնարները ժողովի հրավիրած է և գրեթե որոշում տրված է խնդրագիր ուղարկել բոլոր քրիստոնյա իշխաններուն՝ իրենց օգնելու և սանձ մը դնելու համար այս հանդուգն հայերուն անպատկառության, կեցնելով անոնց ապրանքները և արգելքի տակ առնելով զանոնք ցամաքի և ծովու վրա, թեև ինքը հակառակ եղած ըլլա այդպիսի բուռն միջոցներու։ Տե՛ս «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Ա, էջ 461։ Նույնպես սրբազան միաբանությունը կարծիք կհայտնե, որ պետք է ճնշում բանեցնել Շեհրիմանյաններու վրա, որոնք ճանաչված են իբր բարգավաճ վաճառականներ Վենետիկի և Լիվոռնոյի մեջ, որպեսզի հարգեն իրենց ստանձնած պարտավորությունները, գեթ մասամբ, բայց կթվի առանց արդյունքի։ Անթվակիր տեղեկագիր սրբ. միաբանության, «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Ա, էջ 485։ Տե՛ս նաև հայր Էլիասի 4 մարտ 1702-ի նամակը Վենետիկի դոժին, անդ, էջ 503։

1699-ին այս իրադարձություններեն ետք կոմս տը Ջալըի խումբը կըլլա դարձյալ լոկ Իմամկուլի պեկ անվան տակ, անուն զոր առած էր Պարսկաստանի մեջ մահմետական դառնալեն հետո: Իր արկածախնդրությունները այնուհետև կապված են մեկ կողմե Ժան-Բաթիսթ Ֆաբրի և օրիորդ Մառի-Քլոտ Փըթիի[23] ֆրանսական դեսպանության և մյուս կողմե պարոն Փիեռ-Վիքթոռ Միշելի հետ[24]:

Մինչ Ֆաբրը Երևան հասած էր, օր. Մառի Փըթիի ընկերակցությամբ, խնջույքի մը հրավիրվեցավ Երևանի խանին կողմե և մեռավ քանի մը օր ետք, 16 օգոստոս 1706-ին: Թաղվեցավ էջմիածնի մեջ, հայերուն մոտ: Հաջորդող շփոթ կացության մեջ Մառի Փըթի հաջողեցավ ստանալ Երևանի խանին հավանությունը պահելու համար դեսպանությունը և իրեն տրվեցավ Իմամկուլի պեկը իբր «մեհմանտար» և «տրոկման» (թարգման) իրեն ծառայելու համար իբր առաջնորդ և ուղեցույց իր շփումներուն, պատրաստելու համար իր ունկնդրությունը արքունիքին մեջ: Իմամկուլի պեկ այն ատեն ստանձնած էր Երևանի նահանգին զորագունդերուն քննիչի պաշտոնը[25]:

Երևանի խանին կողմե Իմամկուլի պեկի ընտրությունը արքունիքին մեջ ընկերանալու համար օր. Փըթիին, որ ինքզինքը «Ֆրանսայի իշխանուհիներուն պատգամավորը» կհռչակեր, հաջող որոշում մը կթվեր: Ինչպես կգրե Մոռ տը լա Քլավիեռ «անկարելի էր Պարսկաստանի մեջ գտնել մեկը որ ավելի բանիմաց, ավելի տեղյակ ըլլար Փարիզի մեջ պարսկերեն և Ջուղայի մեջ ֆրանսերեն ճառի մը ներգործության»[26]:

Թավրիզի խանին ուղղված հանձնարարական նամակներով Մառի Փըթի մեկնեցավ Երևանեն 1706-ի դեկտեմբերի սկիզբը, դեպի Թավրիզ: Այն ատեն է, որ հասավ Միշել Սթամպուլի ֆրանսական դեսպանատան քարտուղարը, որ փութով ուղարկված էր իր դեսպանին, Ֆերիոլի մարքիզին կողմե, Ֆաբրի հաջորդությունը ստանձնելու համար: Անմիջա-

[23] Ֆաբրի և Մառի Փըթիի դեսպանության մասին տեսնել «Մոռ տը լա Քլավիեռի Լուդովիկոս ԺԴ-ի դեսպանուհին Հազարումեկ գիշերները», Փարիզ:

[24] Փ. Վ. Միշելի առաքելության մասին տե՛ս անդ, ծանոթ. Ա:

[25] Ըստ Միշելի, անդ, էջ 51, Ջալըի որ ընկերացավ Երևանի խանին երբ այս վերջինը կերթար իր կառավարությունը ստանձնելու, այդ պաշտոնը ստացած էր շնորհիվ այն չնչին ծանոթություններուն, որոնց տիրացած էր Ֆրանսայի մեջ զինվորական արվեստին մասին:

[26] Մոռ տը լա Քլավիեռ, անդ, էջ 110:

պես ունկնդրություն խնդրեց Թավրիզի խանեն, որ գոհացում տալե առաջ այդ խնդրանքին, հարցին մասին լուսաբանություն ուզեց Մառի Փըթիեն Իմամկուլի պեկի միջոցով: Իմամկուլի պեկի համար դժվար չեղավ հաստատել, որ Ֆաբրի մահեն իվեր Միշել նյութապես ժամանակը չէր ունեցած Լուդովիկոս ԺԴ-ի կողմե անվանվելու իբր նոր պատվիրակ: Ասկե զատ կճամփորդեր առանց հետևորդներու, վաճառականի մը նման և անցած չէր Երևանեն, ինչպես պարտավոր են ընել դեսպանները: Խաբեբա մը միայն կրնար ըլլալ: Թավրիզի խանը շուտով համոզվեցավ և շատ պաղ կերպով ընդունեց Միշելը, որմե պահանջեց տեսնել իր պաշտոնին հատուկ վավերագրերը, ի ներկայության Իմամկուլի պեկի[27]:

Միշել շատ կփափագեր ստանալ արքունիքին ներկայանալու արտոնությունը, բայց առանց հաջողելու, որովհետև մեկ կողմե իր պաշտոնին հատուկ փաստաթուղթերը չուներ, մինչդեռ Մառի Փըթի ուներ լավագույն հանձնարարականները, և մյուս կողմե արքունիքին մեջ հոլանտացիները, անգլիացիները և փորթուկալցիները արդյունավոր կերպով կրցած էին խոսիլ առաջին նախարարին[28]:

Մինչդեռ Միշել չէր կրնար Թավրիզեն շարժիլ, Մառի Փըթի կերթար արքունիք, ուր ընդունվեցավ, կըսե, կարելի բոլոր պատիվներով[29]: Այնտեղ մնաց մեկ օր:

Միշել հաջողելով թողուլ Թավրիզը 1706-ի ծնունդեն ետք, կրցավ երթալ արքայական բանակատեղին, բայց չտեսավ շահը, որ Թեհրան կգտնվեր, երեք օրվան ճանապարհով հեռու Ղազվինեն, ուր ստիպվեցավ վերադառնալ ձեռնունայն: Այնտեղ հրահանգ ստացավ Երևան մեկնելու, և իրեն տվին Իմամկուլի պեկը իբր «մեհմանտար»:

1707-ի ապրիլի վերջը Փիտու տը Սեն-թ'Օլոն եպիսկոպոսը[30] Ղազվինի մոտ կմիանա Միշելի, որ կուղղվեր Երևան: Ճամփուն վրա Իմամ-

[27] Միշել, անդ, էջ 18:

[28] Միշել, անդ, էջ 30, կըսե թե «իմացավ, որ անգլիացիները, հոլանտացիները և փորթուկալցիները 7000 թուման տված էին որպեսզի էհթեմատտովլաթը (առաջին նախարար) և քանի մը ուրիշ ազդեցիկ արքունականներ թույլ չտան, որ անցնիմ սուֆիին առջև»:

[29] «Հիշատակագիր ծառայելու համար օրիորդ Մառի Փըթիի դատական հարցաքննության, որուն կարծեցյալ անառակ կենցաղ մը կմեղադրվի արքայական դատախազին կողմե... ընդդեմ արքայական դատախազին և պարոն Փ. Վ. Միշելի, Արտաքին գործեր, Փարիզ», հատ. Ա, էջ 259ա: Տես նաև Լորանս Լոքարթ, Անկում սաֆավի հարստության, էջ 443:

[30] Բաբելոնի եպ. Փիտու տը Սեն-թ'Օլոն, որ այն ատեն Համատան կբնակեր, Ֆաբրի կցորդ դեսպան անվանված էր, բայց չէր գացած իր պաշտոնակցին մոտ, պատճառ բերելով իր տարիքը և առողջական վիճակը: Երևանեն տեղեկագիր մը ուղղած է, 9 հուլիս

կուլի պեկ բոլորն ալ ձերբակալել տալով Երևանի խանին կողմե և հետ Թուրքիա փախչելու խորհուրդ տալով ձերբակալվածներուն, որոնք մերժեցին, կերևի, այս խրատը իբր «վատ և անարժան Ֆրանսայի ներկայացուցիչին»։ Եպիսկոպոսը չըսեր թե ինչպես ազատ արձակվեցան, բայց մեզի կտեղեկացնե, որ 20 մայիս 1707-ին հասան Թավրիզ, ուր գտան Մառի Փըթի, որ կմեկներ Ֆրանսա[31]։ 24 հունիս 1707-ին Միշել և եպիսկոպոսը կգտնվեին Երևան, ուր կրցան ազատորեն մնալ, հակառակ իրենց մտավախություններուն։

Իվերջո Միշելն է, որ հաջողեցավ շղթայի զարնել տալ նույն ինքն «մեհմանտարը» և իր կրկնված պնդումներուն վրա է, որ «խանը գլխատեց հայ նենգամիտ հավատուրաց Ջաղլին, մականվանյալ Իմամկուլի պեկ, Ֆապրի վստահամբավ հոմանուհիին արտաքսումեն ետք։ Աստուծո և Ֆրանսայի այս թշնամին կրնար շատ չարիք գործել, արդեն իսկ սպաննալե և Ջուղայեն հեռացնել տալե ետք Շեհրիմանյան առաջնակարգ ընտանիքը, որ կաթոլիկ հավատքը հաստատած էր այնտեղ»[32]։

Հայր Վիլլոթ, որ Սպահան գտնված էր Սպահանի մեջ կոմս Ջաղլիի դեսպանության ամբողջ տևողության ընթացքին և որ ընկերացավ Միշելի, երբ ան Ֆրանսա վերադարձավ Սպահանի մեջ իր առաքելության ավարտումեն ետք[33], քիչ մը կփոխե դեպքերը թերևս իր ճամփու ընկերը մեղադրած չըլլալու համար և Պարսկաստանի շահը պատասխանատու

1707 թվականով, որ պահված է Հավատքի տարածման սրբ. միաբանության դիվանաթուղթերու ձեռագիրներու շարքին մեջ, Scritture Non Riferite հատ. Բ, էջ 500։ Ճամփորդության նկարագրությունը մասնակի կերպով արտագրված է անգլիերենով, «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», Ա. հատ.-ին մեջ, էջ 535—536։

[31] Մառի Փըթի Թավրիզը թողուց 8 հուլիս 1707-ին կատարելով Ֆրանսա վերադարձի երկար ճամփորդություն մը և Մարսիլիա հասավ 8 փետրվար 1709-ին, Լոզարը, անդ, էջ 444 և «Մառի Փըթիի պարսկական արկածախնդրությունը», «Ասիական հանդես», անգլ., հուլիս 1946, էջ 273—277։

[32] Փիտու տը Սեն-Թ'Օլոն եպ., «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Ա, էջ 535։

[33] Միշել Հյուսեին շահեն ընդունվեցավ 7 հուլիս 1708-ին։ Այս առաքելության ընթացքին է, որ 1708-ի սեպտեմբերին ստորագրվեցան ֆրանս. հպատակներու և կաթոլիկ հայերու վերաբերյալ համաձայնագիրը Ֆրանսայի և Պարսկաստանի միջև, որ իմեջայլոց, 26-րդ հոդվածով կպահանջեր «պաշտամունքի ազատությունը հայերուն և ֆրանկ կրոնավորներուն համար», բայց Հյուսեին թագավորին կողմե Լուդովիկոս ԺԴ-ի ուղղված նամակի մը մեջ, որ հրատարակված է Էրպեթի «Պարսկական դեսպանություն մը Լուդովիկոս ԺԴ-ի օրով» հատորին մեջ, էջ 362—363, գրված է, թե «հայ եկեղեցականները և կրոնավորները 26-րդ հոդվածին հակառակ հրահանգ մը ստացան»։

կդարձնե Ֆիլիփ տը Ջաղլիի մահվան։ Հաստատելե ետք սերը, զոր այս վերջինը պահած էր հանդեպ ֆրանսացիներուն, որոնց այնքան բան պարտական էր և որ օգնած էր իրեն սերտ թղթակցությամբ կապ հաստատելու Ջուղայի հիսուսյաններուն հետ, հայր Վիլլոթ կգրե թե Ֆիլիփ տը Ջաղլի «դժբախտությունը ունեցավ գժտվելու Ֆրանսայի դեսպանին հետ, որ այն ատեն Սպահան էր. մեջտեղ հանեցին հայուն խաբեբայությունները, երբ վերդարձավ Լեհաստանեն, ուր տարած էր Պարսկաստանի թագավորին պատասխանները և թագավորը տեղեկանալով իր կյանքին պատմության և իրեն դեմ եղած ամբաստանություններուն, գլուխը կտրել տվավ»[34]։

Միշել կկասկածեր որ Ջաղլի անգլիացիներուն հետ համաձայնած է իրեն դավաճանելու համար և այդ պատճառով պատասխանատու բռնեց զայն ֆրանսայի ծառայության մեջ գտնվող երկու հայերու մահվան և Ֆրանսայի պատիվին դեմ եղած անարգանքին, քավության զոհ դարձնելով Ջաղլին, թեև Մառի Փըթին է, որ իբր մեղավոր ցույց տված էր այդ երկու հայերը խանին և պահանջած էր անոնց գլխատումը և դիակներուն ցուցադրումը երկու օր Ֆրանսայի տան առջև։ Իմամկուլի պեկ այդ խնդրին մեջ ծառայած էր միայն իբր թարգման, բայց իրեն դեմ է որ թշնամություն ցույց կուտար Միշել[35]։

Ջաղլի ուրեմն գլխատվեցավ երեքշաբթի 2 օգոստոս 1707-ին[36]։ Եվ որովհետև Միշել չէր ուզեր ներկա ըլլալ մահապատժին գործադրության, քանի որ «չէր սիրեր նման տեսարաններու առջև գտնվիլ և թե ինչ որ խանը պիտի ըներ լավ եղած պիտի ըլլար», իրեն բերին գլուխը «իբր նշան մեծագույն գոհացումի»[37]։

[34] Վիլլոթ, անդ, էջ 467։

[35] Վիլլոթ, անդ, էջ 9 և 12։ Ֆրանսայի ծառայության մեջ գտնվող երկու հայերեն մեկը կկոչվեր պարոն Սյուֆեր, ասոր հետ Ֆապր Պոլսո մեջ սակարկած էր փոխադրությունը մինչև Պարսկաստան իր դեսպանատան պատկանող բեռներու և մարդոց, զորս Սամոս ձգած էր։ Երևանի խանը մահվան դատապարտեց երկու հայերը կռիվի մը հետևանքով, որ տեղի ունեցած էր Ֆապրի դեսպանության պատկանող ֆրանսացիներու և պարսիկներու միջև և որու ընթացքին խանին մարդոցմե երկու հոգի սպաննված էին։ Մառի Փըթին է, որ խանին վրեժխնդրության մատնանիշ ըրավ երկու հայերը՝ Սյուֆեր և Քորտուլու, որոնք Ֆրանսայի պաշտպանության տակ էին, բայց իրեն կողմնակից չէին։

[36] Այս թվականը չի համապատասխաներ Փիտուի տեղեկության, որ 9 հուլիս 1707 թվականը կկրե և ուր ինքն ալ կանդրադառնա գլխատումին, որ տեղի ունեցած էր երեքշաբթի օր մը, բայց ուրեմն ավելի կանուխ թվականի մը։ Բայց կրնա ըլլալ, որ ձեռագիր տեղեկագրին թվականը սխալ է, թերևս 7 սեպտեմբեր 1707։

[37] Միշել, անդ, էջ 50 և 52։

Միշել 1 նոյեմբեր 1707-ին իր նախարար Փոնշարթրենին կտեղեկացներ Ֆրանսայի թշնամիներուն մահը և Իմամկուլի պեկի գլխատումը և կգրեր. «Ինքնահաճությամբ կմտածեմ, որ արքունիքը համամիտ պիտի գտնվի բրածիս և գոհ պիտի ըլլա, որ պարսիկները բավարարություն տված են ինծի»[38]։ Լուդովիկոս ԺԴ նույնքան ջերմ չէր, որովհետև Միշել[39] իր դեսպանութենեն վերադարձի ճամփուն վրա, երբ 22 դեկտեմբեր 1708-ին Երևան հասած էր և կմնար հայոց կաթողիկոսարանը, Ֆոնթենպլոյեն ստացավ 6 հուլիս 1708 թվակիր նամակ մը, որ կըսեր. «Թագավորը գոհ է, որ պարոն Ֆապրի մահեն ետք ազգին դեմ կատարված անարգանքին համար հատուցում ստացած եք և այս առթիվ ձեր ունեցած ընթացքը կատարյալ պիտի ըլլար, եթե մարդու մը մահը պատճառած չըլլար»[40]։

Ընդհակառակը, Պարսկաստանի մեջ, պայքարին կուրացուցիչ հուրին մեջ միսիոնարները կհրճվեին և հրապարակավ երկնային օրհնություն կհայցեին Միշելի համար ի վարձատրություն իր մատուցած մեծ ծառայության[41]։

---

38 Միշել, անդ, էջ 52։

39 Իր վերադարձի ճամփորդության ընթացքին է, որ 1708-ին Միշել, երբ Սպահանեն չորս հանգրվանի վրա էր, հանդիպեցավ Իսրայել Օրիի, որ կերթար պարսկական արքունիքը իբր Մոսկվայի դեսպան։ Ուներ նաև նամակներ կայսրեն շահին ուղղված և կոնդակ մը Կղեմես ԺԱ պապին կողմե։ Կճամփորդեր փայլուն շքախումբով մը և իր հանդիպումը Միշելի հետ բարեբաստիկ չեղավ, որովհետև այս վերջինը փորձեց խանգարել իր առաքելությունը շահին մոտ։ Մեռավ 1711 Աստրախանի մեջ։ Քրուզինսքի իր մասին կըսե, Գե ավելի վաճառականի մը ընթացք ունի, քան թե դեսպանի մը։ Տե՛ս «Պատմություն Պարսկաստանի վերջին հեղափոխության, քաղված Սպահանի հիսուսյաններու մեծավոր հայր Քրուզինսքիի հիշատակագրություններեն։ Անգլիերենի թարգմանված հայր տյու Սերսոյի կողմե», Լոնտոն, 1733, հատ. Ա, էջ 175—178։ Տե՛ս նաև «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Ա, էջ 565, ծանոթ. Ա։

40 Մոտ տը լա Քլավիեռ, անդ, էջ 187։

41 Միշել, անդ, էջ 60—61։ Թավրիզի քափուչինյաններու մեծավորը 15 օգոստոս 1707-ին կգրե Միշելի, թե «շատ գոհ է այս մահեն... և թե Պարսկաստանի միսիոնարները պարտավոր են երկնքի օրհնությունը խնդրել ձեզի համար իրենց աղոթքներուն մեջ ի փոխարեն մատուցած բարվոք ծառայության», էջ 62—63։ Հայր Րիքառ, հիսուսյան, 29 օգոստոս 1707-ին Էրզրումեն կգրե Միշելի, շնորհավորելով զայն իր բրածներուն համար. «Կտրել տված եք Իմամկուլի պեկի գլուխը, ամենեն ոճրագործ բոլոր մարդոց մեջ և մեր ամենեն ոխերիմ թշնամին. ահա կվերահաստատեք միսիոնարները և պիտի նվաստացնեք Աղեքսանդր պատրիարքը» (Աղեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսը), էջ 82։ Նամակ բոկոտն կարմելյան հայր Պալիլի, Սպահանեն, 15 հոկտեմբեր 1707-ին. «Արդար պատիժը

Այսպես մեռավ Ֆիլիփ տը Զաղլի։

Երեք վավերագրերու լույսին տակ, զորս կհրատարակենք, Ֆիլիփ տը Զաղլի ի հայտ կուգա իբր պատգամավորը ջուղահայ վաճառականներու, որոնք արևելյան ապրանքներու առևտուրով կզբաղեին Եվրոպայի մեջ և արդեն քանի մը տասնամյակներե իվեր կօգտագործեին Ռուսիո ճամփան[42], գերադասելով այն՝ ավելի երկար ու վտանգավոր Թուրքական ուղիներեն։ Իրենց ճանապարհագիծը Մոսկովիո ընդմեջեն կհասներ մինչև Ֆինլանտայի ծոցին մեջ Նարվայի նավահանգիստը, որ այն ատեն Շվետի տիրապետության տակ էր։

Ֆիլիփ տը Զաղլի, որ կփափագեր զանազան պատճառներով (որոնց պիտի անդրադառնանք) դադրեցնել ապրանքներուն փոխադրությունը Շվետի գծով, Քուրլանտի դուքսին կառաջարկեր, որ պարսկահայ վաճա-

---

Իմամկուլի պեկի, որ խափած էր այնքան թագավորներ Եվրոպայի մեջ և իր սեփական թագավորը Պարսկաստանի, ձեզի պատիվ պիտի բերե ձեր ամբողջ կյանքին մեջ, Ֆրանսայի մեջ լավ ընդունելություն պիտի գտնե իր մահվան լուրը», էջ 83։ Սպահանի բոկոտն կարմելյան հայր Հյուկ կգրե Միշելի 19 հոկտեմբեր 1707-ին. «Ֆրանսայի և Իտալիո մեջ ձեզի պիտի մատուցանենք ամբողջ պատիվը, որուն արժանի եք մեր առաքելությունները ձերբազատված ըլլանուդ համար ոճրագործ Իմամկուլի պեկեն։ Մեր ամենեն ոխերիմ թշնամին էր. այդպիսի գործ մը, պարոն, պետք է ձեր վրա հրավիրե երկնքի օրհնությունը։

42 Պարսկաստանի հայ վաճառականներուն Եվրոպայի հետ Ռուսիո ճամփով կատարած առևտուրին առթիվ հիշեցնենք, որ Ջուղայի հայկական առևտուրին առաջին ներկայացուցիչը, որ 1660-ին Մոսկվա հասավ ռուսական կառավարության հետ բանակցելու համար կկոչվեր խոճա Զաքար Շեհրիմանյան, մեկը Շեհրիմանյան հինգ եղբայրներեն, որոնց հետ խնդիր ունեցավ մեր Ֆիլիփ տը Զաղլին։ Վեց տարի ետք, 1666-ի փետրվարին, նույն ընկերության երկու գործակալներ, Ստեփան Ռամատանսքի և Գրիգոր Լուսիքով (Լուսիկյան) Մոսկովիա հասան ռուսերեն արտոնություն ստանալու համար, որ Ջուղայի հայ վաճառականները իրավունք ունենան չգործված մետաքսը արտածելու Ռուսիա և այնտեղեն Արևմտյան Եվրոպայի երկիրները։ Ալեքսեյ Միխայլովիչ ցարը 31 մայիս 1667-ին մասնավոր հրաման մը արձակեց՝ իրենց տալով այդ արտոնությունը Վոլկայի և Կասպից ծովու ճամփով տանելու իրենց ապրանքը դեպի Եվրոպա։ Այս համաձայնությամբ հայ վաճառականները այլևս պետք չունեին Թուրքիայեն անցնելու։ Բայց այս 1667-ի համաձայնագիրը չգործադրվեցավ Ստեփան Ռազինի գյուղացիական ապստամբության պատճառով, որ տևեց 1667-են 1670 և գոցեց Վոլկայի և Կասպյան ճամփան։ Նոր առևտրական դաշինք մը ստորագրվեցավ Ռուսիո և Ջուղայի հայ առևտրական ընկերակցության միջև 7 փետրվար 1673-ին և 1676-ին ռուսական կառավարությունը վերահաստատեց հայ վաճառականներուն տրված արտոնությունը պարսկական ապրանքները Ռուսիո ճամփով Եվրոպա փոխադրելու։ Տե՛ս Վ. Ա. Բայբուրդյան, Նոր Ջուղայի հայկական գաղութը ԺԷ դարում, ռուսերեն (անգլիերեն ամփոփումով մը), էջ 151—166, Երևան, 1969։

ռականները իր երկրին ճամփան օգտագործեն, 1697 տարիեն սկսյալ, մինչև Լիեպո (Լիեփայա) որ Ռիկայեն ետք Լիթվանիո ամենեն կարևոր նավահանգիստն էր։ Կթվի թե ինչպես արդեն տեսանք, 1689—1690-ին փորձած էր հայոց առևտուրը բերել Լեհաստան և 1696-ի իր հիշատակագրին մեջ կըսե թե դեռ շատ բան ունի ընելիք Լեհաստանի մեջ այս առևտուրին առնչությամբ։

Այս նոր լույսին տակ Ֆիլիփ տը Զագլիի ճամփորդությունները Հոլանտայի, Գերմանիո, Շվետի, Լեհաստանի, Մոսկովիո, Թուրքիո և Պարսկաստանի մեջ, որոնք մեր քրոնիկագիրներուն մոտ այնքան ենթադրություններու տեղի տված են, մեզի կերևին բնականորեն պարտադրված իր վաճառականի հանգամանքեն և Պարսկաստանեն Եվրոպա, ինչպես Եվրոպայեն Պարսկաստան ճանապարհագծերու հաստատման պահանջքներեն։

Երբ 1669-ին Փարիզ հասավ՝ Ֆիլիփ տը Զագլի մեկն էր ապահովաբար, որ իբր ապագա վաճառական կջանար ստեղծել հարաբերություններ, որոնք կարենան իրեն օգտակար ըլլալ իր հառաջիկա գործունեության մեջ։ Այս փայլուն հեռանկարեն կուրացած, կարծեց որ, կըսեն, իրեն համար ավելի նպաստավոր է ներկայանալ իբր Սպահանցի հարուստ և ազդեցիկ մահմետականի մը որդին, որ կհավանի քրիստոնյա դառնալ և մկրտվիլ, քանի որ այդ էր փափագը իր ապագա կնքահոր, Լուդովիկոս ԺԴ-ի եղբոր։ Իբր հայ և քրիստոնյա, կրնար կաթոլիկ դառնալ և միանալ Հռոմի, ինչպես ըրած էին Պարսկաստանի մեջ ուրիշ հայեր, իբր հետևանք միսիոնարներու քարոզության և կամ Եվրոպայի մեջ իրենց առևտրական հարաբերություններուն պատճառով, առանց պետք ունենալու երկրորդ անգամ մկրտության խորհուրդը ընդունելու։ Կթվի թե մեծ տկարությունը ունեցավ մտածելու, որ իր ծրագիրներուն հաջողությունը կարժեր երկու մկրտություն։

Եթե նաև հավատանք ըսվածներուն, թե Թուրքիո մեջ սյուննի և Պարսկաստանի մեջ շիի մահմետական եղավ, իր կրոնական համոզումները պետք է եղած ըլլան շատ անկայուն և փոփոխական, համաձայն այցելված երկրներուն պաշտոնական կրոնքին։

Եվ սակայն Քուրլանտի դուքսին ուղղված իր 1696 սեպտեմբերի հիշատակագիրը զինքը կցուցնե իբր քրիստոնյա մը, որ հոգածու է Միթոյի մեջ եկեղեցիի մը արտոնությունը ստանալու, եկեղեցականով մը, իր հայրենակից վաճառականներուն համար։ Նույնիսկ Շվետի ճամփեն հրաժարիլը կբացատրե ոչ միայն այն պատճառով, որ մաքսային տուր-

քերը այնտեղ շատ բարձրացած են, այլև անով, որ Շվետի թագավորը չէ հավանած հայ վաճառականներուն կրոնական պաշտամունքի ազատություն շնորհել։

Իր ամուսնությունը Թավեռնիեի մեկ ազգականուհիին հետ, որ այն ատեն իր համբավին գագաթնակետին վրա կգտնվեր, կատարելապես գոհացում կուտար իր վաճառականի փառասիրություններուն, թույլ տալով, որ մուտք գործե Ֆրանսայի և եվրոպական ուրիշ երկիրներու առևտրական շրջանակներուն մեջ։ Այս ամենուն իբր պսակում, իրեն կմնար իր այցելած երկիրներուն քրիստոնյա իշխանավորներեն ստանալ նամակներ սուլթանին և շահին համար, ինչ որ իրեն պիտի տար վաճառականներեն և միսիոնարներեն շատ փնտրված հանգամանք մը, այն է դեսպանի հանգամանքը։ Կթվի թե այստեղ ալ իր հաջողությունը կատարյալ եղավ, որովհետև կայսրեն ստացավ նամակներ սուլթանին և շահին համար, և Լեհաստանի դեսպան անվանվեցավ այս վերջնույն մոտ[43]։

---

[43] Բազմաթիվ հայեր և եվրոպացի միսիոնարներ Լեհաստանի դեսպան անվանվեցան շահին մոտ։ Մեզի հետաքրքրող ժամանակաշրջանին մեջ, 1698-ին, կգտնենք պարոն Զյուրապեկ, շամախեցի կաթոլիկ հայ մը։ Հայր տը լա Մազի Շամախիեն (Գիլանի ճամփով) Սպահան ճամփորդելու մասին գրած օրագրի մեջ կտեղեկացնե, որ «Սաքսի դուքսը Լեհաստանի թագավոր պսակված ըլլալով, պարոն Զյուրապեկ, շամախեցի կաթոլիկ հայ, պատիվն ունեցավ իրեն ներկայացնելու Պարսկաստանի թագավոր շահ Սոլեմանի նամակները և լեհական Նորին վեհափառությունը նմանապես իրեն պատիվն ըրավ պաշտոն տալու, որ իր պատասխանը, Սոլեմանի հաջորդ շահ Հյուսեինի մատուցանե», տե՛ս «Բարոյացուցիչ և հետաքրքրական նամակներ, որ կվերաբերին Ասիո, Աֆրիկեի և Ամերիկայի, քանի մը նոր տեղեկություններով առաքելությանց մասին և աշխարհագրական ու պատմական ծանոթություններով», հրատարակված պ. Լ. Էմե-Մարթենի տնօրինության տակ, Փարիզ, 1875—77, հատ. Ա, էջ 357, 358 և շար.։

1695-ին և 1697-ին ուրիշ կրոնավոր մըն է, այս անգամ ավստրիացի բոկոտն կարմելյաններու միաբանութենեն Հայր Քոնրատ, որ Հռոմեն Սպահան կգտնվի երկու անգամ, ուղարկված Լեհաստանի թագավորին կողմե, «Կարմելյանները Պարսկաստանի մեջ», հատ. Ա, էջ 479 և հատ. Բ, էջ 862։

1694-ին Լեհաստանի դեսպանն է Հայր Իգնատիոս Զափոլսքի, հիսուսյան լեհական ազնվական ընտանիքե մը սերած։

1689-ին կոմս տը Սիրի, կաթոլիկ հայ մը, Պարսկաստան կերթար իբր Լեհաստանի դեսպան և կտաներ Ֆրանսայի թագավոր Լուդովիկոս ԺԴ-ի նամակները. նամակներ ուներ նաև Չինաստանի իշխաններուն և կայսեր համար, Հ. Վիլլոտ, անդ, էջ 94։ Հայր Ավրիլ, Ճամփորդություն Եվրոպայի և Ասիո զանազան տերություններուն մեջ, Փարիզ, 1692, կըսե իր մասին. «Այս դեսպանը, որ ծագումով հայ էր, իր ընտանիքին պատահած դժբախտութենե մը ետք, երիտասարդ հասակին տարվեցավ Փորթուկալի արքունիքը, ուր թագավորին սպասարկող պատանիներուն հետ դաստիարակվեցավ մինչև 18 կամ 20 տարեկան։ Երբ ինքնագիտակից եղավ, լեցվեցավ ճամփորդելու բուռն ցանկությամբ, որ այնքան

Մնացյալին համար, մեզի կթվի թե զգուշությամբ պետք է կարդանք եվրոպացի ճամփորդներուն և միսիոնարներուն պատմածները իր մասին։ Նկատի պետք է ունենալ, որ Ցիլիփ տը Զաղլի կգործեր 1694—1699 թիվերուն Ջուղայի մեջ, երբ այնտեղ ծայր առած բուռն վեճերը իրարու դեմ էին հաներ մեկ կողմե միսիոնարները և կաթոլիկ հայերու հատվածը և մյուս կողմե հայ ժողովուրդին և իր կրոնական պետերուն ճակատը։ Ինչ ալ ըլլա Ցիլիփ տը Զաղլիի դերը այդ շրջանի իրադարձություններուն մեջ, անոնք որ դեպքերը պատմած են կամ կրքաբորբոք դերակատարներ էին և կամ կուսակցական վկաներ, որոնք չէին կրնար արտահայտվիլ պետք եղած առարկայականությամբ։

Նույն կարգի նկատառումներ ի զորու պետք է ըլլան այն թուղթին մասին, զոր իրեն կվերագրեն Միշել և Փիտու տը Սեն-Թ'Օլոն եպիսկոպոսը։

Այս ամենը անտարակույս պիտի պահանջեր ավելի խոր փնտրտուքներ, ինչպես և իհարկե օգտագործումը հայկական աղբյուրներու որոնցմե զուրկ մնացած ենք։ Այսուհանդերձ այդ չէր սույն հոդվածին խնդիրը, որ նպատակ ուներ ի լույս բերել Քուրլանտի դուքս Ֆրետերիք Քազիմիրի հայտարարությունը պարսկական առևտուրին հաստատման մասին, այնպես ինչպես առաջարկած էր Ցիլիփ տը Զաղլի հանուն Պարսկաստանի հայ վաճառականներուն։

Թեև խնդրո առարկա երեք վավերաթուղթերը միշտ կհիշեն պարսկական առևտուրը և պարսիկները, կասկածե դուրս է, որ այս վերջինները որոնց անունով կխոսի Ցիլիփ տը Զաղլի, Մոսկովիայի մեջ ստորագրված փոխանորդագրի մը հիման վրա, ազգությամբ հայ են, քանի որ իր հի-

բնական է իր ազգին պատկանողներուն, ինչպես և կյանքի մեջ հառաջ դիմելու փափագով, շնորհիվ ասիական և եվրոպական լեզուներուն զորս սորված էր արտակարգ ջանասիրությամբ մը։ Այս նպատակով Փորթուկալի վեհապետներեն հանձնարարական ջերմ նամակներ ստանալե ետք գրեթե բոլոր թագավորություններուն բարձրաստիճան անձնավորություններուն համար, շրջվեցավ Ֆրանսայի, Իտալիո, Գերմանիո մեջ և վերջը հասավ Լեհաստան ուր շուտով հանրածանոթ դարձավ ոչ այնքան իր սուր միտքով, որքան իր հաճելի ձևերով, որոնք բնավ իրեն չէին տար օտարականի մը երևույթը»։ 1690-ին մեռավ Սպահանի մեջ, խեղդամահ եղած, կկարծվի լուտերական երիտասարդի մը կողմե, որ իր ծառայության մեջ էր. Վիլլոթ, անդ, էջ 157։

Ուրիշ հայ մը, Լեհաստան ծնած, Սիմոն Փեթրովիչ, նմանապես Պարսկաստան ղրկվեցավ, բայց մեռավ Երևան հասնելե առաջ, առանց կարենալու կատարել առաքելությունը, զոր իրեն հանձնած էր Ժան Գ Սոպիեսքի թագավորը (1674—1697), որ ինքն ալ մեռավ քիչ հետո։ Նամակ հայր Բիշառի, Հիսուսյան, 7 օգոստոս, 1697, Բարոյացուցիչ նամակներուն մեջ, հատ. 337։

շատակագրին մեջ կըսե, 4-րդ կետով, թե «Պարսիկներուն թույլ պիտի տրվի այստեղ եկեղեցի մը և եկեղեցական մը պահելու և ազատորեն իրենց կրոնքը կիրառկելու։ Եվ Ձեր բարձրապատվությունը հիշյալ եկեղեցականին պիտի տա, ի նշան բարության ու նաև պատվելու համար ազգը և ես առավել քաջալերելու համար այդ ազգայիններուն հոգին, 50-են 60 ռիքստալի թոշակ մը»։

Այս պայմանին մասին կարժե անդրադառնալ Քուրլանտի երևելիներուն կարծիքին, ըստ որու դժվարություն կրնա ծագիլ, որ օտար կրոնք մը մտնե և ազատություն կվայելե իրենց երկրին մեջ, բայց նկատի ունենալով որ այդ կրոնքը քրիստոնեության վրա հիմնված է և թե ազատություն կվայելե նաև Ռուսիո և Լեհաստանի[44] մեջ, կեզրակացնեն, որ այդ կետը նվազ դժվարություն պիտի հարուցանե, քանի որ երկրին բարգավաճումը պիտի նպաստավորվի նման առևտուրե մը և եկեղեցականի մը հաստատման որոշումը կթողուն Նորին գերապայծառ բարձրապատվության, Քուրլանտի դուքսին կամեցողության և հավանության։

Ֆրետերիք Քազիմիր իր 18 սեպտեմբեր 1696-ի հայտարարության մեջ կըսե թե «պարսիկներուն կարտոնենք, որ իրենց կրոնքը ի գործ դնեն այս վայրերուն մեջ, սկիզբները կաթոլիկներուն հետ միաժամանակ, բայց եթե ավելի ետքը քանի մը ընտանիքներ հաստատվին այստեղ մեր երկրին մեջ, պիտի բարեհաճինք ավելի բացատրություն տալու այս մասին, ինչպես որ կարելի պիտի ըլլա, նկատի ունենալով որ կաթոլիկ կրոնքին հետ նմանություն ունեցող կրոնքներ այստեղ կվայելեն, կարգ մը պայմաններու տակ, պաշտամունքի ազատություն»։

Կարելի է այս տեսությունները բաղդատել այն պայմանագրություններուն հետ, զորս կպարունակե 22 հունիս 1688-ին Լոնտոնի մեջ կնքված համաձայնությունը Արևելյան Հնդկաստանի առևտրական ընկերակցության և հայ ազգին միջև[45], որու ներկայացուցիչն էր խոճա Փանոս Քալանթար, սպահանցի երևելի վաճառական մը։ Այդ պայմանագրությունները նպատակ ունեին Հնդկաստանի և Պարսկաստանի հայկական առևտուրին մեծ մասը ծովի ճամփով Եվրոպա փոխադրել Անգլիո միջոցով, փոխանակ ցամաքի ճամփով Թուրքիայեն անցնելու։ Այդ համաձայնության մեջ կառավարիչը և Լոնտոնի վաճառականները ընկերակցությունը, որոնք Արևելյան Հնդկաստանի մեջ առևտուր կընեին,

[44] Լեհաստանի հայերը բանի դավանափոխ եղան և Հռոմի միացան 1630-ին։

[45] Ռ. Վ. Ֆերիեր, Արևելյան Հնդկաստանի ընկերակցության համաձայնագիրը հայ ազգին հետ 22 հունիս 1688-ին, տե՛ս «Հանդէս հայկական ուսումնասիրությանց, հատ. Է»

արտոնություն կուտային, որ բոլոր կայաններուն, քաղաքներուն և ոստաններուն մեջ, ամեն անգամ որ 40-ե ավելի հայեր գտնվին, իրենց կրոնական պաշտամունքը կատարելու ազատություն ունենան և թե իրենց տրամադրվի հող մը, որպեսզի կարենան կառուցել քարաշեն եկեղեցի մը ընկերակցության ծախքով, որ ասկե զատ յոթը տարի 50 ոսկիի թոշակ մը պիտի հատկացնե եկեղեցականին:

Հետաքրքրական է նշել Ֆիլիփ տը Զաղլիի հիշատակագրին մեջ 8-րդ հոդվածը, ուր իր հայրենակիցներուն համար կխնդրե իրավունքը Քուրլանտի մեջ ստացվածքներ գնելու և օտար երկիրներե ամեն կարգի արհեստավորներ բերելու, ինչպես հետաքրքրական է Քուրլանտի երևելիներուն հակազդեցությունը, որոնք կառարկեն անկարելիությունը ստացվածքներու տիրանալու բոլոր անոնց համար, որոնք չեն պատկանիր երկրին ազնվականության (8-րդ կետ) և խոհեմություն կհամարեն սանձել «պարսիկներուն» պահանջքները: Կշեշտեն նաև, որ եթե «պարսիկները» ամեն ազատություն ունենան վաճառատներ և արհեստանոցներ հաստատելու, «մեծ վնաս պիտի պատճառեն քաղաքներուն և արհեստավորներուն և պիտի նվազեցնեն մաքսային տուրքերը»:

Բայց և այնպես Քուրլանտի դուքսը իր հայտարարության մեջ (հոդ. 5) որոշեց, որ «պարսիկները» իրավունք պիտի ունենան իր հողին վրա հաստատվելու, ապահովելու միջոցներ իրր քաղքենի ապրելու և հիմնելու արհեստանոցներ: Ասկե զատ անոնց տվավ իրավունքը ստացվածքներու վերաբերմամբ գործառնություններ կատարելու ազնվականության և բնակչության հետ, այն պայմանավ սակայն, որ գինքը տեղյակ պահեն երբ կփափագին գնել կարգ մը սեփականություններ ժամանակավոր գրավի (իփոթեք) և եկամտային վճարման (ռանթ) հիման վրա:

Ասկե զատ, անոնց իրավունք կուտար (հոդ. 8) քաղքենիներե կամ ուրիշներե դրամ փոխ առնելու այնքան որքան անհրաժեշտ է իրենց ճամփորդություններուն համար, մաղթելով որ ժամանակի ընթացքին ատոր պետքը չմնա, ինչպես հուսալ կուտար Ֆիլիփ տը Զաղլի, որ կավելցներ (9-րդ հոդ. հիշատակագրին) թե երկու կամ երեք ճամփորդութենե ետք վաճառականները փոխառություն կնքելու պետք պիտի չունենային, այլ իրենք իսկ պիտի կարենային ուրիշներուն դրամ փոխ տալ[46]:

[46] Յագելոններու լիթվանական հարստության ժամանակ, որոնք Լեհաստանի վրա իշխեցին (1386—1573), հայերը, շնորհիվ Մերձավոր Արևելքի հետ իրենց առևտրական գործերուն, հասան հարստության այնպիսի աստիճանի մը որ կրցան մեծ գումարներ փոխ տալ իշխաններուն, նույնիսկ Լեհաստանի թագավորներուն, բանակին սպառազինման

Երեք վավերագիրները կպարունակեն շատ շահեկան տվյալներ, որոնց ուսումնասիրությունը կձգենք ԺԷ դարու առևտրական փոխանակության մասնագետներուն, ըլլա մաքսային տուրքերու մասին, որոնք երեք տարբեր սակերու վրա կվճարվեին (համաձայն մետաքսի որակին), ըլլա ուրիշ ապրանքներու մասին, ինչպես բամբակը, բուրդը, ռուսական կաշին, մեղրամոմը, խունկը, խավարծիլը, մուշկը, մարոկենին, գորգերը, ոսկիով կամ արծաթով բանված մետաքսյա կտավները, ինչպես նաև ամեն կարգի բամբակեղեններ, որոնք Պարսկաստանեն կուգային, մինչ գոհարեղեններ և մարգարիտները որոնք երկրեն կանցնեին տուրքե զուրկ էին, բայց Քուրլանտի դուքսը իրավունք ուներ գնելու ինչ որ իրեն հաճո էր, հարյուրին հինգ հավելում մը վճարելով Հնդկաստանի կամ Պարսկաստանի մեջ վճարված գիներուն վրա:

Հետաքրքրական մանրամասնություններ կգտնենք այնտեղ Լիեպոյի նավահանգիստեն Հոլանտա կամ Փորթուկալ և եվրոպական այլ երկիրներ գացող նավերուն փոխադրական վարձքերուն մասին, ըլլա ապրանքի հակերուն կամ սնտուկներուն, ըլլա ճամփորդներուն և իրենց անձնական բեռներուն վերաբերմամբ:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ Ա ՎԱՎԵՐԱԳՐԻ

Շատ խոնարհ հիշատակագիր պարսկական առևտուրին և վաճառականության մասին հանձնված Ձեր գերապայծառ բարձրապատվության Քուրլանտի[47] դուքսին պարսիկ Ֆիլիփ տը Զաղլիի կողմե, Պարսկաստանի մայրաքաղաք Սպահանեն:

Ծանոթ է, որ պարսիկները արդեն քանի մը տարիե ի վեր սկսած են Ռուսիո ճամփով կատարել իրենց առևտուրը Եվրոպայի հետ և հիմա ամենեն հայտնի պարսիկ վաճառականները որոշած են շարունակել իրենց առևտուրը Եվրոպայի հետ Ռուսիայեն անցնելով, թողնելով Թուրքիո ճամփաները, որոնք շատ երկար են, վտանգավոր և դժվար, վասնզի հիմա պարսիկ վաճառականները կփնտռեն կարճ և հանգստավետ ուղի մը, որ Ռուսիայեն սկսելով զիրենք տանի նավահանգիստ մը իրենց ապրանքներով և այնտեղեն կուզեն շարունակել իրենց առևտուրը ավելի հեռու Եվրոպայի մեջ, Պրանտըպուրկի, Տանցիկի, Տանըմարքայի և կամ Հոլանտայի և եվրոպական ուրիշ վայրերուն մեջ: Որոշած են բռնել ճամ-

համար, Գ. Փերովիչ. Հայերը Լեհաստանի թագավորության դիվանագիտական ծառայության մեջ:

[47] Լատվիո մեջ երկրամաս մը Րիկայի ծոցին արևմտյան կողմը:

փան Մոսկվայեն Սմոլենսք կամ Պեսքի (*) և անկե ցամաքի ճամփով Լիվանիո մեջեն Վիթեպսք քաղաքը և Վիթեպսքեն Տվինա գետին վրա մինչև Տուպենահ, և անկե ցամաքի և ծովի ճամփով մինչև այստեղ Միթո[48] և Միթոյեն ցամաքի ճամփով մինչև Լիպո[49], հետո Լիպոյեն ավելի հեռու ամբողջ Եվրոպա, ըստ կամս, և տանիլ իրենց առևտուրը այս վայրերուն մեջ։

Հետևյալ պայմաններուն տակ.

1. Թե Ձեր բարձրապատվությունը բարեհաճի պարսիկներուն շնորհել, Տուպենահի մեջ ըլլա թե այստեղ և Լիեպոյի մեջ, հանգստավետ քարաշեն տուն մը, որպեսզի երբ այս քաղաքները հասնին, կարենան այնտեղ բնակիլ ապահովության մեջ իրենց ապրանքներով։

2. Թե Ձեր բարձրապատվությունը բարեհաճի շնորհել պարսիկներուն, ամեն անգամ որ այստեղ պիտի գան Լիթվանիայեն, իրենց բեռնակառքերով ճամփորդելու ազատությունը Տուպենահեն Լիպո և վերադարձին համար Լիպոյեն Տյունեպուրկ[50]։

3. Ձեր բարձրապատվությունը պիտի պաշտպանե և պիտի ազատե հիշյալները իրենց պաշտոնյաներով և ապրանքներով, ամեն կարգի ճնշումե, ամեն արտակարգ հարկե, վտանգե, հափշտակութենե, բռնութենե և ամեն անարդարութենե, իր օրենքներուն ենթակա հողերուն մեջ։

4. Պարսիկներուն թույլ պիտի տրվի, որ այստեղ պահեն եկեղեցի մը և իրենց եկեղեցականներեն մեկը և վայելեն կրոնի ազատություն։ Եվ Ձեր բարձրապատվությունը հիշյալ եկեղեցականին պիտի տայ, իբր նշան բարության ու նաև պատվելու համար ազգը և առավել ևս քաջալերելու համար անոնց հոգին, 50-են 60 րիքստալի թոշակ մը։

5. Բոլոր պարսիկները, որոնք պիտի հաստատվին այստեղ Միթոյի մեջ կամ Ձեր բարձրապատվության ուրիշ հողերուն վրա պիտի վայելեն, յուրաքանչյուրը ըստ իր անձին (դիրքին) ամեն ազատություն և ամեն առանձնաշնորհում, առանց բացառության, որոնք կպատկանին Ձեր բարձրապատվության հպատակներուն։

6. Պարսիկները ամեն տեղ առանց արգելքի ազատություն պիտի ունենան ի գործ դնելու իրենց առևտուրը և վաճառականությունը, բանալու խանութ և բանեցնելու ամեն տեսակ արհեստանոց կամ գործատուն։

48 Միթո, նախկին մայրաքաղաք Քուրլանդի, այժմ Ելգավա, քանի մը մղոն հեռու Ռիգայեն։

49 Լիպո, այսօր Լիեպայա. կարևոր նավահանգիստ Լատվիո (Ռիգայեն ետք երկրորդը)։

50 Տյունեպուրկ Տվինա գետին վրա, այժմ Տաուգավպիլս։

7. Ամբողջ չորս տարի զերծ պիտի ըլլան ամեն մաքսային տուրքե և պատվագինե, անուղղակի կամ ուրիշ տուրքերե, առանց բացառության։

8. Պարսիկները ազատություն պիտի ունենան ստացվածքներ գնելու այս երկրին մեջ, օտար երկիրներե ամեն տեսակ արհեստավորներ բերելու և ինչ որ գնած են միշտ պիտի ըլլա իրենց սեփականությունը։

9. Ձեր բարձրապատվությունը պիտի բարեհաճի պահել հիմնադրամ մը որպեսզի սկիզբները երբ պարսիկները գան այստեղ իրենց ապրանքներով և պետք ունենան դրամական գումարի մը կարենան ստանալ զայն։

10. Սույն գումարը երաշխավորված պիտի ըլլա իրենց ապրանքներով և պիտի վճարվի ըլլա Ամսթերդամի մեջ հարյուրին վեց տոկոսով, ըլլա իրենց այստեղ վերադարձին՝ հարյուրին տասը տոկոսով։ Եվ ասիկա մինչև որ պարսիկները եկած ըլլան այստեղ մեկ կամ երեք անգամ, ընտելացած ըլլան միջավայրին և իրենցմե որոշ թիվ մը հաստատված ըլլա այստեղ։ Այն ատեն այլևս պետք պիտի չունենան դրամ փոխ առնելու, որովհետև իրենք իրենց մեջ բավական դրամ պիտի ունենան և անտարակույս պիտի կարենան փոխ տալ ուրիշներու։

11. Ձեր բարձրապատվությունը պիտի բարեհաճի հրամայել, որ վերոհիշյալ պարսկական տուներուն տրվի, ըլլա այստեղ Միթոյի մեջ, ըլլա Տուպենահի և Լիպոյի մեջ, տարեկան որոշ քանակություն մը փայտի, չոր խոտի և հարդի։

12. Ձեր բարձրապատվությունը ամեն տան մեջ պիտի հաստատե գործակատար մը, երկու կամ երեք ծառաներով, որոնք թե պիտի հսկեն դրամին վրա և թե տան մեջ կամ դուրսը պիտի պատրաստեն ամեն ինչ, որուն պետք կրնան ունենալ պարսիկները։ Ի փոխարեն, պարսիկները գործակատարին պիտի տան ապրանքի յուրաքանչյուր հակի համար մեկ երրորդ րիքստալ։ Այս դրամով ան պիտի հատուցանե ծառաներուն աշխատավարձքը, անոնց հետ համաձայնության գալով ըստ պատշաճի։

13. Պարսիկները թարգման մը պիտի բերեն, որուն պիտի տան մեկ երրորդ րիքստալ յուրաքանչյուր հակի համար։ Ձեր բարձրապատվությունը անոր պիտի շնորհե արքայական թարգմանի տիտղոսը, ինչպես և տարեկան շուրջ 100 րիքստալ թոշակ մը։

14. Եթե Լիպոյի մեջ գտնվին Ձեր բարձրապատվության պատկանող նավեր, որոնք կուզեն երթալ Հոլանտա, Փորթուկալ և եվրոպական ուրիշ երկիրներ, պարսիկները պիտի կարենան այդ նավերը օգտագործել նախ քան ուրիշներ, հետևյալ պայմաններով. պիտի վճարեն կես րիքստալ յուրաքանչյուր հակի կամ սնտուկի համար Լիպոյեն Տանցիկ,

Քոլպերկ, Սթեթեն, մեկ րիքստալ մինչև Լյուպեք, Քոփենհակ կամ Հելսինկոր, 2 րիքստալ մինչև Ամսթերտամ, Ռոթերտամ կամ Միտելպուրկ Զելանտի մեջ, երկուսուկես րիքստալ մինչև Տուվր, Լոնտոն, Տեռնքերք, Քալե, 3 րիքստալ մինչև Տիեփ, Լա Ռոշել, Պրեսթ, չորսուկես րիքստալ մինչ Լիզպոն։

15. Բայց յուրաքանչյուր անձի և ձեռքի բեռներուն համար պիտի վճարեն կես րիքստալ Լիպոյեն Տանցիկ, Քոլպերկ, Հելսինկոր, մեկուկես րիքստալ մինչ Ամսթերտամ, Ռոթերտամ, Միտելպուրկ կամ Տեռնքերք, Քալե, Լոնտոն, երկուսուկես րիքստալ մինչև Լա Ռոշել, Պրեսթ և Լիզպոն նե։

16. Պարսիկները ազատությունը պիտի ունենան փոխադրելու ամեն տեսակ ապրանք ոչ միայն Պարսկաստանեն, Ռուսիայեն, Լիթվանիայեն և Լեհաստանեն, այլ Եվրոպայի բոլոր երկիրներեն, այստեղ երկրին ներսը և դուրսը, ըստ այս հիշատակագրին մեջ նշված պայմաններուն և արտոնություններուն։

17. Երբ պարսիկները պիտի ուզեն գալ այստեղ Միթո իրենց ապրանքներով Վիլտայեն և Փոզվոյեն, պիտի փոխադրվին ջուրի ճամփով լեհական ազատ նավախումբով մինչև Պոշքե, բայց Պոշքեեն սկսյալ, ինչպես վերը ըսված է, Ձեր բարձրապատվության ազատ նավախումբերով մինչև Լիպո։ Իսկ երբ Լիպոյեն պիտի երթան Փոզվոլ Լիթվանիո մեջ, Ձեր բաձրարպատվության ազատ նավախումբերը զանոնք [պիտի փոխադրեն] իրեն ցապրանքներով Լիպոյեն մինչև Սալաթի ամառը ջուրի ճամփով և կառքերով, ձմեռը սահնակներով։

18. Երբ վերոհիշյալ չորս տարիներու շրջանը ավարտած պիտի ըլլա, պարսիկները Ձեր բարձրապատվության պիտի վճարեն մաքսային տուրք հետևյալ պայմաններով. 2 առ հարյուր, երբ կուգան Պարսկաստանեն, Ռուսիայեն և Լիթվանիայեն և իրենց վերադարձին՝ ծովի ճամփով Տանցիկեն, Պրանտըպուրկեն են. 1 առ հարյուր անփոփոխ կերպով, ուր ալ երթան Քուրլանտի մեջ, Միթո, Լիպո, Պոշքե կամ այլուր։

19. Բայց եթե այս պայմանները ընդունելի չեն Ձեր բարձրապատվության համար, պարսիկները կհավանին, երբ չորս ազատ տարիներու շրջանը ավարտի Ձեր բարձրապատվության վճարել իբր մաքսային հատուցում իրենց բոլոր ապրանքներուն համար, որոնք կփոխադրվին երկրին ներսը կամ դուրսը, ինչ ալ ըլլա անոնց քանակությունը և ուրկե ալ գան, Ռուսիայեն, Պարսկաստանեն, Լեհաստանեն և կամ եվրոպական ուրիշ երկիրներե, վճարել միանվագ կերպով 14.000 րիքստալ առաջին և

հինգերորդ տարին, 16.000 րիքստալ երկրորդ և վեցերորդ տարին, 18.000 րիքստալ երրորդ և յոթներորդ տարին և այսպես երկու հազար րիքստալ հավելումով ամեն տարի, մինչև 40.000 րիքստալ և մաքսի տուրքերը ընդմիշտ հաստատված պիտի մնան այս գումարին վրա, պարսիկներուն ներածումը ըլլա քիչ կամ շատ։

20. Այն պարագային ուր պարսիկները պատրաստ դրամ չունենան կանխիկ վճարելու համար մաքսային տուրքերը, այս վերջիններուն հավելումին պատճառով, Ձեր բարձրապատվության պիտի վճարեն այդ գումարը, որ երաշխավորված պիտի ըլլա իրենց ապրանքներով, ըլլա Ամսթերտամի մեջ Ձեր բարձրապատվության գործակալներուն հարյուրին 4 տոկոսով, ըլլա հարյուրին 8 տոկոսով եթե Ձեր բարձրապատվությունը հավանի սպասել պարսիկներու վերադարձին իրենց ապրանքներով[51], և կամ Ձեր բարձրապատվությունը պիտի ստանա մետաքսեղեն և կամ պարսկական ուրիշ ապրանքներ կանխիկ դրամի փոխարեն։ Քանի որ հիմա գոյություն ունի երեք տեսակ (մետաքսներ), այն է շարպաֆի, լեյժանի և քընար[52], իբր մաքսային վճարում պիտի ընդունվի երկու լիպրա շարպաֆի մետաքս հնչուն 76 րիքստալի համար, լեյժանի՝ 60 րիքստալ և քընար՝ 40 րիքստալի համար։ Իսկ մյուս ապրանքները մաքսային տուրքի փոխարեն պիտի ընդունվին բանավոր գինով մը, որպեսզի պարսիկները շահ մը ապահովեն։

21. Հոլանտայեն կամ ուրիշ եվրոպական երկիրներե իրենց վերադարձին առեն իրենց ապրանքներուն վրա տուրքը պիտի որոշվի հա-

---

[51] Ֆիլիփ տը Զագլի հանձնառու կըլլա մաքսային տուրքերը Ամսթերտամի մեջ վճարելու հարյուրին չորս տոկոսով մը, ուր գիտենք որ վաճառականները իրենց դրամը կանխիկ կստանան անմիջապես որ ապրանքը ծախվի։ Եվ որովհետև կրնար Ամսթերտամի կամ Ռոթերտամի մեջ անգլիական կերպասեղենի կամ ուրիշ ապրանքներու պաշար մը կազմել, զոր պիտի ծախեր իր վերադարձին, կառաջարկե հարյուրին ութը տոկոս մը վճարելու երկընտրանքը Միթո վերադարձին։ Տե՛ս «Հիշատակագրություն և տեղեկատվություն ճամփորդի մը, որ եղած է Պարսկաստան և Հայաստան, որ կտեղեկագրե այս երկիրներուն կամ նանոնց մեջ կարելի առևտրական գործերու մասին ինչպես և մեծ Հնդկաստանի Մոնկոլիո, Չինաստանի, Մոսկովիո, Թուրքիո մեջ։ Ուսումնասիրություն այն առևտուրին մասին, զոր հայերը կրնան կատարել Ֆրանսայի մեջ։ Ապրանքի տեսակները զորս հայերը կրնան Ֆրանսա բերել Արևելքեն, հրատարակված առանց հեղինակի անվան «Պարսկաստանի վիճակը 1660-ին» հատորին մեջ, հեղինակությամբ Հ. Ռաֆանլ տյու Մանի, էջ 350—351, ինչպես նաև ծանոթ. Ա, էջ ԾԲ։

[52] Անոնք (պարսիկները) այս տեսակները կզանազանեն երեք որակով, առաջինը կկոչեն գլուխ, երկրորդը՝ փոր և երրորդը՝ ոտք։ Պարսկական լեզվին մեջ գլուխը կկոչվի սարպաֆիթ, որ ամենեն նուրբն է, փորը՝ քարվարի, որ երկրորդն է, քընար՝ ոտքերը, որ ամենեն հաստն է...», անդ, էջ 342 և շար.։

մեմատաբար այն գինին, որով գնված են, և 1 առ հարյուր մաքս պիտի վճարվի այդ ապրանքներուն վրա, և եթե կանխիկ դրամ չունին մաքսը պիտի վճարվի իրենց ապրանքներով, այն միակ պայմանով որ իրենց տրվի 5 առ հարյուրի շահ մը։

22. Քանի որ ինչպես ըսված է վերը, մետաքսը լավագույն, ազնվագույն և ամենէն առատ ապրանքն է, զոր պարսիկները Եվրոպա կփոխադրեն, [քանի որ] մետաքսը երեք տեսակ որակ ունի, անհրաժեշտ է, որ այստեղ գինը որոշվի մաքսին համար, որպեսզի մետաքսը միշտ արժեվորվի միևնույն հիման վրա և վերածվի գումարի մը, որմե պիտի զեղչվի մաքսի տուրքը։ Հետևաբար պարսիկները շատ խոնարհաբար կխնդրեն, որ շարպաֆի մետաքսին սակագինը ըլլա 54 րիքստալ, լեյժանինը՝ 40 րիքստալ և քընարինը՝ 30 րիքստալ։ Բայց մյուս ապրանքները, ինչպես բամբակ, բուրդ, ռուսական կաշի, մեղրամոմ, խունկ, խավարծիլ, մուշկ, մարոկենի, գորգեր, ոսկիով և արծաթով բանված մետաքսյա կերպասներ և ամեն տեսակ ուրիշ ապրանքներ բանավոր գինով մը պիտի սակագրվին և մաքսը պիտի վճարվի այդ գինին վրա։ Բայց գոհարեղեններր զերծ պիտի ըլլան մաքսային տուրքե, պայմանավ սակայն, որ ամբողջնալ ներկայացվին Ձեր վսեմության, որուն պարսիկները պիտի ծախեն ինչ որ իրենց հաճելի է և պիտի ուզե գնել, 5 առ հարյուրի շահով մը Հնդկաստանի կամ Պարսկաստանի մեջ վճարված գինին վրա։

22. (այսպես, փոխանակ 23-ի). Եթե ինչպես վերը խոնարհաբար խնդրված է, Ձեր բարձրապատվությունը պարսիկներուն շնորհե տարեկան բանակություն մը փայտի և չոր խոտի իրենց տուներուն համար և եթե պարսիկները չօգտագործեն ամբողջ այդ փայտը և չոր խոտը, այնպես որ տարեվերջին մնացած ըլլա մաս մը [այդ մնացորդը] պիտի ծախվի և դրամը պիտի գործածվի վերը հիշված տուները նորոգելու։ Եթե Ձեր բարձրապատվությունը բարեհաճի փափագիլ, որ քանի մը հոդվածներ փոփոխություն կրեն, խոնարհաբար կխնդրեմ իրմե, որ հարցը ենթարկե իր նախարարներուն, և կամ ժողով մը գումարել տա, որպեսզի շուտով որոշում մը տրվի։ Վասնզի դեռ շատ գործ ունիմ Լեհաստանի մեջ այս առևտուրին վերաբերմամբ, և մեծապես պիտի փափագեի, որ մեր ազգը կարենա սկսիլ հառաջիկա տարի, Աստուծո օգնությամբ, իր առևտուրը առաջ տանելու Քուրլանտի ընդմեջեն, եթե Ձեր բարձրապատվությունը բարեհաճի, մյուս կողմե, ընդունելու իմ առաջարկներս։

Ֆիլիփ դէ Զաղլի

Միթօ, 8 սեպտեմբեր 1696

Թիվ 1542

Պարսիկի մը, Ֆիլիփ տը Զակելի (այսպես), Նորին գերապայծառ բարձրապատվության ներկայանալեն և Ա տառին տակ նշված հիշատակագրով մը Քուրլանտի մեջ և Քուրլանտի ճամփով դեպի ուրիշ երկիրներ պարսկական առևտուրին մասին կարգ մը առաջարկներ կատարելեն ետք, Նորին գերապայծառ բարձրապատվությունը բարեհաճեցավ ընդունիլ այդ առաջարկները և պաշտոն տվավ հետևյալ անձերուն ներկայացված հիշատակագիրը քննելու և այդ մասին կարծիք հայտնելու.

Պ. Միքայել Ռյուփրեխտ, կառավարության խորհրդական,

Պ. Քրիստիան Վիլհելմ Թառ, դատական բարձրագույն ատյանի խորհրդական

Պ. Տիք Վան Հինսպերկ, առևտուրի տնօրեն,

Պ. Յոհան Պեվերթ, քաղաքապետ . . . Միթոյի մեջ

Պ. Պարթե Յոհաննինկ, ազգական խորհրդականի մը »

Պ. Վիմմեր Տեքեր, քաղքենի և վաճառական . . այստեղ

Պ. Իլարտ Իհնքեն » » »

Վերոհիշյալ գործավարները, որոնք նշանակված են պարսիկին հետ խորհրդակցելու և իր հիշատակագիրը քննելու համար, ժողովը բացին և այնտեղ հրավիրելե ետք վերոհիշյալ պարսիկը Ֆիլիփ տը Զակելի և իրեն բացատրելե ետք, թե ինչ չափով Նորին գերապայծառ բարձրապատվությունը բարեհաճած էր քննել տալ իր հիշատակագիրը և իր առաջարկները, նշանակված մեծանուն գործավարները հույս հայտնեցին, որ ան (պարսիկը) պիտի գնահատեր այդ որոշումը և քանի որ ամբողջ այս ժողովին հիմը կկայանար անոր մեջ, որ պետք էր գիտնալ, թե ո՞վ է այն անձը, որու հետ բանակցություն պիտի կատարվի և մինչև ո՞ւր կհասնեին իր իրավասությունները, անհրաժեշտ էր որ ան իր անձին վավերականությունը հաստատե և ներկայացնե իր լիազորագիրը։ Տրված ըլլալով որ ան հավանություն հայտնեց և ներկայացուց իր լիազորագիրը և սակայն այս վերջինը պարսկերեն ըլլալով, հետևաբար անծանոթ լեզվով մը, մեծանուն գործավարները խնդրեցին իրմե, որ գերմաներենի[53] թարգմանել տա զայն և իրենց տա զայն և իրենց հանձնե։ Երբ կարելի եղավ շարունակել այս գործը, իրեն հարցվեցավ թե նախապես առևտուր

53 Այն ժամանակ Պալթյան երկիրներու մեջ (էսթոնիա, Լիվոնիա, Քուրլանտ) ազնվականները և քաղքենիները գրեթե ամբողջովին տեռոնական ծագում ունեին։

կատարա՞ծ էին Նարվայի մեջ և ի՞նչ պատճառով կուզեին այնտեղ դադրեցնել այդ առևտուրը։ Պատասխանեց թե պատճառները նույնն էին և թե պարտավոր էին թողուլ այդ քաղաքը, որովհետև մաքսային տուրքերը այնտեղ շատ բարձր էին և ատկե զատ Նորին վեհափառություն Շվետի թագավորը չէր հավանած իրենց շնորհել կրոնի ազատությունը. այնուհետև հրավիրվեցավ, որ մեկնի։ Այն ատեն մեծանուն գործավարները սկսան կարդալ և քննել ներկայացված հիշատակագիրը։

Դիտեցին, որ (1) անհիմն չէր ցամաքի ճամփով այդպիսի առևտուր մը կազմակերպելու առաջարկը, որովհետև պարսիկը կհայտարարեր, որ նախապես կատարված առևտուրը ձգվելուն պատճառը Թուրքերուն ներկայացուցած վտանգն էր (2), որովհետև այդ առևտուրը շարունակված էր երկար ատենե իվեր Նարվայեն Ռուսիո ճամփով. Համոզում գոյացավ (3), որ Մոսկվայեն Սմոլենսք, Վիթեպսքի ճամփով մինչև Տուպենահ և Միթոյի ճամփով մինչև Լիպո փոխադրության առաջարկը շատ անպատեհություն չէր ներկայացներ, բայց պարսիկին առաջարկած պայմանները մասամբ անպատեհություններ կներկայացնեին, ինչպես որ կարծիք հայտնվեցավ խորհրդածելե ետք։

1. Առաջին կետին վրա, թե ոչ մեկ առևտրական մարմին չէր կրնար պահել իր գոյությունը առանց ունենալու ապահով տեղ մը (այնտեղ հաստատվելու համար) և թե հետևաբար ամեն տեղ ուր ընկերակցություններ պիտի հաստատվեին, պետք էր որ անոնք ունենային տուներ և կարելի չէր մերժել (որ իրագործվի) իրենց փափագը Տուպենահի, Միթոյի և Լիպոյի մեջ քարաշեն մթերանոցներ ունենալու, զետեղելու համար իրենց ապրանքները, բայց, իբր հետևություն, պարսիկին ներկայացուցած հիշատակագրեն կթվեր հայտնվիլ թե պարսիկները կսպասեին օգտվիլ նման քարաշեն տուներե Նորին գերապայծառ բարձրապատվության կողմե։ Այսպես, շատ դժվար պիտի ըլլար Նորին գերապայծառ բարձրապատվության համար կառուցանել քարաշեն տուներ ի նպաստ առևտուրի մը, որմե տակավին ոչ մեկ շահ չէ ապահոված։ Սակայն այս մասին պետք է ավելի հստակ տեղեկություն ուզվի պարսիկեն և, իհարկին, պետք է իրեն հայտնել, Նորին գերապայծառ բարձրապատվության շնորհալի հավանությամբ, որ այս բանը կարելի չէ պահանջել Նորին գերապայծառ բարձրապատվութենեն, բայց և այնպես բարեխոսություն պիտի ըլլա Նորին գերապայծառ բարձրապատվության մոտ որպեսզի իրենց հատկացվի այս երեք քաղաքներուն մեջ հարմար վայրեր նման մթերանոցներու և բնակարաններու կառուցման համար. ցանկալի է, որ Նորին գերապայծառ բարձրապատվությունը բարեհաճի զիջանել այսպիսի խնդրանքի մը։

2. Երկրորդ կետին վրա դիտվեցավ, որ սայլով փոխադրության ազատությունը թույլատրել պիտի նշանակեր մեծ վնաս պատճառել Նորին գերապայծառ բարձրապատվության վարչության, տրված ըլլալով, որ իր հպատակները առանց ասոր ալ արդեն բավական ծանրաբեռնված են [տուրքերով] սայլային փոխադրության պատճառով։ Սակայն կարելի է առաջարկ ներկայացնել, առանց որ օրենք դառնա, որ իրենց սայլային փոխադրության արտոնություն տրվի ի փոխարեն որոշ գումարի մը, որուն քանակության մասին համաձայնություն պետք է գոյանա միանգամ ընդ միշտ։

3. Երրորդ (կետին վրա) դիտողություն կատարելու պետք չկա, որովհետև արդարացի է. սակայն անհրաժեշտ նկատվեցավ պարսիկին հայտնել և պայման դնել, որ իրենց ապրանքներով ճամփորդող պարսիկները պետք է ուշադիր ըլլան խաղաղ վերաբերում մը ցույց տալու այդ ճամփորդություններուն ընթացքին։

4. Չորրորդ [կետին մեջ] դժվարություն մը գոյություն ունի. այն է թե օտար կրոնք մը պիտի մտցվի և արտոնվի այստեղ։ Բայց նկատի առնվեցավ, որ այդ կրոնքը հիմնված է քրիստոնեության վրա (և) արտոնված է Ռուսիո և Լեհաստանի մեջ, այսպես այն եզրակացությունը գոյացավ, որ այս կետին ներկայացուցած դժվարությունը նվազ կարևոր է, քան այն նպաստը զոր նման առևտուրի մը հաստատումը կթվի բերել երկրին բարգավաճման։ Գալով քահանայի մը հաստատման, այդ հարցը ձգվեցավ Նորին գերապայծառ բարձրապատվության կամեցողության և հավանության։

5. Հինգերորդ կետին մասին նկատվեցավ, որ Նորին գերապայծառ բարձրապատվությունը կրնա պարսիկներուն շնորհել երկրին օրենքներուն թույլատրած ազատությունը, որ նաև կրնա տրվիլ վաճառականներուն. մնացյալին համար անոնք ենթակա պիտի ըլլան երկրին օրենքներուն և սովորություններուն և ճշմարիտ համաձայնություն մը պետք է կնքվի այս մասին, ըստ օրենսդրության, բայց բացի հակառակ կարծիքի մը պարագային, պատշաճ պիտի չըլլար այդ ազատութենեն զրկել պետերը, յուրաքանչյուր խմբակցության մեջ, բացի պայմանագրություններու և առևտուրի մասին ի հայտ եկած անհամաձայնություններու պարագային։ Բայց այս առթիվ որոշվեցավ պարսիկին հարցնել, թե ի՞նչ կհասկնա «անձ» և «առանձնաշնորհում» ըսելով այս հոդվածին մեջ։

6. Վեցերորդ կետին մասին պետք է հարցնել պարսիկին, թե իրենց առևտուրը ի գործ դնելու նպատակը արդյոք կվերաբերի՞ մանր առևտուրին, որ կօգտագործե կանգունը և նմանօրինակ չափեր, տրված ըլլալով

որ այդ պարագային խնդրո առարկա առևտուրը շատ վնաս պիտի հասցըներ քաղաքներուն և այս երկիրներու բնակչության, նկատի ունենալով պարսիկներուն մեծ դրամագլուխը, իրենց հաստատությունները և մասնավորաբար իրենց ապրանքներուն հայթայթումը իրենց միջոցներով, ինչպես նաև տուրքե ազատ տարինները և այս պատճառով այս երկիրներուն առևտուրը կրնա դյուրավ տկարանալ, այնպես որ քաղքենիությունը կրնա ամբողջովին կործանիլ և ապրանքի մեծ պակասություն հառաջ գալ, եթե պատերազմ ծագի Մոսկվայի և Շվետի միջև, ինչպես նաև Մոսկվայի և Լեհաստանի միջև, քանի որ այդ պարագային կարելի պիտի չըլլար ստանալ Պարսկաստանի ապրանքները և Հոլանտայեն եկած առևտուրը պիտի դադրեր։

7. Յոթերորդ [կետ], ոչ մեկ առարկություն կա, որ երբ նման առևտըրական մարմիններ հաստատվին, տուրքե ազատ ըլլան քանի մը տարիներ, բայց դիտել պետք է տալ այս մասին, որ այդ ազատության երկու կամ երեք տարվան վերածվիլը կրնա բավական թվիլ։

8. Ութերորդ [կետին մեջ] անկարելիությունը բացահայտ պիտի ըլլար, քանի որ ոչ ոք կրնա սեփականություններ գնել, եթե չի պատկանիր երկրին ազնվականության, այնպես որ Նորին գերապայծառ բարձրապատվության համար շատ վնասակար կրնա ըլլալ, թե պարսիկները ունենան նաև ստացվածքներ իբր ավատ, կալվածներ, տուներ, հողեր, եթե ունենան ազատությունը հաստատելու վաճառատներ և գործարաններ և անոնց տերը ըլլալ անձնապես, որով ոտնակոխ բրած պիտի ըլլային ենթակա օրենսդրություն մը, պիտի կործանեին քաղաքներ և արհեստավորները և պիտի նվազեցնեին մաքսային հասույթները. այսուհանդերձ որոշ ձևով մը և որոշ պայմաններու տակ Նորին գերապայծառ բարձրապատվությունը կրնա այս հարցին մեջ այս կամ այն առավելությունը ստանալ կարևոր գումարներ գանձելով։

9. Իններորդ [կետին] վրա ավելի որոշ բացատրություններ պետք է պահանջել պարսիկեն նման սնտուկի մը վերաբերմամբ իր հասկացողության մասին և քիչ մը վտանգավոր կթվի դրամական փոխատվություն մը կատարել նախքան առևտուրին հաստատումը, բայց անգամ մը որ առևտուրը հաստատված է, այդ սնտուկը և այդ փոխատվությունը այլևս անհրաժեշտ պետք չէ ըլլան, ինչպես կհետևի 10-րդ կետեն։

10. Տասներորդ [կետին] մասին նկատվեցավ, որ այն պարագային ուր Նորին գերապայծառ բարձրապատվությունը նման սնտուկի մը և նման փոխատվության մը դիջողությունը ընե, պայման դրվի, որ ամբողջ

ընկերակցությունը և տակավին հողին վրա գտնվող պարսիկներու սեփական ապրանքները երաշխավորեն այդ փոխատվությունը։

11. Տասնըմեկերորդ [կետին] մասին՝ փայտի, չոր խոտի և հարդի հատկացումը կախում պետք է ունենա այն հայտարարութենեն, զոր Նորին գերապայծառ բարձրապատվությունը պիտի բարեհաճի ընել, այս պարագային, սակայն, քանակության մը ճշտումը պետք է ուզել իրմե (պարսիկեն), այլապես քանի որ Նորին գերապայծառ բարձրապատվությունը ոչ մեկ նշանակելի շահ չի կրնար ստանալ առևտուրեն, մանավանդ սկիզբը, իրենց վրա պետք է իյնա նման իրեղեններու հայթայթումը։

12. Տասներկուերորդ [կետին] մեջ Նորին գերապայծառ բարձրապատվությունը ի վիճակի կրնա ըլլալ շոշափելի շահ մը ստանալու գործակատարի մը պաշտոնավարութենեն, այն իրողությամբ որ Նորին գերապայծառ բարձրապատվությունը կրնա այս վերջինը անվանել անհրաժեշտ անձնակազմով, որոշ թոշակով մը և իր հաշվույն առնել հասույթին մնացորդը։

13. Տասներեքերորդ [կետին] մեջ կացությունը նույն հանգամանքը պիտի ունենա թարգմանին վերաբերմամբ։

14—15. Տասնըչորրորդ և տասնըհինգերորդ [կետերուն] մեջ՝ որոշ գումարի մը մասին պետք է համաձայնիլ ճամփորդներու և մանավանդ ապրանքներու վերաբերմամբ, այնպես որ Նորին գերապայծառ բարձրապատվությունը ոչ մեկ վնաս չկրե ճանապարհագիններուն վրա։

16. Տասնըվեցերորդ [կետին] մեջ նկատվեցավ, որ պարսիկները իրենց գործառնություններուն մեջ պետք է ունենան այն ամբողջ ազատությունը, զոր կարելի է իրենց տալ և ի մասնավորի, պետք է պահանջել պարսիկեն, որ բացատրե թե արդյոք մեծաքանակ առևտո՞ւրը միայն նկատի ունի, կամ թե նաև փոքրաքանակ առևտուրը կանգունով, ծանրության և ծավալի մանր չափերով ու նաև թե կծրագրե՞ մեծաքանակ առևտուրը այս երկիրներու ապրանքներուն վրա ևս կատարել։

17. Տասնըյոթերորդ [կետին] վրա եղան նույն դիտողությունները, որ եղած էին երկրորդ կետին վրա։

18—19. Տասնըութերորդ և տասնըիններորդ [կետերուն] մասին Նորին գերապայծառ բարձրապատվության բարեացակամ տրամադրության ձգվեցավ որոշել թե ի՞նչպես կփափագի, որ մաքսի տուրքերը ճշտվին ազատ տարիներու ավարտումեն ետք, սակայն, նախընտրելի համարվեցավ 1 կամ 2 առ հարյուրի սակ մը հաստատել քան թե որոշ քանակություն մը, տրված ըլլալով որ երբ առևտուրը բարգավաճի մաքսը 100 կամ 200.000 ռիքստալի հասույթ մը կրնա բերել և թե մաքսը վճա-

բելով համեմատաբար իրենց առևտուրին վաճառականները վնաս մը չեն կրեր. այլապես եթե առևտուրը նվազի իբր հետևանք պատերազմի կամ ուրիշ դեպքերու, և եթե 40.000 րիքստալի գումարը վճարելի մնա հակառակ ասոր, առևտուրը պիտի տկարանար և նույնիսկ պիտի հեռանար այս երկրեն։

20—21. Քսաներորդ, քսանմեկերորդ և քսաներկուերորդ կետերը, հնչուն դրամի չգոյության պարագային մաքսային տուրքերը ապրանքով վճարելու մասին, կթողունք Նորին գերապայծառ բարձրապատվության որոշումին։

22. Սակայն, նկատվեցավ, արդար ըլլալու համար, որ հիմնավորված ըլլալ կկարծենք դիտել տալու թե քանակություններու հարցին վերաբերմամբ կարելի պետք է ըլլա, քսաներկուերորդ կետին վրա խորհրդակցելով, գտնել համեմատական դրություն մը մետաքսին սակը որոշելու համար։ Բայց մյուս ապրանքներուն վերաբերմամբ նկատվեցավ, բացի այն պարագայեն ուր լավագույն կարծիք մը կհայտնվի, որ համաձայն այս երկրին սովորության, մաքսը պետք է հաստատվի հարյուրերորդի հիման վրա։ Ըստ որում դիտվեցավ, սակայն, գոհարեղեններու առնչությամբ, թե ասոնցմե առ նվազն կես առ հարյուր պետք է տրվի, վասն վերաճանաչման (pro ricognitione), որովհետև իրենց արժեքը և քանակությունը, մանավանդ մարգարիտներունը, կրնան մեծ հասույթ մը բերել։ Մյուս կողմե, ինչ որ կվերաբերի այս գոհարեղեններու մասնագումին, ատիկա արդար պիտի ըլլար և որոշ առավելություն պիտի ընծայեր Նորին գերապայծառ բարձրապատվության, համաձայն առարկաներուն որակին։

23. Քսաներեքերորդ կետին վրա դիտվեցավ որ փայտի, չոր խոտի և հարդի համար կատարվելիք կարգադրությունները կհիմնվեին Նորին գերապայծառ բարձրապատվության որոշման՝ 11-րդ կետին մեջ։ Մյուս կողմե անհրաժեշտ դատվեցավ Ն. գ. բարձրապատվության նկատողության հանձնել ամեն բանե առաջ, առ ի խոհեմություն և առևտուրին ապահովության համար, որ պետք է ճշմարիտ պայմանագրություններ ստեղծվին, որոնք օրենքի ույժ ունենան, ինչպես մյուս կետերուն մասին ևս, և թե այն պարագային, ուր ոևէ խաբեություն գործվի ապրանքներուն հայտարարության մեջ, այս պայմանագրությունները պետք է հարգվին, ապա թե ոչ դյուրավ կրնա պատահիլ, որ պարսիկները այս առևտուրին հետ վարվին այնպես, ինչպես վարվեցան Լիվոնիո առևտուրին պարագային Նարվայի մեջ և մեկնին այս վայրերեն ի մեծ վնաս Ն. գ. բարձրապատվության։ Ոչ նվազ ազդուորեն թելադրվեցավ, որ խո-

հեմություն պիտի ըլլա սկիզբեն իսկ սահմանափակել պարսիկներուն [փառասիրությունները], այնպես որ անոնք ջանք չընեն ազնվականության մեջ տեղ գրավելու և հետևաբար կարելիությունը չունենան գործարաններ հիմնելու և մասնավոր առևտուր ստեղծելու, ի վնաս այս երկրին քաղաքներուն և քաղքենիներուն և թե ամբողջ ընկերակցությունը պետք է երաշխավոր ըլլա այս բանին համար։

Հետ այս դիտողություններուն, փափագ հայտնվեցավ որ քաղաքին ներկայացվի հուշագիր մը այս առևտուրին վերաբերող կետերուն վրա և վերստին նիստ գումարվի շարունակելու համար ժողովը հաջորդ օրը ժամը 8-ին։

6 սեպտեմբեր 1696

Պարսիկին փոխանորդագիրը պարսկերենե գերմաներենի թարգմանված, Բ տառին տակ հաղորդվեցավ և բավարար դատվեցավ մինչև Նորին գերապայծառ բարձրապատվության տեղեկագիրը. նույնպես կարդացվեցավ քաղաքին հուշագիրը, որ Գ տառը կկրե. և այնուհետև որոշվեցավ պարսիկը հրավիրել ժողովին և իրմե պահանջել քաղաքին հուշագրին մեջ պարունակված հոդվածներուն ինչպես նաև մյուս մութ կետերուն մասին բացատրություններ։ Այս որոշումեն ետք [պարսիկը] գալով բացատրություն տվավ.

5. Հիշատակագրին հինգերորդ կետին վրա [ըսելով, թե] ան կնշանակեր, որ պարսիկները, որոնք մեծաքանակ առևտուրով կզբաղին, Քուրլանտի ճամփան պիտի օգտագործեն իբր անցք մը, բայց անոնք որ Քուրլանտի մեջ պիտի հաստատվին, վաճառական ըլլան, թե արհեստավոր, պետք է, ինչպես մյուս քաղաքացիները, վայելեն առավելությունները և ազատությունը իրենց գործառնություններուն մեջ ամեն ապրանքի վրա, տեղական թե օտար, ու նաև պարսկական, (օգտագործելով) կանգունը և մյուս մանր չափերը։

6. Վեցերորդ [կետին] վրա, ինչպես հինգերորդին, թե արհեստավորները, մասնավորաբար, պետք է արտոնություն ունենան, ինչպես մյուս արհեստավորները, իրենց աշխատանոցները բանեցնելու ըստ իրենց հասկացողության։

7. Յոթներորդ [կետին] վերաբերմամբ պետք է հասկնալ, որ չորս տարվան ամբողջական ազատությունը կպատկանի երկու կարգի անձերուն, մեծաքանակ առևտուրով զբաղողներուն, ինչպես անոնց որ Քուրլանտի մեջ կհաստատվին։

8. Ութերորդ [կետ], թե պարսիկները իրավունք կուզեն ունենալ դնե-

լու ոչ միայն ստացվածքներ, այլև ավատային սեփականություններ, միևնույն իրավունքներով, որոնք այստեղ կպատկանին ազնվականության, տերը ըլլալ աշխատավորության և այս կալվածներուն մեջ իրենց հաստատած աշխատանոցներուն՝ ամբողջական սեփականությամբ։

9. Իններորդ [կետին] մասին՝ ասիկա պետք է հասկնալ, սնտուկին վերաբերմամբ, մեկ կողմե մաքսին անչությամբ և մյուս կողմե, և մանավանդ, այն պարագային համար, ուր պարսիկները դրամի պակասություն պիտի ունենան Քուրլանտի մեջեն իրենց կատարած ճամփորդության ընթացքին։

16. Տասնըվեցերորդ [կետով] չեն հասկնար միայն [առով] Պարսկաստանի, Ռուսիո, Լիթվանիո և Լեհաստանի օտար ապրանքները, այլև երկրին ապրանքները, ինչպես մեղրամոմ, կաշի, խոզի ճարպ, բայց ոչ արմտիք, վուշի հունտ, փայտ և նմանօրինակ ուրիշ հում ապրանքներ։

21. [Քսանըմեկերորդ կետին] մասին՝ թե հակերը պետք է բացվին մաքսի մեջ հայտարարության պահուն և մաքսային տուրքերը պետք է հատուցվին նույն ատեն և թե իրենք պարսիկները կուզեն նաև ճշգրիտ մանրամասնությամբ ներկայացնել գոհարեղենները, առ ի տեղեկություն Նորին գերապայծառ բարձրապատվության։

Այս բացատրություններեն ետք հույժ մեծանուն գործավարները ժողով գումարեցին և որոշեցին իրեն պատասխանել, թե այս բացատրությունները հետո պիտի ներկայացնեն Նորին գերապայծառ բարձրապատվության և իրեն պիտի տեղեկացնեն այդ մասին. այնուհետև սափրողաբար խնդրեց, որ զինքը շատ չհապաղեցնեն, տրված ըլլալով, որ այս առևտուրին մասին տակավին բանակցություններ պիտի կատարե Լեհաստանի մեջ և թե իր փափագն էր այդ որպեսզի առևտուրը կարենա սկսիլ հաջորդ տարին։ Այսպես հույժ մեծանուն գործավարները խոստում տվին իրեն այդ իմաստով և հետո, երբ ան մեկնեցավ, համաձայնեցան իրարու հետ հաջորդ օրը ամեն ինչ մանրամասնորեն Նորին գերապայծառ բարձրապատվության հաղորդելու և դարձյալ ժողով գումարելու համար, ներկա ամսո 8-ին սովորական ժամուն։

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ Գ ՎԱՎԵՐԱԳՐԻ

Մենք, Ֆրետերիք Քազիմիր, շնորհիվն Աստուծո դուքս Լիվոնիո, Քուրլանտի և Սեմկալլենի,

Կհայտարարենք և կընդունինք Մեզի, Մեր իշխանական ժառանգորդներուն և Մեր հաջորդներուն համար, ներկա գրության հիման վրա,

նկատի ունենալով մեր երկիրներուն բարգավաճումը, որ միակ բանն է, որ մեր սիրտին մոտ է, հետ պարսիկ իշխանական մայրաքաղաք Սպահանի բնակիչ Ջուղայեցի Ֆիլիփ տը Զակելիի խոնարհ և ստիպողական խնդրանքին, որ ընթացիկ տարվո 5/15 հունիսին Մոսկվայի մեջ թվագրված փոխանորդագիր մը ներկայացուցած է պարսկական առևտուրին հաստատման մասին իր հաղորդած հիշատակագրին և անոր հոդվածներուն վերաբերմամբ, թե բարեհաճեցանք որոշում տալ այստեղ, Մեր երկիրներուն մեջ, այս ազգին շնորհելու առևտուրի ազատությունը, համաձայն հետևյալ պայմաններուն.

1. Կուզենք առևտուրին սկզբնավորությանն իսկ, Տուպենահի, Պաուշքեի, Միեթոյի և Լիեպոյի մեջ պարսիկներուն զիջիլ հանգստավետ տուներ մեր երկրին մեջ եղածներուն ձևով, այնտեղ բերելու համար իրենց ապրանքները. ասկե զատ վերոհիշյալ չորս վայրերուն մեջ անոնց հատկացնել հարմար գետիններ և [անոնց թույլատրել անհրաժեշտ նյութերու հայթայթումը], որոնց վրա պարսիկները պիտի կարենան ըստ կամս կառուցանել մթերանոցներ, ուր պիտի զետեղեն իրենց ապրանքները։ Բայց որքան ատեն որ այս մթերանոցները կանգնեցուցած պիտի չըլլան, պիտի սեփականացնեն և պիտի օգտագործեն իրենց հատկացված տուները։ Այնուհետև, իրենց կողմե կառուցված տուները ուրիշ ոչ մեկ նպատակի չեն կրնան ծառայել, այլ միայն իբրև մթերանոց իրենց ապրանքներուն և այս ազգին հարմարություններուն։ Եվ որովհետև պարսիկները կուզեն ունենալ Լիեպոյի մեջ պատշաճ մթերանոց մը, և տրված ըլլալով որ այս շենքին ապահովությունը կպահանջե ամրապինդ պատեր իրենց թանկագին ապրանքներուն պատճառով, կխոստանանք ուրեմն իրենց հատկացնել մասնավոր շնորհով մը մեր, Կրոպինի դղյակին մեջ անհրաժեշտ նկուղները և սենյակները, մինչև որ Լիեպոյի մեջ կառուցվի հիշյալ մթերանոցը։

2. Պիտի բարեհաճինք շնորհել կառքով փոխադրության ազատությունը, իրենց և իրենց ապրանքներուն համար, Տուպենահեն Լիեպո Միեթոյի ճամփով և անկե Տուպենահ վերադարձի, ինչպես Պաուշքեեն Լիեպո Միեթոյի ճամփով և Լիեպոյեն մինչև սահմանագլուխ Պաուշքեի ճամփով վերադարձի, բայց ասոր համար և իբր խոնարհ երախտագիտություն այս իշխանական շնորհին փոխարեն, անոնք (պարսիկները) պարտին, որքան ատեն որ տևեն տարիները Զ հոդվածին հիման վրա, վճարել մեկ առ հարյուր, րիքստալով, բոլոր ապրանքներուն վրա, ինչ ալ ըլլա անունը, առանց բացառության, բայց ոչ գոհարեղեններուն և մարգարիտներուն վրա, համաձայն կանոնավորապես կանխավճարված

գումարի մը, այն պաշտոնյային զոր պիտի նշանակենք այս նպատակով։ Բայց երբ ազատ տարիները ավարտած ըլլան և մաքսը մեզի վճարելի ըլլա, փոխադրության ազատության համար վճարված այս մեկ առ հարյուրը պիտի ջնջվի, բայց հակառակ ասոր անոնք պիտի վայելեն այս ազատությունը։ Բայց պարսիկները միշտ պարտին չորս շաբաթ առաջ Մեզ տեղեկացնել թե որքա՞ն ապրանքով կհասնին, որպեսզի անհրաժեշտ պատրաստությունները տեսնվին ընդունելու համար սայլերը։

3. Կխոստանանք մեր պաշտպանության տակ առնել զանոնք, ինչպես մեր մյուս հպատակները և ճամփորդները, որ կանցնին մեր երկրեն և պաշտպանել զանոնք ամեն վտանգի և բռնության դեմ։ Սակայն պետք է ունենան խաղաղ ընթացք, ինչպես պատշաճ է, իրենց ճամփորդության միջոցին և նույնպես երկրին մեջ։

4. Պարսիկներուն կշնորհենք կրոնի ազատություն այս երկրին մեջ և սկիզբը կաթոլիկներուն հետ միաժամանակ, իրենց եկեղեցիներուն մեջ։ Բայց եթե ժամանակի ընթացքին քանի մը ընտանիքներ հաստատվին այստեղ, Մեր երկիրներուն մեջ պիտի չթերանանք բարեհաճելե այս մասին ավելի բացատրություն տալու, ինչպես որ կարելի պիտի ըլլա, նկատի ունենալով, որ կաթոլիկ կրոնքին հետ նմանություն ունեցող կրոնքները այստեղ կվայելեն, կարգ մը պայմաններու տակ, պաշտամունքի ազատ կիրարկումը։

5. Պարսիկներուն կշնորհենք ազատություն հաստատվելու այստեղ, մեր քաղաքներուն և հողերուն մեջ, ունենալու միջոցները քաղքենի կյանքի, ինչպես մյուս քաղաքացիները, ինչպես և հիմնելու գործարաններ և այս պարագային պիտի կարենան վայելել, համաձայն իրենց պայմաններուն, միևնույն առանձնաշնորհումները, որ ունին մեր մյուս քաղքենիները և հպատակները։

6. Կուզենք շնորհել մեծաքանակի վաճառականներուն, որոնք մեր երկիրներեն կանցնին իրենց ապրանքները փոխադրելու համար ազատություն ամեն մաքսե, պատվագինե, անուղղակի տուրքե և հարկե չորս տարի, երեք տարի անոնց համար, որ կհաստատվին այստեղ. բայց երբ այդ ժամանակաշրջանը վերջանա, պարտին վճարել միշտ միևնույն պատվագիները, որ կվճարեն մեր մյուս հպատակները և քաղքենիները։

7. Մեր երկիրներուն մեջ պարսիկներուն կշնորհենք ազատություն գործառնություններ կատարելու Մեր ազնվականության և բնակչության հետ իրենց ստացվածքներուն անշությամբ ժամանակավոր գրավի կամ եկամուտի գրության վրա, սեփականացնելու [այդ ստացվածքները] և օգտագործելու զանոնք գրավի տևողության և եկամուտներու վճարման

տարիներուն, համաձայն երկրին օրենքներուն և սովորություններուն. պիտի բարեհաճինք նաև նկատողության առնել, իբր վկայություն մեր իշխանական շնորհին, թե ինչպես կրնանք գոհացնել զանոնք (պարսիկները) մեր ստացվածքներով վերոհիշյալ գրության համաձայն։ Ի փոխարեն, եթե կմտածեն գնել ստացվածքներ ժամանակավոր գրավի կամ եկամուտի միջոցով, պարսիկները նախ պետք է տեղեկացնեն Մեզի, Մեր իշխանական ժառանգորդներուն և Մեր հաջորդներուն և այդ պարտականության ենթակա պիտի ըլլան, եթե երբեք համաձայն գտնվինք գործառնություններ կատարելու անոնց հետ։

8. Տրված ըլլալով որ Մեզի վտանգավոր կթվի հաստատել սնտուկ մը պարսիկներուն փոխատվություն կատարելու համար անհրաժեշտության պարագային, իրենց ճամփորդություններուն միջոցին, իրենց կշնորհենք իրավունքը մեր քաղքենիներեն կամ ուրիշներե իրենց ապրանքներուն վրա դրամ փոխ առնելու այնքան որքան կուզեն ճամփորդելու համար, բայց կհուսանք որ, համաձայն ներկայացված հիշատակագրին ԺԱ[54] հոդվածին, ժամանակի ընթացքին ասիկա անօգուտ պիտի դառնա և թե պարսիկները պիտի կարենան, սկիզբեն իսկ, իրենց հայրենակիցներեն դյուրավ դրամ ստանալ, մանավանդ որ միասնաբար կճամփորդեն։

9. Այստեղ հաստատված պարսիկներուն պիտի շնորհենք փայտահանության այն իրավունքները, զոր ունին մեր մյուս քաղքենիները, բայց այստեղեն անցնող [մեծաքանակի] վաճառականներուն հոդ. Ա-ով հիշված չորս քաղաքներուն մեջ պիտի հայթայթենք տարեկան 12 կապոց փայտ, տասը սայլաչափ չոր խոտ և տասը սայլաչափ հարդ։ Եվ եթե պատահի, որ ավելնան փայտը, չոր խոտը և հարդը, պիտի պահին այդ տուներուն մեջ և պիտի չգործածվին ոչ մեկ ուրիշ նպատակի։ Բայց եթե, հակառակ հուսացվածին, ավելի պահանջվի քան որոշված քանակությունը, պիտի հայթայթենք պակասը ցած գինով։

10. Վերոհիշյալ չորս վայրերեն յուրաքանչյուրին մեջ պիտի պահենք գործակատար մը երկու ծառաներով և թոշակ պիտի վճարենք իրեն։ Ի փոխարեն երկրեն անցնող ճամփորդ պարսիկները պարտավոր պիտի ըլլան իրենց ապրանքի յուրաքանչյուր հակին համար 1 ռիքստալ վճարել այն անձին և այն վայրին մեջ, զոր պիտի նշանակենք և ասիկա առևտուրին սկզբնավորութենեն իսկ։

11. Կխոստանանք պարսիկներուն, որ եթե իրենց ապրանքներուն

[54] Պետք է ըլլա Ժ։

Լիպա հասած ատեն Մեր երկիրներուն մեջ պարապ նավեր ունենանք՝ զանոնք իրենց պիտի տրամադրենք բանավոր ճանապարհագինի մը փոխարեն, համաձայն օրվան պարագաներուն, այնպես որ պատճառներ ունենան Մեր իշխանական շնորհով հպարտանալու։ Նույնպես, այն պարագային ուր տրամադրելի նավերը անբավարար թիվով ըլլան, անոնք նույն իրավունքները պիտի ունենան որքան Մեր քաղքենիները և ազատ պիտի ըլլան Մեր քաղքենիներուն հետ կես առ կես վարձելու բեռ չունեցող օտար նավերը։ Բայց ճամփորդներուն և իրենց անձնական բեռներուն համար կուզենք որ ի գործ դրվին, Մեր նավերուն վրա, ընդունված ծովային սովորությունները և կամ, համաձայն անոր, որ պարսիկները պիտի կարենան պատշաճագույն ձևով մը կարգադրել բեռնավորումը։ Սակայն արդարամտությունը պետք է հարգվի, այնպես որ պարսիկները ոևէ պատճառ չունենան գանգատելու։

12. Կուզենք մեր կողմե թոշակ վճարելով մեծաքանակի վաճառականներուն և մեր երկիրներուն ճամփով ապրանք փոխադրող պարսիկներու տրամադրության տակ դնել թարգման մը, որ արքայական թարգմանի տիտղոս պիտի ունենա. բայց ի փոխարեն պարսիկները պարտին վճարել մեկ քառորդ րիքստալ յուրաքանչյուր հակի համար, ինչպես որ պայմանագրված է նախորդ՝ Ժ. հոդվածին մեջ։

13. Երբ չորս ազատ տարիները ավարտին, պիտի բավականանք, որ պարսիկները մաքս վճարեն միայն երկու առ հարյուր, րիքստալով, Պարսկաստանեն եկած և ծովի ճամփով երկրեն փոխադրված ապրանքներուն վրա, մեկ առ հարյուր ծովի ճամփով եկած և ցամաքի ճամփով փոխադրված ապրանքներուն վրա։ Բայց ամեն խաբեությենե խուսափելու համար, պարսիկները պարտին տեղական վերակացուներուն հանձնել ճշգրիտ ցանկը ըլլա ցամաքի ճամփով Տուպենահեն և Պառուշբեն, ըլլա ծովի ճամփով Լիեպոյեն եկած ապրանքերուն և բոլոր հակերը և ապրանքները պետք է կնքված ըլլան և բացվին և ստուգվին վերակացուին կողմե, այստեղ, Միթոյի մեջ և մաքսի տուրքերը պիտի գանձվին այստեղ իսկ այն ապրանքներուն վրա, զորս մատնանշած պիտի ըլլանք այս նպատակով։ Եվ եթե, այս ստուգման առթիվ, խաբեության փորձեր ի հայտ գան, չհայտարարված ապրանքները, որքան ալ արժեքավոր ըլլան, կորսված պիտի ըլլան և պիտի գրավվին առանց այլևայլի։

14. Ոչ մեկ պարագայի մեջ չենք կրնար ընդունիլ, որ զանց առնվի վերոհիշյալ մաքսային տուրքերուն վճարումը, բացի գոհարեղեններեն և մարգարիտներեն, որոնց ճշգրիտ ցանկը սակայն երկրեն անցնող պարսիկները մեզ պետք է հանձնեն, և եթե անոնցմե մեկ քանին մեզի հաճո

ըլլան, [պարսիկները] պարտավոր պիտի ըլլան զանոնք մեզի ձգելու, Հնդկաստանի և Պարսկաստանի մեջ իրենց վճարած գինին վրա հարյուրին հինգի շահով մը. և եթե, հակառակ ամեն սպասումի, քանի մը գոհարեղեններ և մարգարիտներ մեզի չընծայվին և ատիկա հայտնվի քննության պահուն, այս զանցառությունը գործող հանցավորը կամ հանցավորները ենթակա պիտի ըլլան պատիժի մը, զոր պիտի ճշտե մեր կամեցողությունը, համաձայն պարագաներուն։

15. Եթե կարգ մը ուրիշ ապրանքներ Մեզի հաճելի ըլլան, պարտին Մեզի ձգել զանոնք հարյուրին հինգի շահով մը, գնումի և այլ ծախքերու հաշիվը կատարելե ետք։

16. Այն պարագային, ուր պարսիկները դրամ չեն ունենար մաքսի տուրքերը վճարելու համար, կընդունինք, որ իբր փոխարինություն մեզի ներկայացնեն հարմար ապրանքներ, հարյուրին հինգ շահ մը առնելով, բայց կընախընտրենք որ մաքսը վճարվի դրամով։

17. Այն պարագային ուր Մեզի մետաքս պիտի ընծայվի դրամի տեղ, մաքսին վճարման համար, կընդունինք նույնպես որ մեզի ներկայացված հիշատակագրին քսաներորդ հոդվածին հիման վրա, շարպաֆի կոչված մետաքսը 76 րիքստալի, լեյժանի մետաքսը 60 րիքստալի, և քընար մետաքսը 40 րիքստալի՝ ստացվին և հաշվի առնվին, մաքսին կատարված հայտարարության պահուն, 22-րդ հոդվածին համաձայն, հետևյալ ձևով. առաջին տեսակի մետաքսը 54 րիքստալի գինով, իբր նշան մեր իշխանական մասնավոր շնորհին հանդեպ պարսկական ազգին։

18. Պարսկաստանեն եկած մյուս ապրանքները, ինչպես բամբակ, ռուսական կաշի, մեղրամոմ, մուշկ, ոսկյա և արծաթյա հյուսվածքներ և մետաքսեղեն, վերջապես ինչ ալ ըլլա անունը, տուրքի ենթակա բանավոր գինով մը սակագրվելով, որուն վրա հարյուրին երկու մաքս պիտի վճարվի, բայց ծովու ճամփով եկած ապրանքները պիտի սակագրվին համաձայն իրենց գնման գինին և ատոնց վրա հարյուրին մեկ մաքս պիտի վճարվի հնչուն րիքստալով միշտ, ինչպես վերը արդեն ըսված է։

19. Մեծաքանակի վաճառականներուն արտոնություն կուտանք մեծաքանակ առևտուր ընելու մեր քաղքենիներուն հետ այս երկրին մեջ, սակայն պարտին վճարել մեկ առ հարյուր հնչուն րիքստալով այս երկրին մեջ վաճառված ապրանքներուն վրա, նույնիսկ չորս ազատ տարիներուն ընթացքին և այս պարագային հակերը պետք է բացվին և ստուգվին Պառուշբեի և Լիեպոյի մեջ և այնտեղ իսկ մաքսը պիտի վճարվի ծախված ապրանքներուն վրա։

20. Համաձայն հիշյալ Ֆիլիփ տը Ջակելի կողմե Արևելյան Հնդ-

կաստանի առևտուրին մասին ներկայացված հիշատակագրին[55], պիտի բարեհաճինք մեր նավերը պարսիկներուն տրամադրել այս առևտուրին և ճամփորդության համար, եթե պատահի, որ պարսիկներ ներկայանան այս նպատակով և մասնավոր և նպաստավոր կարգադրություն մը պիտի ընենք, այնպես որ պարսիկները գոհացում ստանան. պիտի հսկենք նաև, որ այս առևտուրը տեղի ունենա ապահովության մեջ։

21. Վերոհիշյալ Ֆիլիփ տը Զակելի, հանուն և հրամանավ պարսիկներուն, իբր անոնց բանագնացը, հանձնառու եղավ, որ այս ամենը որ բանակցության նյութ եղավ (իբր նշան մեր շնորհին) մեր և պարսիկներուն միջև, և որու կապված են անոնք արդեն մեր ներկա որոշումով, պիտի հարգվի անբռնաբարելի կերպով. այդ պատճառով է, որ նույնը (Ֆիլիփ տը Զակելի) ուշադիր պիտի ըլլա, ինչպես արդար է, որ պարսիկները ըստ ամենայնի գործեն համաձայն կնքված դաշինքին և իր ստանձնած հանձնառության։

22. Հետևաբար մեր երկրին ճամփով ապրանք փոխադրող պարսիկները, որքան ատեն որ մնան այստեղ և անոնք որ կհաստատվին մեր երկիրը, ուրիշ հեղինակություն պիտի չճանչնան, եթե ոչ միայն Մեր վեհապետական իշխանությունը, ամեն բանի մեջ պիտի ենթարկվին Մեր օրենքներուն և սովորություններուն և պիտի վարվին այնպես, որ հանձնառու ըլլանք հետագային անոնց տալու Մեր իշխանական շնորհին վկայությունը և անոնց ընծայելու, տալու և բաշխելու ավելի մեծ առանձնաշնորհումներ և իրավասություններ, համաձայն կարելիության և պարագաներուն, ինչպես որ կբարեհաճինք բացատրել ներկայով։ Ամրապնդելու համար իրենց շնորհված առանձնաշնորհումներուն և անոնց պարունակած հոդվածներուն երաշխավորումը, հաստատեցինք նաև երաշխավորումը և ներկա կետերը Մեր սովորական նշանացույցով և այնտեղ դրոշմել տվինք Մեր կնիքը։

Մեր Միթոյի ապարանքին մեջ, 1696 տարվո սեպտեմբեր ամսո 18-րդ օրը։

Ֆրետերիք Քազիմիր, Դուքս:

[55] Այս հիշատակագիրը Արև. Հնդկաստանի մասին առանձին վավերաթուղթ մը պետք է ըլլա, որ մեզի չէ հասած, որովհետև 8 սեպտ. 1696-ի հիշատակագրին մեջ Ֆ. տը Զաղլի ակնարկություն չըներ այս առևտուրին, այլ միայն պարսկական առևտուրին և վաճառականության։

Տեսա և կվկայեմ դրոշմված դքսային իրավական կնիքով, որ դրկված ընդօրինակությունը ամբողջապես կհամապատասխանե սկզբնագրին։

Դանիել Փոլշե
Քարտուղար

Ես ստորագրյալս Ֆիլիփ տը Զակելի, հանդիսավորապես կխոստանամ, համաձայն ներկա հանձնառության բնագրին, հանուն և հրամանավ պարսիկներուն, իբր անոնց բանագնացը, ըստ ներկա տարվո 5/15 հունիսին Մոսկվայի մեջ թվագրված փոխանորդագրին, զոր ներկայացուցի, թե վերոհիշյալ պարսիկները պարտին և կուզեն անհողդողդ, անհեղլի և անբռնաբարելի կերպով, առանց ոևէ առարկության, իր բոլոր պայմանագրություններուն, հոդվածներուն և գլուխներուն մեջ, հարգել բոլոր պայմանները, զորս կպարունակե հարակից առանձնաշնորհումը, պարսիկներուն շնորհված՝ առևտուրի ազատության և ուրիշ կետերու մասին, իմ շնորհալի իշխան և վեհապետիս Քուրլանտի Ն. գ. բարձրապատվության կողմե, պայմաններ, զորս ես ընդունեցի և որոնց հետևաբար անոնք ևս հանձնառու եղան. և անոնք պիտի գործեն այնպես, որ Ն. գ. բ.-ը պատճառներ ունենա անոնց ցույց տալու վկայությունը ավելի մեծ շնորհի և ընծայելու նոր առանձնաշնորհումներ։ Ի փոխարեն, սակայն, նորին գերապայծառ բարձրապատվությունը զանոնք ազատ պիտի թողու իրականորեն վայելելու խոստացված շնորհը, համաձայն տրված հարակից առանձնաշնորհումին, այնպես որ ոչ մեկ պատճառ ունենան գանգատելու. ամրապնդելու համար հավատարմությունս այս հանձնառություններուն և իբր ապացույց, որ նախապես ընդունած եմ և լավ գտած եմ ամեն ինչ, ստորագրեցի ներկա հանձնառագիրը իմ ձեռքովս և դրոշմեցի կնիքս։

Ֆիլիփ տը Զաղլի

Միթո, 19 սեպտեմբեր 1696

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Jacques Villotte, Voyage d'un missionnaire da la Compagnie des Jésuites en Turquie, en Perse, en Arménie, en Arabie et en Barbarie, Paris, 1730.

André Daulier-Deslandes, Les Beautez de la Perse, ou description de ce qu'il y a de plus curieux dans ce royaume, par A. D. D.—V., avec une relation de quelques aventures maritimes de L. M. P. R. D. G. D. F., Paris. 1705.

§ Manuscrits de la Bibliothèque Nationale, Paris (Fonds Français, 11331, folio 30 recto-verso, folio 31 recto).

Pierre Victor Michel, Bibliothèque Nationale, Paris, (Fonds Français, Ms. 7200

Paul Lucas, Voyage du Sieur Lucas au Levant, La Haye, 1705.

Rapael du Mans, Estat de la Perse en 1660, Paris, 1890.

Fleuriau, Estat présant de l'Arménie tant pour le temporel que pour le spirituel, Paris, 1694.

Gemeli Careri, Voyage autour du Monde, Paris, 1729.

R. Maulde de la Claviere, Les Mille et un Nuits d'une Ambassadrice de Louis XIV, Paris.

Laurence Lockhart, Fall of the Safavi Dynasty. § Marie Petit's Persan adventure, Asiatic Review, July, 1946.

Herbette, Une Ambassade Persane sous Luis XIV.

Krusinski, The History of the late revolution of Persia: taken from the memories of Father Krusinski, Procurator of the Jesuites at Ispahan; made into English by Father Du Cerceau, London, 1733.

de la Maze, Journal de voyage du Père ( ), de Chamakié à Ispahan, dans les „Lettres Edifiantes...", Paris 1875—77.

Richard S. J. Lettre du Père ( ) dans les „Lettres Edifiantes...", vol. 337.

Père Avril, Voyage en divers Etats d'Erivan et d'Asie, Paris, 1692.

R. W. Ferrier, The agreement of the East India Company with the Armenian nation, 22 June 1688. *Revue des Etudes Arméniennes*, N. S. Paris, vol. VII

G. Petrovicz, Les Arméniens au service de la diplomatie du Royaume Pologne Mémoire et relation d'un voyageur qui a esté en Perse et en Arménie, faisant la relation de ces pays ou commerce qu'on peut y faire ainsi qu'aux grandes Indes, Mogol, la Chine, Moscovie, Tuequie. Traité du Négoce qui peut se faire en France par les Arméniens. Les sortes de marchandises que les Arméniens peuvent apporter en France du Levant: *Առանց հեղինակի անվան, հավելված Հայր Ռաֆայել դյու Մանի* Estat de la Perse en 1660-*ի*

В. А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII веке (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях), *անգլ. ամփոփումով*, Ереван, 1969.

Հակոբ Փափազյան. Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործության մեջ և 1729 թ. Թավրիզում կնքված համաձայնագիրը «Բանբեր Մատենադարանի» № 9, Երևան, 1969, էջ 241—253

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատենադարանի կողմից 5

Հայաստանի և Փորթուգալի հարաբերությունները սկիզբէն մինչև միջին դարերու վերջը 6

Դիվանագիտական հարաբերությունները Փորթուգալի և Պարսկաստանի միջև ԺԶ—ԺԷ դարերում և Պելշիոր տոս Անժոսի տեղեկատվությունները Պարսկաստանի և Հայաստանի մասին 56

Փորթուգալի դեսպանական առաքելությունները Պարսկաստանի մեջ ԺԶ դարու սկզբէն ԺԷ դարու վերջը 66

Ս. Օգոստինոսի կարգի փորթուգալցի միաբաններուն առաքելության պաշտոնական հաստատումը Սպահանի մեջ 84

Լուիս Փերեյրա տը Լասերտայի դեսպանությունը 92

Հայր Կիլեերմե տը Սանթօ Ակոսթինիօ 102

Հայր Պելշիոր տոս Անժոս 112

Փորթուգալյան ազգայնականներ Կոայի մեջ 1580—1640 թթ. . . . 123

Հայր Պելշիոր տոս Անժոսի տեղեկագրությունները 129

Բնագրեր 136

1. *Տեղեկագրություն քրիստոնեության վիճակին մասին Պարսկաստանի և Հայաստանի մեջ* 136
2. *Տեղեկագրություն, որ կվերաբերի այն պատճառներուն, որոնց համար շահը պատերազմեցավ թուրքերուն դեմ* 153
3. *Տեղեկագրություն թուրքերուն դեմ շահին մղած պատերազմներուն նոյեմբեր 1604-էն մինչև սեպտեմբեր 1605 և քանի մը դեպքերու ձմռան ընթացքին, երբ Թավրիզ էինք* 161
4. *Պատճէն նամակին Պարսկաստանի թագավոր Շահ Աբբասի, առաքյալ նորին վեհափառության և իր խորհրդական ժողովին դեսպան Լուիս Փերեյրա տը Լասերտայի միջոցավ* 165
5. *Ինչ որ «ծառա անպետ» հայրը կատարեց Պարսկաստանի մեջ շնորհիվ աստուծո* 169

Փորթուգալցի օգոստինյաններու և դոմինիկյաններու հարաբերությունները հայ դոմինիկյաններու հետ ԺԷ դարուն 203

Ս. Դոմինիկոսի կրոնավորներուն քարոզչական գործունեությունը . . 222

Սասունցի Դավթի ավանդությունը ըստ ԺԶ դարու երկու փորթուգալցի ճամփորդներու 231

Հավելված Ա 240

Հավելված Բ 242

Հավելված Գ 245

Հայր Անթոնիօ տը Կուվեյա հեղինա՞կն է 1609-ի «Համառոտ տեղեկագրության» Պարսկաստանի վրա 246

ԺԶ դարու ձեռագրի մը պատմությունը 270

Ջակոմե Աբունա հայ եպիսկոպոսը Մալաբարում (1503—1550) . . . 286

Ջուղայեցի հայ վաճառական Յիլիփ տը Զագլի և պարսկահայ առևտուրին հաստատումը Մերձբալթյան երկրներում 1696 թ. 311

Թարգմանություն Ա վավերագրի 331

Թարգմանություն Բ վավերագրի 337

Թարգմանություն Գ վավերագրի 345

Մատենագիտություն 352

ՌՈԲԵՐ ՎԱՀԱՆԻ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ

ՀԱՅ-ՊՈՐՏՈՒԳԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրատ. խմբագիր Ժ. Մ. Աղոնց
Նկարիչ Լ. Ա. Սաղոյան
Տեխ. խմբագիր Հ. Մ. Մանուչարյան
Սրբագրիչ Գ. Ս. Ստեփանյան

ИБ № 1087

Հանձնված է շարվածքի 18.06.1985 թ., ստորագրված է տպագրության 29.08.1986 թ.։ ՎՖ 07366։ Չափը $60\times84^{1}/_{16}$, թուղթ № 1։ Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 20,7 մամ., տպագր. 22,25 մամուլ։ Ներկ. մամուլ 20,7, հրատ.-հաշվարկ. 21,3 մամուլ։ Տպաքանակ 1500։ Հրատ. № 6725։ Պատվեր № 495։ Գինը 3 ռ. 35 կ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։
Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։
Типография Издательства АН АрмССР, 378310, г. Эчмиадзин